Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material



220
612-70

ՁԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԳԱՐՈՒՑ

Յօրինեց եւ պատրաստեց

(† Երուսաղէմի միաբան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք)

ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՏՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ

1004
19754

ՀԱՏՈՐ Գ.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿԻ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

վ. եհատփառ եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Թարգմանեց

ՄԱՂԱԽԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻՐՈՒՆԵՑԻՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1902

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
1968 ✡ ПРАВЛЕНІЕ ✡ 1917
Библіотека
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Научная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

22.07.2013

4099

Дозволено Цензурою 30 Марта 1898 г. г. Тифлисъ.

„ԱԶԱՏՈՒԹԻՒՆ Լ.ՈՅՄ"
ՏԵՂԱՄԱՍՆ-ԸՆԹԵՐՑԱՍՐԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
1868 ✿ ПРАВЛЕНІЕ ✿ 1916
Библіотечно-читальня
„АЗАТУТЮНЪ ДУМЪ"

ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

ՀԱՏՈՐ ԵՐԻՐԴ

Կը բովանդակէ Ե. դարու աւետարանական
եւ Գործք Առաքելոցի պատմութիւնները.

ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՐՈՒՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԱՐ

ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆ

Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի երկնչիր, զի
ահաւասիկ աւետարանեմ ձեզ զուրախութիւն
մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն: Զի
ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ի
քաղաքի Դաւթի: Ղուկ. Բ. 10—11:

Առաջին հարցում.

Սուրբ Աւետարանի սկիզբը ուստի կսկսի.

Պատասխան.

Ասաւծոյ հրամանաւ Յովհաննէս Մկրտչի
հօր Զաքարիա քահանային Գաբրիէլ հրեշտակի
ձեռամբ որդւոյն ծննդեան աւետիքը արուաձ օրէն:
Զաքարիա և նորա կինը եղիսաբէթ, որ Ահարոնի

ցեղէն էր[1], երկուքն էլ արդար էին և ըստ ամենայնի աստուածային պատուիրանաց համաձայն բարեպաշտ և երկիւղած կեանք կը վարէին. Եղիսաբեթ ամուլ էր, զաւակ չունէին, և երկուքն էլ արդէն ծերացած էին:

Աստուածային կամաց Փրկչի գալստեան ժամանակը մօտեցած էր. երբ Զաքարիա քահանան ըստ օրինաց՝ սաճարում խունկ կը ծխէր, յայտնեցաւ հրեշտակը երևեցաւ նմա, որ հրեշտակի ներկայութենէն սաստիկ վախնալուն համար, հրեշտակը փութաց նորա սիրտն ապահովել ասելով. «Մի վախնար, աղօթքդ ընդունուեցաւ. կինդ Եղիսաբեթը զաւակ պիտի ծնի քեզ, որուն անունը Յովհաննէս պիտի դնես. օրի կամ գինի պիտի չխմի. մօրը արգանդէն Աստուծոյ շնորհօք պիտի զօրզօրուի. Աստուծոյ առջև Նշ լինելու է, և նորա ծննդեան վրայ մարդիկ պիտի ուրախանան. մանաւանդ՝ Եղիա մարգարէի նման աստուածային փառաց նախանձաւոր եռանդով քարոզելու է ժողովրդեան, որ իրենց չար ճանապարհէն դարձնելով՝ Քրիստոսի հնազանդելու պիտի պատրաստէ[2]:»

1. Եւ եղև յաւուրս Հերովդէ արքային Հրէաստանի, քահանայ մն անուն Զաքարիա ի դասակարգէ Աբիայ, և կին նորա ի դստերաց Ահարոնի. և անուն նորա Եղիսաբեթ. Ղուկ. Ա. 5.

2. Ասէ ցնա հրեշտակն. մի երկնչիր Զաքարիա, վասն լսելի եղեն աղօթք քո, և կին քո Եղիսաբեթ ծնցէ քեզ որդի... Ղուկ. Ա. 13—17.

Այստեղ կատարուեցաւ Յովհաննէսի մասին Մալաքիա մարգարէի բերանով եղած կանխատեսութիւնն զոր Ս. Գրքում կը կարդանք իբր երկնային վճիռ և պատգամ[1]: Որքան որ Զաքարիա այս աւետեաց լուրին ի սրտէ ուրախացաւ, բայց իրեն ու իւր կնոջ ծերութեան նայելով՝ տարակուսանօք կը հարցնէ հրեշտակին թէ՝ ինչով պիտի գիտնայ այդ բանին կարելիութիւնը, որուն հրեշտակը կը պատասխանէ. «Իմ խօսքիս չը հաւատալուդ համար, ահա պիտի համրանաս, մինչև որ ասածներս կատարուին:» Արդարև աքանչելիօք Զաքարիայի լեզուն բռնուեցաւ իսկոյն. ժողովուրդը, որ դրսում՝ կսպասէր, սովորականէն աւելի տաճարում նորա յապաղման վրայ կը զարմանայ, և երբ դուրս գալէն զինի՝ խօսելու անկարող լինելուն համար նշանացի խօսիլ սկսաւ, կիմանան թէ տեսիլք տեսած է:

Հարց. Բ.

Զաքարիա ինչ կը խնդրէր, որ հրեշտակը կը յայտնէ թէ խնդիրքը ընդունուած է.

Պաս. ժողովրդեան մեզայ քաւութիւն կը խնդրէ Աստուածմէ, որ պիտի լինէր Մեսիայի ձե-

1. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո, որ հանդերձեսցէ զճանապարհ քո՝ առաջի քո. Մալաք. Գ. 1.

ռամբ: Յովհաննէս էլ նորա նպատակը լինելուն համար հրեշտակը կասէ թէ աղօթքդ ընդունուեցաւ. և արդարև նա՝ պաշտաման օրերը լրացնելէ և իւր տունը վերադառնալէ ղկնի, եղիսաբեթ յղացաւ. սակայն իւր յղութիւնը հինգ ամիս ժամանակ կը ծածկէ և ոչ ոքի կը յայտնէ[1]:

Վեցերորդ ամսում Գաբրիէլ հրեշտակը Աստուծոյ կողմանէ կը ղրկուի առ կոյս Մարիամ, որ Գալիլիայի Նազարէթ քաղաքում կը բնակէր, և որ Դաւթի ցեղէն Յովսէփ անունով մի մարդու խօսեցեալն էր. հրեշտակը կողջունէ զկոյսն ասելով. «Ուրախացիր, շնորհալի կոյս, Տէրը քեզ հետ է:» Մարիամ զայս լսելով՝ կը յուզուի և կսկսի մտածել թէ այս ի՞նչ տեսակ ողջոյն է. հրեշտակը կը փութայ ապահովել զայն ասելով. «Մի վախնար, Մարիամ, որովհետև շնորհ գտար Աստուծմէ, պիտի յղանաս և որդի ծնիս, որուն անունը Յիսուս դնելու ես. Աստուած նմա պիտի տայ նորա հօր՝ Դաւթի աթոռը և Իսրայէլի ժողովրդեան վրայ յաւիտեան պիտի թագաւորէ. նորա թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ:»

Մարիամ հրեշտակի սոյն յայտնութեանց կը պատասխանէ. «Այդ ինչպէ՞ս կարելի է, քանի որ

1. Երբեմն լցան աւուրք պաշտաման նորա, դնաց ի տուն իւր: Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ. Ղ.ուկ. Ա. 23.

ես այր մարդ չը գիտեմ:» Հրեշտակը նորին կը պատասխանէ. «Հոգին սուրբը պիտի գայ առ քեզ և բարձրելոյն Աստուծոյ զօրութիւնը քո վրայ հովանի պէտք է լինի. վասն զի, նա՝ զոր դուն պիտի ծնիս, սուրբ է և որդի Աստուծոյ պիտի կոչուի:» Երբ որ հրեշտակը կը յայտնէ Մարիամին թէ իւր ազգականը՝ Եղիսաբեթ ևս վեց ամիս է որ յղի է, զի Աստուծոյ մօտ անհնարին բան չկայ, այն ժամանակ կոյսը կը պատասխանէ, խոնարհութեամբ թէ՝ «Ահա ես՝ Աստուծոյ աղախինս պատրաստ եմ, թող լինի ինձ, քու խօսքերուդ համեմատ[1]:» Ահա այն ժամանակ աստուածային աքանչելօք՝ իսկոյն Բանն Աստուած նորա արգանդը իջնելով մարմնացաւ, և հրեշտակն էլ մեկնեցաւ գնաց նորա մօտէն:

Ինչպէս վերը յիշուեցաւ, երբ որ Մարիամ լսեց թէ իւր ազգական Եղիսաբեթ յղի է, այն օրերում կամապարտ գնալ ի Հնորհաւորութիւն, լերան կողմն Յուդայի քաղաքը[2], (որ Երուսաղէմէն երկու ժամու չափ հեռի է, և զոր այժմ Արաբացիք Այն Էլ-Քարիմ կը կոչեն) և Եղիսաբեթի

1. Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անունն էր Նազարէթ. Ղուկ. Ա. 26—38.

2. Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդա. Ղ.ուկ. Ա. 39.

տունը մտնելով զայն ողջունած ժամանակ աստուածային աքանչելեօք Եղիսաբեթի արգանդում Յովհաննէս շարժելով կերկրպագէ Փրկչին Յիսուսի[1]. և Եղիսաբեթի հոգւով սրբով լցուած՝ բարձրաձայն կաղաղակէ ասելով. «Օրհնեալ ես դուն կանանց մէջ, և օրհնեալ է որովայնիդ պտուղը[2]։» Մանաւանդ Մարիամի Աստուածածնին լինելը խոստովանելով[3] «երբ որ քու ձայնը, կասէ, ականջս հասաւ, մանուկս արգանդում ցնծութեամբ շարժեցաւ». և երանի կուտայ որ Աստուծոյ՝ իրեն յայտնած խորհրդաւոր յայտնութեան անկասկած հաւատայ, որ իւր վրայ պիտի կատարուէր։ Ցայնժամ Մարիամ ևս Աստուծոյ ողորմութենէն, որ առ ինքն, շնորհակալ լինելով՝ նորա գօրութիւնն ու գթութիւնը կը փառաբանէ յաւուկ օրհնութեամբ[4]։

Մարիամ երեք ամսոյ չափ Եղիսաբեթի մնալէ վերադարձաւ։ Յովսէփ նորա յղութիւնը նշմարելով՝ զանազան կասկածներու գնաց,

1. Ցորովայնէ յորովայն երկրպագող Քրիստոսին. Ղար. Հգ.

2. Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոյ. Ղուկ. Ա. 42.

3. Եւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս. Ղուկ. Ա. 43.

4. Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ ասէ. Ղուկ. Ա. 46—55.

որովհետև չէր գիտեր թէ Հոգւոյն սրբոյ զօրութեամբ յղացած էր։ Բայց ըստ օրում ինքն էլ ամէն կերպով երկիւղած և առաքինի մարդ էր, կորոշէ առանց մէկին յայտնելու գաղտնիքը, լռելեայն արձակել զայն։ Մինչ այսպէս կը խորհէր, երազում հրեշտակ տեսաւ որ կասէր իրեն. «Մի վախնար կինդ Մարիամը մօտ պահելու, քանզի անորմէ ծնած մանուկը ի Հոգւոյն Սրբոյ է, որուն անունը Յիսուս պէտք է կոչես՝ որ իւր ժողովուրդը մեղքէ պիտի փրկէ[1]։»

Նմանապէս յառաջագոյն Եսայի մարգարէի բերանով Ս. Գրքում յայտնուած այն պատգամը թէ ահա կոյսը պիտի յղանայ և որդի ծնանի, որ Էմմանուէլ պէտք է կոչուի, որ կը նշանակէ Աստուած Մեզ հետ[2], Մարիամի վրայ կատարուիլը կիմացնէ Յովսէփայ, որպէս պի ապահով և միխիթար ինայ։ Արդարև Յովսէփ զարթնելով ըստ հրամանին

1. Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեցաւ նմա՝ և ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, քանզի որ ի նմանէ ծնեալ է, ի Հոգւոյն սրբոյ է։ Ծնցէ որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. նա նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց. Մատթ. Ա. 20—21.

2. Ահա կոյս յղասցի և ծնցի որդի. և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած. Մատթ. Ա. 23.—Եսայ. Է. 14.

Մարիամը կը պահէ իւր մօտ։ Թէպետև Յիսուս Էմմանուէլ չանուանեցաւ, բայց այս պատգամը կատարուեցաւ նորա մարմնառութեամբ և մարդկային կերպարան ստանալովը։ Այս է, բոլոր աստուածաբանից, Ս. Հայրապետաց և Ս. Գրոց միաձայնութեան կարծիքը։

Հարց՝ 9.

Ե՞րբ ըսացուեցաւ Զաքարիա քահանայի պատանեալ լեզուն։

Պաս. Երբ որդին ծնելով կուզէին անուն դնել անոր։ Որովհետև հրեշտակի յայտնութեան համեմատ որոշեալ ժամանակը լրանալէ, պէտք եղիսաբեթ ծնաւ մանուկը, որոյ ազգականք և դրացիք լսելով թէ Աստուած մեծ ողորմութիւն արած է նմա՝ շատ ուրախացան։ Ֆանդի, եղիսաբեթ ամուլ լինելէ զատ՝ ծերութեան հասակը մտած և բնականօրէն զաւակ ունենալու հնարաւորութիւնը անցուցած էր։ ահա այս վիճակում Աստուած ողորմելով՝ զաւակ պարգեւեց նմա։

Ութերորդ օրը ըստ օրինաց կամէին թլփատել զայն և նորա հօր անուամբ Զաքարիա կոչել։ բայց մայրը չընդունելով կը յայտնէ թէ, Յովհաննէս անուանելու է, պայն։ Նոքա կը պատասխանեն թէ «քու ցեղդ Յովհաննէս անունով մարդ չկայ», և հօրը նշանակի կը հարցնեն թէ ի՞նչ անուն պէտք է տալ։ նա ևս տախտակ ուզե-

լով վրան կը գրէ թէ Յովհաննէս է նորա անունը, որով նոցա զարմանք պատճառելէ զատ՝ հրաշիւք լեզուն ևս բացուելով՝ կսկսի զԱստուած օրհնել[1]։

Զիրուխ Զաքարիա ուրախ էր այս պարագայում, բայց բոլոր լսողները զարմանախառն երկիւղիւ միաձայնց կը հարցնէին թէ ի՞նչ պէտք լինի այս մանուկը։ Յովհաննէս Աստուծոյ շնորհօք լցուած՝ մինչև քարոզելու սկսելը անապատում կը բնակէր[2]։ Բայց յայտնի Զաքարիա հոգւոյն սրբոյ շնորհայ ապդեցութեամբ սկսաւ մարգարէանալ և զԱստուած փառաբանել, որ ի հնուց անտի մարգարէից բերանով տուած պատգամաց համեմատ փրկեց իւր ժողովուրդը թշնամիէն[3]։ Մանաւանդ որ կը յայտնէ թէ Յովհաննէս մարգարէ Աստուծոյ պիտի կոչուի, և փրկչին առջևէն գնալով՝ նորա ճանապարհը պիտի հարթէ և ժողովրդեան պիտի ազդարարէ թէ Աստուծոյ ողորմութեամբ իրենց մեղաց քաւութիւն լինելով պիտի ապաստին խա-

---

1. Եւ բացաւ բերան նորա վաղվաղակի, և լեզու նորա. և խօսէը և օրհնէը զԱստուած. Ղուկ. Ա. 64.

2. Եւ մանուկն աճէը և զօրանայը հոգւով, և էը յանապատս մինչև յօր երևելոյ նորա Իսրայէլի. Ղուկ. Ա. 80.

3. Օրհնեալ Տէը Աստուած Իսրայէլի. զի յայց եւ մեզ. և արաը զփրկութիւն ժողովրդեան իւրոյ. Ղուկ. Ա. 68—79.

ւաբի ծանր լուծէն[1]։

Այս մասին Յովհաննէս առաւօտեան արուսեակին, իսկ Փրկիչը արեգական օրինակ և նմանեն։ որովհետև զոր օր. արուսեակը՝ արեգական ծագման ապացոյց է, Յովհաննէս էլ արդարութեան արեգական ծագման, Փրկչի ծննդեան նախընթաց կարապետն եղաւ[2]։ Ինչպէս որ աշխարհի թագաւորք երբ որ մի քաղաք գնալու լինին, յառաջագոյն մարդ կը զրկեն, որ ամէն մարդ պատրաստ գտնուի, նմանապէս Յիսուս Փրկիչ, երկնաւոր թագաւորը՝ յաշխարհ գալու ժամանակ, նախ ևէ կարապէտ Յովհաննէս զրկեց, որպէս զի նորա գալն իմացնէ. վասն զի Յովհաննէս իւր քարոզութիւնը այսպէս սկսաւ. «Ապաշխարեցէք, ինչու որ երկնքի թագաւորութիւնը մօտեցած է[3]», որով Փրկչի գալուստն իմացուց։

Ի միա առ, Զաքարիայի պատանձումը՝ թէև

1. Եւ դու մանուկ մարգարէ քարձրելոյն կոչեսջիը, զի երթիցես առաջի երեսաց Տեառն, պատրաստել զճանապարհս նորա. Ղուկ. Ա. 76.

2. Արեգականն արդարութեան ծագման արուսեակդ առաւօտեալ, նախընթաց ճանապարհի որդւոյն Աստուծոյ անօրէնութեան սուրբ Յովհաննէս. Շար. Հգ.

3. Ցաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի. և ասէ. ապաշխարեցէ՛ք՝ զի մերձեալ է արքայութիւնն երկնից. Մատթ. Գ. 1.

իրեն պատիւ հատուցաւ, բայց այս բանում և խորհրդաւոր միտք կայ։ Քանզի օրինաց լրումն էր Քրիստոս, ուստի նորա գալստեան մօտ՝ Յովհաննէս յառաջընթաց կարապետ լինելով՝ երբ իւր ծննդեան աւետման միջոցում Զաքարիա կը հաստատնայ և ծնած ժամանակ նորա լեզուն կը բացուի, այս պարագան կը նշանակէ թէ Քրիստոսի գալստեամբ հին օրինաց տէրոյ տրամադրութիւնք կատարուեցան և լուեցին, իսկ նոր օրինաց ձառադայթքն լերևան եկան ի լուսաւորել մարդկութիւնը. այս պատճառաւ Յովհաննէս առաքելոց սկիզբն և մարգարէից լրումն կոչուեցաւ[1]։ Ինչպէս վերը յիշուեցաւ, Բանն Աստուած, որ կոյս Մարիամայ արգանդն իջնելով մարմին առաւ, ի լրանալ ժամանակին, Բեթլէհէմ քաղաքում ծնաւ։

Հարցում Դ.

Ինչու՞ համար Յիսուս Բեթղեհէմ քաղաքում ծնաւ։

Պապ. Իւր մասին գրուածը կատարելու համար։ Քանզի Միքիա մարգարէի ձեռամբ Ս. Գրոց մէջ յառաջագոյն գրուած էր թէ Բեթղէհէմ քա-

1. Ոը (Յովհաննէս) Առաքելոցն է սկիզբն և Մարգարէից լրումն. Շար. Հգ.

դաքում պիտի ծնի[1]: Մանաւանդ թէ՝ Դաւթի ցեղէն սերելով՝ նորա որդին կոչուելցաւ, Դաւիթ Բեթղեհէմցի լինելուն համար այդ քաղաքում ծնաւ. արդ՝ տես դու Աստուծոյ աքանչելիքը թէ այդ վիրկարար դէպքը ինչպէս տեղի ունեցաւ: Այն ժամանակում Հրէաստան Հռովմայեցւոց Օգոստոս կայսեր իշխանութեան ներքոյ կը գտնուէր, որ կը հրամայէ իւր ամբապետած երկիրների բնակչաց բոլորը, քաղաքները, ցեղերը իրենց անուններովը արձանագրուին տումարում[2]:

Յովսէփ ևս, որ Դաւթի ցեղէն էր, կայսերական հրամանի համաձայն՝ Մարիամի հետ նազարէթէն գնելով՝ (որ յղի էր) Բեթղեհէմ կուգայ, ուր յղութեան ժամանակը լրացած՝ կը ծնի զՅիսուս մի այրում, ապանդ իւր կուսութեան ձևաց դալու, վասն զի ինչպէս կուսութեամբ յղացած էր, նմանապէս կուսութեամբ ծնելով՝ միշտ կոյս մնաց, ինչպէս որ Ս. եկեղեցին կը դաւանի[3]: Եւ

---

1. Եւ դու Բեթլեհէմ տուն Եփրաթայ ոակաւա-ւոր եղես լինել ի հազարաւորս Յուդայ, ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայէլի, և ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի. Միքէ. Ե. 2.—Մատթ. Բ. 6.

2. Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ, ել հրաման յՕգոստոս կայսերէ՝ աշխարհագիրս առնել ընդ ամենայն տիեզերս. Ղուկ. Բ. 1.

3. Երես խորհուրդս սոսկալիս ի քեզ տեսանի Աստուածածնին. յղութիւն անսերմնական, ծնունդ

որովհետև գիշեր էր, իջևանելու տեղ չը գտնուելուն համար, Յիսուսը խանձարուրքի մէջ փաթաթելով՝ մի մսուրում կը դնեն:

Մի քանի հովիւներ, որոնք Բեթղեհէմի մօտ գիշեր ժամանակ իրենց հօտերը կը պահպանէին բացօդեայ, որոց Աստուծոյ հրեշտակը երևցաւ և լուսափայլ աստուածային փառաց ճառագայթները ծագեցան նոցա վրայ, մեծապէս երկիւղ ղգացին այդ անօրինակ փառաւոր երևոյթէն, բայց հրեշտակը փութայց ապահովել զանոնք ասելով. «Մի վախնաք, ահա ձեզ մեծ ուրախութիւն կաւետեմ, որով բոլոր ժողովուրդը պիտի ուրախանայ. որովհետև այսօր Դաւիթի քաղաքում Փրկիչ ծնաւ ձեզ. ապացոյցը այս է որ խանձարուրքի մէջ փաթաթած և մսուրում դրուած պիտի գտնէք մանուկը[1], որուն ծնունդը կաւետեմ ձեզ:» Յանկարծ նոյն հրեշտակի հետ անհամար հրեշտակներ այրի վրայ իջնելով սկսան զԱստուած օրհնել և երգել «փառք ի բարձունս Աստուծոյ[2]» ևլն:

անապատ, կուսութիւն յետ ծննդեան մնալով անապական. Շար. ԺԳ.

1. Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ նոցա, և փառք Տեառն ծագեցան առ նոսա, և երկեան յերկիւղ մեծ. Ղուկ. Բ. 9. մինչև 12 համար.

2. Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որք օրհնէին զԱստուած և ասէին. Փառք ի բարձունս Աստուծոյ,

Երբ որ հրեշտակները վերացան յերկինս, հովիւները երկիւղիւ համակուած՝ իրարու կասեն. «Գնանք մինչև Բեթղհէմ և տեսնենք թէ ի՞նչ է այն, զոր Տէրը յայտնեց մեզ»: Արդարև նոքա գալով՝ ըստ վերոյիշեալ յայտնութեան Մարիամը, Յովսէփը և Յիսուս մանուկը այրում գտան, (այրը քաղաքին դուրս էր) և իմանալով թէ հրեշտակի խօսքը նորա մասին է, կը փառաւորեն զԱստուած: Երբ այլոց ևս կը պատմեն ինչ որ իրենք տեսան և լսեցին, ամէնքն էլ կը զարմանան նոցա ասածների վրայ, և Մարիամ այս ամէն լսածները իւր մտքում կը պահէր խորին ուշադրութեամբ:

Խելամուտ եղեր, թագաւորաց որդի ծնած ժամանակ՝ մեծ հանդէսներ կը կատարուին և տեսակ տեսակ նուագարանաց ձայնիւ և ուրախութիւն երգօք և պարուք հանդերձ, մանուկին միջոցաւ ևս ժողովրդեան կը ծանուցուի և հետաւոր քաղաքները հրովարտակ կը ղրկուի, որպէս զի տերութեան բոլոր հպատակները լսեն և ուրախանան: Բայց Փրկչի ծննդեան դիշերում և կամ նորա ծննդեան համար մարդիկներէն ո՛չ ոք իմանալով՝ հանդէս կատարեց, միայն հրեշտակները մեծ փառօք և ցնծութեամբ յերկիր իջնելով՝ իրրև մանուկ աստուածային մանկան ծնունդը մարդոց

և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն. Ղուկ. Բ. 13.

իմացուցին և «փառք ի բարձունս» երգելով՝ ծանուցին թէ նա է երկնաւոր թագաւոր և թագաւորաց թագաւորին — Աստուծոյ որդին:

Ութերորդ օրում ըստ օրինաց մանուկը թլփատելով՝ հրեշտակի պատուէրին համաձայն նորա անունը Յիսուս դրին: Վերոյիշեալ անցքերէն պատ՝ ի նշան և յապացոյց նորա հրաշալի ծննդեան, երկնքում արևելեան կողմը աստուածային աքանչելիօք յատուկ մի աստղ երևալով՝ այդ կողմանց երեք մոգ իշխանաց կամ թագաւորաց (ինչպէս կը կարծուի) ուշադրութիւնը կը գրաւէ, և մանաւանդ երկնային շնորհաց ազդեցութեամբ կիմանան թէ յիշեալ աստղին երևումը հրէից թագաւորին ծնունդը կը ցուցնէ, որ բոլոր թագաւորաց վրայ պէտք է իշխէ:

Յայտ կատարուեցաւ Բաղամու խօսքը թէ «Յակովբայ աստղը ծագի» յատաջագոյն Աստուծոյ ազդեցութեամբ յայտնած էր[1], (տես չորրորդ դարու իբ-րդ հարցում): Այս պատճառաւ վերոյիշեալ մոգերը իրարու հետ միաբանած՝ երուսաղէմ կուգան նորածին թագաւորին երկրպագութիւն մատուցանելու[2], որովհետև յիշեալ աստղը իրրև առաջնորդ երկնքում կառաջնորդէ նոցա

1. Ծագեսցէ աստղն Ցակոբայ, և յարիցէ այր յԻսրայէլէ. Թուոց. ԻԴ. 17.

2. Եւ գնասցին թագաւորք ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քո. Եսայ. Կ. 3.

մինչև Երուսաղէմ: Սակայն ո՛չ թէ սովորական ասողի նման շատ բարձրէն, այլ՝ երկրիս մօտ օդին վրայէն գնալով՝ և մանաւանդ խիստ լուսաւոր կերպով կընթանար, որով կարող էին որոշել թէ ո՛ր կողմ կընթանայ առանց շփոթութեան:

Բայ յայտնէ, նոցա իջևանած ժամանակ կանգ կառնուր, և չուոյ ժամանակ կառաջնորդէր, այս կերպով մինչև Երուսաղէմ գալով աներևոյթ եղաւ, որով նոքա սկսան անդ հարցնել թէ ո՞ւր ծնաւ հրէից թագաւորը, որուն աստղը մենք արևելքում տեսանք և եկանք երկրպագութիւն մատուցանելու[1]:

Հերովդէս լսելով մոգերու գալուստը և նոցա հետաքրքիր հարցումը, թէ ինքը և թէ բոլոր Երուսաղէմի բնակիչներն էլ նորա հետ մեծ մատնջութիւն կունենան, և գործը ստուգելու նպատակաւ ժողովրդեան բոլոր քահանայքն ու իմաստուններըը կոչելով կը հարցնէ թէ Մեսիան ո՞ւր պիտի ծնի: Նոքա կը պատասխանեն թէ ըստ բանի մարգարէին Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում. (Միքիա ե. 2):

Այն ժամանակ Հերովդէս մոգերը գաղտնի

1. Եւ ի ծնանիլն Յիսուսի ի Բեթլեհէմ Հրէաստանի, յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ, և ասեն. ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք . . . և եկաք երկրպագանել նմա. Մատթ. Բ. 1.

Ս. Էջմիածնի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XII 1922
Армянская Экспедиция
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆՎԱՆ

կոչելով՝ կը տեղեկանայ թէ աստղը երբ երևցաւ էր, և ապա կը յանձնարարէ նոցա դնալ և հետևիլ հետ և նորածին թագաւորը գտնելէ ետքը իրեն ևս իմաց տալ, որպէս զի ինքն էլ գայ երկրպագութիւն մատուցանելու: Երբ որ նոքա կը պատրաստուին մեկնիլ քաղաքէն, ահա յիշեալ աստղը նորէն երևնալով կառաջնորդէ նոցա, մինչև Յիսուսի եղած տեղւոյն վրայ գալով կանգ կառնու, որով նոքա ուրախացած՝ կը հասկանան թէ նորածին մանուկ թագաւորն անդ է. վաստրոյ ներս մտնելով՝ երբ որ կը տեսնեն Յիսուսը մօրը Մարիամի հետ, երեսի վրայ ընկած՝ երկրպագութիւն մատուցանելէ ետքն, իրենց գանձարանը բանալով ընծայ ևս կուտան ոսկի, կնդրուկ և զմուռս[1] (ասիպկենա):

Ա. յայտէս ահա կատարուեցաւ Դաւիթ մարգարէի այն խօսքը թէ թագաւորները պատարագ կամ ընծայ թող բերեն անոր[2]: Նմանապէս Եսայի մարգարէն ևս կը յայտնէ թէ Մեսիայի ծննդեան

1. Եւ եբեւ մտին ի տուն՝ տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մօրըն նորա, և անկեալ երկրպագեցին նմա. և բացեալ գգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս ոսկի՝ կնդրուկ՝ և զմուռս. Մատթ. Բ. 11.

2. Թագաւորք Թարսոսի և կղզեաց պատարագս մատուցցեն նմա. Թագաւորք Արաբայ և Սաբայ պատարագս բերցեն նմա. Սաղմ. ՀԱ. 10,

ժամանակ թագաւորները երկրպագելու պիտի գան, և ոսկի, կնդրուկ ու պատուական քարեր պիտի բերեն նմա[1]: Սոյն մարգարէական նախագուշակութիւնք ճշդիւ կատարուեցան:

Այստեղ արժան է նկատողութեան առնուլ Հերովդէսի չարակամութիւնը. որովհետև, թէպէտ մոգերուն ասաց. «երբ մանուկը գտնէք, ինձ ևս տեղեկութիւն տուէք, որ ես էլ գամ երկրպագեմ», բայց նպատակը ո՛չ թէ իրօք այդ էր, այլ տեղը դիտնալէ յետոյ զայն սպանել կը խորհէր. այս պատճառաւ հրեշտակը մոգերուն կերեւի ի տես լեան և կը պատուիրէ Հերովդէսի մօտ չդնալ, ուստի նոքա տարբեր ճանապարհով իրենց երկիրը կը վերադառնան:

Յիրաւի Հերովդէս խորամանկութեամբ առանց իւր չար միտքը յայտնելու՝ մոգերը խաբել կամեցաւ պարզապէս, սակայն Աստուած, որ քննող գաղտնեաց է, նորա մտաց չարութիւնը յայտնադործելով, ինքն Հերովդէս ո՛չ միայն խաբուեցաւ, այլ և նորա ստութիւնը յերևան դալով՝ փառաւորապէս խայտառակուեցաւ: Այսպէս կը խայտառակուին ամէն այն նենգամիտ և չարակամ մարդիկ, որոնք ստութիւնը ճշմարտութեան տեղ յառաջ վարել կուզեն:

1. Ամենեքեան ի Սաբայէ եկեսցեն, բերել ոսկի և կնդրուկ՝ և ականս պատուականս, և փրկութեան Տեառն առցեն զաւետիս. Եսայ. Կ. 6.

Հարց.՝ Ե.

Ցիսուս ինչո՞ւ համար հովիւների այրում ծնաւ.

Պաս. Իջևանելու տեղ չը գտնուելուն համար[1]: Որովհետև ինչպէս Գ-րդ հարցում յիշուեցաւ, ամէն մարդ իւր բնիկ հայրենիքում տուժարի մէջ արձանագրուելու պարտական լինելով՝ ուրիշ տեղերում բնակող բոլոր Բեթղեհէմցիք օր յառաջ եկած էին գրուելու համար, որով դատարկ տուն ճնացած չէր: Այսու հանդերձ այս պարագայում ևս խորհրդաւոր նպատակ կար. քանզի նոյն այրում եղն ու էշ գտնուելով՝ Ամբակում մարգարէի մի նախատացութիւնը կատարուեցաւ թէ «երկու կենդանեաց միջև պիտի ճանաչուիս դու[2]:»

Նմանապէս Եսայի մարգարէին այն խօսքը թէ «եզը իւր տէրը, էշն իւր տիրոջ մսուրը ճանաչեց, իսկ Իսրայէլը զիս չը ճանաչեց», կարելի է պատշաճապէս այս մտքով մեկնել[3]: Գարձեալ, Յիսուս ծնած ժամանակ՝ բնակարան և տուն չը գտնելով՝ Բեթղեհէմին դուրս մի այրում ծնուելու հարկը՝ նշան էր թէ հրէայք չը պիտի ընդունէին զինքը իբրև Փրկիչ: Բայ յայտնեն, Յիսուս իբրև

1. Զի ո՛չ գոյր նոցա տեղի իջևանի. Ղուկ. Բ. 7.

2. Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. Ամբակ. Գ. 2.

3. Ծանեաւ եղն զտուողէ իւր, և էշ զմսուր Տեառն իւրոյ. և Իսրայէլ զիս ո՛չ ծանեաւ. Եսայ Ա. 3.

քաջ հովիւ[4] կորուսեալ ոչխարը՝ այսինքն մեղաւոր մարդկութիւնը գտնելու եկած էր, այս պատճառաւ հովուաց պատկանող մի անշուք այրում ծնաւ:

Նա մանաւանդ Յիսուս՝ խոնարհ և աղքատ մի մարդու նման այրում ծնելով և մսուրի մէջ պրուելով՝ բոլոր մարդոց առաքինութեան և անձնուրացութեան դաս ու օրինակ կուտայ, որպէս զի աշխարհային զուարճութիւն, հարստութիւն և մեծութիւնը արհամարհելով՝ միշտ խոնարհ լինին սրտով, և արքայութեան անվախճան ուրախութեան, մեծութեան և փառաց վարձքին կատարեալ հաւատով:

Ուրեմն խորհէ և խելամուտ եղիր թէ՝ որքան որ Յիսուս՝ Փրկիչն մեր աղքատի կերպարանքով յաշխարհ եկաւ, բայց վերը յիշուածին համեմատ՝ նորա ծննդեան ժամանակ հրեշտակները՝ մեծ փառքով երկինքէն յերկիր իջնելով, նորա ծնունդը՝ մարդկային բովանդակ ազգի ուրախութեան և փրկութեան պատճառ հռչակելով, հաստատեցին թէ նա է ամենակարող և ամենուն Տէր՝ երկնաւոր թագաւոր: Նոյնպէս, երեք իմաստուն թագաւորք հեռաւոր երկիրներէ Յիսուսի երկրպագելու գալով՝ ցոյց տուին թէ նա պէտք է բոլորին վրայ իշխէ և

4. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ դանձն լուր դնէ ի վերայ ոչխարաց. Յովհ. Ժ. 11.

թէ նորա իշխանութիւնն ու թագաւորութիւնը վախճան չունի:

Հատուած Զ.

Յիսուս որքան ժամանակ մնաց յիշեալ այրին մէջ.

Պապ. Քառասուն օր: Որովհետև անդրանիկ որդին ծնող կինը մինչև քառասուն օր եղած տեղէն դուրս չելնելով՝ քառասներորդ օրում պարտական էր ըստ օրինաց իւր որդին ընծայել Աստուծոյ, (ինչպէս չորրորդ դարու երեքտասաներորդ հարցում յիշուեցաւ). սուրբ Աստուածածին և հայր Յովսէփ ևս նոյն օրինքը դործադրելու համար Յիսուսը և իրեն ընծայ մի զոյգ տատրակ և կամ՝ աղաւնի Երուսաղէմի տաճարը կը տանին քառասներորդ օրում:

Յիրաւի սուրբ Աստուածածնին այն պատուիրանը գործադրելու պարտական չէր, քանի որ կուսութեամբ ծնած էր, սակայն Յիսուս օրէնքը չրացնելու եկած լինելով՝ պայն կատարելով հանդերձ՝ «Աստուած հարուածն պիտի դայ» Ամբակում մարգարէի չեւռամբ գրուածը ևս կատարուեցաւ այս պարագայում[1]. որովհետև Բեթղեհէմ Երուսաղէմի հարաւային կողմը կընկնի: Նմանապէս

1. Աստուած ի հարաւոյ եկեսցէ. Ամբակ. Գ. 3.

ատա կատարուեցաւ Մաղաքիա մարգարէի պատգամը թէ «Տէրը յանկարծ իւր տաճարը պիտի գայ, այն՝ զոր դուք կը խնդրէք[1]։»

Բայց յայտնէ, երուսաղէմ քաղաքում՝ Սիմէօն անուամբ մի յոյժ Ծերունի մարդ կար, որ ամէն կեդրոյ առաքինի և արդար լինելով հանդերձ՝ Փրկչի գալստեան ականատես լինելու դեղեցիկ բաղձանայ համար հրաման ստացած էր ի Տեառնէ չը մեռնիլ, մինչև որ տեսնէ զայն[2]. ահա նոյն օրում՝ աստուածային ազդեցութեամբ Սիմէօն Ծերունին տաճարը գալով Յիսուսը կառնու իւր գիրկը և մեծ գոհունակութեամբ կսկսի զԱստուած օրհնել ասելով՝ «արդ՝ քու հրամանի համաձայն արձակէ Ծառայդ խաղաղութեամբ, որովհետև տեսայ գալուստդ յաշխարհ, մարդկան փրկութեան համար, որ լոյսդ ես հեթանոսաց և փառք Իսրայէլի ժողովրդեան[3]։»

---

1. Եւ յանկարծակի եկեսցէ ի տաճար իւր Տէր՝ զոր դուքն խնդրէք. Մաղաք. Գ. 1.

2. Եւ ահա այր մի էր յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէօն. և էր այրն այն արդար և երկիւղած, և ակն ունէր մխիթարութեանն Իսրայէլի, և հոգի սուրբ էր ի նմա. և էր նորա հրաման առեալ ի հոգւոյն սրբոյ՝ մի տեսանել զմահ, մինչև տեսցէ զօծեալն Տեառն. Ղուկ. Բ. 25.

3. Արդ՝ արձակեա՛ զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկու-

Ծերունի Սիմէօնին այդ խօսքերուն վրայ Հայր Յովսէփ և Ս. Աստուածածնին զարմացան, բայց նա զանոնք ևս օրհնելէ ետքն կը յայտնէ թէ Յիսուսի հաւատացողները փրկութիւն, իսկ չը հաւատացողները դատապարտութիւն պիտի գտնեն, և այս պատճառաւ երկու կողմանց միջև սաստիկ հակառակութիւն լինելով՝ սուրբ Աստուածածնայ սիրտը իրեւ թէ սրով պիտի խոցուի[1]. ինչպէս որ Յիսուսի խաչելութեան ժամանակ՝ արդարև սուրբ Աստուածածնայ սիրտը անհնարին վշտով խոցուեցաւ, երբ իրը դորովագութ մայր՝ իւր սիրելի որդւոյն չարչարանքը աչքովը տեսաւ, երբ նորա գառնագէտ մահուան ողբալի տեսարանին անձամբ ականատես եղաւ։

Քաջ է միտ դնե Յիսուսի հաւատացողաց և անհաւատից տարբերութիւնը. որովհետև արեգակն իւր ճառագայթն ու լոյսը ոչ ոքի կը խնայէ և ամէնքն էլ կը լուսաւորէ, բայց նա՝ որուն աչքը կոյր է և կամ հիւանդոտ, կամ թէ նա՝ որ իւր պատուհանը չը բանար, ի հարկէ արեգական լոյսէն կը զրկուի, նմանապէս Փրկիչը բոլոր մարդոց փըր-

---

թիւն քո . . . լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քումդ Իսրայէլի. Ղուկ. Բ. 29.

1. Եւ օրհնեաց զնոսա Սիմէօն և ասէ ցՄարիամ մայրն նորա. ահա սա կայ ի դէրսումն և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի. և ի նշան հակառակութեան։ Եւ ընդ քո իսկ անձն անցցէ սուր. Ղուկ. Բ. 34.

կութեան համար եկաւ, բայց կատարեալ հաւատով նորա հրամանին հնազանդող մարդիկ կը փըրկուին, իսկ չը հաւատացողները իրենց յամառ չարութեան պատճառաւ ի հարկէ կը կորսուին[1]:

Երբ որ Սիմէօն Ծերունին տաճարում Փրկչի նկատմամբ կը խօսէր, Աստըի ցեղին Փանուէլ անուն նով մի բարեպաշտ անձի դուստրը Աննա մարգարէն, որ իւր ամուսնոյն հետ եօթը տարի ապրելէ ջինի՝ նորա մահուամբ մինչև ութսուն և չորս տարին որբևայրի մնալով՝ միշտ ծոմապահութեամբ և աղօթքով առանց տաճարին բաժանուելու՝ գիշեր ու ցերեկ Աստուծոյ կը ծառայէր, սա ևս գալով կը գոհանայ Աստուծմէ և Մեսիայի գալըստեան ակնկալու անձանց կը խօսի Յիսուսի նկատմամբ: Բանի աստուածային ապրեցութեամբ ճանաչէր նորա ով լինելը:

Յովսէփ և Մարիամ անդրանիկ որդու նկատմամբ օրինաց բոլոր արամադրութիւնքը կատարելէ ջինի դարձան Գալիլիայում իրենց Նազարէթ քաղաքը: Սակայն Աստուծոյ հրեշտակը երազում Յովսէփի երևնալով կասէ. «ա՛ռ մանուկը և նորա մայրը ու փախիր յԵգիպտոս, և անդ մնա՛, մինչև որ քեզ իմացնեմ. քանզի Հերովդէս կու՛զ մա-

---

1. Որ հաւատայ յՈրդի՝ ընդունի զկեանսն յաւիտենական, և որ ո՛չն հնազանդի Որդւոյ՝ ո՛չ տեսցէ զկեանս. Յովհ. Գ. 36.

նուկը սպանել:» Յովսէփ դիշեր ժամանակ կառնու մանուկն ու նորա մայրը և ըստ պատուիրանին կը գնայ յԵգիպտոս, որով Ովսէէ մարգարէի Յիսուսի համար մարգարէացած խօսքը կատարուեցաւ թէ «Եգիպտոսէն կոչեցի որդիս[1]:»

Հարցո՛ւմ Ի.

Հերովդէս ընդէ՞ր կամեցաւ սպանել զՅիսուս.

Պաս. Յիսուսէն վախնալուն համար: Որովհետև ինչպէս Ա.Ը-րդ հարցում յիշուեցաւ, Հերովդէս հեթանոս ազգէ լինելով՝ Հռովմայեցւոց կայսեր ջօրութեամբ Հրէաստանի վրայ կիշխէր, ուստի մի՛ գուցէ Յիսուս իւր թագաւորութիւնը ձեռքէն առնու, զայն սպանելու խորհուրդն յղացաւ, որպէս զի աղատուի կարծեցեալ վտանգէն:

Տես դու Հերովդէսի չարութիւնն ու անգթութիւնը. քանզի (ինչպէս Դ-րդ հարցում յիշուեցաւ) հրաշալի աստղին երևման ժամանակը մոգերէն ստուգելու համար թէպետև ասած էր որ մանուկը գտնելով՝ իրեն ևս իմաց տան իբր թէ ինքն էլ ջօժար է գնալ և երկիրպագանել նմա, բայց նորա առանց լուր տալու իրենց երկիրը վերադարձան հրեշտակի հրամանաւ, վասնորոյ Հե-

---

1. Եգիպտոսէ կոչեցի զորդի իմ. Մատթ. Բ. 15.—Ովսէէ. ԺԱ. 2.

բովէս այս բանին վրայ վերին ասպիճան կը կատարէ ու կը զայրանայ, և որովհետև կարող չէր մոգերէն վրէժ առնուլ, մի անօրինակ անպիտութեամբ զօրք ղրկելով՝ կոտորել կուտայ Բեթղեհէմում և շրջակայ տեղերում գտնուած երիւ տարեկանէ վար եղող բոլոր մանուկները[1], որպէս զի Փրկիչն էլ նոցա հետ մեռնի:

Ա. յս պատգայում Հերովդէսի անօրինութիւնը, անպիտութիւնը և ծայրայեղ չարութիւնը ապացուցուելով հանդերձ, երեմիա մարգարէի մի կանխատես մարգարէութիւնը կատարուեցաւ, որ կասէ թէ «Հառամայէն լացի, կոծի և մեծ ազգ ու հեծեծանաց ձայներ լսուեցան[2]», որովհետև, ինչպէս երրորդ գարու Ն. գ-րդ հարցում յիշուեցաւ, Հառամա Հռաքելի դերեզմանին մերձ և Բեթղեհէմի շրջակայքում լինելով՝ այնտեղ գտնուած մանուկներն էլ կոտորուած էին: Ա. յս մասին մի՛ կարծեր թէ Փրկիչը պատճառ եղաւ յիշեալ մանկանց կո-

1. Ցայնժամ իբրև տեսս Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեալ կոտորեաց զամենայն մանկունսն՝ որք էին ի Բեթլեհէմ և յամենայն ոստմանս նորա՝ յերկեմեկից և ի ներարկ. Մատթ. Բ. 16.

2. Ձայն գուժեաց ի Հռամա, ողբումն՝ և լալումն՝ և աշխարումն յոյժ, Հռաքէլ լայր զորդիս իւր, և ո՛չ կամէր մխիթարել, զի ո՛չ էին. Մատթ. Բ. 18. —Երեմ. Լ.Ա. 15.

տորածին, այլ՝ Հերովդէսի անհնարին չարութիւնը. իսկ նոքա իբրև վկայ Մեսիայի գալուստը հաստատելով՝ իրենց անմեղ արեան հեղմամբ արքայութեան փառաց արժանի եղան:

Արժան է ասա նկատողութեան առնուլ մարդոց եղկելի վիճակը. Փրկիչը յաշխարհ կուգայ մարդիկը մեղքէ ազատելով՝ իւր երկնային թագաւորութեան անվախճան փառաց ու երանութեան արժանացնելու, և սակայն մարդիկ կը փախչին ու կը ջանան պատնել: Ա. յսու հանդերձ նոքա մասին մարգարէից գրուածները կատարելու համար հայր Յովսէփ մանուկ Փրկիչը յԵգիպտոս տանելով՝ անօրէն Հերովդէս իւր չարագոյն նպատակէն վրիպեցաւ, որով թէ երկրիս վրայ և թէ երկնքում իւր պատիժը աւելի ստուգացաւ. ինչպէս որ Յովսէպոս հրէայ պատմագիրը ընդարձակ կը գրէ թէ ինչպէս նա գարշելի հիւանդութեան մի ենթարկուելով՝ անտանելի ատնջանաց մէջ չարաչար մեռաւ[1] և այսպէս իւր արժանի պատիժը գտաւ երկրիս վրայ:

1. Տես ի պատմութեան Յովսէպոսի՝ յառաջին դպրութեան. ի ԻԱ. գլուխն.

Հաբյա՜ծ Ը.

Երուսաղէմի բնակիչք Փրկչի ծնունդը լսելով ուրախացան արդեօք.

Պապ. Զուբախացան։ Որովհետև, ըստ օր. Հերովդէս երկիւղ կրեց, նմանապէս Երուսաղէմի բնակիչք տադնապեցան Յիսուսի ծննդեան լուրն առնելով[1], մանաւանդ ժողովրդեան մեծամեծները, որոնք Հերովդէսի շնորհիւ պատիւ և աստիճան ձեռք բերած լինելով՝ կատարելապէս աշխարհային դասակարգութեան և այլ նկատումներու անձնատուր եղած էին, ուստի կը վախնան թէ մի գուցէ Մեսիայի գալստեամբ իրենց հանգիստը կորսնցնեն։

Ճշմարիտ է որ ամէն ժողովուրդ կը փափաքի որ Թագաւորն իւր ապրէն լինի, բայց այսպիսի դրծի վախճանը պատերազմի յանգելուն աղագաւ Երուսաղէմի բնակիչք երկիւղ կրեցին, քանզի Փրկչի Թագաւորութիւնը մարմնաւոր կը կարծէին։ Սակայն նորա իշխանութիւնը հոգևոր լինելով՝ այդպիսի միաքեր մնուցանելու պէտք չկար, ինչպէս որ վերջէն Փրկիչը ինքնին յայտնաբարբառ վկայեց Պիղատոսի առաջ թէ «իմ Թագաւորութիւնը այս աշխարհում չէ[2]։»

---

1. Եւ եթէ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա. Մատթ. Բ. 3.

2. Պատասխանի ետ Յիսուս. իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. Յովհ. ԺԸ. 36.

Հաբյա՜ծ Թ.

Որքա՞ն ժամանակ Յիսուս Եգիպտոսում մնաց.

Պապ. Մինչև Հերովդէսի մահը։ Քանզի երբ որ Հերովդէս մեռաւ, հրեշտակը երազում հայր Յովսէփի երևնալով ասաց. «արի՛, առ մանուկն ու նորա մայրը և գնա՛ Իսրայէլի երկիրը, վասն զի մանուկին սպանել ուզողները մեռան[1]։» Նա էլ ըստ հրամանի գնաց, բայց լսելով թէ Հերովդէսի որդին Արքեղայոս Հրէաստանի վրայ թագաւորած է, վախցաւ Երուսաղէմի կողմը գնալու, այլ կրկին հրեշտակի ազդարարութեամբ գնաց Գալիլեայի Նազարէթ քաղաքը, և անդ բնակեցաւ. այս պատճառաւ Յիսուս Նազովրեցի և կոչուեցաւ (ուխտաւոր), ինչպէս նորա նկատմամբ մարգարէք գրած էին թէ Նազովրեցի պիտի կոչուի[2]։

Եւ որովհետև ըստ օրինաց ամէն տարի Իւոնի Զատկին Երուսաղէմ կերթային, Յիսուս տասն երկու տարեկան լինելէ զինի՝ դարձեալ Երու-

---

1. Եւ ի վախճանելն Հերովդէսի, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեաւ Յովսէփայ Եգիպտոս, և ասէը. արի՛ առ զմանուկդ և զմայրն նորա, և գնա՛ յերկիրն Իսրայէլի. զի մեռան որք խնդրէին զանձն մանկանդ. Մատթ. Բ. 19.

2. Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին՝ որ կոչի Նազարէթ. զի լցցի բան մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի. Մատթ. Բ. 23.

սաղէմ կը գնան օրհնքը ի գործ դնելու և ետ դառնալու համար: Սակայն առանց հայր Յովսէփի և սուրբ Աստուածածնայ գիտութեան Յիսուս Երուսղէմ քաղաքում մնաց այս անգամ. նոքա կարծելով թէ Նազարէթցի ղրացիներու և կամ ծանօթ ճանապարհորդակից անձանց հետ գնացած է, Երուսաղէմի մէջ չեն որոներ. իսկ երբ մի օրուան ճանապարհ գնալէ ետքն չգտան զայն, մեծ սիրտութեամբ կը դառնան Երուսաղէմ, և երեք օրէն յետոյ տաճարում կը գտանեն, որ օրինաց վարդապետներուն հետ կը վիճաբանէր. բոլոր ունկնդիրք նորա գիտութեան և իմաստութեան վրայ զարմացած էին. և թէպէտ նոքա ևս մեծապէս հիացում կրեցին, բայց սուրբ Աստուածածնին պատասխանօք ասաց. «որդեակ, այս ի՞նչ արիր մեզ, ահա հայրդ և ես շատ նեղուեցանք և զքեզ կորնչէինք». Յիսուս կը պատասխանէ մօրը թէ՝ «ինչո՞ւ համար զիս կորնչէիք, միթէ չէիք գիտեր թէ ինձ պարտ է հօրս տանը լինել», որով Յիսուս պարզապէս կը յայտներ թէ ինքը պիտի Աստուածայ է:

Սակայն նոքա այդ խօսքին միտքը ըմբռնելու կարող չեղան. միայն սուրբ Աստուածածնին նորա խօսքերը իւր մտքում կը պահէր խելամուտ լինելու համար[1]. ապա Յիսուս գնաց նոցա հետ ի

1. Եւ մայր նորա պահէր զամենայն զբանն ի սրտի իւրում. Ղուկ. Ը. 51.

Նազարէթ, ուր հնազանդ էր նոցա: Մինչև երեսուն տարեկան հասակում անդ բնակելով թէև ոչ քարոզեց և ոչ հրաշագործեց, բայց ամէն պարագայում նորա բարի վարուց, առաքինութեան և իմաստութեան նայելով բոլոր մարդիկ յարգանօք կը մեծարէին և կը պատուէին զայն իբր տիպար կատարելութեան և իբր ընտրեալի անձնաւորութիւն:

Հատուած Ժ.

Յիսուս կը սկսաւ քարոզելու եւ հրաշքներ գործելու.

Պապ. Երեսուն տարեկան լինելով՝ Յորդանան գետում Յովհաննէս Մկրտչէն մկրտուելէ յետոյ: Որովհետև Յովհաննէս, որ անապատում կը բնակէր, (տես Գ-րդ հատուած) աստուածային ազդեցութեամբ այն օրերում Հրէաստանի անապատում գտնուելով սկսած էր քարոզել թէ «ապաշխարեցէք, որովհետև երկնից թագաւորութիւնը մօտեցած է:» Յովհաննէսի այդ քարոզութեամբ կատարուեցաւ Ս. Գրոց մէջ գրուած այն մարգարէական պատգամը թէ՝ «անապատում մի բարձր ձայն լսուեցաւ թէ պատրաստեցէք Աստուծոյ ճանապարհները, ուղղեցէք նորա շաւիղները[1]»:

1. Ձայն քարքառող յանապատի, պատրաստ ա-

սոյն պատգամը տուած էր Եսայի մարգարէն։

Նմանապէս Հաստատուեցաւ այն խօսքը, զոր Գաբրիել հրեշտակ արտասանած էր Յովհաննէսի նկատմամբ թէ Եղիայի նման քարոզելով՝ ժողովուրդը Մեսիայի իշխանութեան ներքեւ մանելու պիտի հրաւիրէ։ Աւդարեւ երուսաղէմէն, Յորդանանի չորս կողմերէն եւ ամբողջ Հրէաստանէն գունդ գունդ ժողովուրդ դիմելով առ Յովհաննէս՝ կը մկրտուէին Յորդանան գետում եւ կը խոստովանէին իրենց մեղքերը. եւ նա կը քարոզէր ամենուն ասելով. «ապաշխարեցէք այսուհետեւ. քանզի կացինը ծառի արմատին մօտ դրուած է. լաւ պտուղ չբերող ծառը պիտի հատուի եւ կրակում՝ ձգուի այրելու համար [1]։»

Երբ որ ժողովուրդը Յովհաննէսէն խրատ ուզելով կը հարցնէին թէ ուրեմն ինչ պիտի անեն, կը պատասխանէր. «երկու հանդերձ ունեցողը՝ մէկը թող տայ չունեցողին. նոյնպէս թող անէ կերակուր ունեցողը։» Մաքսաւորաց հարցման կը պա-

---

քարէք զճանապարհ Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա. Մատթ. Գ. 3.—Եսայ. Խ. 3.

1. Եւ տեսեալ զբազումս . . . եկեալս ի մկրտութիւն նորա՝ ասէ ցնոսա . . . արարէք այսուհետեւ պտուղ արժանի ապաշխարութեան... զի աւասիկ տապար առ արմատն ծառոյ դնի. ամենայն ծառ որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի. Մատթ. Գ. 7.

տասխանէ թէ «ձեզ հրամայուածէն աւելի բան մի՛ առնէք։» Զօրքերն էլ կը հարցնեն թէ «մենք ինչ անելու ենք». նոցա ևս կը պատուիրէ. «ոչ զոք հարստահարեցէք, ոչ ոքի նեղութիւն մի տաք, մի զրպարտէք, ձեր ռոճիկով բաւականացէք։»

Որովհետեւ նորա ծննդեան ժամանակ կատարուած սքանչելիքը դեռ մոռացուած չէին, մանաւանդ ի մանկութենէ անապատում կապրէր, եւ իւր հանդերձը՝ ուղտի մազէ, գօտին՝ կաշիէ, եւ կերակուրը վայրենի մեղր ու մարախ էր, (զոր ուտել օրէնքը թոյլ կուտար Ղեւտ. ԺԱ. 22) [1]։ Յովհաննէս երբէք աշխարհային զուարճութեան եւ հաճոյից հակամէտ չը լինելով՝ միշտ առ Աստուած աղօթիւք եւ խնդրուածովք զբաղած՝ կատարեալ հեւատարմութեամբ Աբրահամին կը ծառայէր. վասն որոյ նորա անունը եւ առաքինութիւնը բոլոր ժողովրդեան ծանօթ լինելով՝ ամէնքն առ հասարակ նորա քարոզութիւնը լսելու եւ անորմէ խրատ խնդրելու փափաք ունէին, քանի որ քարոզչի առաքինութեանը նայելով, ժողովուրդը կը ջանայ ուղղել իւր թերութիւնքը։

Աւդարեւ Յովհաննէսի առաքինութիւնն ու սրբութիւնը ժողովրդեան առջեւ այն աստիճան յայտնի էին, որ նորա մասին սկսան խորհիլ թէ

---

1. Եւ ինքն Յովհաննէս ունէր զհանդերձ ի ստեւոյ ուղտոյ, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի. Մատթ. Գ. 4.

արդեօք նա՞ է Քրիստոսն[1]: Թէպէտև ժողովուրդը այսպիսի մի խորհուրդ յղացաւ իւր մտքում, բայց ինքն Յովհաննէս այդ թիւր կարծիքը վարանելու համար կը պատասխանէ նոցա, այն է իրեն դիմողներուն թէ՝ «ես չեմ Քրիստոսի Ջրով, նա՝ որ կուգայ, ինձմէ հզօրագոյն է. ես նորա կօշիկները կրելու արժանի չեմ. նա կը մկրտէ ձեզ Հոգւով սրբով. նորա ձեռքումն է հեծանոցը, որով իւր կալը մաքրելով՝ ցորենը կը ժողովէ շտեմարանում, իսկ յարդը անշէջ կրակում պէտք է այրէ[2]:»

Յովհաննէս արդէն քարոզելու սկսած՝ Յորդանան գետի դիմացի կողմը Բեթաբարա կոչուած տեղում կը գտնուէր, երբ Երուսաղէմի հրէից կողմանէ քահանայք և Ղեւտացիք դալով առ նա կը հարցնեն թէ «դու ո՞վ ես». որոյ կը պատասխանէ՝ ոչ միայն խոստովանելով թէ ինքը Քրիստոսը չէ[3], այլ մանաւանդ բացորոշակի կը յայտնէ Քրիստոսի ամենակարող զօրութիւնը, և թէ նորա պաշտօնն

1. Մինչև անկ ունէը ժողովուրդն՝ և խորհէին ամենեքեան ի սիրտս իւրեանց վասն Յովհաննու. մի թէ ա՛ւ նոցէ Քրիստոս. Ղուկ. Գ. 15.

2. Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով. Մատթ. Գ. 12.

3. Առաքեցին առ նա Հրէայքն յԵրուսաղէմէ քահանայս և զԼեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞ ես: Եւ խոստովան եղև . . . թէ ես ոչ եմ Քրիստոսն. Յովհ. Ա. 19.

է արդար դատաստանաւ սուրբերն ու արդարները արքայութեան արժանացնել, իսկ մեղաւորները դժոխոց տանջանքին դատապարտել, որպէս զի ամէն մարդ վախնալով՝ չար ձանապարհէն ետ կենայ և պատրաստ լինի Փրկչին հաւատալով՝ հնազանդութեամբ ընդունիլ նորա քարոզութիւնը, և արժանանալ երկնային փառաց ու երանութեան: Յովհաննէս իւր խօսքերը կը հաստատէ Ս. Գրոց մարգարէական պատգամներով և վկայութեամբք:

Ժողովուրդը Յովհաննէսէն կը մկրտուէր, Յիսուս էլ Նազարէթէն Յորդանան կուգայ անորմէ մկրտուելու համար: Այո, մինչև այն ժամանակ ըրած տեսած չէին, որովհետև Յովհաննէս ի մանկութենէ անապատումն էր, իսկ Յիսուս՝ Նազարէթում կը բնակէր: Երբ որ Յիսուս Յորդանան եկաւ, Յովհաննէս զայն տեսնելուն պէս՝ Աստուծոյ ազդեցութեամբ ճանաչեց թէ նա է Մեսիան, ուստի կամեցաւ արգիլել զայն ասելով՝ «ինձ պարտ է ի քէն մկրտուիլ, և դու առ ինս կուգաս». բայց Յիսուս պատասխանեց թէ՝ «թոյլ տուր այժմ, որովհետև այսպէս կը պատշաճի մեզ ամբողջ արդարութիւնը ի գործ դնել». նա էլ թոյլ տուաւ:

Երբ որ Յիսուս մկրտուեցաւ, անմիջապէս ջուրէն դուրս ելնելով՝ կսկսի աղօթել, և ահա իսկոյն երկինք բացուելով՝ Հոգին սուրբ աղաւնակերպ նորա վրայ կիջնէ, և յերկինուստ ձայն կը

լսուի թէ՝ «սա է իմ որդիս, որուն ես հաւնեցայ[1]։» Սոյն աքանչելիքը ո՛չ միայն Յիսուս և Յովհաննէս տեսան, և երկնքէն եկած ձայնը լսեցին, այլ և այնտեղ գտնուող ժողովուրդն էլ տեսաւ և լսեց։ Յայնժամ Յիսուս անապատը դնալով՝ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ կը պահէ, որպէս զի սատանայէն փորձուելով՝ յաղթէ անոր և օրինակ տայ մարդոց ամենամեծ յաղթութեան[2]։

Հարցո՛ւմ Ժ.Ա.

Ցիսուս ինչո՞ւ համար մկրտուեցաւ.

Պաս. Իրեն Աստուածութիւնը յայտնելու համար։ Յիրաւի խոնարհութեամբ մկրտուեցաւ Յովհաննէսէն, բայց նորա նկատմամբ Հօր Աստուծոյ վկայութիւնը թէ «դա է իմ սիրելի որդիս» և հոգւոյն սրբոյ աղաւնակերպ իջումը նորա վրայ, ո՛չ միայն ապացոյց են Քրիստոսի Աստուածութեան

1. Եւ եթէև մկրտեցաւ Ցիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք. և ետես զհոգին Աստուծոյ՝ զի իջանէր եթէև զաղաւնի, և գայր ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ. Մատթ. Գ. 16—17.

2. Յայնժամ վարեցաւ Ցիսուս յանապատ ի հոգւոյն՝ փորձել ի սատանայէ։ Եւ պահեալ զքառասունն տիւ և զքառասունն գիշեր՝ ապա քաղցեաւ. Մատթ. Դ. 1, 2.

կամ Աստուծոյ որդի լինելուն, այլ նաև սուրբ Երրորդութեան խորհուրդը ևս յայտնելով՝ քրիստոնէական սուրբ հաւատոյ հիմունքը կը դնեն հաստատապէս։ Քանզի՝ որովհետև հին օրէնքը պէտք է փոխուէր նոր օրինաց, որուն սկիզբն էր մկրտութիւնը, վանորոյ առաջ ինքը կը մկրտուի, և առաքելոց ևս կը հրամայէ բոլոր հեթանոսները մկրտել յանուն ամենասուրբ Երրորդութեան[1]։

Հարցո՛ւմ Ժ.Բ.

Ցիսուս ինչո՞ւ քառասուն օր եւ քառասուն գիշեր ծոմ պահելով սատանայէն փորձուեցաւ.

Պաս. Ցոյց տալու համար թէ կատարեալ մարդ է։ Յիրաւի ինչպէս վերը յիշուեցաւ, նորա Աստուածութիւնը յայտնի եղաւ, բայց կը կամի որ նաև յայտնի լինի թէ կատարեալ մարդ է։ Այս պատճառաւ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելէ ետքն՝ երբ որ անօթեցաւ, սատանան մարդկային կերպարանքով կուգայ, որպէս զի զայն փորձելով իմանայ թէ՞ վ է նա։ Թէպէտև նորա ծննդեան ժամանակ տեղի ունեցած հրաշալի անցքերուն, և մոգոց երկրպագու-

1. Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ. Մատթ. ԻԸ. 19.

թեան գալու նշանաւոր դէպքին վրայ խորհելով՝ կասկածեցաւ թէ նա է թերեւս ակնկալեալ Մեսիան, սակայն Հերովդէսէն վախնալով յԵգիպտոս փախուստը և վերադարձին մինչև երեսուն տարեկան հասակը լրիւ մի հասարակ և աննշան մարդ Նազարէթի քաղաքում բնակիլը՝ դարձեալ կարծել տուաւ Աստուծոյ հակառակորդին թէ նա մի սովորական մարդ է:

Նմանապէս նորա մկրտութեան ժամանակ պատահած հրաշից վրայ նորին կասկածել սկսաւ, բայց երբ որ քառասնօրեայ ծոմապահութենէ եաքը անօթեցաւ, կարծեց թէ Մովսէսի և Եղիայի նման մի սուրբ մարդ է, քանի որ նորա ևս քառասնօրեայ ծոմ պահած էին. վասնորոյ մօտենալով Յիսուսի կասկ համարձակութեամբ. «եթէ Աստուծոյ որդին ես, ասա այս քարերուն որ հայ լինին:»

Նկատէ որ անիծեալ սատանան՝ ինչպէս որ կերակուրի պատճառաւ մարդը դրախտին արտաքսուելուն պատճառ եղաւ, այս անգամ ևս այդ մի և նոյն շարժառիթը ձեռք առաւ. բայց Յիսուս Ս. Գրքին վկայութիւն բերելով կը պատասխանէ թէ՝ «գրուած է որ մարդս միայն հացով չապրիր, այլ Աստուծոյ բերանէն ելած խօսքերով[1]:» Սոյն պատասխանին վրայ թէև նա խոյս

1. Ո՛չ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն

ատաւակուելով նպատակին չը հասաւ, բայց ուրիշ խորամանկութեան դիմելով կուզէ որ պայն առնելով կրկին փորձէ. այս մասին Յիսուս կը հաճի նորա հետ գնալ, որպէս զի նորին խայտառակ պայն: Երբ որ ի միասին գալով՝ տաճարի աշտարակին վրայ կեցաւ, սատանան ասաց Յիսուսին. «եթէ Աստուծոյ որդին ես, ասկից վար ձգէ ինքզ, քանզի գրուած է քեզ համար թէ հրեշտակները ձեռաց վրայ պիտի պահեն զքեզ, ոտքդ քարին չը զարնուելու համար[1]:»

Տես, որովհետև առաջին փորձում Յիսուս Ս. Գրքին պատասխանեց, այդ պատճառաւ այս անգամ սատանան ինքն էլ Ս. Գրոց խօսքը յառաջ կը բերէ. երբ որ Յիսուս նորին վկայութեամբ Ս. Գրոց կը պատասխանէ թէ՝ «գրուած է որ քու Տէր Աստուածդ չը փորձես[2]», սատանան դարձեալ կը պատասխանէ և կարող չը լինելը պատասխանել: Այսու հանդերձ դարձեալ հանդիստ չը կենալով

քանիւ որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ. Մատթ. Դ. 4.—Ր. Օրին. Ը. 3.

1. Ասէ ցնա (սատանայ). եթէ որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ ատեն ի վայր. զի գրեալ է, թէ հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո, և ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբէք հարցես զքարն զոտն քո. Մատթ. Դ. 6.—Սաղմ. Զ. 11.

2. Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո. Մատթ. Դ. 7.—Ր. Օրին. Զ. 16.

կը տանի զայն մի բարձր լերան վրայ, որպէս պէ
նորէն փորձէ: Անյետեղ բոլոր թագաւորութիւն-
ները և նոցա փառքերն ու ճոխութիւնքը Յիսուսի
ցոյց տալով՝ վստահաբար կասէ. «այս ամէնը քեզ
կուտամ, եթէ ինձ երկրպագես [1]:»

Նայէ դուն անիծեալ սատանայի ճարահատ
և խեղճ վիճակին. որովհետև նենգութեան և
հպարտութեան պատճառաւ, Աստուծոյ միայն յա-
տուկ պատիւն իրեն յատկացնել ուզելուն պէս՝
Յիսուս վճռաբար և սաստիւ կը պատասխանէ.
«կորիր մնտէս, սատանայ, վասն զի գրուած է թէ
քու Տէր Աստուծոյդ միայն երկրպագես, և զայն
միայն պաշտես [2]:»

Արդարև Յիսուս առաջին փորձում իմացաւ
թէ ո՞վ է նա, բայց մինչև այն ժամանակ այնպէս
կը պատասխաներ իրրև թէ չը ճանաչէր. այս ան-
գամ նորա նենգութիւնը յերևան ածելով՝ երբ
որ կը յայտնէ թէ սատանայ է, այլ և յուսա-
հատուած՝ ամօթապարտ կը մեկնի Յիսուսի ներ-
կայութենէն, քանի որ անկարող եղաւ իմանալ թէ
նա Աստուծոյ որդին է: Թէպէտև Յիսուս ո և է

1. Եւ ասէ ցնա (սատանայ). զայս ամենայն քեզ
տացո, եթէ անկեալ երկրպագանիցես ինձ. Մատթ. Գ. 9.

2. Ասէ ցնա Յիսուս. երթ յետս իմ սատանայ.
պէ գրեալ է. Տեառն Աստուծոյ քում երկիրպագես՝
և զնա միայն պաշտեսցես. Մատթ. Գ. 10.—Ր.
Օրէն. Զ. 13.

կերպով կարող էր սատանային յաղթել և նուա-
ճել զայն, սակայն իւր կատարեալ մարդկութիւնը
յայտնելու համար յանձն առաւ երեք անգամ
փորձուիլ և այնպէս յաղթել բանսարկու թշնամ-
ւոյն. և ապա հրեշտակներ գալով՝ կերակուր կը
պատրաստեն և կը ծառայեն նմա [1]: Այն աեղէն
Յիսուս գնաց դէպի Գալիլեայի կողմը:

Հատուած Ժ.

*Գալիլեա անուամբ քաղաքի գաւառ կը յիշուի
սուրբ աւետարանում.*

Պապ. Երկու: Մէյն երկիրը բարձր լինելուն
համար վերին Գալիլեա կը կոչուի, ուր կուսապաշտից
բազմութիւն բնակելուն պատճառաւ նաև կա-
նուանի Գալիլեա հեթանոսաց: Իսկ միւսը ստորին Գա-
լիլեա կը կոչուի, ուր Զաբուղոնի ցեղին յատկացեալ
հողում կը գտնուէր Նազարէթ քաղաքը. և Նեփ-
թաղիմի ցեղին պատկանեալ բաժնում կը գտնուէր
Կափառնայում քաղաքը. ահա Յիսուս ընդհանու-
րապէս այս կողմերում շրջելով կը քարոզէր և
հրաշք կը գործէր, որպէս պի եսայի մարգարէին Ս.
Գրքում յառաջ բերուած ճշմրտը կատարուի 2:

1. Եւ ահա հրեշտակք մատեան և պաշտէին
զնա. Մատթ. Դ. 11.

2. Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ

Նմանապէս այդ գաւառումն էր Տէրբէպէի Յով կոչուած լիճը, յորում Աստաբելք ձուկ կորսային, և որ քան ոմոյ երթայելոց սուրբ աւետարանում Յով անունով կը յիշատակուի: Արդ՝ որովհետև այդ գաւառում արդէն յառաջագոյն քարոզեցած էր՝ ինչ որ ծ-րդ հարցում՝ յիշուեցաւ, թէ Յիսուսի մկրտութենէն անմիջապէս գինի երկինքը բացուելով՝ հայրական վկայութեան ձայնը լսուած՝ և հոգին սուրբ աղաւնակերպ նորա վրայ իջած է, և մանաւանդ նորա մասին Յովհաննու վկայութիւնը թէ ինքը արժանի չէ՝ նորա կօշիկները անգամ կրելու, ուսոի ժողովրդեան միջև նորա անունը արդէն յայտնի եղած էր: Հետևաբար երբ որ Յիսուս այդ կողմերը գալով՝ քաղաքէ քաղաք շրջեցաւ և քարոզեց, ամենքն առհասարակ զարմացած՝ սկսան նորա օրհնեալ անունը փառաւորել [1]:

մարգարէէ. Երկիր Զաբուղոնի՝ և երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա հեթանոսաց: Ժողովուրդ որ նստէր ի խաւարի, եսես զլոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և ի ստուերս մահու՝ լոյս ծագեցաւ նոցա. Մատթ. 14, 15, 16.—Եսայ. Թ. 1.

1. Եւ գայնաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա, և ել համբաւ գնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին: Եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա փառաւորեալ յամենեցունց. Ղուկ. Գ. 14, 15.

Ապա Նազարէթ գառնալով՝ շաբաթի օրում նոցա ժողովարանը կը մտնէ, ուր Եսայի մարգարէին գիրքը կուտան Յիսուսին, որ ոտքի կելնէ կարդալու համար և այն տեղը կը բանայ, յորում իւր մասին գրուած էր. «Տէրոջ Հոգին իմ վրայ է, վասնորոյ օծեց զիս». յետ ընթերցման կասէ ի լուր ամենուն թէ՝ «այսօր այն գրոց խօսքը կատարուեցաւ». և բոլոր ներկայք անոր նայելով՝ նորա քաղցր և շնորհալի խօսքերուն վրայ կը զարմանային [1]: Յետոյ այնտեղէն կը գնայ Յորդանան գետի գիմացի կողմը ի Բեթաբարա, ուր Յովհաննէս ժողովուրդը կը մկրտէր:

Արդէն վերը յիշուեցաւ որ հրէայք երուսաղէմէն քահանաներ և Ղեւտացիներ զրկած էին Յովհաննէսին հարցնելու թէ ինքը Քրիստոսն է և նա ժխտողական պատասխան տուած էր թէ չէ. այժմ յաջորդ օրում Յիսուսի ներկայութիւնը նշմարելով իսկոյն մատնանիշ կանէ զայն, ասելով. «ահա Աստուծոյ գառնը, որ կը բառնայ աշխարհի մեղքը [2]:» Սոյն խօսքով Յովհաննէս յայտնեց թէ

---

1. Եւ եառուն նմա զերս զեսայեայ մարգարէէն, և յարեաւ ընթեռնուլ. և երբև եբաց զդիրսն՝ եգիտ զայն տեղի, յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասնորոյ և օծ իսկ զիս, աւետարանել աղքատաց առաքեաց զիս. Ղուկ. Դ. 17, մինչև 22 համար. —Եսայ. ԿԱ. 1.

2. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս գի գայր առ

նա մարդկային ազգի ժեղաց քաւութեան համար գառան նման պէտք է զոհուի: Յաջորդ օրը, երբ Յիսուս այն կողմերում կը շրջէր, Յովհաննէս վերահին կրկնեց նախորդ աւուր վկայութիւնը, և իւր աշակերտներէն երկուքը զայն լսելով՝ Յիսուսի ետևէն գնացին, որոց մին Պետրոս առաքելոյն եղբայրը՝ Անդրէասն էր, որ և ապա տասներկու առաքելոց մին եղաւ 1:

Յիսուս տեսնելով զանոնք կը հարցնէ թէ ի՞նչ կը ննդրեն. նոքա կը պատասխանեն. «Րաբբի, ո՞ւր է բնակարանդ». և պատասխան կստանան թէ «եկէ՛ք և տեսէ՛ք». և գնալով. նոյն օր նորա մնա ինացին, որովհետև ժամը տասն էր: Օրինակ ա՛ւա. այդ երկու աշակերտները Յիսուսի անունը լսելով՝ մեծ սիրով նորա ետևէն գնացին, որով նորա բնակարանը մտնելու և նորա հետ խօսակից լինելու արժանացան: Դու ևս նոցա նման կատարեալ սիրով Յիսուսի հրամանին հնազանդելով՝ նորա ետևէն գնա, Աստուծոյ աբքայութեան անվախճան փառաց կարժանանաս:

նա, և ասէ. ահաւասիկ գառն Աստուծոյ, որ քաւէ նայ զմեզս աշխարհի. Յովհ. Ա. 29.

1. Էր Անդրէաս եղբայր Սիմօնի վիմի, մի յերկուց անտի, որք լուան ի Յովհաննէ՝ և գնացին զկնի նորա. Յովհ. Ա. 40, մինչև 51. համար.

Հարցում ԺԴ.

Ցիշեալ Անդրէասն ու նորա ընկերը Յիսուսի հետ ի՞նչ խօսեցան.

Պաս. Թէպէտև նորա խօսակցութիւնը գրուած չէ, բայց յայտնի է որ նորա քաղցր խօսքերը լսելով հաւատացին: Բանզի Անդրէաս իւր եղբօր Սիմօնին ասաց յետոյ. «գտանք Մեսիան» և տարաւ զայն առ Յիսուս, որ զայն տեսնելով՝ կասէ. «դու Յովհաննու որդին Սիմօնն ես, դու կեփաս պէտք է կոչուիս, որ Պետրոս կը նշանակէ». յայնժամ Պետրոս կը հաւատայ անոր: Յաջորդ օրը, երբ որ Յիսուս նորէն Գալիլեա կը գնար, Փիլիպպոսը կը գտնէ, որ Պետրոսի և Անդրէասի քաղաքակից, այն է Բեթսայիդա կոչուած տեղէն էր, և զոր Յիսուս կամելով աշակերտել իրեն, «ե՛կ իմ ետևէն» ասելուն պէս, իսկոյն հետևեցաւ անոր:

Յիրաւի մեծ շնորհք է մի մարդու համար, որ Յիսուս ասէ իրեն. «իմ ետևէս եկուր», և իրօք նա իւր բազում ողորմութեամբ զանազան կերպերով ամենքը կը կոչէ, սակայն հնազանդելով նորա ետևէն գնացողները հազուագիւտ են այժմ: Երանի անոր, որ Յիսուսի ետևէն կերթայ, ինչպէս որ Փիլիպպոս գնալով՝ աշակերտեցաւ նմա: Որովհետև Յիսուսի խօսքը այն ատենն ազդեց նորա սրտին, որ ինքը հաւատալէն զատ՝ իւր բարեկամ Նաթանայէլը ևս գտնելով կասէ. «Նազարէթցի Յովսէփի

որդին Յիսուսը գտանք, որուն նկատմամբ Մովսէս և այլ մարգարէները գրեցին։»

Թէպէտև Նաթանայէլ այս մասին շատ ուրախացաւ, բայց կը հարցնէ. «միթէ Նազարէթէն այդպիսի մի լաւ մարդ կարո՞ղ է ելնել», որուն կը պատասխանէ. «արի և տես։» Երբ որ նա կը մօտենար, Յիսուս զայն տեսնելով՝ կասէ. «ահա մի Իսրայէլացի, յորում նենգութիւն չկայ։» Նաթանայէլ զարմացած՝ կը հարցնէ թէ՝ «ուստի՞ կը ճանաչես զիս»։ Յիսուս կը պատասխանէ. «Փիլիպպոսը զքեզ դեռ չը կոչած՝ թզենիին ներքև տեսայ զքեզ։» Նաթանայէլ՝ որքան որ Յիսուսի մասին Փիլիպպոսէն շատ բան լսած էր, նորա սոյն խօսքն էլ լսածին պէս՝ իսկոյն հաւատայ և խոստովանեցաւ ասելով. «Րաբբի, դու ես Աստուծոյ որդին, և Իսրայէլի թագաւորը»՝ որուն Յիսուս կը պատասխանէ. «եթէ հաւատաս, աւելի մեծամեծ բաներ պիտի տեսնես, երկինքը պիտի բացուի և Աստուծոյ հրեշտակները մարդոյ որդւոյն վրայ պիտի ելնեն և իջնեն», այն է պիտի ծառայեն. ինչպէս որ յարութիւն առած և յերկինս համբարձած ժամանակ՝ հրեշտակները երկինքէն իջնելով մարդոց իմաց տուին. նոյնպէս դատաստանի օրում անհամար հրեշտակներ Յիսուսի ծառայելու համար երկինքէն պիտի իջնեն։

Հարց. ԺԵ.

Յիսուս Հոգւոյ համար ինքզինքը որդի մարդոյ կը կոչէ.

Պատ. Յայտնելու համար թէ ինքը կատարեալ մարդ է։ Որովհետև, քանի ըսա մարմնոյ հայր չունէր, ճշմարիտ որդի Աստուծոյ ու ճշմարիտ Աստուած էր, բայց մարդկային ազգի փրկութեան համար կոյս աղջիկէ ծնելով՝ ճշմարիտ մարդ լինելուն համար որդի մարդոյ անուամբ կը կոչէ զինքը, ինչպէս որ նորա նկատմամբ գրուած է թէ Դաւթի և Աբրահամու որդին է (Մատթ. Ա.), ըստ որում նոցա ցեղէն մարմին առաւ։ Ա յս պատճառաւ քարոզելու և հրաշագործելու ժամանակ, երբեմն Աստուածութիւնը և երբեմն մարդկութիւնը կը յայտներ. վասն զի, եթէ Աստուած լինէր միայն, անկարելի էր մեռնիլ. և եթէ սոսկ մարդ լինէր, նորա մահուամբ մարդկութիւնը կարող չէր ապաթիլ մեղքէ. ինչպէս որ սուրբ եկեղեցին կը դաւանի զայն կոպտաբեալ Աստուած և կոպտաբեալ մարդ։

Հարց. ԺԶ.

Յիսուսի գործած հրաշից առաջինը կամ սկիզբը ո՞րն է.

Պատ. Ջրոյն գինիի փոխարկումը։ Որովհետև, ինչպէս վերը յիշուեցաւ, Փիլիպպոս կոչելէ գինի,

երբ որ Գալիլեա գնաց, երրորդ օրը Գալիլեայի Կանա քաղաքում հարսանիք լինելով՝ սուրբ Աստուածածինն, Յիսուս և նորա աշակերտք ևս հրաւիրուեցան ի հարսանիս[1]. քանզի հարսանեաց տէրը սուրբ Աստուածածնայ ազգական էր, կը կարծուի: Սակայն Յիսուս ո՛չ թէ միայն ազգականութեան պատճառաւ գնաց հարսանիք, այլ՝ իբրեն աստուածային գօրութիւնը անդ ցոյց տալու համար. նա մանաւանդ առաջին հրաշքը սուրբ Աստուածածնայ միջնորդութեամբ պէտք է ի գործ դնէր, որպէս զի ամէն մարդ նորա յարգը ճանաչելով նորա բարեխօսութիւնը խնդրէ և այսպէս իւր փափաքանաց կատարմանը հասնի:

Աղտարև հարսանիքում դինին պակսելով՝ հարսանեաց տիրոջ մոտաստանգութիւնը սուրբ Աստուածածնին լսանալուն պէս՝ Յիսուսի կը յայտնէ թէ գինի չունին. և թէպէտ նա կատարկէ թէ իւր ժամանակը դեռ հասած չէ, այսու հանդերձ սուրբ կոյսը ծառայից կասէ. «Ինչ որ Յիսուս ձեզ կը պատուիրէ, ձշդիւ գործադրեցէք:» Անտեղ վէց քարէ կարասներ կային, որոց ամէն մէկը երկու կամ երեք մաչ ջուր կը պարունակէր, և որ ըստ օրինաց կերակուրի ժամանակ իրենց ձեռքերը լուալու յատկացեալ էին:

1. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց, և անդ էր մայրն Յիսուսի. կոչեցաւ և Յիսուս. Յովհ. Բ. 1, մինչև 10 համար.

Երբ որ Յիսուսի հրամանաւ կարասները ջրով լեցուցին, հրամայեց նոցա բերել տաճարապետին, որ գինիի փոխարկուած ջուրը ճաշակելէ յետոյ՝ կը խօսի փեսային ասելով թէ՝ «ամէն մարդ լաւ գինին առաջ կը հրամցնէ, և ապա յոռին. դուն ընդհակառակն լաւագոյն գինին վերջում պահեցիր»: քանզի չէր գիտեր նա թէ ուսում էր այն, բայց կարասները լեցնող ծառայք գիտէին:

Ապա Յիսուս Կափառնայում քաղաքը կուգայ. բայց Զատկի տօնը մերձ լինելուն համար այնտեղ շատ ժամանակ չը մնալով յերուսաղէմ եկած միջոցին[1], կը տեսնէ որ մարդիկ Աստուծոյ տաճարում արջառ, ոչխար և աղաւնի վաճառելով՝ շահադիտութեամբ զբաղեալ էին: Տես դու աստ շահասէր հրէից անպատկառ ընթացքը. նոքա՝ փոխանակ Աստուծոյ տան պատիւը ամէն կերպով պահելու՝ ինչպէս որ պարտական էին, իրենց անձնական շահուն համար երբ մի հասարակ տեղում անտասուն դնել և վաճառելու կը յանդգնէին:

Ահա այս պատճառաւ Յիսուս իրաւամբ տասիկ գայրացած՝ չուանէ մի խարազան կը շինէ, և բոլոր արջառներն ու ոչխարները տաճարէն դուրս հանելէ ետև՝ սեղանաւորաց դրամներն էլ ցրուե-

1. Ճեա այսօրիկ էջ Յիսուս ի Կափառնայում... և անդ լինէր ո՛չ բազում ինչ աւուրս: Եւ էր մերձ պատին Հրէից, և ել Յիսուս յԵրուսաղէմ. Յովհ. Բ. 12.

լով՝ նոցա տախտակները կը քանդէ, և ազատնի վաճառողներուն կասէ. «վերուցէք ասոնք ղայդ, և իմ հօրս տունը վաճառանոց մի դարձնէք[1]։» Ա՛յս խօսքով ոչ միայն վինքը Աստուծոյ որդի կանուանէ, այլ և այս մասին և այս պարագայում նորա նկատմամբ գրուած մարգարէական մի պատգամն էլ կատարուեցաւ, որ է «քու տան համար ունեցածս նախանձը ուտէ զիս[2]։»

Թէպէտև հրէայք Յիսուսի այս կերպ իշխանական վարմունքին վրայ բարկացան, բայց առ երկիւղի չը կարողանալով արգիլել, միայն կառաջկեն ասելով թէ՝ «ի՞նչ նշան կը ցուցնես մեզ, որ այդ բանը կը գործես»։ Յիսուս կը պատասխանէ նոցա. «քակեցէք այս տաճարը. և ես երեք օրում կ՚ինեմ զայն։» Նա այդ խօսքն այլաբանօրէն ասաց իւր անձի նկատմամբ, քանի որ հրէից ձեռքով պիտի մեռնէր և երեք օրէն յարութիւն պիտի առնէր։ Բայց նոքա Սողոմոնի շինած տաճարին համար հասկնալով՝ կը պատասխանեն Յիսուսի թէ՝ «այս տաճարը քառասուն և վեց տարիում շինուեցաւ. դու երեք օրո՞ւմ պէտք է շինես զայն։» (Տես այս մասին չորրորդ գարու Խ-րդ հարցում՝ ուր յիշուեցաւ թէ տաճարի շինութիւնը

1. Առէ ցնոսա, առէ՛ք զայդ ասոնք, և մի առնէք զտունն Հօր իմոյ տուն վաճառի. Յովհ. Բ. 16.

2. Նախանձ տան քո կերեցէ զիս. Յովհ Բ. 17. —Սաղմ. ԿԹ. 11.

քանի՞ տարի տևեց)։

Յիրաւի Յիսուսի բոլոր խօսքերը ճշմարտութիւն են, բայց երբ որ հրէից ձեռամբ մեռնելով՝ երեք օրէն յարութիւն առաւ, առաքեալք յիշեցին այդ խօսքը և հաւատացին նորա խօսքերուն և նորա նկատմամբ գրուածներուն[1]։

Հարց՝ ԻԷ.

Ցիսուսի գործած հրաշքները տեսնողաց ամէնքը հաւատացի՞ն իրեն.

Պաս. Թէև բոլորը չը հաւատացին, բայց շատերը հաւատացին։ Ինչպէս որ նա Երուսաղէմ քաղաքում գտնուած ժամանակ փարիսեցիներէն Նիկոդիմոս անուամբ գիտուն և պատուաւոր մի անձ նկատելով թէ Յիսուսի գործած հրաշքները միայն աստուածային կարողութեան յատուկ են, կը հաւատայ ի սրտէ, և նորա հետ տեսակցիլ կուզէ որ հարկաւոր եղած բաներն էլ ուսանի. սակայն խոովայոյզ հրէից բամբասանքէն երկնչելով՝ դիշեր ժամանակ Յիսուսի մօտ կուգայ, և նորա աստուածային առաքելութիւնը խոստովանելով կասէ. «ո՛չ ոք կարող է այդ հրաշքները գործել,

1. Բայց նա ասէը վասն տաճարի մարմնոյ իւրոյ։ Իսկ յորժամ յարեաւն ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նորա, թէ այս է՝ զոր ասացն. և հաւատացին գրոյն և բանին՝ զոր ասաց Յիսուս. Յովհ. Բ. 21.

եթէ Աստուած նորա հետ չը լինի։»

Որքան որ Նիկոդիմոսի հաւատքը յայտնի եղաւ այս խօսքերով, բայց ըստ որում՝ նա եկած էր հրահանգուելու Յիսուսէն, որոյ հրահանգը նոր օրէնքը հաստատելու և մարդիկը արքայութեան արժանացնելու վրայ կը կայանար, և նոր օրինաց հիմն էլ մկրտութիւնը լինելով՝ քրիստոնէական սուրբ հաւատոյ ծագմանէն գինի, կը յայտնէ Յիսուս թէ՝ առանց մկրտուելու կարելի չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել, և ապա կը խօսի իւր Աստուածութեան և մարդկութեան վրայ և խաչը երթալուն վրայ, և վերջապէս կը յաւելու թէ հաւատացեալները յաւերժական կեանքն ունին և անհաւատք դժոխք պէտք է գնան[1]։

Ապա Յիսուս իրեն աշակերտաց հետ Հրէաստանի գաւառում շրջելով՝ ժողովուրդը կը մկրտէր, բայց ո՛չ թէ ինքն անձամբ, այլ՝ իւր հրամանաւ աշակերտները կը մկրտէին իրեն դիմող ժողովուրդը։ Նոյն միջոցում՝ Յովհաննէսն էլ Յորդանանի մօտ Աինոն կոչուած տեղում կը մկրտէր, ուր ջուր շատ կը գտնուէր. որովհետև դեռ բանտարկուած

1. Եւ էր այդ մի և փարիսեցւոց անուն՝ Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից։ Սա եկն առ նա գիշերի՝ և ասէ ցնա. ռաբբի, գիտեմ եթէ յԱստուծոյ եկեալ ես վարդապետ, զի ո՛չ ոք կարէ զայդ նշանս առնել՝ զոր դուդ առնես, եթէ ո՛չ Աստուած իցէ ընդ նմա. Ցովհ. Գ. մինչև 18 համար.

չէր։ Շատ ժողովուրդ Յիսուսի վարդապետութենէն դրաւուած՝ սիրով առ նա կուգային գունդագունդ մկրտուելու համար. այս բանիս համար Յովհաննու աշակերտները նախանձելով՝ կը դանգատին առ Յովհաննէս։

Քանի Յիսուսի մկրտութիւնը հոգւոյն սրբոյ զօրութեամբ կատարուելուն համար մարդոց հոգին մեղքէն կը սրբէր, իսկ Յովհաննէսի մկրտութիւնը այս զօրութիւնը չունենալով՝ միայն Յիսուսի մկրտութեան կը պատրաստէր ժողովուրդը. այս պատճառաւ Յիսուսէն մկրտուողները Յովհաննէսի աշակերտաց հետ կը վիճաբանէին[1]։ Թէև Յովհաննու աշակերտք նորա պատուոյն նախանձաւորութեամբ այսպիսի վիճաբանութեան խօսքեր կանէին, բայց ինքը Յովհաննէս, ինչպէս որ յառաջագոյն խոստովանած էր թէ ինքը Քրիստոսը չէ, նոյնպէս և այս անգամ՝ կը կրկնէ նոյն խոստովանութիւնը յայտնելով թէ ինքն օր ըստ օրէ պիտի տկարանայ և նա պիտի զօրանայ[2]։

Այս խօսքերէն յետոյ Յովհաննէս ունկնդիր ժողովրդեան յայտնապէս իմացուց թէ Յիսուսն է Մեսիան և Աստուծոյ որդին, որուն հաւատացողները արքայութեան և հաւատալ չուզողները

1. Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ հրէից վասն սրբութեան. Յովհ. Գ. 25.

2. Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ . . . նմա պարտ է աճել և ինձ մեղմանալ. Ցովհ. Գ. 27.

դատապարտութեան կարժանանան և Աստուծոյ բարկութիւնը նոցա վրայ կը մնայ [1]. որպէս զի ամէնքը Յիսուսի հաւատալով՝ նորա վարդապետութեան և քարոզութեանց հետևին ու այսպէս յաւիտենական կենաց արժանանան։

Հարցում ԻԸ.

Յիսուս հետզհետէ աշակերտներ ունենալով ժողովուրդը մկրտելուն համար փարիսեցիները քարկացան.

Պաս. Բարկացան։ Որովհետև ժողովրդեան առջև նորա անունը փառաւորուելուն վրայ կը նախանձէին միշտ. և նոցա խարհուրդը Յիսուսի ծանօթ լինելով՝ իրենց բարկութիւնը ամբքելու և մանաւանդ գեռ իրեն խաչը ելնելու ժամանակը եկած չը լինելուն համար, Գալիլեայի կողմերը կը քաշուի [2]։ Սամարիոյ գաւառէն անցած ժամանակ՝ ժամը վեցի միջոցին Սիւքար քաղաքը կուգայ, որուն մօտ էր Յակոբ նահապետի՝ իր Յովսէփ

1. Որ հաւատայ Յովգ՝ ընդունի զկեանս յաւիտենական, և որ ոչն հնազանդի Որդւոյ՝ ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա. Ցովհ. Գ. 36.

2. Իբրև գիտաց Ցիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն . . . եթող զՀրէաստան երկիր, և եկն մինչև ի Գալիլեա. Ցովհ. Դ. 1.

որդւոյն տուած գիւղը. (տես երրորդ դարու Լ.-րդ հարցում) և քաղաքէն դուրս Ջրհոր մի կար. զոր Յակոբ նահապետ փորած լինելուն համար՝ նորա անուամբ կը կոչուէր։

Յիսուս Ջրհորին մօտ նստած միջոցին մի Սամարացի կին կուգայ Ջուր քաշելու համար. Յիսուս, որ կնոջ ողորմութիւն պէտք է անէր, Ջուր կուզէ անկէ, որովհետև աշակերտները կերակուր գնելու համար քաղաքը գնացած էին։ Սակայն Հրէայք կրօնական խնդիրներուն Սամարացւոց հակառակ լինելով՝ նոցա հետ մտերմաբար տեսակցելէ կզգուշանային. այս պատճառաւ կինը կառարկէ թէ՝ «դուն Հրէայ ես, ինչպէ՞ս Սամարացիէն Ջուր կուզես։» Յիսուս կը պատասխանէ. «Եթէ դիտնայիր Աստուծոյ ողորմութիւնը՝ թէ ո՞վ է քեզմէ Ջուր ուզողը, դու անկէ Ջուր կուզէիր և նա քեզ կուտար կեանց Ջուր։»

Թէպէտև սոյն բառը՝ հոգևոր մտքով մկրտութեան համար կիմացուի, սակայն կինը հասարակ Ջուր կարծելով՝ կը պատասխանէ. «տուր ինձ այդ Ջուրէն որ չը ծարաւիմ, և այլ ևս այս Ջրհորէն Ջուր քաշելու չգամ։» Աւդ՝ յիշեալ կինը ապօրէն կենցաղ ունենալով հինգ այր մարդ փոխած էր. Յիսուս, որ զոյն ապաշխարութեան հրաւիրելու էր, կասէ կնոջ թէ «Գնա և էրիկդ այստեղ կանչէ։» Կինը պատասխան կուտայ որ էրիկ չունի։ Երբ որ Յիսուս նորա բերնէն այս խոստովանու-

թիւնն առաւ, պատասխանեց. «Ճշմարիտ է ասածդ, քանզի հինգ երիկ փոխելով՝ ներկայ ունեցածդ՝ քու երիկդ չէ։»

Յայնժամ կինը կը հասկանայ թէ իւր դրացիները յայտնի են Յիսուսին, մինչդեռ ինքը մինչեւ այն ժամանակ զայն իբրեւ սոսկական մէկը համարելով՝ ասած էր, թէ՝ «դու դպրի իսկ չունիս, որ չրհորդն չուր հանես. միթէ դու մեր հայր Յակոբէն առաւե՞լ մեծ մարդ ես, որ այս չրհորը մեզ տուաւ, ինքն ու իւր որդիքը այս չուրէն խմեցին». ուստի երբ որ Յիսուս իւր կեանքի թագուն գործերը յայտնեց, զայն մարգարէ կարծելով՝ չրի խնդիրը ի բաց կը թողու, և հրէից ու Սամարացւոց միջեւ տեղի ունեցած կրօնական խնդիրը յառաջ բերելով՝ կը կամի իմանալ թէ Ճշմարտութիւնը ո՞ր կողմն է հրէից թէ Սամարացւոց։

Որովհետեւ հրէայք կասկին թէ՝ ամենուրեք օրէն է աղօթել առ Աստուած, բայց Աստուծոյ տո՛հ մատուցանել՝ միայն տաճարում օրէն է։ Սոցա հակառակ, Սամարացիք կը պնդէին թէ Գարիզին լերան վրայ պարտ է Աստուծոյ աղօթել և տո՛հ մատուցանել. և այդ լեռը՝ վերոյիշեալ Սիւքար քաղաքին մերձ է։ Այս մասին Յիսուս յայտնելու համար թէ երկու կողմանց վէճը խափանուելու է, այսպէս կը պատասխանէ. «ժամանակ պիտի գայ և արդէն իսկ եկած է, որ ո՛չ այս լերան վրայ և ո՛չ Երուսաղէմ՝ քաղաքում՝ այլ՝ կատարեալ հաւատ-

քով և հոգւով երկրպագելու են մարդիկ Աստուծոյ. քանզի նորա երկրպագուաց պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկիր պագանել։»

Կինը՝ թէև իմացաւ այս խօսքին ճշմարտութիւնը և սակայն կրկին ասաց թէ՝ «գիտենք որ Մեսիան պիտի գայ և այս ամէնը պէտք է սորվեցնէ». կնոջ սոյն պատասխանին վրայ Յիսուս կը յայտնէ պարզապէս թէ ինքն է Մեսիան, որպէս զի ուրախանայ։ Արդարև նա այնչափ ուրախացաւ, որ Յիսուսի լուրը ուրիշներուն ևս հաղորդելու նպատակաւ՝ մինչեւ իսկ իւր սափորը այնտեղ ձգելով՝ իսկոյն քաղաք կը գնայ, և ընակիչներուն կըսէ. «եկէ՛ք տեսէ՛ք մի մարդ, որ իմ բոլոր գործերն ինձ պատմեց, արդեօք նա՞ է Մեսիան։»

Ինչպէս վերը յիշուեցաւ, որովհետեւ աշակերտները քաղաք գնացած էին կերակուր գնելու, այս միջոցին գալով՝ Յիսուսի և կնոջ խօսակցութեան վրայ զարմացան, բայց չը համարձակելով պատճառը հարցնել, կաղաչեն որ կերակուր ուտէ, և նա կը պատասխանէ թէ՝ «ես կերակուր ունիմ, զոր դուք չէք գիտեր». այս խօսքը աշակերտք մարմնաւոր կամ նիւթական կերակուրի մասին կարծելով՝ կսկսին միմեանց հարցնել թէ արդեօք մէկը կերակուր բերա՞ծ է անոր. Յիսուս նոցա հարցման ինքը կը պատասխանէ. «Իմ կերակուրս այն է, որ ես կամ զրկողին հրամանը կատարեմ։»

Արդարև Յիսուս, որ եկած էր Հօր Աստու-

Ծոյ կամաք մարդկային ազգը մեղաց լուծէն փրկելու, կը յայտնէ նաև թէ՝ ինքն էլ իւր կոչմ. առաքեալները պէտք է ղրկէ և նոցա քարոզութեամբ հաւատացողք երկնային անվախճան կենաց պիտի արժանանան, և թէ մարդարէք ու առաքեալք հաւատարապէս Աստուծոյ արքայութեան մէջ պէտք է հրմնուին, և յետոյ այլազանօրէն կը յաւելու. «Տեսէք, հունձքերը հասած են։» Յիրաւի այն ժամանակէն մինչև հունձքը չորս ամիս կար, բայց իբր ներկայ՝ հասածի պէս ցոյց տալով կ'ուզեն թէ առաքելոց քարոզութիւնքը մարդիկ պիտի ընդունէին, որպէս մի աշակերտք ուրախ լինին այդ բանին համար։

Վասն զի, արդէն յաւաջագոյն մարդարէները Մեսիայի գալը գուշակելով՝ իբր թէ արտում սերմը ցանեցին, և առաքեալք նորա գալուստը յայտնաբարբառ քարոզելով՝ հասուննացած հունձքը քաղեցին։ Ա.յս կերպով դասք մարգարէից և առաքելոց հաւատարապէս ցնծալու իրաւունք ունեցան, ըստ բանի Փրկչին։ Երբ որ Յիսուս այսպէս կը խօսէր՝ Սամարիոյ բնակիչներէն շատերը գալով՝ նորա քարոզութիւնները լսեցին, և իրենց յաւուրկ խնդրանաց վրայ՝ Յիսուս երկու օր նոցա մնաց. և նորա Փրկչի խօսքերէն այնքան ախորժեցան, որ կատարելապէս հաւատալով նորա առաքելութեան, վերոյիշեալ կնոջ կասէին. «այսուհետև ո՛չ թէ քու խօսքով կը հաւատանք անոր, այլ

մենք ինքներնիս լսեցինք նորա վարդապետութիւնքը և դիտենք թէ ճշմարտապէս այս է աշխարհի Փրկիչը, որ գալու էր[1]։»

Յիսուս երկու օր Սամարիայում կենալէ ետքը, Գալիլեայի կանա քաղաքը կերթայ, ուր յառաջագոյն ջուրը գինիի փոխած էր, և ուր մի թագաւորական, որոյ որդին Կափառնայում քաղաքի մէջ մահացու կերպով հիւանդ էր, Յիսուսի գալուստը լսելով՝ նորա մօտ կը դնայ և կաղաչէ որ Կափառնայում գայ և իւր որդին բժշկէ։ Յիսուս կը պատասխանէ. «Մինչև որ հրաշք չը տեսնէք, չէք հաւատար։» Նա վերստին աղաչելով կասէր. «Տէր, որդիս դեռ չմեռած՝ համէ գալ և բժշկել պայն»։ Փրկիչը կասէ թագաւորականին թէ «Գնա, որդիդ առողջ է։» Սոյն խօսքին կատարեալ հաւատք ընծայելով՝ նա կը դնայ և դեռ Կափառնայում չը հասած՝ ծառայքը կը դիմաւորեն պայն, աւետիս տալով թէ որդին բոլորովին բժշկուած է։

Որովհետև Յիսուս երբ որ կամեցաւ նորա որդւոյն բժշկութիւն պարգևել, հիւանդը նոյն

---

1. Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար, մերձ ի կիւղն զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսէփայ։ Եւ անդ էր աղբիւր մի Յակոբայ, և Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն, նստեր ի վերայ աղբերն, և էր ժամ երբև վեցերորդ։ Գայ կինն մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս, տուր ինձ ըմպել. Յովհ. Գ. 5. մինչև 42 համար.

Յորդէին Կափառնայում քաղաքում խոկոյն բժըշկուեցաւ. յայնժամ Թագաւորացը խիստ շատ ուրախանալով հանդերձ, հարցուց թէ ՚ըրբ առողջացաւ. ծառայք կը յայտնեն թէ երէկ ժամ եօթնին. որով մարդը կիմանայ թէ Յիսուսի ասած ժամանակը թէ «Ինա՛ որդիդ առողջ է», հիւանդը իրօք իւր առողջութիւնը գտած է. այս պատճառաւ ինքն իւր բոլոր գերդաստանով կը հաւատայ Յիսուսին[1]: Վերոյիշեալ հրաշքէն յետոյ՝ Յիսուս լսելով թէ Յովհաննէս բանտարկուած է, կը գնայ ստորին Գալիլեայի կողմը դէպի Կափառնայում, որպէս պի այն կողմերում ևս սկսի քարոզել և հրաշագործել[2]:

Հպ. ԺԹ.

Ո՛վ բանտարկեց Յովհաննէսը եւ ի՛նչ պատճառաւ.

Պապ. Մեծին Հերովդէսի որդին՝ Հերովդէս Անթիպասը, որ Գալիլեայում կը թագաւորէր:

---

1. Եկին գարձեալ ի Կանայ Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի, և անդ էր թագաւորական մի, որոյ որդին հիւանդ կայր ի Կափառնայում. Յովհ. Դ. 46. մինչև 53 համար.

2. Եւ իբրև լուաւ Յիսուս՝ եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ և գնաց ի Գալիլեա. Մատթ. Դ. 12.

Յիրաւի նա կը ձանձրէր Յովհաննէսը իբրև սուրբ մարդ, և մի ժամանակ նորա խօսքերը կը լսէր երկիւղածութեամբ[1], բայց յետոյ ապօրէն ընթացքի հետևելով՝ եղբօրը Փիլիպպոսի կնոջ Հերովդիադայի սադրանօք և գրգռութեամբ բանտարկեց զայն. որովհետև Փիլիպպոսի կենդանութեան ժամանակ նորա կինը առնելուն համար՝ Յովհաննէսն յանդիմանուած էր: Թէպէտև Հերովդէս իւր չարութեան պատճառաւ բանտարկեց զայն[2], բայց այս պարագայում Յովհաննէսի մարգարէական խօսքը կատարուեցաւ թէ՝ ինքը պիտի մեղմանայ, ընդհակառակն Յիսուս պէտք է զօրանայ (տես ԺԷ-րդ հարցում):

Արդարև Յովհաննէսի բանտարկութենէ ղինի Յիսուս սկսաւ քարոզել թէ՝ «Ապաշխարեցէք, որովհետև երկնից թագաւորութիւնը մօտ է:» Այսպէս նա՝ Յովհաննէսի քարոզութիւնը վաւերացնելով, ամէնքը կը հրաւիրէ յապաշխարութիւն:

---

1. Զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէ, քանզի գիտէր զնա այր արդար և սուրբ, և ապաստէր նմա և լուեալ ի նմանէ՝ բազում ինչ առնէր՝ և քաղցրութեամբ լսէր նմա. Մարկ. Զ. 20.

2. Բայց Հերովդէս չորրորդապետ յանդիմանեալ ի նմանէ վասն Հերովդիադայ կնոջ եղբօր իւրոյ՝ և վասն ամենայն չարեաց զոր գործեաց Հերովդէս, յաւել և զայն ևս ի վերայ ամենայնի. և եդ ի բանտի զՅովհաննէս. Ղուկ. Գ. 19.

Ապա երբ որ Յիսուս Գալիլեայի ծովուն եզերքէն կանցնէր, Պետրոսն ու նորա Անդրէաս եղբայրը տեսնելով որ այնտեղ ձուկ կորսային, կը կոչէ զանոնք ասելով. «եաւէս եկէք, որ զձեզ մարդկան որսորդ անեմ»։ Նոքա իսկոյն իրենց գործիքները թողլով՝ նորա եաւէն կը գնան։

Թէպէտև սոքա յառաջագոյն Յիսուսի հաւատալով՝ աշակերտած էին անոր, բայց միշտ նորա մօտ չը մնալով՝ երբեմն ձուկ որսալու ևս կը գնային. այս անգամ ձկնորսութիւնը թողլով՝ կը հետևին Փրկչին։ Երբ որ մի քիչ ևս յառաջ կը գնայ, Յակոբոսն ու նորա եղբայր Յովհաննէսը կը տեսնէ, որ իրենց Զեբեդէոս հօր հետ նաւին մէջ ուռկան կը շինէին. նոցա ևս հրաւէր կը կարդայ իրեն հետևելու, որոնք իսկոյն իրենց հայրը նաւում՝ թողլով՝ յօժարութեամբ և սիրով կը հետևին երկնաւոր վարդապետին[1]։

Երբ որ Յիսուս առաքելոց և այլ աշակերտաց հետ շաբաթ օրում՝ Կափառնայումի հրէից ժողո-

1. Յայնմհետէ սկսաւ քարոզել Յիսուս՝ և ասել. ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից։ Մինչդեռ զդնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց։ եաես երկուս եղբարս զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, և զԱնդրէաս եղբայր նորա՝ արկեալ զուռկան ի ծով՝ քանզի ձկնորսք էին։ Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան. Մատթ. Գ. 17. մինչև 22 համար.

վարանը դնալով՝ սկսաւ ուսուցանել, ամէնքը զարմացան. որովհետև ոչ թէ հրէից դպիրներուն պէս, այլ իշխանութեամբ կուսուցանէր[1]։ Անտեղ մի այբահար մարդ գալով կաղաղակէ. «քեզ հետ ինչ գործ ունինք, (ասել կուզէ թէ քեզ ինչ ընտս տալինք) որ եկար զմեզ կորսնցնելու. գիտենք թէ դու ով ես, ո Աստուծոյ սուրբը։» Այս պարագայում սատանայն ոչ թէ Յիսուսը փառաւորելու համար այսպէս խօսեցաւ, այլ յատկապէս նորա ով լինելը իմանալու համար. սակայն Յիսուս նորա նպատակը գիտնալով՝ նորա խօսքին չը պատասխանելէն զատ՝ իշխանաբար սաստելով կասէ. «Պապանձիր, ել այդ մարդէն։» Սոյն հրամանին վրայ հիւանդը գետնին կը զարնէ և բարձրաձայն աղաղակելով՝ իսկոյն կը թողու զայն, զոր տեսնողները զարմացած՝ կսկսին իրարու հարցնել. «այս ինչ վարդապետութիւն է, որ չար ոգիներուն կը սաստէ և նոքա կը հնազանդին իրեն[2]։»

1. Եւ մտանեն ի Կափառնայում, և իսկ և իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն՝ ուսուցանէը զնոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէը զնոսա իբրև իշխանութեամբ և ոչ որպէս դպիրքն. Մարկ. Ա. 21, 22.

2. Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ ոգի, որ աղաղակեաց և ասէ. զի՞ կայ իմ և քո . . . գիտեմք զքեզ՝ ո՞վ ես՝ սուրբդ Աստուծոյ. Մարկ. Ա. 23. մինչև 27 համար.

Ա. յնտեղէն Սիմոնի տունը կուգայ, որուն գո-
քանչը չերժանալով հիւանդ պարկած էր. և երբ
Յիսուսի կիմացնեն, նորա մնա գնալով՝ ձեռքը
բռնելուն պէս՝ կը բժշկուի, և կսկսի ծառայել
նոցա։ Երեկոյեան ժամանակ բազում հիւանդներ
և դիւահարներ կը բերեն առ նա, զորս բոլորը կը
բժշկէ, որով եսայի մարգարէի ձեռամբ Ս. Գրքուժ
գրուածը կատարուեցաւ թէ՝ «Նա հիւանդու-
թիւնքն ու ցաւերը վերացուց[1]։» Դևերն էլ նորա
հրամանին դիմադրելու անզօր լինելով՝ մարդիկնե-
րէն ելած ժամանակ, թէև կը խոստովանէին զայն
Որդի Աստուծոյ և այս գաւանութիւնը բարձրա-
ձայն աղաղակաւ կուտային, սակայն ոչ թէ ճշմար-
տապէս գիտնալով այսպէս կանէին, այլ՝ նորա զօ-
րութեան նայելով՝ կը կասկածէին, և ոչ լինելը
իմանալու համար միայն առ ի վորձ կը գովէին
զայն. այդ պատճառաւ նոցա սատակելով՝ թոյլ չէր
տար որ իրեն Մեսիա լինելը հռչակեն[2]։ Որովհե-

1. Թերև երեկոյ եղև՝ մատուցին առ նա դիւա-
հարս բազումս, և եհան զոգիսն բանիւ, և զամենայն
հիւանդան բժշկեաց։ Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի
ձեռն Եսայեայ մարգարէի. նա զհիւանդութիւնս մեր
վերացոյց և զցաւս մեր եբարձ. Մատթ. Ը. 16.—Ե-
սայ. ԾԳ. 4.

2. Ելանէին դևք ի բազմաց՝ աղաղակէին և
ասէին. Եթէ դու ես որդի Աստուծոյ, և նա սաստէը
և ոչ տայը նոցա թոյլ խօսել. վի գիտէին զնա թէ
Քրիստոս է։ Ղուկ. Դ. 41.

ւև նոցա խորամանկութիւնը ծանօթ լինելով իրեն,
չէր կամենար որ մարդիկ խաբուին։

Յաջորդ առաւօտ կանուխէն կը գնայ անա-
պատը, և երբ այնտեղ կաղօթէր, Սիմոն և նորա
հետ ուրիշներ գալով կը խնդրեն որ Կափառնայու-
մէն չը մեկնի՝ յայտնելով թէ բոլոր մարդիկ զինքը
կուզեն տեսնել և լսել։ Սակայն Յիսուս, որ ուրիշ
տեղեաց ևս ողորմելու էր, կը պատասխանէ թէ
գնանք ուրիշ տեղերում ևս քարոզելու. ուսանի
գնալով Գալիլեայի ամբողջ գաւառում քարոզելով՝
հիւանդներն ու ախտաժէտ մարդիկը կը բժշկէր,
և որովհետև նորա համբաւը մինչև Ասորւոց եր-
կիրը տարածուած էր, այն կողմերէն ևս տեսակ
տեսակ հիւանդութեանց ենթակայ եղող մարդիկը
բերին առ նա և բոլորն էլ բժշկեց[1]։

Հատուած Ի.

Ժողովուրդը այդ ամէն բժշկութիւնքն ու հրաշալիքները տեսնելով՝ ճանաչեց նորա ով լինելը.

Պապ. Զը ճանաչեց։ Յիրաւի շատերը խոստո-
վանեցան թէ նա է Մեսիան. և Յիսուս իսկ շատ

1. Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասոր-
ւոց. և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ ոչք
նեղեալք էին ի պէսպէս ցաւս և ի տանջանս... և
բժշկեաց զնոսա. Մատթ. Դ. 24.

անդամ վոխադարձութեամբ կամ այլաբանական ոճով յայտնեց թէ ինքը Մեսիան է, սակայն ժողովրդեան մեծամեծները նորա նկատմամբ նախանձու լցուած՝ չը կարացին ճանաչել պայն. մանաւանդ որ Յիսուս շաբաթ օրերում հրաշքներ գործելուն համար իրը օրինաց հակառակ գործողի դէմ՝ թշնամական չար խորհուրդ ևս յղացան:

Օրինակի համար, Յիսուս Ջատկի ժօնին Երուսաղէմ գալով՝ երեսուն և ութ տարուան անդամալոյծը բժշկած ժամանակ, թշնամական մտքով հալածանք յարուցին նորա դէմ: Վասն զի, Երուսաղէմում տաճարին մօտ մի մեծ աւազան կար, յորում զոհելի ոչխարները կը լուային, և որ՝ յունարէն Պրօբատիկէ, (որ կը նշանակէ ոչխար լուալու վայր) իսկ եբրայեցի լեզուաւ Բեթհեզդայ (տուն ողորմութեան կամ տեղի առողջութեան) կը կոչուէր: Որովհետև աստուածային կամք երբեմն հրեշտակ իջնելով՝ աւազանին ջուրը կը խառնէր, և ով որ առաջ ջուրը մտնէր, իսկոյն կը բժշկուէր. առանց երբեք հիւանդութեան նշանն անդամ վրան մնալու:

Ա.յս պատճառաւ չիշեալ աւազանին շուրջը հինգ սրահներ շինուած էին, յորում տեսակ տեսակ ախտաւոր և աղքատ մարդիկ միշտ կսպասէին. քանզի հրեշտակի իջման ժամանակը յայտնի չէր: Թէպէտև մի անդամալոյծ մարդ երեսուն և ութ տարիներ սպասած էր անդ՝ բայց ըստ որում

անօգնական մէկն էր, չը կրցաւ բժշկուիլ. վասն զի հրեշտակը իջած և ջուրը յուզած ժամանակ՝ ուրիշները պայն կանխելով՝ ջուրը կը մտնէին իրմէ առաջ[1]:

Երբ որ Յիսուս, ինչպէս վերը յիշուեցաւ, Ջատկի ժօնին յԵրուսաղէմ գալով տեսաւ պայն, իմացաւ թէ երկար ժամանակէ ի վեր կսպասէ անդ, վասնորոյ հարցուց անդամալոյծին թէ կուզէ՞ բժշկուիլ. նա յայտնեց որ օգնող մէկը չունենալուն համար ճարահատ վիճակում կը գտնուի: Յիսուս գթալով ողորմելի մարդուն, «ելի, մահիճդ առ և գնա» ասելուն պէս՝ անդամալոյծը իսկոյն առողջացած՝ կառնու մահիճն ու կը գնայ: Եւ որովհետև նոյն օրը շաբաթ էր, հրէայք պայն տեսնելով՝ կասեն բժշկուածին թէ՝ «շաբաթ օրում արժան չէ քեզ մահիճդ առնուլ և գնալ». բայց նա կը պատասխանէ թէ ինքը բժշկողը ասած է իրեն մահիճը առնուլ և գնալ:

Ա.յս խօսքով ի հարկէ բժշկեալը կամեցաւ ինքը նոցա ձեռքէն ազատել, բայց նոքա կը հարցընեն թէ ո՞վ է այն մարդը, որ ասաց քեզ մա-

---

1. Ցետ այսորիկ ժօն էր Հրէից, և ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ էր յԵրուսաղէմ ի Պրօբատիկէ աւազանին, որ կոչուի եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ. յորս անկեալ դնիւը բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որք ակն ունէին ջրոյն յուզելոյ. Ցովհ. Ե. մինչև 47 համար.

հիձդ առնուլ և դնալ, որպէս ղի պատժեն զայն։ և որովհետև բժշկեալը չէր ձանաչեր Յիսուսը, որ բազմութեան պատճառաւ հեռացած էր անտի, ուստի այլ ևս խօսք չեն ունենար ասելու մարդուն։ Ապա Յիսուս տաճարում գանելով զայն, կաբեկցաբար ասաց բժշկելոյն. «ահա առողջացար, այլ ևս մի՛ մեղանչեր, որպէս ղի նորէն վնաս կամ չարիք չը պատահի քեզ։» Յիշեալը այս խօսքը լսելուն պէս՝ գնաց իսկոյն և հրեից իմաց տուաւ թէ Յիսուսն է ղինքը բժշկողը. այս պատճառաւ հրեայք առելութեամբ լեցուած՝ կը հալածէին զՅիսուս շաբաթ օրում հիւանդը բժշկելուն համար, և երբ նա պատասխանելով նոցա՝ պէսպէս ապացոյցներով իւր Աստուածութիւնը կը հաստատէ, այս անգամ կուզեն սպանել զայն։

Խրատ առ անդամալոյծի վիճակէն. որովհետև Յիսուսի այն խօսքը թէ՝ «այլ ևս մի՛ մեղանչեր, որպէս ղի նորէն չարիք չը պատահի քեզ», ցոյց կուտայ թէ նա իւր մեղայ պատճառաւ երեսուն և ութ տարի անդամալոյծ մնացած էր. ուրեմն թէ որ կուզես փորձանքէ ղերծ մնալ, Յիսուսի խօսքը երբեք մաքէդ չը հանելով՝ միշտ մեղքէ հեռի պահէ ինքզինքդ։

Ա. յնուհետև Յիսուս երուսաղէմէն Գալիլեայի կողմերը գնաց, և որովհետև նորա հրաշագործութիւնքը բոլորին արդէն յայտնի եղած էին, վասն որոյ շատ ժողովուրդ շրջակայ գաւառներէն նորա

ետևէն գնացին, և նոցա բերած բոլոր հիւանդները ու ցաւագարները բժշկեց։ Երբ ժողովրդեան ահագին բազմութիւնը տեսաւ, կամենալով այդ բազմութեան հոգևոր բարիք ևս պարգևել[1], լեռը կելնէ և կը նստի, ուր աշակերտներն էլ նորա մօտ կը ժողովին. և ահա կսկսի զանազան հոգևոր նիւթերու վրայ քարոզել և երանի տալ առաքինի մարդոց։

Գանգի՛ւ թէ միայն մարմնոյ ախտերը, այլ և մեղաց ախտերը մարդոց հոգիներէն փարատելու համար, յաճախակի քարոզելով՝ առաքինութեան շահիկները կուտուցանէր, զորս մարդիկ գործադրելով՝ արքայութեան փառաց արժանի հանդիսանան։ Վերոյիշեալ լերան վրայ քարոզած ժամանակ՝ ինը տեսակ առաքինութիւններ յառաջ կը բերէ, և երանի կը կարդայ այն մարդոց, որք անոնցմէ կը կատարեն զայնս և այսպէս կարժանանան երկնից անվախճան երանութեան։

Հարցո՛ւմ ԻԱ.

Վերոյիշեալ ինն առաքինութիւնք որո՞նք են.

Պաս. Ա. Հոգւով աղքատ լինել[2], որոյ դրօճադրութիւնը կը կայանայ ի սէր Յիսուսի աշխար-

1. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա. Մատթ. Դ. 23, 24, 25.

2. Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից. Մատթ. Ե. 3.

հային ամէն զուարճութիւն, մեծութիւն և հարստութիւն արհամարհելով՝ խոնարհութեամբ կամաւորապէս աղքատ լինելու, մեզաց շարժառիթներէն և մարմնոյ չափազանց հոգսերէն խոյս տալով՝ չար գործոց երբեք մտանակից չը գտնուելու, և հետևաբար միշտ առաքինութիւն գործելու մէջ, որ հոգւոյն անմեղութեան անհրաժեշտ է:

Ջոր օր· բոլոր սրբոց դասը ի սէր Յիսուսի մարմնաւոր հաճոյքները մոռնալով՝ միայն նորա պատուիրանները կատարելու նուիրեցին իրենց բովանդակ կարողութիւնը, և այսպէս հոգւով աղքատ, այն է անմեղ մնալով՝ արքայութեան անպրաւ փառաց արժանի հանդիսացան. նմանապէս այն անձինքը, որոնք ի սէր Յիսուսի զաշխարհ կը թողուն, առանձնական կենաց բոլոր պարտաւորութիւնքը անթերի կատարելով, և եթէ աշխարհի բնական ընթացքով այլ և այլ ներգործութեանց և նիւթական աղքատութեան ենթակայ լինին, անսրբատունչ կը համբերեն և կատարեալ գոհունակութեամբ սրտի կը տանին վշտաց, նորա հոգւով աղքատ կը համարուին, պայմանաւ որ իրենք պատճառ տուած չը լինին իրենց կրած վիշտերուն և ներգործութեանց:

Վասն զի, իրենց սեպհականայ և ապօրէն ընթացից հեռանալով տապնով և վիշտ կրելու պատրաստուած անձինք՝ և կամ նիւթական աղքատութեան մատնուած մարդիկ՝ որոնք սովոր են միշտ տրտունջ բառնալ իրենց աղքատութեան մասին, իրաւունք չունին վարձուց ակնկալել· այնպիսիք պարտին նախ գիտնալ թէ իրենց կրած ներգործութիւնք և ցաւակրութիւնք իրենց մեզաց և յանցանաց փոխարէն տրուած պատիժ են և հետևաբար պարտին ուղղել իրենց ընթացքը:

Ա. յս մասին Թո՛ղ երկնչին և զգուշանան նոքա, որոնք հպարտ և աշխարհային հոգերով չափազանց զբաղած են. որովհետև եթէ երանի տրուեցաւ նոցա, որք առաքինութեան սիրով և խոնարհութեամբ աշխարհի խաբուսիկ պատրանքներէն և հաճոյքներէն կը հրաժարին, ընդհակառակն՝ վայ կը տրուի նոցա, որոնք մարմնաւոր վայելչութեանց անձնատուր եղած են բոլորովին: Ա. յսպիսիք շուտով յուսահատ լինելէ զատ՝ իրենց վերջին զղջման ապարդիւն լինելը փորձով կը տեսնեն:

Բ· Սգաւոր լինել [1]: Սոյն խօսքը՝ ո՛չ թէ մարմնաւոր, այլ հոգևոր սգոյ կամ տրտմութեան մասին հասկանալու է· և միայն Աստուծոյ պատիւը պահելու փափաքանօք յանձն առնուած սգոյ կամ տրտմութեան մէջ կը կայանայ: Վասն որոյ նա՝ որ չուզեր պնաստուած բարկացնել, մեղք չը գործելու համար միշտ ահիւ և դողութեամբ

1· Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին· Մատթ· ե· 4·

կապրի սգաւոր վիճակում: Որովհետև մեղքը նոր կամաց հակառակ լինելով՝ ի հարկէ արդարութեամբ մեղաւորը կը պատժէ, բայց երբ մեղաւորը զԱստուած բարկացնելուն և նորա պատիւը չը պահելուն վրայ զղջմամբ և ապաշխարութեամբ կը տրտմի ու կը սգայ, նա էլ իւր ողորմութեամբ մեղաւորին հետ կը հաշտուի և կը մխիթարէ զայն:

Այս մասին արժան է մեծ տրտմութեամբ խորհել. որովհետև եթէ մարդս պարտական է իւր անձի համար տրտմիլ և սգալ որ զԱստուած չը բարկացնէ, նմանապէս պարտական է բոլոր մեղաւորաց համար խորհիլ և սուգ առնուլ թէ ինչո՞ւ համար Աստուծոյ պատիւը չեն պահեր և կը բարկացնեն զայն, և նոցա ուղղութեան համար միշտ եռանդով պէտք է աշխատել: Ինչպէս որ բոլոր սուրբերը Աստուծոյ փառաց նախանձաւորութեամբ իրենց ամբողջ կեանքը այսպիսի հոգևոր սգաւորութեամբ անցնել յանձն առին յօժարակամ սիրով:

Սակայն, ափսո՜ս, որ շատերը մեղաւորաց ուղղութեան և դարձին համար չաշխատելէ զատ՝ իրենց անձնական մեղքերուն համար ևս առանց սգոյ, զղջման և ապաշխարութեան՝ յաւիտենապէս կը կորսուին: Եթէ մարդիկ մարմնաւոր կամ նիւթական վնասուց հանդիպելով սովորաբար կը տրտմին, և կը ջանան փութով ապատուիլ և դարմանել եղած վնասն ու կորուստը, նոյնքան և

առաւել պարտական են հոգևոր վնասուց հանդիպած ժամանակ, այն է մեզաց մէջ ընկած ժամանակ ջանքեր անել և տրտմել փութով ապատութիւն ձեռք բերելու համար, և եթէ իրօք նոյնքան ջանք ի գործ դրուէր այս մասին, մարդիկ արդէն արժանի կը լինէին Աստուծոյ արքայութեան անվախճան փառաց: Մանաւանդ պէտք է նկատել թէ յաճախ մարմնաւոր ցաւոց նկատմամբ ցոյց տրուած հոգ և տրտմութիւնք՝ մարդուս ո՛չ միայն օգտակար չեն լինիր, այլ ընդհակառակն տեսակ տեսակ ախտեր յառաջ բերելով կը մեռցնեն[1]:

Ինչ խորհէ ուրեմն ո՛վ մարդ, հոգևոր և մարմնաւոր սուգի զանազանութիւնը. վասն զի օրինակի համար, երբ մի մարդ իւր ստացուածքը կորնցնէ, անշուշտ կը ցաւի և կը տրտմի, բայց ասով իւր կորուստը չը գտներ և ցաւէն չազատիր. ինչպէս մեղաւորը հոգևորապէս ունեցած և զգացած տրտմութեամբ ու սգով կորուսած աստուածային շնորհն ու անմեղութիւնը կարող է նորէն ձեռք բերել անպատճառ և հետևաբար Աստուծոյ արքայութեան արժանանալով՝ դժոխոց պատուհասութենէն ազատուիլ:

---

1. Զի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ, եւակ աշխարհն տրտմութիւն՝ մահ գործէ. Բ. Կորնթ. է. 10.

Դ. Հեզ լինել [1]: Այս առաքինութիւնն էլ կը կայանայ յայնմ՝ որ մարդս ի սէր Աստուծոյ խոնարհութեամբ ինքզինքը բոլոր մարդիկներէն աւելի ստոր և մեղաւոր կը համարի, աշխարհային պրաստմունքէ կարելի եղածին չափ խոյս տալով՝ միշտ բարիք գործելու հետամուտ կը լինի: Այսպիսի հեզ և խոնարհ մարդն ոչ միայն Աստուծոյ հաճելի է, այլ և աշխարհիս վրայ ևս ամէն կերպով հանգիստ և խաղաղ կապրի, վասն զի հպարտութեամբ ոչ ոքի վէճ և հակառակութիւն չունի. ինքը լաւագոյն վիճակի արժանի չը համարելով ոչ ոքի կը նախանձի. եթէ ինքը վշտացնեն, առանց բարկութեան կը համբերէ. եթէ վնասուի, իւր յանցանաց վերագրելով՝ միշտ զոհ և շնորհակալ է. ոքան էլ բարի գործեր ունենայ, ոչ ոքի յայտնել չուզեր, ինքը գովել չը սալու համար:

Սորա հակառակը, հպարտ մարդը փոքր մի բարիք գործէ, կը փափաքի ամբողջ աշխարհի յայտնել, որպէս զի գովեն ինքը. այս պատճառաւ Աստուծմէ վարձ չի կարող առնուլ. որովհետև ոչ թէ ի պատիւ նորա, այլ իւր անձնական փառաց համար գործած կը համարուի:

Դ. Միշտ արդարութիւն գործելու իղձ ունենալ [2]: Թէպէտև արդարութիւնը ի գործ դնել կը

1. Եբանի հեղոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր. Մատթ. Ե. 5.

2. Եբանի՝ որք քաղցեալք և ծարաւիք եղեն արդարութեան, զի նոքա յագեսցին. Մատթ. Ե. 6.

նշանակէ ամէն մարդու իրաւունքը իրեն հատուցանել, բայց այս պարագայում ընդհանրապէս առաքինութեան վրայ է խնդիրը. վասն զի առաքինութիւնն այն է, որ Աստուծոյ շնորհօք արդարութեան բոլոր պայմանաց համաձայն ի գործ դրուի, բայց պայմանաւ որ մի մարդ որքան էլ մեծամեծ առաքինութեանց գործքեր ունենայ, այդ բոլորը մոռնալով՝ իրրև թէ բնաւ մի բարիք գործած չէ, միշտ նորանոր առաքինական գործերու հետամուտ կատարեալ եռանդով և անկեղծ իղձով ու ջանքերով:

Լաւ խորհէ, մարդս միշտ իւր մեղքը մտաբերելով՝ խոնարհութեամբ զղջայ և ապաշխարէ, կարող է թողութիւն գտնել. ընդհակառակն, առաքինութիւնը մտաբերելով՝ հպարտանալու լինի, իւր վարձը բոլորովին կը կորսնցնէ: Արդ՝ եթէ կուզես որ յանցանքդ ներուին, դայն միտքդ բնաւ մի՛ հաներ. և եթէ կուզես վարձ ստանալ, գործածդ առաքինութիւնը մոռնալով՝ միշտ առաքինութիւն գործելու աենչ ունեցիր, ինչպէս անօթի մարդը՝ հացի, իսկ ծարաւի մարդը ջրի կը աենչայ բնականաբար և եռանդագին կերպով:

Մարդկային մարմինը հոգի կազմուած լինելուն համար, նիւթական անդրեան, իսկ հոգին՝ աննիւթ լինելով՝ հոգևոր անդրեան կարօտ է. սակայն, եթէ նիւթական անունդը սովորականէն աւելի լինի, անպատճառ կը վնասէ. իսկ հոգևոր

անունդը որքան շատ լինի, այնքան առաւել կը զօրացնէ, և առաքինութեան սէրը կը յաւելու մարդուն մէջ. այս պատճառաւ երկնից արքայութեան փառաց արժանանալ ցանկացողը՝ այս աշխարհի վրայ անօթի և ծարաւի մարդու նման առաքինութեան ծարաւի կը լինի:

Ե. Ողորմութիւն տալ[1]: Ընդունելի ողորմութիւնն այն է, որ միայն ի սէր Աստուծոյ և նորա օրհնեալ և սուրբ անուան փառաց համար, մարդս իւր կարողութեան չափով առատօրէն սիրով ու յօժարակամ կուտայ[2]: Որովհետև մարդուս բոլոր ստացուածքը աստուածային պարգև և տուրք լինելով, ողորմութիւն տուողը ո՛չ թէ իւր ինչքէն կուտայ, այլ Աստուծոյ տուրքէն. այդ պատճառաւ նորա պատիւը պահելու և հրամանը կատարելու փափաքանօք պարտական է տալ: Աստուած ողորմած լինելով, թէև իւր շնորհը ո՛չ ոքի կը խնայէ, բայց մարդիկ առաքինութիւն գործելով՝ վարձուց արժանի լինելու համար, երկրիս վրայ պանոնք միմեանց կարօտ արաւ:

Որովհետև կարողութեան տէր մարդը՝ անձար մարդուն օգնութեան հասնելով, վերջինս էլ առանց իւր վիճակէն գանգատելու՝ իրեն եղած բարիքը

1. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն. Մատթ. Ե. 7.

2. Զտուրս զուարթառատս սիրէ Աստուած. Բ. Կորնթ. Թ. 7.

ձանաչելով, սրտի խոնարհութեամբ գոհ կը լինի և շնորհակալ՝ ընդունած բարերարութենէն. որով երկուքն էլ իրենց վարձը Աստուծմէ կընդունին. ձշմարիտ է որ յանուն Աստուծոյ գործուած առաքինութեանց բոլորն էլ ընդունելի են, սակայն անօգնական մարդոց հարկաւոր եղած օգնութիւնը և նոցա ցոյց տրուած գթութիւնը սիրոյ զգացումէն բղխած լինելուն համար, այն աստիճան կը փառաւորէ գմարդ, որ Աստուծոյ կը նմանեցնէ գայն[1]. քանզի գոր օր. Աստուած ամենուն կողորմի, նմանապէս գթասիրտ մարդը բոլոր կարօտելոց:

Ողորմութիւնն առ կարօտեալս՝ միայն տուրք տալուն մէջ չը կայանար. այլ հոգևոր խրատով առաքինութեան ճանապարհները սովորեցնելու և մեղաւորները դարձի բերելու մէջ: Մանաւանդ որ մարդկային հոգին՝ իմացական և աննիւթ գոյութիւն լինելով, նորա փրկութեան մասին ցոյց տրուած գթասիրութիւնը՝ նիւթական կամ դրամական ողորմութենէն աւելի ընդունելի է: Երբ որ ողորմութիւն կուտաս, նայէ որ մարդիկներէն փառաւորուելու և փոխարէնը ստանալու իղձ չը տածես. որովհետև այսպիսի անարժան դիտաւորութեամբ ողորմութիւն տուողները Աստուծմէ

1. Եղերուք գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է. Ղ.ուկ. Զ. 36.

վարձ չեն կարող սահանալ, մանաւանդ թէ յանցաւոր կը լինին. քանի որ նորա անուան յատուկ փառքը իրենց սեփականացնել կը ջանան ի զուր:

Խրատ առ, եթէ ազքատին գթացող ու ողորմութիւն անողը Աստուծոյ ողորմութեան կարժանանայ, ուրեմն յայտնի է որ անգութ և անողորմ մարդիկ նորա ողորմութենէն կը զրկուին:

Չ. Սրտով սուրբ լինել[1]: Արտաքոյ ընդհանուր վիճակը քննելով՝ շատերը կարող են իմանալ Աստուծոյ մեծ գօրութիւնը, իմաստութիւնը, բարութիւնը, գթութիւնն ու արդարութիւնը, բայց այս աստուածային տարօրինակը գիտնալով չէ որ մարդ արքայութիւնը կը ժառանգէ, այլ կատարեալ և ջերմ սիրով զԱստուած սիրելով[2]. և ձշմարիտ Աստուածսիրութիւնն էլ կը կայանայ նորա պատիւը պահելու, նորա պատուիրանաց և օրինաց հնազանդելու, և ամէն չար գործքերէ հեռի մնալով՝ միշտ սուրբ սրտիւ և մաքուր մտքով առաքինութիւն գործելու մէջ: Այս պատճառաւ, ով որ կը կամի և կը անձկայ զԱստուած տեսնել արքայութեան մէջ, պարտի սիրտն ու միտքը սրբել մեղայ անմաքուր խորհուրդներէն. որովհետև մարդս՝ ոչ թէ միայն չար գործէ զգուշանալ պարտական է, այլ և չար և անմաքուր խորհուրդներէ:

Է. Խաղաղարար լինել[1]: Խաղաղարար մարդը՝ ոչ միայն ինքը կռիւ խոյս տալով՝ ամենուն հետ սիրով և բարեկամութեամբ կը վարուի, այլ և կռուողները միմեանց հետ հաշտեցնելով՝ սէր և բարեկամութիւն կը հաստատէ մինչև իսկ ոխերիմ թշնամեաց մէջ, մանաւանդ թէ՝ երբ զԱստուած բարկացնէ, իսկոյն զղջմամբ և ապաշխարութեամբ կը փութայ Աստուծոյ հետ հաշտուիլ:

Բայ յայտնէ, թէ խրատ և թէ առաքինութեան օրինակ տալով այլոց, զորս իրենց չար ձանապարհէն կը դարձնէ և Աստուծոյ հետ կը հաշտեցնէ, կը նմանի Յիսուսի Քրիստոսի: Քանզի զոր օր. նա մարդկային ազգը Հօր Աստուծոյ հետ հաշտեցուց, այսպէս էլ խաղաղարար մարդը մեզաւորը կը հաշտեցնէ Աստուծոյ հետ. ընդհակառակն, նա՝ որ բանսարկութեամբ մարդիկը միմեանց հետ կը գժտեցնէ և նոցա միջև խռովութիւն ու ատելութիւն կը սերմանէ, սատանային կը նմանի:

Ը. Արդարութեան համար հալածուիլ[2]: Յիրաւի արդարութեան ծարաւի մարդոց երանի տուեցաւ, ինչպէս վերը յիշեցինք. բայց նորա կատարման և գործադրութեան համար եռանդա-

1. Երանի այնոցիկ՝ որք սուրբք են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն. Մատթ. Ե. 8.

2. Ըստ առաջին, լաւ է սիրել զԱստուած, քան զահման սիրոյ գիտել:

1. Երանի խաղաղարաց. զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին. Մատթ. Ե. 9.

2. Երանի որք հալածեալք եղեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից. Մատթ. Ե. 10.

գին աշխատող մարդիկ, որոնք այդ երեսէն չարա-
չար կը նեղուին, ի հարկէ աւելի ողորմութեան
կարժանանան։ Վասն զի նոքա ո՛չ միայն իրենք
արդարութիւնը կը սիրեն և կը գործադրեն միշտ,
այլ և արդարութեան հակառակ գործող մարդկան
աստուածային կամքը հաղորդելով, հարկաւոր եղած
խրատը տալէ զատ՝ անուղղայ եղողներն էլ կը
յանդիմանեն. այս պատճառաւ, երբ նեղութեան
և ցաւոց ենթակայ լինին, գոհութեամբ կը տանին
ամէն կերպ զրկանաց[1]. որովհետև վստահ են թէ
առաւել ողորմութեան արժանի կը լինին և իրենց
վարձը կառաւելու։ Այս կերպով բոլոր սուրբերը
արդարութեան սիրոյն համար երկրիս վրայ ա-
ժամանակ մի հալածանք և չարչարանք կրեցին,
սակայն ի հանդերձելումն արքայութեան անվախ-
ձան փառքը ժառանգեցին։

Թ. Յիսուսի անուան համար նախատինք կրել
կամ վստահամբաւիլ և համբերել[2]։ Յիրաւի ո և
է վնասէ խոյս տալ՝ բնական է, բայց երբ որ Աս-
տուծոյ փառաց նախանձաւորութեամբ մարդիկ հա-

---

1. Եւ այդ յԱստուծոյ է, որ ձեզ շնորհեցաւ
վասն Քրիստոսի, ո՛չ միայն ի նա հաւատալ, այլ և
վասն նորա չարչարել. Փիլիպ. Ա. 29.

2. Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ՝ և
հալածեացեն. և ասիցեն զամենայն բան չար զձէնջ
սուտ վասն իմ։ Ցնծացէք և ուրախ լերուք, զի վարձք
ձեր բազում են յերկինս. Մատթ. Ե. 11, 12.

ճութեամբ և կամաւ կը նախատուին և կը համ-
բերեն, կատարեալ հաւատք և ստուգիկ սէր ունին առ Աստուած. ուստի
շնորհօքն Աստուծոյ բնութիւնը կը յաղթուի աստ։

Այս պատճառաւ Աստուածասէր մարդը՝ որ-
քան էլ չարչարանք կրէ և հալածուի, որքան էլ
չարախօսութիւն և վատահամբաւութիւն լսէ, գիտ-
նալով թէ նոյնքան էլ առաւել պէտք է վար-
ձատրուի, վասնորոյ ուրախութիւնը բազմապատիկ
կը լինի։ Սակայն պայմանաւ որ իւր կրած չարչա-
րանաց ու տառապանաց ինքը պատճառ տուած
չը լինի, այլ միայն և միայն Աստուծոյ սուրբ
անուան և փառաց համար լինի. որովհետև իւր
թերութեան և սխալանաց պատճառաւ հալածեալ,
չարչարեալ և վատահամբաւեալ մարդը ո՛չ միայն
չուրախանար, այլ և մանաւանդ միշտ ապաշաւա-
նաց և խղճի խայթի ենթակայ կը լինի։

Հարցում Իբ.

Վերոյիշեալ առաքինութիւնները գործող բոլոր մարդոց երանի կը տրուի։

Պատ. Կը տրուի, եթէ հակառակ ընթացք
չունենալով՝ միշտ ըստ արժանւոյն գործադրեն
պայնս։ Որովհետև շատերը ժամանակ մի սիրով կը
յօժարին առաքինական գործոց, բայց յարատե-
ւութիւն չունենալով, չեն կարող վարձ ստանալ.

ինչպէս որ Պօղոս առաքեալը այսպիսիքը կը յանդիմանէ[1]. նա մանաւանդ առաւել պատժոյ արժանի կը լինին, քանի որ առաքինութեան լաւութիւնը դիտալով հանդերձ՝ գործադրութեան փոյթ չեն տանիր[2]: Այսու ամենայնիւ, Աստուծոյ ողորմութենէն յոյսդ մի կորնչր, այլ չար ճանապարհէ ետ կենալով՝ կարողութեանդ չափով միշտ առաքինութեան հետևէ, որպէս դի Աստուծոյ շնորհօք միշտ կարողութիւն ունենաս գործադրելու և առատօրէն վարձատրուիս:

Յիսուս վերոյիշեալ ինը առաքինութիւնները առաքելոց բացատրելով՝ զանոնք աղի նմանցուց. և ինչպէս որ համը կորուսած աղը իրրև անպիտան ինչ ի բաց կը նետուի և մարդոցմէոտնակոխ կը լինի[3], այնպէս էլ նոքա՝ իրենց յատկացեալ պաշտօնում թերացած ժամանակ՝ յայտնեց թէ պիտի կորսուին. ուստի նոյն առաքինութիւնքը նախ իրենք պէտք է գործադրէին և ապա այլոց ևս սորվեցնելու փոյթ տանէին: Նմանապէս լուսոյ և

1. Այդչափ անմիտք էք, սկսեալ հոգւով՝ և արդ մարմնո՞վ վախճանիք. Գաղ. Գ. 3.

2. Որ որ գիտեցէք զբարին և ո՛չ առնեցէք՝ մեղք են նմա. Կաթ. Յակ. Դ. 17.

3. Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի, ի՞նչ յաղեցվի. ո՛չ ևմիևք աղդեցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել ի մարդկանէ. Մատթ. Ե. 13.

լերան վրայ շինուած քաղաքի նմանցուց առաքեալները[1], որպէս զի գիտալով թէ ի՞նչ բարձր պատուոյ արժանացած են արդէն, ըստ այնմ՝ առաքինական գործոյ մէջ անթերի գտնուելով՝ ամէն կերպիւ կատարեալ լինին և մարդիկ զիրենք և իրենց գործերը տեսնելով՝ փառաւորեն զԱստուած, իրենց երկնաւոր Հայրը[2]:

Արդարև նոքա՝ իրենց տրուած պատուէրին համաձայն քարոզելով՝ առաքինութեան չքնաղ օրինակ հանդիսացան ամենուն համար, և մարդոց սրտերուն հոգևոր ճաշակ պարգևելով՝ կատարելութեան խաւարի մէջ բնակող ժողովուրդները աստուածային շնորհաց լուսովը պայծառապէս լուսաւորեցին, որով Աստուծոյ օրհնեալ անունը երկրիս վրայ արժանապէս փառաւորեցին:

Թող այսուհետև լաւ խորհին բոլոր անոնք, որք ժողովրդեան հոգևոր և թէ մարմնաւոր իշխան և առաջնորդ կարգուած են. որովհետև, եթէ նոքա իրենց նուիրական պարտաւորութիւնը անթերի կատարեն, մեծ ողորմութեան և փառաց, իսկ եթէ իրենց պարտուց մէջ թերանան, սաստիկ պատժոյ

1. Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կացցէ. Մատթ. Ե. 14.

2. Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայրն ձեր՝ որ յերկինս է. Մատթ. Ե. 16.

արժանի պիտի լինին, ըստ իւրաքանչիւր աստիճանի:

Երբ որ Յիսուս վերոյիշեալ կերպով առաքինութեանց գործադրութեան մասին հարկաւոր եղած հրահանգները տուաւ առաքելոց, հին օրինաց հակառակ չը կարծուելու համար, կը փութայ յայտնել թէ ինքը եկած է զայն կատարելագործելու և այդ օրինաց ամենափոքրը կէտն անգամ գործադրելու[1]: Որովհետև հին օրէնքը՝ նոր օրինաց միայն նկարը կամ ստուերը լինելով՝ (տես չորրորդ դարու Բ-րդ հարցում) և բոլորը Յիսուսի հրամանը պարտնակելուն համար, նորա գալստեամբ անթերի պէտք է կատարուէին. վասնորոյ օրինաց ամենէն փոքր մի տրամադրութեան դէմ մեղանչողին պատիժն ու օրէնքը անթերի պահպանողին փառքն էլ նշանակեց և ցոյց տուաւ, որպէս դի օրինաց մասին ոչ ոք՝ ո և է պատրուակաւ զանցառութիւն անելով պատժոյ չենթարկուի իբր սխալ դատողութեանց կամ մեկնութեանց հետեւանօք:

Վասն դի, հրէից դպիրներն ու փարիսեցիները օրինաց գործադրութեան ըստ արժանւոյն մտադրութիւն չընծայելով՝ միայն այլոց ուսուցանելու

1. Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ. Մատթ. Ե. 17.

մասնաւոր չանք ու եռանդ կը ցուցնէին. այս պատճառաւ Յիսուս առաքեալներուն կասէ. «Եթէ ձեր առաքինութիւնը և կամ արդարութիւնը դպրաց և փարիսեցւոց առաքինութիւնը չը գերազանցէ, կարող չէք Աստուծոյ արքայութիւնը ժառանգել[1]:» Ահա մասին Թ՛ղ զգուշանան և երկնչին նոքա, որոնք օրինաց կէտ առ կէտ գործադրութեան նկատմամբ անհոգ և ծոյլ են, և կը չանան միայն իրենք պիրենք արդարացնելու համար ծուռ մեկնութիւններ տալ և այլոց ևս չար օրինակ լինել:

Հարցում ԻԹ.

Հին օրինաց լրումն ինչպէս իմանալ պէտք է.

Պաս. Որովհետև հին օրէնքը կը կայանար տասնաբանեայ պատուիրանաց, դատաստանական օրինաց, կրօնական և ծիսական սովորութեանց, ինչպէս նաև մարգարէից գրքերու պարունակութեանց վրայ. Յիսուսի գալստեամբ, նորա նկատմամբ գրուածոյ բոլորը կատարուեցան: Թէպէտև նոր օրինաց յայտնութենէ յետոյ, ծիսական արարողութիւնք դադարեցան, սակայն տասնաբանեայ

1. Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից. Մատթ. Ե. 20.

պատուիրանք և դատաստանական օրէնքները Յիսուս վերահաստատեց և լրացուց. որովհետև հրէից դպիրք ըստ քմաց կը մեկնէին օրէնքը, այս պատճառաւ Փրկիչը նոցա ձշմարիտ իմաստից համաձայն մեկնեց, որպէս զի ներհակ գործելով պատժոյ չենթարկուին:

Օրինակի համար, հին օրինաց մէջ գրուած էր. «Մի՛ սպանաներ». արդ՝ սպանութիւնը բարկութենէ յառաջ կուգայ, վասնորոյ Յիսուս կը վճռէ թէ՝ մի մարդ, որ յանիրաւի իւր եղբօր ընդդէմ բարկանալով՝ ինքզ կանուանէ զայն, պատժոյ արժանի է: Ղանզի անիրաւ բարկութեամբ վրէժ խնդրել և եղբօր սիրտը կոտրել՝ մեծ մեղք կը համարուի, և եթէ եղբօր սիրտը վշտացուցած մի անձ՝ բարիք ևս գործէ, ընդունելի չէ, մինչև որ վշտացած եղբօր հետ չը հաշտուի:

Բաց յայտմանէ, ոչ միայն ինքը, այլ և այլոց իրեն դէմ վշտացած կամ բարկացած լինելը իմանայ, իսկոյն գնալով ներողութիւն խնդրելու և հաշտուելու է, այնպէս որ Յիսուս բացորոշ կերպով կը հրամայէ թէ՝ «երբ որ Աստուծոյ պատարագդ կը նուիրես, թէ որ եղբայրդ քեզմէ ցաւած է, գնա՛ առաջ եղբօրդ հետ հաշտուէ, և ապա եկ պատարագդ նուիրէ[1]:»

1. Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վեր բայ սեղանոյ, և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ու-

Ուշադրութեան արժանի է որ, եղբօր դէմ յանիրաւի բարկացած վատ խօսողներու մասին պատիժ սահմանելէ վկնի, որպէս զի չը յուսահատուին, ինչ հնարնակաւ կարելի է փրկուիլ, զայն ևս իմաց տալով կասէ. «Հակառակորդիդ հետ քանի որ դեռ ճանապարհուդի ես, հաշտուէ իրաւանց և արդարութեան հաւեմատ, որպէս զի դատաստանի օրում յանիրաւեան չը դատապարտուիս[1]:» Արդարև այս պարագայում պատիժէ ուրիշ կերպով կարելի չէ ազատուիլ, բայց եթէ գնալով և յանցանքդ խոստովանելով այն անձին, որուն սիրտը կոտրած և վնաս պատճառած ես իրեն, և թողութիւն ստանալով՝ հաշտուիս նորա հետ անկեղծութեամբ:

Եւ ինչպէս որ զրկող մարդը ներում խնդրելու պարտական է, այսպէս էլ զրկեալը ներելու պարտական է. որովհետև ըստ պայմանի և արդարութեան ներում խնդրող մարդուն ներել չը յօժարող անձը՝ որքան էլ իրաւանց տէր լինի, յան-

---

նեցի լինչ եկեթ զբէն, թող զպատարագն քո առաջն սեղանոյն և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիը զպատարագն քո. Մատթ. Ե. 23.

1. Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ եցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնեցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն պահճի, և արկանիցես ի բանտ. Մատթ. Ե. 25.

ցապարա կը դառնայ[1], քանի որ ուղիղ սրտով յանցանաց ներողութիւն խնդրել յօժարող անձին չը ներել՝ անգթութեան նշան է: Սակայն և այնպէս ամէն բարկութիւն յանցանք չէ. քանզի այլոց խաղաղութիւնը վրդովելու պատճառ եղող չարակամ անձանց ուղղութեան, և մանաւանդ Աստուծոյ պատիւը պահպանելու բաղձանօք յանցաւորները պատժել՝ արդարութիւն է և վարձուց արժանի է:

Այս պատճառաւ, թէ հոգևոր և թէ մարմնաւոր իշխանք և դատաւորք կողմնակցութեամբ չար մարդուն ներողամիտ լինելով՝ ըստ արժանւոյն պատժոյ չենթարկեն զայն, իրենք պատժոյ և դատապարտութեան արժանի կը լինին:

Նմանապէս, հին օրէնքում կը գրէ. «Մի շնար». Յիսուս նորա շարժառիթն էլ բառնալու նպատակաւ կը վճռէ թէ՝ ցանկական մտքով և տռփանօք կնոջ նայող անձը՝ իւր սրտում նորա հետ կը շնայ[2]. որովհետև ոչ միայն վատ գործը, այլ և վատ դիտաւորութեամբ չար գործին հա-

---

1. Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ո՛չ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր. Մատթ. Զ. 15.

2. Լուարուք՝ զի ասացաւ. մի շնար: Բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում. Մատթ. Ե. 27.

ճութիւն տալն էլ յանցանք է և մեղք, քանի որ մարդուս աչքը ինչ որ տեսնէ, միտքն էլ իսկոյն կազդուի, որով կամքն էլ առ այն կը հակամիտ արդ՝ եթէ մեղքէ զերծ լինել կուզես, պատճառէն փախիր:

Որովհետև մեղքը այն աստիճան գարշելի և ճշտակար է մարդուս, որ մինչև իսկ նորա աջ աչքը և աջ ձեռքը մեզայ պատճառ տան, լաւագոյն է իրեն համար այդ անդամները կտրել և նետել, քանզի զանոնք ունենալ և մեղանչել[1]: Սրտարև, զոր օր. մի մարդու անդամներէն միոյն վրայ վտանգաւոր վէրք գոյանայ, ամբողջ մարմնոյն վրայ տարածուելով՝ իւր կենաց մահը չը պատճառելու համար, լաւագոյն կը համարի այդպիսի վիրաւորեալ անդամն զրկուիլ. նմանապէս մեզայ վէրքը մարդուս հոգին ի դժոխս չը տանելու համար, նորա պատճառը ամէն կերպով բառնալ պէտք է:

Սակայն, այս խօսքով ասել չուզեր թէ մարդս իրօք իւր աչքը հանելու և ձեռքը կտրելու պարտական է, այլ իւր աջ աչքին և աջ ձեռքին նման կարևոր ո և է սիրելի անձ կամ ինչք, որոնք գինքը մեզայ կառաջնորդեն, պարտական է զանոնք

---

1. Եթէ աչն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ՝ խլեա զնա, և ընկեա ի քէն . . . և եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա ի քէն. Մատթ. Ե. 29.

մերժելով՝ իբր մօտէն հեռացնել. քանզի շատ մարդիկ իրենց ստացուածոց, բարեկամի և սիրելիի պատճառաւ մեղանչելով կը դատապարտուին կոբբատեան:

Դարձեալ, հին օրինաց մէջ գրուած է թէ՝ «Կինն արձակողը՝ արձակման թուղթը տայ[1]». բայց այս բանը բնութեան իսկ հակառակ է. նա մանաւանդ Աստուած ի սկզբան մի այր և մի կին ստեղծած լինելուն համար, Յիսուս կը վճռէ որ՝ երբ կինը իբր պատուոյն դէմ մեղանչած չէ, զայն արձակող այրը շնութիւն գործել կուտայ անոր, և կամ այր ունեցող կինը՝ երբ ուրիշ մարդու գնայ, թէ կինը և թէ առնողը կը շնան[2]: Վասն զի այս մասին յատուկ օրէնք չը լինելով՝ միայն հրէից խստասիրտ անգթութեան համար օրէնքով թոյլ արուած էր արձակման թուղթ տալու, որպէս զի իրենց կիները չը մեռցնեն. ինչպէս որ փարիսեցիք այս խնդրոյն վրայ Յիսուսին հարցուցած ժամանակ՝ նա որոշ կերպով յայտնեց թէ ի սկզբանէ այդպէս եղած չէ, այլ իրենց խստասրտութեան հետևանօք[3]:

1. Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ զկին իւր՝ տայցէ նմա զարձակմանն. Մատթ. Ե. 31.

2. Որ արձակիցէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ. Մատթ. Ե. 32.

3. Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ի սկզբանէ ոչ եղև այնպէս. Մատթ. ԺԹ. 8.

Արդ՝ նոր օրինաց համաձայն ս. եկեղեցւոյ կանոնն է որ այր և կին ըստ օրինի պսակուելէ ղկին, պարտին մինչև ի մահ անբաժան մնալ սիրով: Եթէ, Աստուած մի՛ արասցէ, նոցա միջև զանազան պատճառանօք անհամաձայնութիւն լինի, դարձեալ պարտին իրարու յանցանաց ներելով՝ և ուղղութեան համար զմիմեանս խրատելով համբերել, զի այս է բարին և օգտակարն. և ոչ թէ արձակման թղթով բաժանուիլ, որ Յիսուսի որոշ հրամանին հակառակ է և մեծ մեղք է: Նոքա որ սուրբ աւետարանի բարերար սկզբանց համաձայն ապրելու փափաք և իղձ ունին, պարտին այս կէտիս փոխադարձ զիջողութեամբ իրենց մանաւանդ նկատումը ղոհել ընդհանուրի շահուց, որ կը կայանայ քրիստոնէական սիրոյ, խաղաղութեան և միութեան մէջ:

Դարձեալ, հին օրինաց մէջ սուտ երդնուլ արգիլուած էր, բայց յանուն Աստուծոյ երդուելու թոյլտուութիւն կար[1]. և որովհետև հրէայք այս մասին Ս. Գրոց ձշդիւթ իմաստին հարկաւոր եղած մտադրութիւնը չէին ընծայեր, վասնորոյ միայն սուտ երդնուլը մեղք համարելով՝ հարկ չեղած ժամանակ և կամ երկնքի, երկրի, Երուսաղէմի և

1. Դարձեալ լսեարուք, զի ասացաւ առաջնոցն. մի՛ երդնուցուս սուտ, քայց հատուսցես Տեառն զերդմունս քո. Մատթ. Ե. 33.

իրենց դլուխներուն վրայ երդուելը մեղք չէին սեպեր, այս պատճառաւ Յիսուս կը հրամայէ բնաւ չերդնուլ։

Ի հարկէ այս խօսքը պէտք չէ իմանալ իբր թէ մարդս՝ խիստ կարեւոր, մեծ և ձշմարիտ կէտերու մէջ ալ պարտական է չերդնուլ, այլ անպէտ և առանց պատճառի երդման վրայ է խօսքը. որովհետեւ, երբ մի ձշմարիտ գործ ուրիշ կերպով կարելի չէ ապացուցանել, զայն երդմամբ հաստատելը՝ Աստուծոյ մեծութիւնը, կարողութիւնը, իմաստութիւնը և արդարութիւնը ձանաչել է։ Նմանապէս սուտ, անպէտք և առանց պատճառի երդուելը՝ թէ Աստուծոյ անուամբ և թէ երկնքի, երկրի, երուսաղէմի և մարդուս գլխոյն վրայ, Աստուծոյ պատիւը և վառքը չը ձանաչել է։

Քանզի, երկինքը նորա աթոռն է, երկիրը՝ նորա պատուանդանը, Երուսաղէմը՝ նորա անուան նուիրեալ քաղաք է, և բոլոր արարածք՝ նորա ստեղծածը լինելով, նոցա վրայ երդնուլ՝ կը նշանակէ նորա անուան երդնուլ, որ մեղք է։ Նոյնպէս երբ մարդս իւր գլխոյն վրայ կերդնու, կը մեղանչէ, քանի որ ինքն իւր անձին տէր չը լինելով՝ կարող չէ գլխոյն մի մազը սպիտակ և կամ թուխ անել[1]։

---

1. Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, և մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ, զի քաղաք է մեծի արքային։ Եւ մի՛ ի գլուխ քո, զի ո՛չ կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ թուխ. Մատթ. Ե. 34.

Ուրիմն այս պարագայում թո՛ղ վախենան ամէն անոնք, որոնք սուտ խօսելու և ստութեամբ երդուելու սովոր են. որովհետեւ ստութեան հիմն ու հեղինակը սատանան է, և ով որ սուտ կը խօսի, նորա պատժոյն հաղորդ կը լինի. այս պատճառաւ Յիսուս Փրկիչ պատուիրեց որ՝ «Ձեր խօսքերը ամէն պարագայում պէտք է ձշմարիտ լինին, որովհետեւ ինչ որ աւելին է, այն է ձշմարտութենէ արտաքոյ է, չար սատանային ղըրդմամբ է[1]։»

Վերոյիշեալ օրինաց լրման համար հարկաւոր եղած պատուէրները տալէն ղկնի, դարձեալ կը պատուիրէ որ ընկերական սիրոյ փրկարար սկզբանց կիրառութեան մէջ միշտ և հանապազ միաեանց պակասութեանց ներելով՝ Քանան ամէն կերպով կատարեալ լինել։

պատուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ, զի քաղաք է մեծի արքայի։ Եւ մի՛ ի գլուխ քո, զի ո՛չ կարես մազ մի սպիտակ առնել՝ կամ թուխ. Մատթ. Ե. 34.

1. Եղիցի ձեր բան՝ այո՝ այո, և ոչն՝ ոչ, զի աւելին քան զայն, ի չարէն է. Մատթ. Ե. 37.

Հաբյա–ՙ ԻԹ.

Բոլոր մարդիկ զիրար սիրելու պատուէրը ինչպէ՞ս հասկնալու է.

Պապ. Ըստ կարելւոյն իւրաքանչիւրը իւր կարողութեան չափով ամենուն բարիք անել, և ո՛չ ոքի չարիք չը հասցնել պատ՝ ուրիշէն յանիրաւի զրկանք կրած ժամանակ, հակառակորդին յանցանաց ներելով՝ նորա ուղղութեան համար առ Աստուած ազօթել. այս է ահա ընկերական սիրոյ հիմունքը[1]: Յիրաւի հին օրէնքում գրուած է թէ՝ երբ մի մարդ՝ իւր ընկերին աչքը հանէ, ի փոխարէն նորա աչքը հանուի[2]. բայց Յիսուս պատուիրեց չարեաց փոխարէն չարիք չը հատուցանել, այլ ընդհակառակն. «Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ զարնէ, դարձուր անոր միւս երեսդ. եթէ մէկը շապիկդ առնուլ ուզէ, տուր անոր բաճկոնդ էլ. եթէ մէկը զքեզ մի մղոն տեղ տանիլ ուզէ յանիրաւի, երկու մղոն գնա նորա հետ. և վերջապէս երես մի՛ դարձներ այն մարդէն, որ քեզմէ ողորմութիւն և կամ փոխ կուզէ տանալ[3]:»

---

1. Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ՝ որք լւկեն զձեզ և հալածեն. Մատթ. Ե. 44.—Ղուկ. Զ. 27

2. Լուարուք զի ասացաւ, աչն ընդ աչան, և ատամն ընդ ատաման. Մատթ. Ե. 38.

3. Այլ ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարին,

այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա և զմիւսն: Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ ի նմա և զբաճկոն քո, և որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և եւս երկուս: Որ ոք խնդրէ ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս. Մատթ. Ե. 39.—Ղուկ. Զ. 29.

Այս կերպ խոնարհութեամբ վարուող անձն՝ ոչ միայն իրեն հակառակորդին կը յաղթէ, այլ և ամենայն չարեաց պատճառ սատանայն ևս ընդոստիւք կը նուաձէ. որովհետև նա է որ միշտ մարդոց միջև հակառակութիւն և ատելութիւն կը ձգէ, որպէս զի միմեանց հետ թշնամանելով՝ մեղք գործել տայ և դժոխոց արժանի անէ: Այս պատճառաւ երբ որ մարդս իւր թշնամւոյն հետ անդամ սիրով վարուելով՝ նորա յանցանաց ներէ, անիծեալ սատանան՝ իւր լարած որոգայթում ինքն ընկնելով կը խայտառակուի:

Ի՞նչ կը կարծէք, երբ որ մի մարդ ընկնելով վիրաւորի. ո՞չ ապաքէն պայն տեսնողը կարեկցելով հանդերձ կզգուշանայ որ ինքն էլ չընկնի. ուրեմն եթէ մին քեզ չարիք կը հասցունէ, դու բարկանալով՝ վրէժխնդիր լինելու մի՛ փափաքիր, այլ նորա տկարամտութեան վրայ կարեկցութեամբ նայելով հանդերձ, վախցիր որ դու ևս նորա նման չարութեան մէջ չը գլորուիս: Եթէ մարդս միայն իրեն բարիք անողը սիրէ, թէև պարտքը կը կատարէ,

բայց առաքինի չը լինիը, քանի որ չար մարդիկ ևս իրենց սիրելիքը կամ բարեկամներըը կը սիրեն և յարգանօք կը վարուին 1։

Սակայն նա է կատարեալ առաքինի, որ իրեն ղրկանք և վնաս պատճառող անձին հետ սիրով վարուելով հանդերձ, նորա ուղղութեան համար առ Աստուած կաղօթէ սրտագին, և այս կերպիւ կը նմանի իւր երկնաւոր Հօր՝ Աստուծոյ 2։ Արդարև այսպիսի կատարեալ մարդն ամենուն հետ սիրով կապրի և ոչ ոք կը վշտացնէ, և ինքն էլ ոչ ոքի դէմ կը վշտանայ։ Որովհետև ոչ թէ մարդը, այլ մարդուն չար գործքը կատէ և կը մերժէ. մանաւանդ թէ կը վախնայ որ մի՛ գուցէ ինքն էլ նորա պէս սխալի և մեղանչէ ի վնաս իրեն և ընկերաց։

Ճշմարիտ է որ վշտակրութիւնը մարդկային կամաց և բնութեան ներհակ լինելով՝ ցաւէ և վիշտ խոյս տալու պարտական է. բայց երբ առանց յանցանք գործելու ցաւոց ենթարկուի, գոհութեամբ համբերելով՝ երբէք իւր ցաւոց և կամ ղրկանաց պատճառ եղող անձին դէմ չը բարկանար և մինչև իսկ նորա դարձի և ուղղութեան համար

1. Ձի եթէ սիրիցէք զայնոսիկ, որք սիրեն զձեզ, ըմ՞ն վարձք եցեն . . . ո՞չ ապաքէն մաքսաւորքն և մեղաւորքն զնոյն գործեն. Մատթ. Ե. 46.

2. Արդ՝ եղերուք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է. Մատթ. Ե. 48.

կաղօթէ առ Աստուած, և այսպէս երկնային յաւիտենական վարձուց կարժանանայ. այս է բարի, առաքինի և կատարելութեան ձգտում ու տենչ ունեցող մարդուն միակ խորհուրդն ու նպատակը։

Վերոյիշեալ առաքինութեանց նկատմամբ հարկաւոր եղած խրատները տալէն յետոյ, Յիսուս կը խօսի նաև և կը հրամայէ ողորմութիւն տալ, աղօթել և ծոմ պահել, բայց ոչ կեղծաւոր մարդկան պէս մարդիկներէն փառաւորուելու նպատակաւ, այլ Աստուծոյ փառաց, պատուոյ և սիրոյն համար, առանց մէկուն իմացնելու և գաղտնի, որպէս զի Աստուած նորա փոխարէնը յայտնապէս շնորհէ. որովհետև մարդոց ի ցոյց և նոցա գովեստը մուրալու համար առաքինութիւն գործող անձը՝ երբէք կարող չէ և իրաւունք էլ չունի երկնային վարձուց ակնկալելու 1։

Այնու ամենայնիւ, մի՛ կարծեր թէ յայտնի ողորմութիւն տալ, աղօթել և կամ ծոմ պահել արժան չէ, այլ հարկ է որ նոցա կատարումը միայն Աստուծոյ օրհնեալ անուան փառաց համար լինի. քանզի ի հարկին յայտնապէս էլ առաքինութիւն գործել պէտք է և պարտականութիւն. ինչպէս որ Յիսուս ինքը կը հրամայէ ասելով. «Թող մարդիկ

1. Զգույշ լերուք ողորմութեան ձերում մի առնել առաջի մարդկան. որպէս թէ ի ցոյց լինչ նոցա. գուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի հօրէն ձերմէ՝ որ յերկինս է. Մատթ. Զ. 1. մինչև 8 համար։

ձեր բարի գործերը տեսնեն և փառաւորեն զԱստուած, որ ձեր երկնաւոր Հայրն է։»

Երբ որ Յիսուս ամէն այս խօսքերը վերջացուց, աշակերտներէն մին ասաց անոր. «Տէր, մեզ աղօթք սորվեցուր, ինչպէս որ Յովհաննէս իր աշակերտաց սորվեցուց[1]»։ Նա ևս թէ ինչպէս պէտք է աղօթել, համառօտիւ յայտնելով կասէ. «երբ որ աղօթքի կը կանգնիք, այսպէս ասացէք. Հայր մեր, որ երկնքումն ես, սուրբ լինի անունդ։ Թագաւորութիւնդ գոյ գայ։ Կամքդ կատարուի, ինչպէս երկնքում, այնպէս և երկրիս վրայ։ Մեր ամենօրեայ հացը շնորհէ մեզ այսօր, և թող մեզ մեր պարտքերը, ինչպէս մենք էլ կը թողունք մեր պարտապանաց։ Չմեզ փորձութեան մի՛ տանիր. այլ ազատէ զմեզ չարէն։ Որովհետև թագաւորութիւնը, զօրութիւնն ու փառքը քուկդ են. ամէն[2]։»

---

1. Եւ եղև ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. և եբարև դադարեաց, ասէ ցնա ոմն յաշակերտացն նորոց. Տէր, ուսո՛ մեզ յաղօթս կալ. որպէս և Յովհաննէս ուսոյց աշակերտաց նորոց. Ղուկ. ԺԱ. 1.

2. Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն. Մատթ. Զ. 9.

Սոյն աղօթքը ամէն օր սուրբ եկեղեցւոմ առաւօտ և երեկոյ կը կարդացուի, և բոլոր քրիստոնեայք զայն գոց սերտելով՝ աղօթքի կայնած ժամանակ նոյնա կաղօթեն առ Աստուած. և նորա իմաստը՝ հօթը մասերու բաժանուած՝ տաճկական բարբառով Չէն հոգևոր կոչուած գրքոմ ընդարձակօրէն բացատրուած լինելուն համար, կամեցողները կարող են զայն կարդալ։

Արդարև ինչ որ մարդս պարտական է Աստուծմէ խնդրել, Յիսուս այս աղօթքոմ յայտնեցին զաս՝ թէ ի՞նչ եղանակաւ պարտինք աղօթել, որպէս զի կարող լինինք մեր խնդիրքն ընդունել, զայն ևս մի առակաւ կիմացնէ։ «Մի մարդ, կասէ, բնաւ կերակուր չունենալով՝ գիշեր ժամանակ իր մէկ բարեկամը ճանապարհէն գայ, որուվ պարտաւորի գնալ իր մի այլ բարեկամէն երթք հաց ուղելու. նա ևս պատասխան տայ թէ՝ «ննջումն մի պատճառեր ինձ. որովհետև դուռը փակուած է, և տղայք պառկած են»։ բայց այսպիսի առարկութեամբ նորա մերժողական պատասխանէն բարեկամը չը համոզուած՝ կրկին և կրկին դուռը բաղխէ, այն ժամանակ ո՛չ թէ վասն բարեկամութեան, այլ նորա չափազանց թախանձանաց համար կելնէ և կուտայ ինչ որ պէտք է։»

Թիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն. Մատթ. Զ. 9.

Աբդ՝ եթէ մարդը թախանձանօք աղաչողին խնդիրքը կը կատարէ, հապա որքա՞ն առաւել Աստուած մարդոց աղաչանքն ու խնդիրքը կընդունի և կը կատարէ, քանի որ նա զթած է, և իւր ողորմութիւնը ո՛չ ոքի կը խնայէ. այս պատճառաւ վճռաբար հրամայեց ասելով. «խնդրեցէք որ տրուի ձեզ. հայցեցէք, որ գտնէք, և բաղխեցէք, որ բացուի ձեզ. քանզի, նա որ կը խնդրէ, կընդունի. նա որ կը հայցէ, կը գտնէ. վերջապէս նա՝ որ կը բաղխէ, նորա առջև դուռը կը բացուի[1]:» Բայց պայմանաւ որ կատարեալ հաւատով, մաքուր մըտքով, խոնարհ սրտով, սաստիկ և անկեղծ սիրով, ինչպէս նաև առանց ձանձրանալու յարատևութեամբ խնդրուի. որովհետև ըստ արժանւոյն չը խնդրող անձը՝ իւր խնդրանաց կատարման չարժանանար երբէք:

Բայց յայտնէ, մի մարդ ինչ որ խնդրէ, պէտք է որ խնդրածը իւր հոգւոյն օգտակար լինի. այս պատճառաւ Յիսուս կասէ. «ո՞ր հայրն է, որու որդին հաց ուզէ, ինքը քար կուտայ անոր. կամ ձուկ ուզէ, և ինքը օձ կուտայ. և կամ թէ հաւկիթ ուզէ, և ինքը կարիճ կուտայ հաւկթէ

1. Ասէ ցնոսա (Յիսուս). ո՞վ է ի ձէնջ՝ որոյ եցէ բարեկամ, և երթայցէ առ նա ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա. բարեկա՛մ, տուր ինձ փոխ երիս նկանակս, զի բարեկամ իմ եկն առ իս յուղեւոյ. Ղուկ. ԺԱ. 5, մինչև 10 համար:

ասեզ[1]:» Արդարև ինչպէս որ ի մանուկ՝ երբ առանց խելահաս լինելու ինչ մի խնդրէ, ի հարկէ հայրը չը տար. նմանապէս եթէ մենք իւր ճշմարիտ օգուտն ու ինասը առանց զանազանելու ինասաւէտ մի բան խնդրէ, Աստուծմէ, նորա խնդիրքը անկատար կը մնայ:

Ուրեմն այն անձը, որ իւր խնդրանաց կատարման կը ցանկայ, թող խնդրէ ինչ որ հոգւոյն օգտակար է. մանաւանդ թէ վերոյիշեալ արժան եղանակաւ թող խնդրէ: Յիսուս այսպիսի հոգևոր խրատներով ամենուն կարևոր և օգտակար առաքինութեան հրահանգները տալով հանդերձ, մի և նոյն ժամանակ կը զգուշացնէ, բոլորը՝ անարժան և անվայելուչ ընթացքէ հեռի կենալու, որպէս զի իրենց վարձքը չը կորանցնեն: Որովհետև մարդս ո՛չ միայն պարտական է առաքինութիւն գործելու, այլ և վատ ու ագեղ ո և է ընթացքէ բացարձակ զգուշանալու. այս պատճառաւ Յիսուս նորին կը պատուիրէ, որ մարդիկ այլ և այլ պատճառանօք պատուիրէ, որ մարդիկ այլ և այլ պատճառանօք վիրաւոր յանցաւոր դատելով դատապարտելու չեն[2]:

«Որովհետև, կասէ, ինչ չափով կամ դատաստանով որ ուրիշները դատէք, դուք ևս նոյն չա-

1. Ո՞վ է ի ձէնջ մարգ՝ ցոր խնդրեցէ որպէս իւր հաց, մինթէ քա՞ր տայցէ նմա. Մատթ. Է. 9—12. Ղուկ. ԺԱ. 11.

2. Մի դատէք՝ զի մի դատիցիք: Զի որով գատաստանաւ դատէք՝ դատելոց էք. Մատթ. Է. 1—6.

փով և կանոնով պէտք է դատուիք. ինչո՞ւ եղբօրդ աչքումդ եղած շիւղը կը տեսնես, և քու աչացդ գերանը չես տեսներ. կամ թէ ի՞նչ իրաւամբ կարող ես ասել եղբօրդ. Թոյլ տուր որ աչքէդ շիւղը հանեմ. նախ քու աչքի գերանը հանէ և յետոյ ուրիշի աչայ շիւղը հանելու նայէ:» Արդարև զայս կը պահանջէն հաւատարապէս թէ աստուածային օրէնք և թէ մարդկային ողջմտութիւնը կամ ճըշմարիտ մարդասիրութիւնը:

Այս մասին լաւ և մեծ ուշադրութեամբ խորհիլ հարկ է. որովհետև յանցաւորը պատժելու պաշտօնը՝ Աստուծոյ և նորա կողմանէ կարգեալ դատաւորաց կը վերաբերի. ուստի այն անձը՝ որ կեղծաւորաբար և յանիրաւի այլոց վրայ բարուբանք դնելով՝ ինքզինքը չքմեղ և արդար կը կարծէ կամ այնպէս ցոյց տալ կը ձգնի, մեծապէս կը մեղանչէ, և երբեք չուղղուիր այնպիսին, քանի որ մարդս իւր յանցանքը ճանաչելով կարող կը լինի ղղջալ:

Այս պատճառաւ Յիսուս այնպիսի անուղղայ և կեղծաւոր մարդիկը շան և խոզի կը նմանցնէ. և բացարձակ կարգիլէ որ հոգևոր բաներու մասին նոցա առջև չխօսին. որովհետև ոչ միայն նոքա չեն ընդունիր ո և է հոգևոր խրատ կամ ճշմարտութիւն, այլ և կը ջանան բոլոր իրենց զօրութեամբ ոտնակոխ առնել և խափանել նոցա տարածումը. մինչև իսկ ընդհակառակն, զայնս քարոզող անձինքը պատժելու համար ոչ մի զոհողու-

թենէ խոյս չեն տար. այնքան մեծ է նոցա կամակոր յամառութիւնը:

Արդ՝ ճշմարտութեան հետևող անկեղծաւոր անձինք պարտին ոչ ոքի վրայ բարուբանք դնել, ոչ ոքի դործերը քննել. այլ այս գեղեցիկ կանոնը իրրև ուղեցոյց բռնել իրենց կենաց և ընթացից. «ինչ որ կը կամիս թէ ուրիշները քեզ անեն, դուն էլ նոյնը արա՛ ուրիշներուն[1]». նա մանաւանդ եթէ կը կամիս Աստուծոյ աջքայութեան ժառանգորդ լինել, երկրիս վրայ պատահած ցաւերուն համբերէ ի սէր նորա և յօժարակամ տար ամէն նեղութեանց. քանզի մարմնաւոր հաճոյից միայն հետամուտ եղող անձինք՝ նորա փոխարէն հանդերձեալ աշխարհում տանջանք պէտք է կրեն:

Վանորոյ Յիսուս առաքինութեան ճանապարհը նեղ ըլլան կը նմանցնէ, յորմէ մանողը երկնից աջքայութիւնը կը գնայ. իսկ աշխարհային զբօսանաց վայելքը՝ լայն ըլլան կը նմանցնէ, յորմէ մանողը կորստեան կը մատնուի: Ուրեմն առաքինութեան սիրով ապրող մարդիկ երբէք Թոյլ չը տամին, եթէ նեղութեանց հանդիպին. քանի որ այնպիսի նեղութեանց վախճանը յաւիտենական ուրախութեան կը յանգի. սորա հակառակն, ամ-

1. Զամենայն զոր մի անգամ կամիջիք՝ Թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արարէք և դուք նոցա. զի այն խոկ են օրէնք և մարգարէք. Մատթ. Է. 12. մինչև 27 համար:

բոլոր կեանքում ամէն կերպով աշխարհային մարմնաւոր զուարճութեամբ զբաղեալ մարդը ուրախանալու չէ, քանի որ նոյն զուարճութեանց վախճանը՝ յաւիտենական տանջանաց պիտի լինի: Այսու ամենայնիւ իրողութիւնը այս է, որ շատերը լայն դռնէն կը գնան, իսկ նեղ դռնէն սակաւք կը գնան:

Յիսուս նկատելով թէ հրէից պետերն ու վարդապետները մարմնաւոր հաճոյից անչնաւոր եղած են, կը նմանցնէ զանոնք ոչխարի գգեստ կրող չափազանց գայլերու և սուր մրգեղէն անուամբ յիշատակելով՝ կը պատուիրէ զգուշանալ անոնցմէ, և նոցա խօսքերուն չը նայիլ. այլ իրենց գործքերէն ճանաչել զիրենք: Որովհետև լաւ ծառը լաւ պտուղ կուտայ, իսկ վատ ծառը բնականաբար վատ պտուղ կարտադրէ. հետևաբար նոքա չար լինելով՝ կարող չեն բարի գործքեր ունենալ. զի այս՝ իրենց բնութեան իսկ հակառակ է:

Փրկիչը պարզապէս յայտնեց թէ այնպիսիքը որքան էլ գիտուն լինին և մինչև իսկ հրաշք գործեն, դատաստանի օրում նոքա պիտի դատապարտուին. քանի որ (տես չորրորդ դարու ԻԹ-րդ հարցում՝) մարդս գիտութեամբ և հրաշքով կարող չէ արքայութիւն գնալ, այլ աստուածային պատուիրանաց և օրինաց գործադրութեամբ: Այս պատճառաւ Յիսուսի պատուիրանաց հնազանդ ապրող մարդը կը նմանի մի խնամատուն մարդու,

որ իւր տունը ժայռի վրայ կը շինէ, այնպէս որ անձրևէ, հեղեղէ և հողմէն չը կործանիր. իսկ հակառակը կեանք վարողները կը նմանին յիմար մարդու, որ իւր տունը աւազի վրայ կը շինէ, որ անձրևէ, հեղեղէ և հողմէն կործանեցաւ, և նորա կործանումը սաստիկ և կատարեալ էր:

Այնուհետև Յիսուս լեռնէն վար իջած ժամանակ շատ ժողովուրդ նորա ետևէն գնաց. մի բորոտ մարդ տեսնելով Փրկիչը՝ երեսի վրայ երկրպագութիւն մատոյց ասելով. «Տէր, եթէ կամիս, կարող ես զիս բժշկել[1]:» Յիսուս գթալով անոր՝ ձեռքը երկնցուց և ասաց. «Կամիմ, բժշկուէ»: և իսկոյն բորոտը բժշկուեցաւ, որուն նա պատուիրեց ոչ ոքի բան չասել, այլ երթալ և զինքը քահանային ցոյց տալով՝ օրինաց համաձայն զոհ մատուցանել. բայց նա դուրս ելնելով սկսաւ ամենուն պատմել իրեն պատահածը. վասնորոյ ժողովուրդը այն աստիճան եռանդով դունդադունդ Յիսուսի քարոզութիւնը լսելու և բժշկուելու կը դիմէին, որ ահագին բազմութեան պատճառաւ չը կրնալով քաղաքը մտնել, մի անապատ տեղ քաշուեցաւ աղօթելու համար[2]:

---

1. Այլ եթէ էլ (Յիսուս) ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մարտուցեալ բորոտ մի, երկիր պագանէր նմա և ասէր. Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել. Մատթ. Ը. 1.

2. Եւ յորդէր առաւել բանն գնմանէ, և ժողո-

Սակայն որքան որ ժողովուրդը հաճութեամբ Յիսուսի անունը կը փառաւորէր, նոյնքան փարիսեցիքը նախանձելով զայն վատահամբաւելու փափաք կունենային: Ինչպէս որ Յիսուս մի շաբաթ օրուն արտի միջէն անցած ժամանակ, տւաքեալք անօթի լինելով՝ ցորենի հասկը կը փրցնէին և իրենց ափերուն մանրելով կուտէին, զոր փարիսեցիներէն ոմանք տեսնելով սկսան ասել. «Շաբաթ օրուն արժան չէ ձեզ այդպէս անել», և այս մեղադրանքը աշակերտաց ուղղելով հանդերձ Յիսուսին կասեն. «Տե՛ս, աշակերտներդ ինչ կանեն, ինչ որ շաբաթ օրուն արժան չէ անել». այս խօսքով նորա վրայ ևս բարբառանք դնել կուզէին:

Յիսուս Ս. Գրքէն օրինակ բերելով կը յայտնէ թէ՝ Դաւիթ ինչպէս կերաւ խորանուն սեղանի վրայ դրուած հացը, զոր արժան չէր ուտել, բայց միայն քահանայից (Ա. Թագ. ԻԱ. 6). և թէ տաճարուն քահանայք զոհադործութեամբ կը պղտին շաբաթ օրուն՝ առանց յանցաւոր լինելու. որովհետև շաբաթը մարդուն համար է և ոչ թէ մարդը շաբաթուս համար: Մանաւանդ թէ այս պատուէրը իւր հրամանը լինելով՝ ինքը շաբաթ օրուան ևս կարող է իւր դերապոյն կամաց համեմատ իշխել[1]:

վէճին ժողովուրդք բաղումք լսել, և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց: Եւ նա խոյս տայը յանապատ տեղիս. Ղուկ. Ե. 15.

1. Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայսն

Թէպէտև այս խօսքերուն փարիսեցիք ոչ մի պատասխան չը կարողացան տալ, այսու ամենայնիւ դարձեալ իրենց չար նախանձէն և հեւաբար Յիսուսի վրայ չարախօսելու խորհուրդէն ետ չեն կենար:

Որովհետև յաջորդ շաբթու շաբաթ օրուն Յիսուս նոցա ժողովարանը կը գնայ Կափառնայում քաղաքի մէջ, և այնտեղ ձեռքը գօսացած մի մարդ գտնուելով՝ փարիսեցիք կը հարցնեն Յիսուսի թէ «Շաբաթ օրուն արժա՞ն է հիւանդը բժշկել». նոցա այս հարցման նպատակն էր զայն յանցաւոր ցոյց տալ ժողովրդեան և նորա վրայ չար խօսքեր որովհետև գիտէին թէ նա պիտի ասէր. «Արժան է» (քանի որ երեսուն ութ տարուան անդամալոյծը շաբաթ օրուն բժշկած էր, ինչպէս յիշուեցաւ Ե-րդ հարցում): Յիսուս կը պատասխանէ նոցա թէ՝ «Եթէ ձեզմէ մէկուն ոչխարը շաբաթ օրուն փոսն ընկնի, միթէ չի՞ հաներ զայն. որքա՜ն ևս առաւել մարդը[1]:»

նոցա ի շաբաթու, և աշակերտքն նորա քաղցեան. և սկսան հասկ կոտրել և ուտել. Մատթ. ԺԲ. 1. մինչև 8 համար:—Մարկ. Բ. 23.—Ղուկ. Զ. 1.

1. Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժողովուրդն նոցա, և անդ էր այր մի, որոյ ձեռն գօսացեալ էր. հարցին զնա և ասեն. եթէ պարտ իցէ ի շաբաթու բժշկել, զի չարախօսեսցեն զնմանէ. և նա ասէ ցնոսա. ո՞վ է ի ձէնջ մարդ, որոյ իցէ ոչխար մի

Ս.րդ՝ սոյն օրինակաւ շաբաթ օրում բարիք դործելու պարտաւորութիւնը հաստատելէ զկնի՝ նոյն գօսայելոյն կասէ. «Երկնցուր ձեռքդ». և նա իւր ձեռքը երկնցնելուն պէս՝ իսկոյն կը բժշկուի. սակայն փարիսեցիք դուրս ելնելով՝ կը խորհրդակցին թէ ինչ կերպով Յիսուսը կորնչցնեն։ Նոցա սոյն դիտաւորութիւնը Յիսուսի ծանօթ և յայտնի լինելով՝ այնտեղէն կերթայ, և իւր հետէն շատ ժողովուրդ ևս գնալով՝ նոցա բոլոր հիւանդները կը բժշկէ, միանգամայն պատուէր տալով նոցա որ իւր մասին ո՛չ ոքի բան չը յայտնեն։

Հարց՝ Ի՞նչ.

Թէ Յիսուս ինչո՞ւ պատուիրեց ժողովրդեան որ իւր մասին քան չը խօսին մէկուն.

Պաս. Ա. Գրքում իւր մասին գրուած մարգարէութիւնը կատարելու համար։ Վասն զի նոյն մարգարէն այսպէս գրած էր նորա համար թէ՝ «Հակառակութիւն չը պիտի յարուցանէ, աղաղակ պիտի բառնայ. նորա ձայնը հրապարակաց վրայ չը պիտի բառնայ. Ոչ ոք պէտք է լսէ։ Ջախջախեալ եղեգը չը պիտի փշրէ, և առկայծեալ պատրոյգը չը պէտք է մա-

---

և անկանիցէ այն ի խորխորատ է շաբաթու. մինչէ ո՛չ առնիցէ և յարուցանիցէ զնա. Մատթ. ԺԲ. 9. մինչև 16 համար։

րէ, մինչև որ յաղթութիւնը տանի. և հեթանոսները նորա անուան պիտի յուսան[1]։» Սոյն մարգարէութիւնը կատարուեցաւ, քանզի փարիսեցիքը թէև կամեցան զայն սպանել, բայց ինքն Յիսուս առանց յանդիմանելու կամ պատժելու զանոնք, այնտեղէն լռութեամբ քաշուելով՝ յայտնի եղաւ թէ նա հեզ է և սրտով խոնարհ։

Յիրաւի նոքա սաստիկ պատժոյ արժանի էին, քանի որ յայտնի էր թէ նա է Մեսիան, որուն ո՛չ միայն չը հաւատացին, այլ և կամեցան սպանել զայն. սակայն Յիսուս իւր բազում ողորմութեանը համար համբերելով՝ նորէն կը քարոզէ և կը հրաշագործէ, որպէս զի զգաստանալով ուղղուին և ապագայ ահաւոր դատապարտութենէն ազատուին. քանզի օրքան որ պատուիրեց ժողովրդեան չիմացնել իրեն ուր գտնուիլը, նոյն իսկ այնտեղ նորէն հրաշք գործեց։

Ինչպէս որ նոյն միջոցին բերին առ նա մի

---

1. Ահա մանուկ իմ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ։ Ո՛չ հաճառակեսցի և ո՛չ աղաղակեսցէ, և ո՛չ ոք լուիցէ ի հրապարակս զբարբառ նորա։ Զեղէգն ջախջախեալ ո՛չ փշրեսցէ, և զպատրոյգն առկայծեալ ո՛չ շիջուսցէ. մինչև հանցէ ի յաղթութիւն զդատաստան։ Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին. Մատթ. ԺԲ. 18.— Եսայ. ԽԲ. 1.

դիւահար կոյր և համր, որ բժշկէ զայն. երբ Յիսուս բժշկեց, ամէնքը կը զարմանան և կասեն. «Արդեօք սա՞ է Դաւիթի որդին Քրիստոս[1]». որով- հետև երեք տեսակ հրաշք մի և նոյն ժամանակ գործուեցաւ այդ մարդուն վրայ. խելագար էր, խելքը գլուխը եկաւ. կոյր էր, աչքերը բացուե- ցան. համր էր, սկսաւ խօսիլ: Ա.յս հրաշքը այն աստիճան յայտնի եղաւ, որ Երուսաղեմին, Յորդանանի դիմացի կողմին, Տիբրոս և Սիդոն քաղաքներէն անհամար ժողովուրդ կուգային նորա մօտ:

Դարձեալ մի համր դիւահար ևս բերին. երբ որ Յիսուս նորա դևը հանեց, իսկոյն լեզուն բա- ցուելով սկսաւ խօսիլ, զոր տեսնողները զարմանք սկսան ասել թէ՝ «Իսրայէլի ազգին մէջ այսպիսի բան երբեք տեսնուած չէր». բայց փարիսեցիքը առ- նախանձու կասէին թէ՝ «Ա.յս մարդը դիւաց իշ- խանին զօրութեամբ կը հանէ դևերը[2]:»

---

1. Ցայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա . . . զարմացան ամե- նայն ժողովուրդքն և ասեն. մեթէ սա՛ եցէ Քրիստոսն որդի Դաւթի. Մատթ. ԺԲ. 22.

2. Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա զայր մի՝ համր դիւահար: Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ժողովուրդքն և ասեն. Թէ և ո՛չ երբեք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին, Թէ եղևանուն դիւաց հանէ զդևս. Մատթ. Թ. 32.

Տես դու փարիսեցւոց կոյր չարութիւնը. Յի- սուսի հրաշագործութեանց նայելով, որքան որ ժողովուրդը կուրախանար և Քրիստոսը կը փառաւո- րէր, այնքան ատելի փարիսեցիք չարանալով՝ զայն վատահամբաւելու միջոցներ կը հնարէին: Եւ որով- հետև նոցա խորհուրդը ըստ ամենայնի յայտնի էր Յիսուսի, վասնորոյ կը փութայ հերքել նոցա վերոյիշեալ խօսքը ասելով թէ՝ «զոր օր. մի թա- գաւորութիւն կամ քաղաք կամ տուն՝ երբ որ իր մէջ բաժանեալ է, կարող չէ կանգուն և հաստատ մնալ, այլ շուտով կը քայքայի և կը կործանի, և կամ թէ զօրաւոր մի մարդու տունը կողոպտելու համար, նախ զայն կապել պէտք է, և ապա նորա առացուածքը յափշտակել, ահա այսպէս էլ, եթէ սատանայն՝ սատանայ կը հալածէ և կը հանէ, ու- րեմն ինքն իր դէմ հակառակ է, և հետևաբար նորա իշխանութիւնը քայքայուած:»

Ա.յսպէս նոցա խօսքերուն ստութիւնը և բնութեան հակառակ լինելը յայտնելէն յետոյ, Յիսուս կը յաւելու. «եթէ ես դիւաց իշխանին զօրութեամբ կը հանեմ դևերը, աշակերտներս՝ որոնք ձեր որդիքն են, ինչպէս և ինչով կը հանեն. այս պատճառաւ նոքա պիտի դատեն զձեզ:» Բանի ո՛չ միայն Յիսուս, այլ և նորա աշակերտք յանուն նորա սատանային վրայ իշխելով՝ դևերը կը հա- նէին և այսպէս նորա զօրութիւնը կը խորտակուէր յայտնապէս:

Աբդ՝ այս պարագայում, փարիսեցիք փոխանակ ուրախութեամբ Յիսուսի հաւատալու, ինչպէս պարտաւոր էին, քանի որ նա եկած էր պիրենք սատանայի իշխանութենէն փրկելու, ընդ հակառակն նախանձով լցուած՝ նոցա անարժան խօսքերը՝ հոգւոյն սրբոյ դէմ հայհոյութիւնք էին. այս պատճառաւ Յիսուս յայտնեց թէ նոքա թողութեան անարժան են։ Որովհետեւ Հոգւոյն սրբոյ զօրութեամբ կատարուած հրաշքները սատանայական զօրութեան վերագրելով ժողովրդեան ծանր եւ անդարմանելի կորստեան պատճառ կը լինէին։

Նոցա այսպիսի անուղղայ եւ չար ընթացքը իրենց սրտի չարութեան արդիւնքը լինելով՝ զանոնք իժերու ծննդոց նմանեցնելով կասէ. «Իժից ձագեր, ինչպէ՞ս կարող էք բարի բան խօսիլ, քանի որ չար սիրտ ունիք. որովհետեւ սրտի յաւելուածէն կը խօսի մարդուս բերանը։» Աբդարեւ մարդկային բերանէն ելած մէն մի խօսք՝ սրտէն յառաջ գալուն համար, լաւ մարդը լաւ բաներ կը խօսի, իսկ վատ եւ չար մարդը՝ վատ բաներ միայն կարող է խօսիլ։ Այս մասին պէտք է գիտնալ թէ ոչ միայն չարախօսք պատժոյ արժանի են, այլ եւ ոգեղ եւ անօգուտ խօսքեր խօսողներն էլ դատաստանի օրում պատասխան պէտք է տան իրենց դատարկ խօսքերուն համար, քանի որ մարդս՝ իւր խօսքերէն կամ պիտի արդարանայ եւ

կամ պիտի դատապարտուի, ըստ աւետարանի[1]։

Թէպէտեւ Յիսուս քանիցս յայտնեց թէ ինքն է Մեսիան, որոյ գալստեան հրէայք գարեւ ի վեր կանկնակէին, բայց դարձեալ մի քանի գպիրներ եւ փարիսեցիներ զայն փորձելու նպատակաւ կը խընդրեն որ իրենց նշան ցոյց տայ։ Եւ որովհետեւ նշան խնդրելը՝ իրենց անհաւատութենէն յառաջ կուգար, նոցա չարութիւնն ու անզգամութիւնը սաստկապէս յանդիմանելով կասէ. «Նշան չը պէտք է սրտի այս ազգին, բայց միայն Յովնան մարգարէի նշանը։»

Որովհետեւ, ինչպէս որ Յովնան երեք օր եւ երեք գիշեր ձկան փորում մնալով՝ Նինուէի բնակչաց համար նշան եղաւ, նմանապէս Յիսուս երեք օր եւ երեք գիշեր գերեզմանում մնալով՝ հրէից համար նշան պէտք է լինէր։ Սակայն, մինչդեռ Նինուէի ժողովուրդը կատարեալ լինելով հանդերձ, Յովնանի քարոզութիւնը լսելով ապաշխարեցին, և (տես չորրորդ դարու Խե-րդ հարցում) մինչդեռ Հարաւոյ դշխոյն Սողոմոնի իմաստութիւնը լսելով՝ փարիսեցւոց անձամբ գալ և նորա իմաստուն խօսքերը ի մօտոյ ևս լսել, իսկ հրէայք Մեսիայի՝ մարդկութեան երկնաւոր վարդապետին փրկարար ու

1. Իբրև դեռաց Ցիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն ինք՝ աւերի. և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն ինք՝ ոչ կացցէ. Մատթ. ԺԲ. 25—37.

աստուածային խօսքերը չէ լսեցին և չէ հաւատացին, այս պատճառաւ Յիսուս վճռեց որ դատաստանի օրում նոքա դատեն ու դատապարտեն անհաւատ հրէայ ժողովուրդը:

Արդարև, այս պարագայում նոքա հեթանոսներէն աւելի վատթար գտնուեցան. վասնորոյ Յիսուս կը նմանեցնէ զանոնք մի մարդու, յորմէ մի դև ելնելով թէև բժշկուեցաւ, բայց նորէն չարագործութեան հակամիտելուն համար, այն ելած դևը՝ եօթն ուրիշ դևեր եւս ի միասին առած՝ կրկին մեւնոյն մարդում բոյն կը դնեն, որով նորա վերջին վիճակը առաջինէն չարագոյն կը լինի[1]: Ա. յսպէս, Աստուած Իսրայէլեան ազգին օրէնք տալով՝ անհաւատութենէ փրկուեցան. սակայն երբ որ առաքեալ Փրկչին չէ հաւատալով զայն սպանեցին, կառապաշաններէն աւելի վատ և չար վիճակ ունեցան, վասն զի առաքելոց քարոզութեամբ հեթանոսք հաւատքի գալով՝ հրէայք անհաւատ մնացին:

Յիսուսի քարոզած ժամանակ, ժողովրդեան միջէն մի կին բարձր ձայնով կերանէ այն որոշեալը, որ զայն կրեց, և սինքը, որը զայն դիեցուցին: Փրկիչը կը պատասխանէ թէ՝ «Մանաւանդ երանի այն մարդոց, որոնք Աստուծոյ խօսքը կը

1. Ցայնժամ պատասխանի եւտուն նմա ոմանք ի գպրացն և ի փարիսեցւոց՝ և ասեն. Վարդապետ, կամիմք նշան լինչ տեսանել ի քէն. Մատթ. ԺԲ. 38—45.—Ղուկ. ԺԱ. 29.

լսեն և կը կատարեն[1]: Ցայնժամ Յիսուսի մայրն ու ազգականքը (զորս Ս. Գիրք եղբայր անուամբ կը յիշեն) զայն տեսնելու եկած էին, սակայն ահագին բազմութեան պատճառաւ չէ կարողանալով անոր մօտենալ, դրսում կանգնած էին. նոցա ներկայութիւնը մկը Յիսուսի խմացուցած ժամանակ, նա ձեռքը դէպի առաքեալները երկնցնելով կասէ. «Սոքա են իմ մայրս և եղբայրներս, որոնք Աստուծոյ պատուէրը լսելով կը կատարեն[2]:» Ա. յս խօսքը ոչ միայն առաքելոց, այլ և բոլոր առաքինի մարդոց մեծ մխիթարութիւն և փառք է. վասն զի աստուածային պատուիրանաց պահպանութեամբ նոքա մօր և եղբօր աստիճան Յիսուսի սիրելի կը հանդիսանան:

Աստուծոյ օրէնքն ու պատուիրանները կատարող մարդկան փառքն ու պատիւը յայտնելէն ետեւ,

1. Եւ եղև մինչդեռ խօսէր զայս (Յիսուս)՝ ձայն եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի է որովայնին՝ որ կրեաց զքեզ. և ստեանցն՝ որք դիեցուցին զքեզ: Եւ նա ասէ. նա երանի այնոցիկ է, որք լսեն զբանն Աստուծոյ, և առնեն. Ղուկ. ԺԱ. 27, 28.

2. Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա կային արտաքոյ՝ և խնդրէին խօսիլ ընդ նմա: Եւ ասէ ոմն ցնա. ահա մայր քո և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն խօսիլ ընդ քեզ. Մատթ. ԺԲ. 46—50.

դարձեալ այդպիսի առաքինի, բարեպաշտ եւ սրբակենցաղ անձինքը կը նմանեցնէ Ճրագի, որ աշտանակի վրայ դրուած է, եւ կապտարաբեր առաքելոց եւ նոցա միջոցաւ բոլոր անկեղծ հաւատացելոց, որ մեծապէս պէտք լինին, մի գուցէ անարժան ընթացքով առաքինութեան ճրագը շիջուցանեն իրենց մէջ: Որովհետեւ, ինչպէս որ կոյր մարդու մարմինը՝ նմանապէս առաքինութեան ճրագը մարդոց մարդու հոգին խաւարի մէջ կը ձգայ, որով ո՛չ իւր անձին եւ ո՛չ այլոց կարող է օգտակար լինել[1]:

Հարց. ԻԶ.

Ինչո՞ւ համար Յիսուսի մայրն ու ազգականքը զայն տեսնել կուզէին.

Պաս. Յիսուս պաշտպանելու համար: Որովհետեւ փարիսեցիք առ նախանձու զայն ժողովրդեան առջեւ շարունակ մեզադրելի ցոյց տուած էին, վախնալով թէ մի գուցէ ո՛ւ է չարիք եւս հասցնեն նմա, կուգան որ զայն առնուն եւ իրենց հետ տանին. քանի որ դեռ չը դիտէին թէ նա Մեսիան է: Նոցա միտքը Յիսուսի յայտնի լինելով քարոզը տարտեալէ ձգին, նոցա հետ տեսակցեցաւ, եւ իւր մասին չը վախնալու համար զանոնք ապահովելով եւ մխիթարելով հանդերձ, նոցա հետ ի միասին չը գնաց, որպէս զի նորէն ժողովրդեան քարոզէ, առանց երկնչելու իւր հակառակորդաց զօրութենէն:

Ա՛յն միջոցին մի փարիսեցի վախաքելով Յիսուսի մի առանձին պատիւ տալ, ձաշի համար իւր տունը կը հրաւիրէ զայն խոնարհութեամբ. նա էլ նոցա հոգեւոր կերակուր մատակարարելու համար կը գնայ նորա տունը, ուր այլ եւ այլ նիւթոց վրայ խրատ խօսելով նոցա թերութիւնքը եւս կը յայտնէ իրենց, որպէս զի ուղղուին. սակայն նոքա ո՛չ միայն չեն ուղղուիր, այլ եւ թշնամութեամբ եւս առաւել կը չանան ժողովրդեան առջեւ նորա վարկը կոտրել չարախօսութեամբ[1]: Ապա երբ որ Գալիլեայի ծովու եզերքում Գեննէսարէթ քաղաքի ծովածոցը մտեցաւ, շատ ժողովուրդ նորա քարոզութիւնը լսելու համար եւս էն գնացին անմիջապէս:

Յիսուս ծովեզերքում կեցած էր, և անդ գտնուող երկու նաւակներէն միոյն մէջ, որ Սիմոնին կը պատկանէր, քարոզելէն յետոյ, Սիմոնին կասէ. «Նաւակը դէպի բացը տար և ուռկանը ձգէ

1. Ոչ ուրուք լուցեալ զճրագ՝ դնէ ի թաքստեան, և ո՛չ ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի. զի որք մտանենն, զլոյս տեսանիցեն . . . արդ՝ պատշաճ լիցի՝ զուցէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար եցէ. Ղուկ. ԺԱ. 33.

1. Եւ մինչդեռ խօսէր զայս (Յիսուս), ազաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն, զի ճաշ կերցէ առ նմա. և նա մտեալ բազմեցաւ. Ղուկ. ԺԱ. 37. մինչև 54. համար.

ծովը։» Եւ որովհետեւ այն գիշեր մինչեւ առաւօտ շատ աշխատած եւ ոչինչ կարողացած էին որսալ, Սիմոն կը պատասխանէ թէ՝ «Ամբողջ գիշեր աշխատելով մի բան չը կարացինք ձեռք բերել, բայց քու խօսքիդ համար ուրիշանը կը ձգենք անգամ մի եւս»։ Եւ երբ որ ուրիշանը նետեցին, իսկոյն այնքան շատ ձուկ կը լեցուի ուրիշանում, որ ձգաթըռտելու աստիճանին կը հասնի։ այն ժամանակ միւս նաւակում եղած ընկերներուն նշան կուտան որ գան իրենց օգնելու։

Նորա այս հրաշքը տեսնելով մեծ երկիւղիպաշարուեցան, բայց Սիմոն Պետրոս ամէնքէն աւելի վախնալով՝ իսկոյն Յիսուսի ոտիքը կը փարի ասելով. «Տէր, հեռի գնա ինձմէ, որ ես մեղաւոր մի մարդ եմ»։ որուն Յիսուս կը պատասխանէ. «Մի վախնար, այսուհետեւ մարդիկը անվախճան կենաց պէտք է որսաս»։ Յայնժամ Սիմոն և Զեբեդեայ որդիքը՝ Յակոբոս և Յովհաննէս, որոնք Սիմոնի հետ ի միասին ձուկ կորսային, թողլով ձկնորսութիւնը՝ նաւակը ցամաք կը քաշեն և ամեն բան այնտեղ ձգելով Յիսուսի եւեւէն կը գնան[1]։ Երբ նա Գալիլեայի Ծովեզերքում կը քարոզէր, շատ ժողովուրդ նորա քարոզութիւնը լսելու համար

1. Եւ նա է մի նաւուցն, որ էր Սիմոնի, և աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն. նստաւ և ուսուցանէր ի նաւէ անտի զժողովուրդսն. Ղուկ. Ե. 3. մինչև 13.

եւեւէն կը գնային, իսկ երեկոեան դէմ ժողովրդեան արձակուրդ տալով՝ կը հրամայէ Ծովուն դիմացի կողմն անցնել։

Այն ժամանակ մի դպիրը Յիսուսի աշակերտիլ ուղելով կասէ. «Վարդապետ, դու ուր որ գնաս, կը փափագիմ քեզ հետեւիլ»։ Նա կը պատասխանէ. «Աղուէսները որջ ունին և երկնից թռչուններըբոյն, բայց ես գլուխս դնելու տեղ չունիմ»։ Այս պատասխանէն այնպէս կիմացուի թէ յիշեալ դպրին նպատակն էր մեծութեան հասնելու փառասիրական խորհրդով մտնել յաշակերտութիւներկնաւոր վարդապետին, մինչդեռ մարմնաւոր և երկրային ո և է բաղձանք սրտում տածող մարդն կարող չէ աշակերտիլ Յիսուսի։ Նորա աշակերտներէն մին էլ հրաման կը խնդրէ նախ երթալ և հայրը թաղել և ապա հետեւիլ իրեն. բայց մի՛ դուցէ նորա ազգականք միտքը փոխեն, որով արգելուի հոգևորին հետեւելէ, հրաման չը տալով կասէ. «Թոյլ տուր որ մեռեալք թաղեն իրենց մեռելները. դուն եւեւէս եկո՛ւր։»

Այնուհետեւ Յիսուս իւր առաքեալներուն հետ նաւ մտնելով երբ Տիբերեական Ծովին դիմացի եղերքը կանցնէին, կամեցաւ իւր գօրութիւնը ցոյց տալ նոցա, ուստի նաւում նորա քնած ժամանակ յանկարծ մի այնպիսի սաստիկ փոթորիկ եղաւ, որ նաւը մօտ էր ընկղմելու. այն պահուն առաքեալք առ երկիւղի կը փութան զայն արթնցնել ասելով.

«Տէր, վրկէ մեզ, որովհետև ահա կը կորնչինք»։ Եւ նա ելնելով կասէ. «Թերահաւատներ, ինչո՞ւ կը վախնաք»։ Եւ փոթորիկն ու ծովը սաստելուն պէս՝ իսկոյն ալեկոծութիւնը դադրելով՝ ծովը բոլորովին կը հանդարտի։ Յայնժամ նաւուն գտնուող բոլոր մարդիկ պակուցեալ՝ միմեանց կասեն. «Այս ինչ կերպ մարդ է, որուն ծով և մրրիկ կը հնազանդին։»

Ծովուն դիմացի կողմում Գերգեսացւոց երկիրը գնաց, ուր երկու դիւահարներ դերեզմանատան միջ կը բնակէին. (սակայն միկը շատ կատաղի լինելուն համար, միայն նորա մասին գրուած է, Մարկ. Ե. 1. և Ղուկ. Ը. 26). որովհետև շատ անգամ՝ պայն շղթայով կը կապէին, բայց կը կոտրէր ամէն շղթայ։ Բայ ասոր, շատ ժամանակէ ի վեր հանդերձ չը հագնելով՝ գիշեր ցորեկ գերեզմանատան և լեռներուն վրայ իւր անձը քարով կը ծեծէր և ահագին ազմուկ կը յարուցանէր, որով ո՛չ ոք կը համարձակէր այն կողմէն անցնիլ։ Յիշեալը սոյն դժբաղդ վիճակումն էր, երբ հեռուէն տեսնելով Փրկիչը, բարձրաձայն ազազակեաւ նորա առջև եկաւ, և երկրպագութիւն մատուցանելով՝ նորա Աստուծոյ որդի լինելը կը խոստովանի ասելով. «Մենք ինչ ունինք քեզ հետ, (ինչ արած ենք քեզ) որ եկար ժամանակէն առաջ զմեզ տանջելու»։ քանզի կը հրամայէր սատանային որ այդ մարդէն ելնէ։

Յիսուս նորա անունը կը հարցնէ, որ կը պատասխանէ թէ, Լեգէոն է. քանզի բազմաթիւ էին. և կաղաչէին զայն, որ երկրի ներքոյ մանելու հրաման չտայ իրենց։ Անտեղ խոզերու մի երամակ լինելով՝ Յիսուսէն թոյլտուութիւն կատանան նոցա մէջ մանելու, որուն վրայ բոլոր խոզերը իսկոյն ծովը նետուելով կընկղմին. և խոզարածներըը փախչելով կը գնան քաղաքում և ագարակներում կը պատմեն եղելութիւնը. այս դէպքը լսողները գալով կը տեսնեն որ յիշեալ դիւահարը՝ զգաստացած և հանդերձ հագած՝ Յիսուսի մօտ նստած է. մանաւանդ թէ՝ երբ որ դէպքին ականատես անձերէն անցքը կը լսեն, մեծապէս երկնչելով՝ կաղաչեն զՅիսուս, որ իրենց երկրէն հեռանայ։ Երբ Յիսուս նաւը մանելով կուվէր գնայ, բժշկուած դիւահարը կամենայ նորա հետ գնալ, բայց Յիսուս կը պատասխանէ անոր. «Գնա՛ տունդ, և պատմէ Աստուծոյ ողորմութիւնը, զոր արաւ քեզ»։ Նա էլ գնալով կը պատմէ, և բոլորը կը զարմանան[1]։

---

1. Եւ իջան եմուտ ի նաւն, ազաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա եցէ։ Յիսուս ո՛չ ետ նմա թոյլ, այլ ասէ ցնա. երթ ի տուն քո, առ ընտանիս քո, և պատմեա նոցա, որ ինչ միանգամ Ցէր արաւ քեզ... Մարկ. Ե. 18.

Հաբցոմ Իէ.

Գերզեսացիք ինչո՞ւ համար աղաչեցին զՅիսուս որ իրենց սահմանէն գնայ.

Պապ. Առ երկիւղի։ Որովհետև վերոյիշեալ հրաշքը տեսնելով՝ նորա զօրութիւնն ու սրբութիւնը և իրենց անարժան ընթացքն ու մեղաւորութիւնը իսկոյն նկատեցին, որուն համար կը խնդրեն որ իրենց երկրամէ չը մնայ, որպէս զի մի գուցէ ծանրագոյն պատիժ գայ իրենց վրայ նորա ներկայութեան պատճառաւ։ Յիսուս նոցա խնդրանաց պիջանելով՝ նաւը կը մտնէ Գափառնայում վերադառնալու, ուր յաճախ քարոզելուն և բնակելուն համար, այնտեղը նրա ծաղրը գրուած է. և երբ բնակիչք նորա վերադարձն իմացան, քարոզութիւնը լսելու համար այն աստիճան մեծ բազմութիւն կը հաւաքուի, որ նորա տան մինչև դուռը կանգնելու տեղ չը մնար, և նա՝ նոցին կը քարոզէր։

Արդ՝ որովհետև նորա հրաշագործ զօրութիւնը յայտնի էր քաղաքի բնակչաց, այս պատճառաւ իւր մահիճովը մի անդամալոյծ կը բերեն անոր բժշկելու համար. բայց երբ բազմութեան ազդաւ չեն կարողանար մօտենալ Յիսուսի, նըրա ասած տեղին առաստաղը քակելով՝ չորս մարդիկ անդամալոյծն իրեն մահիճովը վար կիջեցնեն...Նորա առջև, որ նոցա հաւատքը տեսնելով՝ անդամալոյծին կասէ. «Որդեակ, ներուին քեզ քո մեղքդ։» Դպիրներէն ոմանք, որ անդ ներկայ էին, սկսան խորհիլ իրենց մտքում թէ՝ «Այս ինչ հայհոյութիւն է, որ այս մարդը կանէ. Աստուծմէ զատ ո՞վ կարող է ներել մեղաց։»

Յիսուս նոցա խորհուրդն իմանալով՝ կասէ թէ՝ «Ո՞րը աւելի դիւրին է, անդամալոյծին ասել թէ մեղքերդ ներուած են, կամ թէ՝ առ մահիճդ և գնա՛». և ցոյց տալու համար թէ երկրիս վրայ իշխանութիւն ունի մեղքերը թողելու, անդամալոյծին կասէ. «Քեզ կասեմ՝ առ մահիճդ և գնա։» Անդարձ յիշեալը իսկոյն մահիճը առնելով գնալուն վրայ բոլոր ներկայք սաստիկ զարմացած՝ կը փառաւորեն զԱստուած ասելով թէ՝ «Այսպիսի բան երբեք չը տեսանք[1]։» Եւ որովհետև քարոզը լսելու համար խիստ շատ բազմութիւն եկած էին, տունէն ելնելով նորին ծովուն եղերքը կուգայ, և ժողովուրդն էլ նորա եւս կերթայ, և նա դարձեալ կը քարոզէր նոցա[2]։

---

1. Եւ մտեալ ի նաւ էանց յայնկոյս, և եկն ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնիւր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա. Մատթ. Թ. 1. մինչև 8 համար.—Մարկ. Բ. 1. Ղուկ. Ե. 17.

2. Եւ դարձեալ (Յիսուս) ի ծովեղերն, և ամենայն

Նկատել հարկ է թէ, Վերգեսացւոյ երկրին վերադարձին՝ ժողովուրդն այդին անձկանօք կսպասէր, և երբ սիրով ընդունեցին զինքը[1], կափառնայում քաղաքի մէջ կը քարոզէր նոցա. իսկ քաղաքէն դուրս գնալու միջոցին, կամենալով իրեն աշակերտութեան կոչել մաքսաւոր Մատթէոսը (Ալբէոսի որդին, որ Ղևի ևս կը կոչուի), ճանապարհին վրայ կայն տեսնելով՝ միայն կասէ անոր. «Հետևիր ինձ». և նա՝ բոլոր աշխարհային և մաքսնաւոր հոգերը սրտէն ու մտքէն հանելով՝ նորա ետևէն կերթայ իսկոյն։

Այս մասին Մատթէոս՝ իրեն եղած ողորմութիւնը ճանաչելով, այն աստիճան կուրախանայ, որ ի նշան Յիսուսի աշակերտելուն՝ զայն և նորա աշակերտները, ինչպէս նաև ուրիշ շատեր առնը կը հրաւիրէ, ուր մեծ խնջոյք կուտայ նոցա։ Երբ որ Յիսուս ճաշի նստած էր նորա տանը, շատ մաքսաւոր և մեղաւոր մարդիկ ևս սեղանի վրայ բազմած էին նորա հետ։[2]

Ժողովուրդն գայր առ նա. և ուսուցանէր զնոսա. Մարկ. Ը. 13.

1. Եւ երբեմն գարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն, քանզի ամենեքեան անկն ունէին նմա. Ղուկ. Ը. 40.

2. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես զայր մի, զի նստէը ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն. և ասէ ցնա. եկ զկնի իմ. և յարուցեալ գնաց զկնի նորա։

Հատուած Իբ.

Յիսուս ընդէր մաքսաւորաց եւ մեղաւորաց հետ ի միասին բազմեցաւ.

Պապ. Զանոնք ապաշխարութեան յորդորելով գարձի բերելու համար։ Թէպէտև նա այս պարագայում իւր բազում ողորմութիւնն ու մարգասիրութիւնը յայտնեց, բայց որովհետև փարիսեցիք նորա հակառակորդ և թշնամի էին, այս մասին էլ պատրուակ որոնելով՝ մեղադրանաց և գանգատի ձևով աշակերտներուն կասեն. «Ինչո՞ւ համար ձեր վարդապետը մաքսաւորաց և մեղաւորաց հետ կը ճաշէ։» Յիսուս նոցա անիրաւութիւնը յայտնելու համար առակաւ խօսելով կասէ նոցա. «Առողջ մարդոց բժիշկ հարկաւոր չէ, այլ հիւանդաց։»

Նմանապէս նոցա հասկցնելու համար թէ որքա՜ն մեծ է Աստուծոյ գթութիւնը մեղաւորաց վրայ, Ովսէէ մարգարէի ձեռամբ Ս. Գրքում գրուած պատգամին համաձայն կը յայտնէ թէ՝ յաչս Աստուծոյ աւելի ընդունելի է գթածութեամբ կարօտելոց օգնել և մանաւանդ մեղաւորը յապաշխարութիւն կոչելով՝ նորա ուղղութեան համար հոգևոր խրատներ տալ քան թէ զոհ և

Եւ եղև երբեմն բազմեալ էր նա ի տանն, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի. Մատթ. Թ. 9.—Մարկ. Ը. 14.—Ղուկ. Ե. 27.

պատարագ մատուցանել. «Որովհետև, կը յաւելու, ես եկայ ո՛չ թէ արդարները, այլ մեղաւորները հրաւիրելու յապաշխարութիւն[1]։»

Ա՛յս պատասխանը՝ իրենք զիրենք արդար կարծողներուն պէտք է երկիւղ ներշնչէ, իսկ իրենք զիրենք մեղաւոր համարողներուն համար մեծ մխիթարութիւն է։ Որովհետև ո՛չ թէ մի մարդ ինքզինքը արդար սեպելով աբքայութիւնն կը գնայ, այլ խոնարհութեամբ մեղաւոր համարելով և ղղջմամբ ապաշխարելով կարող է արժանանալ Աստուծոյ աբքայութեան։ Չոր օրինակ՝ փարիսեցիք զիրենք արդար կարծելով հպարտանալնուն համար արժանի չեղան գթութեան, իսկ մեղաւորները Յիսուսի քարոզութիւնը լսելով սրտի մտօք ապաշխարելնուն համար արժանացան աստուածային անհուն ողորմութեան։ Նոցա հպարտութիւնը՝ արդիւնք լինելով իրենց անհաւատութեան, պատճառ եղաւ նոցա կորստեան. իսկ նոցա խոնարհ դարձը՝ արդիւնք էր իրենց հաւատքին, որով փրկուեցան։

Թէպէտև ամբարտաւան փարիսեցիք չը կարողացան պատասխան տալ այս մասին, այսու հան-

1. Իսկ Յիսուս երբե՛ւ լուաւ՝ ասէ ցնոսա. ո՛չ է պէտոյ բժիշկ կարօղաց՝ այլ հիւանդաց։ Երթայք ուսարո՛ւք զի՞նչ է. զողորմութիւն կամիմ. և ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս. Մատթ. Թ. 12—Ոսէե. Զ. 6.

դերձ դարձեալ Յիսուսի և նորա աշակերտաց ընթացքը քննադատելու բաղձանքով կասեն. «Ինչո՞ւ համար Յովհաննէսի աշակերտներն ու փարիսեցիք յաճախ ծոմ կը պահեն, իսկ քու աշակերտները չեն պահեր»։ Յիսուս որ եկած էր նոր օրէնքը հաստատելու, կը պատասխանէ թէ՝ «Երբ որ նոր օրէնքը հաստատուի, նորա ևս ծոմ պէտք է պահեն[1]։»

Մինչդեռ Յիսուս Մատթէոսի տան մէջ փարիսեցւոց հետ այսպիսի խօսքեր կանէր, հրէայ ժողովրդեան գլխաւորներէն Յայրոս անուամբ մի պատուաւոր մարդ, որուն աղուներկու տարեկան դուստրը ծանրապէս հիւանդ էր և իւր մէկ հատիկ զաւակն էր, Յիսուսի ոտքն ընկնելով կաղաչէր որ հաճի իւր տունը գնալ և բժշկել զայն. նա՝ որ Թագաւորապին որդին (տես ԺՀ-րդ Հարցում) հեռուէն խօսքով և եթէ բժշկած էր առանց նորա տունը գնալու, այս անգամ կը կամի հրէայ իշխանին տունը գնալ անձամբ. վասն զի գիտնալով թէ նորա դուստրը արդէն մեռած է, կերեւայ որ մեռեալը յարուցանէ։

Բայ յայտնի է, ձանապարհին վրայ մի խեղճ

1. Եւ էին աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն ի պահս. գան և ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու և փարիսեցիքն պահեն, և քո աշակերտքդ ո՛չ պահեն. Մարկ. Բ. 18. մինչև 22 համար.—Մատթ. Թ. 14.—Ղուկ. Ե. 33.

և տառապեալ կին ևս բժշկելու էր, որ տասն եր-
կու տարիէ ի վեր տեառաեսութեան ախտիւ բըռ-
նուած՝ բազում արիւն կը դնար իրմէ, և բոլոր
ունեցած ստացուածքը սպառած էր բժշկաց տա-
լով, բայց փոխանակ օգուտ քաղելու՝ ընդհակա-
ռակն, աւելի զայրացուցած էր տկարութիւնը:
Յիսուս և նորա աշակերտք Յայրոսի տունը գնալու
ժամանակ յիշեալ կինը կատարեալ հաւատով մըտ-
քումը կը խորհի որ եթէ մի անդամ նորա հան-
դերձին հպելու լինի, անպատճառ կը փրկուի իւր
տկարութենէն:

Արդ՝ ըստ որում խռնն բազմութիւն կը
գնար Յիսուսի ետևէն, այդ ահագին բազմութեան
մէջ մտնելով՝ ի յետուստ մի կերպ նորա հանդեր-
ձին դպելուն պէս՝ իսկոյն կը բժշկուի: Իրաւ է որ
այս բանը գաղտնապէս ի գործ դրաւ, բայց նորա
խորհուրդն ու կատարուած բժշկութիւնը Յիսուսի
յայտնի լինելով՝ կը դառնայ դէպի ժողովուրդն և
կը հարցնէ թէ ո՞վ մերձեցաւ իրեն. և նորա կը
պատասխանեն թէ չգիտեն. իսկ աշակերտները կը
փութան ասել թէ «Բազմութիւնն է որ կը նեղէ
զքեզ»: Յայնժամ Յիսուս շուրջը նայելով ասաց.
«Մէկը դպաւ ինձ, քանզի իմացայ որ զօրութիւն
ելաւ ինձմէ:»

Խեղճ կինը նկատելով թէ իրողութիւնը
յայտնի է Յիսուսի, ահիւ և դողութեամբ գալով
նորա ոտից կը փարի, և ի լուր ամենուն կը պատմէ

թէ ինչ պատճառաւ ինքը համարձակած էր նորա
հանդերձին հպել, այն ժամանակ Յիսուս կասէ
կնոջ. «Հաւատոդ քեզ փրկեց, գնա խաղաղու-
թեամբ:» Ա. յն միջոցին Յայրոսի տունէն ոմանք
կասեն անոր. «Վարդապետին նեղութիւն մի պատ-
ճառեր, որովհետև աղջիկդ մեռաւ:» Յիրաւի
աղջկան մահը արդէն դիտեր Յիսուս, բայց որով-
հետև կերթար զայն աղջնեցնելու, ուստի կը յու-
սադրէ ժողովրդապետը ասելով. «Մի վախնար, մի-
այն հաւատա և աղջիկդ կը կենդանանայ:» Երբ որ
տունը կուգայ, կը տեսնէ հաւաքուած բազմու-
թիւնը, որ փողահարութեամբ հանդերձ բարձրա-
ձայն կուլայիս:

Յիսուս կասէ այդ ամբոխից բազմութեան.
«Ինչո՞ւ կուլաք և ամուկ կը յարուցանէք. աղջիկը
մեռած չէ, այլ կը ննջէ»: և որովհետև նորա գի-
տէին թէ նա մեռած է, վանորոյ կը ծիծաղին և
կը ծաղրեն: Յիսուս այդ բոլոր բազմութիւնը
դուրս հանելով՝ միայն աղջկան ծնողքն ու իւր
աշակերտներէն երեքը Պետրոսն ու Յակոբոսը և
Յովհաննէսը կառնու և աղջկան գտնուած սե-
նեակը գնալով՝ նորա ձեռքէն բռնած կասէ. «Տա-
լիթա կումի». այսինքն աղջիկ ե՛ր, և մեռեալը իս-
կոյն երևնելով քալելու սկսելուն պէս՝ ծնողքը
վերին աստիճան կապշին, և Յիսուս կը պատուիրէ
որ ո՛չ ոքի բան չասեն, և աղջկան կերակուր տան

ուաելու [1]: Ա.յս մեծ հրաշագործութիւնը խոր տպաւորութիւն թողուց ի հարկէ ներկայից վրայ:

Ա.պա անտի մեկնելով դէպի Կափառնայում քաղաքը գնացած ժամանակ, ճանապարհին վրայ երկու կոյրեր բժշկութիւն գտնելու փափաքանօք նորա եաւէն կաղաղակեն. «Ողորմ մեզ Դաւթի որդի»: Յիսուս առանց նոցա պատասխան տալու, երբ որ տուն կուգայ, կոյրերը նորա ներկայութեան կելնեն. Յիսուս կը հարցնէ նոցա. «Կը հաւատաք թէ կարող եմ զձեզ բժշկել:» Եւ որովհետև նոքա կատարած հրաշագործութիւնքը լսելով՝ հաւատացած էին թէ կարող է զիրենք բժշկել, կը պատասխանեն թէ «Ա.յո». այն ժամանակ ձեռքը նոցա աչաց մօտեցնելով կասէ. «Ձեր հաւատքին համեմատ թող լինի ձեզ». այս խօսքը Յիսուսի բերնէն ելնելուն պէս՝ իսկոյն նոցա աչքերը բացուեցան. և նա կը պատուիրէ նոցա ոչ ոքի չը յայտնել. բայց նոքա դուրս ելնելով՝ այն կողմերում բոլորին կը պատմեն [2]:

---

1. Եւ ահա մի ի ժողովրդապետացն գայր՝ որում անուն էր Յայրոս, և երբև տեսս զնա՝ անկաւ առոտս նորա, աղաչէր զնա յոյժ և ասէր. Թէ դուստր նորա մերձ է ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ. Մարկ. Ե. 22. մինչև 43 համար.—Մատթ. Թ. 18.—Ղուկ. Ը. 41.

2. Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և ասէին. ողորմեա մեզ, որդի Դաւթի. Մատթ. Թ. 27. մինչև 31 համար.

Արդարև յիշեալ կուրաց կատարեալ հաւատքը Յիսուսին յայտնի էր. բայց բոլորին յայտնելու համար յատկապէս հարցուց, քանի որ Աստուած ամէն բանի կարող է. սակայն հաւատքը թերի եղող մարդը կարող չէ իւր խնդրանաց կատարումը տեսնել:

Հարց ԻԹ.

Ցիսուս ինչո՞ւ պատուիրեց կուրաց որ իրենց բժշկութիւնը ոչ ոքի չասեն.

Պաս. Որպէս զի չասեն թէ մարդիկներէն փառաւորուելու համար հրաշք կը գործէ: Որովհետև յաճախ այդպէս պատուիրելով հանդերձ, նախանձոանները դարձեալ նորա վրայ բարբարանք դնել կուզէին: Ինչպէս որ վերոյիշեալ կոյրերը բժշկութիւն գտնելէ յետոյ, երբ որ հպարտ դուրս ելած էին, մի համր դիւահար կը բերեն առ Նա, որ բժշկէ: Յիսուս նորա դևը հանելուն պէս՝ նորա լեզուն բացուելով սկսաւ խօսել և թէպէտ ժողովուրդը զարմացմամբ կը խոստովանէր ասելով. «Ա.յսպիսի բան Իսրայէլեան աղգի մէջ երբէք տեսնուած չէ», բայց փարիսեցիք նորին կասեն թէ՝ «Նա դիւաց իշխանին զօրութեամբ կը հանէ դևերը [1]:»

---

1. Եւ յելանելն նոցա արտաքս՝ ահա մատուցին

Յետոյ կափառնայումն մեկնելով կուգայ Նազարէթ քաղաքը և առաքեալք ևս կը գնան նորա ետևէն[1]. և երբ շաբաթ օրում կը քարոզէ ժողովրդեան, նայելով նորա դիտութեան, իմաստութեան և գործած հրաշքներուն՝ շատերը կը զարմանան և կսկսին իրարու ասել. «Սա ո՞ւստի ունի այսչափ իմաստութիւն. և ի՞նչ է այն զօրութիւնը, որ սորա ձեռամբ կը կատարուի». մանաւանդ (ինչպէս Թ-րդ Հարցում յիշուեցաւ) Յիսուս Եգիպտոսէն դառնալէ յետոյ մինչև երեսուն տարեկան հասակը Նազարէթում բնակելուն համար միաբանց կը հարցնեն. «Միթէ սա հիւսան և Մարիամի որդին չէ՞ և միթէ նորա ազգականք մեզ մօտ չե՞ն». և այսպէս նոցա անհաւատութեան համար, Յիսուս շատ հրաշք չը գործեր այնտեղ. միայն մի քանի հիւանդաց վրայ ձեռք դնելով կը բժշկէ մարդասիրաբար:

Նազարէթի բնակիչք՝ իրենց եղած աստուածային ոգորմութիւնը չը ճանաչելնուն համար, այս անգամ Յիսուս այստեղ շատ չուշանար, և ուրիշ տեղեր կերթայ քարոզելու, և բոլոր իրեն դիմող հիւանդներն ու ախտաժէտ մարդիկը կը բժշկէ. և դիմալով ժողովրդեան, որ հովիւ չունեցող ոչխա-

---

առ նա զայր մի՝ համր դիւահար. Մատթ. Թ. 32. մինչև 34 համար.

1. Եւ ել անտի, եկն ի գաւառ իւր (Նազարէթ). և երթային ղհետ նորա աշակերտքն իւր. Մարկ Զ. 1.

րաց հօտի նման ատա և անդ ցրուած կը տառապէր, լեռը կելնէ և բովանդակ գիշերը աղօթքով կանցնէ, և երբ առաւօտ կը լինի, աշակերտներէն տասներկուքը կոչելով՝ առաքեալ կանուանէ զանոնք[1], որք են. առաջինը Սիմոն՝ որ Պետրոս անուանեցաւ. նորա եղբայրն Անդրէաս. Յակոբոս և նորա եղբայրն Յովհաննէս, որոնք Զեբեդէոսի որդիքն էին. Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թովմաս, Մատթէոս մաքսաւոր, Ալփէոսի որդին Յակոբոս, Զէբէոս, որ անուանեցաւ Թադէոս և Յուդա Յակոբեան. Սիմոն Կանանացի, որ կոչուեցաւ Շմաւոն Նախանձայոյզ, և Յուդա Իսկարիովտացի, որ մատնեց Յիսուսը[2]:

Սոցա հարկաւոր եղած շնորհն ու զօրութիւնը կը պարգևէ, որ երթան ժողովրդեան քարոզելու և նոցա բոլոր հիւանդները բժշկելու:

---

1. Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ի լեառն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ի գլուխ յաղօթից Աստուծոյ: Եւ երբև այգ եղև՝ կոչեաց զաշակերտան իւր, և ընտրեաց ի նոցանէ երկոտասանս, զորս և առաքեալս անուանեաց. Ղուկ. Զ. 12.—Մատթ. ժ. 1.—Մարկ. Գ. 13.

2. Զնոսա երկոտասանեսեան առաքեաց Յիսուս՝ պատուիրեաց նոցա, և ասէ. ի ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայցէք և ի քաղաքս Սամարացւոց մի՛ մտանիցէք: Այլ երթա՛յք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի. Մատթ. ժ. 3. մինչև 42 համար.

Թէպէտև Յիսուս կարևոր եղած չնորհն ու զօրութիւնը առաքելոց տուաւ, բայց մի և նոյն ժամանակ իրենց պաշտօնի կիրառութեան մէջ թէ ինչպէս պէտք էր շարժել, որոշ հրահանգներ ևս տալէն զատ՝ կը յայտնէ թէ պէսպէս նեղութիւններ պիտի կրեն, թէ ի՛րենք ընդունողները վարձ պէտք է ստանան, իսկ ընդհակառակն ի՛րենք մերժողները դատաստանի օրում Սոդոմ և Գոմոր քաղաքաց ժողովրդէն աւելի մեծ պատժոյ արժանի պիտի լինին։ Զայս կանխաւ յայտնեց նոցա, որպէս զի մարմնաւոր նեղութիւն պատահած ժամանակ, աներկիւղ և ուրախութեամբ կրկին համբերեն. քանզի իրենց կրած նեղութեան փոխարէն՝ իրենք երկնից անվախճան ուրախութեանց արժանի լինելէ զատ՝ իրենց անուամբ մի բաժակ ցուրտ ջուր առուողն անգամ իւր վարձը չը պիտի կորնչնէ։

Ապա առաքելոց հետ Յիսուս լուռնէն իջնելով, երբ որ մի դաշտային վայր կընտրէ քարոզելու համար, և ահա ամբողջ Հրէաստանէն, Տիւրոս և Սիդոն քաղաքաց ծովեզերքէն անհամար ժողովուրդ եւանդագին սիրով կը գիմեն առ նա, քարոզութիւնը լսելու և բժշկուելու համար. և նոցա բոլոր հիւանդները բժշկելէ զատ՝ ամենքը հոգևոր խրատներով կը մխիթարէ. և ապա առաքելոց նայելով, երանի կուտայ նոցա և բոլոր առաքինի մարդոց, որպէս զի ուրախ լինին։

Որովհետև նոքա՝ իրեն անուան փառաց համար աշխարհի ստացուածքը, զուարճութիւնն ու մեծութիւնը թողլով՝ բնական և պատահական ամեն չարեաց և նեղութեանց համբերելու իրենց յօժարակամ յանձնառութեան համար շատ մեծ վարձք պէտք է ունենան երկնքում։ Սորա հակառակն վայ կուտայ այն մարդոց, որոնք աշխարհային բարեաց, մեծութեան ու զբօսանաց անձնատուր եղած են. սոցա ևս պատիժը մեծ պէտք է լինի հանդերձեալ աշխարհում։

Երբ առաքինեաց վարձքն ու աշխարհասիրաց պատիժը կանխաւ յայտնեց, որ գգաստանան, ապա այնտեղ ներկայ ժողովրդեան սկսաւ նորէն քարոզել և տեսակ տեսակ նիւթոց վրայ խօսիլ և առաքինութեան հանելու միջոցներուն վրայ խրատ և պատուէրներ տալ. որպէս զի ամէն կերպով կատարեալ լինին[1], որպէս կը վայելէ իրեն ճշմարտապէս հետևողներուն։

Ա՛յնուհետև Յիսուս առաքեալները կը ղրկէ որ երթան և ժողովրդեան քարոզեն. և որովհետև, ինչպէս վերը յիշուեցաւ, խիստ շատ ժողո-

---

1. Եւ էջեալ նոքօք հանդերձ ի տեղի մի տափարակ, և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւնք յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղէմէ՝ և յայնմ կողմանէ՝ և ի ծովեզերեէն Տիւրոսի և Սիդոնի, որք եկին լսել ի նմանէ՝ և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց. Ղուկ. Զ. 17. մինչև 49 համար.

վուրդ հաւաքուած էր այնտեղ, որ վերոյիշեալ խրատներն ու պատուէրները լսեցին, այսու հանդերձ կորոշէ դնալ նաև նոցա քաղաքները՝ քարոզել անձամբ և անխոնջ՝ յօգուտ և ի շինուածիւն ամենուն 1։

Երբ որ Յիսուս ժողովրդեան այսպիսի խրատներ և հրահանգներ տալէն յետոյ Կափառնայում քաղաքը եկաւ, հեթանոս ազգէ մի հարիւրապետ՝ որ հրէից հետ շատ սիրով էր և որ նոցա ժողովրդանոցն իսկ շինել տուած էր իւր անձնական ծախքով, հրէից ծերերէն մի քանին կը ղրկէ առ Յիսուս, որ բարեհաճի բժշկել իւր մի պատուական ծառայն, որ ծանր հիւանդ էր. որովհետև լսած էր նորա անունը և գործած հրաշքները, ու կատարեալ հաւատով կը յուսար որ եթէ, նա կամենայ, կարող է իւր ծառայն բժշկելու՝ մինչև իսկ մի պարզ խօսքով։

Վերոյիշեալ ծերունիքը գալով առ Յիսուս՝ կաղաչեն զայն ասելով թէ՝ «Արժանի է նա որ դու այս օգնութիւնը անես իրեն. քանզի կը սիրէ մեր ազգը և մեր ժողովրդանոցն էլ նա շինեց մեզ համար». ուստի Յիսուս կամեցաւ նոցա հետ գնալ, բայց յիշեալ հարիւրապետը՝ լսելով որ նա անձամբ կուգայ, մարդ կը ղրկէ իմաց տալու որ նեղութիւն չը կրէ. «Որովհետև, կասէ, ես արժանի չեմ զքեզ տանս մէջ ընդունելու. այն պատճառաւ ես իսկ անձամբ առ քեզ գալու արժանի չը տեսայ անձս, այլ միայն մի խօսքդ բաւական է որ իմ ծառայն բժշկուի։»

Թէպէտև յիշեալ հարիւրապետը այսպիսի խոնարհական խօսքերով պատգամաւոր ղրկեց Յիսուսի, բայց մի գուցէ նորէն նեղութիւն կրէ իւր տունը գալու, անմիջապէս ինքն էլ դիմաւորելով զայն կասէ. «Տէր, ես էլ իշխանութեան տորա-դասեալ մի պաշտօնեայ եմ՝ և ունիմ իմ հրամանի ներքոյ զինուորներ, որոց միոյն հրամայեմ դնալ, կը դնայ. և այլում հրամայեմ գալ, կուգայ. և ծառայիս հրաման տամ այս ինչ գործը կատարել, կը կատարէ, անմիջապէս։» Ա՛յս խօսքերով նա կը խոստովանի թէ Յիսուս է ամենակարող և ամենայնի իշխան, վասնորոյ Յիսուս զարմանալով նորա հաւատքի մեծութեան վրայ, կը դառնայ և ժողովրդեան կասէ թէ՝ «Ա՛յսպիսի հաւատք Իսրայէլում անգամ չգտայ։»

Յիրաւի յիշեալը կատարեալ ազգէ լինելով հանդերձ՝ այսպէս կատարեալ կերպով հաւատաց, մինչդեռ Իսրայէլացիք նոյն հաւատքը չունեցան. վասնորոյ Յիսուս կը վճռէ թէ արևելքէն և արևմուտքէն մարդիկ գալով՝ արքայութեան մէջ Աբրահամու, Իսահակայ և Յակոբի հետ պիտի բաղ-

---

1. Եւ եղև ետքեւ կատարեաց Յիսուս զպատուէրսն ԵրկոտասանիցՀ աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել ի քաղաքս նոցա. Մատթ. ԺԱ. 1.

մին, բայց հրէայք արտաքին խաւարի մէջ պէտք է չան և ատամ կճրտացնեն. ապա Տարիւրապետին կասէ. «Գնա՛, ինչպէս հաւատացիր, այնպէս թող լինի քեզ». և իսկոյն նորա հիւանդը բժշկուեցաւ[1]:

Յաջորդ օրում, երբ որ Յիսուս Կափառնայումն մեկնելով՝ ուրիշ տեղերում քարոզելու կը գնար, առաքեալք և ուրիշ շատ ժողովուրդ ևս նորա հետ կը գնային. նային քաղաքի դրան մօտեցած ժամանակ, քաղաքի բնակիչները մի մեռեալ դուրս հանած կը տանէին, որուն մայրը որբևայրի մի կին էր և անկէ զատ ուրիշ զաւակ չունէր. Յիսուս զայն տեսնելուն պէս գթաց նորա վրայ, և «Մի լար» ասելով դագաղին մօտեցաւ, որով դագաղակիրք ևս կանգնեցան. յայնժամ Յիսուս ասաց մեռելոյն. «Պատանի դու, քեզ կասեմ, արի՛». սոյն խօսքը նորա բերնէն ելածին պէս՝ մեռեալը իսկոյն կեցնէ և կը նստի, ու կսկսի խօսիլ: Ժողովուրդը զայս տեսնելով՝ երկիւղիւ կը փառաւորեն զԱստուած որ ողորմեցաւ իւր ժողովրդեան Իսրայէլի:

Թէպէտև մինչև այն ժամանակ Յիսուսի գործած հրաշից ականատեսք և լսողք խիստ մեծ

1. Եւ եղև երբև կատարեաց զամենայն զբանս իւր ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնայում. հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ մերձ էր ի վախճանել. որ էր նմա պատուական. Ղուկ. Ը. 1—10.—Մատթ. Ը. 5.

հիացմամբ զարմանալով կը զարմանային, բայց այս հրաշագործութիւնը այն աստիճան արձագանք կը գտնէ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ, որ բոլոր Հրէաստանում և շրջակայ երկիրներում նորա անունը բոլորին խօսակցութեան առարկայ կը դառնայ և փառաց ի փառս կը բարձրանայ[1]: Նա մանաւանդ (ինչպէս Ս.Ա-րդ Հարցում յիշուեցաւ) Յովհաննէս Մկրտիչ այն միջոցին բանտարկուած լինելով, երբ որ նորա աշակերտք Յիսուսի հրաշագործութիւնները գացին պատմեցին իրենց վարդապետին, նա՝ իրեն աշակերտներէն երկուքը Յիսուսին ղրկելով կը հարցնէ. «Դո՞ւն ես, որ պիտի գաս, թէ ուրիշին սպասենք[2]:»

1. Եւ եղև ի վաղիւն, երթայր ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտքն նորա՝ և ժողովուրդ բազում: Իբրև մերձ եղև ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր . . . Ղուկ. Է. 11—17.

2. Պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ: Կոչեաց առ ինքն երկուս ոմանց աշակերտացն իւրոց, առաքեաց առ Տէր և ասէ. գո՞ւ ես, որ գալոց ես, եթէ այլում ակն կալցուք. Ղուկ. Է. 18.

Հարց՝ 1.

Յովհաննէս ընդէ՞ր այդ հարցումն արաւ, քանի որ յառաջագոյն քանիցս վկայած էր թէ Յիսուսն է Մեսիան.

Պաս. Ս. յս մասին Յովհաննէս ո՛չ թէ Յիսուսի ո՛վ լինելը հաստատելու համար այդ հարցումն արաւ, այլ նորա Մեսիան լինելը իւր աշակերտաց և այլոց նորէն իմացնելու համար, որպէս զի ամենքը անոր հաւատան և հնազանդին ի փրկութիւն հոգւոց իւրեանց։ Ինչպէս որ նորա սոյն միտքը Յիսուսի յայտնի լինելով, երբ որ զրկած երկու աշակերտները գալով վերոյիշեալ հարցումն արին, այդ միջոցում բազմաթիւ ախտաժէտ, դիւահար և կոյր մարդկան բժշկութիւն տալով կասկ նոցա. «Գնացէք և պատմեցէք Յովհաննու ինչ որ տեսաք և լսեցիք թէ կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը սրբուին, խուլերը կը լսեն, մեռելները յարութիւն կառնեն, և աղքատաց աւետիք կը արուի»։ և ապա երանի կուտայ նոցա, որ նորա Մեսիան լինելուն վրայ չեն գայթակղիր տարակուսանօք, ինչպէս որ այս մասին Եսայի մարգարէի ձեռամբ գրուած էր Ս. Գրքում[1]։

1. Երթայք, պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէքդ և լուայք. զի կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատաց աւետարանին, և երանի նմէ որ ո՛չ գայթակղեսցի յիս. Ղուկ. է. 22.—Եսայ. Լե. 5.

Բաց յայսմանէ, Յովհաննէսի կողմէ զրկուած աշակերտք գնալէ զկնի, կասկ գովել զայն՝ ցոյց տալու համար թէ նորա հաւատքը երբէք խախտած չէր, որպէս զի չը համարին զայն իբր մի եղեգն որ հովմէրէն կը տարուբերի, կամ իբր մի մարդ որ արքայական պալատում պճուճանաց և պերճութեան անձնատուր եղած կեղծաւոր մարդոց նմանի և կամ իբր ուրիշ հաստարակ մարգարէներէն մէկը։ Բանզի այլ մարգարէք, որք Յովհաննէսէն առաջ եկան, թէև կանխաւ ծանուցին մարդոց թէ Յիսուս յաշխարհ պիտի գայ, բայց նորա գալուստը ծանուցանելուն և զայն մկրտելուն համար՝ անոնցմէ և բոլոր մարդկան որդիներէն գերազանց մեծ է։

Ս. յս պատճառաւ նորա վկայութեան չը հաւատացող և մանաւանդ իւր գործած հրաշքները տեսնելէ յետոյ իրենց անհաւատութեան մէջ յամառող մարդկան համար, Յիսուս վճռեց որ նորա դատաստանի օրում կրասպաշանէրէն աւելի սաստիկ և ծանր պատիժ պէտք է կրեն. այդ անհաւատները նմանցուց այն մանուկներին, որոնք իրենց ընկերները փողոցում նստած՝ ուրախութեամբ նուագելու ժամանակ, չը կամեցան պարել, իսկ տխրութեամբ լացած ժամանակ, չկամեցան սգալ և կոծել։

Վասն զի, երբ որ Յովհաննէս ուտելու և խմելու երբէք յօժարած չը լինելով՝ միշտ սգաւոր

կերպարանօք կը քարոզէր և յապաշխարութիւն կը հրաւիրէր ամէնքը, փոխանակ նորա հրաւէրը ընդունելու՝ ասացին թէ դև կայ նորա մէջ. իսկ Յիսուս իւր բազում ողորմութեամբ բոլորը Աստուծոյ արքայութեան անվախճան ուրախութեան արժանացնելու նպատակաւ մեղաւորաց հետ ի միասին ուտելուն համար, առարկութիւն յարուցին թէ՝ ինչո՞ւ համար մեղաւորաց և մաքսաւորաց հետ կը նստի, կուտէ և կը խմէ[1]: Այսպէս է ահա ապերախտ մարդկան չար սովորութիւնը. ինչ կերպով էլ նոցա ուղղութեան համար ջանք լինի, նորա պատրուակ կորոնեն չը համոզուելու համար:

Անհաւատ հրէից վերապահեալ պատիժը յայտնել կինի, հրաւէր կը կարդայ Յիսուս ամենուն, որ փրկութեան ընդունելու իւր օրհնքը, որ քաղցր է և թեթև. մանաւանդ կը յայտնէ թէ ինքն էլ հեզ է և խոնարհ սրտով, զորս ընդունելով մարդիկ կարող կը լինին երկնից արքայութեան մէջ յաւիտենական հանգստեան արժանանալ, կեանք, ուրախութիւն և անդրաւ փառք գտնել[2]:

---

1. Թերև նոքա գնացին, ակաւ Յիսուս ասել ցմողովուրդն զՅովհաննէ. զի՞նչ ելիք տեսանել յանապատին, եղէգն շարժուն և հողմոյ... մարդ ի հանդերձս վատկութեան զարդարեալ... Մատթ. ԺԱ. 7—24.—Ղուկ. Է. 24.

2. Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք՝ և ես հանգուցից զձեզ: Առէք զլուծ իմ ի ձեզ,

Յիրաւի մարդիկ միշտ կը փափաքին ամէն կերպով հանգիստ, երջանիկ և շատ ապրիլ, սակայն այդ հանգիստն ու երջանկութիւնը չը գիտնալով թէ ի՞նչ բանում կը կայանայ, մարմնաւոր բաներում կը յուսան գտնել զայն. և երբ որ չեն գտներ, պէսպէս նեղութեանց ենթարկուելէ զատ՝ շատերն էլ կսկսին անարժան ընթացքի հետևիլ և մեղանչել. մինչդեռ պէտք էր գիտնալ թէ այս երկրի վրայ անկարելի է մարդուս համար միշտ անվիշտ, առանց նեղութեան և սրտի ամէն բաղձանաց համեմատ ապրիլ. վասնորոյ ոչքան էլ հոգս անէ, այնքան աւելի անհանգիստ կը լինի: Արդ՝ երկնային յաւիտենական կեանքում անխռով հանգըստեան և անձառելի երանութեան հասնիլ փափաքող անձը՝ պարտի Յիսուսի հրամանին համաձայն հեզ և սրտով խոնարհ լինիլ և նորա քաղցր օրհնաց սիրով հպատակիլ:

Այս պարագայում, Յիսուս իւր մեծ ողորմութիւնը ցոյց տուաւ առ մարդիկ. որպէս պի նոքա, որոնք չեն հաւատար, ստոյգ գիտնալով թէ անպատճառ պէտք է պատժուին, ապաշխարութեամբ և ղղջմամբ կարողանան պատիժէ ազատուիլ. իսկ նոքա, որք կը հաւատան, ստոյգ գիտ-

---

և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց: Զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի. Մատթ. ԺԱ. 28.

նպով թէ արքայութեան մէջ մշտնջենապէս ուրախ և երջանիկ պիտի լինին, այժմէն յոյս, քաջալերութիւն և անպատում մխիթարութիւն ձեռք բերին:

Ինչպէս որ Յիսուս դեռ վերոյիշեալ Նային քաղաքումն էր, Սիմոն անուամբ մի փարիսեցի զայն իր տունը կը հրաւիրէ ճաշի. ուր մի մեղաւոր կին ղղջալով իր մեղաց վրայ և կատարեալ հաւատով Յիսուսի ոտքը կընկնի արտասուօք. նա Թանկագին իւղով լի մի շիշ բերելով, նորա օրհնեալ ոտքերը օծելէ զատ՝ արտասուքովը կը թրջէր և մազերով սրբելով՝ շարունակ կը համբուրէր զանոնք: Յիշեալ Սիմոնը այս բանիս վրայ պայթակղելով՝ մտքումը կը խորհէր այսպէս. «եթէ սա մարգարէ լինէր, իրեն մօտեցող կնոջ ինչպիսի անձ լինելը պիտի գիտնար. որովհետև մեղաւոր է:»

Թէպէտև Սիմոն այս մասին մի բան չասաց բերնով, բայց նորա սիրտը Յիսուսին յայտնի լինելուն համար, կասէ. «Սիմոն, քեզ մի բան պէտք է ասեմ». նա էլ կը պատասխանէ. «Ասա վարդապետ». Յիսուս կասէ. «երկու մարդիկ պարտական էին մի մարդու. մին 500 դահեկան, իսկ միւսը՝ 50 դահեկան. երկուքն էլ իրենց պարտքը վճարելու անկարող լինելով, երկուքին էլ շնորհեց. արդ՝ այս երկուքէն ո՞րը աւելի կը սիրէ շնորհատու մարդը». Սիմոն կը պատասխանէ. «Ինձ կը թուի թէ նա՝ որուն աւելի շնորհեց:» Նորա բերանէն ասյն

խոստովանութիւնը առնելով՝ Յիսուս կը հաստատէ թէ ուղիղ է ասածը, և ապա կը յաւելու. «երբ որ տունդ մտայ, ոտքս ջրով չը լուացիր. այս կինը՝ իր արտասուօքը թրջելով՝ մազերովը սրբեց. դու չը համբուրեցիր, սա գալէն ի վեր անդադար կը համբուրէ ոտքերս. դու գլուխս չօծեցիր, սա անուշահոտ իւղով օծեց:»

Ա՛յս պարագայում, Յիսուս յիշեալ կնոջ ամօտիկ սէրը ցոյց տալէ զկնի, դառնալով դէպի կնոջ կողմը՝ ասաց. «Թող ներուին բազում մեղքերդ:» Ի միտ առ թէ՝ մարդուս մտքէն անցածը գիտնալ և մեղքը թողուլ՝ միայն Աստուծոյ յատուկ է. ասել է թէ Յիսուս այս անգամ ևս իր Աստուածութիւնը յայտնեց. իսկ ներկայ բազմականք երբ որ կսկսին խորհիլ թէ՝ «Ա՛յս ո՞վ է որ մեղաց թողութիւն կուտայ», Յիսուս նորին կասէ կնոջ. «Հաւատքդ ապրեցուց զքեզ, դնա՛ խաղաղութեամբ[1]:»

Թող օրինակ առնուն նոքա, որոնք թողութեան արժանի լինելու իղձ կը տածեն. յիշեալ կինը յառաջագոյն մեղսալից կեանք կը վարէր, բայց Յիսուսի քարոզութիւնը լսելէ զկնի, սաս-

1. Աղաչէը գնա ոմն ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա. և մտեալ ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. երբեմն գիտաց եթէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ շիշ մի իւղոյ նարդեայ ազնուի . . . Ղուկ. Է. 36.

տիկ սիրով և արտասուօք ղՂՀում յայտնեց և ապաշխարութեամբ թողութեան արժանացաւ. թո՛ղ ուրեմն իրենք էլ նոյն կնոջ նման կատարեալ սրտով և արտասուօք ղՂան իրենց մեղաց վրայ և ապաշխարեն, այն ժամանակ անտարակոյս իրենք էլ Յիսուսի ներողութեան կարժանանան, քանի որ մարդուս հաւատքին և սիրոյն համեմատ Տիրոջ կողմանէ թողութիւն կը շնորհուի:

Ա՛յնուհետև Յիսուս առաքելոց հետ քաղաքէ քաղաք և գիւղէ գիւղ շրջելով կը քարոզէր. նոյն իսկ կանայք ոմանք, զորս բժշկած էր իրենց հիւանդութենէն, նորա հետ ի միասին գնալով՝ հարկաւոր եղած ծախքերը իրենց անձնական քսակէն կը հոգային[1]: Եւ Գալիլեայի ծովեղերը գնալով, ուր խուռն բազմութիւն մարդկան նորա քարոզութիւնը լսելու բազմանօք ծովու եզերքում հաւաքուած էին, Յիսուս նաւը կը մտնէ և այնտեղէն կսկսի քարոզել առակով, որով հոգևոր խօսքերը կը նմանեցնէ ցորենի. իսկ այդ խօսքերը քարոզողները՝ սերմանող հողագործին:

Յիսուս կասէ. «Սերմանացանը ցորենը սերմանած ժամանակ, մի քանին ճանապարհի վրայ

1. Եւ եղև յետ այնորիկ և ինքն շրջէը ընդ քաղաքս և ընդ գիւղս. քարոզէը... և երկոտասանքն ընդ նմա: Եւ կանայք ոմանք՝ որք բժշկեալ էին յայսոց չարաց... պաշտէին զնա յընչից իւրեանց. Ղուկ. Ը. 1.

ընկնելով՝ թռչուները կերան. մի քանին քարերու վրայ ընկան, որ թէև բուսան, բայց արևը ծագելուն պէս՝ չորացան. մի քանին փուշերու մէջ ընկան, և արդիւնք չը տուին. իսկ այլք՝ որ լաւ և պարարտ հողի վրայ ընկած էին, մի ցորենի փոխարէն հարիւր, վաթսուն և երեսուն անգամ աւելի արդիւնք տուին:

Ա՛յս մասին յանցանքը ո՛չ թէ սերմնացանին կամ ցորենին էր, որ սերմանց երեք մասերը փճացան, այլ նոցա ընկած տեղին: Յիրաւի, շատերը հոգևոր խօսքեր կը լսեն, բայց իրենց մըտքում չը պահելով՝ ճանապարհի վրայ ընկած ցորենի հատիկներուն նման, որը կեր եղան թռչնոց, սատանան նոցա սրտում սերմանուած աստուածային խօսքերը կը խլէ ու կը հանէ. ոմանք ևս Աստուծոյ խօսքերը լսելով՝ իսկոյն կընդունին, բայց քարի վրայ ընկած սերմին նման՝ արմատ չունենալով, երբ որ հոգևոր բաներու պատճառաւ նեղութեան հանդիպին, կսկսին տարակուսիլ և իրենց միտքը փոխելով ապարդիւն կը մնան. ոմանք էլ՝ փուշերու մէջ ընկած սերմանց նման, աշխարհի հոգերով ղբաղուած՝ և փառասիրական խորհրդովք առաքինութեան պտուղ չեն կարող տալ:

Սակայն նոքա, որք իրենց լսած հոգևոր խօսքերը երբէք իրենց մտքէն ո՛չ մի վայրկեան չը հանելով զայն կատարելու փոյթ կը տանին, որքան էլ նեղութիւն պատահի, իրենց հաւատքը չի

խախտիլ. և մարմնաւոր շահերէն խաբուելով՝ նոցա չեն հակամիտիր. և Աստուծոյ շնորհօք միոյն փոխարէն հարիւր, վաթսուն և կամ երեսուն անգամն արդիւնք կուտան, ինչպէս որ այս իմաստով Յիսուս մեկնեց յիշեալ առակը: Արդ՝ վախճիր, որ կորուսելոց շարքում չը դանուիս:

Սոյն առակը բոլոր մարդոց մեծ մխիթարութիւն է, որպէս զի իւրաքանչիւրը իւր կարողութեան համեմատ առաքինական գործ ունենալու ո՛չ մի րոպէ չը ծուլանայ. որովհետև ո՛չ թէ միայն հարիւր, այլ և վաթսուն և երեսուն անգամն արդիւնք տուողին էլ ընդունելութիւնը կանխաւ կիմացնէ: Աստուծոյ խօսքը լսողներուն տարբերութիւնը յայտնելէ ղկնի, նորա դործակցութիւնն էլ թէ ինչ եղանակաւ լինելու է ծանուցանելու համար, դարձեալ առակաւ Յիսուս երկնից արքայութիւնը կը նմանեցնէ բարի սերման, զոր մի մարդ սերմաննէց իւր արտում, և երբ քնեց, թշնամին գալով ցորենին մէջ որոմ ցանեց. երկուքն էլ բուսնելէ յետոյ, ծառայքն կը հարցնեն արտի տիրոջ. «Ո՞չ ապաքէն արտում լաւ սերմ սերմանեցիր, ուրեմն որոմն ո՞ւստի բուսաւ». նա կը պատասխանէ. «Թշնամւոյն գործն է այդ». նորա կասեն. «Կուզե՞ս որ երթանք և քաղենք որոմն ու ի բաց նետենք». բայց տէրը չընդունէց ծառայից առաջարկը ասելով. «Մի՛ դպիք, քանդի կարելի է որ որոմը քաղած ժամանակ, ցորենն էլ ի միասին

փրցունէք. թո՛ղ տուէք որ մէկտեղ մեծանան. հունձքի ժամանակ՝ հնձողներուն կը պատուիրեմ առաջ որոմը քաղել և կրակը նետել և յետոյ ցորենը շտեմարանում ժողովել:»

Այս առակաւ Յիսուս սուրբ եկեղեցին արտի նմանցունելէ ղկնի, դարձեալ զայն կը նմանցնէ մանանեխի հատիկին և խմորոյ. վասն զի, ինչպէս որ մանանեխը բոլոր սերմերէն փոքրագոյն է, բայց երբ որ արտում սերմանուելով կը բուսնի, բոլոր բանջարներէն աւելի մեծ ծառ կը լինի, որուն ոստոց վրայ թռչունք իրենց բոյնը կը դնեն և կը հանգչին, նմանապէս խմորը (թթխմոր) ալիւրին հետ խառնուելով կը շաղուի, ամբողջ խմորը իւր բնութեան կը փոխարկէ[1], այսպէս էլ, սուրբ աւետարանի քարոզութեամբ կռապաշտները հաւատալով՝ սուրբ եկեղեցւոյ հոգևոր իշխանութեան ներքև կը մտնեն և աստուածային շնորհօք կը զարդարուին պայծառապէս:

Սոյն մտքով Յիսուս մի ուրիշ տեղում (Ղուկ. ԺԳ. 49) երկնից արքայութիւնը կը նմանցնէ կրակի.

---

1. Ցաւալի է յայտնի եղեալ Յիսուս ի տանէն՝ նստաւ առ ծովեզերքն: Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա ի նաւ, և նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերքն: Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք՝ և ասէր. ահա ել սերմանահան սերմանել. Մատթ. ԺԳ. 1. մինչև 33 համաք.

որովհետև ինչպէս որ կրակը՝ բոց և կայծ կարձակէ, մանաւանդ՝ երբ որ ոսկւոյ և արծաթի հետ արտաքին նիւթեր խառնուին, զայն կրակով կարելի է զատել և տարբերադրել, նոյնպէս սուրբ աւետարանի քարոզութիւնը Հոգւոյն սրբոյ շնորհաց ղօրութեամբ մարդոց հոգիներէն մեղաց աղտերը կը զատէ և կը սրբէ. որով նոքա հոգևոր լուսով և սիրով այն աստիճան կը զարդարուին և կը բորբոքին, որ մինչև իսկ հայր, մայր, որդի, աղջիկ, հարս և սկեսուր իրարմէ կը զատուին ու կը բաժանուին Յիսուսի սիրոյն համար:

Արդարև մարդս պարտական է բաժանուել նոյն իսկ իւր ամենասիրելի անձէն, երբ որ նա իրեն մեղայ պատճառ կը լինի (այս մասին տես ԻԹ-րդ հարցում): Եւ որովհետև սուրբ աւետարանը Յիսուսի խաչելութենէն յետոյ պէտք է քարոզուէր բովանդակ աշխարհի, վասնորոյ Ինքնէն անուամբ յիշելով զայն, կը փութայ յայտնել թէ օր յառաջ նորա կատարման կը փափաքի, որպէս զի յայտնի լինի թէ իւր յօժար կամօք յանձն կառնու խաչի վրայ մեռնել:

Յիսուսի խօսքերէն երևցաւ արդէն թէ յետ նորա խաչելութեան և յարութեան՝ աւետարանի քարոզութեամբ հեթանոս ազգերը պիտի հաւատային իրեն, բայց հրէայք, որք չէին ուզեր հաւատալ, որպէս զի իրենց յանցանքը ձանաչելով դարձի գան, փրկիչը յանդիմանական եղանակաւ

կասէ նոցա. «Երբ որ արևմուտքէն ամպ ծագի, իսկոյն կասէք թէ անձրև պիտի գայ. երբ որ հարաւի կողմէն հողմը շնչէ, կասէք թէ խորշակ պէտք է լինի, և այնպէս էլ կը լինի: Արդ՝ երկնի ու երկրի երեսը կարող էք փորձել և երևոյթները գուշակել. ինչո՞ւ համար ուրեմն չէք ուզեր ժամանակս քննել և արժան եղածը խմանալ:»

Թէպէտև Մեսիայի գալստեան ժամանակի նշանք Ս. գրքում գրուածի համաձայն կատարուած էին (տես ԼՉ-րդ հարցում), սակայն հրէայք մտադրութիւն չընծայելով Գրոց բովանդակութեան, անկարող եղան զայն ձանաչելու: Վասնորոյ որքան որ վերոյիշեալով կշտամբեց նոցա անհաւատութիւնը, այսու հանդերձ իւր ողորմութեամբ դարձեալ խրատելով կասէ նոցա. «Երբ որ հակառակորդիդ հետ դատաւորին կը գնաս, քանի որ ճանապարհին վրայ ես, ատոր հաշիւդ անոր, (հաշիւդ նորա հետ մաքրէ) որպէս զի ազատուիս: Գանկի կարելի է որ գքեզ դատաւորին առջև հանէ, և նա էլ գքեզ դահիճին մատնէ, որով բանտը ձգուիս, այնպէս որ այնուհետև մինչև յետին բնիոնը չվճարես՝ չը կարողանաս ազատիլ[1]:»

1. Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ՝ կամիմ, թէ արդէն եսկ բորբոքեալ: Եւ մկրտութիւն մի ունիմ մկրտել . . . Ղուկ. ԺԲ. 49—59.

Հպցա՜ՏՂ Լ.Ա.

Յիսուս ինչու՞ համար առակաւ կը խօսէր քարոզելու ժամանակ.

Պապ. Իրեն նկատմամբ «առակաւ խօսի» Ս. Գրքում դրուածը կատարելու համար[1]. մանաւանդ թէ ժողովուրդը լսած քարոզը դիւրաւ մտքում պահելու կարող լինի[2]. այս պատճառաւ երբ առաքելոց հետ առանձին մնար, առակայ իմնատը կը բացատրէր նոցա։ Ինչպէս որ երբ տուն եկաւ, առաքելոց խնդրանօք որոման առակը կը մեկնէ, յորում կինք բարի սերմնացանի նմանցնելով՝ կասէ. «Անրաը կամ ազարակը՝ աշխարհս է. բարի սերմը՝ սուրբերն ու առաքինի մարդիկն են. որոմը՝ մեղաւորներն. իսկ զայն սերմանողը՝ սատանան է, և հնձոց ժամանակը՝ դատաստանի օրն է. հնձողները՝ հրեշտակներն են, որոնք չարերը պիտի նետեն կրակում, ուր նոքա անվախճան պէտք է տանջուին. իսկ արդարք արքայութեան մէջ արեւու նման պիտի փայլին, և միշտ ուրախ պիտի լինին». և կը յաւելու. «Ով որ լսելու ականջ

1. Բացեց առակօք զբերան իմ. բղխեցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի. Մատթ. ԺԳ. 35.— Սաղմ. ՀԷ. 2.

2. Եւ այնպիսի առակօք խօսէր նոցա զբանն, որպէս կարող լինէին լսել. Մարկ. Դ. 33.

ունի, թող լսէ[1]։»

Յիսուս այս վերջին խօսքով թէև իւրաքանչիւրի կամաց կը թողու լսել կամ ոչ, բարի լինել կամ ոչ, բայց ամենուն եռանդը բորբոքելու համար որ իրենց պարտուց կատարման մէջ չը թերանան, երկնից արքայութիւնը կը նմանեցնէ ագարակում թաղուած գանձու, զոր գտնողը կը թաքցնէ, և խնդութենէն բոլոր ունեցածը վաճառելով կը գնէ այդ ագարակը։ Դարձեալ մի վաճառականի կը նմանցնէ, որ գեղեցիկ մի հատ մարգարիտ կորնէ, և երբ որ կը գտնէ, բոլոր ունեցածը ծախելով կը գնէ այդ թանկագին ու գեղեցիկ մարգարիտը։

Ուրեմն նոքա, որոնք արքայութեան փառաց հասնիլ կը բաղձան, պարտին ամէն կերպով իրենց մտքէն հանել աշխարհային անոտի իրաց սէրը և միշտ առաքինական գործոց պարապիլ յօժարակամ։ Արդարև առաքինի մարդը՝ վերոյիշեալ առակաց վրայ խորհրդածելով՝ մեծապէս կը մխիթարուի, բայց չար մարդոց երեսէն նեղութիւն կամ վնաս կրած ժամանակ չը վհատելու համար՝ նոցա պատիժն էլ կը յայտնէ ծովում ձգուած ուռկանի առակով։ Ւ.ասն դի, ինչպէս որ ուռկանի մէջ ամէն

1. Մեհենեա մեզ զառակ որոմանցն ագարակի։ Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. որ սերմանէ... Մատթ. ԺԳ. 36—43.

տեսակ ձուկեր կը ժողովին, զորս ցամաքը հանելէ յետոյ՝ միայն լաւերը ամանի մէջ կը լեցնեն, իսկ վատերը անմիջապէս կը նետեն ի բաց, այնպէս էլ յիրաւի այս աշխարհի վրայ թէ առաքինի և թէ մոլի մարդիկ ի միասին կը բնակին, սակայն արքայութեան մէջ իրարմէ պէտք է բաժանուին. չարերն դժոխքում անվախձան տանջանաց պիտի դատապարտին, ուր միշտ սգով և արտմութեամբ պէտք է ապրին. իսկ արդարները արքայութեան անվախձան փառքը ժառանգելով յաւիտեան ուրախ ու երջանիկ պիտի լինին: Ա.յս առակը մեծ ու ազդու խրատ է բոլոր մարդոց համար, որպէս զի բարի մարդիկ՝ երբ որ նեղութեանց հանդիպին, չը տրտնջան. քանի որ մի օր այդ նեղութիւններն ազատուելով յաւիտենական հանգիստ և ուրախութիւն պիտի վայելեն. նոյնպէս մոլի ու չար մարդիկ՝ իրենց վայելած ներկայ հանգստեան նայելով՝ չուրախանան. քանի որ այդ հանգիստն ու ուրախութիւնն էլ մի օր անվախձան տանջանաց պիտի փոխուի, ըստ բանի Տեառն մերոյ:

Յիսուս վերոյիշեալ առակները խօսելէ և նոցա բացատրութիւնն ու մեկնութիւնը տալէ յետոյ կը հարցնէ առաքելոց թէ լաւ հասկցա՞ն. որպէս զի զայնս երբէք իրենց մտքէն չը հանելով միշտ նոցա խնամսից վրայ մտադրութեամբ խորհին. և երբ նոքա կը պատասխանեն թէ հասկցած են, այն ժամանակ հոգևոր խրատ խօսող և ժողովրդեան

քարոզողները կը նմանցնէ մի մեծատուն մարդու, որ իւր գանձարանէն կը հանէ հինն ու նորը միանգամայն[1]: Ա.յս պարագայում, հին ու նոր ասելով, կը յայտնէ թէ քարոզիչք ժողովրդեան քարոզած ժամանակ, ո՛չ միայն նոր կտակարանէն, այլ և հին կտակարանէն ըստ պատշաճի պէտք են վկայութիւն բերել: Քանզի երկուքն էլ Աստուծոյ խօսքը լինելով, զիրար կը հաստատեն, քանի որ նոր օրէնքը՝ հին օրինաց հիման վրայ հաստատուած է. այս պատճառաւ հին օրէնքը նմանցուած է ագարակի, յորում թաղուած էր նոր օրինաց գանձարանը:

Յիսուս վերոյիշեալ առակները ամբողջացնելէ ետքն՝ իւր քաղաքը նազարէթ գալով՝ ժողովարանում քարոզելու առթիւ, ժողովուրդը նորա գիտութեան և գործած հրաշից վրայ զարմանալով հանդերձ կասկած տարակուսանօք հարցնել թէ՝ «Ուստի՞ է նորա այսպիսի գիտութիւնն ու զօրութիւնը. ո՞չ ապաքէն նա հիւսնի որդին է. և նորա եղբարքն՝ Յակոբոս, Յովսէս, Սիմոն, Յուդաս, և նորա քոյրերը մեզ մօտ չէ՞ն միթէ:» Յիրաւի, նա միանգամ՝ ևս յառաջագոյն անդ քարոզած ժա-

1. Թարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի՝ զոր գտեալ մարդոյ թաքուցէ և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ՝ զոր ունի. և գնէ զագարակն զայն. Մատթ. ԺԳ. 44—52.

մանակ, նորա իմաստութեան և հրաշագործ զօրութեան վրայ զարմացան, բայց թշնամական ընթացք նորա դէմ ցոյց չը տուին: Իսկ այս անգամ ոչ միայն չեն համակրիր, այլ և նախանձով լցուած՝ իրենց սիրտը անհաւատութեամբ կը քարացնեն բոլորովին. այս պատճառաւ Յիսուս առանց շատ հրաշք գործելու անդ՝ կասէ. «Մարգարէն իւր գաւառում պատիւ չունի[1]:»

Ա.յս խօսքը որքան որ բաւական մեծ յանդիմանութիւն և խրատ էր նոցա համար, Յիսուս նորէն կը յաւելու ասել թէ՝ «Երբ որ Եղիա մարգարէի օրով երեք ու կէս տարի սով եղաւ, Իսրայէլի ժողովրդեան մէջ շատ որբևայրիներ կային, բայց Եղիա անոնցմէ մէկուն չը ղրկուեցաւ, այլ միայն Սիդոնի երկրում Սարեփթա քաղաքի մէկ որբևայրի կնոջ ղրկուեցաւ: Նմանապէս Եղիսէ մարգարէի օրով՝ Իսրայէլի ժողովրդեան մէջ շատ բորոտներ կային, անոնցմէ ոչ մէկը չը բժշկուեցաւ, բայց միայն Նեեման ասորին (տես չորրորդ գարու Ծ՝ և կե-րդ հարցերում)[1]:»

Յիսուս Ս. Գրքէն օրինակներ յառաջ կը բերէ, որպէս զի նոքա իրենց յանցանքը ճանաչելով

1. Եւ եղև երբև կատարեաց Յիսուս զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի: Եւ եկեալ ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչև զարմանալ նոցա և ասել. սմա ոմանք թէ այս իմաստութիւն և զօրութիւնք. Մատթ. ԺԳ. 53—58.

ուղղուին, բայց նոքա ոչ միայն չեն ուղղուիր, այլ և այն աստիճան կը զայրանան, որ զայն քաղաքէն դուրս լերան վրայ կը հանեն վար ձգել և սպաննելու համար: Թէպէտև նոցա դիտաւորութիւնը յայտնի էր Յիսուսի, բայց իւր գերադոյն զօրութիւնը նոցա ցոյց տալու համար առանց ընդդիմութեան նոցա հետ կերթայ. քանդի երբ ամենքը միաբան կը պատրաստուին զայն գահավիժելու, Յիսուս նոցա միջէն անցնելով կը գնայ[1], և ոչ ոք կարող կը լինի նորա վրայ ձեռք երկնցնել:

Ա.յս պարագայում՝ Նազարէթ քաղաքի բնակիչները յոյժ մեծ ապերախտութեամբ վարուեցան. որովհետև Յիսուս Նազարէթցի (Նազովրեցի) կոչուելուն համար, նորա վարքն ու պատիւը համայն Նազարէթի բնակչաց մեծ վարք ու պարծանք էր. սակայն նոքա միանգամ սոսկալի յամառութեամբ ու թանձր տգիտութեամբ համոզում գոյացուցած էին թէ Հիւսան, այսինքն մի հասարակ մարդու որդին է, այս պատճառաւ ոչ միայն կը գայթակղին և իրենց անհաւատութեան մէջ անշարժ և հաստատ կը մնան, այլ նաև մանաւանդ թէ նորա անօրինակ իմաստութեան և հրաշագործելու գերբնական կարողութեան վրայ

1. Եւ ասէ ցնոսա... քաղում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցան երկինք զերիս ամս և զվեց ամիս. և եղև սով մեծ ընդ ամենայն երկիր. Ղուկ. Գ. 23—30.

նախանձու պատճառմամբ լցուած՝ նորա բարեգործ կենաց դէմ դաւաճանելու չափ յառաջ կերթան, որով իրենք ևս նորա շնորհքէն կը զրկուին: Ահա այս է չար, կամակոր և նախանձոտ մարդոց վիճակը:

Հարց. Ժ.

Ցիսուս վերոյիշեալ լռութէն ո՞ւր իջաւ.

Պաղ. Կափառնայում քաղաքը. և անդ ժողովրդեան ուսուցած ժամանակ՝ ամենքը կը զարմանան. որովհետև իշխանաբար կը խօսէր [1]: Նմանապէս առաքեալք ևս նորա հրամանաւ նոյն գաւառներում շրջելով կը քարոզէին ժողովրդեան: Եւ որովհետև Գալիլեայի Հերովդէս Թագաւորը՝ իւր Փիլիպպոս եղբօր Հերովդիա կինը ապօրէն կերպով իրեն կնութեան առած էր, այս մասին Յովհաննէս Մկրտչէն յանդիմանուած լինելուն համար Հերովդիայի դրդմամբ բանտարկեց զայն, (ինչպէս որ ԺԴ-րդ հարցում յիշուեցաւ):

Այո՛, Հերովդէս այդ անզգամ կնոջ սիրտը չը կորելու համար Յովհաննէսը սպանել կամեցաւ, բայց ժողովրդէն վախնալուն համար բաւականացաւ միայն բանտարկելով զայն. (թէև գրուած

1. Եւ էջ է Կափառնայում է քաղաքն Գալիլեացոց՝ և ուսուցանէը գնոսա է շաբաթան: Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա. Ղուկ. Դ. 31.

չէ թէ բանտում որքան ժամանակ մնաց, բայց կը կարծուի թէ տարի ու կէս տևած է բանտարկութիւնը): Արդ՝ այն միջոցին, երբ Յիսուս Կափառնայումի մէջ կը քարոզէր, դարձեալ նոյն Հերովդիա կնոջ պահանջմամբ Հերովդէս սպանել տուաւ Յովհաննէս Մկրտիչը բանտում: Այսպէս կատարուեցաւ դէպքը:

Հերովդէսի ծննդեան օրն էր, յորում նա մի մեծ խնջոյք կուտայ իւր նախարարաց, հազարապետաց և Գալիլեայի մեծամեծաց. երբ որ Հերովդիայի աղջիկը բոլոր բազմականաց առջև կը պարէ, թէ՛ Հերովդէս թագաւորին և թէ՛ համայն ներկայից վերին աստիճան հաճոյ կը թուի, այնպէս որ թագաւորը բազում անգամ երդմամբ կը խոստանայ տալ աղջկան ինչ որ կը խնդրէ իրմէ, մինչև իւր թագաւորութեան կէսը. յայնժամ աղջիկը դուրս ելնելով՝ մօրմէն կը հարցնէ թէ ի՞նչ խնդրէ: Գարշելի կինը՝ ըստ որում երկար ժամանակէ ի վեր Յովհաննէսի մահուան կը փափաքէր, այս անգամ պատեհ առիթ գտնելով՝ կը թելադրէ աղջկան Յովհաննէս Մկրտչի գլուխը խնդրելու:

Աղջիկն իսկոյն ներս մտնելով կասէ. «Կը փափաքիմ որ անմիջապէս սոյն ափսէի վրայ Յովհաննէս Մկրտչի գլուխը տաս ինձ». այս ամբարիշտ խնդրանքին վրայ թէև շատ տրտմեցաւ, բայց իւր երդման համար և մանաւանդ չուզելով այնքան բազմականաց ներկայութեան իւր մերժմամբ խայ-

առաւակել աղջիկը, իսկոյն գահիճ ղրկեց և Յովհաննէսի գլուխը բերել տալով ափսէի վրայ աղջկան կուտայ և նա էլ մօրը կը տանի։ Յովհաննէսի աշակերտները իրենց վարդապետին մահը լսելով նորա մարմինը թաղելէ զկնի կուգան և կը պատմեն Յիսուսի Թագաւորին անօրէն գործը[1]։

Նկատողութեան արժանի է թէ Հերովդէս իւր սրտի չարութեամբ Յովհաննէսը գլխատել տալով, թէպէտ մեծ մեղք գործեց, բայց չը վախցաւ. իսկ նորա մահէն զկնի Յիսուսի հրաշագործութիւնները լսելուն պէս՝ կսկիծ վախնալ, որովհետև մինչև այն ժամանակ նորա անունը լսած չը լինելուն համար, մանաւանդ թէ երբ որ ոմանք կասեն թէ Յովհաննէս յարութիւն առաւ, և այլք թէ Եղիան յայտնուեցաւ, և կամ անցեալ ժամանակաց մարգարէներէն մէկը երևցաւ, այն ժամանակ Հերովդէս զարմացմամբ և երկիւղիւ կասէ. «Յովհաննէսը ես սպանեցի, սա ո՞վ է, որուն համար այսպիսի բաներ կը լսեմ»։ այո՛, կուզէ Յիսուսը տեսնել (Ղուկ. ԻԳ. 8), որպէս զի սիրտը հանգըստանայ. վասն զի կը կարծէ թէ այդ հրաշքները

---

1. Երբև օր մի լինէր պարապոյ՝ յորժամ ընթրեաս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց և հազարապետաց, և մեծամեծաց Գալիլեացւոց։ Եւ ի մտանել զստերն Հերովդեայ և ի կաքաւել, հաճոյ եղև Հերովդէ՝ և բազմականացն. Մարկ. Զ. 21. մինչև 29 համար.

գործողը նոյն ինքն Յովհաննէսն է՝ յարութիւն առած։

Իրաւ ան՛ւ անպատմ ու չար կնոջ հետ ապօրինի սիրոյ շղթայով կապուած մարդուն թշուառ վիճակին. Հերովդէս որ մի ամբողջ երկրի վրայ կիշխէր, անամօթ մի կնոջ գերի եղաւ. քանզի Հերովդիայի աղջիկը երբ որ խնջոյքի մէջ այնքան մեծամեծ մարդկան առջև իշխանաբար կը հրամայէ թէ՝ «Ուզեմ որ անմիջապէս այս ափսէի վրայ Յովհաննէս Մկրտչի գլուխը ինձ տաս», Հերովդէս տրամելով հանդերձ, կարող չը լինիր զայն մերժել, ընդհակառակն՝ կը փութայ իսկոյն նորա հրամանը կատարել։

Այս պարագայում, Հերովդէս որքան որ ինքն իրեն նախատինք բերաւ, այսու հանդերձ տրտմելովը՝ այնքան աւելի իւր տկարութիւնը յայտնեց, քանի որ տրտմութիւնը՝ տկարութեան ապացոյց է. քանզի մարդս այն ժամանակ կը տրտմի, երբ որ իւր կամաց հակառակ մի բան կը պատահի, և ինքը կարող չը լինիր արգիլել զայն։ Մանաւանդ՝ «Ինչ որ խնդրես կուտամ» ասելով և երդմամբ հաստատելով, իւր տխմարութիւնը յայտնեց, քանի որ այդ կերպ խոստում՝ յիմարութեան նշան է։

Սակայն մի՛ զարմանար, զգայական բաղձանքն ու կիրքը մարդուս միտքն այն աստիճան կը մթագնեն, որ այլ ևս կարող չէ զանազանել իրեն

համար լաւն ու վատը, օգուտն ու վնասը. ինչպէս որ անամօթ Հերովդիան ևս չարութեան մէջ այնչափ յառաջ գնացած էր, որ վրէժխնդրութեան կիրքը գոհացնելու համար իւր աղջիկը իշխանութենէ կամ հարստութենէ պրկեց. վասն զի, մինչ Հերովդէս խոնաւացած էր մինչև իւր թագաւորութեան կէսը տալ աղջկան, ինքը մայրը՝ խեղդելով իւր սրտում մայրական բնական զգացումը, թոյլ չէր տար անոր ուրիշ բան խնդրել, այլ՝ յիմարաբար կը պատուիրէ միայն Յովհաննէսի գլուխը պահանջել:

Ա.հա այսպէս կը լինի քինախնդիր մարդու վիճակը. ուրիշին բարիք չը լինելու համար, յանձն կառնու իրեն չարիք հասցնել: Հերովդիա այս անօրէնութիւնը գործեց, Յովհաննէսի կշտամբանքէն ազատ մնալու համար, բայց երբ որ Յովհաննէսի այս կերպ մահը յայտնուեցաւ, ինքն առաւել ևս աշխարհի բերանն ընկաւ և առաւել ևս խայտառակուեցաւ, որուն արժանի էր:

Ա.յս միջոցին առաքեալք, որք քարոզելու գնացած էին, վերադարձան Կափառնայում և պատմեցին Յիսուսի ինչ որ քարոզած և ուսուցած էին ժողովրդեան: Յիսուս նոցա հետ նաև մտնելով՝ Բեթսայիդա քաղաքի մերձակայ անապատը կը գնայ, այնտեղ սակաւիկ մի հանգիստ առնելու համար: Բանի քարոզ լսելու բաղձանքով այն աստիճան մեծ բազմութիւն կուգար նոցա մօտ,

որ մինչև իսկ հայ ուտելու ժամանակ գտնելու կարող չէին: Ա.յս անգամ ևս ժողովուրդը տեսնելով թէ նա աշակերտաց հետ նաւով գնաց և դուշակելով թէ ո՞ւր պէտք է գնայ, ամէն կողմէ հետոտն քալելով Յիսուսէն առաջ կը հասնէին նորա գնալու վայրը: Յիսուս նաւէն ելնելով՝ երբ այդքան բազմութիւնը տեսաւ, որ անհովիւ ոչխարաց կը նմանէին, գթալով կսկիծ քարոզել նոցա. և բոլոր նոցա հիւանդներն էլ մարդասիրաբար կը բժշկէ:

Տե՛ս դու մեր Փրկչին մարդասիրական գթութիւնը. քանզի քարոզութեամբ այդ հազարաւոր մարդկան բազմութիւնը իբր հոգևոր կերակրով յագեցնելէ և նոցա հիւանդները բժշկելէ զատ՝ կամենալով նաև մարմնաւոր կերակուր տալ այդ բազմութեան, դիտմամբ իւր քարոզը կերկարէ. և որովհետև բազմութիւնը խիստ մեծ էր և մանաւանդ քաղաքէ կամ դիւղէ հեռի՝ անապատ տեղում կը գտնուէին, Փիլիպպոսին կը հարցնէ թէ ո՞ր տեղէն կարելի է հաց գտնել, որ սոքա ուտեն:

Ձշմարիտ է որ ինքը գիտէր թէ ի՞նչ պէտք է անէ և ի՞նչ եղանակաւ այդչափ բազմութիւնը պիտի կերակրէ, սակայն առաքեալը փորձելու համար այդ հարցումն արաւ, որ պատասխանեց Յիսուսի թէ՝ «Երկու հարիւր դահեկանի հաց բաւական չը լինիր այս բազմութեան:» Սակաւիկ մի յետոյ առաքեալք Յիսուսի կասեն. «Հրաման տուր

ժողովրդեան գնալ այս անապատ տեղէն և իրենց համար կերակուր գնել, քանզի այստեղ կերակուր չունին ուտելու»։ Նա կը պատասխանէ. «Հարկ չկայ որ նոքա ուրիշ տեղ գնան. դուք տուէք նոցա կերակուր որ ուտեն։»

Սակայն առաքեալք ևս ուտելու բան չունենալով՝ կսկսին խորհիլ թէ այդքան բազմութեան բաւականաչափ հաց ուսա՞ր կարող են հայթայթել և կառաջարկեն Յիսուսի հրաման տալ իրենց որ երթան և երկու հարիւր դահեկանի հաց գնեն ժողովրդեան համար. Յիսուս կասէ. «Նայեցէք թէ քանի՞ հաց ունիք»։ և երբ որ կը նային՝ կը տեսնուի թէ միայն մէկը հինգ հատ գարիի հաց և երկու հատ ձուկ ունի։ Անդրէաս կը հաղորդէ Յիսուսի ինչ որ պատահած ունին, միանգամայն աւելցնելով թէ այդչափ բազմութեան ինչպէ՞ս կարելի է բաւեցնել. (որովհետև բայի կիներէն և մանուկներէն հինգ հազար հոգի կային)։

Յիսուս կը հրամայէ առաքելոց բոլոր բազմութիւնը կարգաւ նստեցնել խոտի վրայ խումբ խումբ, հարիւրական և յիսունական անձինք։ Ապա հինգ հացն ու երկու ձուկերը ձեռքն առնելով՝ կը նայի դէպի երկինքը, կօրհնէ և կը մանրէ զանոնք և կուտայ առաքելոց, և նոքա էլ ժողովրդեան տալով՝ ամենքն էլ կուտեն և կը կշտանան. որովհետև Փրկչի օրհնութեամբ հինգ հացն ու երկու ձուկը այն աստիճան կը շատանան որ այդքան

բազմութիւնը ուտել կշտանալէն զատ՝ Յիսուսի հրամանաւ աւելցած կտորուանքը ժողովելով՝ տասներկու զամբիւղ լիցուն կը վերցնեն[1]։

Ժողովուրդը սոյն հրաշքը տեսնելով կասէ. «Սա է ճշմարիտ մարգարէն, որ պիտի գար յաշխարհ»։ և Յիսուսը թագաւորեցնելու խորհուրդ և խոհ ունեցան. և սակայն նա գիտնալով նոցա խորհուրդն ու դիտաւորութիւնը, նորէն լեռը կերթայ միայնակ[2]։

Հարցո՛ւմ Լ.Գ.

Ցիսուս ընդէ՞ր հրամայեց առաքելոց որ աւելցած կտորները ժողովելով պահեն.

Պատ. Որպէս զի ժողովուրդը իմանալով թէ նա ամենակարող է, հաւատայ իրեն։ Թէպէտև

---

1. Դարձան առաքեալքն. և պատմեցին նմա զամենայն՝ զոր արարին. և առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն ի տեղն անապատ՝ քաղաքն մին, որում անուն էր Բեթսայիդա։ Եւ ժողովուրդքն իբրև գիտացին, գնացին զհետ նորա, և ընկալեալ զնոսա՝ խօսեր ընդ նոսա վասն արքայութեան Աստուծոյ, և որոց պէտք էին բժշկութեան՝ բժշկէր. Ղուկ. Թ. 10—17.—Մատթ. ԺԴ. 13.—Մարկ. Զ. 30.—Յովհ. Զ. 3.

2. Ցիսուս իբրև գիտաց եթէ գալոց են յափշտակել զնա, զի արասցեն զնա թագաւոր, գնաց դարձեալ ի լեառն միայն. Յովհ. Զ. 15.

մինչև այն ժամանակ շատ հրաշքներ գործած էր, բայց այս անգամ ժողովուրդը այն աստիճան ախորժեցաւ, որ մինչև իսկ զայն թագաւորեցնելու փափաք ունեցաւ: Տես դու Իսրայէլեան ազգին տարօրինակ վիճակը. Յիսուս հրաշք կը գործէր, որպէս զի ժողովուրդը տեսնելով հաւատայ, և ինքը զանոնք իբր երկնաւոր անվախճան թագաւորութեան փառաց արժանացնէ. սակայն նոքա երկրաւոր մեծութեան յղձով՝ զայն թագաւոր կարգել կուզեն, որպէս զի նորա շնորհիւ իրենք ել մարմնաւոր մեծութեան և փառաց հասնին: Ժողովրդեան սոյն անկարելւոր խորհուրդը Յիսուսին յայտնի լինելով՝ իսկոյն կտիպէ առաքեալները, որ նաւով դիմացի կողմն անցնին. մինչև որ ինքը ժողովրդեան հրամայէ իւրաքանչիւրը իր տեղը երթալ, որովհետև նոքա Յիսուսէն բաժանուիլ չէին ուզեր. նամանաւանդ նպատակ ունէր նորէն առաքելոց ցոյց տալ իր հրաշագործ զօրութիւնը:

Որովհետև, երբ որ ժողովուրդը արձակեց, միայնակ լեռը ելնելով մինչև երեկոյ կաղօթէ. առաքեալք, որոնք նաւով կը գնային, սաստիկ փոթորկի հանդիպելով՝ հազիւ 25-30 մղոն ցամաքէն հեռացած՝ ալեկոծութեան պատճառաւ մեծ երկիւղի մէջ էին, երբ կէս գիշերէն յետոյ տեսան որ մէկը ծովու ալեաց վրայ քալելով կը գնար, որը՝ նաւուն մօտեցած ժամանակ թուեցաւ թէ

կանցնի անտի: Առաքեալք՝ արտաքոյ կարգի երկիւղով լցուած՝ բարձրաձայն աղաղակ կարձակեն. վասն զի, անկարող լինելով որոշելու թէ ով է, կը կարծեն թէ իրենց տեսածը մի ցնորք է:

Յիսուս անմիջապէս կը խօսի նոցա և, «Քաջալերուեցէք, ես եմ մի՛ վախնաք» ասելուն պէս՝ բոլորին սիրտը հանգստացած՝ քաջալերութիւն կստանան. այնչափ որ Պետրոս կասէ. «Տէ՛ր, եթէ դու ես, հրամայէ ինձ որ ջրի վրայ քալելով առքեզ գամ:» Յիսուս կը պատասխանէ թէ «Եկ». սոյն հրամանին վրայ Պետրոս նաւէն իջնելով կը գնայ Յիսուսի մօտ՝ ջրի վրայ քալելով. սակայն հողմոյ և ալեաց սաստկութենէն վախցած՝ միտքը կը շփոթի, վասնորոյ կսկսի ընկղմիլ. ահա այն ժամանակ նորէն կաղաղակէ. «Տէր, փրկէ զիս:»

Խելամուտ եղիր. մինչ Պետրոս կը հաւատար, մեծ քաջասրտութեամբ ալիքները կոխտելով համարձակ կը գնար. բայց երբ սկսաւ տարակուսիլ, ալիքները նորա հնազանդութենէն ելնելով՝ զայն ընկղմելու ատենչ ունեցան. ապա երբ նորէն միտքն ուղղելով՝ Յիսուսի կարողութեան վրայ հաւատով և յուսով ապաւինեց, ալիքները դարձեալ հնազանդեցան իրեն: Ինչպէս որ Յիսուս էլ յանդիմանական եղանակաւ՝ «Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցիր» ասելով՝ նորա ձեռքը բռնելուն պէս՝ խեղճ Պետրոս ապաստանեցաւ ալեաց բռնութենէն: Տես դու Յիսուսի ամենակարող զօրութիւնը. որովհետև ո՛չ թէ

միայն ծովուն վրայ քալեց իբրև ի ցամաքի, այլ և նորա հրամանաւ Պետրոս ևս կարող եղաւ նոյնպէս ծովու ալեաց վրայ քալել համարձակ իբր ի ցամաքի:

Երբ որ Յիսուս գալով նաւը մտաւ, իսկոյն հովիւը դադարեց և ծովը խաղաղ կերպարան առաւ. այնպէս որ նաւուսմ գտնուողները ահիւ և սքանչացմամբ երկրպագելով՝ Աստուծոյ որդի կը դաւանին զայն, և շատ չանցած նաւն էլ կը հասնի ուր որ պէտք է գնայիւն: Ապա ցամաքն եղնելով՝ Գեննեսարէթի գաւառը կերթան, ուր ժողովուրդը զայն ճանաչելով՝ բոլոր շրջակայ տեղեայ յուր կուտան. և իմանալով գտնուած տեղը, իրենց հիւանդները մահճով առ նա կը բերեն: Նամանաւանդ որ գեղ, քաղաք և ագարակ որ կը գնար, բժշկութիւն գտնելու փափաքանօք ցաւագարները ճանապարհի վրայ կը դնէին, աղաչելով որ գոնէ նորա հանդերձի քղանցքին դպչին. և արդարև նորա՝ որք միանգամ յաջողեցան դպիլ նորա հանդերձին, իսկոյն բժշկուեցան[1]:

---

1. Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտան մտանել ի նաւ՝ և յառաջել յայնկոյս, մինչև ինքն զժողովուրդն արձակիցէ: Եւ իբրև արձակեաց զժողովուրդն, ել ի լեառն առանձինն կալ յաղօթս... և նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիզօք ծփեալ յալեացն, քանզի ընդդէմ էր հողմն: Եւ ի չորրորդ պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով՝ ի վերայ ծովուն. Մատթ. ԺԴ. 22—36.—Մարկ. Զ. 45.—Յովհ. Զ. 16.

1. Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ դոյր անդ՝ բայց միայն ի մին, յոր մտին աշակերտքն Յիսուսի. և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին. Յովհ. Զ. 22 մինչև ցվերջ գլխոյն.

Յիսուս, որ հինգ հացով և երկու ձուկով հրաշիւք այնքան ժողովուրդ կերակրած էր, յաջորդ օրը երբ որ Կափառնայում եկաւ և ժողովուրդը զայն որոնելով գտաւ, այս անգամ նոցա խօսեցաւ հոգևոր կեանք տուող բարեաց, այն է սուրբ պատարագի խորհուրդին վրայ, զոր յետոյ պէտք է հաստատէր. և այլաբանական իմաստով յայտնեց թէ ինքը կատարեալ Աստուած և կատարեալ մարդ է, և թէ իրեն հաւատացողները անվախճան կեանց պիտի հասցնէ, ինչպէս որ գրուած է իւր տեղւոյն[1]:

Նայէ դուն այստեղ փարիսեցւոց և գրաց չարութեան. որովհետև ժողովուրդը Յիսուսի գործած հրաշքները տեսնելով՝ մեծ հաճութեամբ խորհուրդ և փափաք սկսաւ յայտնել զայն թագաւոր հրատարակելու, ընդհակառակն, նոքա առնախանձու կը փափաքին զայն մահացնել. այս պատճառաւ վերոյիշեալ հրաշքէն յետոյ, Յիսուս Երուսաղէմի գաւառը չը գնար, այլ Գալիլեայի

լով՝ ի վերայ ծովուն. Մատթ. ԺԴ. 22—36.—Մարկ. Զ. 45.—Յովհ. Զ. 16.

1. Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ դոյր անդ՝ բայց միայն ի մին, յոր մտին աշակերտքն Յիսուսի. և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն, բայց միայն աշակերտքն նորա գնացին. Յովհ. Զ. 22 մինչև ցվերջ գլխոյն.

կողմերում կը շրջէր [1]. սակայն ո՛չ Թէ կը վախնար, այլ՝ հաչը եղնելու ժամանակը դեռ հասած չը լինելուն պատճառաւ:

Ա. յն ժամանակ Երուսաղէմին մի քանի դպիրք և փարիսեցիք Յիսուսի մօտ եկան, և տեսնելով որ առաքեալներէն ոմանք՝ առանց լուանց ձեռքերը լուալու կերակուր կուտեն, կասն Յիսուսի Թէ՝ «Ինչո՞ւ համար քու աշակերտները ծերոց և կամ նախնեաց աւանդութիւնը Թողլով՝ անլուայ ձեռօք կերակուր կուտեն:» Ա. յս մասին կամեցան Յիսուսը մեղադրել. քանզի հրէայք սովոր էին դրսէն տուն եկած ժամանակ, առանց լուանց ձեռքերը լուալու, չճաշել. և նոյն իսկ սեղանին վրայ յաճախ կը լուային. նմանապէս գաւաթ, սան և մահճակալներն անգամ կը լուային:

Իրաւ է որ այս մասին օրինաց մէջ ինչ ինչ պատուէրներ կային, բայց փարիսեցիք իրրև Թէ օրինաց նախանձաւորութեամբ՝ հարկաւորէն աւելի ծանրացնելով՝ Աստուծոյ պատուէրէն աւելի ծերոց աւանդութեանց վրայ դարձուցած էին իրենց բովանդակ մտադրութիւնը. այս պատճառաւ Յիսուս Թէ՛ Ս. Դրքէն և Թէ աւակաւ ցոյց տուաւ որ իրաւունք չունին [2]: Ա. յնտեղէն Տիւրոսի և Սի-

1. Ճետ այսօրիկ շրջէը Ճիսուս ի Գալիլեա. քանզի ո՛չ կամէը ի Հրէաստանի շրջիլ. զի խնդրէին զնա Հրէայքն սպանանել. Ճովհ. Է. 1.

2. Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ և ոմանք

դպրի կողմերը գալով՝ մի տուն կը մտնէ, ուր ինքնինքը ո՛չ ոքի կը յայտնէ. բայց նորա գալուստը շատ չանցած ամէն կողմ կխռովուի:

Ինչպէս որ մի Քանանացի կինն, որ փիւնիկ կոչուած ասորի ազգէն էր, և որուն դուստրը այսահարութեան պատճառով չարաչար կը տառապէր, Յիսուսի գալուստն իմանալով՝ բարձրաձայն կաղաչէ զայն ասելով. «Ողորմէ ինձ, ո՛վ Տէր, որդի Դաւիթ». և կը խնդրէ որ բժշկէ իւր աղջիկը: Յիսուս Թէև պատասխան չը տուաւ, բայց նա անդադար աղաղակելուն համար, աշակերտները կասն Թէ՝ «Արձակէ զայն, քանզի մեր ետևէն կուգայ աղաղակաւ». Յիսուս կը պատասխանէ. «Ես ուրիշներուն չը ղրկուեցայ, այլ Իսրայէլի կորսուած ոչխարներուն:»

Յայնժամ կինը գալով կերկրպագէ Յիսուսին և նորէն կաղաչէ ասելով. «Տէր, օգնէ ինձ», որուն նա կը պատասխանէ. «Թող տուր որ նախ մանուկները յագենան, որովհետև պէտք չէ նոցա հացն առնուլ և շուներուն տալ:» Տես դու այժմ յիշեալ կնոջ հաւատքը. քանզի մինչդեռ Յիսուս առանց նորա խնդիրքը կատարելու քանիցս մերժած իսկ էր, նա՝ դարձեալ չը յուսահատելով

ի դպրացն, որք եկեալ էին յԵրուսաղէմէ: Եւ տեսեալ զոմանս յաշակերտացն անտի, զի հառնակ ձեռօք՝ այսինքն է անլուայ ուտէին հաց, բամբասեցին. Մարկ. Է. 1. մինչև 23 համար.—Մատթ. ԺԵ 1.

կրկին և կրկին իւր աղաչանքը կը շարունակէր, մինչև որ փափաքանացը հասնի: Տեսնելով որ ուրիշ եղանակաւ խնդիրքը չընդունուիր, Յիսուսի խօսքը հաստատելով կը պատասխանէ թէ՝ «Ա՛յո, Տէր, շուներն էլ իրենց տէրանց սեղանէն ընկած հացի փշրանքովը կը կերակրուին». Յիսուս նորա հաւատքին մեծութիւնը յայտնելով կասէ. «Գնա՛, ինչպէս որ կուզես, այնպէս թող լինի». և իսկոյն բժշկուեցաւ նորա դուստրը[1]:

Հարցո՛ւմ Լ.Դ.

Ընդէր Յիսուս քանանացի կնոջ դստեր իսկոյն չը բժշկեց.

Պատ. Նորա հաւատքը աշխարհի յայտնելու համար. որովհետև, թէև առաջ նորա խնդիրքը անպատասխանի թողուց և վերջում էլ մինչև շան աստիճանի իջուց զայն, բայց կինը առանց երբէք բարկանալու, նորա իւր թախանձանքը շարունակելովը, նորա կատարեալ հաւատքը յերևան եկաւ. նամանաւանդ այս խնդրում կիմացուի նաև թէ Իսրայէլեան ազգէն առաջ հեթանոս և կռապաշտ ժողովուրդք Յիսուսի պէտք է հաւատային:

1. Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդովնի. Մատթ. ԺԵ. 21. մինչև 28 համար.—Մարկ. Է. 24.

Յիրաւի, Յիսուս եկած էր մարդկային բովանդակ ազգի փրկութեան համար, բայց որովհետև իւր շնորհքը առաջ Իսրայէլի և յետոյ հեթանոսաց պիտի պարգևէր[1], ահա այս պատճառաւ կնոջ կասէ թէ՝ «Թոյլ տուր որ մանկունք յագենան», ինչպէս որ սուրբ աւետարանը՝ առաջ Իսրայէլի ժողովրդեան, և յետոյ կռապաշտ ազգաց քարոզուեցաւ. սակայն և այնպէս, Իսրայէլեան ազգը ապերախտ գտնուելով Յիսուսի շնորհքէն զուրկ մնաց, իսկ հեթանոսք ողորմութեան արժանացան:

Այնուհետև Յիսուս նորէն Գալիլեայի ծովեզրը եկած ժամանակ, այնտեղ մի խուլ և համր մարդ կը բերեն նորա առջև, և կաղաչէին որ նորա վրայ ձեռք դնէ: Եւ որովհետև բազմութիւնը շատ էր, Յիսուս զայն առանձին մի տեղ տանելով՝ մատները նորա ականջաց վրայ կը դնէ և ապա կը թքնէ անդ. մի և նոյն ժամանակ նորա լեզուէն բռնելով՝ կը նայի դէպի երկինք, և հառաչելով կասէ. «Բացուէ». որով իսկոյն մարդը կը բժշկուի: Յիսուս կը պատուիրէ նոցա ո՛չ ոքի չը յայտնել, բայց նորա աւելի սկսան հռչակել նորա հրաշալի գործն ու կարողութիւնը. այնպէս որ ամէնքը զարմանքով լցուած՝ կասէին. «Սա մարդը ամէն բան լաւ գործեց, որովհետև խուլերուն ականջը

1. Որ զառաջնապարգևն զո նշխար ոչ խնայեցեք ընձեռել շանն հովուասիրի. Ղաբ. Լէ.

կը բանայ և համր մարդոց խօսիլ կուտայ[1]։» Ա.յս կերպ կը յայտնէին իրենց երախտագիտութիւնը։

Յիսուս սոյն հրաշքը գործելէ զկնի, երբ որ լեռը ելնելով նստաւ այնտեղ, շատ ժողովուրդ նորա մօտ կը հաւաքուի, որոնք իրենց հետ ի միասին կը բերեն տեսակ տեսակ ցաւագար մարդիկներ. կաղ, կոյր, համր և խեղանդամներ, զորս նորա ոտից առջև կը ձգեն, և երբ ամէնքը կը բժշկէ, զարմանալով հանդերձ կը փառաւորեն Իսրայէլի Աստուածը։ Ա.յս պարագայում, ժողովուրդը այն աստիճան ախորժեցաւ, որ երեք օր լերան վրայ մնալով՝ նոցա կերակուրը պակասեց. այսու հանդերձ դարձեալ Յիսուսէն բաժանուիլ չուզելով՝ նորա սիրոյն համար ամայի և վայրի անապատում կը մնային։

Ա.սա մեծ դու մեր Փրկչին մարդասիրութիւնը. որովհետև նա դիտէր թէ ժողովրդեան ուտելիքը սպառած է, վասնորոյ առաքեալները կոչելով կասէ. «Կը գթամ այս ժողովրդեան վրայ, քանզի երեք օր է որ մօտս կը գտնուին. և այժմ կերակուր չունին. զանոնք անօթի դրկել չեմ ուզեր, որ մի գուցէ ճանապարհում անսուաղուլ

1. Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի և Սիդովնի. և եկն ի ծովեզրս Գալիլեացւոց ի մէջ սահմանացն Դեկապօլիս։ Եւ բերին առ նմա խուլ մի և համր, և աղաչէին զի ձեռն դնիցէ ի վերայ նոցա. Մարկ. Է. 31. մինչև 37 համար.

թենէ նուաղին. վասն զի ոմանք հեռի տեղերէ եկած են». որուն աշակերտները կը պատասխանեն թէ՝ «Ա.յսքան ժողովրդեան բաւելու չափ հաց այս անապատում ուստի՞ կարող ենք գտնել։»

Թէպէտև Յիսուս յառաջագոյն հինգ հացով հինգ հազար անձինք կերակրելով իւր գերագոյն կարողութիւնը յայտնած էր, սակայն նոքա՝ առանց դպին մտաբերելու, և այդպիսի անապատ տեղում այդքան բազմութիւնը ինչ կերպով կերակրելու կարելիութիւնը ևս չը կրնալով ըմբռնել, այդպիսի պատասխան տուին. ուստի այս անգամ ևս Յիսուս կը հարցնէ նոցա թէ քանի՞ հաց ունին։

Յիրաւի Յիսուս գիտէր թէ քանի՞ հաց ունին, բայց նորէն իւր գօրութիւնը յայտնելու համար հարցուց։ Երբ որ աշակերտները կը պատասխանեն թէ եօթը հաց և սակաւ ինչ ձուկ ունին, կը հրամայէ ժողովրդեան գետնի վրայ նստիլ, և եօթն հացն ու ձուկը ձեռքն առնելով, կը գոհանայ և մանրելով կուտայ առաքելոց և նոքա ժողովրդեան, (որ բացի կիներէ և մանուկներէ չորս հազար անձինք կային) և ամէնքն էլ կշտանալէ զկնի, աւելցած կտորները կը վերցունեն եօթը զամբիւղ լեցուն, որպէս զի մի այսպիսի մեծ հրաշք չը մոռացուի։

Ա.յնուհետև երբ որ Յիսուս ժողովուրդը կարձակէ դնալ իրենց տեղերը, առաքելոց հետ ի միասին նաև նստելով, Մագդալիա քաղաքին մօտ

Դաշմանուհեայ կողմերը կուգայ[1]: Ա՛յնուհետ փարիսեցիներն ու սադուկեցիները նորա մօտ գալով կը վիճին և կը պահանջեն որ երկինքէն նշան ցոյց տայ իրենց. իբրև թէ ասել կուզեն. «եթէ այսքան հրաշք կը գործես հաստատելու համար որ դո՛ւ ես Մեսիան, ուրեմն երկինքէն ևս մի գերբնական նշան ցոյց տուր:»

Սակայն նոցա միտքն էր ո՛չ թէ նորա Մեսիայ լինելուն ստուգութիւնը իմանալ և հաւատալ, այլ միայն փորձել զայն. այս պատճառաւ Յիսուս կը պատասխանէ նոցա. «երբ որ երեկոյեան ժամանակ երկինքը կարմրագոյն կերևի, իսկոյն կասէք թէ օդը պարզ պիտի լինի. իսկ առաւօտեան՝ երբ մշուշախառն կարմրութիւն տեսնէք, կասէք թէ մրրիկ պէտք է լինի. ինչո՞ւ համար երկնից երեւոյթները կարող էք քննել, իսկ ժամանակիս նշանը կարող չէք գիտնալ:» Արդարև, եթէ Ս. Գրոց ուշադիր լինէին, կարող էին ճանաչել թէ նա է Մեսիան. (այս մասին տես նաև Լ-րդ հարցում):

Սոյն պատասխանը արդէն մեծ յանդիմանութիւն էր նոցա, բայց միանգամայն նոցա չար

1. Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ի ծովեզերն Գալիլեացւոց. և ելեալ ի լեառն՝ նստէր անդ: Մատեան առ նա ժողովուրդք բազումք՝ որք ունէին ընդ իւրեանս կաղս՝ կոյրս՝ համերս՝ միակողմանիս, և այլս բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա. Մատթ. ԺԵ. 29—39.—Մարկ. Ը. 1.

սրամտութիւնը առաւել ևս պարզելու համար՝ առաքելոց կասէ. «Ա՛յս չար և շնացող ազգը նշան կը խնդրէ, և նոցա ուրիշ նշան չը պիտի արուի, բայց միայն Յովնան մարգարէի նշանը:» Ինչպէս որ Յովնան՝ երեք օր և երեք գիշեր ձկան փորում մնալով՝ դուրս եկած ժամանակ նինուէ քաղաքի բնակչաց նշան եղաւ, նմանապէս Յիսուս՝ երեք օր և երեք գիշեր գերեզմանում մնալէ զկնի՝ յարութիւն առնելով՝ Իսրայէլեան ազգին նշան պիտի լինէր:

Յիսուս այս խօսքերը ասելէ յետոյ թողլով զանոնք, դարձեալ առաքելոց հետ նաւը կը մտնէ՝ դիմացի կողմը անցնելու համար, և կը պատուիրէ նոցա որ փարիսեցւոց, սադուկեցւոց և Հերովդիանոսաց խմբէն զգուշանան: Թէպէտև նա այս խօսքով այլաբանօրէն խմբի նմանցուց նոցա չար ազանդը, բայց առաքեալք կը կարծեն թէ նոցա հացէն չուտել կը հրամայէ, մանաւանդ որ նաւը մտած ժամանակ մոռացած էին հաց առնելու և միայն մի նկանակ ունէին. և որովհետև հաց առնելու պատուէր տացած էին Յիսուսէն, ուստի այդ մոռացութիւնը նկատելով՝ կսկծին միմեանց ասել թէ հաց չառինք:

Նոցա խորհուրդը Յիսուսի յայտնի լինելով կը յանդիմանէ զանոնք ասելով. «Թերահաւատներ, ինչո՞ւ կը խորհիք թէ հաց չունինք». որովհետև չը մտաբերեցին թէ յառաջագոյն հինգ հացով հինգ հազար և եօթն հացով չորս հազար հոգի

կշտացուցած էր: Յիսուս նորէն յայտնելով թէ ինքը հասարակ հացի մասին խօսած չէր, ապա կը հասկանան թէ փարիսեցւոց և սադուկեցւոց չար ազանդէն զգուշանալ պատուիրած էր իրենց[1]:

Յիսուս այսպիսի խօսքեր նաւին մէջ խօսելէն ղկնի, երբ որ Բեդսայիդա քաղաքը կուգան, մի կոյր մարդ կը բերեն նորա առջև, աղաչելով որ զայն բժշկէ: Յիսուս նորա ձեռքէն բռնած՝ քաղաքէն դուրս հանելէ յետոյ՝ նորա աչքերուն վրայ կը թքնէ, և ձեռքն էլ նորա վրայ դնելով կը հարցնէ թէ մի բան կը տեսնէ: կոյրը կը պատասխանէ թէ «Կը տեսնեմ մարդիկը, որ ծառերու նման կը շրջին»: Նա վերստին իւր ձեռքը նորա աչաց վրայ դնելուն պէս՝ կոյրը կը բժշկուի, որուն Յիսուս կը պատուիրէ դնալ իւր տունը առանց բազմութեան հանդիպելու և առանց ո՛չ ոքի մի բան յայտնելու[2]:

Պարա է նկատել թէ Յիսուս երբեմն միայն խօսքով կը հրաշագործէր իւր Աստուածութիւնը յայտնելու համար, և երբեմն էլ շարժումով և այլ միջոցներով, որպէս զի իւր մարդկութիւնը

1. Մատուցեալ վարդապետքն և սադուկեցիք փորձելով խնդրէին ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել. Մատթ. ԺԶ. 1. մինչև 12 համար.—Մարկ. Ը. 11.

2. Գան ի Բեդսայիդա, և ածեն առաջի նորա կոյր մի, և ազաչէին զնա՝ զի մերձեսցի ի նա. Մարկ. Ը. 22. մինչև 26 համար.

յայտնէ: Ապա առաքելոց հետ Բեդսայիդայէն ելնելով Փիլիպպեայ Կեսարիա քաղաքը գնալու ժամանակ՝ աշակերտացը կը հարցնէ թէ մարդիկ իրեն համար ի՞նչ կասեն և ո՞վ կը համարին զինքը. նորա կը պատասխանեն թէ «Ոմանք Յովհաննէս Մկրտիչը, ոմանք ևս Եղիան, իսկ այլք Երեմիա մարգարէն և կամ թէ ի հնումն եկած մարգարէներէն մին յարութիւն առած կը համարին:» Յայնժամ Յիսուս նոցա կը հարցնէ թէ «Դո՞ւք ինչ կասէք». Պետրոս ի դիմաց բոլոր առաքելոց՝ կը դաւանի զնա Քրիստոս և որդի Աստուծոյ:

Պետրոս սոյն դաւանութիւնը տուաւ ո՛չ թէ ինքն իրմէն, այլ Հօր Աստուծոյ ազդեցութեամբ. վասնորոյ Յիսուս երանի տալով անոր կասէ թէ Դո՛ւ երջանիկ ես. վասն զի Պետրոս կը նշանակէ վէմ. և ապա ո՛չ միայն կը վճռէ թէ իւր եկեղեցին նորա վրայ պիտի շինէ և դժոխոց զօրութիւնք կարող պիտի չը լինին զայն յաղթահարել, այլ նաև երկնից արքայութեան բանալիքը կը խոստանայ տալ նմա, որուն երկրիս վրայ կապածը՝ երկինքում ևս կապուած լինի, և երկրիս վրայ արձակածը՝ երկինքում ևս արձակուի: Յոյնպիսի հոգևոր իշխանութիւն ո՛չ միայն Պետրոսի, այլ նաև բոլոր առաքելոց արուեցաւ, ինչպէս որ յայտնի է (Մատթ. ԺՉ. 18. Յովհ. Ի. 23). քանի որ նորա ևս անթերի կը հաւատային թէ Յիսուս է Քրիստոս և որդի Աստուծոյ:

Յիրաւի, առաքեալք գաւանեցան թէ Յիսուս է Մեսիան, բայց նա աստիճ պատուիրէլէ յետոյ նոցա որ ո՛չ ոքի չը յայտնեն, կը փութայ կանխաւացուցմամբ յայտնել նոցա թէ ինքը պէտք է երուսաղէմ գնայ և անդ ժողովրդեան քահանայապետներէն, դպիրներէն և ծերերէն պիտի չարչարուի և մեռնի, որպէս զի երբ որ խաչը ելնելով մեռնի, նոքա իրենց հաւատքը անխախտ պահեն, քանի որ զմարդիկ մեղքէ փրկելու համար պէտք է մեռնէր:

Ա.յս մասին յայտնի է որ առաքեալք պէտք է տխրէին մեծապէս· ուստի նոցա մխիթարութեան համար յայտնեց թէ երեք օրէն յարութիւն պէտք է առնէ: Սակայն Պետրոս, որ զայն շատ կը սիրէր, երբ որ լսեց թէ չարչարանք պէտք է մեռնի, և չըմբռնելով թէ ի՞նչ պատճառաւ այս բանը պէտք է պատահի, սկսաւ վիճել նորա հետ ասելով· «Տէր, քաւ լիցի որ այսպիսի բան քեզ պատահի»· որով յանդիմանութեան արժանացաւ: Վասն զի քանի որ Յիսուս՝ ողորմութեամբ մարդոյ փրկութեան համար մեռնիլ վճռած էր, ի հարկէ նորա կամաց հակառակ էր ասել թէ «Ա.յս բանը քեզ չը պատահի»: Այլ արդարև Պետրոս այս պարագայումն Աստուծոյ կամաց համաձայն չը խորհեցաւ, այլ մարդկային կամաց համեմատ[1]:

1. Եւ երեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ կե-

Պետրոս այսպիսի մի յանդիմանութիւն լսելով լռեց և պատասխան չը տուաւ· բայց Յիսուս այնտեղ ժողովեալ բազմութիւնն ու առաքեալները իւր մօտ կոչելով՝ կասէ նոցա· «Ով որ իմ ետևէն գալ կուզէ, պարտի ուրանալ իւր անձը և իւր խաչն առնելով գալ իմ ետևէն[1]:» Միա դիր· Պետրոս Յիսուսի վրայ ունեցած սիրոյն համար չուզեր որ նա չարչարանք կրէ· բայց Յիսուս բացորոշ կը յայտնէ թէ ո՛չ միայն ինքը պէտք է չարչարուի, այլ և իւր ետևէն գնալ, իրեն աշակերտիլ ուզողն էլ պարտի աշխարհային իղձերը մոռնալով՝ այս աշխարհի նեղութեանց ևս համբերել· նմանապէս վճռաբար կը յայտարարէ թէ «Ով որ կամի իւր անձը ապրեցնել, պիտի կորսնցնէ զայն· իսկ ով որ ինձ համար կը կորսնցնէ իւր անձն, կապրեցնէ զայն· ի՞նչ օգուտ մէկուն համար բոլոր աշխարհը շահիլ և իւր անձը կորսնցնել· քանզի մարդս ի՞նչ կարող է տալ իւր անձի փրկութեան փոխարէն[2]:»

սարիայն, հարցանէը ցաշակերտան և ասէը· զի՞ ոք ասեն զկնէն մարդկին՝ թէ իցէ որդի մարդոյ· Մատթ. ԺԶ. 13—23.—Մարկ. Ը. 27.—Ղուկ. Թ. 18.

1. Եւ կոչեալ առ ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնոսա· եթէ ոք կամի գալ զկնի իմ, ուրացցի զանձն իւր և բարձցէ զխաչ իւր և եկեցէ զկնի իմ· Մարկ. Ը. 34.

2. Զի ոք կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա· և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ,

Յիրաւի ինչ շահ կայ աշխարհի պատրաստութեանց ու մեծութեան մէջ, որոնք անհիմն լինելով, թող որ հողմոյ նման կանցնին, հանդերձեալ աշխարհումն էլ մարդուս յաւիտենական տանջանաց պատճառ կը լինին: Մարմնաւոր ապրուստի համար հարկաւոր եղածը ձեռք բերելու աշխատութիւնը յանցանք չէ, բայց հարկ եղածէն աւելի նոցա կարևորութիւն ընծայելը՝ հեշտասիրութենէ և հպարտութենէ յառաջ կուգայ և մեծ յանցանք է: Աստուած կերակուր սահմանեց մարդուս, որ անօթութենէ չը մեռնի. հանդերձ տուաւ, որ ամօթոյքը ծածկէ. տուն ու բնակարան շինել սովորութիւն եղաւ, որպէս զի ցուրտէն ու տաքէն պատսպարուի. սակայն շատերը զայս պատրուակ բռնելով՝ մարմնաւոր բաներուն չափազանց մեծ կարևորութիւն կընծայեն և հոգևոր ձանապարհէն ետ մնալով իրենց հոգին կը կորնցնեն:

Եւ որովհետև, ինչպէս վերը յիշուեցաւ, Յիսուս չարչարանաց պիտի խաչուէր և իրեն հետևողներն էլ նորա անուան ու սիրոյն համար աշխարհիս վրայ կերպ կերպ նեղութիւն պէտք է կրէին, ուստի ով որ ամօթ համարելով զայն և նորա խօսքերը՝ չը հետևիր իրեն, կը յայտնէ թէ

գացէք գնա: Զի՞նչ օգտիցէ մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահիցէ և զանձն իւր տուժեսցէ, կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ: Մատթ. ԺԶ. 25.

դատաստանի օրում իւրաքանչիւրի դատաստանը տեսնելու եկած ժամանակ պիտի պատժէ զայն[1]. որպէս զի իրեն հետևողները մխիթարուին, իսկ չը հետևողները վախնալով ուղղուին: Արդ՝ ի սէր Յիսուսի աշխարհումս որքան շատ նեղութիւն կրես, այնքան ուրախացիր, քանի որ արքայութեան մէջ նորա անվախճան փառաց հաղորդ պէտք է լինիս ապահովապէս[2]:

Թէպէտև Յիսուս արքայութեան մէջ կը յայտնէ սրբոց իւր փառքը, բայց կը կամի նաև այս աշխարհի վրայ նորա մի նշանը ցոյց տալ՝ տակաւին խաչի վրայ չը բարձրացած, որպէս զի նոքա չը գայթակղին իւր վրայ և չը թերանան իրենց հաւատքին մէջ՝ տեսնելով զինքը այդ անարգանաց փայտին վրայ՝ մարդիկներէն լքեալ և արհամարհեալ. և որոց որ պիտի յայտնէր իւր փառքը, կը վճռէ որ նոքա չը մեռնին, մինչև որ տեսնեն Աստուծոյ արքայութիւնը զօրութեամբ և փառօք եկած և իրենց մէջ հաստատուած[3]:

---

1. Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իմ, զնա և որդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք իւրովք՝ և Հօր՝ և հրեշտակաց սրբոց. Ղուկ. Թ. 26.

2. Եթէ չարչարանացն կցորդք լինիցիմք, և փառացն հաղորդք լինելոց եմք. Հռոմ. Ը. 17.

3. Եւ ասէ ցնոսա (Յիսուս). ամէն ասեմ ձեզ, կան են ոմանք ի սոցանէ որք աստ կան, որք մի ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ. Մարկ. Ը. 39.

Հարցում Լե.

Ցիսուս ոըր յայտնեց իւր փառաց նշանը.

Պապ. Մի բարձր լերան վրայ, որ Թաբոր կը կոչուէր: Աստ կատարուեցաւ Ս. Գրոց այն խօսքը թէ՝ «Թաբոր և Հերմոն քոյ անուամբ պիտի ցընծան[1]». որովհետև, ինչպէս որ Հերմոն լեռը՝ Յորդանան գետի դիմացը գտնուելով, Յիսուսի մկրտութեան ժամանակ ցնծաց, նմանապէս նորա պայծառակերպութեան առթիւ Թաբոր լեռը ուրախացաւ:

Արդ՝ ինչպէս որ Յիսուս Փիլիպպեայ Կեսարիոյ կողմերում գտնուած ժամանակ խոստացած էր իւր փառքը յայտնել ոմանց աշակերտաց և վճիռ արձակած էր թէ մինչև այն կէտը նոքա պէտք է ողջ մնային, վասնորոյ վեց կամ ութ օրէն զկնի (Մատթէոս և Մարկոս միայն Յիսուսի խոստման և նորա դործադրութեան աւուրց միջև ինկած օրերը հաշուելով վեց օր կը գրեն, իսկ Ղուկաս խոստման և կատարման օրերն էլ հաշուելով ութ օր կը դնէ) առաքելոց հետ վերոյիշեալ Թաբոր լեռան սարբոտը եկաւ, ուր առաքեալներէն միայն Պետրոսը, Յակոբոսն ու նորա եղբայր Յովհաննէսը առնելով՝ մնացեալքը անդ թողուց,

1. Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծացեն. Սաղմ. ՀԹ. 13.

Երբ որ Յիսուս երեք աշակերտաց հետ ի միասին Թափոր լերան գագաթին վրայ բարձրանալով աղօթքի կանգնեցաւ, աշակերտաց վրայ մի թմրութիւն և քնոյ ծանրութիւն եկաւ. այն միջոցին Յիսուս այլակերպելով՝ նորա դէմքը արեգական նման փայլուն և հանդերձն էլ լուսոյ պէս սպիտակ եղաւ, այն աստիճան որ թափիչները կարող չեն կտաւն այնպէս սպիտակցնել[1]: Մի այսպիսի սաստիկ լուսոյ ճառագայթներէն աշակերտք կը սթափին և Յիսուսի աստուածային փառքը տեսնելով կը հրճուին, երբ Նորա մօտ կը տեսնեն Մովսէս և Եղիա մարգարէքը, որոնք նոյնպէս փառաւորեալ վիճակում երևնալով՝ նորա հետ կը խօսակցէին երուսաղէմ քաղաքում նորա կրելիք չարչարանաց և խաչելութեան վրայ: Սոյն վերջին պարագայն ցոյց կուտար թէ Յիսուս ամէնիշխան է. որովհետև Մովսէսը մեռելոց միջէն և Եղիան երկինքէն կը բերէ:

Տե՛ս դու աստ Պետրոսի վիճակը. նա՝ որ (տես Լդ-րդ հարցում) Յիսուսի չարչարանք կրել և խաչը երևելը չը կամենալուն համար յանդիմա-

1. Եւ յետ վեց աւուր առնու Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայրն նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն, և այլակերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգական . . . Մատթ. ԺԷ. 1—13—Մարկ. Թ. 1. —Ղուկ. Թ. 28.

նուաճ էր, այս անգամ ևս թէև նոյն միաքն ունեցաւ, բայց նորէն յանդիմանութիւն չը լսելու համար՝ գործը նորա կամաց թողլով կը փութայ ասել. «Տէր, լաւ է մեզ այստեղ մնալ. եթէ կամիս, երեք տաղաւար կը շինենք, մին՝ քեզ, մին՝ Մովսէսի և միւսը Եղիային համար». քանզի Յիսուսի փառաց տեսութենէն կարի ախորժած՝ կուզէ որ այնտեղ հանգիստ և խաղաղ ճնան, քանի որ դիտէր թէ հրէայք նորա դէմ թշնամութեամբ և ատելութեամբ պինուած էին:

Սակայն, որովհետև Յիսուս մարդկային ազգը մեղաց գերութենէն փրկելու համար կամաւ պիտի խաչուէր, այս պատճառաւ Պետրոս այս պարագայում ևս անգիտացաւ թէ ի՞նչ կը խօսէր. քանզի երկիւղիւ պաշարուած էին: Մինչդեռ նա կը խօսէր, խոկոյն լուսաւոր մի ամպ նոցա վրայ իջաւ հովանի եղեցաւ, որոյ միջէն մի ձայն լսուեցաւ թէ «Ա՛յս է իմ սիրելի որդին, որուն ես հաւանած եմ. դորան լսեցէք». սոյն ձայնէն սաստիկ վախցած՝ երեսի վրայ կընկնին. ահա այն ժամանակ Մովսէս և Եղիա անհետանալ կը լինին և ամպն էլ կը վարատուի: Յիսուս նոցա մերձենալով կօդնէ որ ոտքի կանգնին՝ ասելով. «Ելէք ոտքի և մի վախնաք». և երբ երթալով շուրջ կը նային, Յիսուսէն զատ ոչ ոք կը տեսնեն իրենց մօտ:

Լեռնէն իջնելու ժամանակ Յիսուս կը պատուիրէ աշակերտաց որ իրենց տեսած տեսարանը

ոչ ոքի չը պատմեն, մինչև որ ինքը մեռելներէն յարութիւն առնէ: Որովհետև եթէ նոքա այն ժամին պատմէին, կարելի է որ լսողները կեղծիք համարելով չը հաւատային. ինչպէս (Լ՚ր-րդ Յարցում յիշուածին համեմատ) յառաջադոյն ևս մի և նոյն պատճառաւ պատուէր տուած էր նոցա՝ որ ոչ ոքի չասեն թէ ինքը Մեսիան է: Իրաւ է որ Յիսուս թէ խօսքով և թէ գործով իւր Աստուածութիւնը շատ անգամ յայտնեց, սակայն նորա յարութենէն առաջ չը հաւատացին. ինչպէս որ նոքա աշակերտներն անգամ յետ նորա յարութեան հաւատացին թէ նորա յառաջադոյն իրենց խօսածներուն և թէ Ս. Գրոց մէջ նորա նկատմամբ գրուածներուն: Ա՛յս մասին տես նաև Ժ՚Զ-րդ Յարցումը:

Յիրաւի Յիսուսի հրամանին համեմատ առաքեալք լերան վրայ իրենց տեսած փառքը այն ժամանակ ոչ մէկուն չը պատմեցին, սակայն «Մեռելներէն յարութիւն առնելը ի՞նչ պիտի լինի» ասելով իրարու հետ կը խորհրդակցէին: Ա՛յո, Յիսուս յայտնած էր թէ ինքը պէտք է չարչարուի ու մեռնի, և ապա յարութիւն առնելով մարդիկը պիտի դատէ, բայց նորա այս խօսքերուն միտքը կատարեալապէս ըմբռնած չը լինելով՝ կը խորհէին թէ կարելի է որ մեռնելէն յառաջ մարդոց դատաստանը պիտի տեսնէ. ուստի երբ որ ասոց թէ «Չեր տեսած փառաւոր տեսարանը մարդու մի

պատմէք մինչև որ յարութիւն առնեմ», կը կարծեն թէ նորա յարութեան, ինչպէս նաև դատաստանի օրը մօտեցած է։

Սակայն, Ս. Գրոց մէջ գրուած լինելով (Մաղաք. Դ. 5.) թէ դատաստանի օրէն յառաջ պէտք է Եղիան գայ, դպիրները կասէին թէ Եղիայի գալը կարևոր է, և նա դեռ եկած չը լինելով՝ աշակերտք իրենց տարակոյսը փարատելու փափաքանօք Յիսուսի կը հարցնեն թէ «ինչո՞ւ համար դպիրք կասեն որ պէտք է յառաջ Եղիա գայ»։ այս հարցման ի պատասխան Յիսուս կը յայտնէ թէ արդարև Եղիա կուգայ և կը հաստատէ ամէն բան, և կը յայտնէ թէ նա արդէն իսկ եկած է և նորա հետ վարուեցան ինչպէս որ կամեցան. նմանապէս վերստին աստ կը կրկնէ թէ ինքն էլ նոցա (հրէից) ձեռքով պէտք է չարչարուի։ Յայնժամ աշակերտք հասկացան թէ Յովհաննէս Մկրտչի համար ասաց թէ նա արդէն եկած է։

Տես դու հրէից ողորմելի վիճակը. որովհետև Ս. Գրոց յայտնութեան համեմատ Մեսիան երկու անգամ յաշխարհ պէտք է գար։ Ինչպէս որ չորրորդ դարու Ը-րդ հարցում յիշուած Գնդէօնի կալումը դրած գգամին վրայ գիշեր ժամանակ ցօղ իջածին նման՝[1] առաջին անգամ մարդոց վրկու-

1. Իջաք որպէս անձրև ի վերայ գեղման, սրպէս ցօղ զի ցօղէ յերկիր։ Սաղմ. ՀԸ. 6.

թեան համար խոնարհութեամբ եկաւ անձայն և գաղտնի, և բոլոր մարդոց օրինակ լինելով առաքինութեան, ամենուն յայտնեց իւր հրամանը, նմանապէս աշխարհի կատարածին երկրորդ անգամ յայտնապէս պիտի գայ մեծ փառքով հանդերձ անհամար հրեշտակներով մարդիկները դատելու համար[1], որպէս զի իւր առաջին գալստեան ժամանակ իրեն հաւատացողներն և կատարեալ հաւատարմութեամբ իւր հրամանին հնազանդողները արքայութեան արժանացնէ և անհնազանդներն ու անհաւատներն էլ դատապարտէ դժոխքի յաւիտենական տանջանաց, ինչպէս Դաւիթ մարգարէն նորա կրկնակի յաշխարհ գալստեան նկատմամբ գրած է աստուածային ազդեցութեամբ[2]։ Արդ՝ այս երկու անգամ գալստեան ժամանակ ևս մէկ մէկ եղիա առաջնորդ պէտք է լինէին Յիսուսին՝ անուամբ եղիա, իսկ միւսը՝ գործով ու վարքով։ Առաջին գալստեան՝ Յովհաննէս Մկրտիչ առաջնորդ և կարապետ եղաւ, բայց եղիայի նման միշտ Աստուծոյ փառաց նախանձախնդիր լինելուն համար, Յիսուս եղիա անուամբ կը յիշէ զայնոյնպէս երկրորդ գալստեան ժամանակ նոյն իսկ եղիա մարգարէն պիտի կարապետէ մեր Փրկչին և

1. Աստուած մեր յայտնապէս եկեսցէ... Սաղմ. խթ. 3.

2. Ձի գայ, և գայ նա ի դատել զերկիր։ Սաղմ. ՂԷ, 13.

դատաւորին: Սակայն հրէից կարգացողները Ս. Գրոց մեծագրութիւն չանելով, նորա առաջին գլուխը չհմացան, միայն երկրորդ գլխոեան վրայ յոյս դնելով չը կարացին զայն ճանաչել ազիտաբար:

Ինչպէս վերը յիշուեցաւ, Յիսուս Թաբօր լեռան վրայ իւր փառքը յայտնելէն վէնի յաջորդ օրում երեք առաքելոց հետ լեռնէն իջնելով՝ երբ միւս առաքելոց դանուած տեղւոյն մօտեցան, տեսան թէ այնտեղ շատ բազմութիւն և դպիրներ հաւաքուած՝ նոցա հետ կը վիճէին: Ւսան դի մի մարդու մէկ հատիկ որդին՝ որ ի մանկութենէ դիւահարութեան ախտով բռնուած և չարաչար հիւանդացած էր, շատ անգամ ինքզինքը կրակի և ջուրի մէջ կը նետէր: Յիսուս Թաբօր լեռնէն սակաւին չիջած՝ հայրը բերած էր զայն առ Յիսուս բժշկութեան համար, բայց այնտեղ չը գանելով գնա առաքելոց տարած էր, որոնք չէին կարողացած բժշկել հիւանդը:

Յիրաւի, նոքա մինչև այն ժամանակ դիւահարներ բժշկած էին, սակայն երբ այս անգամ չը կարողացան, դպիրներն՝ որոնք միշտ կը նախանձէին Յիսուսի և նորա աշակերտաց վրայ, այս պարագայում պատեհութիւն գտած՝ զանազան մեղադրանօք առաքելոց հետ կը վիճէին: Նոյն միջոցում ժողովուրդը Յիսուսի գալը տեսնելով իսկոյն ընդ առաջ կը փութայ և յարգանաց ու զարմանաց ցոյցերով կողջունէ զայն, որ կը հարցնէ թէ

ինչ բանի վրայ կը վիճէին: Թէպէտև յայտնի էր իրեն նոցա վիճաբանութեան պատճառը, բայց յատկապէս կը հարցունէ, որպէս զի նոքա խոստովանին. ինչպէս որ իրօք դիւահարին հայրը՝ որդւոյն հիւանդութիւնն ու կրած չարչարանքը պատմելով՝ ծնկան վրայ եկած կաղաչէ զայն որ գթայ իրեն:

Յիսուս կը սաստէ նոցա և կը հրամայէ բերել հիւանդը առ ինքն. երբ որ հրամանը կը կատարեն, դիւահարը իսկոյն սաստիկ ցնցուելով գետնում կսկսի թաւալիլ և փրփրիլ: Թէպէտև Յիսուս գիտէր թէ նա որքա՞ն ժամանակէ ի վեր այսպիսի մի ախտի ենթակայ կը գտնուի, այսու հանդերձ իւր գօրութիւնը բոլորին ցոյց տալու համար՝ կը հարցնէ նորա հօրը թէ ո՞րչափ ժամանակ է որ սոյն հիւանդութիւնն ունի. որուն կը պատասխանէ հայրը թէ ի մանկութենէ, և կը յաւելու որ «եթէ կարող ես, օգնէ մեզ գթութեամբ:»

Յիրաւի այդ խօսքով նա իւր հաւատքի թերութիւնը ցոյց կուտար, սակայն Յիսուս առանց յայտնապէս յանդիմանելու զայն կսկէ. «Ամէն ինչ կարելի է այնմ, որ կը հաւատայ»: Հայրը ճանաչելով իւր յանցանքը, իսկոյն կաղաղակէ. «Կը հաւատամ, Տէր, ներէ անհաւատութեանս», նորէն աղաչելով որ օգնէ իրեն գթածաբար. և որովհետև բազում ժողովուրդ հաւաքուած էր այնտեղ, Յիսուս տեսնելով այդ խուռն բազմութիւնը, կը

հրամայէ դևին ասելով. «Ես կը հրամայեմ քեզ ելնել այդ մարդէն, և այլ ևս չը մտնել նորա մէջ»։ սոյն հրամանին վրայ դևը իսկոյն ելաւ, բայց այն աստիճան սարսեց պատանին, որ կարծուեցաւ թէ մեռաւ։ և Յիսուս նորա ձեռքէն բռնելով յարոյց և յանձնեց զայն հօրը։

Ա.յս հրաշքն ու մինչև այն ժամանակ Յիսուսի գործած հրաշքները նկատողութեան առնելով՝ բոլոր ժողովուրդը ահ ու զարմանքի մէջ մնաց, իսկ Յիսուս այնտեղ նորէն յայտնեց իւր աշակերտաց թէ ինքը մարդոց ձեռամբ պէտք է չարչարուի ու մեռնի և երրորդ օրում յարութիւն պիտի առնէ, որպէս զի իմանալով թէ ինքը կատարեալ Աստուած և կատարեալ մարդ է, երբ որ չարչարանօք մեռնելու լինի, իրենց տեսած հրաշքները մտաբերելով թոյլ չտան որ իրենց հաւատքը տկարանայ իւր վրայ։

Վասն զի, ինչպէս որ ամենակարող լինելով՝ կը հրաշագործէր, նմանապէս ողորմած լինելով՝ մարդոց փրկութեան համար խաչի վրայ չարչարանօք պիտի մեռնէր յօժարակամ։ Սակայն առաքեալները նորա խօսքը չըմբռնեցին, և հարցնելու ևս երկնչելով՝ աստիկ կը սրտմին։ Յետոյ երբ որ Յիսուս տուն եկաւ, նոքա առանձինն հարցուցին Յիսուսի թէ ինչո՞ւ համար իրենք չը կարացին վռոյիշեալ դիւահարէն հանել դևը։ նա կը պատասխանէ թէ իրենց թերհաւատութեան համար։

Երդարև այս պարագայում նոքա թերացած լինելով, կասէ նոցա որ «եթէ մանանեխի հատին չափ հաւատք ունենաք, երբ որ լերան ասելու լինիք «այստեղէն մի ուրիշ տեղ դնա՛», իսկոյն պիտի տեղափոխուի, և ձեզ համար անհնարին բան չը պիտի լինի։»

Յիսուս այս կերպով հրաշագործելու համար հարկ եղած հաւատքի զօրութիւնը առաքելոց յայտնելէ ղինի, նոյնպէս նոցա իմացնելու համար թէ սատանայի վրայ իշխելու և նորա զօրութեան յաղթելու դործը՝ աղօթից ու ծոմապահութեան կը կարօտի, կը յաւելու ասելով թէ «Ա.յս կերպ սատանան՝ մի միայն աղօթքով ու ծոմապահութեամբ կելնէ[1]։»

Եւ երբ որ այնտեղէն Կափառնայում քաղաքն եկան, երկդրամեան արոց հաւաքողները Պետրոսին կը հարցնեն թէ «Ձեր վարդապետը տուրքը չի՞ հատուցաներ»։ նա կը պատասխանէ թէ «Ա.յո՝ կը հատուցանէ։» Սակայն բոլորին խորհուրդը Յիսուսին յայտնի լինելով, տունը գալէն ղինի,

---

1. Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխ շուրջ զնոքօք, և զդպիրսն, զի վիճէին ընդ նոսա։ Եւ վազվազակի ամենայն ժողովուրդն երբև տեսին զնա, զարմացան, և ընդ առաջ ընթացեալ՝ ողջոյն տային նմա։ Եւ եհարց զնոսա, թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա։ Մարկ. Թ. 13. մինչև 28 համար։—Մատթ. ԺԷ. 14. —Ղուկ. Թ. 37.

տակաւին Պետրոս իրեն հարցում չուղղած՝ Յիսուս ինքը կը հարցնէ Պետրոսին. «Ի՞նչ է կարծիքդ. Թագաւորները որոնցմէ՞ հարկ կառնեն. իրենց որդիներէ՞ն թէ օտարներէն». երբ որ նա կը պատասխանէ թէ օտարներէն կառնեն, յայնժամ Յիսուս կասէ. «Ուրեմն որդիքը ազատ են հարկէ. բայց զայթակղութիւն չը տալու համար նոցա, ծովը գնալով կարթը ձգէ և առաջին հանդիպած ձկան բերանը բանալով՝ չորս դրամ արծաթ պիտի գտնես, զայն առ և տուր նոցա իմ ու քո համար[1]:»

Ապրդարև Պետրոս՝ Յիսուսի հրամանին համեմատ հարկի խնդիրը կարգադրեց, բայց նոյն օրուամ առաքեալք Յիսուսի կը հարցնեն թէ «Մեր միջև ո՞վ պէտք է ջեջ լինի երկնից Թագաւորութեան մէջ[2]:»

---

1. Իբրև եկին նոքա ի Կափառնայում, մատեան, որք զերկդրամեանն պահանջէին, առ Պետրոս՝ և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն. և ասէ, այո՛. Մատթ. ԺԷ. 23. մինչև 26 համար.

2. Ցայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս՝ և ասեն. Ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան երկնից. Մատթ. ԺԸ. 1.

Հարցում Լ.

Առաքեալք ինչո՞ւ հարցուցին թէ իրենց մէջ ո՞վ է մեծ.

Պաս. Իրենց սրտի նախանձը չը յայտնելու համար: Որովհետև Յիսուս՝ Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս առաքեալները միայն իրեն հետ Թաբոր լեռը տարաւ, և մանաւանդ որ Պետրոսին երանի տալով հանդերձ, անոր հրամայեց որ երկդրամեանը տայ՝ իրեն և նորա համար. վասնորոյ միւս աշակերտք սկսան նախանձիլ, քանի որ նոքա դեռ ամէն կերպով կատարելութիւն ստացած չէին. սակայն այսպիսի անպատշաճ մի խորհուրդ յղանալն էլ յայտնել չուզելով, յայտնապէս կը հարցունեն թէ իրենց մէջ ո՞վ է մեծ. քանզի այս կէսը այն աստիճան յուզած էր նոցա միտքը, որ մինչև իսկ ճանապարհում միմեանց հետ կը վիճէին այդ մասին:

Ապրդ՝ առաքելոց սոյն խորհուրդը ծանօթ լինելով Յիսուսին, հարցուց նոցա թէ՝ «Ի՞նչ բանի վրայ կը վիճէին ճանապարհում». և թէպէտ նոքա առ ամօթոյ լռութիւն պահեցին, բայց Յիսուս բոլորը իւր մօտ կոչելով՝ կասէ նոցա. «Եթէ մէկը կուզէ առաջին լինել, թող ամենէն փոքրը և ամենուն սպասաւորը լինի. և մի ապրուս օրինակաւ խոնարհութիւն սորվեցնելու համար՝ փոքրիկ մանուկ մի գիրկն առնելով կասէ նոցա. «Եթէ այս

մանկան պես չը լինիք, չէք կարող Աստուծոյ արքայութիւնը մտնել. ով որ այս երեխայի նման խոնարհ կը լինի, նա է մեծ արքայութեան մէջ։»

Վասն զի, ինչպէս որ երախայն ամէնքը իրմէ մեծ համարելով՝ այլոց իշխանութեան ներքոյ մըտնել հակառակ ու յօժար է, մանաւանդ թէ փառքի ու մեծութեան ցանկութիւն չունենալով՝ բնաւ նախանձու ոգին չկրեր, եթէ պինքը վշտացնեն էլ՝ հոգ չաներ, եթէ պինքը պատուեն՝ չհպարտանար, երբէք չար խորհուրդ չունենալով՝ միշտ իւր սիրտը մաքուր է, նմանապէս ով որ կը կամի Աստուծոյ արքայութիւնը ժառանգել, պարտի պինքը ամէնուն ստորադասել և երբէք մարմնաւոր փառաց ու մեծութեան հետամուտ չը լինել, խոնարհութեամբ միշտ աստուածային կամաց հնազանդիլ։ Սոյդ է որ մանկան այդ վիճակը բնական լինելով՝ առաքինութիւն չը սեպուիր, բայց չափահաս և ապաստակամ մարդիկ՝ մինչև որ այդպէս չը վարուին, կարելի չէ որ երկնից թագաւորութեան արժանի լինին, քանի որ առաքինութենէ զուրկ են։

Վերոյիշեալ առաքինութիւնք այն աստիճան աստուածահաճոյ և ընդունելի են, որ մի մարդ եթէ Յիսուսի սիրոյն համար այդ առաքինի մարդոց մէկը պատուով ընդունի, նոյն ինքն Յիսուսը ընդունած և պատուած կը լինի. սորա հակառակն՝ յայտնելու համար թէ ո՛ր աստիճան ծանր պատժոյ պիտի ենթարկուի այն մարդը, որ այդ-

պիսի առաքինեաց մէկուն դայթակղութեան պատճառ կը լինի, վճռաբար կը յայտարարէ թէ՝ «Լաւագոյն է այն մարդուն համար իւր վզէն իշոյ երկանաքար մի կախել և ընկղմիլ ծովի խորքերում»։ այսպէս կը վճռէ, որպէս զի ամէն մարդ զարհուրի և դայթակղութիւն պատճառող ոևէ գործէ հեռի կենայ։

Յիրաւի աշխարհս դայթակղութենէ ազատ չէ, բայց Յիսուս պատճառ եղող անձին վայ տալով կասէ թէ՝ «Եթէ ձեռքդ, ոտքդ և կամ աչքդ դայթակղութեանդ պատճառ կը լինի, կարէ գցնոնք և վրայէդ ի բաց նետէ. քանզի լաւագոյն է քեզ մի ձեռնով, մի ոտնով և մի աչքով արքայութիւն գնալ՝ քան թէ երկու ձեռքով, երկու ոտքով և երկու աչքով դժոխք գնալ, որուն որդը չի մեռնիր ու կրակը չը մարիր։»

Սոյն խօսքը ի հարկէ մարմնոյ ձեռաց, ոտից և աչաց համար հասկնալու չէ, այլ՝ եթէ մարդս ունենայ նոցա նման սիրելիներ ու բարեկամներ, որոնք դայթակղութեան և մեղաց պատճառ կը լինին իրեն, պարտի ի բաց մերժել այնպիսիները և հեռացնել իրմէ. որպէս զի նոցա պատճառաւ չը դատապարտուի յաւիտենական տանջանաց. (այս մասին տես նաև ԻԹ-րդ հարցումը)։

Արդարև այլոց չար օրինակ և դայթակղութեան պատճառ տալը այն աստիճան մեծ մեղք է, որ լաւագոյն համարուեցաւ ծովուն մէջ ընկղմիլ

ու անհետանալ, կամ թէ ձեռք ու ոտք կոտրել, քան թէ այդ մեղքէն յառաջ եկած պատիժը կրել: Ա. յս պատճառաւ դժոխոց կրակը՝ աղի, և դայթակղութեան պատճառ եղողները զոհի նմանցընելով կասէ. «Ամէն ինչ կրակով ու ամէն զոհ աղով կարելի է (համեմել) աղել[1]. իսկ եթէ աղը անհամանայ, ինչո՞վ այլ ևս պէտք է աղել». եթէ ոչ, պէտք է ուրեմն յաւիտենական կրակով այրին (աղուին) այնպիսիք, որոնք Աստուծոյ հրամանին հակառակ գործելով՝ նորա բարկութիւնը կը հրաւիրեն իրենց վրայ:

Ա. յս մասին լաւ խորհէ, ընթերցող, և ջանա որ չը սխալիս և սխալանայ հետևանօք պատժոյ չենթարկուիս. որովհետև ինչպէս որ աղը վէրքի վրայ դրուած ժամանակ, թէև ցաւ և կսկիծ կը պատճառէ, բայց նաև չորցնելով կը լաւացնէ զայն, և երբ կերակուրի մէջ կը դնեն, համ կուտայ ու թոյլ չատը որ հոտի, այսպէս էլ աշխարհի փորձութիւնք և վիշտք թէպէտև մարդուս ծանր կը թուին, բայց միևնոյն ժամանակ չար գործերէ հեռու կը պահեն, քանի որ մարմնով ցաւակիր մարդն մեղքէ զերծ կը մնայ[2]:

1. Եկն ի Կափառնայում, և իբրև եմուտ ի տուն՝ հարցանէր զնոսա. զի՞նչ վիճէիք զճանապարհայն ընդ միմեանս: Եւ նոքա լուռ լինէին . . . Մարկ. Թ. 32—48.—Մատթ. ԻԸ. 2.—Ղուկ. Թ. 46.

2. Որ չարչարի մարմնով, դադարէ ի մեղաց. Ա. Կաթ. Պետ Դ. 1.

Բայց յայտնէ մարդուս կրած նեղութիւնք՝ ինքնին որքան էլ ծանր լինին, կը թեթևանան, երբ Աստուծոյ սիրոյն համար համբերէ. այս պատճառաւ նա՝ որ աշխարհի նեղութեանց յօժարակամ ու սիրով կը հանդուրժէ, ո՛չ միայն հոգևորապէս կը մխիթարուի, այլ նաև ի հանդերձելումն արքայութեան փառաց կարժանանայ[1]: Ընդհակառակն, մարդուս կրած նեղութիւնը՝ ինքնին որքան էլ թեթև լինի, երբ չը համբերելով՝ վիճակէն շարունակ դժգոհ լինի, ծանր կերևնայ իրեն, և այդպիսի մարդը երկրիս վրայ մխիթարութիւն չը դանելէ զատ, հանդերձեալ կեանքում ևս պատժոյ կարժանանայ:

Եւ որովհետև Յիսուս յառաջադոյն առաքեալները ազի նմանցուցած էր, որպէս զի իրենց քարոզութեամբ և առաքինութեամբ համ տան աշխարհի (տես ԻԳ-րդ հարցում), այս անգամ նորէն կը յայտնէ զայն, որպէս զի առաքինութեան աղը իրենց սրտերում պահելով, առանց երկրային մեծութեան հետամուտ լինելու՝ միմեանց հետ սիրով ապրին[2]:

Թէպէտև Յիսուս արդէն յայտնած էր առա-

1. Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ. Գործ. ԺԴ. 21.

2. Կալարուք յանձինս ձեր զաղն. և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս. Մարկ. Թ. 49.

քելոց թէ կարելի չէ Աստուծոյ աբքայութիւնը մտնել առանց մանկան պէս մաքուր սիրտ ու խոնարհ ընթացք ունենալու, և թէ նոցա դայթակղութիւն տուող մարդը՝ հանդերձեալ աշխարհում պէտք է սաստկապէս պատժուի, այսու հանդերձ նորին կաղդարարէ զգուշանալ որ այնպիսի փոքրիկներէն մին արհամարհանօք չանդոանեն. որովհետև նոցա հրեշտակները միշտ Աստուծոյ երեսը կը տեսանեն երկնքում, և հետևաբար այնպիսի արհամարհոտք կարող չեն անպատիժ մնալ[1]:

Ուրեմն խիստ շատ զգուշութիւն և երկիւղ պէտք է ունենաս որ մի գուցէ ո և է աղքատ, տոտր և խոնարհ վիճակի տէր մարդու վրայ վատ աչքով նայիս, քանի որ նոցա հրեշտակները միշտ Աստուծոյ ներկայութեանը դանուելով, իրենց պաշտպանութեան ներքև եղած անձանց բարիք անողներուն համար բարիք կը խնդրեն, իսկ նոցա հետ վատ և չարաչար վարուողներուն համար պատիժ կը հայցեն փոխարէն: Արդարև Յիսուս բոլոր մարդոց փրկութեան համար եկած լինելով[2], յայտ է թէ աղքատ և աննշան մարդոց նկատմամբ

1. Զդոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է. Մատթ. ԺԸ. 10.

2. Եկն որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալսն. Մատթ. ԺԸ. 11.

ցոյց տրուած արհամարհանք՝ պատժոյ արժանի կը համարուին:

Այս մասին մի առակ ևս յառաջ բերելով կասէ. «Եթէ մի մարդ հարիւր ոչխար ունենայ և անոնցմէ մին կորսուի, ո՞չ ապաքէն իննսունն և ինը հատը լերան վրայ թողլով՝ մոլորած ոչխարը գտնելու կերթայ, և երբ կը գտնէ, բոլորէն աւելի նորա վրայ կուրախանայ. այսպէս էլ Աստուած երբէք չկամիր որ այնպիսի փոքրիկներէն մին կորսուի[1]:» Ցայտ է թէ ո՛վ որ նոցա միոյն կորստեան պատճառ կը լինի, Աստուծոյ որոշ և մարդասէր կամաց ներհակ կը գործէ. վասնորոյ ի հանդերձեալն պէտք է անպատճառ պատժուի:

Արդ՝ երբ որ առաքեալք այսպիսի պատուէրներ լսեցին, մտաբերեցին թէ իրենք արդիւած էին յառաջագոյն մի մարդու, որ Յիսուսի անուամբ դևեր կը հանէր հրաշագործելով, բայց իրենց հետ չէր շրջեր. ուստի Յովհաննէս կասկածելով թէ մի՛ գուցէ այս պարագայում իրենք հրամանի ներհակ գործած լինին, Յիսուսի կը յայտնէ զայն, որուն կը պատասխանէ Տէրը թէ՝ «Մի՛ արգելուք նա՝ որ թշնամական դիտաւորութիւն չունի ձեր

1. Զիարդ թուի ձեզ, եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար՝ և մոլորիցի մի ի նոցանէ, ո՞չ թողուցու զիննսունն զինն ոչխարան ի լերինս, և երթիցէ խնդրիցէ զմոլորեալն. Մատթ. ԺԸ. 12. մինչև 14 համար.

դէմ, արդէն ձեր կողմն է[1]։»

Այս կէտը Յիսուսի մեծ զօրութիւնն ու դիմութիւնը ցոյց կուտայ. վասն զի ո՛չ միայն առաքելոց՝ այլ և ուրիշներուն էլ հրաշագործելու կարողութիւն չնորհեց, որպէս զի ամէնքը ողորմութեան հաղորդ լինելով՝ Աստուծոյ սուրբ անունը փառաւորեն. այս պատճառաւ հրամայեց որ չարգիլեն այնպիսիքը, որոնք իւր անուամբ հրաշք գործելով այլոց բարիք կանեն։ Քանզի ինքը՝ իւր բազում ողորմութեամբ բոլոր մարդկան բարերարելու եկած լինելով, նորա սիրոյն համար ուրիշին բարերարութիւն անել՝ կը նշանակէ իրեն (Յիսուսի) բարիք անել[2], վասնորոյ մեծ վարձատրութեան կարժանանայ։

Սակայն մարդս ո՛չ թէ միայն նիւթական բարիք հասցնել պարտական է այլոց, այլ նաև հոգևոր բարիք. զոր օրինակ՝ մեղաւորը իւր չար ճանապարհէն ետ դարձնելու առաւել պարտականութիւն ունինք. ուստի Յիսուս նորին կասէ. «Եթէ եղբայրդ կը մեղանչէ քեզ դէմ, դու և նա առան-

1. Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ. վարդապետ, տեսաք զոմն՝ որ յանուն քո դևս հանէր, և արգելաք զնա. զի ո՛չ չբզնի ընդ մեզ։ Ասէ ցնոսա Յիսուս. մի՛ արգելուք. զի որ ո՛չն է ձեր թշնամի, ի ձեր կողմն է. Ղուկ. Թ. 49.

2. Որովհետև արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք. Մատթ. ԻԵ. 40.

ձին եղած ժամանակ յանդիմանէ զայն. եթէ լսեց քեզ, ահա շահեցար եղբայրդ. և եթէ չը լսեց քեզ, մի կամ երկու հոգի ևս առ քու հետ. որովհետև երկու կամ երեք անձանց վկայութեամբ ամէն բնչ կը հաստատուի։ Եւ եթէ նոցա ևս չը լսէ, եկեղեցւոյն իմացուր. թէ որ եկեղեցւոյն ևս անլսող ու անհնազանդ գտնուի, թո՛ղ նա լինի քեզ համար իբր մի հեթանոս և մաքսաւոր[1]։»

Լաւ միտ դիր. Յիսուսի աշակերտ լինելը հոգևոր սիրոյ մէջ կը կայանայ[2]. ուստի նա կը հրամայէ զրկեալին որ ջանայ իւր հակառակորդը ուղղութեան բերելու. վասն զի, եթէ մի մարդ ուրիշը զրկէ, անկէ ներողութիւն խնդրելու պարտական լինելով, երբ որ ներողութիւն խնդրէ, առաքինութիւնը չը համարուիր. այլ միայն իւր պարտքը կատարած կը լինի. բայց թշնամւոյն յանցանաց ներելով՝ նորա ուղղութեան ու դարձին համար անկեղծօրէն աշխատիլը՝ մեծ առաքինութիւն է։

Սակայն, այս պարագայում յանցաւորին անունը հասարակաց առջև չը կոտրելու համար, Յիսուս կը հրամայէ որ նախ միայնակ ու առանձին խօսի յանցաւորին. եթէ նա չը համոզուեցաւ,

1. Եթէ մեղանչէ քեզ եղբայրդ քո՝ երթ յանդիմանեա զնա՝ յօրժամ դու և նա միայն իցէք. Մատթ. ԺԸ. 15. մինչև 17 համար։

2. Ցայսմ դիտասցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս. Յովհ. ԺԳ. 35.

մէկ երկու անձանց հետ թողլ դնայ. և եթէ նոքին անհամոզելի ծնայ, այն ժամանակ պարտի եկեղեցւոյն յիմացնել, որպէս զի առաջնորդը—հոգևոր իշխանը—նզովքով արտաքսէ զայն ժողովրդեան միջէն, մինչև որ ուղղուի. ահա այս պատճառաւ առաքելոց կասէ. «Երկրի վրայ ձեր կապածը՝ երկնքում էս կապուած լինի, և ձեր քակածը՝ քակուած լինի երկնքում [1]։»

Արդարև այն մարդը՝ որ իւր մեղաց վրայ ղղջալով չապաշխարեր, հոգևոր պատժոյ՝ այն է նզովքի կամ բանադրանաց կարժանանայ և իրրև վիրաւոր ու փտած անդամ կարուելով դուրս կը ձգուի եկեղեցիէն, որպէս զի ուրիշներուն էս նորա ախտը չը փոխանցուի։ Ա.յս պատճառաւ Յիսուս խոստացաւ [2] Թէ՝ ուր որ երկու անձինք միաբանին և ինչ որ Աստուծմէ խնդրեն, նոցա խնդիրքը կատարուի, և մանաւանդ Թէ ինքն էլ նոցա մէջ ներկայ պիտի լինի, որպէս զի նզովեալ անձը՝ գիտնալով որ ինքը սուրբ եկեղեցում միաբանական ձայնիւ մատուցուած աղօթից հաղորդ չէ, քանի որ իւր մեղաց պատճառաւ ժողովրդէն զատուած է, ղղջայ և ապաշխարէ։

1. Ամէն ասեմ ձեզ. զոր կապեցէք յերկրի՝ եղեցէ կապեալ յերկինս. և զոր արձակեցէք յերկրի՝ եղեցէ արձակեալ յերկինս. Մատթ. ԺԸ. 18.

2. Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա. Մատթ. ԺԸ. 20.

Երբ Յիսուս այսպէս կը խօսէր, Պետրոս առաքեալ հարցուց. «Տէր, եթէ եղբայրս ինձ դէմ մեղանչէ քանի՞ անգամ ներեմ իրեն. արդեօք եօթն անգամ». նա կը պատասխանէ. «Ո՛չ Թէ եօթը, այլ եօթանասուն անգամ եօթը [1]։» Այն պատասխանէն կիմացուի Թէ եղբօր յանցանաց ներելու պարտականութիւնը չափի ու սահմանի ներքոյ չը մնաներ, այլ քանի անգամ որ մեղանչէ, դարձեալ պարտականութիւն կայ ներելու անպայման կերպով։

Յիսուս մի առակ յառաջ բերելով կասէ. «Թագաւոր մի իւր ծառայից հետ հաշիւ տեսած ժամանակ՝ յայտնուեցաւ որ մի ծառայն սաստիկ հազար քսակ իրեն պարտական լինելով հանդերձ՝ հատուցանելու կարողութիւն չունէր. Տէրը հրամայեց որ Թէ այդ մարդը և Թէ նորա կինն ու զաւակները ու ինչ որ ունի, ծախելով իւր պահանջը ձեռք բերեն. յիշեալ ծառայն երկրպագելով աղաչեց զայն՝ որ իրեն ժամանակ տայ ամբողջ պարտքը հատուցանելու. Թագաւորը նորա վրայ գթալով՝ ամբողջ պարտքն էլ շնորհեց իրեն։

Բայց դու արի տես յիշեալ պարտապան ծառային չարութիւնը. վասն զի երբ մի անդամ

1. Յայնժամ մատեաւ առ նա Պետրոս և ասէ. Տէր քանի՞ցս անդամ եթէ մեղեցի ինձ եղբայր իմ, և Թողից նմա. մինչև եօթն անգամ։ Ասէ ցնա Յիսուս. ո՛չ ասեմ քեզ՝ Թէ մինչև եօթն անգամ, այլ մինչև եօթանասանեկի եօթն. Մատթ. ԺԸ. 21.

աղաչելով ազատուեցաւ տասն հազար քսակ պարտքէն, դուրս ելնելով իրեն ծառայակիցներէն մէկը գտաւ, յորմէ հարիւր դահեկան պահանջ ունէր, և զոր բռնելով ամենայն խստութեամբ կը պահանջէ որ ունեցած պարտքն հատուցանէ. և թէպէտ նա աղաչանօք այդ չար ծառայի ոտիցը վար ընկնելով կը խնդրէ որ ժամանակ տայ իրեն պարտքը հատուցանելու համար, սակայն սա չը կենայնելով բանտարկել կուտայ զայն, մինչև որ պարտքը հատուցանէ[1]։» Ուրեմն Աստուծմէ ներողութիւն ստանալու համար, ո՛վ մարդ, պարտական ես ամէն կերպով նախ քու եղբօրդ յանցանաց ու պակասութեանց ներել. այս է այն միակ և անհրաժեշտ պայմանը, զոր պարտիս սիրով ու յօժարութեամբ յանձն առնուլ և ուրախութեամբ կատարել, եթէ սրտի մտօք քու սեփական ազատութեանդ կը ցանկաս։

Ա. յնուհետև Յիսուս մտադրեց գնալ դէպի Երուսաղէմ և արդէն մօտեցած էր ժամանակը, յորում պէտք է խաչի վրայ մեռնելով յարութիւն առնէր և համբառնար յերկինս. ուստի կամեցաւ նախ Յորդանան գետի դիմացի կողմն անցնիլ և անդ դտնուող ժողովրդեան քարոզել։ Ձանա-

1. Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ հաշիւ առնուլ ի մէջ ծառայից իւրոց. Մատթ. ԺԸ. 23. մինչև 35. համար.

պարհին վրայ Սամարիոյ դիւղերէն միոյն պատահմունք կը դրկէ որ իջևան և բոլոր հարկ եղածը պատրաստեն. այո՛, ինքը ո՛չ մի բանի կարօտ չէր, բայց առաքեալք կարօտ էին։ Երբ այդ դիւղի բնակիչք մերժեցին ընդունել զինքը, Յակոբոս և Յովհաննէս կասեն Յիսուսի. «Եթէ կամիս, ասենք որ երկինքէն կրակ իջնելով այդ մարդիկը բնաջինջ անէ։»

Յիրաւի նոքա Յիսուսի պատիւը պահպանելու իղձն ունէին, և նորա անուամբ ինչ որ խնդրէին, անպատճառ կատարուելուն վրայ հաւատք ունենալով՝ այսպիսի մի առաջարկ ներկայացուցին Յիսուսի, մի և նոյն ժամանակ դործադրութիւնը թողլով նորա կամաց. բայց նա չընդունելով կը յանդիմանէ իսկ այդ նախանձայոյզ աշակերտները։ Ստոյգ է որ՝ Յիսուսը մերժող անձինքը իրաւամբ պատժոյ արժանի էին, սակայն նա եկած էր ո՛չ թէ մարդոց հոգիները կորնչեցնելու, այլ փրկելու և ապրեցնելու համար. ուստի առանց պատժելու զանոնք՝ ուրիշ դիւղ կերթայ առաքելոց հետ ի միասին[1]։

Երբ որ ճանապարհ կը գնային, մի մարդ Յի-

1. Եւ եղև ի կատարել աւուրց վերանալոյ նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ յԵրուսաղէմ։ Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց, և իբրև չոքան՝ մտին ի դիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ նմա. Ղուկ. Թ. 51. մինչև 56 համար.

սուսի եաւէն գնալու բաղձանօք կասէ. «Հրամանս տուր ինձ նախ գնալ և ընտանեացս հրաժարականս ողջոյն տալ[1]»։ բայց Յիսուս հրաման չտալ անոր տունը գնալու համար։

Հպցո՛ Լ.։

Յիսուս ինչու՞ համար հրաման չտուաւ վերոյիշեալ մարդուն իր տունը գնալու եւ ընտանիքէն հրաժարելու համար.

Պապ. Որպէս զի ընտանիքն ու աշխարհականքը նորա միաքը փոխելով՝ հոգևոր ճանապարհէն զայն եւս չկեցնեն։ Ինչպէս որ (տես ԻՉ-րդ Հարցում) մի անձ՝ իւր հայրը Թաղելու համար հրաման խնդրած՝ և մի և նոյն պատճառաւ Յիսուս հրաման տալ զլացած էր անոր։ Ուրեմն ով որ կը կամի Յիսուսի աշակերտիլ, Թող մոքէն հանէ հօր, մօր, կնոջ, զաւկի և աշխարհական սէրն։ Յիրաւի պարտականութիւն կայ զանոնք սիրելու, և եթէ կարօտ են, նոցա օգնելու, բայց նոցա պատճառաւ հոգի կորսնցնել օրինաւոր չէ. ուստի Յիսուս կասէ առաքելոց. «Ո՛չ ոք մանը կամ արօրը ձեռք առնելէ յետոյ կը դառնայ եւս նայելու թէ Աստուծոյ արքայութիւնը կը յաջողի[1]։»

Արդարև ինչպէս որ երկրագործը միանգամ երկիրը հերկելու սկսելէ յետոյ, այլ ևս առանց եւս նայելու թէ կարո՞ղ է արդեօք սկսածը իր ցլուխ հանել, կը ջանայ ամենայն ջօրութեամբ իր պարտքը կատարել, նմանապէս Յիսուսի եաւէն գնալ կամեցողը՝ մարմնաւոր իրաց սէրը Թողլով, միշտ առաքինութիւն գործելու պէտք է աշխատի, որպէս զի Աստուծոյ շնորհիւ ու ողորմութեամբ կարողանայ նպատակին հասնիլ։

Յիսուս, որ Սամարիոյ գիւղերէն միոյն մէջ կը գտնուէր (տես Լ.Չ-րդ Հարցում), անտի եկնելով Յորդանանու գիմացի կողմն անցած ժամանակ՝ խուռն բազմութիւն ժողովրդեան նորա եաւէն սկսան գնալ, և նա ըստ իւր սովորութեան քարոզելով, նոցա բոլոր հիւանդները բժշկեց[2]։ Թէպէտև ժողովուրդը շատ գոհ և ուրախ էր այս մասին, բայց փարիսեցիք, որոնք միշտ կը նախանձէին նորա վրայ, այս անգամ ևս գայն փորձելու

1. Աստ ցնորա Ցիսուս. ո՛չ ոք արկանէ զձեռն ցմտաճոյ, և հայեցի յետս, եթէ յաջողեալ եղէ արքայութեան Աստուծոյ. Ղուկ. Թ. 62.

2. Եւ եղև երբև կատարեաց զբանս զայսոսիկ, փոխեցաւ ի Գալիլէէ՝ և եկն ի սահմանս Հրէաստանի՝ յանկոյս Յորդանանու։ Եւ գնացին զհետ ժողովուրդք բազումք՝ և բժշկեաց զնոսա. Մատթ. ԺԹ. 1.—Մարկ. Ժ. 1.

1. Աստ և այլ ոմն. եկից զկնի քո Տէր, բայց նախ հրաման տուր ինձ հրաժարիլ ի տանէ իմմէ. Ղուկ. Թ. 61.

նպատակաւ կը հարցնեն թէ «Արդեօք ո՛ւ և է վճռակաւ բանի համար արժանի է կնոջ արձակման թուղթ տալ[1]». որպէս զի մի պատրուակ դանելով կարողանան բամբասել զայն ժողովրդեան առջեւ:

Որովհետեւ, եթէ ասէ ոչ՝ նա է, շատերը՝ որ ապօրէն վարք ու բարք ունէին, Յիսուսի այդ պատասխանը պատրուակ բռնելով, իրենց կիները արձակել պիտի ուզէին. ոչով նոքա զայն պէտք է բամբասէին թէ ժողովրդեան յուզման առիթ տուող բաներ կուսուցանէ. իսկ եթէ ասէ այո՛ն չէ, այն ժամանակ պէտք է ասէին թէ Մովսէսի հակառակ կը սորվեցնէ: Յիսուս՝ որ նոցա միաքն ու դիտաւորութիւնը գիտէր, կը հարցնէ նոցա թէ Մովսէս ի՞նչ պատուէր տուած է այդ մասին. նոքա կը պատասխանեն որ նա կը պատուիրէ արձակման թուղթ տալ և արձակել:

Յիրաւի հրէից անգթութեան նայելով՝ Մովսէս կին արձակելու հրաման տուած էր, որպէս զի զանոնք չը մեռցնեն. բայց ո՛չ թէ ուրիշ ո և է պատճառաւ, այլ միայն պատուոյ դէմ անհաւատարմութիւն տեսնուած պարագայում (Ր. Օրին. ԻԴ.). իսկ փարիսեցիք նենգութեամբ հարցուցին թէ « և է պատճառ արժանի է: Թէև նոքա յան-

1. Մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա և ասէին. եթէ արժան լցէ . . . Մատթ. ԺԹ. 3. —Մարկ. Ժ. 3.

դիմանութեան արժանի էին այս մասին, բայց Յիսուս առանց յանդիմանելու զանոնք՝ կը յայտնէ թէ Մովսէս այդ հրամանը տուաւ նոցա խստասրտութեան համար. իսկ կին արձակելը Աստուծոյ հրամանին հակառակ է. և կը վճռէ թէ՝ «Ով որ իւր կինը արձակելով ուրիշը կառնու, շնութիւն կը գործէ:» Փարիսեցիք սոյն պատասխանը լսելով լռեցին, բայց առաքեալք այս մասին տան մէջ առանձինն նորէն հարցուցին. և նա դարձեալ հաստատեց թէ՝ «Ինչպէս որ այրը՝ երբ իւր կինը Թողով ուրիշը առնէ՝ կը շնայ, նոյնպէս և կինը՝ եթէ այր մարդէն զատուելով ուրիշի գնայ, շնութիւն կը գործէ[1]». (ահա ԻԴ-րդ հարցում): Առաքեալք սոյն խօսքերը լսելով կասեն. «եթէ առն ու կնոջ միջև այսպիսի խնդիր կայ, լաւ է չամուսնանալ:»

Յիրաւի որքան ևս դժուարութիւն կայ ամուսնական լուծը կրելու համար, բայց մի և նոյն ժամանակ աշխարհէ բոլորովին հրաժարելու ևս ամէն մարդ կարող չը լինելուն համար, իւրաքանչիւրը իւր ապատ կամաց Թողլով, Յիսուս խրատ կուտայ թէ՝ «Նա որ կարող է, Թող համբերէ: Որովհետև կայ ներքինի, որ ի մօրէ այնպէս ծնած է. կայ՝ որ մարդոց ձեռամբ ներքինի եղած է. և ներքինի ևս կայ, որ կամաւ իւր անձը զապելով,

1. Եւ ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին զնա . . . Մարկ. Ժ. 10.

կատարեալ սիրով Աստուծոյ ծառայելու բաղձանօք յանձն առած է համբերել[1]։»

Երբ որ Յիսուս այսպէս կը խօսէր, ունկնդիրները կը բերուին առ նա, որպէս զի օրհնէ պանդոկը· բայց առաքեալք արգելուլ կուզուին այնպիսիքը, Յիսուսի նեղութիւն չը պատճառելու դիտաւորութեամբ· իսկ նա յանդիմանական եղանակաւ կը հրամայէ չարգիլել· «Որովհետև, կասէ, երկնից թագաւորութիւնը այդպիսիներուն կը պատկանի»· ապա զանոնք դիրկն առնելով օրհնելէ զատ՝ նորէն կը վճռէ թէ (տես 1.Ջ-րդ հարցում) մանկան պէս անմեղ, մաքրասիրտ և խոնարհամիտ չեղող մարդն կարող չէ Աստուծոյ արքայութիւնը ժառանգել[2]։

Յիսուս այնտեղէն մեկնելու ժամանակ՝ ձանապարհին նորա առջև ելաւ մի շատ հարուստ երիտասարդ, որ ի մանկութենէ օրինաց բոլոր պատուէրները անթերի կատարած էր, և որ հոգևոր

---

1. Ասեն ցնա աշակերտքն իւր· եթէ այդպէս լինչ մնաս նցե ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ· Մատթ. ԺԹ. 10—12.

2. Ցայնժամ մատուցին առ նա մանկտի, զի ձեռն դնիցէ և վերայ նոցա և աղօթս արասցէ. և աշակերտքն սաստէին նոցա։ Ասէ Ցիսուս. Թոյլ տուք մանկտւոյդ՝ և մի արգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից Մատթ. ԺԹ. 13.—Մարկ. Ժ. 13.—Ղուկ ԺԸ. 15.

շաւղին մէջ աւելի կատարելութիւն ձեռք բերելու բաղձանօք՝ Յիսուսի առջև յարգանօք ծունր դնելէ զինի խոնարհաբար կը հարցնէ· «Ի՞նչ անեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։» Յիսուս նայելով երիտասարդին կը սիրէ զայն և կը պատասխանէ· «Մի բան միայն կը պակսի քեզ· եթէ կը ցանկաս կատարելութեան հասնիլ, ինչ որ ունիս, ծախէ և աղքատաց տուր, որպէս զի գանձդ երկընքում լինի· և խաչդ առած՝ եաւէտս ինկ։» Յիսուսի այդ խօսքը՝ նորա համար մեծ ողբմութիւն էր, բայց յիշեալը խիստ շատ հարուստ լինելուն, և մանաւանդ հարստութեան սէրը իւր սրտէն հանել չը համարձակելուն համար չախորժեցաւ և արամութեամբ թողուց դնաց։

Ա.յս մասին պարտինք մեծ ուշադրութեամբ ի նկատի առնուլ թէ այն մարդիկ, որոնք մարմնաւոր իրաց սէրը իրենց սրտէն չեն հաներ, ո՛րքան և ո՛ր աստիճան վտանգի ներքև կը ձգեն իրենց հոգին։ Զոր օրինակ յիշեալ երիտասարդը՝ հոգևոր կատարելութեան հասնելու բաղձանքն ունենալով հանդերձ, իւր հարստութեան վրայ յոյս դնելուն համար, մեծ արտմութեան ենթարկուեցաւ· այս պատճառաւ Յիսուս առաքելոց կասէ· «Դանդ դժուարին է Աստուծոյ արքայութիւնը մանել այն մարդոց համար, որք իրենց ընչից ու մարմնաւոր մեծութեան վրայ յոյս դրած են։»

Թէև առաքեալք այս խօսքին վրայ զարմանք

յայտնեցին, բայց Յիսուս նորէն կը կրկնէ թէ «Չուանը ասեղի ծակէն անցընելը աւելի դիւրին է՝ քան հարուստին Աստուծոյ արքայութիւնը մտնելը։» Ա՛յն ժամանակ առաքեալք աւելի զարմանալով, միմեանց հետ կսկսին խօսիլ թէ ուրեմն ո՞վ կարող է ապրիլ (փրկուիլ)։ Յիսուս նոցա նայելով կասէ. «Ինչ որ մարդոյ մօտ անհնարին է, Աստուծոյ մօտ ամէն բան կարելի է»։ և այս վճիռը կուտայ, որպէս զի չը յուսահատին[1]։

Ա՛յս մասին Թող չկարծուի թէ բոլոր հարուստ մարդիկ Աստուծոյ արքայութենէն պէտք է զրկուին. այլ միայն նորա, որոնք իրենց հարստութեան պատճառաւ մարմնաւոր զուարճութեանց հակամիտելով՝ կը հպարտանան և առաքինութիւն գործելու պարտաւորութենէ կը հեռանան։ Այլ՝ հարստութեանդ մեծութեան վրայ մի՛ ուրախանար, այլ վախցիր որ չմեղանչես. վասն զի ինչպէս աղքատութիւնը, նմանապէս հարստութիւնը մարդոյ համար մեծ փորձութիւն է։

Իրաւ է որ հարստութիւնն ու առաքինութիւնը դժուարաւ կը համաձայնին, բայց աստուածային շնորհաց ապդեցութեամբ այս բան կարելի է. ինչպէս որ շատ հարստութեան տէր մարդիկ

1. Եւ ընդ ելանել նորա անտի ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ընթացեալ ի ծունր ի՛ջանէր. Մարկ. Ժ԰. 17. մինչև 27 համար.—Մատթ. ԺԹ. 16.—Ղուկ. ԺԸ. 18.

Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու փափաքանօք առաքինութիւն գործելու ջանադիր եղան ամենայն խոնարհութեամբ, և այսպէս առ Աստուած ունեցած իրենց անթերի հնազանդութեամբ յաւիտենական կենաց արժանացան։

Մինչդեռ Յիսուս այսպէս կը վարդապետէր, Պետրոս առաքեալ կը հարցնէ. «Ահա մենք ամէն բան թողլով քու ետևէն եկանք. ի՞նչ պէտք է լինի մեզ»։ Յիսուս կը պատասխանէ թէ երբ որ ինքը յարութեան օրում մեծ փառքով դատաստանի գայ, նորա պիտի նստին աթոռի վրայ և ով որ իւր անուան համար թողած է տուն, եղբայր, քոյր, հայր կամ մայր, կին կամ զաւակ և կամ ագարակ, այս երկրում հարիւրապատիկ փոխարէնը ընդունելէ զատ՝ անվախճան կենաց ևս արժանի պիտի լինի. և մանաւանդ իւրաքանչիւրը՝ իւր սիրոյն, եռանդին և գործած առաքինութեան համեմատ վարձ պէտք է ստանայ. և ապա կը վճռէ ասելով. «Շատեր, որոնք առաջին էին, յետին պէտք է լինին. ինչպէս նաև շատեր, որոնք յետին էին, առաջին պէտք է լինին[1]։»

Աղդարև հոգևոր կատարելութեան հասնելու բաղձանօք, ոմանք մանկութեան, ոմանք երիտա-

1. Ցայժմամ պատասխանի եաս Պետրոս և ասէ ցնա. ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զքէն. արդ զի՞նչ լինիցի մեզ. Մատթ. ԺԹ. 27. մինչև 30 համար.

սարգութեան, և ուրիշներ ծերութեան ժամանակ առաքինութիւն դործելու կսկսին. բայց ո՛չ թէ ժամանակի քանակութեան նայելով վարձ կը տրուի, այլ իւրաքանչիւրի եռանդին ու ցոյց տուած հաւատարիմ սիրոյն մեծութեան համեմատ[1]:

Ինչպէս որ մի մարդ վարձով իւր այդին մշակ պրկել կամենայ. մի քանին առաւօտեան պահուն, մի քանին ժամը երեքին, ուրիշները ժամը վեցին, հինգին և մինչև իսկ տասն ու մէկին մարդ պրկեց. երբ որ երեկոյ եղաւ, բոլորին մէկ մէկ դահեկան տուաւ, ինչպէս որ սակարկած էր. մանաւանդ թէ տասն ու մէկին վարձուած մարդոց իրաւունքը բոլորէն առաջ վճարեց: Յիրաւի նոքա ուշ եկան այդին, բայց մեծ եռանդով ու սիրով աշխատելով, յառաջագոյն եկողներուն չափ ծառայութիւն մատուցին. ուստի նոցա նման ու հաւասար և աւելի յառաջ վարձատրուեցան:

Այստեղ հարկ է մեծ մտադրութեամբ խորհիլ: Աբդարև Աստուած իւր բազում ողորմութեամբ հոգևոր կատարելութեան կը հրաւիրէ ամենքը, որպէս դի արքայութեան փառաց արժանանան, բայց շատերը մի ժամանակ առաքինութիւն դործելու վախճաք ունենալով հանդերձ, մի-

1. Ըստ առածին, Աստուած ո՛չ հայի յոյզանն, այլ յոյզէն.

այն քիչերն են որ ամէն կերպով կատարեալ հաւատարմութեամբ և յարատև սիրով Աստուծոյ ծառայել յանձն կառնուն. այս պատճառաւ Յիսուս կասէ թէ «Շատերը կոչուած են, սակայն ընտրեալները սակաւաթիւ են[1]:»

Բայց յայտնենք, նոքա ևս իրենց առաքինութեան վրայ չը հպարտանալու համար Յիսուս մի առակ յառաջ կը բերէ ասելով. «Մի հոդապործ կամ հովիւ՝ երբ որ դաշտէն կը վերադառնայ, նոքա տերը փոխանակ ասելու թէ արի և նստէ, միթէ հրաման չ՚ըներ որ կերակուր պատրաստէ, առաջ ես ուտեմ ու յետոյ դուն. երբ յիշեալը իւր սիրոյ հրամանը կը դործադրէ, միթէ առաւել մի առաքինութիւն կը դործէ. ահա այսպէս էլ դուք՝ երբ որ ձեզ հրամայուածները կատարէք, պարտիք ասել թէ անպիտան ծառաներ ենք, կատարեցինք ինչ որ պարտական էինք կատարել[2]:»

Այս խօսքը երբէք մոռնալու չէ. որքան էլ հաւատարմութեամբ ծառայես, բնաւ մի՛ հպարտանար. վասն զի մարդս պարտական է Աստուծոյ միշտ ծառայելու, և երբ որ նորա հրամանին համեմատ կը դործէ, առաքինի չը համարուիր, այլ

1. Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս յայգի իւր. Մատթ. Ի. 1. մինչև 16 համաբ.

2. Իսկ ով ոք ի ձէնջ, որ ունիցի զծառայ հոգաբարձ կամ հովիւ... Ղուկ. ԺԷ. 7—10.

միայն պարտքէն կազատի. որովհետև առաքինի մարդն այն է որ առհասարակ ամենուն պատկանելոյ պատուէրները անթերի կատարելէ դատ, Աստուծոյ սիրոյն համար իւր կարողութեան չափովը ամէն բարեգործութիւններ ի հանդէս կը բերէ:

Արդարև Աստուծոյ ողորմութիւնը չափ ու սահման չունի, և նա իւր շնորհքը կը տայ մարդոց իրրև պարտք, իսկ նոցա պարտքը կընդունի իրրև նուէր[1]. այս պատճառաւ ոչ միայն առաքինի մարդը, այլ նաև պարտքը հատուցանողն էլ կը վարձատրէ. վասնորոյ պարտականատար անձը պէտք է որ մի բան չպարծի պէս՝ խոնարհութեամբ ինքզինքը անպիտան ծառայ համարելով, օր ըստ օրէ առաւել առաքինի լինելու ձգտի, որպէս զի իւր վարձն էլ աւելանայ:

Այնուհետև Յիսուս եօթանասուն երկու աշակերտներ ևս որոշեց, որոց կը պատուիրէ երկերկու գնալ որոշեալ քաղաքներ ու գիւղեր և անդ քարոզել ժողովրդեան, և նոցա հիւանդները բժշկելով ասել թէ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է. նմանապէս Հարկ եղած հրահանգը կուտայ նոցա թէ ինչպէս պէտք է վարուին. յայտնելով միանգամայն թէ ողորմութեան արժանի պիտի լինին նոքա, որոնք կընդունին զիրենք և թէ

1. Ըստ առաձնին, որ տայ (Աստուած) պէտք է նորա, առնու պարտս եթէ պ՚նորհս.

պիտի դատապարտուին այնպիսիքը, որոնք կը մերժեն ընդունիլ զիրենք. ինչպէս որ (տես ԻԹ-րդ Հարցում) յառաջագոյն երկոտասան առաքեալներն էլ զրկած ժամանակ նոյնպիսի հրահանգ ու պատուէր տուած էր նոցա[1]:

Երբ որ յիշեալ եօթանասունն երկու աշակերտք դնացին քարոզելու, ինքն Յիսուս ալ գիւղ կը գնայ, ուր Մարթա անունով մի կին՝ իւր տունը կը հրաւիրէ գայն (թէև այս գիւղի անունը յիշուած չէ, բայց կը կարծուի թէ Բեթանիա էր, որ Երուսաղէմի մօտ է) և Յիսուսի մօտը նստելով՝ նորա քաղցր ու հոգևոր խօսքերը կը լսէր. սակայն երբ որ նորա քոյրը Մարիամ գալով կսկսի Յիսուսի խօսքերուն ունկնդրել, Մարթա կը գնայ կերակուր պատրաստելու համար և Մարիամ կը շարունակէ լսել Յիսուսի քարոզութիւնը:

Յիրաւի Մարթա ևս կը փափաքէր միշտ լսել նորա խօսքերը, սակայն և այնպէս պատուասիրութեան մէջ թերութիւն չը գործելու համար առանց ուրիշի թողու կերակուրի պատրաստութիւնը, անձամբ ինքը կզբաղի տնական այդ կարևոր ծառայութեամբ. բայց յայտնէ կուզէ որ Մարիամ ևս իրեն օգնէ: Սակայն դիտէ թէ Մարիամ հո-

1. Ցետ այսորիկ երևելոյն Տէր և այլ ևս եօթանասունն և երկուս, և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս և ի տեղիս, ուր ինքն երթալոց էր. Ղուկ. Ժ. 1. մինչև 16 համար.

1. Ըստ առաձնին, որ տայ (Աստուած) պէտք է նորա, առնու պարտս եթէ պ՚նորհս.

գևոր կերակուրը թողլով, մարմնաւոր ծառայութեանց զբաղիլ չուզեր. այս պատճառաւ աղաչանօք կասէ Յիսուսի թէ՝ «Ոչըս պիս մինակ թողուց անոնք ծառայութեանց մէջ, ասա իրեն որ գայ ինձ օգնէ։»

Յիսուս փոխանակ նորա խնդիրքը կատարելու՝ կը յանդիմանէ զայն ասելով. «Մարթա՛, Մարթա՛, դու կը հոգաս և շատ զբաղած ես, բայց ատ սակաւ ինչ կարևոր է»։ և Մարիամ՝ որ մարմնաւոր բաները թողած՝ հոգևոր խօսքերը լսելու փափաքած էր, վճիռ ընդունեց թէ այդպիսի փափաքն չը պէտք է վերանայ իրմէ[1]։

Յիրաւի Մարթա պատուասիրելու նախանձաւորութեամբ կը գործէր, այսու հանդերձ այս պարագայիս՝ նորա վարմունքը աշխարհային ձանձրացուցիչ հոգերով լինելուն համար յանդիմանութիւն չեց. իսկ Մարիամ՝ որ ամէն աշխարհային հոգերը թողլով՝ մի միայն հոգևոր խօսքեր լսելու տենչ ունեցած էր, գովեստ կընդունի Յիսուսէն արժանապէս։ Պատն պէ հոգի առաւել է քան զմարմին, և հետևաբար հոգևորին գերազանցութիւնը երբեք չը պէտք է տարակոյսի ներքոյ ձգուի և կամ մարմնաւորը հոգևորէն նախադաս սեպուի։

1. Եւ եղև ի գնալն նոցա, և ինքն եմուտ ի գիւղ մի, և կին մին անուն Մարթա՝ ընկալաւ զնա ի տան իւրում. Ղուկ. ժ. 38. մինչև 42 համար.

Հարց. ԼԸ.

Վերոյիշեալ 72 աշակերտը սատանային էլ կիշխէին.

Պաս. Կիշխէին. որովհետև ո՛չ միայն բնականօրէն մարդոց պատահած հիւանդութիւնքը կը բժշկէին, այլ և դիւաց ևս իշխելով՝ դիւահարները կառողջացնէին։ Ինչպէս որ յետ քարոզութեան երբ որ ուրախութեամբ վերադարձան, Յիսուսի կը յայտնեն ասելով. «Տէր, քու անուամբդ դևերն էլ կը հնազանդին մեզ[1]։»

Արդարև նորա այսպէս խօսեցան, վասն զի ուրախ էին Յիսուսի մեծ զօրութեան և սատանայի տկարանալուն վրայ. բայց որպէս զի այս մասին չհպարտանան, կը յայտնէ թէ սատանան հպարտութեան պատճառաւ երկինքէն կորզուելն ընկաւ. և թէպէտ վերստին տեսաւ նոցա իշխանութիւն ոտնակոխ անելու զայն, այսու հանդերձ կասէ նոցա թէ՝ «Դուք մի՛ ուրախանաք որ սատանայք ձեզ կը հնազանդին, այլ մանաւանդ թէ ուրախացէք որ ձեր անուանքը երկինքում գրուած են»։ (քանի որ ուրիշին օգուտ լինելու համար

1. Դարձան եօթանասուն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր, և դևք հնազանդին մեզ յանուն քո։ Եւ ասէ ցնոսա, տեսանէի զսատանայ անկեալ յերկնից իբրև զփայլակն. Ղուկ. ժ. 17. մինչև 24 համար.

երբեմն չար մարդոց ևս հրաշագործելու զօրութիւն կը տրուի, այս մասին տես չորրորդ դարու ԻԳ-րդ հարցում)։

Յիսուս սոյն խօսքերը իւր աշակերտաց խօսելէ վերջ՝ կը դիմանայ Հօր Աստուծմէ, որ այս խորհուրդը դիտուն մարդիկներէ ծածկելով՝ տղայոց յայտնեց, այսինքն խոնարհամիտ և մանկան նման մաքրասիրտ աշակերտացը հաղորդեց զայն։ Մանաւանդ Ս. Երրորդութեան խորհուրդը նոցա յայտնելով երանի կուտայ իրենց. վասն զի շատ մարգարէք և թագաւորք փափաքեցան տեսնել ինչ որ նոքա (աշակերտք) տեսան, և լսել ինչ որ նոքա լսեցին, սակայն չկարացին։

Երբ որ Յիսուս այսպէս կը խօսէր, մի օրինական զայն փորձելու համար կը հարցնէ. «Ի՞նչ անեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ»։ Նա կը պատասխանէ թէ օրէնքում ի՞նչ գրուած է և ինչպէ՞ս կը կարդաս. երբ օրինականը յառաջ կը բերէ ասելով թէ գրուած է. «Սիրես քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր մաքովդ և բոլոր զօրութեամբդ, և ընկերդ քու անձիդ պէս», Յիսուս կասէ թէ՝ «ճշմարիտ է ասածդ. կատարէ զայն և յաւիտենական կեանքը կը ժառանգես։» Սակայն մեծամիտը՝ կամենալով ինքզինքը արդարացնել, կը հարցնէ թէ ո՞վ է իւր ընկերը, զոր պարտական է սիրել իւր անձին պէս։

Որովհետև շատերը՝ օրէնքում գրուած այն

ճիշդը թէ «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս», միայն իրենց ազգակցաց և բարեկամաց համար դրուած կը կարծէին։ Սակայն, որովհետև բոլոր մարդիկ Աստուծոյ արարածներն ու ծառաներն են, ուստի ամենքն էլ ընկեր կը համարուին. ով որ էլ լինի և ինչ ազգէ էլ լինի, պարտաւոր ենք զանոնք սիրել. և երբ որ կարօտ են, նոցա օգնել ըստ ամենայնի և առանց խտրութեան։ Այս սկզբունքը հաստատելու համար, Յիսուս բարի սամարացւոյն օրինակը ցոյց կուտայ ասելով. «Մի մարդ Երուսաղէմէն դէպի Երիքով իջած ժամանակ՝ աւազակները զայն կողոպտելով վիրաւորեցին և կիսամեռ վիճակում թողլով գնացին։

Ապա մի քահանայ այն տեղէն անցնելով, թէև տեսաւ վիրաւորեալը, բայց զանց արաւ. նոյնպէս մի Ղեւտացի այնտեղ գալով՝ տեսաւ և կարեւորութիւն չընծայեց. յետոյ մի Սամարացի զայն տեսնելով զթաց նորա վրայ և վէրքերին վրայ ձէթ ու գինի դնելով՝ փաթաթելէն վերջ, իւր գրաստին վրայ դնել կը փութայ վիրաւորեալը, զոր մի պանդոկ առնելով կը դարմանէ, և յաջորդ օրը անոր գնալու ժամանակ՝ պանդոկապետին երկու դահեկան տալով կասէ. «Այս մարդուն վրայ ինամք տար և ինչ ծախք որ լինի, վերադարձիս կը հատուցանեմ քեզ։»

Յիսուս սոյն առակը խօսելէն վերջ՝ շեալ օրինականին կը հարցնէ թէ՝ «Այդ երեք մար-

դոց «Ո՞ր մէկը աւազակաց ձեռքն ընկած մարդուն ընկեր և մերձաւոր կը համարիս դու»։ Նա էլ կը պատասխանէ թէ պայն՝ որ նորա վրայ գթացուբեցին «Գնա և դուն էլ նորա նման արա» կը լինէ մարդասէր վարդապետին պատասխանը[1]։

Վերոյիշեալ առակին հոգևոր իմաստն այս է. մարդս սատանայի թելադրութեամբ ու հրապուրանօք մեղանչելով վիրաւորուեցաւ հոգւով. նա ղրախտէն արտաքսուած՝ հին օրինաց գօրութեամբ չկարողացաւ փրկութիւն գտնել, և այսպէս իրը ձանապարհի վրայ կիսամեռ վիճակում ընկած մնաց խիստ թշուառ և ողորմելի։ Ահա Յիսուս Փրկիչ գալով՝ իւր ամբաւ ողորմութեամբ պայն մեզայ ահեղի գերութենէն ազատեց։

Ինչպէս վերը յիշուեցաւ, երբ որ եօթանասուն երկու աշակերտք ժողովրդեան քարոզելէ յետոյ վերադարձան, Յիսուս ևս նոցա քարոզած վայրերը գնալով թէ՛ քաղաքներում և թէ գիւղերում կը քարոզէ, մնադիր լինելով դեպի երուսաղէմ գնալ[2], որովհետև խաչուելու ժամանակը մօտեցած էր։ Ուր որ նա հանդիպեցաւ, ժողովուրդը այն աստիճան խուռն բազմութեամբ նորա

1. Ոմն օրինական՝ փորձէը զնա և ասէր. վարդապետ, ի՞նչ գործեցից . . . Ղուկ. ժ. 25—37.

2. Եւ էրջէը (Յիսուս) ընդ քաղաքս և ընդ գիւղս՝ ուսուցանէը, և ճանապարհ արարեալ յերուսաղէմ. Ղուկ ԺԳ. 22.

քարոզները լսելու կը գիմէր, որ գիրար կոխոտելու չափ կը լինէին. և ահա այս միջոցին Յիսուս կասէ իւր աշակերտաց. «Զգուշացէք փարիսեցւոց կեղծաւոր ընթացքէն, և մի՛ հետևիք նոցա գործոց. քանզի ժամանակ պիտի գայ, որ նոցա թաքուն կեղծաւորութիւնը յերևան գալով պիտի խայտառակուին և ձեր առաքինութիւնը յայտնի պիտի լինի. այս պատճառաւ ինչ որ ասա կը լսէք առանձինն, աներկիւղ յայտնեցէք բոլոր աշխարհի։»

Յիրաւի թէ չար և թէ բարի մարդոց գործքերը՝ կարելի է որ մի առ ժամանակ թաքուն մնան այս աշխարհում, սակայն բոլորին կեանքը Աստուծոյ յայտնի լինելով, վերջապէս մի օր նոցա ամենուն գործերը յերևան կուգան, նամանաւանդ դատաստանի օրում։ Նաև առաքեալք սուրբ աւետարանը քարոզելու ժամանակ՝ հրէից և հեթանոսաց ձեռամբ տեսակ տեսակ նեղութիւն և տանջանք պիտի կրէին, ուստի նորին կասէ նոցա. «Մի վախնաք անոնցմէ. վասն զի նոքա միայն ձեր մարմինը կարող են սպանել, անկէ աւելի մի բան կարող չեն անել. վախցէք Աստուծմէ, որ մարդուն մարմինը սպանելու կարող լինելէ զատ՝ նորա հոգին ևս ի հանդերձեալումն կարող է դժոխոց անշէջ կրակին մէջ ձգել։»

Թէպէտև բնական է մարդուս համար տանջանքէ և մահուընէ վախնալ, բայց Աստուծոյ սիրոյն համար տանջանքէ ու մահուընէ չը վախ-

նալու իրրև փաստ կը յայտնէ թէ ինչպէս որ հինդը երկու դահեկանի ծախուած ձնձղուկի ձագը Աստուծոյ մօտ չը մռայուիր, ո՛ր միայց որ ձեր դլխոյն բոլոր մազերը համարուած են: Ա. յս խօսքը մարդուս մաքէն ու սրտէն անցած խորհրդոց մասին պէտք է իմանալ, քանի որ բոլոր մարդկային խորհուրդք անգամ Աստուծոյ յայտնի լինելով, ըստ այնմ մարդիկ վարձ կամ պատիժ պէտք է ընդունին:

Արդարև Յիսուս վճռեց որ իրեն համար յօժարակամ նեղութեանց համբերողները արքայութեան արժանանան, և նոքա՝ որոնք փոխանակ համբերելու կուբանան դինքը, դժոխոց արժանի լինին. մանաւանդ թէ քրիստոնէական սուրբ հաւատքն հոգւոյն սրբոյ զօրութեամբ յայտնուելուն և հաստատուելուն համար, զայն ուրացողները հոգւոյն սրբոյ դէմ հայհոյելու մեղքը գործած կը լինին, որով և ո՛չ իսկ թողութեան արժանի են:

Հաւատուրաց մարդկան պատիժը յայտնելէ դինի, առաքելոց և բոլոր հաւատացելոց դարձեալ յոյս կուտայ թէ երբ որ հաւատոյ համար դիրենք դատաւորաց ու իշխանաց առջև տանին, հոգ չանեն թէ ի՞նչ պէտք է խօսին. որովհետև այդ պարագայում ինչ որ պէտք է խօսին, Հոդին սուրբ իրենց կը սորվեցնէ [1]. (այս մասին տես նաև Ի Թ-րդ

1. Որովք ե կուտել բիւբաւորաց ժողովրդեանն, մինչև կոխել զմիութեանս. Ղուկ. ԺԲ. 1—12 համար.

հարցում):

Յիսուս վերոյիշեալ խօսքերը խօսած ժամանակ՝ ժողովրդեան միջէն մի անձ՝ որ ժառանգութեան խնդրոյ մի համար իւր եղբօր հետ վէճ ունէր, կասէ Յիսուսի. «Ասա եղբօրս տալ ինձ իմ ժառանգութեան բաժինս». որովհետև նորա արդարասիրութեան և բոլորին առաքինութեան ձանձարհը քարոզելու համար ցոյց տուած եռանդին նայելով՝ կը կարծէ թէ մարմնաւոր դատաւորի պէս իրենց դատաստանն էլ կը տեսնէ: Արդարև Յիսուս ամէնքը կը դատէ, և ամենուն դատաստանը կը տեսնէ, բայց երբ երկրորդ անգամ դայ դատաստանի օրում. այս պատճառաւ այդ մարդուն խնդիրքը բացարձակ կը մերժէ ասելով. «Ջիս ո՞վ բաժանարար կարգեց ձեր վրայ:»

Որովհետև յիշեալ երկու եղբարք նիւթական ընչից պատճառաւ միմեանց հետ վէճ ու հակառակութիւն ունեցած էին, որպէս զի ուրիշներն էլ այսպիսի անարժան ընթացքի չը հետևին, Յիսուս առաքելոց կասէ. «Զգուշացէք ագահութենէ. վասն զի մարդուս կեանքը իւր ստացուածոց շատութենէն կախեալ չէ [1]:» Արդարև կարելի է շատ ստացուածք ունենալ, բայց ընչից շատութեան պատճառաւ կարելի չէ մարդուս շատ և երկար ապրիլ, վասնորոյ մի առակ յառաջ կը բերէ ասելով. «Հա-

1. Ասէ մի ի ժողովրդենէն ցնա. վարդապետ, ասա ցեղբայր իմ . . . Ղուկ. ԺԲ. 13—15.

բուսաց մի մարդու արտերը առատ արդիւնք տուին, որով սկսաւ նա մեծ մտատանջութեամբ ասել. «Ի՞նչ անեմ, արդիւնքս ժողովելու համար տեղ չունիմ». և այսպէս բաւական խորհելէ ետքը որոշեց արդէն ունեցած շահմարանները քակել և աւելի մեծերը շինել, ուր ցորենը և այլ բերքերը ժողովելէ ետքը կը խորհէր թէ կարող էր ինքնիրեն ասել. «Այսուհետև հանգչէ, կեր, խմ, և ուրախացիր. մի բազում տարիներու համար պատրաստ արդիւնք ունիս[1]։»

Իրաւ սո՛ւտ յիշեալի թշուառ վիճակին. որովհետև ստացուածոց բազմանալովը մտատանջութիւնն էլ աւելցաւ։ Ստոյգ է որ կարող էր կարեւորն աւելին աղքատաց բաշխել և մտատանջութենէ ազատուիլ, բայց աստիկ ագահ լինելով բոլոր ինչքերը իրեն վերապահեց. մանաւանդ թէ ստացուածոց շատութեան նայելով՝ վատաբեցաւ երկար ժամանակ հանգիստ ուտել, խմել և զուարճանալ։ Սակայն մարդուս մահն ու կեանքը ի ձեռին Աստուծոյ լինելուն համար, Աստուած անոր կսէ. «Ո՛վ անմիտ, այս գիշեր հոգիդ քեզմէ պիտի պահանջեն. այդ բոլոր պատրաստած բաներդ ո՞ւմ պէտք է մնան[2]։»

1. Խօսեցաւ առ նոսա զառակ մի և ասէ. առն ուրումն մեծատան . . . Ղուկ. ԺԲ. 16—19.

2. Ասէ ցնա Աստուած. անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջեցեն . . . Ղուկ. ԺԲ. 20.

Արդարև Աստուծոյ վրայ յոյս չը դնելով՝ ապրելու պատրաստական ինչք դիզելու համար չափազանց հոգածութիւնը մեծ յիմարութեան նշան է. այս պատճառաւ Յիսուս կսէ իր աշակերտաց թէ «Ուսելիքի և հագուստի մասին երբէք մի՛ հոգաք. որովհետև երէկ Աստուած ստեղծեց հոգին ու մարմինը, որք կերակուրէն ու հագուստէն նախամեծար են, ի հարկէ այս վերջիններն էլ կը շնորհէ մարդուն։ Նա՝ որ թռչունները կը կերակրէ և ծաղիկները գոյնզգոյն շքեղ զարդերով կը պճնազարդէ, որչա՛փ աւելի ուրեմն պէտք է անուշադրէ զձեզ և հագուեցնէ. վասն զի գիտէ թէ այդ բաները պիտոյ են ձեզ։»

Այս պարագայումս, Յիսուս ո՛չ միայն աւելորդ ինչք դիզելը կարդիլէ, այլ և կը յայտնէ որ կարևոր եղած բաներուս նկատմամբ էլ մտատանջութիւն կրել արժան չէ, որպէս զի ամէն մարդ իր միտքը աշխարհային բաներուն վրայ հոգս քաշելէն զերծ պահելով՝ արքայութեան փառաց տենչայ և մարմնաւոր ստացուածքը երբև աւելորդ համարէ[1]։ Արդարև Աստուծոյ արքայութեան տենչացող մարդուն համար այս անցաւոր աշխարհի ինչքը, զուարճութիւնն ու մեծութիւնը ամէն կերպով անպէտ և անօգուտ կը համարուին։

1. Ասէ ցաշակերտան իւր. վասն այդորիկ ասեմ ձեզ՝ մի հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զինչ ուտիցէք. Ղուկ. ԺԲ. 22. մինչև 31 համաբ.

ի միտ առ Աստուծոյ ողորմութիւնը. որով-հետև աշխարհի ստացուածոց ու մեծութեան պատճառաւ ո՛չ ոք չը կռուելու համար, ատոնց պարգևումը բոլորովին իրեն կը վերապահէ, որ կուտայ ումմ որ կամի. քանի որ մարդիկ կարող չեն ամէն կերպով իրենց մարմնաւոր բաղձանաց գոհացում տալ և իրենց ամէն կամքը կատարել: Սակայն արքայութիւնը նոցա կամաց կը թողու, այնպէս որ կամեցողին կը պարգևէ. ուրեմն արքայութեան եթէ հետամուտ ես, խնդրէ որ գտնես: Առանց քու խնդրանաց արքայութիւն չկայ քեզ համար:

Իրաւ է որ Աստուած իւր բազում ողորմութեամբ արքայութիւնը ոչ ոքի կը խնայէ, և ամէն մարդ էլ արքայութեան կը բաղձայ, բայց ըստ արժանւոյն զայն որոնող սակաւ լինելուն համար, այնպիսիքը փոքրիկ հօտի նմանցնելով կը հրամայէ որ իրենց ստացուածքը ծախեն ու աղքատաց բաշխեն, որպէս զի երկնքում ապահով և անպակաս գանձուց տէր լինելով՝ իրենց սիրտն էլ այնտեղ լինի. քանզի մարդուս ինչքը ուր որ է, սիրտն էլ անդ կը լինի:

Բաց յայսմանէ, առաքինութեան սիրով միշտ արթուն կենալ կը յորդորէ և նմանիլ այն մարդկանն, որոց տէրը հարսանիքի գնալով՝ վերադարձի ժամանակը անյայտ լինելուն համար, իրենք արթուն կսպասեն, որպէս զի եկած ժամանակ խոկոյն

դուռը բանան: Յիսուս այնպիսի ծառայքը գովելով երանի կուտայ նոցա, վասն զի գիշերուան ո և է մի ժամում՝ երբ որ նոցա տէրը գալով արթուն կը գտնէ զանոնք, բնականաբար մեծ պատուով կը նստեցնէ և կը մեծարէ: Արդարև երանի այն մարդուն, որ իւր ամբողջ կեանքում Աստուծոյ հրամանին համաձայն ապրելով միշտ առաքինութեան լոյսը անշէջ կը պահէ, և մինչև վերջին ժամը հոգւով արթուն մնալով, մեռած ժամանակ երկնային անվախճան ուրախութեան կարժանանայ:

Ուրեմն այս մասին, ո՛վ մարդ, ահիւ ու դողութեամբ զգոյշ եղիր որ մահը եկած ժամանակ անպատրաստ չը գտնէ զքեզ, քանի որ գողի նման կուգայ: Արդարև եթէ գողի եկած ժամանակը տան տիրոջ յայտնի լինի, արթուն մնալով թոյլ չը տար որ տունը կողոպտուի. ուստի եթէ հանդերձեալ աշխարհում ուրախ լինել կուզես, կարողութեանդ համեմատ առաքինութիւն գործելով միշտ պատրաստ գտնուէ. որովհետև յայտնի չէ քեզ թէ երբ մեռնելու ես[1]:

Երբ որ Յիսուս այսպիսի առակով իւր աշակերտաց խրատ և պատուէրներ կուտար, Պետրոս առաքեալ կը հարցնէ թէ այդ առակը մի միայն

1. Մի երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ Հայրդ ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք զինչս ձեր և տուք զողորմութիւն, և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ . . . Ղուկ. ԺԲ. 32. մինչև 40 համար.

իրե՞նց թէ ամենուն համար խօսեցաւ։ Յիրաւի այդ պատուէրները ամենուն ևս կը պատշաճին, այդ արդէն յայտնի է. բայց որովհետև առաքեալք և ժողովուրդը կառավարելու կոչուած բոլոր անձինք պարտաւոր են առաքինութեան ճանապարհում ուրիշներէն աւելի կատարելութիւն ստանալ, որպէս զի իրենց իրաւասութեան ներքոյ գտնուած մարդիկը բարւոք կերպով կառավարելու կարող լինին, վասնորոյ Յիսուս դանոնք կը նմանցնէ հաւատարիմ և իմաստուն անառակի, զոր ժամանակին ամենուն կերակուրը տալու համար, նորա Տէրը իւր ազարակին վրայ անսուէչ կարգեց։

Այո՛, երանի կուտայ այնպիսի մի անառակի, որ իրեն եղած հրամանին համեմատ կը գործէ. վասն զի երբ որ տէրը գայ, իւր բոլոր ստացուածոց վրայ իշխան պէտք է կարգէ զայն։ Սակայն, եթէ այդ անառակը՝ տէրս ուշ կուգայ ասելով, սկսի հպարտանալ և անզգուշութեամբ ծառաներն ու աղախինները ծեծել, ուտելով խմելով արբեցութեան տալ ինքզինքը, այն ժամանակ նորա տէրը անյուսալի կերպով յանկարծ կուգայ և այնպիսի հաւատարիմ մէկը այն ատելիան ատամիկ կը պատժէ, որուն միայն անհատաս և անզգամ մարդիկ արժանի են։ Արդարև երբ մարդս իւր սիրոյ հրամանը գիտնալով հանդերձ կը թերանայ իւր պարտուց մէջ, ծանր պատժոյ արժանի կը լինի. իսկ անգիտաբար՝ եթէ թերանայ իսկ իւր պար-

տուց մէջ, թեթև պատիժ պէտք է կրէ. որովհետև որուն որ շատ տրուեցաւ, շատ պէտք է պահանջուի անկէ[1]։

Այս մասին Թող լաւ ի միտ առնուն նոքա, որոնք հոգևոր և մարմնաւոր բարձր պաշտօններ ունենալով՝ այլոց վրայ իշխանութիւն վարելու կոչուած են. քանի որ իւրաքանչիւրը՝ իւր գիտութեան, հարստութեան և ատիճանին համեմատ պատասխանատու է առաջի աստենին Աստուծոյ։

Յիսուս վերոյիշեալները առաքելոց և ժողովրդեան ուսուցանելու միջոցում, ոմանք եկան և Գալիլեացիներու մասին պատմեցին անոր թէ Պիղատոս նոցա արիւնը իրենց զոհերու արեան հետ խառնեց[2]. որովհետև յիշեալ Գալիլեացիքը այն միջոցին Երուսաղէմ գալով՝ տաճարում զոհ մատուցած ժամանակ, Պիղատոս զանոնք սպանել տուած էր, որով նոցա արիւնը իրենց մատուցած զոհերու արեան հետ խառնուած էր։

---

1. Աստ Պետրոս. Տէ՛ր, առ մե՞զ ասացեր զառակդ զայդ թէ առ ամենեսեան։ Եւ ասէ Տէր ո՞վ իցէ հաւատարիմ անտես և իմաստուն, զոր կացուցէ տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ... Ղ.ուկ. ԺԲ. 41—48.

2. Եկին ոմանք ի նմին ժամանակի, և պատմեցին նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհսն նոցա. Ղ.ուկ. ԺԳ. 1.

Հատված ԼԹ.

Պիղատոս ինչու՞ համար սպանել տուաւ այդ Գալիլեացիքը.

Պաթ. Գալիլեայի Հերովդէս Թագաւորի հետ ունեցած Թշնամութեան պատճառաւ։ Պիղատոսի սոյն կերպ ապօրէն ընթացքը Յիսուսի կը պատմեն այն նպատակաւ, որ եթէ հաւանութիւն ցոյց տայ, Հերովդէսի մտանեն վինքը։ Ոմանք էլ կը կարծեն թէ նոքա իրենց մեղայ պատճառաւ պատիժ կրեցին[1]. բայց որովհետև իրենք ևս մեղաւոր էին, Յիսուս նոցա կասէ. «Մի՛ կարծէք թէ նոքա բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր լինելուն համար այդպիսի մի ազէտ կրեցին. այլ եթէ դուք ևս չապաշխարէք, ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորնչիք։»

Յիսուս այս խօսքով իրեն ունկնդիրները զղջման ու ապաշխարութեան կը յորդորէ։ Նոյն ժամանակներում Երուսաղէմի մօտ Սելովամի աշտարակը վրան ու տան և ուրիշ մարդիկ նոքա վըրայնին ներքև մեռած էին. ուստի զարհնալ կասէ. «Մի կարծէք որ նոքա Երուսաղէմի բոլոր բնակիչներէն աւելի մեղաւոր էին. ո՛չ. այլ եթէ չապաշխարէք, դուք բոլորդ էլ նոցա նման պիտի

1. Որպէս զրէ Իգնատիոս վարդապետն ի մեկնութեան Ղուկասու.

է կորստեան մատնուիք[1]։»

Թո՛ղ ուրեմն երկնչին նոքա, որոնք իրենց մեղաց մէջ կը յարատևեն անուղղայ կերպով. վասն զի, ինչպէս որ Աստուած ողորմած լինելով կը համբերէ և մեղաւորը իսկոյն չը պատժեր, նմանապէս նա արդար լինելով անպիղծ և անապաշխար մեղաւորը անպատճառ կը պատժէ։ Այս մասին Յիսուս մի առակ ևս կասէ. «Մի մարդ իւր այգուն մէջ թզենի մը տնկեց, և երբ երեք տարի դալով պտուղ չգտաւ նորա վրայ, այգեպանին կասէ թէ «ինչո՞ւ համար այս ծառը պէտք է երկիրը խափանէ. կարէ զայն»։ Նա էլ մի տարի պայմանաժամ կը խնդրէ, որպէս զի ծառին շուրջը բրելով աղբ թափէ, և եթէ նորէն պտուղ չտայ, յաջորդ տարին կարէ զայն[2]։»

Խրա՛տ առ, քանզի այս աշխարհս կամ մանաւանդ սուրբ եկեղեցին Աստուծոյ այգին է. հաւատացելոց իւրաքանչիւրը նոյն այգում տընկուած մի մի ծառ է. ուստի երբ մարդս իւր պատանեկութեան, երիտասարդութեան, և ծերու-

1. Պատասխանի ետ և ասէ ցնոսա. Համարիք եթէ այնք Գալիլեացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի զայնպիսի անցս կրեցին։ Ոչ՝ ասեմ ձեզ, այլ եթէ ո՛չ ապաշխարիցէք... Ղուկ. ԺԳ. 2—5.

2. Ասաց և զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում, և եկն խնդրել զպտուղ ի նմանէ՝ և ոչ եգիտ... Ղուկ. ԺԳ. 6—9.

թեան ժամանակուն՝ որոնք երեք տարիները ցոյց կուտան առաքինութեան պտուղ չի բերեր, անպտուղ ծառի նման կը կարուի ու դժոխոց յաւիտենական անշէջ կրակին մէջ կը ձգուի։

Ա. յնուհետեւ Յիսուս մի շաբաթ օրուն կը դնայ նոցա ժողովարանը՝ ժողովրդեան քարոզելու համար. այնտեղ մի կին կար, յորում դեւ մտած՝ տասն եւ ութ տարիներէ ի վեր հիւանդ ու կարկամեալ (մարմինը կորացած) վիճակուն գտնուելով՝ երբեք չէր կարող դէպի վեր նայել. երբ Յիսուս զայն տեսաւ, կոչելով իւր մօտ՝ ասաց թէ «Դու հիւանդութենէ փրկուած ես այլ ևս». և իւր ձեռքը նորա վրայ դրածին պէս՝ յիշեալ կինը իսկոյն բժշկուելով կսկսի զԱստուած փառաբանել։

Սակայն, ինչպէս որ փարիսեցիք միշտ կը նախանձէին Յիսուսի փառքին վրայ, նմանապէս նոյն ժողովարանի ժողովրդապետը վերոյիշեալ հրաշքը տեսնելով նախանձեցաւ, և թէպէտ Յիսուսի դէմ ոչինչ մեղադրանք չէր կարող անել, բայց օրէնքը պատճառ բռնելով՝ ո՛չ միայն կը բարկանայ թէ ինչո՞ւ համար շաբաթ օրուն բժշկեց խեղճ կինը, այլ և ժողովուրդը կը յանդիմանէ որ բժշկութիւն գտնելու համար ուրիշ օրեր գան. ո՛չ թէ իրաւ օրինաց նախանձախնդրութեամբ այդ յանդիմանութիւնն արաւ, այլ կեղծաւորութեան համար. այս պատճառաւ Յիսուս նորա կեղծիքը յայտնելու նպատակաւ կսկ. «Ա՛վն մարդ շաբաթ օրուն

միթէ իւր եզն ու էշը մսուրէն քակելով չրելու չի՞ տանիր. արդ՝ սոյն կինը, որ Աբրահամու ցեղէն է, տասն և ութ տարիներէ ի վեր սատանայէն բռնուած էր, արժան չէ՞ր միթէ զայն ազատել շաբաթ օրուն։»

Յիսուսի այս կերպ յանդիմանական խօսքերը լսելով, նորա բոլոր հակառակորդները ամօթապարտ մնացին. իսկ պարզասիրտ ու բարեմիտ ժողովուրդը, որոնք նախանձ չունէին նորա դէմ, տեսնելով նորա զործած հրաշքը, չափազանց մեծ ուրախութիւն ու խնդութիւն կը յայտնէին։ Երբ որ այսպէս չարերը ամօթապարտ[1] ժողովրդի բարեսիրտ մարդիկը կուրախացնէր, Յիսուս մի առակ ևս խօսեցաւ մանանեխի հատին ու խմորին վրայ, ցոյց տալու համար թէ առաքելոց քարոզութեամբ հեթանոսները պէտք է հաւատային, ինչպէս որ յառաջագոյն ևս այս մասին խօսած էր (տես Ա.-րդ հարցում)։

Յիսուսի քարոզութեան ժամանակ՝ մի մարդ հարցում ուղղելով կսկ. «Հաւանաբար փրկուածները սակաւաթիւ են». որովհետև յառաջ լսած էին Յիսուսէն թէ անհնարին է մարմնաւոր զուարճութեանց հետամուտ եղող մարդկան արքայու-

1. Եւ ահա կին մի՝ զոր ունէը այս հիւանդութեան տմս ութուտասն, և էը կարկամեալ, և ո՛չ կարէը ամենևին ի վեր հայել։ Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն... Ղուկ. ԺԳ. 11—21.

թիւն ժառանգել և թէ ընդհակառակն, պէտք է նեղութիւն կրել և չարչարանաց տանիլ ու համբերել։ Ա.յս անգամ նորէն կը հաստատէ, և Աստուծոյ սիրոյն մարդուս կրած նեղութիւնը նեղ դրան նմանցնելով՝ կը պատուիրէ ասելով. «Ջանացէք այդ նեղ դռնէն մտնել. քանզի տան տէրը ներս մտնելով դուռը փակելէ զկնի՝ թէև դուռը բաղխելով ասելու ևս լինիք «Տէր բա՛ց մեզ դուռը», նա պիտի պատասխանէ թէ զձեզ չեմ ճանաչեր. հեռու կեցէք ինձմէ՝ դուք բոլոր անիրաւ մարդիկդ։»

Թո՛ղ ուրեմն երկնչին այն մարդիկ, որոնք իրենց ձեռքում պատեհութիւն ունին հոգևոր փրկութեան համար ղկջմամբ և ապաշխարութեամբ կանոնաւորելու իրենց կեանքը, և սակայն օրէցօր կը յետաձգեն այդ կենսական ու անհրաժեշտ գործը։ Որովհետև առաքինութիւն գործելու կարող եղած ժամանակ՝ անհոգ և անտարբեր գտնուելով պատեհութիւնը ձեռքէ հանելէ զկնի, այնուհետև եթէ կամք և ևս ունենան, անզօր պիտի գտնուին իրենց կամեցողութեան մէջ[1]։

Արդ՝ որոնք որ արքայութեան անվախճան փառաց ու երանութեան արժանանալ կը բաղձան,

1. Որդեակ՝ մի յապաղեցես դառնալ ի մեղաց առ Տէր, զի մի առ մեղս քո սատակիցես. Սիրաք. Ե. 8.

պէտք է որ ժամ յառաջ առաքինութիւն գործելու փութան առանց ծուլութեան և նեղ դռնէն մտնելու նման՝ պատահած նեղութեանց յօժարակամ և սիրով համբերեն, քանի որ դուռը փակուելէ յետոյ իրենց ուրիշ բան չը մնար անել, եթէ ո՛չ դրսում սաստիկ կձրտացնել և լալ յաւիտեան. ինչպէս որ Յիսուս յայտնեց թէ առաքելոց քարոզութեամբ աշխարհիս չորս կողմերէն հաւատքի եկողները արքայութեան մէջ Աբրահամու, Իսահակի, Յակոբայ և բոլոր մարգարէից հետ պէտք է բազմին, իսկ հրէայք դրսում մնալով յաւիտեան պիտի լան սգով ու տրտմութեամբ[1]։

Երբ որ Յիսուս այսպէս ժողովուրդը կը յորդորէր յապաշխարութիւն Գալիլեա դաւառում, նոքա, որոնց սիրտը մաքուր էր, շատ մեծ ուրախութիւն յայտնեցին. իսկ փարիսեցիներէն ոմանք չհասկնալով կասէն թէ Հերովդէս զքեզ սպանել կը կամի. դնա՛ այստեղէն։

Տե՛ս դու այդ նախանձոտ ու չար մարդկան ստութիւնը. որովհետև Հերովդէս ո՛չ թէ Յիսուսը սպանելու, այլ զայն տեսնելու կը փափաքէր (ինչպէս Լ՚Ե-րդ հարցում յիշուեցաւ)։ Ուրեմն յայտնի

1. Ասէ ցնա ոմն. Տէր, եթէ սակաւք իցեն, որք ապրելոց իցեն. և նա ասէ ցնոսա. Ջանացարուք մտանել ընդ դուռն նեղ, ասեմ ձեզ՝ զի բազումք խնդրեսցեն մտանել և ո՛չ կարասցեն. Ղուկ. ԺԳ. 23. մինչև 29 համար.

է որ յիշեալ փարիսեցիքը իրենց նախանձը ցած-կելու համար կեղծաւորութեամբ Հերովդէսը պատ-ճառ բռնելով՝ Յիսուսի սրտում մահուան երկիւղը ձգել կը փափաքին, որպէս զի վախնալով այն կող-մերէն փութով հեռանայ:

Սակայն Յիսուս երբէք մահէն չվախնար, այլ կը յայտնէ թէ քանի որ Գալիլիայումն է, պէտք է հրաշագործել ըստ իւր գերագոյն կամայ, և մա-նաւանդ՝ ինչպէս որ Երուսաղէմի բնակիչք մար-գարէները կը կոտորէին, նմանապէս ինքն էլ անդ ի խաչ ելնելով յարութիւն առնելէն վերջ՝ Երու-սաղէմ պէտք է որ աւերի. որովհետև թէև ինքը կամեցաւ քանիցս նորա որդիքը իւր պաշտպա-նութեան ներքև առնուլ և ցրուածները ժողովել, ինչպէս հաւն իւր ձագերը կը ժողովէ իւր թևոց տակ, բայց նորա չը կամենալով մերժեցին:

Բայց յայտնէ, որովհետև Ծաղկազարդի օ-րում ձիթենեաց լեռնէն մեծ փառօք Երուսաղէմ գալու էր, Յիսուս յայտնեց թէ այն օրում իւր հակառակորդներն էլ այսինքն փարիսեցիքը պէտք է անդ գանուին, և թէ ինքը ժողովրդին պէտք է փառաւորուէր[1]:

Նայէ դուն Յիսուսի մարդասիրութեանը.

---

1. Ի նմին աւուր մատեան ոմանք փարիսեցիք, և ասեն. Ել և գնա ասա՝ զի Հերովդէս կամի սպա-նանել զքեզ. Ղուկ. ՃԳ. 31. մինչև 35 համար.

որովհետև ինչ որ եաբէն պէտք է տեղի ունենար, դեռ չը պատահած՝ յառաջագոյն կը յայտնէ, որ-պէս զի երբ որ գործադրութիւնը տեսնեն, իմա-նալով ուղղուին. բայց նորա դարձեալ չը համո-զուեցան: Ի միտ առ, ինչպէս որ փարիսեցիք կուզէին որ Յիսուս Գալիլեայէն հեռանայ, նմա-նապէս նորա ազգականներէն ոմանք՝ մինչև այն ժամանակ հաւատացած չը լինելով կասեն Յիսուսի թէ «Հրէաստան գնա, այսքան հրաշք որ կը գոր-ծես, յայտնէ անձդ աշխարհի:»

Յիրաւի Յիսուսի գործած հրաշքները բոլորին յայտնի էին, բայց որովհետև այն ժամանակ տա-ղաւարահարայ ոճնը մերձ էր և այս պատճառաւ Երուսաղէմում ժողովրդեան ահագին բազմութիւն հաւաքուած էր, ուստի այդ խօսքով կը կամէին որ երթայ և բոլորին ներկայութեանը հրաշագոր-ծելով՝ ինքզինքը յայտնէ ամենուն. իսկ Յիսուս նոցա հետ չգնաց ոճնի առաջին օրը, այլ չորրորդ օրում գաղտնի կը գնայ:

Ապրդ՝ ժողովուրդը ոճնի առաջին օրերում կը փնտռէ զայն ասելով. «Ո՞ւր է նա». քանզի պար-զասիրտ մարդիկ արդէն շատ կախորժէին և կը փափաքէին տեսնել, բայց նախանձոտներ ևս կային. այս պատճառաւ նոցա միջև հակառակութիւն կը ծագի. մանաւանդ ժողովրդեան մեծամեծներէն երկնչելով՝ ոչ ոք նորա նկատմամբ կարող չէր հա-մարձակ խօսիլ: Երբ որ Յիսուս չորրորդ օրում

սկսաւ քարոզել ժողովրդեան՝ տաճարին մէջ, նորա վարդապետութեան նայելով՝ կը զարմանային թէ նա՝ ինչպէ՞ս գիտէ գրոց խնդասները. որովհետև յայտնի գիտէին թէ նա ո՛չ օքէ ուսած չէ։

Եթէ նոյն իսկ հրեից խոստովանութեամբ Յիսուսի վարդապետութիւնը մարդկային զօրութեամբ չէր, ուրեմն պարտական էին ճանաչել թէ Աստուծոյ յատուկ էր այն, և ո՛չ թէ առ նախանձու նորա դէմ հակառակ խօսիլ և խորհիլ. նոցա միաքն Յիսուսի յայտնի լինելով՝ ինքն իսկ յայտնեց թէ իւր վարդապետութիւնը աստուածային է, որպէս զի հաւկնալով ուղղուին[1]. բայց նորա ուղղութեան գալու տեղ՝ ևս առաւել չարացան իրենց յամառ տգիտութեան մէջ։

Որովհետև մի փարիսեցի շաբաթ օրուն Յիսուսը և ուրիշներ ևս ճաշի հրաւիրեց իւր տան մէջ, բայց ո՛չ թէ զայն պատուելու, այլ պատրուակ կամ մեղադրելու առիթ գտնելու համար դիտմամբ. այնտեղ մի ջրգողեալ մարդ կը գտնուէր, և կը կարծուի թէ յատկապէս իրենք բերել տուած էին զայն, որպէս զի եթէ Յիսուս զայն բժշկելու լինի, նորա դէմ դատախազ կանգնին իրրև օրինազանց. քանի որ ուրիշ պատրուակ կարող չէին գտնել

1. Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց։ Ասեն ցնա եղբարքն նորա. գնա՛ աստի, և երթ ի Հրէաստան. զի և աշակերտքն քո տեսցեն զգործսդ քո՝ զոր գործես. Յովհ. Է. 2. մինչև 18 համար.

նորա դէմ։ Յիսուս ճանաչելով նոցա միտքը՝ կը հարցնէ օրինականաց թէ արդեօք արժա՞ն է շաբաթ օրում հիւանդ մարդը բժշկել. նոքա կը լռեն. վասն զի, եթէ արժան է ասեն, իրենց դիտաւորութեան ներհակ կը լիներ. իսկ եթէ արժան չէ ասեն, յայտնի է որ հաստատելու կարող չը լինելով կը խայտառակուէին. վասնորոյ նոքա թէև լռեցին, բայց Յիսուս իսկոյն իւր ձեռքն բռնելով՝ բժշկեց զայն ու ասաց. «եթէ ձեզմէ մէկու էշը կամ եզը հորի մէջ ընկնի, միթէ իսկոյն չի՞ հաներ զայն։»

Լաւ ի միտ առ. նոքա՝ որ այնտեղ հաւաքուած էին Յիսուսի դէմ մի պատճառ որոնելու նպատակաւ, նորա խօսքը լսելով՝ պատասխան տալու անկարող կը լինին։ Արդարև Յիսուսի այդպիսի խօսքերը որքան որ յանդիմանութիւն էին նոցա համար, բայց որովհետև նոքա փառասիրական ախտով ևս վարակեալ՝ կը ջանային կոչումներու մէջ նախապահ բազմիլ, նոցա այսպիսի հպարտ ընթացքին նայելով դարձեալ կասէ նոցա թէ՝ «երբ որ մէկը հարսանեաց կամ կոչումնքի հրաւիրէ զքեզ, բազմեցի վերի կողմում մի՛ նստիր. ինչու որ կարելի է քեզմէ պատուաւորագոյն անձինք հրաւիրուած լինին անդ և քեզ ասէ, տեղ տուր սոցա. այն ժամանակ դուն ամօթով յետին տեղում նստել կսկիծովիս. այլ դու վարի կողմում նստէ, որպէս զի զքեզ հրաւիրողը գալով պատուաւոր

տեղում նստելու վքեզ հրաւիրած ժամանակ՝ դու փառաւորուիս։ Վասն զի ով որ զինքը կը բարձրացնէ, կը ցածանայ, իսկ ով որ զինքը կը ցածցնէ, կը բարձրանայ։»

Այս մասին Թոդ խրատ առնուն նոքա, որոնք իրենք զիրենք բարձրադոյն պատուոյ արժանի համարելով՝ հպարտանալ կսկսին. քանի որ հպարտութեան վախճանն է սատրնուիլիւն։ Նմանապէս կոչունքի տիրոջ կասէ. «Երբ որ կոչունք տաս, բարեկամներդ, եղբայրներդ, ազգականներդ ու դրացիներդ և մեծամեծները մի կոչեր, որպէս զի ի՛ դուցէ նոքա ևս զքեզ կոչելով՝ փոխարէնը հատուցանեն քեզ. այլ կոչէ աղքատները, խեղանդամները, կաղերն ու կոյրերը, որոնք փոխարէնը քեզ հատուցանելու անկարող լինելով՝ երկնքում կը հատուցուի քեզ՝ արածիդ փոխարէնը։»

Բազմականներին մի մարդ սոյն խօսքերը լսելով՝ երանի կուտայ այն մարդուն, որ Աստուծոյ արքայութեան մէջ կը ճաշէ. այն ժամանակ Յիսուս առակաւ կը յայտնէ թէ Աստուած բոլոր մարդիկը ճաշի կը հրաւիրէ, սակայն մարմնաւոր ցանկութեանց սիրահար անձինք չեն կամիր գնալ, այլ աղքատ ու անձար անձինք կը գնան. այսինքն այնպիսիք, որոնք այս անցաւոր աշխարհի ստացուածոց, զուարճութեան ու մեծութեան հակամիտութիւն ցոյց չեն տար։

Ահաւասիկ առակը. Մի մարդ կոչունք արաւ

և շատ մարդիկ հրաւիրեց, բայց նոքա սկսան հրաժարիլ. մին՝ ագարակ գնեցի և պարտիմ գնալ զայն տեսնելու, մի ուրիշը՝ հինգ զոյգ եզներ գնեցի, պէտք է զայնս փորձել՝ ասելով նեղոտութիւն լինդրեցին. և երբ երրորդը առարկեց թէ «Կին առի, այս պատճառաւ չեմ կարող գալ», կոչնաւերը բարկանալով՝ իւր ծառային կը հրամայէ որ անմիջապէս գնայ և հրապարակաց ու փողոցաց մէջ գտնուող աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը բերէ։ Նա էլ առած հրամանը կատարելէ յետոյ՝ կը յայտնէ թէ դեռ տեղ կայ. ուստի նորին հրաման կատանայ գնալ փողոցներն ու ցանկերը և ամէն գտածները բերել, մինչև որ տունը լեցուի։

Այս պարագայում նկատելի է թէ զգայական բաղձանաց անձնատուր եղող մարդուն համար որքա՜ն դժուարին է Աստուծոյ արքայութիւնը մտնել. վասն զի, թէև ագարակ և եզներ գնող անձինք չեկան, բայց դոնէ ստացանօք ներողութիւն խնդրեցին. իսկ կին առնողը մարդաւարութեան ներհակ եղանակաւ կը պատասխանէ թէ կարող չէ գալ։ Յիսուս այս առակը խօսելէ վերի կը վճռէ թէ այն հրաւիրեալներէն ո՛չ ոք իւր ճաշէն չը պէտք է ուտէ[1]։ Թոդ ուրեմն վասնոյ որոնք որ

1. Եւ եղև ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխանացն . . . Ղուկ. ԺԴ. 1—24.

մարմնաւոր իրաց պատճառաւ հոգևոր ճանապարհէն եւս կը ծնան. քանի որ վճռուեցաւ թէ արքայութեան փառքէն պէտք է զրկուին այսպիսիք։

Հարց՝ Թ.

Քահանայապետք եւ փարիսեցիք Յիսուսի դէմ քարկացան, երբ որ նա շաբաթ օրում վերոյիշեալ Ջրզողեալը բժշկեց.

Պաթ. Բարկացան. մանաւանդ թէ որոշեցին սպանել զնա։ Վասն զի այդ հրաշքը Երուսաղէմ քաղաքում այն աստիճան կը հռչակուի, որ նորա իրենց սրտի չափազանց տադնապին պատճառաւ՝ Յիսուսի մահուամբ կուզեն մխիթարուիլ։ Սակայն կարծելու չէ թէ նորա օրինայ նախանձախնդիր էին. բնաւ երբէք. այլ նորա փառքը անարդանք համարելով իրենց, նախանձու դէը մուած էր նորա մէջ։ Յիսուս նորա միտքը դիտնալով հանդերձ՝ դարձեալ տաճարում աներկիւղ քարոզելէ զատ, այսպիսի հարց կուղղէ նորա. «Ո՛չ ապաքէն Մովսէս օրէնք տուաւ քեզ. և ահա ձեզմէ ո՛չ ոք կը գործադրէ օրէնքը. ինչո՞ւ դիս սպանել կուզէք»։ Նորա կը պատասխանեն «Դև կայ քու մէջ. ո՞վ կուզէ սպանել զքեզ»։

Թելամուտ եղիր. քանի որ Մովսէս գրած էր օրինայ մէջ թէ մարդ մի՛ սպաներ, նորա յանիրաւի Յիսուսը սպանելու հետամուտ լինելով՝

օրինաց ներհակ կը գործէին անշուշտ։ Երբ որ Յիսուս նորա ներքին դիտաւորութիւնը բացորոշ կը յայտնէ, ո՛չ միայն կուրանան իրենց սրտի չար խորհուրդը, այլ և կը հայհոյեն։ Թէև այս կերպով նորա պատժոյ արժանի էին, բայց Յիսուս մինչև անգամ չը յանդիմաներ զանոնք. միայն թէ թերափառութիւնը իրր օրինակ յառաջ կը բերէ, ցոյց տալու համար թէ շաբաթ օրում հիւանդ բժշկել՝ օրինաց ներհակ չէ։

Որովհետև թլփատութիւնը հայր Աբրահամու օրով հրամայուած՝ և հետևաբար Մովսէսի օրինաց մէջ մուած լինելով, շաբաթ օրում ևս կը գործադրուէր. արդ՝ եթէ արժան է շաբաթ օրում թլփատել, որչափ առաւել արժան է մարդը բժշկել. և զայս ապացուցանելէ յետոյ իրաւ կուտայ նորա ասելով. «Առտաքին երեւոյթին նայելով դատաստան մի՛ անէք. այլ ուղիղ դատաստան արէք»։

Արդարև թլփատութեան համար հարկ եղած մարմնաւոր գործողութիւնքը մեղք չսեպել, իսկ միայն բանիւ բերանոյ Յիսուսի հիւանդ բժշկելը ՆԵՂ համարել՝ արդարութեան յայտնապես հակառակիլ կը նշանակէ և թշնամական յարձակում նախանձոտ մարդոց։ Ինչպէս որ Յիսուս տաճարի մէջ քարոզած ժամանակ՝ Երուսաղէմի բնակիչներէն ոմանք սկսան միմեանց ասել. «Ո՞չ ապաքէն կամէին այս մարդը սպանել, և ահա յայտնի կը խօսի, և ո՛չ ոք մի բան կասէ իրեն. արդեօք մեծերն էլ

հաւատացին թէ սա է Մեսիան։»

Ա՛յս խօսքերուն Յիսուսի հակառակորդք պարձեալ կը պատասխանեն թէ՝ «Մենք այս մարդուն ուսմի՛ լինելը գիտենք. իսկ Մեսիան երբ որ գայ, ո՛չ ոք գիտէ թէ ուսմի՛ է։» Ահա սոյն պատասխանը ցոյց կուտայ թէ նոքա դրոց հմուտ չէին բնաւ և այս պատճառաւ անհաւատ մնացին։ Որովհետև Յիսուս Նազարէթի քաղաքում մեծացած լինելուն համար կասէին որ մենք գիտենք թէ նա ուսմի է, բայց չէին խոստովաներ նորա Մեսիա լինելը, թէև կը տեսնէին այն հրաշալի գործերը, որոնք կապացուցանէին թէ նա է Մեսիան. նմանապէս կասէին թէ «երբ որ Մեսիան գայ, ո՛չ ոք գիտէ թէ ուսմի՛ է», մինչդեռ Ս. Գրոց մէջ բացորոշ գրուած է թէ Բեթղեհէմ քաղաքում պէտք է ծնանի Մեսիան. (այս մարգարէութեան նկատմամբ տես Միք. ե. 2.)։

Ահա այդ չար ու նախանձոտ մարդոց միտքը Յիսուսին յայտնի լինելով կը յայտնէ թէ ինքն է Աստուծմէ ղրկուած. որպէս զի իմանալով հաւատան և ողորմութեան արժանի լինին. սակայն նոքա ո՛չ միայն չեն հաւատար, այլ և թշնամական դիտաւորութեամբ զայն բռնել կուզեն. և որովհետև նորա խաչուելու ժամանակը հասած չէր, ո՛չ ոք կարող կը լինի նորա վրայ ձեռք երկնցուցանել։ Ա՛յսու հանդերձ, Յիսուսի գործած հրաշքները տեսնելով շատերը հաւատացին

և կասէին. «Մխիթ Մեսիան գայ, քան գայս առաւել հրաշք պէտք է գործէ։»

Ֆիրուզի քահանայապետներն ու փարիսեցիները կամեցան Յիսուսը սպանել, բայց մինչև այն ժամանակ յայտնի թշնամութեան ընթացք ցոյց տուած չէին. ուսմի երբ որ լսեցին թէ շատերը հաւատացած են, իրենց սպասաւորները կը ղրկեն զայն բռնել բերելու համար։ Իսկ այդ սպասաւորը երբ որ եկան և նորա քաղցր ու հոգևոր խօսքերը լսեցին, այն աստիճան ախորժեցան՝ որ բնաւ և ո՛չ մի խօսք ասացին անոր. քանզի մեռնելու ժամանակը դեռ հասած չէր։

Յիսուս գիտէր թէ այդ մարդիկ ինչ մտքով եկած են, վասնորոյ կասէ. «Փոքր մի ժամանակ ևս ձեզ հետ եմ, ապա պէտք է գնամ առ նա, որ զիս առաքեց. դուք զիս կը փնտռէք, սակայն չէք կարողանար գտնել. ուր որ ես կը գնամ, դուք կարող չէք գալ։» Ա՛յս խօսքով Յիսուս կամեցաւ յայտնել թէ ինքը քիչ ժամանակէն պիտի մեռնի և յարութիւն առնելով յերկինս պէտք է համբառնայ, և քանի որ հրէայք զինքը գտնել պիտի չկարողանային, ասկէ է թէ նոքա Աստուծոյ արքայութենէն պէտք է զրկուէին. բայց նոքա կը կարծեն թէ հեթանոսաց երկիրը պէտք է գնայ և անդ բնակող Իսրայէլի ժողովրդեան քարոզէ[1]։

1. (Առ Յիսուս). ո՛չ Մովսէս ետ ձեզ զօրէնս, և

Ինչպէս որ վերև յիշուեցաւ, այն ժամանակ ծնողական օրեր էին, և երբ Յիսուս տօնի վերջին օրուայ դարձեալ տաճարն եկաւ, ամէնքը առ ինքն կը հրաւիրէ ասելով. «Ծարաւի եղողը թող առ իս գայ և խմէ»։ Մանաւանդ բարձրաձայն կը յայտնէ թէ իրեն հաւատացողներուն որովայնէն, քան Սուրբ Հոգի, կենդանի ջրոյ գետեր պէտք է բղխին։ Սոյն խօսքը՝ այլաբանական իմաստով Հոգւոյն սրբոյ շնորհաց մասին մի ակնարկութիւն էր։ որովհետև Յիսուսի համբառնալէն ղկնի՝ նորա հաւատացեալք սուրբ Հոգւով լեցուած՝ ուրիշներն էլ պէտք է լուսաւորէին քրիստոնէական հաւատով։ Ինչպէս որ առաքեալք և այլ հաւատացեալք սուրբ աւետարանի քարոզութեամբ մարդոց հոգիները լուսով զարդարեցին։ Ա յս մասով կխմացուին Ս. Հոգոյ հետևեալ պատգամները. (Եսայ. ԽԱ. 18. ԽԴ. 3։—Յովել. Բ. 28)։

Խելամուտ եղիր. ինչպէս որ այն ժամանակ Յիսուս տաճարում ամէնքն հրաւիրեց առ ինքն, նմանապէս ամէն ժամանակ ս. եկեղեցին բոլոր հաւատացեալները կը հրաւիրէ արքայութեան անվախճան փառաց ու յաւիտենական երանութեան. երանի այն մարդոց, որոնք նորա օրհնեալ ձայնին

ծ՛չ ոք ի ձենջ առնէ զօրէնան։ Զի խնդրեք զիս ասել-նանել. պատասխանի ետ Ժողովուրդն և ասէ. դե գայ ի քեզ, ով խնդրե զքեզ սպանանել. Յովհ. Է. 19. մինչև 36 համար.

լսելով՝ նորա սուրբ պատուէրները կը կատարեն ամենայն խոնարհութեամբ, հաւատարմութեամբ և յարատև ջանիւք ու սիրով։

Յիսուսի այսպիսի խօսքերը լսողներէն որոնք որ նախանձ չունէին, խոստովանեցան ասելով. «Սա է ճշմարիտ մարգարէ»։ և ոմանք ևս թէ «Սա է Մեսիան»։ սակայն նախանձոտները կասէին. «Միթէ Մեսիան Գալիլեայէն պիտի գայ։ ո՞չ ապաքէն Գիրքը կասէ թէ Դաւիթի ցեղէն և Բեթղեհէմ գիւղէն պիտի գայ»։ և այսպէս երկու կողմանց միջև տարաձայնութիւն յառաջ գալով թէև կամեցան զայն բռնել, բայց ո՛չ ոք կարողացաւ ձեռք երկնցնել առ նա։

Բայց այդ, երբ որ Յիսուսը բռնելու գնացողները վերադարձան, քահանայապետք և փարիսեցիք հարցուցին թէ ինչո՞ւ համար զայն չը բերիք. նորա պատասխան տուին թէ «Մինչև ցայսօր ո՛չ ոք այնպէս խօսեցաւ, որպէս այն մարդը»։ Ա յս պատասխանը շատ դառն, շատ ծանր և շատ դժուարամարս թուեցաւ քահանայապետաց ու փարիսեցւոց. քանզի Յիսուսը բռնել չը բերէին զատ գովեցին և զայն. այս պատճառաւ թէև խիստ բարկացան, բայց որովհետև Յիսուսի դէմ ո՛չ մի յանցանք գտնել կարելի չէր, ուստի ուրիշ խօսք չգտան, բայց միայն հաւատացողները արհամարհելու համար սկսան ասել թէ՝ «Դո՞ւք ևս մոլորեցաք. միթէ մեծերէն և փարիսեցիներէն ումկը

հաւատաց անոր. այլ միայն խաժամուժ ամբոխը, որ օրէնքը չէր գիտեր և նզովից արժանի է։»

Ա. յս պարագայում նոցա չարութիւնը յայտնի եղաւ. որովհետև մեծերէն և փարիսեցիներէն ևս հաւատացողներ կային, սակայն նախանձոտներէն վախենալով՝ կզգուշանային յայտնել։ Ինչպէս որ մին ի նոցանէ՝ Նիկոդիմոս անուամբ (նա՝ որ յառաջագոյն գիշեր ժամանակ Յիսուսի մօտ եկած և հաւատացած էր, որպէս յիշուեցաւ ԺԲ-րդ հարցում) երբ որ լսեց նոցա ապօրինաւոր խօսքը կասէ. «Մի՞թէ մեր օրէնքը կը դատէ մէկը առանց լսելու պայն և նորա գործը քննելու։»

Թէև Նիկոդիմոս Յիսուսի կուսակից չերևնալու համար՝ առանց նորա անունը տալու ընդհանրապէս արդարութեան համար խօսեցաւ, բայց նոքա հասկացան թէ նորա մասին ակնարկել էր միայն, քանի որ յանիրաւի պայն սպանելու փափաք ունէին. վասնորոյ փոխանակ Նիկոդիմոսի հարցման համեմատ պատասխան տալու՝ ուրիշ կերպ նենգութեան դիմելով կը պատասխանեն թէ. «Դու էլ Գալիլեացի ես, քննէ և տես թէ Գալիլեայէն մարգարէ չէներ։» (Թէպէտև Յիսուս Բեթղեհէմի մէջ ծնաւ, բայց Նազարէթում բնակելուն համար Գալիլեացի կոչեցին պայն)։

Հարկ է նկատել սատ թէ յանցանքը գիտնալով՝ համոզուիլ չը կամեցող անձինք հեռացնում ևր աստիճան չարութեան մէջ կը յառաջանան։

Արդարև Նիկոդիմոսի խօսքը՝ ճշմարիտ և իրենց համար օգտակար էր, բայց նախանձը նոցա սրտերուն վրայ իշխած լինելով՝ ոչ միայն իրենց օգուտը ճանաչել չկարողացան, այլ և պայն Որոց անտեղեակ և թերուս մարդու տեղ դնելով՝ նորա պատուոյն ներհակ խօսեցան, որով իրենց յանցանքը կրկնապատկեցաւ. քանզի Որոց մէջ գրուած չկար թէ Գալիլեայէն մարգարէ չէներ բնաւ. այս պատճառաւ խմբոյն կը ցրուեն ժողովը, որպէս զի մի գուցէ Նիկոդիմոսէն վերստին յանդիմանութիւն լսեն. քանի որ իրենց խօսածը հակառակ էր ճշմարտութեան[1]։

Յիսուս տօնի վերջին օրը տաճարում քարոզել զկնի, ինչպէս վերև յիշուեցաւ՝ երեկոյեան դէմ Զիթենեաց լեռն երթալով՝ այնտեղ կը հայատաւորեան նորէն տաճարը կուգայ, և երբ նըստած՝ կսկսի քարոզել ժողովրդեան, դպիրք, քահանայապետք և փարիսեցիք որոնք նորա թշնամիներն էին և միշտ պատճառ կորոնէին պայն յանցաւոր ցոյց տալու ժողովրդեան, նորա առջև կը բերեն շնութեան մէջ բռնուած մի կին և կասեն. «Մովսէս պատուիրեց մեզ այսպիսիները քարկոծել. դուն ի՞նչ կասես։»

---

1. Ի վերջնում աւուր մեծի տօնին հայր Յիսուս՝ ազազակեը և ասէր. եթէ ոք ծարաւի էցէ, եկեսցէ առ իս և արբցէ... Ցովհ. Է. 37. մինչև 53 համար։

Տե՛ս դու այդ նենգամիտ մարդոց չարութիւնը. վասն զի Յիսուսի գթասիրութիւնն ու ամենուն նկատմամբ ունեցած կարեկցութիւնը յայտնի լինելով՝ այս հարցումը կուզեն իրեն, որպէս զի եթէ գթալով հրաման չտայ զայն քարկոծելու, սկսին զայն անուանարկել թէ նա օրինաց հակառակ կը վարուի: Նոցա դիտաւորութիւնը գիտնալով՝ Յիսուս առանց պատասխան տալու գետի վար նայելով, իւր մատով գետնի վրայ գիր կը գրէր: Երբ վերստին կը հարցնեն, աչքերը վեր բարձրացնելով կը պատասխանէ թէ «Ձեզմէ ով որ անմեղ է, թող առաջին քարը նա ձգէ այս կնոջ վրայ». և դարձեալ գետի վար նայելով կը գրէ:

Երբ որ նոքա Յիսուսի այդ պատասխանը լսեցին, այլ ևս ո՛չ մի խօսք խօսելու անկարող լինելով՝ մի առ մի դուրս ելան և միայն յիշեալ կինը մնաց այնտեղ, որուն Փրկիչը կասէ քաղցրութեամբ. «Գնա՛ ու այսուհետև մի՛ մեղանչեր[1]:» Թէպետև աւետարանում գրուած չէ թէ ինչ գրեց Յիսուս գետնի վրայ, բայց կը կարծուի թէ

1. Իսկ Յիսուս գնաց ի լեառն Ձիթենեաց. և ընդ առաւօտն դարձեալ եկն ի Տաճարն, և զայր առ նա ամենայն ժողովուրդն, և նստեալ ուսուցանէր զնոսա: Ածին առ նա դպիրքն և քահանայապետքն և փարիսեցիք՝ կին մն ըմբռնեալ ի շնութեան, և կացուցեալ զնա առաջի... Յովհ. Ը. 1. մինչև 11 համար.

յիշեալ մեղաւոր կինը ամբաստանող անձանց մեղքերը գրած է, այնպէս որ իւրաքանչիւրը իւր արած յանցանքները անդ կարդալով, իսկոյն կը քաշուի կերթայ այնտեղէն առանց պատասխան:

Յիրաւի, այդ մարդիկ պատժոյ արժանի էին այս մասին, քանի որ թշնամական մտքով Յիսուսը փորձելու և զայն պախարակելու խորհուրդ և փափաք ունէին. բայց նա՝ մինչև իսկ չը յանդիմաներ զանոնք. միայն թէ իրենց չար գործքերը կը յայտնէ ու յերևան կը բերէ. մանաւանդ թէ այս պարագայում իւր Աստուածութիւնը կը յայտնէ, որպէս զի իմանան և ապաշաւեն. քանզի մի միայն Աստուծոյ յատուկ է մարդոց գաղտնի գործերը գիտենալ:

Դարձեալ. «Ձեր մէջ ով որ անմեղ է, թո՛ղ նա առաջին քարը ձգէ» ասելով՝ համայն մարդիկը կը խրատէ որ ոչ ոք չը համարձակի այլոց գործերը քննել և դատապարտել, այլ պէտք է որ իւրաքանչիւրը չանայ իւր գործերն ու մեղքերը քննելու և թողութիւն գտնելու: Վասն զի նա՝ որ ինքզինքը մեղաւոր կը ճանաչէ, ուրիշներուն վրայ յանցանք որոնելու և զայլս դատապարտելու իրաւունք չատր իրեն. ապա թէ ոչ, ցոյց կուտայ թէ իրաւունք ճանաչելու ընդունակ մէկը չէ, և մարդասիրութեան վրայ գաղափար չունի:

Յիսուս մի անգամ ևս տաճարը գալով՝ այնտեղում կը կենայ, ուր ի նպաստ ծախսուց տաճա-

ըին մի մտուկ դրուած էր, և ժողովուրդը իբր համաձայն ողջմտութիւն դրամ կը ձգէր նորա մէջ. և երբ կակի այնտեղ քարոզել, կը յայտնէ թէ ինքն է լոյս աշխարհի, թէ իւր հետևէն եկող և իւր պատուէրները կատարող մարդիկ հոգևոր գերութենէ—մեղքէ պիտի ազատուին, թէ երկնքում յաւիտենական ու անմահ կեանց պիտի արժանանան, թէ իւր դատաստանները ճշմարիտ և արդար են. մանաւանդ թէ ինքն է Աստուծոյ որդին և հօր Աստուծոյ կողմանէ ղրկուած է և նորա հրամանը կատարելու համար խաչը պիտի է ելնէ, մեռնի և երրորդ օրում յարութիւն առնելով պէտք է գնա առ Նա. և թէ վերջապէս հրէայք զինքը պիտի որոնեն ու չը պիտի կարողանան գըտնել և իրենց մեղաց մէջ մեռնելով՝ արքայութենէ պիտի զրկուին (ինչպէս որ այս իմաստով յառաջագոյն ևս խօսած էր նոցա):

Յիսուսի այսպիսի խօսքերը լսողներէն շատերը՝ որոց սիրտը մաքուր էր, հաւատացին իրեն. իսկ չարասիրտները տեսակ տեսակ հակառակ պատասխաններ կուտան. վասն զի նախանձը նոցա հոգւոյ աչքերը կուրացուցած լինելուն համար, նորա հոգևոր խօսքերը մարմնաւոր իմաստով և մանաւանդ իւր Աստուածութեան նկատմամբ առածները նորա մարդկութեան համար կը հասկնային. այս պատճառաւ փոխանակ հաւատալու՝ քար կառնուն զայն քարկոծելու համար, որով Յիսուս

իսկոյն կը թողու տաճարը և կը մեկնի այնտեղէն և այսպէս այս անգամ ևս նոցա կատաղութիւնը կը մնայ անհետևանք[1]:

Հարց. ԽԱ.

Հրէայք Յիսուսը քարկոծելու իրենց անկարողութիւնը տեսնելով իմացան նորա զօրութիւնը եւ դարձի գալով իրենց չար ընթացքը փոխեցին.

Պատ. Բնաւ երբէք. մանաւանդ թէ ընդհակառակն նորա հաւատացողը պատժեցին: Վասն զի, Յիսուս տաճարէն մեկնելէն ձին, ձանապարհին վրայ ի մօրէ կոյր ծնած մի մուրացիկ մարդ տեսաւ և դիմելով նորա վրայ կամեցաւ բժշկել զայն: Աւաքեալք նորա մասին կը հարցնեն Յիսուսի թէ որո՞ւ մեղաց պատճառաւ այս մարդը կոյր ծնած է. իւր թէ հօրը կամ մօրը մեղքն է պատճառ նորա կոյր ծնելուն. Նա կը պատասխանէ թէ ո՛չ իւր և ո՛չ նորա ծնողաց մեղքն է պատճառ. այլ նորա վրայ Աստուծոյ գործը պէտք է յայտնուի:

Թէպէտև աւելն մեղանչող մարդ պատիժը կը

---

1. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս, և ասէ. ես եմ լոյս աշխարհին. որ գայ զկնի իմ, ընդ խաւար մի գնասցէ. այլ ընկալցի զլոյսն կենաց. Յովհ. Ը. 12. մինչև 59 համար.

կրէ անպատճառ, սակայն աշխարհի վրայ պատահած բոլոր պատիժք կամ չարակրութիւնք մարդոց մեղաց պատճառաւ տեղի չեն ունենար, այլ երբեմն էլ Աստուծոյ գաղտնի և իմաստուն դատաստանաւ յառաջ կուգան, որոց մարդկային խելքը չհասնիր. ինչպէս որ վերոյիշեալ ի մօրէ կոյր ծնած մարդուն դէպքը այս կարգէն էր. վասնորոյ Յիսուս գետնի վրայ թքանելով՝ կաւ կը շինէ, և այդ կաւը նորա աչաց քսելով՝ կասէ մարդուն. «Գնա Սելոամի ջրով լուա աչքերդ». նա էլ երբ որ գնաց և լուացուեցաւ, իսկոյն բժշկուեցաւ բոլորովին:

Սակայն նորա դրացիքն ու յառաջապոյն գինքը կոյր տեսնող անձինք զարմանալով իրարու կասեն. «Ա՛յս մարդը այն չէ՞, որուն համար կասուէր թէ կոյր ծնած է և որ մուրացիկ էր ատ». ոմանք կասէին թէ նա է. իսկ այլք կասէին թէ ոչ, այլ կը նմանի անոր. և ինքը կասէր թէ ես եմ. ուստի կը հարցնեն թէ ուրեմն աչքերդ ինչպէս բացուեցան, որուն նա պատասխան կուտայ, ինչպէս վերև յիշուեցաւ, թէ Յիսուս բժշկեց գինքը. նորա կը հարցնեն թէ ո՞ւր է նա. քանզի Յիսուս անդ չը կենալով ուրիշ տեղ գնացած էր. այս պատճառաւ բժշկուածը կասէ թէ չը գիտեմ. նորա սոյն պատասխանին վրայ կառնուն գինքը ու փարիսեցիներուն մօտ կը տանին:

Յիսուսի այս հակառակորդք ևս կը հարցնեն

թէ ինչպէ՞ս կը տեսնես. մարդը կը փութայ պատասխանել թէ «Աչքերուս վրայ կաւ դրաւ, լուացուեցայ և կը տեսնեմ:» Որովհետև սոյն հրաշքը շաբաթ օրուն կատարուեցաւ, նորա Յիսուսը մեղադրելու համար կասեն որ «Այդ մարդը Աստուծոյ հաճոյ մէկը չէ, վասն զի շաբաթը չը պահեր». սակայն շատերն էլ սկսան առարկել թէ մեղաւոր մի մարդ ինչպէ՞ս կարող է այսպիսի հրաշքներ գործել, և այսպէս նոցա միջև տարաձայնութիւն կը ծագի:

Այս անգամ կը դառնան ու բժշկուած մարդուն կը հարցնեն թէ դու ի՞նչ կասես այն անձին համար, որ զքեզ բժշկեց, քու աչքերը բացաւ. նա կը պատասխանէ թէ մարգարէ է. սակայն փարիսեցիք չը հաւատալով թէ նա իրօք կոյր եղած է, կը կանչեն նորա ծնողքը, և նոցա կը հարցնեն. «Ա՛յդ է ձեր որդին, որուն համար կասէիք թէ կոյր ծնաւ. այժմ ինչպէ՞ս կը տեսնէ ուրեմն:» Ծնողքը կը պատասխանեն այդ չարամիտներուն թէ «Արդարև այս է մեր որդին և թէ կոյր ծնաւ. բայց թէ այժմ ինչպէ՞ս կը տեսնէ և ո՞վ բացաւ նորա աչքերը, չը գիտենք. ինքը չափահաս է արդէն, իրեն հարցուցէք:» Նորա այս պատասխանը տուին առ երկիւղի, որովհետև յիշեալ նախանձոտները ուխտած էին ժողովարանէն արտաքսել այն մարդը, որ Յիսուսի նկատմամբ խոստովանի թէ նա է Մեսիան:

Նայէ դու այդ չարաճիճ մարդոց անզօր ու անձաւք վիճակին. որովհետև Յիսուս պատժելու կարող չեղան, նորա հաւատացողը կամեցան պատժել. այսու հանդերձ իրենց յայտնի անիրաւութեան համար բժշկուած կոյրին յանդիմանութիւն լսեցին: Ասան դի երբ զայն վերստին կոչելով ասացին թէ՝ «Շնորհակալ եղիր Աստուծմէ, մենք գիտենք որ այն մարդը մեղաւոր է,» նա կը պատասխանէ թէ «Ես չը գիտեմ մեղաւոր լինելը, այլ զայս գիտեմ որ կոյր էի և հիմայ կը տեսնեմ:»

Արդարև այս պատասխանը մեծ յանդիմանութիւն և անարգանք էր նոցա. բայց նոքա չը հասկանալով նորէն կը հարցնեն թէ «Ի՞նչ արաւ քեզ և ինչպէ՞ս բացաւ աչքերդ:» Այս անգամ յիշեալի սիրտը նեղացած՝ բացորոշակի կը յայտնէ նոցա իւր դժգոհութիւնը ասելով. «Հիմայ ասացի ձեզ. միթէ չը լսեցի՞ք. կուզի՞ք արդեօք դուք ևս նորա աշակերտիլ»· ահա նորա սոյն համարձակ պատասխանին վրայ կսկծին հայհոյել ասելով. «Դուն եղիր նորա աշակերտ. մենք Մովսէսի աշակերտներն ենք. մենք գիտենք որ Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ, բայց այս մարդը չենք գիտեր թէ որտեղից է»· որուն դարձեալ կը պատասխանէ կոյրը թէ՝ «Ա՛յս իսկ է զարմանալին որ դուք չէք գիտեր նորա ուսո՞ւմ լինելը, և նա՝ իմ աչքերը բացաւ. ի յաւիտենից լսուած չէ որ մէկը կոյր ծնած մարդու աչքը բանայ. եթէ այն մարդն

Աստուծոյ հաճոյ չը լինէր, կարող չէր ոչինչ անել:»

Սոյն վերջին խօսքերուն ուրիշ կերպ չը կարողանալով պատասխանել, զայն անարգելու համար կասեն կուրին կատաղութեամբ. «Դու մեղաց մէջ իսկ ծնած ես և մեզ վարդապե՞տ լինել կուզես». և իսկոյն դուրս կը հանեն զայն ժողովարանէն բարկութեամբ:

Յիսուս լսելով որ զայն դուրս հանած են, երբ որ կը գտնէ բժշկուած մարդը, կը հարցնէ. «Դուն կը հաւատա՞ս որդւոյն Աստուծոյ». նա կը պատասխանէ. «Տէր, ո՞վ է որ հաւատամ». Յիսուս կասէ. «Նա է, զոր տեսար և քեզ հետ կը խօսի». վասնորոյ նա եւ իսկոյն կատարեալ հաւատով նորա առաջն ընկնելով երկրպագութիւն կը մատուցանէ իւր բարերար և երկնաւոր վարդապետին:

Յայնժամ Յիսուս կազդուրէ. «Դատաստանի համար եկած եմ այս աշխարհը. վասնորոյ որոնք որ չեն տեսներ, պէտք է որ տեսնեն. իսկ որոնք որ կը տեսնեն, պէտք է կուրանան»: Ա՛յնտեղ գտնուող փարիսեցիներէն ոմանք լսելով զայս կասեն. «Միթէ մենք կո՞յր ենք». Յիսուս նոցա կը պատասխանէ. «Եթէ կոյր լինէիք, մեղքը ձերը չէր լինէր. բայց քանի որ կասէք թէ կը տեսնէք, ձեր մեղքը կը հաստատուի ու կը մնայ ձեր վրայ[1]:»

---

1. Եւ մինչդեռ անցանէր (Յիսուս) եռաս զայը մի կոյր է ծնէ։ Հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ա-

Աբդարև Յիսուս իբր դատաստանը յայտնեց այս խօսքով. վասն զի փարիսեցիքը Ս. Գրոց տեղեակ լինելով, հպարտութեամբ ու նախանձու կրքերով վարակուած՝ իրենց հոգւոյն աչքերը կուրացուցին և չը կամեցան հաւատալ. սակայն աննախանձ և խոնարհամիտ մարդիկ՝ հաւատքով Աստուծոյ շնորհքն ընդունեցին, որով նոցա հոգիներուն աչքերը բացուեցան երկնային փառաւոր ճշմարտութեանց համար:

Երևակայէ այժմ հրէից թշուառ ու դժբաղդ կացութիւնը. որովհետև Յիսուսի խօսքերէն և գործած հրաշքներէն արևու լոյսին պէս յայտնի էր թէ նա է Մեսիան, բայց նոքա իրենց չարութեան պատճառաւ չկարացին ճանաչել զայն: Ինչպէս որ վերոյիշեալ փարիսեցիքը առ նախանձու իրենք չը հաւատացին զան՝ հաւատալ ու յօժարամիտ մարդիկն էլ պատժելու չարի յառաջ գացին. նմանապէս խաբեբայ անձինք յառաջագոյն իրենք զիրենք իբրև Մեսիա ներկայացնել կամեցան և ունեցոյ կորստեան պատճառ եղան. բարեբաղդաբար ժողովուրդը նոցա չը լսեց, քանզի նոքա գող ու աւազակ մարդոց նման չարագործ, անիրաւ և նենգամիտ անձինք էին:

Ա՛յս պատճառաւ Յիսուս ցոյց տալու համար

տեն. ռաբբի, ոյք վեցաս է, սորա, թէ հօր և մօր խաբոյ, զի կոյր ծնցեր. Ծովհ. Թ. 1. մինչև 41 հատոր.

թէ ինքն է Աշմարիա Մեսիան, և թէ Ս. Գրոց պատգամներուն համաձայն ինքն ունի այն ամէն նշանները, որոնք կը հաստատեն Մեսիայի անձնաւորութիւնը և նորա պաշտօնը երկրիս վրայ, այլաբանական խնամտով մի առակ կը խօսի, յորում սուբբ եկեղեցին կը նմանցնէ ոչխարաց գաւթին, հաւատացեալները՝ ոչխարաց, իսկ ինքը կը նմանցունէ այն գաւթի դրան, քանի որ մարդիկ առանց Յիսուսի հաւատալու՝ և սուբբ եկեղեցւոյ հոգևոր իշխանութեան ներքև մնալով՝ նոքա պատուէրները կատարելու՝ կարող չեն երբէք Աստուծոյ արքայութիւնը ժառանգել: Դարձեալ, Յիսուս ինքը կը նմանցնէ քաջ հովուի. քանզի, ինչպէս որ քաջ հովիւը՝ ոչխարաց ապահովութեան համար իւր անձն անգամ կը զոհէ, նոյնպէս Յիսուս իւր անձը զոհեց մարդոց փրկութեան համար:

Ա՛յս մասին պարսին վախնալ նոքա, որոնք ժողովրդեան հոգևոր կառավարութեան գլուխն անցած են. վասն զի, եթէ հոգ չը տանին իրենց խնամոց յանձնուած հոգիները մեղքէ պղուշացնելու և միայն իրենց հանգիստն ու մարմնաւոր շահը ի նկատի ունենան, այնպիսիք սաստիկ պատիժ կրելու են անտարակոյս, և արժանի են, քանի որ փոխանակ ժողովրդեան հոգևոր փրկութեան գործը իրենց հոգածութեան առարկայ անելու միշտ, ինչպէս որ պարտական էին, անձնասի-

բուԹեամբ իրենց սեփական շահուց ու զուարճուԹեանց նուիրեցին այն անգին ժամանակը, զոր Աստուած իրենց պարգեւած էր մարդոյ յաւիտենական փրկուԹիւնը հոգալու համար:

Ահա այս պարագայում Յիսուս բացորոշակի յայտնեց ԹԷ ինքն է ամենուն Տէրը, որ ամենուն վրայ կիշխէ, ԹԷ Հօր Աստուծոյ հրամանաւ կամաւորապէս պէտք է չարչարուի ու մեռնի և ապա իւր սեփական զօրուԹեամբ մեռելներէն յարուԹիւն առնելով՝ յերկինս համբառնալէն ցկնի, իւր առաքելոց քարոզուԹեամբ հեթանոսները պիտի գառնան ի հաւատս և քրիստոնէական սուրբ եկեղեցւոյ պիտի անդամակցին. ԹԷ ինքը նոցա առջեւէն գնալով՝ նոքա ևս իրեն պիտի հետեւին. և ԹԷ արդարները մեղաւորներէն զատելով՝ արքայուԹեան պէտք է արժանացնէ, իսկ մեղաւորները դժոխքի տանջանաց պիտի դատապարտէ, և այսպէս բոլոր արդար և սուրբ մարդիկ պիտի լինին Ննի հօտ և ինքը պիտի լինի նոցա հովիւը:

Յիսուսի սոյն խօսքերը լսելով, ոմանք սկսան ասել ԹԷ նորա մէջ սատանայ կայ, իսկ այլք՝ ԹԷ այսպիսի խօսքեր դիւահար մարդու զործ չէ. միԹԷ սատանան կարո՞ղ է կոյր մարդու աչքերը բանալ. և այս կերպով ժողովրդեան մէջ նորին հակառակուԹիւն յառաջ կուգար[1]:

1. Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ո՛չ մտանէ ընդ

Յիրաւի նախանձոտ հրէայք մինչև այն ժամանակ Յիսուսի ընդդէմ կերպկերպ անարգար ու ապօրէն խօսքեր խօսեցան, բայց նորա խօսքերուն և զործոց մէջ ո՛չ մի պակասուԹիւն, և հետևաբար մեղաւոր արժանի ո՛չ մի նիւԹ կամ պատճառ չը զանելով, որոշեցին ուրիշ տեսակ ներքոյի միջոց դիմել: Վ.աներոյ երբ տաճարի նաւակատեաց ծօնը հասաւ, որ ձմեռ եղանակ էր, և Յիսուս Սողոմոնի սրահին մէջ կը շրջէր, ահագին բազմուԹիւն նորա մօտ հաւաքուելով կասեն իրեն ԹԷ՝ «Մինչև ե՞րբ մեր հոգիները երկբայուԹեան մէջ պէտք է, ասա՛ մեզ. եթէ դու ես Մեսիան (Քրիստոսն), համարձակ ասա՛ մեզ այժմ:»

Զարմանալի և ներքաւոր հրէից միտքը՝ ո՛չ ԹԷ իրօք նորա Մեսիա լինելը իմանալով հաւատալ էր, այլ պարզապէս զայն սպանելու դիտաւորուԹեամբ այդ հարցումը կուզղեն առ նա: Քանզի, ըստ իւրեանց ԹիւրԹեաց՝ կը համարէին ԹԷ Մեսիան գալու ժամանակ իրրև մի մարմնաւոր թագաւոր պէտք էր բոլոր աշխարհի վրայ իշխել, ուստի այդ հարցումը կանեն, որպէս զի եթէ Յիսուս բոլորի ներկայուԹեան յայտնապէս ասէ ԹԷ ինքն է Մեսիան, մարմնաւոր կառավարուԹեան մտանեն զայն

գուռն ի գաւիԹ ոչխարաց, այլ ընդ այլ ևլանէ, նա գող է և աւազակ: Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց. Ցովհ. ԺԹ. 1. մինչև 21 համար.

իբրև հետամուտ և թեկնածու այդ իշխանութեան. իսկ եթէ ասէ թէ Մեսիան չէ, իրենք քարկոծեն զայն իբրև հայհոյիչ առ Աստուած, քանի որ յառաջագոյն շատ անգամ ասած էր իրենց թէ ինքն է Աստուծոյ որդին ու Մեսիան:

Արդարև նոքա այս պարագայում պատժոյ արժանի էին, որովհետև մինչև այն ժամանակ տեսակ տեսակ առակներով շատ անգամ յայտնած լինելով նոցա թէ ինքն է Մեսիան, և մանաւանդ իրեն գործած հրաշքներէն տրուս պէս յայտնի էր արդէն, ուսոի փոխանակ հաւատալու՝ խառն բազմութեամբ պահանջելու կելնեն ինչ որ գիտէին կամ բազմից լսած էին: Թէպետև նոցա միտքը դիտէր Յիսուս, բայց իւր անսահման ողորմութեամբ նոցա անզգամութիւնը իրենց երեսին չը զարներ, ընդհակառակն կը պնդանի հետ և խոնարհ եղանակաւ պատասխանելու նոցա, որպէս զի ըմբռնելով իւր մարգասիրական վարմունքը՝ զգաստանան և ուղղուին:

Իրաւ է որ այս անգամ բացարձակ յայտնի կերպով չասաց թէ ինքն է Մեսիան, սակայն արած խօսքերէն ամէն կերպով յայտնի էր: Որովհետև ոչ միայն կը վճռէ թէ որոնք որ իրեն հաւատալով՝ իւր հետէն կերթան, չը պիտի կորսուին, այլ յաւիտենական կենաց պիտի հասնին, այլ նաև կը յայտնէ թէ ինքը Ո է հօր Աստուծոյ հետ: Եւ որովհետև նոքա վաղուց ի վեր արդէն Թշնամացած՝ պատրաստակ կորոնէին իրենց կիրքը յագեցնելու, ուսոի նորա խօսքերը լսելով՝ իրենց սրտում եղած ատելութիւնը յայտնի կանէն. քանզի իսկոյն քարեր կը վերցնեն զայն քարկոծելու համար, բայց անկարող կը գտնուին, քանի որ նորա կամքը չեղած՝ կարելի չէր ձեռք երկնցնել նորա վրայ. և Յիսուս անտի ելնելով՝ Յորդանան գետի գիմացի կողմն անցաւ. ուր Յովհաննէս կը մկրտէր յառաջ[1]. (տես ԺԷ-րդ հարցում):

Հարցում Խ.

Ցիսուս ինչո՞ւ գնաց Յովհաննէսի մկրտութիւն կատարած տեղին.

Պաս. Արդէս զի ժողովուրդը Յովհաննէսի՝ իրեն նկատմամբ ստացած վկայութիւնը յիշելով հաւատայ իրեն: Արդարև շատ բազմութիւն այնտեղ Յիսուսի մօտ գնալով՝ սկսան միմեանց ասել թէ՝ թէպէտ Յովհաննէս հրաշք չը գործեց, բայց ինչ որ նորա համար խօսեցաւ՝ բոլորը ճշմարիտ էր և այսպէս շատերը հաւատացին Յիսուսի[2], որը նոցա

---

1. Եղեն յայնժամ նաւակատեաքն յԵրուսաղէմ, և ձմեռն էր: Եւ շրջէր Յիսուս ի տաճարին, ի սրահին Սողոմոնի. Յովհ. ժ. 22. մինչև 30 համար.

2. Եկին բազումք առ նա՝ և ասեն, զի Յովհաննէս նշան ինչ ոչ արար, բայց զամենայն՝ զոր ասաց Յովհաննէս վասն նորա՝ ճշմարիտ էր, և բազումք հաւատացին ի նա անդ. Յովհ. ժ. 41.

քարոզելով կասէ. «Եթէ մի մարդ չը թողու իւր հայրը, մայրը, կինը, զաւակ, եղբայր և քոյր, կամ մինչև իսկ իւր անձը, և իւր խաչն առած՝ ինձ չը հետևի, կարող չէ ինձ աշակերտ լինել:»

Աբդարև մեր մեծաւոր ազգականները սիրել և նոցա կարօտութեան ժամանակ նոցա օգնել՝ քնական պարտաւորութիւն է. բայց եթէ նոքա պատճառ կը լինին գքեզ մեղաց մէջ ձգելու, պարտիս թողուլ և հեռանալ այդպիսի մերձաւորներէն, քանի որ մարդս ամէն բանէ յառաջ և ամէն բանէ առաւել իւր հոգւոյն փրկութիւնը հոգալու պարտական է. (այս մասին տես նաև Լ.-րդ հարցում): Ա.յս խօսքով կիմանանք ո՛չ միայն թէ Յիսուս պէտք է խաչուէր, այլ նաև թէ ամէն մէկ մարդու համար, իւր ասպնջականին համեմատ, Տիրոջ կողմանէ մէկ մէկ խաչ (նեղութիւն, չարչարանք, վիշտ) սահմանուած է այս երկրի վրայ:

Ուրեմն մարդս պարտական է այս աշխարհի վրայ իրեն պատահած նեղութեան յօժարակամ սիրով համբերել՝ «Ա.յս իմ խաչն է ասելով». և ո՛չ թէ այս կամ այն պատճառ համարել իւր կրած նեղութեան. միայն թէ, պէտք է ուշադրութիւն անել որ ինքը պատճառ չտայ անոր. որովհետև չափազանցութեամբ և արժան եղածէն աւելի գործոց միջամուխ եղող մարդը ի հարկէ նեղութիւն կը կրէ: Ա.յս առթութեամբ, մարդս որ ապաշխարէց իսկ որ մտնելու լինի, նախ պարտի

մտածել թէ իւր ոյժը կը բաւէ՞ արդեօք յաջողութեամբ ի կատար ածելու:

Ա.հա այն մտքով Յիսուս կասէ. «Ձեր մէջ ո՞վ է այն մարդը, որ երբ մի աշտարակ շինել կամենայ, նախ չը մտածեր թէ արդեօք ունի՞ բաւական կարողութիւն մտադրեալ շինքը ամբողջովին աւարտելու համար. որպէս զի մի գուցէ շինութեան հիմքը դնելէ յետոյ՝ չը կարողանայ լրացնել, և այն ժամանակ մարդիկ սկսին ծաղրել զայն ասելով. «Ա.յս այս սկսաւ և ո՛չ կարաց կատարել:» Դարձեալ, ո՞ր թագաւորն է այն, որ տասն հազար զօրքով պատերազմի գնացած ժամանակ՝ երբ որ նորա հակառակորդը քսան հազարով գայ, յառաջապէն չը մտածէ թէ արդեօք կարո՞ղ է իւր տասն հազարով նորա քսան հազար զօրաց յաղթել. եթէ ոչ, դեռ թշնամին չմօտեցած դեսպան ղրկելով աղաչանօք խաղաղութիւն կը խնդրէ:»

Աբդարև, ինչպէս որ աշխարհային կամ մարմնաւոր գործոց մէջ մարդս պարտական է յառաջապէն իւր կարողութիւնը կշռել՝ ծաղրելի չը լինելու համար, նմանապէս հոգևոր շաւղի հետևող անձանց նկատմամբ ևս նոյն պարտականութիւնը կայ: Արդ՝ Յիսուսի աշակերտ լինել փափաքող անձը՝ նախ և յառաջ իւր սրտին հանելու է մարմնաւոր սիրելեաց, մանաւանդ նիւթական ստացուածոց, զուարճութեանց, մեծութեան և անցաւոր փառաց սէրը, որպէս զի աշխարհի ծաղ-

բանաց առարկայ չլինի։ Քանզի, ինչպէս որ լոյսն ու խաւարը միմեանց հետ չեն միաբանիր, նմանապէս Աստուծոյ և մարմնաւոր իրաց սէրերը ի միասին ու միկտեղ կարող չեն կենալ։

Սակայն ի վերայ այսր ամենայնի պէտք չէ յուսահատուիլ, որովհետև եթէ մարդս իւր կարողութիւնը կշռելով իւր ասպնձանին ու վիճակին համեմատ առաքինութեան մէջ թերութիւնը չը գործելու խոհեմութիւնը կունենայ, աստուածային շնորհօք կարող է Աստուծոյ հաճոյ լինել։ Յիսուս այսպիսի չափաւոր ու խոհեմ ընթացքը աղի նմանցնելով կասէ. «Աղը լաւ է, բայց եթէ իւր համը կորսնցնէ, այլ ևս ոչ մի բանի պիտանի չը լինելով դուրս կը ձգուի։» Արդարև, եթէ մարդս թերանայ այն պարտուց մէջ, որ է առաքինութիւն գործել, ինչ ասպիճան կամ պաշտօն էլ ունենայ, համը կորուսած աղի նման իրրև անպիտան ոք դուրս կը ձգուի, այն է, Աստուծոյ ողորմութենէն կը զրկուի[1]. (այս մասին տես նաև Լ.Զ-րդ հարցում)։

---

1. Երթայն ընդ նմա ժողովուրդք բազումք. գաղձաւ և ասէ ցնոսա։ Թէ ոք գայ առ իս՝ և ոչ ատեայ զհայր իւր և զմայր և զկին իւր և զորդիս և զեղբարս և զքոյր, նաև զանձն ևս իւր, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Զի որ ոչ բառնայ զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել։ Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ... սկսանիցին ծաղր առնել

Տես դու Յիսուսի ողորմութիւնը, որովհետև բոլոր մարդոց փրկութեան համար եկած լինելով՝ ոչ ոք կը մերժէ, մաքսաւորաց և մեղաւորաց հետ ևս ուտելով ու խմելով կը քարոզէ նոցա, որպէս զի նոքա դառնան իրենց չար ճանապարհէն և ապրին։ Սակայն հպարտ դպիրներն ու փարիսեցիները առ նախանձու կը տրտնջան ասելով թէ՝ «Ինչո՞ւ համար մեղաւորները կընդունի և նոցա հետ կուտէ ու կը խմէ»։ Յիսուս նոցա միտքը գիտնալով՝ հասկցնելու համար թէ այդ մասին որչափ անիրաւ են, օրինակ կը բերէ մի հովիւ, որ ունեցած հարիւր ոչխարէն մի հատը կորսնցնէ, ինքնասէն և ինը հատը անապատում թողլով՝ կուզենայ ոչխարը կորած մինչև որ գտնէ զայն. և երբ որ գտնէ, ուրախութեամբ իւր ուսին վրայ դնելով՝ կը կոչէ իւր բարեկամներն ու դրացիները, զորս կը հրաւիրէ խնդակից լինել իրեն. որովհետև կորուսած ոչխարը գտաւ։

Դարձեալ, օրինակ կուտայ մի կին, որ ունենալով տասը դահեկան, մի դահեկանը կորսնցնէ, ոչ ապաքէն մոմ կը վառէ և տունը աւելելով ուշադրութեամբ կորած զայն մինչև որ գտնէ. և երբ որ գտնէ, բարեկամներն ու դրացիները կոչելով կասէ նոցա. «Ուրախ եղէք ինձ հետ. քանզի

զնա՝ և ասել, թէ այսօր այս ոչսաւ չենել, և ոչ կարաց կատաքել... Դուկ. ԺԹ. 25. մինչև 35 համար.

կորուսած դրամն գտայ։» Ահա այս կերպ՝ կը յաւելու, երկնքի հրեշտակները կուրախանան մի մեղաւորի դարձին վրայ, որ կապաշխարէ[1]։ Այս առակները մեծ մխիթարութիւն են մեղաւորաց համար. որովհետև ինչպէս որ հովիւը իւր ոչխարը, կամ թէ կինը՝ իւր կորուսած դրամը որոնելով գտան, նմանապէս Յիսուս իւր չարչարանքով մարդկային ազգը որոնելով գտաւ, որ սատանայի թելադրութեամբ մեղաց մէջ ընկնելով՝ կորուսած էր հոգւով։

Թէպէտև Յիսուս այսպէս իւր ողորմութիւնը յայտնեց, բայց մարդս էլ իւր հոգւոյ փրկութեան խնդրում թէ ի՞նչ եղանակաւ պէտք է առանց թերանալու եռանդով աշխատի, զայն ևս մի ուրիշ առակով կը յայտնէ. որպէս պի ամէն մարդ խրատ առնելով՝ ըստ այնմ շարժի և Աստուծոյ շնորհաց օգնութեամբ արքայութեան արժանի լինի։ Ա.ասիկ առակը։

Մի մարդ երկու որդի ունէր, որոց կրտսերը հօրը սատուածքէն իրեն ընկած ժառանգական բաժինը խնդրելու ժամանակ՝ հայրը բաժանեց նոցա մէջ իւր ունեցածը։ Շատ չանցած՝ կրտսեր

1. Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք և մեղաւորք լսել ի նմանէ. Ցրանչէին փարիսեցիքն և դպիրք՝ և ասէին. ընդէր սա զմեղաւորս ընդունի՝ և ուտէ ընդ նոսա։ Ասաց առ նոսա զառակս զայս. Ղուկ. ԺԵ. 1. մինչև 10 համար.

որդին հեռու մի երկիր գնալով անարժան ընթացքով ու զուարճութեանց մէջ ամբողջ հայրենական ժառանգութիւնը վատնեց։ Երբ այն երկրում սաստիկ սով պատահելուն համար սկսաւ չքաւորիլ, բնակիչներէն միոյն մօտ ծառայութեան մտաւ, նա էլ իւր ագարակը ղրկեց զայն խոզ արածելու համար. սակայն թէև նա կը բաղձար գոնէ խոզերուն կերած եղջիւրներէն ուտել իւր որովայնը յագեցնելու համար, այսու հանդերձ ո՛չ ոք կուտար իրեն այդ օտարութեան մէջ, քանի որ ո՛չ ծանօթներ և ո՛չ բարեկամներ ունէր, որք նորա յաճին թշուառութեան վրայ փոքր ինչ գութ կարող էին ունենալ։

Ահա այսպիսի անօգնական ու թշուառ կացութեան մէջ սկսաւ մտաբերել թէ իւր հայրենական տան ծառայքն անգամ հանգիստ և անկարօտ կապրին ու ինքը անսուաղ ու սովալլուկ պէտք է կորսուի. ուստի ինքնիրեն խորհելով կասէ. «Ելնեմ, գնամ առ հայրն իմ և ասեմ. Հա՛յր, մեղանչեցի, այսուհետև արժանի չեմ այլ ևս քու որդին կոչուելու. բայց գոնէ իբրև ծառայ ընդունէ զիս։» Եւ դարձեալ երբ որ այդպիսի խոնարհամիտ տրամադրութեամբ ելաւ և գնաց, հայրը հեռուէն տեսաւ զայն և գութը շարժելով նորա վրայ՝ ընդ առաջ գնաց, և նորա պարանոցին փարելով հայրական սիրով համբուրեց զայն։

Յայնժամ այդ անառակ որդին ըստ իւր վե-

բոյնշեալ հաստատուն որոշման՝ կը խոստովանի իւր մեղաւորութիւնն ու անարժանութիւնը. բայց հայրը առանց իսկ յիշելու նորա յանցանքը, ծառայից կը հրամայէ իսկոյն նորա առաջին պատմուճանը հագցնել, մատանին ձեռքը տալ, կօշիկները ոտքն անցնել, իսկ պարարտ եզն էլ մորթել, որ ուտեն և ուրախ լինեն. «Ջանդի, կասէ, այս իմ որդին մեռած էր ու ողջացաւ, կորսուած էր ու գտնուեցաւ». և սկսան ուրախ լինել:

Սակայն նորա մեծ որդին, որ ագարակումն էր, երբ վերադառնալով կիմանայ եղելութիւնը, բարկացած՝ կասէ հօրը. «Այս քանի՞ տարի է որ քեզ կը ծառայեմ և երբէք քու հրամանէն դուրս չելայ. այսու հանդերձ մի ուլ չը տուիր ինձ որ բարեկամաց հետ ուտեմ. մինչդեռ այս որդիդ, որ քու ստացուածքդ պոռնիկներու հետ ուտելով վատնեց, գալուն պէս պարարտ եզը մորթեցիր». հայրը կը պատասխանէ թէ՝ «Որդիս, դուն միշտ ինձ հետ ես, իմ բոլոր ունեցածս քուկդ է. բայց պէտք է ուրախ լինիլ այժմ, ջանզի այս քու եղբայրդ մեռած էր՝ ողջացաւ, կորուսեալ էր և գտնուեցաւ[1]:»

Սոյն առակը Աստուծոյ մեծ ողորմութիւնը ցոյց կուտայ. ուստի եթէ սխալելով մեղանչեր ես,

1. Եւ ասէ. առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրտսերն ի նոցանէ հօրն. հայր, տուր ինձ բաժին՝ որ անկանի յընչից, և նա բաժանեաց նոցա զկեանս. Ղուկ. ԺԵ. 11. մինչև 32 համար.

քնաւ մի՛ յուսահատիր. այլ անառակ որդւոյն նման օր յառաջ խոնարհ սրտով և կատարեալ հաւատով դիմա ու ապաշխարէ և խոստովանահօր առջև դործած մեղքերդ խոստովանէ ցաւած հոգւով, որպէս զի թողութիւն գտնես մեղացդ: Աստուծոյ ողորմութենէն ոչ ոք չը յուսահատելու համար վերոյիշեալ առակը խօսելէ զատ՝ նորէն մի այլ առակ ևս յառաջ կը բերէ, որպէս զի ամէն մարդ իւր պարտքերը անթերի կատարելով՝ միշտ իւր հոգևոր փրկութեան հոգածու գտնուի կատարեալ արթնութեամբ: Ահասիկ առակը:

Մի հարուստ մարդու տնտեսին վրայ ամբաստանութիւն եղաւ որ իւր տիրոջ ստացուածքը կը վատնէ. տէրն էլ որոշեց պաշտօնէն ձգել զայն: Սակայն տնտեսը՝ գործելու անկարող լինելուն և մուրալու ևս ամչնալուն համար, պաշտօնէն հեռանալէ զինի՝ իրեն պաշտպան գտնելու և նոցա միոյն տունը ընդունելու նպատակաւ, իրեն տիրոջ պարտապանները կոչելով՝ հարիւր մար ձէթ պարտական եղողն անձին մուրհակը փոխել և յիսուն դրել կուտայ, և հարիւր քոռ ցորեն պարտական եղողին մուրհակին վրայ ութսուն դրել կուտայ:

Թէպէտև յիշեալը անհաւատարմութիւն գործեց այս պարագայում, բայց հեռատեսութեամբ իւր ապագայն ապահովելուն համար գովեստի արժանացաւ. քանզի իմանալով թէ պաշտօնէն պէտք

է զրկուի, ուստի մինչ պատհուհիւն ունէը իւր ձեռքում, անձնական շահը խորհելով՝ իւր տիրոջ ստացուածքէն ուրիշներուն բարիք անելուն պատճառաւ առաքինի մարդերէ, մանաւանդ թէ հրեշտակներէ աւելի իմաստուն համարուեցաւ։

Աբդարև անտեսը՝ իւր մարմնաւոր շահերի մասին որքան որ եռանդ ու արթնութիւն ցոյց տուաւ, հոգևոր շահերում նոյնքան եռանդ և հոգածութիւն ցոյց չեն տար մարդիկ իրենց հոգիների փրկութեան համար։ Նամանաւանդ հրեշտակները՝ հոգեղէն էակներ լինելով հանդերձ, երբ մեղանչելով՝ երկինքէն արտաքսուեցան, փոխանակ իրենց ճշմարիտ շահուց վրայ խորհելու՝ օր ըստ օրէ չարութեան մէջ աւելի յառաջ գացին, որով մարդիկներէ աւելի յիմար սեպուեցան։

Ուրեմն այն մարդն է իմաստուն, որ կատարեալ սրտով միայն Աստուծոյ ծառայելու փափաքելով, մարմնաւոր իրայ սէրը սրտէն կը հանէ և աղքատաց ողորմութիւն տալով՝ իւր հոգւոյ փրկութեան համար լուրջ մտադրութեամբ հոգածու կը դառնուի. քանի որ Աստուծոյ և միանգամայն աշխարհի ստացուածոց—մամոնայի—ծառայել կարելի չէ [1]։

1. Եւ ասէը (Յիսուս) առ աշակերտան. այը մի էը մեծատուն՝ որոյ էը տնտես. և եղև զնմանէ ամբաստանութիւն. որպէս թէ վատնիցէ զինչս նորա։ Կոչեաց և ասէ ցնա. զի՞նչ է այս, զոր լսեմս զքէն. տուր զհամար տնտեսութեան քոյ. զի ո՛չ ևս կարես լինել տնտես. Ղուկ. ԺԶ. 1. մինչև 13 համար.

Թո՛ղ ապահ մարդիկ լաւ մտածեն այս մասին, որոնք իրենց ստացուածքը միայն իրենց կը սեփականեն և միշտ մարմնաւոր զուարճութեանց անձնատուր եղած՝ աղքատաց ու կարօտելոց ձեռնտու չեն լինիր. որովհետև տարակոյս չկայ թէ նոքա իրենց մեռնելէ ցնի անվախճան պատժոյ արժանի պէտք է լինին, ինչպէս որ աշխարհասէր և անգութ մի մեծատուն մարդու պատահեցաւ. քանզի նա՝ իւր ստացուածոց շատութեան համար հպարտացած՝ միշտ թանկագին զգեստ հագնելով, միայն առատ կերուխումի և չափազանց ուրախութեան տուած էր ինքզինքը։

Սորա հակառակը, Ղազարոս անունով մի աղքատ մարդ, որուն ամբողջ մարմինը վէրքերով ծածկուած էր, մեծատան դրան մօտ ընկած մնացած լինելով, նորա սեղանէն թափած հացի փըշրանքները ուտելու կը փափաքէր, բայց ո՛չ ոք կուտար իրեն, և այն ատելեան անօգնական վիճակում կը գտնուի, որ շուները գալով՝ նորա վէրքերը կը լիզէին։ Արդ՝ թէև յիշեալ մեծատունը այս աշխարհում մի առ ժամանակ զբօսանքով կապրի և Ղազարոս նեղութիւն կը կրէ, սակայն հանդերձեալ աշխարհում ընդհակառակը պատահեցաւ. որովհետև, երբ երկուքն էլ մեռան, Ղազարոս՝

հրեշտակաց միջոցաւ հայր Աբրահամոս գոքն անուա-
նեալ յաւիտենական հանգստեան, իսկ հպարտ,
անգութ և գբօսասէր մեծատունը դժոխքի տան-
ջանաց արժանացաւ. ինչպէս որ աստուածային
արդարութիւնը սահմանած էր ըստ գործոց իւ-
րեանց իրրև արդար փոխարինութիւն:

Դու նայէ յիշեալ մեծատան ողորմելի վիճա-
կին. Ղազարոս՝ որ նորա դրան առջև յեսին աս-
տիճան չբաւորութեան մէջ մի կտոր հացի կարօտ
էր և զոր ինքը տեսնելով կարեկցութիւն ցոյց
տուած չէր, այժմ որ ինքը դժոխային հրոյ տա-
պէն կայրէր ու կը մրկէր, աչքերը վեր վերցնելով կը
տեսնէ զայն հայր Աբրահամու գոգուն հանգստա-
ցած, նոյն Ղազարոսէն օգնութիւն խնդրելու կը
ղիջանի, բայց ի զուր:

Որովհետև աղերսագին առ Աբրահամ կաղա-
ղակէ որ հաճի Ղազարոսը զրկել, որպէս զի իւր
մատի ծայրը ջրուտ թաթխելով՝ գայ և իւր լե-
զուն զովացնէ փոքր ինչ. բայց պատասխան կընդ-
դունի թէ՝ «Յիշէ, ով մարդ, որ դուն աշխարհի
վրայ զուարճացար, և Ղազարոս տառապեցաւ.
այժմ այստեղ նա մխիթարուած է և դուն անդ
կը պատակիս». մանաւանդ որ երբ կը յայտնէ թէ
միմեանց միջև մի ահագին վիհ կայ, զոր կարելի
չէ կոխել անցնիլ, այն ժամանակ ողորմելին բոլորովին
յուսահատութեան մատնուեցաւ իրեն համար:

Սակայն, որովհետև նա հինգ եղբայր ունէր,

այս պատճառաւ նորէն կաղաչէ զԱբրահամ ասե-
լով. «Ղազարոսը զրկէ որ երթայ վկայութիւն տայ
նոցա, որպէս զի նոքա ևս այս տանջանաց վայրը
չգան». որուն Աբրահամ կը պատասխանէ. «Թող
Մովսէսի և այլ մարգարէից լսեն». դատապար-
տեալը կը յայտնէ թէ մինչև որ մեռելներէն մէկը
չգնայ, նոքա չեն ապաշխարեր. Աբրահամ կասէ.
«եթէ մարգարէից չեն լսեր, ուրեմն մեռելներէն
մէկն էլ ողջանայ, դարձեալ չեն հաւատար[1]»: Ա՛հա
այսպէս է Աստուծոյ դատաստանը. նա՝ որ ձեռ-
քում պատեհութիւն ունենալով՝ կարօտաւորաց
չգթար, գթութեան անարժան կը լինի:

Հարցում ԽԹ.

*Վերոյիշեալ մեծատունը ինչո՞ւ չէր ուզեր որ իւր
եղբարքն ևս դժոխքը գալու դատապարտուին.*

Պատ. Որպէս զի իւր պատիժը ևս առաւել չը
ատելանայ, քանի որ ինքը նոցա չար օրինակ
տալով՝ պատճառ եղած էր նոցա մեղաց: Նաև
Ղազարոսի հանգիստ լինելուն վրայ նախանձելով՝

---

1. Այլ ամն էր մեծատուն, և ագանէր քեհեղս
և ծերանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս:
Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր առ
դրան նորա վիրաւորեալ. Ղուկ. Ժ.Զ. 19. մինչև 31
համար.

կուզէ որ նորէն յաշխարհ գնալով դարձեալ չարչարուի։

Այս պատմութիւնը բոլորին համար մեծ խրատ է. վասնորոյ ընչիցդ մեծութեան և շատութեան վրայ հպարտացած՝ բնաւ մի՛ ուրախանար. ընդհակառակն, վախցիր որ մի՛ գուցէ մարմնաւոր ըզօսանաց հակամիտելով մեղաց մէջ ընկնիս. նա մանաւանդ քանի որ ձեռքդ պատեհութիւն ունիս, աղքատաց ու կարօտելոց ողորմութիւն տուր, որպէս զի ժամանակին քեզ էլ ողորմութիւն անող գտնուի։ Եթէ բաղդի բերմամբ աղքատութեան կամ ցաւոց ու փորձանաց մէջ ընկնելու լինիս, բնաւ ո՛չ տրտմի և ո՛չ գանգատի, այլ Աստուծոյ անհուն ողորմութեան ապաւինելով, յոժարակամ սիրով համբերէ, որպէս զի սրբոց և արդարոց անվախճան հանգստեան հասնելու արժանի լինիս։

Այդ այս պարագայում խնամատունք և ylմարք իրարմէ կը զանազանուին. որովհետև անցաւոր աշխարհիս առաջնութեամբը աբքայութիւնը շահիլ խնամատութիւն է. իսկ աշխարհի զուարճութեանց համար դժոխք գնալ մարութիւն է պարզապէս. այս պատճառաւ արքայութիւնը ժառանգողների բոլորը՝ խնամատուն, իսկ դժոխքը գացողների բոլորը ylմար կը սեպուին։

Երբ Յիսուս վերոյիշեալ առակները ժողովրդեան քարոզելով դեռ Յորդանանու դիմացի կողմը

կը գտնուէր, այն միջոցին Ղազարոս անուամբ մի անձ՝ զոր նա կը սիրէր, Բեթանիա գիւղին մէջ հիւանդ էր. վասնորոյ նորա քոյրերն Մարիամ և Մարթա Յիսուսի մարդ ղրկելով, թէև իրենց եղբօր հիւանդութիւնը կիմացնեն, բայց չեն ասեր թէ ևկ և բժշկէ զայն, կամ թէ ասա բանիւ որ մեր եղբայրը բժշկուի. քանզի նորա գործած հրաշքներուն նայելով՝ գիտէին որ եթէ կամենայ, կարող է նաև իրենց եղբօր բժշկութիւն պարգևել։

Յիրաւի Ղազարոսի հիւանդութիւնը Յիսուսին յայտնի էր, և լուրը առնելէ յետոյ և ս չհրամայեր որ բժշկուի. ընդհակառակն երկու օր և ս կը մնայ գտնուած տեղումն, մինչև որ Ղազարոս մեռնի. որպէս զի երբ յետոյ գնալով ողջնգնէ զայն, իր մեծ զօրութիւնը ամենուն յայտնի լինի, և ժողովուրդը իրեն հաւատալով՝ ողորմութեան արժանանայ. այս պատճառաւ կասէ. «Այդ հիւանդութիւնը մահու համար չէ, այլ Աստուծոյ փառքին համար. քանզի ատով պէտք է Աստուծոյ որդին փառաւորուի։»

Ատոյդ է որ Ղազարոս այդ հիւանդութենէն մեռաւ, բայց որովհետև չորս օրէն յարութիւն պէտք է առնէր, այս պատճառաւ ասաց թէ մահու համար չէ, որպէս զի նոյն հիւանդութիւնն ու մահը բնական չը կարծուի։ Յետոյ առաքելոց կասէ. «Ելթանք նորէն Հրէաստան», այն է յերուսաղէմ.

սակայն հրէայք յառաջ գայն քարկոծել ուզելնուն համար (ինչպէս ԽԱ-րդ հարցում յիշուեցաւ)՝ նոքա կը պատասխանեն. «Վարդապետ, դեռ քիչ յառաջ քեզ քարկոծել կուզէին. նորէն այնտե՞ղ պէտք է գնաս:» Եւ քանդի առանց իւր կամաց ո՛չ ոք կարող էր նորա վրայ ձեռք երկնցնել, այս պատճառաւ կասէ. «Ով որ ցորեկ ժամանակ կը քալէ, չը սխալիր և չընկնիր. գիշեր ժամանակ գնացողը կը սայթաքի և կընկնի:»

Յիսուս այս պատասխանով ասել կամի թէ «Հրէաներէն մի՛ վախնաք, որովհետև մեռնելու ժամանակս դեռ եկած չը լինելով՝ կարող չեն զիս մեռցնելու:» Ղազարոս ևս այն միջոցին մեռած լինելով, նորէն կասէ թէ «Մեր բարեկամ Ղազարոսը ննջեց, երթամ և արթնցնեմ զայն:» Թէպէտ նա այս խօսքով Ղազարոսի մահը իմացնել ուզեց, բայց առաքեալք կարծեցին թէ հասարակ քնոյ համար ասաց. վասնորոյ պատասխանեցին թէ՝ «եթէ քնեց, ուրեմն անշուշտ կ'ելնէ». այն ժամանակ ո՛չ միայն պարզօրէն կը յայտնէ թէ Ղազարոս մեռաւ, այլ նաև կիմացնէ թէ այս մասին ինքն ուրախ է, որպէս զի գնալով ողջնգուցած ժամանակ՝ հաւատան իրեն:

Այնուհետև Յիսուս Բեթանիա կուգայ, երբ Ղազարոս չորս օրէ ի վեր արդէն մեռած և թաղուած էր, և բազմաթիւ հրէայք ևս եկած էին Մարիամը և Մարթան մխիթարելու համար: Երբ

Մարթա լսեց Յիսուսի գալուստը, Մարիամը տանը թողլով, ինքն իսկոյն Յիսուսին ընդ առաջ կը գնայ և կասէ. «Տէր, եթէ աստ գտնուէիր, եղբայրս չէր մեռներ. սակայն գիտեմ թէ ինչ որ Աստուծմէ խնդրես, կը շնորհէ քեզ». որուն Յիսուս կը պատասխանէ. «Եղբայրդ յարութիւն կառնէ:»

Մարթա Յիսուսի սոյն խօսքը վերջին դատաստանի օրուան մասին հասկնալով կասէ. «Գիտեմ որ նա յարութիւն պիտի առնէ, բայց յարութեան օրում». Յիսուս կը պատասխանէ. «Ես եմ յարութիւն և կեանք. ով որ կը հաւատայ ինձ, թէև մեռնի իսկ, կապրի. և եթէ կենդանի է, քնաւ չը մեռնիր:» Յիսուս այսպիսի խօսքերով իւր Աստուածութիւնը կը յայտնէ և թէ իրեն հաւատացողը անվախճան կենաց պիտի հասնի հոգւով. և երբ կը հարցնէ Մարթայի թէ կը հաւատա՞ս, նա իսկոյն կը խոստովանի ասելով. «Այո, ես հաւատացած եմ որ դու ես Քրիստոսն (Մեսիան), Աստուծոյ որդին, որ յաշխարհ գալու էիր:»

Ապա գաղտնի իւր քրոջ Մարիամին լուր կը ղրկէ թէ վարդապետը եկած է և քեզ կը կոչէ. նա էլ իսկոյն կը գնայ և տանը գտնուող հրէայք ևս կարծելով թէ Մարիամ գերեզմանը կերթայ լալու համար, իրենք էլ նորա ետևէն կը գնան. և Մարիամ գալով, երբ որ կը տեսնէ զՅիսուս, նորա ոտիցը փարելով՝ արտասուալից աչօք կասէ. «Տէր,

եթէ այստեղ լինէիր, եղբայրս չէր մեռներ»։ Յիսուս տեսնելով որ նա և նորա հետ եղող հրէայքը կուլային, ինքն էլ արտմուտքենէն կարտասուէ և կը հարցնէ. «Ո՞ւր դրիք զայն»։ Նոքա կը պատասխանեն. «Տէր, եկ և տես։»

Իրաւ է որ Յիսուս գիտէր թէ Ղազարոս ուր թաղուած էր, բայց այս հարցումն արաւ աշխարհի յայտնելու համար թէ ինքը կատարեալ մարդ է. նմանապէս նոյն մտքով իմանալու է նորա արտմիլն ու արտասուելը։ Սակայն հրէայք սկսան ասել. «Տեսէք որչափ կը սիրէր զայն»։ իսկ ոմանք էլ կասէին. «Միթէ նա՝ որ կոյր ծնած մարդուն աչքերը բացաւ, կարող չէր արդիլել որ սա չը մեռնի։» Երբ որ Յիսուս գերեզմանը եկաւ, հրամայեց որ նորա վրայ դրուած քարը վերցնեն. որովհետև այդ գերեզմանը այրի նման լինելով՝ վրան մի մեծ քար դրուած էր։ Այն ժամանակ Մարթա կը յայտնէ թէ մեռեալը չորս օրէ ի վեր թաղուած լինելուն՝ հոտած կը լինի. Յիսուս կը պատասխանէ. «Ես քեզ չասացի՞ թէ՝ եթէ կը հաւատաս, Աստուծոյ փառքը կը տեսնես։»

Արդարև քանի որ Մարթա յառաջագոյն Աստուծոյ պրպէ դաւանած էր զնա, թէ նորա կամքը կը կատարուի, ինչ որ էլ լինի, և թէ քանի որ Յիսուս էլ խոստացած էր իրեն որ եղբայրը յարութիւն պէտք է առնէ, վասնորոյ հարկաւոր չէր ասել թէ հոտած է. բայց այս մասին էլ դադանի

խորհուրդ կիմացուի. որովհետև Ղազարոսը դեռ մեռելներէն յարութիւն առնելէն առաջ, նորա յարութիւնը կանխաւ յայտնելովը հաստատեց թէ իւր խոստման հաւատարիմ է. և այս կէտը՝ մեծ քաջալերութիւն եղաւ բոլոր իրեն հաւատացողներին։

Արդ՝ երբ որ վերոյիշեալ քարը գերեզմանին վրայէն վերուցին, Յիսուս դէպի երկինք նայելով՝ գոհութիւն կը մատուցանէ Հօր Աստուծոյ, և «Ղազարոս, արի դուրս եկ» ասելուն պէս, մեռեալը իսկոյն դուրս կուգայ իւր պատանքով. Յիսուս կասէ. «Քակեցէք զայն և թողէք որ երթայ»։ Սոյն մեծ հրաշքը տեսնողներէն շատերը հաւատացին Յիսուսի, բայց ոմանք էլ առ նախանձու և ատելութեան՝ փութացին և իրենցմէ առաւել չարագոյն ու նախանձոտ փարիսեցիներին պատմեցին հրաշալի իրողութիւնը[1]։

---

1. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս, ի Բեթանիայ ի գեղջէ Մարիամայ և Մարթայի քեռ նորա. Ցովհ. ԺԱ. 1. մինչև 46 համար.

Հաբյա՜ծ Խղ.

Երբ Յիսուս չորեքօրեայ մեռեալը կենդանացուց, փարիսեցիքը զայն լսելով ուղղութեան եկան արդեօք.

Պապ. Ո՛չ բնաւ. նա մանաւանդ առաւել չաբացան: Թէպէտև նոքա միշտ թշնամի էին Յիսուսի, բայց այդ մեծ հրաշքէն յետոյ ժողովրդեան մէջ նորա անուան կարի շատ փառաւորուելուն վրայ նոցա սրտի նախանձը այն աստիճան սաստկացաւ, որ քահանայապետաց հետ միաբանած՝ զայն մեռցընելու նպատակաւ ժողով կազմեցին: Սակայն տեսնելով որ նորա վրայ ո՛չ մի յանցանք կարող չէն գտնել, սկսան մտատանջութեամբ միմեանց ասել. «Ի՞նչ անելու է. այդ մարդը շատ հրաշք կը գործէ. եթէ այդպէս ազատ թողունք զայն, բոլոր ժողովուրդը անոր կը հաւատայ և հռովմայեցիք գալով մեր ազգն ու հայրենիքը բոլորովին կը գրաւեն և զմեզ բնաջինջ կանեն:»

Նայէ դու այդ նախանձոտաց ողորմելի վիճակին. այս մասին հարկ չկար մտատանջութեան մտանուիլ և ասել ի՞նչ անէ՛, այլ միայն պարտէր հաւատալ, քանի որ Յիսուսի գործած հրաշքները յայտնի ապացոյց էին թէ նա է Մեսիան: Բայց Ս. Գրոց մտադրութիւն չանելով և մանաւանդ խիստ հպարտ և նախանձոտ լինելով, նոցա հոգւոյ աչքերը փակուած էին, որով ո՛չ միայն

իրենք չհաւատացին, այլ և ժողովրդեան մէջ շատերը, որոնք հաւատացած էին, խոչընդոտելու համար հռովմայեցիները պատճառ կը բռնեն:

Ա՛յսու հանդերձ այդ խօսքն էլ սուտ էր և իրենց համար մեծ նախատինք. քանզի Յիսուս դեռ յաշխարհ չէկած՝ Հրէաստան արդէն Հռովմայեցւոց իշխանութեան ներքև մտած էր, և այս բանիս պատճառ իրենք եղած էին (ինչպէս որ ԼԸ-րդ հարցումի յիշուեցաւ): Երբ այսպէս ժողովականք շուարած՝ չգիտէին թէ ի՞նչ պէտք էր անել, մին ի նոցանէ, որոյ անունն էր Կայիափա և որ նոյն տարւոյ քահանայապետն էր, ինքզինքը միւսներէն առաւել բան գիտցող համարելով՝ կասէ նոցա. «Դուք ոչինչ գիտէք. փոխանակ Թողլու որ ամբողջ ազգը կորսուի, լաւ է որ ազգի համար մի մարդ մեռնի:»

Թէպէտև յիշեալը՝ իւր խոռոչասէր մտքով թշնամութիւն կը խորհէր Յիսուսի համար, բայց քահանայապետ լինելով՝ անտուած խօսել տուաւ իրեն, քանի որ Յիսուս Իսրայէլեան ազգին և մանաւանդ թէ բովանդակ մարդոց փրկութեան համար պէտք է մեռնէր: Յայնժամ բոլոր ժողովականք միաբան խորհրդով որոշեցին զայն սպանել: Սակայն Յիսուս նոցա խորհուրդը գիտնալով՝ կառնու առաքեալները և կը գնայ Եփրայիմ քաղաքը՝ ոչ թէ առ երկիւղի, այլ դեռ իւր մեռնելու ժամանակը հասած չը լինելուն համար:

Ա.յն ժամանակ բաղարջակերաց ծօնը մերձ էր և այդ պատճառաւ շատերը Երուսաղէմ եկած լինելով, երբ որ Յիսուսը կը փնտռեն, կը զարմանան որ նա ծօնին համար եկած չէ. որովհետև քահանայապետներն ու փարիսեցիները պատուէր տուած էին որ եթէ մէկը իմանայ Թէ նա ո՞ւր կը գտնուի, իրենց լուր տայ, որպէս զի մարդ ղրկելով բռնել տան զՅիսուս իրենց մարդոց ձեռամբ[1]։

Յիսուս, որ ինչպէս վերև յիշուեցաւ, եփրայիմ գացած էր, այնտեղէն դարձեալ Երուսաղէմ գնալ կը մտադրէ, և Սամարիոյ ու Գալիլեայ գաւառի միջտեղէն անցած ժամանակ՝ երբ մի գիւղ կը մտնէր, տասը բորոտ մարդիկ կը հանդիպին իրեն, որոնք հեռի կեցած՝ բարձրաձայն կաղաղակեն. «Յիսուս վարդապետ, ողորմի մեզ». կը պատասխանէ նոցա Թէ՝ «Գացէք, ցոյց տուէք ձեզ քահանայից». այս խօսքը նորա բերնէն ելածին պէս՝ իսկոյն բժշկուեցան։ Սակայն նորա հրամանին համեմատ գնալով ինքզինքնին ցոյց կուտան քահանայից. որովհետև այս կերպ հիւանդութենէ ազատուող անձինք ըստ օրինի պարտաւոր էին զիրենք քահանայից ցուցնել, որպէս զի քահանան հաստատէ նոցա բժշկութիւը. (Ղեւտ. ԺԴ. 2)։

1. Փողովեցան քահանայապետքն և փարիսեցիք յատեան, և ասեն. զի՞նչ արասցուք. զի այրն այն բազում նշանս առնէ. Ցովհ. ԺԱ. 47. մինչև 56 համար.

Սրդարև յիշեալ տասը մարդոց առաջնալը քահանայք հաստատեցին, բայց նոցա ինը՝ որոնք Իսրայէլացի էին, ետ դառնալով շնորհակալ չեղան Յիսուսէն. միայն մին՝ որ Սամարացի էր, իսկոյն ետ դառնալով՝ բարձրաձայն զԱստուած կը փառաբանէ ու Յիսուսի ոտքն ընկնելով շնորհակալ կը լինի նորա բարերարութենէն։ Նա՝ գիտնալով որ բոլորն էլ բժշկուած են, կը հարցնէ ասելով. «Ո՛չ ապաքէն սոքա տասն անձինք էին, ո՞ւր են մնացեալք». և այսպէս նոցա ապերախտութիւնը յայտնելէ զկնի՝ երախտադէտ բժշկելոյն հաւատքը գովելով կասէ. «Ել և դնա, քանզի հաւատքդ բժշկեց զքեզ[1]։

Ա.յնուհետև Յիսուս կամեցաւ որ երիքով քաղաքը գնալով՝ Զաքէոս կոչուած մի մարդու ևս ողորմութիւն անէ։ Ձանազարհին նորէն աւաքելոց կը յայտնէ առանձինն Թէ երուսաղէմ պէտք է գնայ և անդ խաչին վրայ բարձրանալով պիտի մեռնի, և Թէ երեք օրէն յարութիւն պէտք է առնէ. ինչպէս որ յառաջագոյն ևս շատ անգամ ասած էր նոցա, որպէս զի իրենց հաւատքը չը

1. Եւ եղև մինչ երթայր նա յԵրուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և Գալիլեացւոց։ Եւ մինչդեռ մտանէր ի գեօղ ուրումն, պատահեցան նմա տասն արք բորոտք, որք կացին ի հեռաստանէ։ Բարձին զձայնս և ասեն. Ցիսուս վարդապետ՝ ողորմեա՛ մեզ. Ղուկ. ԺԷ. 11. մինչև 19 համար.

խախտի և չը գայթակղին. քանզի հրէայք ո՛չ թէ իրենց կամաց համաձայն կարող էին զայն մեռցնել, այլ պէտք է ինքը կամաւորապէս մեռնէր մարդկային ազգը մեղաց ու սատանայի գերու թենէն ազատելու համար. ինչպէս որ Ս. Գրոց մէջ մարգարէից ձեռամբ գրուած էր իրեն համար:

Բայց թէ ինչպէ՞ս և ի՞նչ կերպով պէտք է պատահէր Յիսուսի այդ տխուր դէպքը, տակաւին իրենց խելքը հասու չը լինելուն համար, առաքեալք նորա խօսքերը չկարողացան ըմբռնել. միայն նորա արտասանած խօսքերուն և ձանապարհին իրենցմէ առաջ գնալուն վրայ կը զարմանային և հարցնելու էլ կերկնչէին: Յիսուսի այդ կերպ խօսքերէն Զէբեդեայ որդիքը--Յակոբոս և Յովհաննէս առաքեալները իմանալով թէ նա քիչ ժամանակէն պէտք է մեռնի և յարութիւն առնէ, իրենց մօր Սողովմէի միջոցաւ և իրենց իսկ աղաչանօք կը խնդրեն Յիսուսէն որ երկնաւոր թագաւորութեան փառաց մէջ մին՝ նորա աջ կողմը, իսկ միւսը՝ նորա ձախ կողմը բազմելու հրաման շնորհէ իրենց:

Եւ որովհետև Յիսուս չարչարանք կրելու էր, վանորոյ այլաբանօրէն մի բաժակի և մկրտութեան նմանցնելով զայն, դործը իրենց կամացը կը թողու. վասն զի եթէ այն բաժակը ըմպէն (խմէն) անշուշտ իրենց փափաքը կիրագործուի, ինչպէս Հօր Աստուծոյ կողմանէ պատրաստուած է զայն խմողներուն: Արդարև երկու առաքեալ եղբարց առ

Յիսուս ունեցած սէրը խիստ մեծ և աստիկ լինելով, յօժարակամ իրենց արիւնը թափեցին ի սէր նորա և այնպէս արժանացան իրենց խնդրատնոց կատարման:

Ա.յս մասին միւս առաքեալները թէև Յակոբոսի և Յովհաննու դէմ բարկացան, բայց Յիսուս զանոնք իւր մօտ կոչելով կասէ. «Աղգայ մեծամեծք և իշխանք կիշխեն նոցա վրայ. իսկ ձեր մէջ պէտք չէ որ այդպէս լինի. եթէ ձեզմէ մէկը կուզէ մեծ և առաջին լինել, թող ծառայ և սպասաւոր լինի ձեզ». ահա այս խրատով կը յորդորէ առաքեալները որ փառասիրական տենչանօք իրենց միջև հակառակութիւն չհանուցանեն, քանի որ նորա դեռ ամէն կերպով կատարելութեան հասած չէին: Նոցա օրինակ կուտայ զինքը, որ ո՛չ թէ ծառայութիւն ընդունելու՝ այլ ծառայելու եկած էր յաշխարհ. նա մանաւանդ շատերու փրկութեան համար իւր անձը նուիրելու էր իւր աղատ կամօք և յօժար սրտով[1]:

Երբ Յիսուս երիքով քաղաքը կերթար, շատ

---

1. Եւ էին և ձանապարհն մինչդեռ ելանէին յԵրուսաղէմ. և երթայր Յիսուս առաջի քան զնոսա. և զարմացեալ էին՝ որք զհետն երթային՝ և երկնչէին: Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն, սկսաւ ասել նոցա՝ որ ինչ անցք անցանելոց էցեն ընդ նա. Մարկ. ԺԹ. 32—45.—Մատթ. Ի. 17.—Ղուկ. ԺԸ. 31.

ժողովուրդ նորա եւեւէն ու առջեւէն ի միասին կը գնային. այն միջոցին մի մուրացիկ և կոյր մարդ, որ քաղաքի մերձակայ ճանապարհին վրայ նստած էր, ահագին բազմութեան անցնիլը լսելով կը հարցընէ թէ ի՞նչ է այն, և կը պատասխանեն թէ Նազովրեցի Յիսուսն է որ կանցնի: Նա յառաջագոյն լսած լինելով Յիսուսի գործած հրաշքները, կսկսի աղաղակել. «Ո՛վ Յիսուս, որդի Դաւթի, ողորմէ ինձ». և երբ Յիսուսի առջեւէն գնացող ժողովուրդը կը յանդիմանէին զայն որ լռէ, նա առաւել և առաւել կաղաղակէր:

Յիսուս այնտեղ կենալով՝ մուրացիկ կոյրը իւր մօտ բերել կուտայ ու կը հարցնէ. «Ի՞նչ կը կամիս որ անեմ քեզ». նա իսկոյն աչաց տեսութիւնը կը հայցէ. յայնժամ Յիսուս զթալով նորա վրայ՝ կասէ. «Ցէ՛ս, հաւատքդ քեզ բժշկեց». և ահա անմիջապէս բժշկուելով՝ նորա եւեւէն կերթայ ու ժողովուրդը զայն տեսնելով կօրհնէին զԱստուած [1], քանի որ ժողովրդեան բարեմիտ մասը Յիսուսի գործած հրաշքներէն յորդորուած՝ աստուածային անհուն ողորմութեան և անսահման բարերարու-

1. Եւ եղև ի մօտիլն նորա յԵրիքով՝ կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: Եբեւ լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէը թէ զի՞նչ եցէ այն: Եւ պատմեցին նմա թէ Յիսուս Նազովրեցի անցանէ: Աղաղակեաց և ասէ. Յիսուս, որդի Դաւթի, ողորմեաց ինձ. Ղուկ. ԺԸ. 35. մինչև 43 համար.

թեան ապացոյցը կը տեսնէր յայնմ՝ և երախտագիտական ջոյգերով շնորհակալ կը լինէր նորա մարդասիրութեան համար:

Ա.յնուհետև Յիսուս Երիքով քաղաքը գնալով՝ այնտեղ շրջած ժամանակ, Զաքէոս անուամբ մի անձ՝ որ մաքսաւոր և հարուստ էր, Յիսուսի գալուստը լսելով կը փափաքի զնա տեսնել. սակայն հասակը կարճ լինելուն համար չը կարողանալով իւր փափաքին հասնիլ, իսկոյն յառաջ կը վազէ և Յիսուսի անցնելիք ճանապարհում մի ժանտաթզենիի վրայ կելնէ, որպէս զի նորա անցած ժամանակ կարողանայ տեսնել:

Երբ որ Յիսուս այնտեղ եկաւ, յիշեալ անձի դիտաւորութիւնը իրեն յայտնի լինելով՝ դէպի վեր նայեցաւ, և «Զաքէ՛, փութով իջիր այդտեղէն, որովհետև այսօր ինձ կը վայելէ ձեր տանը իջևանիլ» ասելուն պէս, նա իսկոյն իջնելով մեծ ուրախութեամբ իւր տունը տարաւ Յիսուսը. բայց տեսնողները կը գանգատէին ասելով թէ մեղաւոր մարդուն տունը իջևանեցաւ:

Օրինակ առ Զաքէոսի ընթացքէն. վասն զի թէև Երիքովում շատ մեծատուն մարդ էր, սակայն երբ Յիսուսը տեսնել ցանկացաւ, բնաւ հոգ չանելով թէ մարդիկ ի՞նչ կասեն, վազելով ծառի վրայ կելնէ զայն տեսնելու համար. քանի որ նորա հետ խօսելու կամ զայն իւր տունը տանելու ինքկինքը արժանի չը տեսնելով և մանաւանդ այդ

մասին յոյս չունենալով՝ միայն Յիսուսը տեսնել կուզէ. իսկ յիշեալն սիրտը Յիսուսի յայտնի լինելով՝ կը հաճի նորա տունը գնալ, որով նա աստուածային շնորհօք լցուած՝ դարձի կուգայ այն աստիճան որ իւր ստացուածոց կէսը աղքատաց տալու և որմէ որ անիրաւութեամբ մի բան յափշտակած է, քառապատիկ հատուցանելու պատրաստակամութիւն յայտնելով Թողութիւն գտաւ. ինչու որ այդպիսի պատրաստակամութիւնը կամ խոստումը նորա անկեղծ զղջման նշանակ էր. այս պատճառաւ Յիսուս Զաքէոսին կասէ. «Այսօր այս տանը փրկութիւն եղաւ։»

Ուրեմն ով որ Թողութեան արժանանալ կը ցանկայ, հարկ է որ արհամարհելով ինչ որ մարդիկ ըստ աշխարհի կը խորհին ու կը խօսին իւր նկատմամբ, միայն Տէր Յիսուս Քրիստոսի սիրովը վառուած՝ առաքինութեան շաւղում ոչ մի ժամանակ չը թերանայ, ինչ որ իւր նուիրական և սուրբ պարտականութիւնն է. և այս կերպով միայն կարող է աստուածային գթութեան ու ողորմութեան արժանանալ։ Այս պարագայում երիքովը՝ աշխարհի, իսկ Զաքէոսը՝ մեղաւորաց օրինակ է. քանզի ինչպէս որ քաջ հովիւը կորուսեալ ոչխարը որոնելով կը գտնէ, նմանապէս Յիսուս աշխարհ գալով մարդը գտաւ, որ անիծեալ և չար սատանայի թելադրութեամբ՝ մեղաց մէջ ընկած և առաքինութեան ու աստուածապաշտութեան շաւղէն բոլորովին հեռացած էր. վասնորոյ ողորմելին հոգւով իսկ և իսկ կորսուած էր[1]։

Յիսուսի այդպիսի խօսքերը լսելով՝ ժողովրդէն ոմանք կը կարծեն թէ նա՝ երուսաղէմ գնալով, սակաւ ժամանակում պիտի յայտնէ իւր թագաւորութիւնը և Իսրայէլի ժողովուրդը պիտի փրկէ Հռովմայեցւոց ձեռքէն։ Յիրաւի ժողովուրդը այսպէս խորհեցաւ, բայց որովհետև Յիսուսի թագաւորութիւնը երկրային և մարմնաւոր չէր, այլ երկնային և հոգևոր, և զայն ևս իւր երկրորդ գալստեան ժամանակ մեծ փառօք աշխարհի պիտի յայտնէ, վասնորոյ ի նշան և յապացոյց այս բանին, մի աղնուական մարդու վրայ առակ կը խօսի ասելով թէ՝

Մի աղնուական մարդ՝ իւր թագաւորութիւնը ստանալ և ետ դառնալու համար հեռի աշխարհ գնաց. նա այս առթիւ իւր ծառաները կոչելով՝ տասն մնաս կուտայ նոցա իրը դրամագլուխ, որպէս զի զայն գործածելով շահին։ Նորա քաղաքացիքը զայն ատելով՝ եաւէն դեսպան ղրկեցին ասելու թէ «Զենք ուզեր որ նա մեր վրայ թագաւորէ»։ սակայն աղնուականը իւր թագաւորութիւնը

---

1. Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով. և ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն։ Եւ խնդրէր տեսանել թէ ո՛վ իցէ Յիսուս, և ո՛չ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ. Ղուկ. ԺԹ. 1 մինչև 10 համար.

առաւ, և երբ վերադարձաւ, կանչեց իւր ծառաները, որպէս զի նոցա հաշիւները ստանայ:

Առաջինը՝ որ մէկի փոխարէն տասնապատիկ շահած էր, գովեստ կընդունի իւր Տիրոջ կողմանէ ու տասը քաղաքաց վրայ իշխան կը կարգուի. երկրորդը՝ որ հինգ շահած էր, հինգ քաղաքաց վրայ իշխանութիւն կստանայ. իսկ երրորդը առաջ գալով կասէ. «Ահա տուածդ դրամագլուխը, զոր քեզմէ վախնալուս համար թաշկինակիս մէջ ծրարելով պահած էի. քանզի դուն մի խիստ մարդ ես, չդրածդ կը վերցնես և չը սերմանածդ կը հնձես:» Սորա ի պատասխան Տէրը կասէ. «Ի՛ռւ բերանովդ քեզ պէտք է դատեմ, չա՛ր ու անհաւատ ծառայ, քանի որ գիտէիր թէ ես մի խիստ մարդ եմ, որ չը դրածս կը վերցնեմ և չը սերմանածս կը հնձեմ, ինչո՞ւ համար իմ արծաթս սեղանաւորաց չը տուիր, որպէս զի ես գալով՝ տոկոսովը զայն պահանջէի:»

Երբ որ յիշեալ ծառայի չարութիւնն ու անպիտանութիւնը յայտնեց, տէրը կը հրամայէ ծառայից որ դրամագլուխը անորմէ առնելով՝ տան այն ծառային, որ տասնապատիկ շահած էր, և երբ կասեն թէ նա արդէն տասն մնաս ունի, կը պատասխանէ թէ՝ «ով որ ունի թո՛ղ անոր տրուի, և ով որ չունի, եղածն էլ անորմէ բարձուի:» Եայց յայտնի ապուշականը կը հրամայէ նաև որ իւր թշնամիները իւր ներկայութեանը բերելով սպա-

նեն, որոնք չէին ցանկար որ ինքը թագաւորէ[1]:

Լաւ խորհէ այս առակին վրայ, ով ընթերցող, որպէս զի հանդերձեալ աշխարհում պատժոյ և տանջանաց չենթարկուիս: Որովհետև ապուշականը՝ նոյն ինքն Յիսուսն է, նորա ծառաները՝ բոլոր մարդիկ են. քանի որ բոլորը ինքը ստեղծելով՝ իւրաքանչիւրին ըստ արժանւոյն տեսակ տեսակ բարիքներ պարգևեց, որպէս զի առաքինաբար ապրելով՝ մէկի փոխարէն տասն կամ հինգ շահող ծառայից նման, արքայութեան մէջ մեծ վարձուց արժանաւոր լինին:

Արդ՝ ամէն մարդ իւր գիտութիւնը, հարստութիւնն ու զօրութիւնը ի փառս և պատիւ Աստուծոյ գործածելու, կարօտելոց ձեռնտու լինելով՝ յամենայն դէպս նոցա օգնելու պարտական է. և ով որ Աստուծոյ պարգևած բարիքները միայն իւր անձին յատկացնելով՝ ուրիշներուն չօգներ, հաստատ թո՛ղ գիտնայ որ իւր դրամագլուխը վարշամակի մէջ պահող անհաւատ ու չար ծառային նման պիտի պատժուի. նմանապէս մեր Տէր Յիսուսին չը հաւատացող և չը հնազանդողները յա-

---

1. Եւ մինչդեռ նոքա զայն լսէին, յաւել առակ մի և ասէ, վասն մերձենալոյն նորա յԵրուսաղէմ և համարելոյ նոցա եթէ առ ժամայն յայտնելոց է արքայութիւն Աստուծոյ. ասէ. այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի առնուլ... Ղուկ. ԺԹ. 11. մինչև 27 համար.

ւուրն դատաստանի սաստկապէս պէտք է պատժուին. քանի որ նորա երկնային թագաւորութեան ներքև մտնել չուզեցին վերոյիշեալ ապստամբ քաղաքացիներուն պէս։

Հպրյո–ՆՆ Խե.

Ցիսուս Երիքովում շատ ժամանակ մնաց.

Պապ. Ձը հնայ. վասն զի խաչը ելնելու ժամանակը մօտեցած լինելով՝ կամեցաւ Երուսաղէմ գնալ, որպէս զի այնտեղ խաչուի։ Երբ որ առաքելոց և բազմաթիւ ժողովրդեան հետ Երիքովէն մեկնեցաւ, Տիմէոսի որդի Բարտիմէոս անուամբ մի կոյր՝ որ ճանապարհին վրայ նստած կը մուրար, Ցիսուսի անցնիլը լսելով կաղաղակէ. «Ողորմի ինձ, Ցիսուս, Դաւթի որդի»։ Ներկայից շատերը կը սաստեն անոր որ լռէ, բայց նա աւելի բարձրաձայն կսկսի աղաղակել. և Ցիսուս այնտեղ կենալով՝ կը կոչէ զայն ու կը հարցնէ. «Ի՞նչ կը բաղձաս որ անեմ քեզ»։ կոյրը իսկոյն աչաց տեսութիւն կը խնդրէ. յայնժամ Ցիսուս «Գնա՛, քու հաւատդ քեզ փրկեց» ասելուն պէս՝ նորա աչքերը բացուեցան և Ցիսուսի ետևէն գնաց[1]։

1. Եւ ընդ ելանելն նորա յԵրիքովէ աշակերտաւքն և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր՝ նստէր մուրացիկ յանցս ճանապարհի. Մարկ. ժ. 46—52.

Ա յստեղ Մարկոս աւետարանիչ միայն վերոյիշեալ կոյրին բժշկուիլը կը գրէ, բայց Մատթէոս կը գրէ թէ Ցիսուս Երիքովէն մեկնած ժամանակ երկու կոյրեր բժշկեց (Մատթ. Ի. 29). այս պատճառաւ ոմանք կարծելով թէ երկուքն էլ միևնոյն պատմութիւնն է, կասեն որ վերոյիշեալ Բարտիմէոսի հայրն Տիմէոս էլ կոյր լինելով, հայրն ու որդին միասին կը մուրային, Ցիսուսը երկուքը միանգին բժշկեց[1]։

Վերոյիշեալ կերպիւ Ցիսուս յիշեալ կուրաց բժշկութիւն շնորհելէն վերն, երբ որ Բեթանիա եկաւ, որ Ղազարոսի գիւղն էր, այնտեղ Սիմոն քօղոպ անուամբ ծանօթ մի անձ զայն իւր տունը խնջոյքի կը հրաւիրէ. (այս մարդը ոչ թէ բորոտ էր, այլ նորա մականունն էր այդ)։

Ա յստեղ տես դու քահանայապետների նախանձը. արդարև ժողովուրդը Ցիսուսի ուր լինելը լսելով՝ զայն տեսնելու և նորա քարոզին ունկընդրելու կը փութար. այս անգամ էլ վերոյիշեալ Սիմոնի տան մէջ գտնուիլը լսելով՝ շատերը կը գնան անդ, բայց ոչ միայն Ցիսուսը, այլ և Ղազարոսն էլ տեսնելու նպատակաւ. որովհետև Ցիսուս զայն ողջնցուցած լինելով՝ նա ևս բազմականներէն մին էր, և այս պատճառաւ շատերը

1. Տես ի մեկնութեան Մատթէոսի՝ որ ի Ծործոբեցւոյն.

գնալով Յիսուսի հաւատալուն համար, քահանայապետք այն ատենին կը զայրանան որ Ղազարոսն էլ մեռցնելու որոշում կուտան։

Վերոյիշեալ խնջոյքի մէջ ի պատիւ Յիսուսի Ղազարոսի քոյրը Մարթա կը ծառայէր, իսկ միւս քոյրը Մարիամ այլ և այլ անուշահոտ նիւթերէ բաղկացեալ մի շիշ իւղ բերելով՝ Յիսուսի ոտքերը կօծէ և իւր մազերովը կը սրբէ, այնպէս որ տունը իւղի անոյշ հոտովը կը լեցուի. ապա շիշը կոտրելով՝ մնացորդ իւղն էլ նորա գլխոյն վրայ կը թափէ. զայս տեսնելով Յուդա Իսկարիովտացին միւս առաքեալներին կասէ. «Ինչո՞ւ համար այդ իւղը այսպէս փճացաւ. կարելի էր զայն երեք հարիւր դահեկանի վաճառել և տալ աղքատաց։»

Նայէ դուն յիշեալի չարութեանը. որովհետև այդ խօսքն արաւ ոչ թէ իրօք աղքատաց մի բաբիք անելու, այլ միայն իւր անձնական օգտի համար. քանզի աղքատաց սնուցուկը իւր ձեռքում լինելով՝ միշտ կը գողանար անտի, և կը փափաքէր որ այդ իւղն էլ ծախուի, որպէս զի անտի ևս գողանալու առիթ ունենայ։ Առաքեալները նորա սոյն վատթար դիտաւորութիւնը չիմանալով՝ նորա էլ թէև նորա կարծեաց ձայնակից եղան, բայց նոցա միտքը Յիսուսին յայտնի լինելով կասէ. «Թոյլ տուէք, ինչո՞ւ համար կը նեղացնէք այդ կինը. որովհետև նա մի լաւ բան արաւ ինձ համար. աղքատները ամէն ժամանակ ձեզ հետ են, և երբ

որ կամիք, կարող էք նոցա բարիք անել. բայց զիս ամէն ժամանակ ձեզ հետ չէք կարող ունենալ։»

Նա՛ մանաւանդ՝ որովհետև Յիսուս մարդկան փրկութեան համար չարչարանք կրելով պէտք է մեռնէր, Մարիամի այդ գործը՝ նշան և ապացոյց էր որ նորա մարմինը պատանքում փաթաթուած՝ գերեզմանի մէջ թաղուելու էր. այս պատճառաւ վճռեց որ աւետարանը աշխարհի քարոզուած ժամանակ, նորա յիշատակն էլ պէտք է խօսուի, որպէս զի մարդիկ՝ իրենց պարզևեալ երկնային անհուն ողորմութիւնը ոչ մի րոպէ իրենց միտքէն չը հանելով՝ գոհութեամբ մտաբերեն այդ փրկարար գործը և օր ըստ օրէ աւելի մեծ շնորհաց և ողորմութեան արժանանան։ Ուրեմն բոլոր քրիստոնեայք Տէր Յիսուսի քաշած չարչարանքը պարտաւոր են չը մոռանալ և միշտ նոցա վրայ խորհելով շնորհակալ լինիլ, որպէս զի ապերախտութեան յանցանքը գործած չը լինին։

Յիսուսի այսպիսի խօսքերը լսելով՝ միւս առաքեալների սիրտը հանդարտեցաւ. Բայց Յուդա Իսկարիովտացին այս մասին շատ վրդովուած լինելով, և մանաւանդ սատանան նորա սրտում որջացած՝ իսկոյն քահանայապետներին ու դպիրներին գնալով կասէ. «Ի՞նչ կը տաք ինձ որ զայն մատնեմ ձեզ». նորա ևս ուրախացած՝ երեսուն արծաթի կը խոստանան տալ։ Սակայն որովհետև ժողովուրդը Յիսուսի քարոզները լսելու փափա-

քանօք անկէ բաժնուիլ չէր ուզեր, այս պատճառաւ անիրաւ Յուդան յարմար ժամանակ կորոնէր, որպէս զի ժողովրդէն գաղտնի մի առանձին տեղւոյ կարողանայ զայն մատնելով 30 արծաթին ստանալ [1]։

Ս. յատեղ տես դու մի անդամ թէ մարմնաւոր շահուց սէրը ո՞ր աստիճան վնասակար ու վտանգաւոր կը լինի մարդուն համար. որովհետև երբ Յուդա Մարիամի թափած լուղին շահ չը կարողացաւ ունենալ, իւր վարդապետը մատնել կուզէ, որպէս զի նիւթական շահ ձեռք բերէ։ Բայց յայտնի, Յիսուսի կենաց գնահատումը նոցա կամայ թողլով կը զիջանի ստանալ այնքան, որքան որ նոքա կուզեն տալ։ Յիրաւի Յուդա իւր ագահութեան, իսկ հրէայք Յիսուսի դէմ ունեցած իրենց թշնամութեան պատճառաւ զայն իրրև մի գերի նկատելով այսքան աժան գնահատել որոշեցին. բայց այս մասին Զաքարիա մարգարէի բերանով Ս. Գրոց մէջ յիշատակուած մարգարէական վճիռը կատարուեցաւ թէ «երեսուն արծաթի պէտք է վաճառուի [2]։»

1. Իբրև եկան Յիսուս ի Բեթանիա ի տուն Սիմոնի բորոտի, մատեաւ առ նա կին մի որ ունէր շիշ լուղոյ ծանրագնի, և թափեաց ի գլուխ նորա . . . Մատթ. ԻԶ. 6—16.—Մարկ. ԺԴ. 1.

2. Եւ ասացի ցնոսա, թէ բարւոք թուի յաչս ձեր՝ տուք վարձս իմ. ապա թէ ոչ՝ զդոյց արարքէ,

Մի և նոյն Զաքարիան գրած լինելով նաև՝ թէ Յիսուս պէտք է իշու և նորա աւանակին վրայ նստած Երուսաղէմ և տաճարը գայ [1], ուստի երբ նա դէռ Բեթանիա գիւղումն էր, առաքեալներէն երկուքը Բեթփագէ գիւղը կը ղրկէ ասելով. «Գնացէք ձեր յանդիման գտնուած գիւղը, ուր երբ որ կը մտնէք, մի էշ և նորա աւանակը պիտի գտնէք, որու վրայ դեռ ոչ ոք նստած է. քակելով զանոնք բերէք առ իս, և եթէ ինկը ձեզ մի բան ասելու լինի, ասացէք թէ Տիրոջը պիտոյ է։»

Ըստ պատուիրանին Յիսուսի՝ նոքա գիւղի փողոցում կը գտնեն էշն ու նորա աւանակը, զորս կը բերեն առ Յիսուս, և որոց վրայ հանդերձներ դնելով՝ Յիսուս կը հեծնէ նախ իշուն և ապա աւանակին վրայ (ինչպէս որ նախ Իսրայէլի ժողովուրդը և յետոյ հեթանոսները իրեն սեպհական ժողովուրդը կազմեց)։ Երբ ձիթենեաց լեռնէն խիստ բազմաթիւ ժողովրդեան հետ իջնելով դէպի Երուսաղէմ կը գնար, շատերը իրենց հանդերձը, և այլք արմաւենիք, ձիթենիի և այլ ծառոց ոստերը կտրելով՝ ճանապարհին վրայ կը սփռէին, որպէս զի

և կշռեցին զվարձս իմ երեսուն արծաթի. Զաք. ԺԱ. 12.

1. Ուրախ լեր յոյժ, դուստր Սիովնի, քարոզեա դուստր Երուսաղէմի. ահա թագաւորդ քո գայ առ քեզ՝ արդար և փրկիչ, նոյն հեզ՝ և հեծեալ ի վերայ իշոյ և յաւանակի նորոյ. Զաք. Թ. 9.

Յիսուս նոցա վրայէն անցնի։

Նմանապէս իւրաքանչիւրի ձեռքում մի մի ոստ լինելով, եաւէն ու առջևէն գնացող ժողովուրդն ու առաքեալք խոստովանելով թէ նա է Իսրայէլի Նաֆտաւրն ու Դաւթի որդին և մանաւանդ թէ Աստուծոյ կողմէ առաքեալ է, ովսաննա (կեցո աղաչեմ) կաղաղակէին և զԱստուած կօրհնաբանէին։ Փարիսեցիք նախանձելով Յիսուսի այս կերպ փառաւորուելուն վրայ, և միանգամայն անկարող լինելով ժողովուրդն արգիլելու, կասեն Յիսուսի թէ «Սաստէ աշակերտներիդ որ լռեն»։ որոց կը պատասխանէ. «Եթէ նոքա լռեն, քարերը պիտի աղաղակեն։» Արդարև այս խօսքը կատարուեցաւ խաչելութեան օրը. քանզի այն օրում առաքեալք թէև Յիսուսը միայնակ Թողով ցրուեցան, բայց երբ Նա խաչին վրայ իւր ամենօրհնեալ հոգին աւանդեց Հօր Աստուծոյ ձեռքը, ժայռերը պատառուեցան, գերեզմանք բացուեցան և փառաւորեցին զայն. և այս՝ նշան և ապացոյց էր թէ Նա է Աստուծոյ որդի և Մեսիա։

Վերև գրուածին համեմատ Բեթանիայէն սկսեալ ժողովրդական ահագին բազմութեամբ Յիսուսի դէպի Երուսաղէմ գալը լսուելուն պէս, յիշեալ քաղաքէն նոյնպէս բազմութիւն ժողովրդեան զայն դիմաւորելու եկան. քանի որ ամենուն յայտնի էր թէ Ղազարոսը ողջնցուցած է Հրաշիւք. բայց փարիսեցիք առ նախանձու սկսան մե-

ծանց ասել. «Կը տեսնէք. ահա մի բան չը կարողացաք անել, ահա բոլոր աշխարհ նորա ետևէն գնաց։» Նոքա այսպիսի խօսքերով զիրար կը գրգռէին, որպէս զի իրենց սրտում սնուցած թշնամութիւնը միաբան ի գործ դնել կարողանան։

Յիրաւի բացի վերոյիշեալ նախանձոտներէն, ժողովուրդը առհասարակ նոյն օրը խիստ ուրախ եղաւ. սակայն Յիսուս՝ որ գիտէր թէ նոքա ևս չը պիտի հաւատան իրեն և այս պատճառաւ Երուսաղէմ քաղաքը բոլորովին աւերակ դառնալով՝ ժողովրդեան ուրախութիւնը տրտմութեան պէտք է փոխուի, երբ որ քաղաքին մօտեցաւ ո՛չ միայն լացաւ նորա վրայ, այլ և վճռեց որ ժամանակ և օր պիտի դայ, յորում թշնամին զայն պաշարելով շուրջը պատնէշ պէտք է շինէ ու պարիսպները քակէ. նմանապէս բնակիչները կոտորելով, քար քարի վրայ չը պէտք է թողու. որովհետև նա չը գիտցաւ իրեն օգուտը և իւր փրկութեան օրը. սոյն վճիռն արտասանեց, որպէս զի այդ աղէտները պատահած ժամանակ՝ խելամտելով ուղղուին և դարձի գան։

Արդարև Իսրայէլի ժողովուրդը՝ իրեն եղած շնորհն ու ողորմութիւնը չը ճանաչելով՝ Յիսուսը սպանելուն համար, նորա համբարձմանէն քառասուն և հինգ տարիի չափ յետոյ, Հռովմայեցւոց ձեռամբ չափազանց մեծ կոտորած կրեց և Երուսաղէմն ու տաճարը ևս աւերակ դառնալով՝ թը-

շուառ ու թախառական վիճակի դատապարտուեցաւ. (ինչպէս որ հրէայ Յովսեպոս պատմագրի գրած պատմութեան մէջ ընդարձակօրէն նկարագրուած է, զոր ամէն ոք կարող է կարդալ:

Երբ որ Յիսուս մեծ փառքով երուսաղէմ քաղաքը մտաւ, բոլոր բնակիչները իրար անցած՝ կը հարցնեն թէ «Ո՞վ է սա». ժողովուրդը կը պատասխանէ. «Սա է Յիսուս մարգարէն». (որովհետեւ շատերը չը կրնալով հասկնալ թէ նա է Մեսիան, կը կարծէին թէ նա լոկ մարգարէ է, եւ այս ողբալի սխալը իրենց դժբախտութեան պատճառն եղաւ):

Մեր Տէր Յիսուս փրկիչն այսպիսի շքեղ հանդիսիւ ու փառաւոր տաճարը մտնելով՝ այնտեղ գըտնուած բոլոր կոյրերին եւ կաղերին բժշկութիւն կը շնորհէ: Թէպէտ փարիսեցիք այս մասին դարձեալ դժգոհ էին, բայց որովհետեւ կարող չէին ոեւէ պատրուակ գտնել նորա վրայ մեղադրանք բարդելու, վասնորոյ նկատելով թէ իրենց մարդ գրկում եղած կաթնակեր մանկունք ևս «Սաննա կաղաղակեն, կրքով կուրացած՝ Յիսուսի կասեն. «Կը լսե՞ս թէ ի՞նչ կասեն:» Անդարձ մանուկներն էլ ժողովրդեան հետ միասին օրհնաբանութեանց կը մասնակցէին, սակայն ո՛չ թէ գիտակցաբար եւ իրենց ասածը հասկնալով, այլ աստուածային ներշնչմամբ. ինչպէս որ Դաւիթ մարգարէի բերանով Սուրբ Գրոց մէջ յայտնապէս գրուած է. «Ի բերանոյ տղայոց եւ ծծկերաց կատարեցեր զօրհնութիւն:»

Բայց փարիսեցիք Ս. Գրոց ուշադիր չը լինելով եւ մանաւանդ թէ թշնամական զգացմամբ լեցուած՝ վերոյիշեալ մարգարէական խօսքին իմաստը ըմբռնել չը կարողացան. այս պատճառաւ Յիսուս կասէ նոցա. «Մինթէ չէ՞ք կարդացած թէ մանուկների եւ կաթնակեր երեխաների բերանով օրհնութիւն հաստատեցիր:» Յիսուս հաճեցաւ Սուրբ Գրոց խօսքերով համոզել զանոնք, որպէս զի ի միտ առնելով ուղղուին. բայց նոքա ո՛չ մի կերպ չը համոզուելով, իրենց չարութեան մէջ յամառեցան. վասնորոյ երկնային դէմ Յիսուս զանոնք կը թողու եւ երուսաղէմէն ելնելով կը գնայ Բեթանիա[1]:

Յաջորդ օրը երբ դարձեալ երուսաղէմ կուգար, մարդկութիւնը յայտնելու համար անօթեցաւ. ճանապարհին վրայ թզենի մի կը տեսնէ ի հեռուստա, որուն վրայ շատ տերև կար, բայց երբ մօտենալով տերևէն զատ ոչինչ չգտաւ, ասաց. «Ա՛յսուհետև ո՛չ ոք պտուղ չուտէ քեզմէ». և ահա թզենին իսկոյն չորացաւ, զոր առաքեալք տեսնելով զարմացան: Իրաւ է որ թուզի ժամանակ չը լինելով՝ յայտնի էր որ նորա վրայ պտուղ չը պիտի գտնուէր, այսու հանդերձ ժամանակին պտուղ տալու նշանը չը տեսնուելուն համար պատժեց զայն:

---

1. Իբրև մօտ եղեն յԵրուսաղէմ, և եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց, յայնժամ Յիսուս առաքեաց... Մատթ. ԻԱ. 1—17.—Մարկ. ԺԱ. 1.—Ղուկ. ԺԹ. 29.—Յովհ. ԺԲ. 12.

խրատ ա՛ռ, ընթերցող, եթէ անպտուղ ծառը այս կերպով պատժոյ արժանի եղաւ, որչա՞փ ևս առաւել սաստիկ պէտք է պատժուի այն մարդը, որ ժամանակին առաքինութեան պտուղ չը տար, ինչպէս որ պարտական է։

Ա. Յնուհետև երուսաղէմ գալով՝ երբ որ տաճարը կը մտնէ, բոլոր առևտուր անող հրէայքը իշխանաբար կարտաքսէ, սեղանաւորաց տախտակները ու ազաւնի վաճառողաց աթոռները կործանելով կասէ. «Գրուած է թէ իմ տունս աղօթից տուն կոչուի, և դուք զայն ա—պաղկաց այր դարձուցիք[1]». (ինչպէս որ Ժ.Զ-րդ հարցում յիշուած է, յառաջագոյն ևս զանոնք տաճարէն արտաքսած էր)։

Հարց— ՃԺ.

Երբ Յիսուս առևտրականները տաճարէն արտաքսեց, ժողովուրդը նորա հակառակ խօսեցա՞ւ.

Պաս. Չը խօսեցաւ. արդարև մաքուր սիրտ ունեցողները այս պարագայում շատ ուրախանալով հակառակ չը խօսեցան, սակայն քահանայապետներն ու գրիչները և ժողովրդեան մեծամեծ

1. Ի վաղիւ անդր մինչդեռ ելանէին ի Բեթանիա՝ քաղցեաւ. և եռեսս զթզենի մի ի բացուստ տեսեալ եկաւ... Մարկ. ԺԱ. 12. մինչև 17 համար. Մատթ. ԻԱ. 18.

նները, որոնք իրենց անձնական շահուց համար տաճարին պատիւը չէին պահեր և նա՛ մանաւանդ Յիսուսի փառացը կը նախանձէին, նորա այսպիսի իշխանական ընթացքը տեսնելով՝ կուզէն զայն մեռցնել. բայց անկէ վախնալով՝ չեն համարձակիր գործադրել իրենց չար խորհուրդը. որովհետև բոլոր ժողովուրդը նորա քարոզը լսելու փափաքող էր և նորա վարդապետութեանց վրայ կը զարմանար։

Մի և նոյն օրը Յիսուս առաքելոց հետ նորէն Բեթանիա կերթայ, և երբ առաւօտեան վերստին Երուսաղէմ կուգար, առաքեալները վերոյիշեալ թզենին արմատէն չորացած տեսնելով՝ զարմացան թէ ինչպէ՞ս շուտով չորացաւ. Պետրոս կասէ. «Տէր, ահա այն թզենին, զոր անիծեցիր, չորացաւ։» Յիսուս կը պատասխանէ. «եթէ կատարեալ հաւատք ունենաք Աստուծոյ վրայ և բնաւ չերկմտիք, ոչ թէ միայն թզենիին, այլ և այս լերան էլ ասելու լինիք թէ «Ել և ծովը ընկիր», և ինչ որ արժանաւոր աղօթքով ու կատարեալ հաւատով խնդրէք, ստացած եղէք որ պիտի կատարուի։»

Ա. յսպէս կարևոր եղած աղօթքի գօրութիւնը յայտնելէն ցկնի, դարձեալ կասէ աշակերտաց. «Երբ որ աղօթքի կը կանգնիք, եթէ վշտացած էք մէկէն, ներեցէք անոր, որպէս զի Աստուած էլ ձեր պակասութեանց ներէ. քանզի եթէ դուք չէք ներեր, Աստուած էլ ձեզ չի ներեր. ուրեմն եթէ

քու մեղացդ համար թողութիւն դանել կը փափաքիս, պարտիս դուն էլ եղբօրդ թերութեանց ներել։»

Յիսուս ճանապարհում այսպիսի խօսքեր խօսելով աշակերտաց, երբ որ Երուսաղէմ կուգայ և տաճարը կը մտնէ քարոզելու համար, քարոզի ժամանակ քահանայապետները, դպիրները և ժողովրդեան ղեկաւորները անոր կասեն. «Որի՞ իշխանութեամբ այս բաները կանես. ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւնը»։ արդարև ինչպէս որ յառաջագոյն յիշուեցաւ, այնպիսի մեծ փառաւոր նորա Երուսաղէմ մտնելը և առևտրականները իշխանաբար տաճարէն արտաքսելով քարոզելը՝ անպատճառ մի մեծ իշխանութեան կարօտ էր. այդ պատճառաւ այս հարցումը կուղղեն անոր, քանի որ նորա Մեսիա լինելուն չը հաւատալով՝ մի հասարակ մարդ կը համարէին զայն։

Յիսուս կը պատասխանէ նոցա. «Ես էլ մի բան հարցնեմ ձեզ. պատասխան տուէք ինձ, որպէս զի ես էլ ձեզ ասեմ թէ որի՞ իշխանութեամբ կանեմ արածներս. Յովհաննու մկրտութիւնը երկնայի՞ն հրամանաւ էր թէ մարդկայի՞ն։» Սոյն պարզ հարցման վրայ նորա շփոթուեցան. որովհետև Յովհաննէս բաւական վկայած էր Յիսուսի համար թէ Նա է Մեսիան և իրենք գիտէին զայս. ուստի կը խորհին որ «եթէ ասենք թէ երկնային հրամանաւ էր, մեզ կասէ թէ ինչո՞ւ ուրեմն չը հաւատացիք անոր.

իսկ եթէ ասենք որ մարդոյ հրամանաւ էր, այն ժամանակ ժողովուրդը մեզ կը քարկոծէ»։ որովհետև բոլորը զՅովհաննէս մարգարէ կը ճանաչէին. այսպէս նորա չը գիտնալով թէ ի՞նչ պատասխանեն, կասեն թէ չը գիտենք։ և երբ որպէս թէ իրենք զիրենք ազատելու համար յայտնապէս սուտ խօսեցան, վանորոյ Յիսուս կասէ. «Ես էլ ձեզ չեմ ասեր թէ որի՞ իշխանութեամբ ու հրամանաւ կանեմ այս բաները[1]։»

Տէր Յիսուս այս պատասխանով նոցա հարցման լիովին պատասխանած և իբր իշխանութիւնը ի յերկինս էր լինելը յայտնած եղաւ. բայց վարիւսեցիք ո՛չ միայն համոզուիլ չը կամեցան, այլ և ընդհակառակն առաւել չարացան. քանզի Աստուծոյ չերկնչելով՝ մարդիկներէ կը վախնան. Յովհաննէսին մկրտչէ լինելը յայտնի լինելով հանդերձ՝ նորա ուստի՞ լինելը չը գիտենք ասելով ստեցին. նա մանաւանդ Յիսուսի գործած հրաշքները՝ Ս. Գրոց համաձայն նորա Մեսիա և որդի Աստուծոյ լինելուն կը վկայէին. ուստի փոխանակ դրոյ ուշադիր

---

1. Հրեան քահանայապետքն և դպիրք, և խընդրէին թէ ո՛րպէս կորուսցեն զնա, բայց երկնչէին ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ ուսումն նորա։ Եւ երբէք երեկոյ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն ելանէին։ Եւ մինչդեռ այգուցն առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոյ։ Մարկ. ԺԱ. 18—33.—Մատթ. ԻԱ. 20.—Ղուկ. Ի. 1.

լինելու՝ ասել թէ «Որի՞ հրամանաւ և իշխանութեամբ այս բաները կանես», խիստ ապօրէն էր և նշան իրենց անհաւատութեան:

Ա. յս պատճառաւ Յիսուս նոցա վատութիւնը իրենց յայտնելու համար առակ կը խօսի մի մարդու վրայ, որ երկու որդի ունենալով, առաջնոյն կասէ. «Գնա այսօր այգումդ աշխատէ, և նա կերթամ՝ ասելով կը խոստանայ, բայց չի դնար. իսկ երբ միւսին կասէ գնա՝ նա չուզեր գնալ, բայց յետոյ զղջալով կերթայ:» Ա. յս առակը ցոյց կուտայ Աստուծոյ պատուիրանաց հնազանդողներն ու անհնազանդները. նա մանաւանդ Իսրայէլի ժողովուրդն ու հեթանոսները. ուստի Յիսուս կը հարցընէ թէ այս երկուքէն ո՞րը իւր հօր պատուէրը կատարեց, նոքա կը պատասխանեն թէ վերջինը:

Ա յն ժամանակ Յիսուս կասէ. «Մաքսաւորներն ու պոռնիկները ձեզմէ յառաջ Աստուծոյ արքայութիւնը պէտք է մտնեն. որովհետև Յովհաննէս գալով՝ ըստ արդարութեան ձեզ քարոզեց, բայց դուք չը հաւատացիք. իսկ մաքսաւորներն ու պոռնիկները հաւատացին, և դուք տեսնելով հանդերձ անզիղջ մնացիք[1]:» Արդարև՝ (ինչպէս որ չորրորդ գարու Բ-րդ հարցում յիշուեցաւ) թէ-

1. Առն միոջ էին երկու որդիք. և մատուցեալ առ առաջինն ասէ. որդեակ երթ այսօր գործեա յայգւոջ: Նա պատասխանի ետ և ասէ. երթամ Տէր՝ և ո՛չ չոքաւ... Մատթ. ԻԱ. 28—32.

պէտև Իսրայէլեան ազգը Աստուծոյ օրինաց հնազանդիլ խոստացած էր, բայց հակառակ ընթացքի հետևելով՝ անհնազանդ դանուեցաւ. ընդհակառակն հեթանոսք աստուածային օրինաց ներհակ լինելով, ապա Յիսուս Քրիստոսի հաւատալով՝ ողորմութեան արժանացան և հրէայք զուրկ մնացին:

Սոյն առակը որքան որ ծանր յանդիմանութիւն էր նոցա, բայց մի ուրիշ առակ ևս խօսեցաւ, ցոյց տալու համար թէ նոքա պէտք է պատժուին իրենց խստասրտութեան պատճառաւ, որպէս զի խելամտելով՝ յուղղութիւն դառնան և զգաստանան: Ա.հա առակը — մի մեծատուն մարդ այգի անկելով՝ շուրջը կը պարսպէ և նոքա մէջ հնձան և աշտարակ շինելէ յետոյ՝ կը յանձնէ գոյն մշակաց ու ինքը կը գնայ օտար երկիր: Հունձքի ժամանակ երեք անգամ մարդ ղրկելով՝ այգին պատուղն կը պահանջէ. բայց մշակները մի քանին կը ծեծեն, մի քանին կսպանեն և ուրիշները կը քարկոծեն. այնուհետև իւր միկ հատիկ սիրելի որդին կը ղրկէ, խորհելով թէ թերևս կամաչեն անկէ. սակայն նոքա երբ որ զայն կը տեսանեն, «Սա է ժառանգը, եկէք զայն մեռցնենք և նոքա ժառանգութիւնը գրաւենք» ասելով, այգիէն դուրս հանելով կսպանեն զայն:

Ա յս առակը խօսեցաւ Յիսուս Իսրայէլի ժողովրդի մասին, զոր Աստուած իրեն սեփական ժողովուրդ ընտրելով՝ իրրև մի այգի անկաց երկրիս

վրայ (Եսայի Ե. 1.—Երեմ. Բ. 21.) և ապա օրէնք ու զանազան պատուէրներ տալով, ժողովրդեան հոգևոր կառավարութեան յատկացեալ պաշտօնէից յանձնեց զայն, որպէս զի նոքա նոյն պատուէրները դործադրելով՝ առաքինութեան պըտուղներ արտադրեն։

Բայի այդ, երբ որ հրամանի հակառակ կը գործեն, ժամանակ առ ժամանակ իւր բազում ողորմութեամբ մարգարէներ կը ղրկէ նոցա ուղղութեան համար. բայց նոքա ոչ մի կերպով ուղղութիւն չընդունելով՝ մարգարէները կսպանէին։ Ապա թէև իւր սիրելի որդին Յիսուս Փրկիչ մեր Տէրը ղրկեց, սակայն նոքա խորհեցան զայն ևս մահացնել և այդին իրենց դրաւել. «Ուրեմն, կը հարցնէ Յիսուս, երբ այգիին Տէրը գայ, ինչ պէտք է անել այդ մշակաց»։ Հակառակորդք կատիպուին պատասխանել թէ «Ա յգեղն Տէրը նախ ամենախիստ պատժով կը պատժէ մշակները և ապա այդին կը յանձնէ այլոց, որ ժամանակին այգիին պտուղը տան[1]։»

Արդարև նոցա կողմանէ որուած սոյն վճիռը իրաւացի էր, և Յիսուս զայն հաստատելու համար կը յայտնէ թէ յիշեալ այդին իրենց ձեռքէն

1. Այլ մի էք տանուտէր՝ որ տնկեաց այգի, և ցանգով պատեաց զնա՝ և փորեաց ի նմա հնձան, և շինեաց աշտարակ, և եւս զնա ցմշակս... Մատթ. ԻԱ. 33—41.—Մարկ. ԺԲ. 1.—Ղուկ. Ի. 9.

առնուելով ուրիշներուն պէտք է որուի. ահա այն ժամանակ կը հասկանան թէ այդ առակը իրենց նկատմամբ խօսած էր, այս պատճառաւ իրենց խօսքը փոխելով կասեն «Բաւ և մի՛ լիցի։» Տէս դու կեղծաւորայ անարդար պատասխանը. ինչու որ անիրաւ մշակաց պատժոյն նկատմամբ իրաւացի վճիռ տուած լինելով հանդերձ, երբ կը նկատեն թէ այդ պատիժը իրենց վրայ կընկնի, դժկամակելով իսկոյն կը փոխեն իրենց դատաստանը և եա կառնեն իրենց խօսքը։

Թէև Յիսուս վերոյիշեալ առակով յայտնեց որ հրէայք պէտք է պատժուին, այլ կը փութայ նաև Ս. Գրքէն վկայութիւն յառաջ բերել, հաստատելու համար թէ ինքն է Մեսիան, որպէս զի խելամտելով հաւատան և պատիժէն ազատուին։ Վասն զի, ինչպէս որ Դաւիթ մարգարէի բերանով սաղմոսաց մէջ գրուած է (Սաղմ. ՃԺԸ. 21), Յիսուս՝ հին օրինաց լրումն ու նոր օրինաց սկիզբը լինելով, երկոցուն միջև իրեև անկեան քար եղաւ, որուն պէտք էր ամենքը կապուէին. արդ հրէայք իրենց չարասրտութեան պատճառաւ և առ նախանձու զայն արհամարհելով՝ մինչև անգամ նորա մահուան համար աշխատեցան. վասնորոյ Աստուծոյ ողորմութեան անարժան համարուեցան իրաւամբ։

Այս պատճառաւ Յիսուս վճռեց որ Աստուծոյ արքայութիւնը պիտի բարձուի անոնցմէ, և

տրուի այլ ազգաց, որպէս զի չը կարծեն թէ զինքը սպանելով իրեն վնաս հասցնել կարող են. ընդհակառակն, իրենք անդարմանելի վնասուց կենթարկուին և յաւիտենական պատիժ կը կրեն. զայս կանխաւ կը յայտնէ իրենց, որպէս զի ուղղուին. որովհետև ինչպէս որ քարի վրայ ընկնողը կարող չէ անոր վնասել և ինքը կը վնասուի, և կամ քարը որի վրայ որ ընկնի, զայն կը ճմլէ, նոյնպէս Յիսուսի վնասել ուզողը պէտք է սոյդ դիտայ թէ ինքը կը վնասուի, կամ թէ նորա պատուիրանաց անսալ չուզողը անպատճառ կը պատժուի ամենայն իրաւամբ:

Յիսուսի սոյն խօսքերը իրենց նկատմամբ արտասանուած լինելուն վրայ զայրացած՝ քահանայապետք և դպիրք կամեցան զայն բռնել, բայց ժողովրդէն վախնալով իրենց մտադրութիւնը ի գործ դնել չը կարողացան[1]: Թէև նորա այս կերպով պատժոյ արժանի էին, բայց որպէս զի իմանալով ղգաստանան, Յիսուս նորէն մի առակ յառաջ կը բերէ Թագաւորի մի վրայ, որ իւր որդւոյն հարսանիքը կը կատարէ, և երբ մարդ ղրկելով հրաւիրեալները կը կոչէ, նորա չեն ուզեր գալ. գարձեալ հրաւիրակներ ղրկելով կասէ. «Ասացէք

1. Առէ ցնոսա Ցիսուս. չիցէ երբէք ընթերցեալ ձեզ ի գիրս, զվէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան. ի տեառնէ եղև այս . . . Մատթ. ԻԱ. 42—46.—Մարկ. ԺԲ. 10.—Ղուկ. Ի. 17.

հրաւիրելոց թէ ճաշը պատրաստ է, եկէք հարսանիքի». սակայն նորա անհոգութեամբ ոմանք իրենց ագարակը և այլք իրենց առևտուրին կը գնան, մի քանին էլ նորա ղրկած մարդիկը ծեծելով կը մեռցնեն:

Թագաւորը զայս լսելով կը բարկանայ. և զօրք ղրկելով ո՛չ միայն չիշեալ մարդասպանները սպանել կուտայ, այլ և նոցա քաղաքները այրելով իւր ծառայից կասէ. «Հարսանիքս պատրաստ է, հրաւիրեալները արժանի չէին, գնացէք ճանապարհին վրայ և այնտեղ զո՛վ որ գտնէք, հրաւիրեցէք հարսանիքի:» Նորա գնալով կը ժողովեն բոլորը, զորս գտան, չար և բարի անխտիր, մինչև որ հարսանեաց տունը կը լեցուի: Սակայն հարսանիքի եկողները ի պատիւ Թագաւորին իրենց հանդերձը փոխելով՝ կարողութեան համեմատ նոր հանդերձ հագած էին, միայն մէկը հարսանեաց հանդերձ հագած չէր:

Երբ որ Թագաւորը բազմականները տեսնելու համար ներս մտաւ, տեսնելով զայն, որ հին հանդերձներ կը կրէր, ասաց նրան. «Ինչպէ՞ս մտար այսպէս, քանի որ հարսանեաց վայելուչ հանդերձ չունէիր». և նա պատասխանեցաւ, որովհետև ոչ մի արդարացուցիչ առարկութիւն կամ պատրուակ չունէր յառաջ բերելու: Յայնժամ Թագաւորը կասէ ծառաներին. «Կապեցէք նորա ձեռներն ու ոտները և հանեցէք զայն արտաքին խաւարը, ուր

պէտք է լայ ու ատամները կճրտացնէ. որովհետև հրաւիրեալները շատ են, իսկ ընտրեալները սակաւ։»

Ոմանք կասեն թէ թագաւորը՝ հարսանիք եկողներու իւրաքանչիւրին մէկ մէկ ձեռք նոր հանդերձ կուտար իր մեծութիւնն ու հարստութիւնը յայտնելու համար, բայց վերոյիշեալ պապանձող անձը թագաւորի պատիւը չը պահելով՝ իր հին հարդերձովը գալուն համար պատժոյ արժանացաւ[1]։

Յիրաւի Աստուած իր բազում ողորմութեամբ ամէնքը կը հրաւիրէ յերկնային հարսանիս, այն է արքայութեան անվախճան փառաց, և այս մասին հարկաւոր եղած շնորհքն ո՛չ ոքի չը խնայելով՝ ձրիաբար կը պարգևէ. սակայն շատերը նորա պարգևը չը ճանաչելով կը պատժուին։ Արդ՝ եթէ պատժէ զերծ մնալ կուզես, կեղտոտ հանդերձը փոխելու նման՝ օր յառաջ ղղջա և ապաշխարէ, և մեղայ ազտերը սրտէդ մաքրելով աստուածային շնորհօք առաքինութեան հանդերձը հագնելու ջան ի գործ դիր, որպէս զի հին հանդերձով հարսանիք գնացող անձին նման պատժոյ արժանի չը լինիս։

1. Եւ ասէ ցնոսա առակօք։ Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն... Մատթ. ԻԲ. 1—14.

Հաբյա—՛ Խէ.

Քահանայապետք, ղպիտք եւ փարիսեցիք վերոյիշեալ առակը լսելով յուղղութիւն եկան արդեօք.

Պապ. Ձեկան. Նա մանաւանդ աւելի ևս չարացան։ Նորա թէև շարունակ կը փափաքէին Յիսուսի մերձենալ, բայց առ երկիւղի ժողովրդեան՝ իրենց խորհուրդը գործադրել չը կարողանալով՝ այս անգամ ուրիշ մի հնարքի կը դիմեն. նորա իրենց մէջ խորհրդակցելով՝ խաբդախ, կեղծաւոր և նենգամիտ մարդիկ կը ղրկեն առ նա, որպէս զի ժողովրդեան առջև նորա բերանէն մի խօսք առնեն ընդդէմ Հռովմայեցւոց իշխանութեան, և Հռովմայեցի պաշտօնէից ձեռամբ զայն պատժել տան։

Յիշեալ անձինք գալով առ Յիսուս, նախ կսկսին կեղծաւոր եղանակաւ զայն գովել և ապա կը հարցնեն թէ արժա՞ն է մեզ հարկ տալ կայսեր թէ ոչ. Յիսուս նոցա դիտաւորութիւնը քաջ գիտնալով կասէ. «Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորներ, բերէք ինձ մի դահեկան որ տեսնեմ»։ երբ որ նորա բերին, կը հարցնէ. «Որո՞ւն է այս պատկերն ու գիրը»։ նորա կը պատասխանեն «Կայսերն է»։ այն ժամանակ Յիսուս կասէ. «Գնացէք ուրեմն տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։» երբ որ այս պատասխանը կը լսեն, խիստ

զարմանալով՝ լուռթեամբ և ամենայն խոյտառաւակութեամբ կը հեռանան[1]. վասն զի նորա խօսքերի մէջ իշխանութեան հակառակ ոչ մի թերութիւն չէր կարողացան գտնել, թէև շատ վարպետութեամբ լարած էին թակարդը:

Երբ որ Յիսուս վերոյիշեալ նենդամիտները ամօթով թողուց, նոյն օրում Սադուկեցիներն էլ, որոնք հանդերձեալ կեանքը կուրանային և մեռելոց յարութիւն չէին ընդունէր, անոր կը հարցնեն ասելով. «Մովսէս մեզ գրեց թէ երբ մէկը անպատակ մեռնի, պէտք է որ նորա եղբայրը առնու եղբօրակինը հանդուցեալոյն սերունդ տալու համար (Բ. Օրին. Իե. 5): Արդ՝ մեզ մօտ եօթն եղբարք կային, որոց առաջինը կին առնելով անպատակ մեռաւ. երկրորդը նոյն կինը առնելով նոյնպէս անորդի մեռաւ. նմանապէս երրորդը, մինչև որ եօթներորդն էլ մի և նոյն կինը առնելով՝ ամէնքն էլ անպատակ մեռան. ապա մեռաւ և կինը. ուրեմն ի յարութեան նոյն կինը ո՞ր մէկին ամուսին պիտի լինի:»

Թէև յիշեալ պատնդաւորք այս կերպ սկսալ մի պիտով իրենց մոլար վարդապետութիւնը յայտնապէս հաստատելու բաղձանքն ունեցան, բայց

1. Եւ առաքեցին դաւանանս կեղծաւորեալս պանձինս առ արդարս ունել, զի ըմբռնեսցեն զնա բանիւք առ ի մատնել զնա պետութեան... Ղուկ. Ի. 20—26.—Մատթ. ԻԲ. 15.—Մարկ. ԺԲ. 13.

Յիսուս կը պատասխանէ նոցա. «Յիմարներ, ոչ Գրոց իմաստը գիտէք և ոչ Աստուծոյ զօրութիւնը. ի յարութեան ոչ արք կին կառնեն և ոչ կանայք մարդու կը գնան, քանզի այլ ևս անմահ լինելով, հրեշտակաց նման են երկնքում:»

Արդարև մարդիկ երկրիս վրայ կամուսնանան, որպէս զի սերունդ յառաջ բերելով՝ մեռելոց տեղ ուրիշները յաջորդեն. սակայն հանդերձեալ կենաց մէջ մահ չը լինելուն համար ամուսնանալու ևս կարիք չկայ. արդ Աստուած մարդու հոգին անմահ ստեղծած լինելով, ամէնքը նմա կենդանի են և նորա անհուն զօրութեամբ յարութիւն պէտք է առնեն յա—ո—ւն յեփռո—մ: Ինչպէս որ Աբրահամ, Իսահակ և Յակովբ մեռած էին, բայց նոցա հոգիները անմահ լինելով՝ Աստուած Մովսէսին յայտնեց, թէ ես նոցա Աստուածն եմ (Ելից. Գ. 6). վասն զի Աստուած ոչ թէ մեռելոց Աստուած է, այլ կենդանեաց[1]:

Այս պարագայում Յիսուս Սադուկեցւոց անհնարին մոլորութիւնը Ս. Գրոց խօսքերով դատապարտեց, որպէս զի խելամտելով ուղղուին. և թէպէտ նոքա իրենց չարութեան համար չը կամե-

1. Մատուցեալ ոմանք ի սադուկեցւոցն, որք հակառակէին չլինել յարութեան: Հարցին ցնա և ասեն, վարդապետ, Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մեռանիցի... Ղուկ. Ի. 27—38.—Մատթ. ԻԲ. 23.—Մարկ. ԺԲ. 18.

ցան համոզուիլ, բայց մի և նոյն ժամանակ յայտնապէս անկրաւ լինելով, պատասխան տալու էլ կարող չեղան։

Յիսուսի սոյն խօսքերը ժողովուրդը լսելով կը զարմանար նորա վարդապետութեան վրայ. նոյն իսկ փարիսեցիք, որոնք միշտ հակառակորդ և թշնամի էին Սադուկեցւոց, լսելով թէ նա պատնծեցուց Սադուկեցիքը, ուրախացած՝ Յիսուսի մօտ ժողովուեցան. անոնցմէ մին, որ մի իմաստուն դպիր էր, ներկայ լինելով վերոյիշեալ վիճաբանութեան, և լսելով Յիսուսի քաջայարմար պատասխանները, ինքն էլ հարցուց անոր, թէ օրինաց մէջ ո՞ր պատուիրանն է մեծ. սակայն ոչ թէ սովրելու, այլ զայն փորձելու համար։

Որովհետև Ս. Գրոց մէջ գրուած է, թէ Աստուած մի է և պէտք է որ զայն սիրես բոլոր սրտովդ, բոլոր անձովդ և բոլոր զօրութիւնովդ. (Բ. Օրին. Զ. 4), ուստի Յիսուս այս պատուէրը յայտնելով, կասէ. «ահա այս է մեծ և առաջին պատուիրան։» Երկրորդը, որ սորա նման է, այս է, ընկերդ սիրես քու անձիդ պէս (Ղեւտ. ԺԹ. 18)։ Աստոնցմէ մեծ պատուիրան չկայ. և բոլոր օրէնքն ու մարգարէք այս երկու պատուիրանաց մէջ կը կայանան։ Յիշեալ դպիրը Յիսուսի ասածները հաստատելով ճշմարիտ է ասաց, և այս խելացի պատասխանին համար Յիսուս անոր ասաց. «Հեռի չես Աստուծոյ արքայութենէն»։ և այլ ևս ոչ ոք

չէր համարձակեր անոր մի բան հարցնելու [1]։

Յիրաւի Տէր Յիսուսի գիտութեան, վարդապետութեան և արած խօսքերին նայելով, այլ ևս ո՛չ ոք չկարողացաւ մի բան հարցնել ի նմանէ, բայց այս անգամ ինքը կը հարցնէ նոցա, թէ Մեսիան որի՞ որդին է. և երբ նոքա կասեն, որ Դաւիթի որդին է. և երբ նոքա կասեն, որ Դաւիթի որդին է, Յիսուս կը պատասխանէ. «Ուրեմն ինչպէ՞ս Դաւիթ հոգւով սրբով ընդ իրեն տէր կոչելով կասէ, Տէրը ասաց Տիրոջս, նստէ՛ աջ կողմս, մինչև որ թշնամիներդ դնեմ ոտիդ ներքև իրեւ պատուանդան. արդ՝ եթէ Դաւիթ զանի տէր կանուանէ, ինչպէ՞ս նորա որդին կը լինի [2]։»

Այս պարագայում Յիսուս Ս. Գրոց խօսքերով յայտնապես կը հաստատէ, թէ ինքը կատարեալ Աստուած է և կատարեալ մարդ, որպէս զի նոքա խելամտելով հաւատան իրեն ու ողորմութեան արժանանան. քանզի ինչպէս որ Դաւիթ ցեղէն սերելովը նորա որդին կոչուեցաւ, նմանապէս Դաւիթ զնա իրեն տէրը կոչելովը՝ նորա Աստուածութիւնը յայտնի եղաւ, քանի որ վերաբեր-

---

1. Իբրև լուան ժողովուրդքն, զարմանային ընդ վարդապետութիւն նորա... Մատթ. ԻԲ. 33—40. Մարկ. ԺԲ. 28.

2. Եւ ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց զնոսա Յիսուս՝ և ասէ, զիա՞րդ Քրիստոսի, այր որդի է. ասեն զնա՝ Դաւթի. Մատթ. ԻԲ. 41—46. —Մարկ. ԺԲ. 35.—Ղուկ. Ի. 41.

եալ վկայութիւնը կարելի չէ ուրիշ կերպ հասկնալ, բայց միայն թէ նա է Մեսիա և Որդի Աստուծոյ։

Յիսուսի վերոյիշեալ քարոզին շատ ժողովուրդ կուննկդրէին սիրայօժար, ուստի Նա ժողովուրդն ու իւր աշակերտները կը յորդորէ, որ դպրաց ու փարիսեցւոց ասածները ի գործ դնեն, բայց նոցա գործքերէն զգուշանան, որովհետև նոքա Մովսէսի աթոռին վրայ նստած՝ օրէնքում գրուածները կը քարոզէին և կը սովրեցնէին, բայց իրենց ընթացքում հակառակը ի գործ կը դնէին, նա մանաւանդ այլոց վրայ դժուար և ծանր բեռները դնելով, իրենք ոչ միայն իրենց մատով զայնս շարժել չէին ուզեր, այլ և ինչ որ կանէին, մարդկներէն փառաւորուելու բաղձանքով կը գործէին։ Նոցա այսպիսի կեղծաւոր, ապօրէն և անարժան գործքերը մի առ մի յայտնելով, վայ կը կարդայ նոցա, որպէս զի իրենց պակասութիւնքը ճանաչելով ուղղուին[1]։

Յիսուս վերև յիշուածները ժողովրդեան քարոզելէն յետոյ ողորմութեան դանձանակին առջև կը կենայ, յորում ժողովուրդը դրամ կը ձգէր տաճարի ծախուց համար։ շատ հարուստ մարդիկ ժողովուրդէն գովեստ ընդունելու նպատակաւ ամ-

1. Ցաթուն Մովսէսի նստան դպիրքն և փարիսեցիք։ Ամենայն ինչ՝ զոր ասիցեն ձեզ արարէք, բայց ըստ գործոցն նոցա մի առնէք... Մատթ. ԻԳ. 1—36.

բարտաւան ձևերով շատ բան ձգեցին, բայց մի այրի կին այդ դանձանակում երկու փոքր ձգեց։ այն ժամանակ Յիսուս աշակերտները իւր մօտ կոչելով կասէ. «Ամէն խեղճ որբևայրի կինը բոլորէն աւելի տուաւ, վասն զի բոլորը իրենց աւելորդ ստացուածքէն տուին, սակայն այդ չքաւոր կինը բոլոր ունեցածը տուաւ[1]։»

Իրաւ է որ Աստուած արուած ողորմութեան քանակութեան չը նայիր, այլ տուողի սրտին կը նայի. բայց ողորմութիւն տուողն էլ պարտական է իւր կարողութիւնը կշռելով՝ ըստ այնմ հարուստ սրտով և մանաւանդ առանց մարդկներէն փառք ստանալու ակնկալութեան, մի միայն ի սէր Աստուծոյ և անկեղծ սիրով տալ, որպէս զի փոխարէնը Աստուծոյ բարերարութեան կողմանէ իրեն շնորհուի։

Ա՛յնուհետև երբ Յիսուս տաճարէն մեկնեցաւ, հեթանոսներէն ոմանք, որոնք ոմն տաճիկ ներուսաղէմ եկած էին երկրպագութիւն մատուցանելու, փափաքեցան Յիսուսը տեսնել. բայց նորա մօտ գնալու համարձակութիւն չունենալով, Փիլիպպոս առաքելոյն կը յայտնեն իրենց փափաքը. նա ևս Անդրէաս առաքելոյն յայտնելով՝ երբ Յիսուսի կը մօտենան, նա կը յայտարարէ, թէ հասած է ժամա-

1. Կայր Յիսուս ընդդէմ դանձանակին... Մարկ. ԺԲ. 41—44.—Ղուկ. ԻԱ. 1.

նակը, որ Մարդոյ Որդին փառաւորուի, և օրինակ բերելով ցորենի հատիկը կասէ. «Եթէ ցորենի հատը հողին վրայ ընկնելով չը մեռնի, ինքը միայն կը ճնայ, իսկ եթէ մեռնի, շատ արդիւնք կուտայ։»

Ա.յս խօսքով Յիսուս յայտնեց, թէ ինքը մօտ ժամանակում խաչը ելնելով պէտք է մեռնի, և գերեզմանի մէջ թաղուելով յարութիւն առնելէ վկնի նորա անունը ամբողջ աշխարհում պէտք է փառաւորուի։ Արդարև նորա երկինք համբառնալէ յետոյ առաքելոց քարոզութեամբ հեթանոսները հաւատքի գալով, նորա սուրբ և օրհնեալ անունը փառաւորուեցաւ բովանդակ աշխարհի մէջ։

Ա.յո՛, Յիսուս Փրկիչն մեր մարդկային ազգը մեղայ դերութենէն փրկելու համար՝ իւր բազում ողորմութեամբ խաչուելով մեռնելու էր, սակայն մարդս էլ պարտական է ինքզինքը մեղքէ պահպանել և աշխարհի վրայ պատահած նեղութեանց ի սէր Աստուծոյ համբերել կամաւ և յօժարութեամբ, եթէ ոչ, կարող չէ երկնային արքայութիւնը ժառանգել. այս պատճառաւ Յիսուս կասէ. «Ով որ իւր անձը կը սիրէ, կարձակէ զայն, իսկ ո՛վ որ կը մերժէ կամ կատէ զայն, յաւիտենական կենաց համար կը պահէ. ո՛վ որ ինձ կը ծառայէ, ի՛մ հետևէն կուգայ, և ուր որ ես եմ, նա ևս անդ կը լինի և Հայրս կը պատուէ զայն[1]։»

1. Էին անդ ոմանք և հեթանոսք յելելոց անգր,

Արդարև բնական է մարդուս իւր անձը սիրել, բայց այս պատճառաւ շատերը աշխարհային գործոց մէջ չափէն աւելի իրենց անձանց միայն ուշադրութիւն ընծայելով, հոգևոր ճանապարհը բոլորովին կը մոռանան և այս կերպով իրենց հոգւոյն կորստեան պատճառ կը լինին։ Արդ՝ եթէ անձդ կը սիրես, Յիսուսի սիրոյն համար պատահած նեղութեանց համբերելու ես, որպէս զի երկնքում նորա անվախճան թագաւորութեան ու փառաց արժանի լինիս (տե՛ս այս մասին նաև Ի.Դ-րդ հարցումը)։

Որովհետև Յիսուս երեք օրէն խաչը ելած մեռնելու էր, այս պատճառաւ յուզուելով ասաց. «Ո՛վ Հայր, փառաւորէ քու անունը»։ Իսկոյն երկընքէն ձայն կուգայ, թէ «Փառաւորեցի և դարձեալ կը փառաւորեմ։» Արդարև Յիսուսի համբառնալէն վկնի՝ երբ որ առաքելոց միջոցաւ աւետարանը քարոզուեցաւ բոլոր աշխարհի, Հօր Աստուծոյ սոյն խօսքը կատարուեցաւ. քանզի այդ ձայնը ո՛չ թէ Յիսուսի, այլ ժողովրդեան համար եկաւ յերկնուստ, որպէս զի իմանալով, թէ Նա է Աստուծոյ Որդին, հաւատան իրեն և երկնային ողորմութեան ու փրկութեան արժանանան։

զի երկեբպագանիցեն և ասէին. Նոքա մատեան առ Փիլիպպոս՝ որ է Բեթսայիդայ Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա և ասէին. ա՛ր, կամիմք զՅիսուս տեսանել. Ցովհ. ԺԲ. 20—26.

Նմանապէս Յիսուս ինքն էլ յայտնեց նոյն օրուայ թէ՝ երբ որ ինքը խաչուելով մեռնի, սատանայի զօրութիւնը պիտի ջլատէ ու խորտակէ, և մարդկային ազգը նորա ձեռքէն ազատելով, առ ինքն պիտի գրաւէ. նա մանաւանդ զինքը լաւ նմանցնելով կասէ. «Մի քիչ ժամանակ ևս լոյսը ձեզ հետ է, հաւատացէք ուրեմն լոյսին, որպէս զի խաւարի մէջ չը մնաք:» Բայց յայտնէ, յայտնելու համար թէ ինքը Հօր Աստուծոյ հետ Էլ է, կասէ. «Ով որ ինձ կը հաւատայ, միս աւաքողին կը հաւատայ, և ով որ միս կը տեսնէ, ինձ կը տեսնէ:»

Ա յսպէս Յիսուս իւր աստուածութիւնն ու մարդկութիւնը միանգամայն յայտնելէ յետոյ, կը յաւելու թէ. «Իւր բոլոր խօսքերը Հօր Աստուծոյ պատուէրին համաձայն են, և այդ պատուէրը յաւիտենական կեանք է, և իրեն հաւատացողները պիտի փրկուին, իսկ չը հաւատացողները պիտի դատապարտուին յաւուրն յետնում՝». Յիսուսի այս փրկարար խօսքերը լսելով հանդերձ, յամառ հրէայք իրենց չարամիտ կուրութեան պատճառաւ դարձեալ չը հաւատացին: Ճշմարիտ է, մեծերէն շատերը հաւատացին, բայց փարիսեցիներէն երկընչելով չէին յայտներ, որպէս զի ժողովրդեան միջէն չարտաքսուին, վասն զի աստուածային փառքէն աւելի մարդկային փառքը սիրեցին անմտաբար:

Յետոյ հրէայք Յիսուսի բարերարութիւնը

չը ճանաչեցին, սակայն այս մասին էլ Ս. Գրոց պատգամը կատարուեցաւ, ինչպէս որ Եսայի մարգարէն Յիսուսի փառքը տեսած ժամանակ գրած էր, թէ հրէայք չը պիտի հաւատային անոր (Եսայ. Ջ. 8, ԾԹ. 1): Սակայն ոչ թէ այս մարգարէական պատգամը նոցա անհաւատութեան պատճառ եղաւ, այլ միայն իրենց չարասրտութիւնը. որովհետև քանի որ Յիսուսի հրաշագործութիւնները տեսած էին, նախանձու կրքով լեցուած լինելուն համար, իրենց հոգւոյ աչքերը փակուելով՝ նորա աղօթմանութեան լոյսն պրկուեցան: Յիսուս այս խօսքերը ժողովրդեան քարոզելէ պկնի, կը գնայ ձիթենեաց լեռը և անդ կը ծածկէ ինքզինքը[1]:

Հարցում Ի.

Ո՞րք էին վերոյիշեալ հնթանոնները, որոնք Յիսուսը տեսնել կուզէին.

Պապ. Եդեսիոյ Հայոց Աբգար Թագաւորին դեսպանները: Որովհետև Աբգար բորոտութեան ախտով վարակուած լինելով, եօթը տարի բժշկութիւն չը գտնէր, երբ նա Յիսուսի հրաշագործութիւնները կը լսէ և միանգամայն թէ հրէայք զայն

1. Բայց այժմ անձն իմ խռովեալ է... Հայր, փառաւորեա՛ զանուն քո. եկն բարբառ յերկնից, և փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից. Յովհ. ԺԲ. 27—50.

ապանել կը փափաքին, կը խոստովանի թէ Նա Աստուծոյ Որդին է և աղաչանաց դիր կը գրէ առ Նա։ Աբգար իւր Անանէ անուամբ սուրհանդակին հետ ուրիշ մի քանի պատուաւոր անձինք եւս ղրկելով կը հրաւիրէ զՅիսուս, որ գայ և իրեն բժշկութիւն պարգեւէ, և կը խոստանայ միշտ պատուով պահել զնա իւր մօտ։

Երբ որ հայ դեսպանները գնալով՝ իրենց առաքելութեան նպատակը յայտնեցին Յիսուսի, թէև նա չգնաց, բայց Թովմաս առաքեալի ձեռամբ նամակ գրելով, զինքը չը տեսած հաւատացողին երանի տալէն զատ՝ իւր համբարձումէն ոկնի աշակերտներէն մին ղրկել կը խոստանայ, որպէս զի նա գնալով բժշկէ Թագաւորը։ Եւ որովհետև Աբգար յատկապէս մի պատկերահան եւս ղրկած էր այն դիտաւորութեամբ, որ եթէ Յիսուս չանձն չառնու գնալ, գոնէ նորա պատկերը քաշելով՝ իրեն բերէն, քանզի կը յուսար, թէ նորա պատկերն էլ կարող է զինքը բժշկել։

Ըստ արքայական պատուէրին, պատկերահանը կսկսի գծագրել, բայց անկարող կը լինի. Յիսուսի յայտնի լինելով նորա միտքը, մի վարշամակ (դաստառակ) առնելով՝ իւր օրհնեալ երեսին վրայ դրածին պէս՝ իսկոյն դէմքը նոյն դաստառակին վրայ գծագրուած կը տեսնուի, զոր կը յանձնէ դեսպանաց Աբգարին տանելու համար։ Աբգար Յիսուսի պատկերը տեսնելով՝ ամենամեծ յարգա-

նօք կերկրպագէ անոր, որով նորա ախտը թեթևանալով կը հանդարտի. նամակն էլ կարդալով խիստ շատ կուրախանայ։ Ապա Յիսուսի համբառնալէ յետոյ Թադէոս առաքեալ Եդեսիա գնալով կատարեալ առողջութիւն կը շնորհէ Հայոց Թագաւորին։ Այսպէս Աբգար բոլոր Թագաւորներէն առաջ Յիսուսի հաւատալով՝ նամակով ուրիշ Թագաւորաց եւս կը յայտնէր, թէ Նա է Մեսիան և Աստուծոյ Որդին, ինչպէս կը գրէ Մովսէս Խորենացին [1]։

Ինչպէս որ Խ-րդ հարցում յիշուեցաւ, Յիսուս երբ տաճարէն մեկնեցաւ, առաքեալք այդ շէնքին գեղեցկութիւնն ու հարստութիւնը ցոյց տալով կասեն անոր. «Տես ի՛նչ գեղեցիկ քարերով ու աշտարակներով զարդարուած է», Յիսուս կը պատասխանէ. «Այդ շէնքը՝ զոր կը տեսնէք, ժամանակ պիտի գայ, յորում քար քարի վրայ չմնալով՝ բոլորը պէտք է քանդուի։» Աշակերտները թէև այն ժամանակ չը հարցուցին, թէ ի՞նչ պատճառաւ տաճարը այդպէս աւերակ պէտք է դառնայ, բայց երբ (ինչպէս Խ-րդ հարցում յիշուեցաւ) Յիսուս ձիթենեաց լեռը գնալով կը պահէր ինքզինքը, և անդ տաճարին յանդիման նստած էր, չորս առաքեալներ՝ այն է՝ Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս և Անդրէաս առանձին նորա մօտ

---

1. Տե՛ս Խորենացի յերկրորդ հատոր գլ. Լ. ԼԱ. ԼԲ. ԼԳ.

գնալով հարցուցին, թէ ե՞րբ պէտք է տաճարը աւերի, և թէ մանաւանդ որո՞նք են դատաստանի համար իւր երկրորդ գալստեան և աշխարհի կատարածին նշանները: Բայց Յիսուս անոնց գործադրութեան ժամանակը դիտնալ հարկաւոր չը դատելով, միայն յայտնեց նոցա, ինչ որ նոցա և բոլոր մարդոց օգտակար էր, որպէս զի զգոյշ լինին և ո՛չ ոքե չը խաբուին: Նմանապէս կը պատուիրէ չը հաւատալ, երբ որ շատերը վիրենք Մեսիայի տեղ գնելով կասեն, թէ ահա մերձ է վերջին ըժ. դարձեալ պատուէր կուտայ չը վախնալ և չը խռովիլ, երբ որ ի տեղիս տեղիս պատերազմ, սով, մահ և երկրաշարժ տեղի ունենան. որովհետև դեռ տաճարը աւերելէն յառաջ պէտք է որ այդ բոլորը տեղի ունենայ:

Ա՛յսու ամենայնիւ աւետարանի քարոզութիւնը ետս չը մնալով, երբ որ դայն քարոզեն անվեհեր, վիրենք պէտք է տանին թագաւորաց, դատաւորաց և իշխանաց առջև, ուր՝ թէ ի՞նչ ու ինչպէ՞ս պէտք է խօսիլ, այդ մասին բնաւ հոգ և մտատանջութիւն ունենալու չեն, քանզի այդպիսի պարագայից մէջ ինչ որ հարկ է խօսիլ, Հոգին սուրբ իրենց կը ներշնչէ (տե՛ս այս մասին նաև ԼԸ-րդ հարցուածը):

Բայց այդ կանխաւ ու վճռաբար կը յայտնէ Յիսուս իւր աշակերտաց, թէ իւր անուան համար շատ չարչարանք կրելով պիտի մեռնին, սակայն որոնք որ կը համբերեն, յաւիտենական կենաց պիտի արժանանան. և զայս կանխաւ կը յայտնէր, որպէս զի չը յուսահատուին, վասն զի իրենց գլխոյն մէկ մազն անգամ չը պէտք է կորսուի: Արդարև Յիսուսի ասածին համեմատ, առաքեալները և բազում հաւատացեալք նորա սիրոյն համար ո՛չ միայն օտարներէն, այլ և իրենց հօր, եղբօր, ազգականի և բարեկամի ձեռամբ տեսակ տեսակ տանջանք կրելով մեռան, և այսպէս արքայութեան անվախճան փառաց հասան:

Դարձեալ, ինչպէս որ Դանիէլ մարգարէն գրած էր (Դան. Թ. 26), Յիսուս կը յայտնէ թէ, երբ որ Երուսաղէմն ու տաճարը աւերի, բոլոր Իսրայէլի ժողովուրդը և մանաւանդ Երուսաղէմի բնակիչները մեծ նեղութիւն ու տագնապ պիտի կրեն: Յիրաւի (Խե-րդ հարցում տե՛ս) երբ որ Հռովմայեցիք Երուսաղէմի պիրեցին, հրէայք չափէն աւելի նեղութիւն ու տագնապ կրելով՝ անհաշիւ մարդիկ կոտորուելէ զատ, շատ շատերը նաև հեթանոսաց երկիրը գնացին և Երուսաղէմ ու տաճարը բոլորովին աւերակ դարձան:

Նմանապէս աշխարհի կատարածին այն տագնապ և նեղութիւն պէտք է լինի, որուն նմանը աշխարհի ստեղծուելէն ի վեր ո՛չ երբէք եղած է և այլ ևս չը պիտի լինի. և եթէ այն օրերը չը կարճանային, ո՛չ ոք կարող էր ապրիլ, բայց ընտրելոց համար պէտք է կարճանան:

եթէ այն ժամանակ ձեզ ասեն, թէ «Ահա աստ է Քրիստոս կամ անդ»՝ մի՛ հաւատայք, ինչու որ սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ յերևան պիտի գան և մեծ նշաններ, արուեստ ու ճարտարութիւններ ցոյց պիտի տան, այնպէս որ, եթէ հնար լինի, մինչև իսկ ընտրեալները պիտի մոլորեցնեն։

Ինչպէս որ աշխարհի կատարածին նէ՛ը գալով՝ սատանայի զօրութեամբ տեսակ տեսակ սուտ հրաշքներ պիտի գործէ (Բ. Թես. Բ. 9)։ Ապա արեգակը պիտի խաւարի, լուսինը իւր լոյսը պիտի չիտայ, աստղերը պիտի թօթափին (այսինքն երկրքիս պիտի մօտենան), երկնից զօրութիւնները պիտի շարժին և բոլոր մարդիկ արտաքոյ կարգի երկիւղ կրելով մահուան ատիճանին պէտք է հասնին։ Ահա այս բոլորը Յիսուս յայտնեց իւր աշակերտաց, երբ իրենց մարդկային անմեղ հետաքրքրութեամբ առ նա դիմեցին զայն գոհացնելու համար. ապա շարունակելով կը յայտնէ նաև, թէ ինչ պիտի լինին այն նշանները, որ պէտք է երևին իւր երկրորդ գալստեան։

Այո՛, Յիսուս՝ որ պիտի գայ դատելու մարդիկները, նոյն դատաստանի օրուան նշաններն էլ իմաց տուաւ, որպէս զի վերոյիշեալ խաբեբայ ստախօսներին չը հաւատան. որովհետև աշխարհիս կատարածին՝ երբ որ նա բոլոր մարդոց դատաստանը տեսնելու գայ, ո՛չ թէ առաջին գալստեան նման ծածուկ և անշուք կերպով պէտք է գայ, այլ՝ ինչ-

պէս որ փայլակը արևելքէն մինչև արևմուտք կերևի, նմանապէս նորա երկրորդ գալուստը պէտք է բոլորին յայտնի լինի, և սուրբ խաչը արևուս նման լուսապայծառ տեսնուելով, Տէր Յիսուս անթիւ հրեշտակաց հետ և արքայական մեծ փառօք ձիթենեաց լերան վրայ պիտի գայ. ապա հրեշտակներ առաքելով՝ աշխարհի չորս կողմերէն բոլոր ընտրեալները պէտք է ժողովէ իւր ահեղ ու փառաւոր ներկայութեանը։

Այս մասին յառաջագոյն ևս յայտնած էր փարիսեցւոց, երբ սոքա հարցուցին իրեն, թէ երբ պէտք է գայ Աստուծոյ թագաւորութիւնը, այն ժամանակ Յիսուս պատասխանեց, թէ Աստուծոյ արքայութիւնը խարանօք չը պէտք է գայ, և բացատրեց նոցա ըստ վերոյիշելոյն (Ղուկ. ԺԷ. 20)։ Արդ՝ որովհետև թէ Երուսաղէմի աւերման ժամանակ և թէ աշխարհիս կատարածին՝ բոլոր մարդիկ պէտք է ահաւոր տագնապ և նեղութիւն կրէին, ուստի որպէս զի չը յուսահատուին, կը յայտնէ միանգամայն, թէ այդ սարսափելի տագնապներէն ազատուելու համար պարտական են անձանձրոյթ կերպով աղօթել առ Աստուած։

Արդարև աշխարհիս վրայ նեղութենէ և փորձութենէ ղերծ մնալու, կամ պատահած ժամանակ ազատուելու համար ո՛չ մի ուրիշ միջոց կայ բացի չերմեռանդ աղօթքէ։ Այս նկատմամբ Յիսուս մի առակ ևս յառաջ բերելով կասէ. «Մի քաղա-

քում դատաւոր մի կար, որ ո՛չ Աստուծմէ կը վախնար և ո՛չ մարդիկներէ կամաչէր. մի որեւէ այրի կին գալով նոյն դատաւորէն խնդրեց, որ իւր ոսոխին հետ ունեցած դատը տեսնէ, բայց նա՝ թէպէտ երկար ժամանակ խեղճ կնոջ դատը տեսնել չուզեց, սակայն որպէս զի նա շարունակ գալով զինքը չը ձանձրացնէ, ականջ նորա դատը տեսնելու ասիպուեցաւ:

Արդ՝ Աստուած, որ մեծապէս արդար է և ողորմած, որչա՛փ ևս առաւել մարդոց աղաչանքները ընդունելով՝ պէտք է իւրաքանչիւրի իրաւունքը պաշտպանէ. սակայն աղօթող անձն էլ պարտաւոր է ամենայն խոնարհութեամբ անձանձրոյթ աղօթել: Ինչպէս որ փարիսեցւոյն և մաքսաւորին վրայ ևս առակ խօսելով, յայտնեց թէ մին՝ դատապարտութեան, իսկ միւսը ներման ու Թողութեան արժանացաւ: Քանզի փարիսեցին զինքը ուրիշներէն լաւագոյն համարելով և իւր գործած բարիքները յառաջ բերելով կը հպարտանար, ուստի այս սնապարծ եղանակաւ ամէն ինչ կորսնցուց: Ընդ հակառակը, մաքսաւորը խոնարհամտութեամբ զինքը մեղաւոր ճանաչելով, ներում ու Թողութիւն խնդրեց և ստացաւ: Ուրեմն, եթէ կուզես, որ խնդրուածդդ ընդունելի լինին, պարտական ես խոնարհութեամբ, կատարեալ հաւատով, անձանձիր յարատեւութեամբ և մանաւանդ ձշմարիտ ու անկեղծ սիրով աղօթել միշտ առ Աստուած (Ղուկ.

ԺԸ. 1): Ա՛հա այս է իրական երջանկութեան ու հոգևոր փրկութեան հասնելու միակ ճանապարհը. այս շաւղով ընթացան Քրիստոսի առաքեալներն ու բոլոր ձշմարիտ հաւատացեալք:

Յիսուս վերոյիշեալ կարևոր նիւթոյ վրայ հանդուցակի խօսեցաւ, բայց անոնց կատարման ժամանակը չը յայտներ՝ ասելով թէ «Չօր Աստուծմէ գատ ո՛չ ոք գիտէ զայն:» Նմանապէս նա կաւետէ թէ դատաստանի օրում արդարները մեծապէս պիտի ուրախանան, որպէս զի այժմէն հաւատացեալները մխիթարուին. քանզի ինչպէս որ ծառերը կանանչիլ սկսելուն պէս՝ կասեն թէ ամառը մերձ է, նմանապէս երբ որ վերոյիշեալ տագնապները տեղի ունենալ սկսին, ասել է թէ նոցա վրկութիւնը մօտ է:

Թող մեզաւորները շատ և շատ երկնչին այս մասին. քանզի դատաստանի օրում արդարները որչափ ուրախ և երջանիկ պիտի լինին, նոյնչափ առաւել իրենք տխուր և Թշուառ պէտք է լինին: Ա՛յս պատճառաւ Յիսուս կը խրատէ միշտ արթուն կենալ և աղօթել, որպէս զի մի՛ գուցէ ուտել խմելով ու աշխարհային հոգերով զբաղուած ժամանակ յանկարծ մահը վրայ հասնելով զիրենք ի քուն և անպատրաստ գտնէ. որովհետև մարդս չը գիտեր թէ ինքը ե՞րբ պէտք է մեռնի, մանկութեա՞ն թէ երիտասարդութեան և ծերութեան ժամանակ. ուրեմն պարտի արթնութեամբ հսկել

իւր կենաց վրայ։

Ջոր օրինակ (առաջին դարի Ա.Ը-րդ հարցում յիշուածին նման) ջրհեղեղէն առաջ մարդիկ մարմնաւոր գուարճութեամբ զբաղուած՝ պատժոյ ժամանակը չը կարծցան իմանալ ու խելդուեցան. կամ (երրորդ դարի Ժ-րդ հարցում յիշուածին պէս) Ղովթի ժամանակ Սոդոմ Գոմորի բնակիչները ըստ ամենայնի ուտել խմելու և աշխարհային մեղսալից գործերի անձնատուր եղած՝ երբ որ Ղովտ Սոդոմէն ելաւ, երկնքէն ծծմբէ կրակ տեղալով բոլորը կորստեան մատնեց. և կամ թէ Ղովթի կինը՝ որ Սոդոմէն մեկնելով կը դնար, յետ նայած ժամանակ յանկարծ պատժուեցաւ աղի պչյան դառնալով. ահա այսպէս էլ այն ամեն մարդիկ որոնք միշտ աշխարհի գուարճութեան, մեծութեան և հոգերին փափաքելով, իրենց մահուան վրայ չեն խորհիր, մի և նոյն կերպով պէտք է դատապարտուին. այս պատճառաւ Յիսուս կը պատուիրէ ասելով «Ղովթի կինը յիշեցէք։»

Արդարև մահուան ժամը թակարդի կը նմանի՝ մարդս չը յուսացած ժամանակ մէջը կընկնի. ինչպէս որ տան տէրը՝ եթէ գիտնայ թէ գողը ե՞րբ կուգայ, արթուն ծնալով, իւր տունը կողոպտել չի տար, նմանապէս մարդս պարտական է միշտ արթուն և պատրաստ գտնուիլ, քանի որ իրեն յայտնի չէ թէ ե՞րբ պէտք է մեռնի։ Յիսուս այս մտքով մի առակ ևս խօսեցաւ՝ ասելով. «Ո՞վ է այն

հաւատարիմ և իմաստուն ծառայն, զոր Տէրը իւր ծառայից վրայ պնպէս կը կարդէ, որպէս զի ժամանակին նոցա կերակուրը տայ. երանի անոր, որ երբ Տէրը գալով կը տեսնէ թէ նա ճիշդ իւր պատուէրին համաձայն վարուած է. որովհետև նորա հաւատարիմ ծառայութեան համար իւր բոլոր ստացուածոց ու ընչից վրայ վերակացու կը կարդէ զայն։»

«Սորա հակառակը, կասէ, այն ծառայն՝ որ մտածելով թէ իւր տէրը ուշ կուգայ, չար ընթացք բռնելով կսկսի աբբեցողների հետ ուտել խմել և ծառաները ծեծել, և ահա յանկարծ չը յուսացուած մի միջոցում նորա տէրը վրայ հասնելով՝ ամենախիստ պատիժը կուտայ անհաւատարիմ ծառային և կորստեան կը մատնէ զայն։»

Արդ՝ երանի այն մարդուն, որ ոչ մի բոպէ իւր մահը միտքէն չը հանելով՝ միշտ փոյթ կը տանի Աստուծոյ պատուէրը կատարելու. վայ այն մարդուն, որ իւր մահը չը յիշելով՝ չարութիւն գործելու հակամէտ կը լինի. քանզի նա երբ որ մեռնի, յաւիտենական կեանքէն զրկուելով, դժոխոց մէջ կեղծաւորաց հետ պէտք է տանջանք կրէ յաւիտ և աւտմ կճրտացնելով[1]։

---

1. Եւ եղեալ արտաքս Յիսուս ի տաճարէն՝ գնայր, և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։ Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. տե-

Ապա ուրեմն կարելի չէ մեզ վերջ և ապաստնալ այդ պատիժէն, բայց միայն մեղքէ հեռանալով. և մեղքէ հեռի մնալու դիւրին միջոցն է միշտ մեր մահը ի մտի ունենալ. այս պատճառաւ Ս. Գրոց մէջ գրուած է. «Յիշէ մահդ, որ չը վերանչես[1]:»

Հարցումն ԼԹ.

Ցիսուս ինչո՞ւ համար առաքելոց ասաց թէ հայր Աստուծմէ զատ ո՛չ ոք գիտէ կատարուելիք բաների ժամանակը.

Պատ. Որպէս պի մարդիկ միշտ զգուշութեամբ ապրելով ըստ ամենայնի պատրաստ գտնուին: Որովհետև ինչպէս Հայր Աստուած՝ նոյնպէս ինքն էլ գիտեր ամեն բանի ժամանակը: Արդարև, ինչպէս վերը արդէն ասացինք, անօգուտ էր մարդուս այդ բաների ժամանակը գիտնալ և ինչ որ օգտակար էր իրեն, այդ բոլորը յայտնեց, որպէս պի դատաստանի օրում չը պատժուին, քանի որ մարդս մեռած ժամանակ ինչ վիճակում կամ ըն-

---

անէք զայդ ամենայն, ամէն ասեմ ձեզ, ոչ մեռացէ այգը քաւ ի քարի վերայ՝ որ ո՛չ քակտեսցի. Մատթ. ԻԴ. 1. մինչև 51 համար.—Մարկ. ԾԳ. 1.—Ղուկ. ԻԱ. 5.

1. *Ներ ամենեցուն գործոց քոց յիշեա՛ զվախճանս քո, և յաւիտեան ո՛չ մեղանչեսցես. Սիրաք. Է. 40.*

թացքում որ կը գտնուի, ըստ այնմ այն օրում փոխարէնը պէտք է ստանայ: Ուրեմն չէս ուզեր դատապարտուիլ, Յանա կենդանութեանդ ժամանակ միշտ առաքինութիւն գործել:

Յիսուս այս մտքով առակ ևս խօսելով Աստուծոյ արքայութիւնը կը նմանցնէ տասն կուսանաց, որոնք իրենց լապտերները վառելով ընդ առաջ ելլին փեսային. բայց նոցա հինգը յիմար ու հինգը խմաստուն լինելով, յիմարները իրենց հետ ձէթ չառին, իսկ խմաստունք ամանով ձէթ ունէին: Երբ փեսայն ուշացաւ, ամենքը քնեցին. բայց կէս գիշերին յանկարծ ձայն ելաւ թէ ահա փեսայն կուգայ, ընդ առաջ ելէք. նոքա ևս զարթնելով կսկսին իրենց լապտերները կարգի դնել. յիմարաց լապտերները շիջանիլ սկսելով երբ որ խմաստուններէն իւղ կը խնդրեն, նոքա կը պատասխանեն թէ, «Մեր ունեցած իւղը գուցէ մեզ և ձեզ միանգամայն չը բաւէ. գնացէք և վաճառականներէն գնեցէք:» Նոքա իւղ առնելու գնալուն պէս՝ փեսայն գալով պատրաստ գտնուողները նորա հետ մտան ի հարսանիս և դուռը փակուեցաւ. ապա երբ որ յիմար կուսանք ևս գալով ասացին «Տէր, բաց մեզ դուռը», Նա պատասխանեց. «Ձեմ ճանաչեր զձեզ:»

Սոյն առակին վրայ մեծ ուշադրութեամբ խորհէ, ընթերցող, որպէս պի երկնաւոր Հարսանեաց փառքին չը զրկուիս: Յիրաւի վերոյիշեալ

ժամանակը կա՞ էին, իրենց լապտերներն էլ վառելով՝ փեսային ընդ առաջ ելան, և բայի այդ, երբ որ իրենց իւղը պակասեց, և ուրիշներէն խնդրելով չը կարողացան ձեռք բերել, իսկոյն դնալ և գնելու բաղձանքն էլ ունեցան, սակայն ժամանակին անհոգ գտնուելով՝ անպատրաստ լինելնուն պատճառաւ դուրս մնացին և հարսանեաց փառքէն զրկուեցան։

Արդարև նա՝ որ ձեռքում ունեցած պատեհութիւնը կը կորսնցնէ, յետոյ որոնէ իսկ, կարող չէ գտնել։ Արդ՝ որքան էլ առաքինի լինիս, մի՛ ասեր թէ այսչափը բաւական է. այլ՝ հոգևոր ճանապարհում միշտ արթուն մնալով՝ օր ըստ օրէ առաքինութիւն գործելու ջան ի գործ դիր, քանի որ չես գիտեր թէ ե՞րբ պէտք է մեռնիս. նա՛ մանաւանդ ապրիլ որ Աստուծոյ հաճոյ եղած ժամանակը մեռնիս։ Դատաստանի օրում երկնաւոր դատաւորի առջև ինչ վիճակում որ գտնուիլ կուզես, կենդանութեանդ ժամանակ միշտ այդպէս գտնուիլ ջանա՛, որպէս զի յաւիտենական դատապարտութեան չմատնուիս։

Ա՛յս մասին Յիսուս դարձեալ մի առակ խօսեցաւ ասելով. «Մի մարդ հեռու երկիր գնացած ժամանակ ծառաները կանչելով՝ ոմանց հինդ, ոմանց երկու և ոմանց մէկ քսակ ոսկի տուաւ՝ որ շահեցնեն. երկար ժամանակից յետոյ գալով, երբ որ կամեցաւ հաշիւն առնուլ, տեսնուեցաւ որ

հինգ քսակ առնողը հինգ ևս շահած էր, երկու քսակ ստացողը՝ երկու ևս ուրիշ շահած էր, զորս գովելով՝ իրեն փառաց հաղորդ և մտանակից արաւ։ Իսկ նա՝ որ մէկ քսակ առած էր, գայն հողի ներքև պահելով շահեցուցած չը լինելուն համար պատժոյ ենթարկեց և արտաքին խաւարը զրկեց, որպէս զի անդ լայ և ատամ կճրտացնէ»։ (այս մարդով յառաջագոյն ևս մի առակ խօսած էր ինչպէս որ Ի-րդ հարցում յիշուեցաւ)։

Որովհետև Յիսուս երկու օրէն զինի խաչը ելնելով չարչարանօք մեռնելու էր, իւր աշակերտները իրենց հաւատքի մէջ չը թերանալու համար յայտնեց նոցա թէ պատաստանի օրը երբ որ մեծ փառօք ու հրեշտակաց հետ գայ, բոլոր ազգերը իւր ներկայութեան պիտի ժողովէ. և ինչպէս որ հովիւը ոչխարները այծերէն կը զատէ, այնպէս էլ ինքը արդարները մեղաւորաց միջէն զատելով, արդարները իւր աջ կողմը, իսկ մեղաւորները ձախ կողմը պիտի կացնեցնէ։ Յայնժամ աջ կողմը կանգնողներին պիտի ասէ. «Եկէք, Հօրս օրհնածներդ, ժառանգեցէք աշխարհի սկիզբէն ձեզ համար պատրաստուած արքայութիւնը. քանզի անօթի էի, կերակուր տուիք ինձ. ծարաւ էի, ջուր տուիք. օտար էի, ընդունեցիք զիս. մերկ էի, զգեցուցիք. հիւանդ էի, տեսութեան եկաք. բանտումն էի, այցելեցիք ինձ։»

Երբ արդարները պատասխան ասելով կասեն.

«Տէր, երբ զքեզ անօթի տեսանք ու կերակրեցինք, կամ ծարաւ՝ ու ջուր տուինք. երբ օտար տեսանք զքեզ և ընդունեցինք, կամ մերկ՝ և զգեցուցինք. երբ հիւանդ կամ բանտում տեսանք և այցելեցինք քեզ», Յիսուս նոցա կը պատասխանէ. «Որովհետև այս փոքրիկներէն մէկին արիք, ինձ արիք։» Այսպէս ահա լսելիր թէ Յիսուս դատաստանի օրը ինչ քաղցրութեամբ պիտի խօսի արդարոց. սորա հակառակը՝ լսելով թէ ինչպէս բարկութեամբ պէտք է խօսի մեղաւորաց, պատճառունիս վախնալու. վասն զի ձախակողմը գտնուողներին պիտի ասէ. «Երթայք յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պատրաստուած է սատանայի և նորա արբանեկաց համար։»

«Որովհետև անօթի էի՝ կերակուր չը տուիք ինձ, ծարաւ էի՝ ջուր չը խմցուցիք, օտար էի չընդունեցիք զիս, մերկ էի չզգեցուցիք զիս, հիւանդ և բանտում էի, զիս տեսնելու չեկաք։» Երբ որ սորա այդ խօսքերը կը լսեն, շփոթած և արտորանօք կը պատասխանեն. «Տէր, քեզ երբ տեսանք անօթի, ծարաւ, օտար, մերկ, կամ հիւանդ ու բանտում և չը ծառայեցինք քեզ»։ այն ժամանակ դատաւորը կասէ. «Որովհետև այս փոքրիկներէն մէկին չարիք, ինձ չարիք»։ և դայս ասելով՝ կը վճռէ մեղաւորաց համար յաւիտենական տանջանք, իսկ արդարոց համար յաւիտենական կեանք[1]. որ-

1. Ցայնժամ նմանեցայ արքայութիւն երկնից

պէս զի արդարք միխիթարուած՝ առաքինութեան շաւղին մէջ ո՛չ մի ժամանակ չը թերանան, և մեղաւորք վախնալով դարձի գան և ապաշխարեն։

Յիրաւի այս աշխարհի վրայ արդարք և մեղաւորք ի միասին բնակելով՝ արդարք անարդարոց ձեռքէն շատ նեղութիւն կը քաշեն, բայց Յիսուս յայտնեց ահա թէ դատաստանի օրում իրարմէ զատուելով, արդարք ուրախ և երջանիկ պիտի լինին, իսկ մեղաւորք անվախճան տառապութեան ու թշուառութեան ովկիանին մէջ պիտի ընկղմին։

Քաջ խելամուտ եղիր, ընթերցող, մինչև այն ժամանակ Յիսուս առաքինութեան տեսակ տեսակ ճանապարհները կուսուցանէր, սակայն այս անգամ նա՝ իր խօսքը եղբայրսիրութեան ու գթասիրութեան վրայ կայացուց. որպէս զի ամէն մարդ խրատս առնելով՝ օգնել չքաւոր աղքատաց և օգնութեան ու ողորմութեան արժանանայ։ Վասն զի այնպիսի անձանց, կարօտ և աղքատ վիճակում գտնուող անձանց օգնելը՝ ո՛չ թէ նոցա օգնել և բարերարել է, այլ նոցա Աստիծոյին։ Արդ՝ եթէ կուզես հանդերձեալ աշխարհում ուրախ լինել, աղքատին ու կարօտին օգնէ, կարողութեանդ չա-

տան կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային և հարսին։ Հինդն ի նոցանէ յիմարք էին, և հինդն լմաստուն։ Մատթ. ԻԵ. 1. մինչև 46 համար։

փոխ, ու բնաւ զանց մի՛ աներ սոյն սրբազան պարտականութիւնը:

Յիսուս վերեւ բոլոր յիշուածները առաքելոց յայտնելէն ղինի կասէ. «Գիտէ՞ք թէ երկու օրէն եաքը զատիկ է և Որդին Մարդոյ Ոչխէն մատնուելով՝ պիտի խաչուի:» Ա.յս մասին նախապէս շատ անգամ խօսած էր, բայց ժամանակը յայտնած չը լինելով, այս անգամ ժամանակն էլ կը յայտնէ, որպէս զի յայտնի լինի թէ իւր յօժար կամքով պէտք է խաչուի: Երբ Յիսուս այս խօսքը Զեբեդեանց լերան վրայ կը խօսէր, միևնոյն միջոցին քահանայապետները և գիրքերը Երուսաղէմում Կայիափա քահանայապետի տան մէջ հաւաքուած՝ կը խորհրդակցին և կորոշեն անպատճառ զանի սպանել. այսու հանդերձ չեն համարձակիր յայտնապէս մարդ ղրկել զայն բռնելու համար, այլ նենգութեամբ կուզեն ձեռքակալել. քանի որ յամախ զայն բռնել և քարկոծել ուզած՝ բայց կարող եղած չէին: Վասն զի Յիսուս պէտք է որ կամաւ ու յօժարութեամբ մատնուելով խաչը երթայ:

Բայ յայտնել, ժողովրդեան մէջ խռովութիւն չձգելու համար կասեն. «Թող այս տօնին չը լինի[1]». քանզի տօնի առթիւ շրջակայ քաղաքներէն խիստ շատ բազմութիւն Երուսաղէմ եկած լինելուն պատճառաւ, թէև նոքա վախնալով ասացին թէ տօնին չը լինի, բայց երբ Յուդա իւր չար խորհրդով յարմար ժամանակ գայն համարելով մատնեց Յիսուսը, խոհոյն իրենց ուրուագրութիւնը ի գործ դնել փափաքեցան:

Ա.յո, քահանայապետաց և գպրաց ամենաչար խորհուրդը յայտնի էր Յիսուսի, բայց որովհետև իւր բազում ողորմութեամբ մարդկային ազգը մեղքէ փրկելու համար կամաւ խաչը եաւած ուեւնելու էր, ուստի գեռ Զեբեդեանց լերան վրայ եղած ժամանակ հինգշաբթի օրը Պետրոսն ու Յովհաննէսը Երուսաղէմ կը ղրկէ, որպէս զի գնալով՝ օրինաց համաձայն զատկական գառը և այլ հարկաւոր եղածները պատրաստեն:

Երբ վերոյիշեալ առաքեալք կը հարցնեն Յիսուսի թէ «Ո՞ւր կը կամիս որ պատրաստենք զատիկը», նա կը պատասխանէ. «Գնացէք քաղաքը, երբ որ ներս կը մտնէք, սափորը ուսին վրայ մի մարդու պիտի հանդիպիք, որուն եաւէն գնալով՝ որ տունը որ կը մտնէ, տան տիրոջը ասացէք. վարդապետը կասէ որ ժամանակս մօտեցած է. ո՞ւր պէտք է ուտեմ զատկական գառը աշակերտաց հետ. (թէև այս մարդուն ով լինելը գրուած չէ, բայց Յօհան Մորմոնցին կասէ թէ Յովսէփ Արեմաթացին էր) և նա պիտի ցուցնէ ձեզ զարդարուած մի մեծ վերնատուն. ահա այնտեղ պատրաստեցէք:»

1. Բբև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ՝ ասէ ցաշակերտան իւր. Գիտէ՞ք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի... Մատթ. ԻԶ. 1—5. —Մարկ. ԺԴ. 1.—Ղուկ. ԻԲ. 1.

Նոքա դնալով՝ ձիշդ իրենց յայտնուածին հաւեմատ գտան և պատրաստեցին. երբ որ երեկոյ եղաւ, Յիսուս տասներկու առաքելոց հետ այնտեղ գալով գառը կերած ժամանակ հին օրէնքը վերջացաւ, և որովհետև նոր օրէնքը հաստատելու ժամանակը եկած էր, Յիսուս կասէ իւր աշակերտաց. «Յանկանալով ցանկացայ դեռ չը չարչարուած՝ այս գառը ձեզ հետ ուտել[1]». որովհետև այդ գառը Յիսուսի օրինակ էր[2] (տես երրորդ դարուս ԾԳ-րդ հարցումը):

Ապա Յիսուս մի ղենջակ մէջքին կապելով՝ անձամբ ջուր կը լեցնէ կոնքի մէջ և կսկսի աշակերտաց ոտքը լուանալ ու ղենջակովը սրբել[3]: Այն միջոցին աշակերտաց միջև վիճաբանութիւն կը լինի թէ իրենց մէջ ո՞վ պէտք է մեծ լինի, քանի որ նոքա դեռ ամէն կերպով կատարելութեան հասած չէին: Նոցա միտքը Յիսուսի յայտնի լինելով, խրատ կուտայ նոցա ասելով. «Ձեր մէջ մեծ եղողը՝ թող իբրև ծառայ լինի[4]». այս մասին յառաջադոյն և նոցա խօսած էր (տես Լ.Ջ-րդ հարցումը):

---

1. Եկն օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպասեքն... Ղուկ. ԻԲ. 7—15.—Մատթ. ԻՋ. 17.—Մարկ. ԺԴ. 12.

2. Էլեց զօրէնսն Մովսէսի՝ զոր խօսեցաւ ի Սինայէ. եկեր զդառն օրինակին... Շար. Ծ.

3. Ապա առեալ զջուր՝ էարկ ի կոնք և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն... Ցովհ. ԺԳ. 5.

4. Եւ եղև հակառակութիւն ի մէջ նոցա, թէ ո՛վ ի նոցանէ համարիցի մեծ. Ղուկ. ԻԲ. 24.

Հարց-ՃՄ.

Ինչու՞ համար Յիսուս առաքելոց ոտքը լուաց.

Պատ. Իւր անսահման սէրը աշխարհի յայտնելու համար: Գան ոմն այնքան սիրեց զմարդիկ, որ նոցա փրկութեան համար մարմին առնելով մարդ եղաւ. երեք տարի ու չորս ամսոյ չափ շատ հրաշքներ գործելով, ժողովրդեան սեսակ սեսակ առաքինական ճանապարհներ ուսուցանելէ ետև՝ աշակերտաց ոտքն էլ կը լուայ, որպէս զի նոցա և բոլոր մարդոց խոնարհութիւն սորվեցնէ. այս պատճառաւ պատուիրեց աշակերտացը ասելով. «Ինչպէս որ ես ձեզ արի, դուք էլ պարտական էք միմեանց նոյնպէս անել[1]:»

Յիսուս նախապէս արդէն բերանացի յայտնած էր թէ ինքը հեզ է և սրտով խոնարհ. (տես Լ-րդ հարցումը) այս պարագայումս գործով ևս հաստատեց զայն: Ա.յս մասին լաւ խորհէ. որովհետև խոնարհութիւնը բոլոր առաքինութեանց հիմը լինելով, ամբարտաւան մարդը որչափ էլ բարի գործեր ունենայ, կարող չէ առաքինի համարուիլ: Հպարտութեամբ հրեշտակները երկնքէն արտաքսուեցան, խոնարհութեամբ մարդիկ երկինքը կը գնան:

---

1. Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր, տէրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց զոտս լուանալ: Զի օրինակ մի ետու ես ձեզ. Ցովհ. ԺԳ. 14.

Բայց յայտնի է, որովհետեւ այն ժամանակ Յիսուս սուրբ պատարագի կենարար խորհուրդը պէտք է հաստատէր, բոլոր հաւատացեալք նորա պատիւը պահպանելու համար, առաջ առաքելոց ոտքերը լուաց, որպէս զի մեզայ ապտերէն մաքրու ելով՝ արժանի լինին այն կենդանարար հոգեւոր կերակուրին: Արդ՝ ո՛վ որ առանց ղղջման և ապաշխարութեան և խոստովանահօր առջև սըրտագին ու անկեղծ արտասուք թափելու, առանց մեզայ ապտը սրտէն հանելու, այն ահաւոր խորհուրդին կը մերձենայ, մանաւանդ Յուդայի նման կը լինի:

Ինչպէս որ վերը յիշուեցաւ, Յիսուս երբ որ հին օրինաց զրուածը կատարեց, ապա ձեռքն առնելով հաց և գինի՝ օրհնեց և այսպէս հաստատեց սուրբ պատարագի խորհուրդը, պատուէր տալով աշակերտաց որ իւր անուամբ միշտ ի գործ դնեն զայն: Եւ որովհետեւ օրինաց հաւատաց բազարջակերաց ատենին գառան խորովածը ուտելէն գինի՝ ուրիշ կերակուր ևս կուտէին, նոյնպէս Յիսուս առաքելոց հետ նորէն սեղան բազմելով կասէ. «Ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ»: Նորա այս խօսքը լսելով՝ (բացի Յուդայէն) ամէնքը սաստիկ տրտմեցան:

Իրաւ է որ գիտէին թէ իրենք այդպիսի չար խորհուրդը չունէին, բայց նոյնպէս գիտնալով որ Յիսուս ի զուր խօսք չը խօսիր, իւրաքանչիւրը իւր

մասին կասկածելով՝ կսկիծ հարցնել թէ արդեօք ինքն է, Յիսուս կը պատասխանէ թէ նա է, որ ինձ հետ ձեռք երկնցուց սկաւառակը: Արդարև ճիշդ այն միջոցին Յուդա ձեռք երկարած էր նորա հետ. քանզի զայն մատնելու փափաքով առանց այլ ևս նորա պատիւը պահելու՝ իբրև հաւասարը սկաւառակը երկնցուցած էր ձեռքը նորա հետ ի միասին: Ձօն Բարսեղ կասէ թէ սեղանին վրայ երկու պնակ լինելով՝ առաքեալներէն վեցը՝ Յիսուսի հետ մէկ ամանէ, կուտէին, իսկ վեցը՝ միւս պնակէն կուտէին: Յիսուս ինչպէս որ առաջ Յուդայի ոտքը լուաց, նմանապէս իւր ամանէն ևս ուտելու արժանացուց, որպէս զի ուղղուի. բայց նա ապերախտութեամբ ո՛չ մի ուղղութիւն չընդունիր բնաւ:

Յիրաւի ըստ Սուրբ Գրոց Յիսուս խաչը ելնելով մեռնելու էր, և որոյ ձեռամբ որ մատնուէր, նա պէտք է սաստիկ պատժոյ ենթարկուէր, այսու հանդերձ վա՛յ թո՜ւռ այն մարդո՜ւն: Ա՛յս խօսքով Յիսուս Յուդան ի ղղջումն հրաւիրել կամեցաւ, որպէս զի դոնէ պատժէն վախնալով ղղջասանայ. բայց նա իւր չար մտադրութենէն երբէք ետ չը կեցաւ: Առաքեալք չիմացան թէ Յիսուս որո՞ւ նկատմամբ այդ խօսքն արտասանեց. վասն զի Յիսուսի հետ Յուդայի սկաւառակը ձեռք երկնցնելուն ուշադրութիւն սրած չէին. այս պատճառաւ մինչդեռ իրարու նայելով կը խորհէին, Պետրոս՝ Յիսուսի մօտ

նստող Յովհաննէսին կանչարկէ հարցնելու թէ ո՞վ է մատնիչը։

Երբ որ վերջինս Յիսուսի կուրծքին վարելով կը հարցնէ, պատասխան կստանայ թէ «Պատառը թանալով որու որ տամ, նա՛ է մատնիչը»։ սակայն ցած ձայնիւ ասած լինելուն համար Յովհաննէսին զատ ոչ ոք կը լսէ, և պատառը թրջելով՝ Յուդային կուտայ ասելով. «Ինչ որ պէտք է անես, շուտ արա՛։» Առաքեալք սոյն խօսքն էլ չիմացան թէ ի՞նչ մտքով ասաց Յիսուս. կարծեցին թէ ծոնին համար հարկաւոր եղածը գնելու կամ աղքատաց ողորմութիւն տալու համար ասաց. որովհետև աղքատաց արկղը Յուդա կը կրէր։

Յուդա այդ խօսքը լսելով՝ հասկցաւ թէ գործը Յիսուսին յայտնի է. այսու հանդերձ դարձեալ չը ղղջալէն զատ՝ աւելի չարանալով՝ կը հարցնէ. «Միթէ ես եմ, վարդապետ»։ և երբ Յիսուս կը պատասխանէ «Դուն ասացիր»։ իսկոյն դիշեր ժամանակ դուրս կելնէ, որպէս զի գնայ և իւր վարդապետը մատնէ. ահա այն ժամանակ սատանան էլ կը մտնէ նորա մէջ։ Թէպէտև սատանան նախապէս արդէն մտած էր (տես Ես-րդ հարցուածը), բայց այս անգամ պատառը առած ժամանակ՝ բոլորովին նորա սիրտը գրաւեց իրեն։ Յիրաւի անիրաւ և ագահ լինելուն համար Յուդա այդ սոսկալի մատնութիւնը արաւ, սակայն այս պարագայում իսկ, Յիսուսի նկատմամբ Ս. Գրոց մէջ

Դաւիթ մարգարէի գրածը կատարուեցաւ թէ «Նա՝ որ հինձ հետ հաց կուտէր, հինձ խաբէութիւն արաւ[1]։»

Նայէ դու Յիսուսի մարդասիրութեանը. քանզի իրեն յայտնի էր արդէն Յուդայի միտքը, բայց իւր մօտէն չը հեռացներ զայն, որպէս զի ուղղուի. սակայն նա հաստատ մնալով իւր չարախորհուրդ դիտաւորութեան մէջ, չը ճանաչեց իրեն ցոյց տրուած ողորմութիւնը և իւր կորստեան պատճառ եղաւ։ Յուդա վերնատունէն գնալէ յետոյ, Յիսուս դարձեալ կը յայտնէ առաքելոց թէ ինքը պէտք է չարչարուի, խաչուի և մեռնի, թէ իրենք պիտի դայթակղին իւր վրայ և իւրաքանչիւրը մի մի կողմ ցրուած՝ զինքը միայնակ պիտի թողուն. սակայն որպէս զի չը յուսահատուին, նոյնպէս կանխաւ կը յայտնէ նոցա թէ յարութիւն պիտի առնէ և թէ իրենցմէ առաջ Գալիլեայ պէտք է գնայ. այն ժամանակ Պետրոս ինքնիրեն վստահելով՝ համարձակութեամբ կասէ. «Եթէ բոլորն էլ դայթակղին, ես չեմ դայթակղիր»։ Յիսուս կը պատասխանէ. «Այս գիշեր հաւը չը խօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս զիս»։ բայց նա նորէն կը պնդէ ասելով. «Քեզ հետ եթէ մեռնիլ հարկ լինի, զքեզ չեմ ուրանար»։ Նմանապէս բոլոր աշակերտք նոյնպէս կասէին։

1. Որ ուտէը ընդ իս հաց, արար ինձ խաբէութիւն. Սաղմ. Խ. 10.

Յայտնի է որ Յիսուս մինչև այն ժամանակ շատ տեսակ խրատներ ու պատուէրներ աւանդեց առաքելոց· այս անգամ եղբայրական սիրոյ նկատմամբ դարձեալ նոր պատուէր տալով կասէ· «Ինչպէս որ ես զձեզ սիրեցի, դուք էլ նոյնպէս զիրար սիրեցէք, որ ամէնքը ճանաչեն թէ իմ աշակերտներս էք։» Նմանապէս կը յայտնէ նոցա թէ աշխարհի վրայ իւր անուան համար շատ նեղութիւն պիտի է կրեն, բայց ապա երկնքում յաւիտենապէս ուրախ պիտի լինին· թէ ինքը ոչ մի ժամանակ իւր օգնութիւնը չը խնայելով՝ պիտի է պահպանէ զիրենք· թէ ինչ որ իւր անուամբ խնդրեն, բոլորը պիտի կատարուի· թէ Հոր Աստուծոյ ևս կաղաչէ որ զիրենք և բոլոր հաւատացեալները պահպանէ և սուրբ Հոգին ղրկէ, որ գալով՝ ինչ որ քարոզեց, իրենց յիշեցնէ և բոլորը սորվեցնէ։ Բացի այդ, ինքը ուր որ է, իրենք ևս այնտեղ պիտի է լինին։ Ուրիշ շատ նիւթերի վրայ ևս կը խօսի դեռ չը կատարուած, որպէս զի կատարուած ժամանակ՝ առաքեալք խելամտելով հաւատան, ինչպէս որ կը ղրկ (Յովհ. ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԷ.)։

Յիսուս վերնատան մէջ այսպիսի խօսքերով առաքելոց սիրտը ամէն կերպով ապահովցնելէ յետոյ, նոցա հետ Ձիթենեաց լեռը կը գնայ, և անտի Կեդրոնի ձորոյն հանդէպ գտնուող Գեթսեմանի կոչուած դիւղը գալով, մի պարտէզ կը մտնէ՝

առաքելոց ասելով. «Դուք այստեղ նստեցէք, մինչև ես աղօթեմ»։ և իւր հետ առնելով Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս առաքեալները՝ վերին աստիճանի տխրութեամբ կասկ նոցա· «Այստեղ արթուն կացէք ինձ հետ», և քարընկէց մի անոնցմէ հեռանալով, երեսի վրայ դետնամած Հօր Աստուծոյ կաղերսէ որ, եթէ հնար է, այդ ժամը անցնի. և ապա եկնելով՝ առաքելոց մօտ կուգայ։

Սակայն նոքա այս պարագայում սաստիկ տրտմութենէ ընկճուած՝ ի քուն մտած էին, ուստի Պետրոսը արթնցնելով կասէ· «Մի ժամ ինձ հետ չը կարացիք արթուն մնալ· արթուն կացէք և աղօթեցէք, որպէս զի փորձութեան մէջ չընկնիք· հոգիս յօժար է, բայց մարմինս տկար։» Յայնժամ երկնքէն հրեշտակ երևնալով՝ կը զօրացնէ վնասակայն հոգեկան մեծ տագնապաւ և մտատանջ խորհրդով աղօթքի կանգնելուն համար, քրտինքը արեան նման ոլոռն ոլոռն (կաթիլ կաթիլ) գետնի վրայ կը թափէր։ Յիսուս երեք անգամ այս կերպով աղօթքի կայնելով, գործի կատարումը դարձեալ Հօր Աստուծոյ կամաց կը յանձնէ, որպէս զի այնպէս լինի, ինչպէս որ Նա կը կամի։

Յիրաւի Յիսուս նախապէս բազմից յայտնած էր թէ ինքը խաչուելով պիտի մեռնի, և յօժարակամ այնտեղ եկած էր նոյն նպատակաւ, սակայն բոլորին յայտնի լինելու համար թէ կամաւոր է, այս կերպ աղօթել յանձն առաւ,

քանի որ բնական է մարդուս չարչարանքէ և մահուընէ վախնալ։ Երբ որ նորէն առաքելոց մօտ գալով՝ գանոնք քնացած գտաւ, ասաց. «Ա՛յսուհետեւ քնեցէք և հանգստացէք, որովհետեւ ահա ասիկ ժամանակը եկաւ, որ մարդոյ Որդին մեղաւորաց ձեռքով մատնուի. արի՛ք, այստեղէն գնանք, վասն զի ահա զիս մատնողը մօտեցաւ։»

Մինչ Յիսուս կը խօսէր, ահա քահանայապետաց, փարիսեցւոց, գրաց և Ժերոյ ծառայը, ինչպէս նաև Հռովմայեցի դատաւորին կողմանէ ղրկուած զօրքի հետ հազարապետը՝ ահագին բազմութեամբ վերոյիշեալ պարտէզը կուգան արօք և բրօք, ջահիւք և լապտերօք։ Ա՛յդ բազմութեան կառաջնորդէը նոյն ինքն Յուդա, որ կը ճանաչէր այնտեղը, քանի որ Յիսուս շատ անգամ առաքելոց հետ անդ կուգար։ Սակայն հռովմայեցի զինուորը Յիսուսը չը ճանաչելուն համար, Յուդա նշան տուած էր նոցա թէ ինքը ում որ համբոյր տայ, զայն բռնելով՝ զգուշութեամբ տանին. այս պատճառաւ նա Յիսուսի մօտենալով կը համբուրէ զայն ասելով. «Ո՛ղջ եղիր, վարդապետ։»

Տե՛ս դու Յիսուսի համբերութիւնը. Յուդա ծանր պատժոյ արժանի լինելով հանդերձ, ո՛չ մի ծանր խօսք անգամ չասեր մատնիչին. նա մանաւանդ զայն ի ղջուժ բերելու համար՝ կը հաճի ընդ կոչել զնա ասելով. «Յուդա՛, համբուրելո՞վ կը մատնես մարդոյ Որդին։» Երբ առաքեալք այդ

ահագին ամբոխը տեսան, Յիսուսի հարցուցին թէ արդ դիմադրե՞նք նոցա. բայց Պետրոս անկարող կը լինի համբերել և իւր մօտ գտնուած թուրը քաշելով՝ քահանայապետի Մաղքոս անուամբ ծառային աջ ականջը կը կարէ. սակայն Յիսուս յիշեալի ականջը խնկոյն բժշկելէն զատ՝ առաքեալները և նմա կը յանդիմանէ, որպէս զի հանդարտ մնան. և ինքը անվհեր նոյն անխրտա բազմութեան դիմելով կը հարցնէ թէ «Զո՞վ կը խնդրէք». երբ նոքա կը պատասխանեն թէ՝ «Նազովրեցի Յիսուսը կուզենք», «Ա՛հա ես եմ» կասէ հեզահոգին և մարդասէրն Յիսուս։

Սակայն սոյն պատասխանը Յիսուսի բերանէն ելածին պէս՝ ամէնքը, Յուդա ևս միասին, խնկոյն յետ յետ գնալով՝ գետնին կը զարնուին։ Յիսուս դարձեալ կը հարցնէ թէ զո՞վ կը խնդրէք. և նոքա ըստ առաջնոյն կը պատասխանեն «Յիսուս Նազովրեցին», այս անգամ մեղմ յանդիմանութեամբ կասէ. «Ասացի ձեզ թէ ես եմ». և կը յաւելու. «Եթէ զիս կը խնդրէք, թողէք զանոնք (առաքեալները) որ գնան». քանզի նաև աշակերտները բռնել կուզէին։

Իրաւ է որ Յիսուս մինչև այն ժամանակ շատ անգամ զանազան հրաշագործութիւններ կատարած էր իւր անհուն զօրութիւնը նոցա յայտնելու համար. ահա այս անգամ ևս յայտնեց, որպէս զի լմնանալով ուղղութեան գան։ Բայի այդ,

բազմութեամբ եկող քահանայապետաց, տաճարի մեծերին և ծերերին կասէ. «Երբ աւազակի վրայ սրօք և բրօք ելաք իմ վրայ. մինչ տաճարում միշտ ձեզ հետ էի, ձեռք չերկնցուցիք ինձ. սակայն այս է ձեր ժամն ու խաւարի իշխանութիւնը:» Ա.յս խօսքով Յիսուս ցոյց տուաւ թէ ինքը կամաւ անձնատուր կը լինի նոցա, որպէս զի մարգարէից գիրքերը կատարուին: Բայց նոքա ոչ մի կերպ համոզում չընդունելով, կը բռնեն ու կը կապեն զՅիսուս. այն ժամանակ բոլոր առաքեալք կը փախչին: Յիրաւի նոքա առ երկիւղի խոյս տուին, բայց այս մասին էլ Զաքարիա մարգարէի բերանով Ս. Գրոց մէջ գրուածը կատարուեցաւ, որ կասէ. «Հովիւը զարնեմ և ոչխարքը ցրուին:» Ա.յս մասին Յիսուս արդէն խօսած էր իրենց:

Երբ որ զՅիսուս բռնած կը տանէին, այն միջոցին մի երիտասարդ՝ իւր մերկ մարմնոյն վրայ կտաւ փաթաթած՝ նոքա եւս կերթար. զինուորք զայն Յիսուսի աշակերտներէն կարծելով՝ բռնել կուզեն զայն, որ իսկոյն վրայի կտաւը թողլով, այնպէս մերկ խոյս կուտայ: Ա.յս անձը՝ կը կարծուի թէ պարտէզի տէրն էր կամ նոքա որդին. որովհետև պարտիզում քնած ժամանակ, յանկարծ ազմուկ և դոռում գոչում լսելով՝ պատձառն հասկնալու համար ամենապարանոք և առանց հանդերձ հագնելու՝ միայն մի կտոր կտաւով փաթաթուած կը հետևէր Յիսուսի՝ բազմութեան մէջ:

Վերոյիշեալ ապերախտ ու անիրաւ ժողովուրդը, որ առ նախանձու թշնամի էր Յիսուսի, պատեհութիւն գտնելով զՅիսուս կապելէն զինի, մեծ ուրախութեամբ կը տանին զայն Երուսաղէմ Աննա քահանայապետին, որ Կայիափա քահանայապետին աներն էր: Սա այն Կայիափան էր, որ նոյն տարի քահանայապետ լինելուն համար յառաջագոյն Յիսուսի մասին աստուածային ներշնչմամբ ասած էր. «Փոխանակ մի ամբողջ ազգ կորսուելու՝ լաւ է որ մի մարդ մեռնի ժողովրդեան համար». (ինչպէս որ Ի՞Գ գրգ հարցում յիշուեցաւ):

Հարց՝ ՃԱ.

Հրէայք քանի՞ քահանայապետ ունէին ըստ Մովսիսական օրինաց.

Պաս. Օրինաց համաձայն մի հատ: Սակայն Բաբիլոնի գերութենէն ազատուելով Երուսաղէմ գալէն յետոյ, ոմանք չար մարդիկ փառասիրական տենչով սկսան հեթանոսաց կաշառք տալով՝ միմեանց ձեռքէն քահանայապետութիւնը բռնութեամբ կորզել (ինչպէս որ Մակաբայեցւոց գրքում կը կարդանք): Սոյն չար սովորութիւնը այն աստիճանի հասաւ, որ մարմնաւոր իշխանութեան ձեռամբ տարին մի քահանայապետ կը կարգէին, և պաշտօնանկ եղողներն էլ կենդանի լինելով՝ սուրբ

աւետարանը նոցա բազմութիւնը կանգնարկէ:

Երբեմն էլ երկու քահանայապետք միաբանելով ի միասին կիշխէին. ինչպէս որ Յովհաննէս Մկրտիչ քարոզել սկսած ժամանակ՝ Աննա և Կայիափա քահանայապետները միանգամայն քահանայապետութիւն կանէին (Ղուկ. Գ. 2): Եւ որովհետև երկու քահանայապետների միաժամանակ քահանայապետութիւնը շատ անպատշաճ էր, ուստի երկոց միջև կը համաձայնին մէկ մէկ տարի փոխանակաւ իշխելու. և այն տարին, յորում Յիսուս խաչուեցաւ, կարգը Կայիափային էր. քանզի այնուհետև նորին Աննայի քահանայապետութիւնը չիշատակուած է (Գործ. Դ. 5):

Արդ՝ Աննա քահանայապետ ժողովուրդին աւելի յարգուած լինելով, երբ որ Յիսուս բանեցին, նախ և առաջ առ նա տարին: Սա՝ Յիսուսի խիստ ոսերիմ թշնամի լինելուն համար, Յիսուսը կապուած տեսնելով՝ չափազանց ուրախանալէ զատ՝ բանտարկել ևս կուտայ և նորա հրամանաւ Յիսուս կը կապեն մի ձիթենիի, որ մինչև հիմայ Հայոց Ս. Հրեշտակապետաց վանքում կը մնայ. այնպէս որ այսօր Արաբները այդ վանքը Տէր եւ Ջէյնո՞նի կանուանեն. վասն զի Աննայի տունը այնտեղ էր[1]:

---

1. Տես յերկերոցդ գլուխ տասն գլուխ սուրբ երկրի պատմիչ Մաքինոսի.

Ապա Աննա՝ Յիսուսը ղրկեց Կայիափային, որուն տունն էլ դարձեալ Հայոց Ս. Փրկիչ վանքի տեղումն էր. Յիսուս այստեղ ևս բանտարկուեցաւ, որ հապա՝ էլ Մեծին կը կոչուի: Կայիափա՝ որ բոլորէն աւելի թշնամի էր Յիսուսի, նոյնպէս շատ ուրախացաւ՝ տեսնելով զայն կապուած վիճակում, և իւր ներկայութեան բերել տալով՝ նորա աշակերտաց ու քարոզած վարդապետութեանց մասին հարցումներ կուզղէ, որպէս զի կարողանայ նորա բերնէն մի խօսք առնուլ և մահապարտ դատել զայն:

Յիսուս կը պատասխանէ քահանայապետին. «Ես ծածուկ ոչինչ չը խօսեցայ, այլ միշտ և հանապազ ատճարում և ժողովրդեան առջև. ինչո՞ւ համար ինձ կը հարցնես. նոցա՝ հարցուր, որք լսեցին և գիտեն ինչ որ խօսած եմ:» Թէպէտև քահանայապետը Յիսուսի խօսքին մի պատասխան չը կարողացաւ տալ, բայց նորա ծառաներէն մին, որ այնտեղ էր, մի ապտակ կը զարնէ անոր ասելով. «Այսպէ՞ս պատասխան կուտաս քահանայապետին». Յիսուս կը պատասխանէ. «Եթէ չար խօսեցայ, վկայէ չարին համար, և եթէ բարի, ինչո՞ւ համար ուրեմն կը զարնես:»

Այս պարագայում Կայիափայի թշնամութիւնը կրկին յայտնի եղաւ. քանզի օրէնքի համաձայն յանցաւորութեան վճիռ չը տրուած՝ յիշեալ ծառայի այդպիսի յանդգնութիւնը իրեն համար մի

մեծ անարգանք լինելով, նա ոչ միայն չը պատժեր զայն, այլ մինչև իսկ յանդիմանութեան մի բառ անգամ չարտասաներ։ Սակայն զարմանալի չէ, քանի որ Յիշեալը ուրիշ բան չէր մտածեր, բայց եթէ Յիսուսը գտատպարտել և պատժել. այս պատճառաւ յանձն առաւ այդչափ տառապութեան դիջանիլ։

Աբդէն Կայիափայի տան մէջ գտմարտած էին բազում քահանայապետք, ծերք և դպիրք Յիսուսը սպանելու նպատակաւ. բայց նորա վրայ երբէք ոչ մի յանցանք չը կարողանալով դանել, կսկծին սուտ վկաներ որոնել, որպէս զի մահապարտութեան վճիռ արձակեն. այսու հանդերձ իրենց բաղձանաց համեմատ վկայք չեն գտնուիր։ Ա՛յո, բազում չարամիտ անձինք սուտ վկայութիւններ առին, բայց իրենց ասածները միմեանց ներհակ լինելով՝ հաստատելու անկարող կը լինին պարպապէս։

Ա՛յնուհետև երկու ուրիշ անձինք ևս յառաջ գալով կը վկայեն այսպէս. «Մենք լսեցինք որ այս մարդը կասէր թէ ես սոյն ձեռագործ տաճարը քակելով՝ մի ուրիշը կը շինեմ առանց ձեռագործի»։ բայց սոցա տուած վկայութիւնն էլ սուտ էր. որովհետև Յիսուս ոչ թէ ձեռագործ տաճարի մասին ասած էր, այլ իւր մարմնոյ նկատմամբ։ Բայց յայտնի, չէր ասած թէ ես կը քակեմ, այլ դուք քակեցէք (տե՛ս ԺԲ-րդ հարցումը)։ սակայն այս վկայութեամբ ևս կարող չեղան մահապարտ դատել զայն. այս պատճառաւ բոլորին

սիրտը վերին աստիճանի անձկութեամբ և դառնութեամբ լեցուած՝ մտատանջութեամբ կը խորհէին թէ ի՞նչ կերպով կարող կը լինին Նահապետի աչքին դատել զայն. նա՝ մանաւանդ այնքան սուտ վկայից ասածներուն Յիսուս բնաւ չը պատասխանելուն համար՝ Կայիափայի սիրտը բոլորէն աւելի նեղացած՝ ոտքի կանգնելով սաստմամբ կը հարցնէ Յիսուսի թէ «Ինչո՞ւ համար չես պատասխաներ։»

Սոյն հարցման նպատակն էր Յիսուսը խօսել տալով՝ բերանէն մի պատասխան առնել, որով կարողանայ զանի մահուան դատապարտել։ Յիշեալի միաքը Յիսուսի յայտնելով, երբ նորէն չը պատասխանեց, այս անգամ քահանայապետը մի այլ հնարքի կը դիմէ. «Յանուն Աստուծոյ կերդուեցնեմ քեզ որ եթէ դու ես Մեսիան ասա մեզ»։ կը հարցնէ վերսին։ Անշուշտ խարդախ մտքով արաւ այս հարցումը. քանզի եթէ Մեսիա լինելը խոստովաներ, պէտք է ասեր թէ հայհոյեց. իսկ եթէ չը խոստովաներ, յառաջադոյն շատ անգամ ասած լինելուն համար, ժողովուրդը վկայ բռնելով՝ հայհոյած է ասելով, բոլորի ներկայութեանը զայն Նահապետ պիտի հռչակէր. ահա այս պատճառաւ երդուընցուց զայն որ ասէ։ Յիսուս կը պատասխանէ «Դու ասացիր»։ և այս կերպով իրեն Մեսիա լինելը ընդունելով, կը յայտնէ նաև թէ ի յարութենէն ինքը մեծ փառօք պէտք է գայ զաշխարհ դատելու համար։

Լաւ ի միա ամս. (ԽԱ-րդ հարցում յիշուած) երբ որ այս մասին տաճարում հարցուցին, իրեն Մեֆթա լինելը յայտնապէս չասաց. որովհետև խաչուելու ժամանակը եկած չէր. այս անգամ ժամանակը հասած լինելով՝ բացորոշ յայտնեց, որպէս զի չասեն թէ «Զը գիտնալով խաչեցինք:» Ա.յդ պատասխանը մեծ ողորմութիւն էր նոցա համար, սակայն նոքա Սուրբ Հոգոյ մատիրը չը լինելով չը կարողացան ճանաչել զայն (այս մասին տե՛ս նաև Լ.Դ-րդ հարցումը):

Անխիղճ Կայիափան Յիսուսի բերանէն այս պատասխանը առնելուն պէս՝ հանդերձը պատռելով կասէ. «Էլ ինչ հարկաւոր է մեզ ուրիշ վկայ. ահա նորա հայհոյութիւնը դուք ամէնքդ լսեցիք. ինչպէս ընդունելի է ձեզ». նոքա միաբերան կը պատասխանեն թէ մահապարտ է: Մինչ տան վերի յարկում սոյն անիրաւ դործողութիւնը տեղի կունենար, նոյն միջոցին Պետրոս վարը երեք անդամ կուրանար Յիսուսի աշակերտ լինելը:

Իրաւ է որ Յիսուսի բռնուած ժամանակ առաքելոց իւրաքանչիւրը մէկ մէկ կողմ խոյս տուաւ, բայց յետոյ Պետրոս և Յովհաննէս սրբատպնդելով՝ նորա ետևէն կը գնան. Պետրոս հեռուէն կը գնայ, իսկ Յովհաննէս Յիսուսի հետ Կայիափայի տունը կը մտնէ. քանզի ծանօթ էր քահանայապետին. Պետրոս ներս մտնելու չը համարձակելով՝ դուրսը կը կենայ. երբ Յովհաննէս

ներսում չը տեսներ զայն, դուրս ելնելով դռնապանին կը խօսի և ներս կառնու զայն. ապա ինքը վերի յարկը գնալով, ուր որ Յիսուս կը գտնուէր, Պետրոս կը մնայ վարը, տան բակում:

Սրդ՝ այնտեղ կրակ վառած էին, որովհետև օդը ցուրտ էր. և մինչդեռ Պետրոս կրակին մօտենալով կը տաքնար, վերոյիշեալ դռնապանը՝ որ Կայիափայի ազախինն էր, կը հարցնէ Պետրոսի. «Դո՞ւն էլ այդ մարդու աշակերտներէն ես». նա թէև կուրանայ ասելով թէ չէմ, բայց դռնապանուհին այնտեղ ներկայ գտնուող անձանց կասէ. «Սա էլ նորա հետ միասին էր». Պետրոս կրկին անգամ կուրանայ ասելով. «Կին դու, չեմ ճանաչեր զայն:»

Մի փոքր ժամանակ յետոյ՝ այնտեղ ներկայ գտնուողները Պետրոսի կասեն. «Արդարև դու էլ ի նոցանէ ես. քանզի քո լեզուէն յայտնի է որ Գալիլեացի ես». նորա զայս ասած ժամանակ՝ քահանայապետի ծառայից մին, որ Մաղքոսի ազգականն էր, և Պետրոս այս վերջնոյս ականջը կտրած էր, կասէ. «Չէ՞ որ քեզ էլ պարտիզում նորա հետ տեսայ». այս հարցման վրայ Պետրոս նզովիւք և երդմամբ երրորդ անգամ ուրանալուն պէս՝ հաւը կը խօսի:

Նոյն միջոցին տան վերի յարկէն Յիսուս վար իջուցած լինելով՝ կը դառնայ ու Պետրոսին կը նայի, որպէս զի զղջայ: Սա՝ յիշելով Յիսուսի

այն խօսքը թէ հաւը չը խօսած երեք անգամ պիտի ուրանաս զիս, այն աստիճան ցաւօք սրտի կը զղջայ, որ նորա աչքերը արեան արտասուքով լեցուած՝ իսկոյն դուրս կը դնայ և կսկիծ դառնապէս լալ։

Պետրոսի վիճակէն խրատ առ. առաքինութեանդ վրայ յոյս դնելով՝ ինքզինքիդ մի՛ վստահիր, որպէս զի չը սխալիս. արդարև Պետրոս բոլորէն աւելի ջերմ սիրով կը սիրէր իւր վարդապետը, բայց ինքն իրեն վստահելուն համար սխալեցաւ։

Տե՛ս դու աստ հրէից անզթութիւնը. երբ որ Յիսուսը վար իջեցուցին, այնտեղ մինչև առաւօտ տեսակ տեսակ չարչարանքով սկսան տանջել զայն. ոմանք ապտակ կը զարնէին նորա երեսին, ոմանք բռնցի հարուածներ կիջեցնէին նորա գլխուն, այլք կը թքնէին երեսը, շատերն էլ նորա գլուխը ծածկելով՝ հայհոյանօք կը հարցնէին. «Մարգարէացիր, ո՛վ Մեսիա, թէ քեզ զարկողը ո՞վ է[1]». բայց Յիսուս երբէք պատասխան չի տար. որովհետև նախապէս շատ անգամ ասած էր թէ այսպիսի չարչարանք պէտք է քաշէ։ Թէև հրէայք իրենց չարութեան ու ապերախտութեան պատճառաւ այդ-

1. Իսկ նոցա կալեալ զՅիսուս տանին առ Կայիափա քահանայապետ՝ ուր դպիրք և ծերք ժողովեալ էին. Մատթ. ԻԶ. 57. մինչև 75 համար.—Մարկ. ԺԴ. 51.—Ղուկ. ԻԲ. 54.—Ցովհ. ԺԸ. 12.

պէս տանջելին պնա, բայց այս մասին Ս. Գրոց մէջ գրուածն էլ կատարուեցաւ. ինչպէս որ Եսայի մարգարէն Յիսուսի կրելու չարչարանքները մի առ մի կը նկարագրէ. (Եսայ. ԾԳ. 1)։

Երբ որ առաւօտ եղաւ, ժողովրդեան ծերերը, քահանայապետներն ու դպիրները կանուխէն տեսան կազմելով՝ իրենց ներկայութեան բերել կուսան զՅիսուս. որովհետև Կայիափայի տան մէջ ուրիշ յանցանք չը գտնելով նորա վրայ՝ միայն «Մեսիան ես եմ» ասելուն համար դատապարտած էին. ուստի այս առենուն ևս աստր վրայ հիմնուելով կասեն. «Եթէ դու ես Քրիստոսն (Մեսիա), ասա մեզ». և այս հարցումը կուզղեն ո՛չ թէ սորելով կամ համոզուելով հաւատալու համար, այլ միայն զանի սպանելու նպատակաւ։

Յիսուս նոցա միտքը գիտնալով կասէ իրենց. «Եթէ ասեմ՝ չէք հաւատար. և եթէ ձեզ մի բան հարցնեմ և դուք ստիպուիք հաւատալու, այն ժամանակ չէք պատասխաներ և զիս չէք արձակեր. սակայն գիտցէք որ ժամանակ պիտի գայ յորում մարդոյ Որդին պէտք է նստի ամենազօր Աստուծոյ աջ կողմը։» Ա.յս խօսքով յայտնեց Յիսուս թէ ինքն է Քրիստոսն և Աստուծոյ որդին. այս պատճառաւ ամէնքը միաբերան կասեն անոր. «Ուրեմն դու ես Աստուծոյ որդին». Նա կը պատասխանէ թէ՝ «Դուք ասացիք որ ես եմ»։

Նորա սոյն պատասխանին վրայ ամէնքը միա-

բերան՝ «Էլ ինչ պէտք է մեզ վկայութիւն. մենք ինքներն նորա բերանէն լսեցինք» ասելով՝ կորոշեն սպանել զՅիսուս. բայց որովհետև մարդ սպանելու արտօնութիւն չունէին, վերոյիշեալ ուշադրութեամբ կապելով զայն՝ կը տանին առ Պիղատոս, որ Հռովմայեցոց կայսեր կողմանէ Երուսաղէմ քաղաքում դատաւոր էր: Յաջորդ օրը պասէին պօճը կսկսէր, վասնորոյ իրենք անձամբ չեն մտներ Հեթանոս դատաւորի պալատը՝ օրինաց հակառակ չը գործելու համար, այլ բարապանաց միջոցաւ ներս կը ղրկեն զՅիսուս, որպէս զի օրինաց համաձայն կատարուածն գաւը ուտել:

Պիղատոս ի պատիւ նոցա՝ դուրս ելնելով կը հարցնէ. «Ա՛յդ մարդու մասին ձեր գանգատն ինչ է»: քահանայապետները կը պատասխանեն. «եթէ նա չարագործ մէկը չը լինէր, քեզ չէինք բերեր զինքը. քանզի կը մոլորցնէ մեր ազգը, թագաւորին տուրք տալ կարգիլէ, և իւր անձին համար կասէ թէ Քրիստոսն է Թագաւոր:»

Նայէ դու անիրաւների խաբէութեանը. իրենք Յիսուսի վրայ ուրիշ յանցանք չը գտնելով՝ միայն Ոչինչ Աստուածոյ եմ ասելուն համար իրրև հայհոյիչ դատապարտելին գնա մահուան. սակայն լաւ գիտեն թէ Պիղատոս այդ մասին վոյթ չաներ հեթանոս լինելուն պատճառաւ, վասնորոյ սուտ կը խօսին ասելով թէ կործելէ հարկ տալ և ինքզինքը Թագաւոր թե կը դնէ. այո՛, սուտ կը խօսին,

որպէս զի գրգռեն դատաւորն էլ դատախազ կանգնելու Յիսուսի դէմ: Սակայն նա հասկնալով նոցա խորամանկ ստութիւնը կասէ. «Դուք առէք և ձեր օրինաց համեմատ դատեցէք զայն[1]:»

Հաբ. ՛ծԲ.

Ինչու՞ Պիղատոս հրէից ասաց որ իրենք դատեն Յիսուսը իրենց օրինաց համաձայն.

Պաս. Որովհետև գիտէր թէ նոքա նենգամիտ, քսու և անիրաւ մարդիկ են. վախցաւ որ մի՛ գուցէ իւր դէմ գանգատ գրեն Հռովմայեցւոց կայսեր, Քանզի եթէ նոցա մատղաշ նպատակը դործադրէր, յայտնապէս արդարութեան հակառակ պիտի գործէր, քանի որ հասկցաւ թէ Յիսուսի նկատմամբ նոցա գանգատը անհիմն և սուտ պըրպտուելիւն էր. իսկ եթէ չը համակերպէր նոցա այն ժամանակ պիտի ասէին թէ թագաւորական իշխանութեան դէմ գործող անձը կը պաշտպանէ. այս պատճառաւ Յիսուսի դատաստանը նոցա կամաց թողուլ փափաքեցաւ Պիղատոս. սակայն քահանայապետներն ու գպիրները խաբեբայ և խիստ

1. Եւ ածին զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս դատաւորին. և էր այգուց. և նոքա ո՛չ մտին յապարանն՝ զի մի պղծեսցին, այլ զի ուտիցեն զպատիկն. Ցովհ. ԺԸ. 28—31.—Մատթ. ԻԷ. 1.—Մարկ. ԺԵ. 1.—Ղուկ. ԻՌ. 66.

խորամանկ լինելով կը պատասխանեն անոր թէ՝ «Մեզ արժան չէ մարդ սպանել։»

Իրաւ է որ օրինաց հայհոյիչը կարող էին քարկոծել, բայց պիսուս անպատճառ խաչը հանելու յամառ դիտաւորութեամբ այդ պատասխանը տուին։ Թէև նոքա առ քննախնդրութեան այդ խօսքն ասացին, սակայն Յիսուս նախապէս յայտնած լինելով թէ ինքը խաչը պէտք է ելնէ, այսպէս նոքա այդ խօսքը կատարուեցաւ։

Յիրաւի վերոյիշեալ չարախօս ու ղրպարտիչ հրէայք՝ իրենց նպատակը իրագործելու համար Յիսուսի դէմ գանգատ մատուցին, բայց օրէնքը կը պահանջէր որ դատաւորը դործը քննելու համար անոր ևս լսէ. ուստի Պիղատոս ներս մտնելով, առանձինն կը հարցնէ Յիսուսի թէ՝ «Դու հրէից թագաւո՞ր ես»։ բնաւ չատաց թէ «Դու ժողովուրդ խռոված և թագաւորական հարկը տալ արգիլած ես»։ որովհետև նոցա ստախօսութիւնը ամեն կերպով յայտնի էր։

Յիսուս դատաւորին կը պատասխանէ. «Դու քեղնէն կասես զայդ, թէ ուրիշները քեզ ասացին»։ Պիղատոս կասէ. «Մի՞թէ ես հրէա՞յ եմ. քու ազգդ և քահանայապետները զքեզ մատնեցին ինձ. ի՞նչ ես արած»։ Յիսուս կասէ. «Իմ թագաւորութիւնը այս աշխարհէն չէ. եթէ այս աշխարհէն լիներ, ծառայքս կը պատերազմէին, որպէս զի հրէից ձեռքը չը մատնուիմ։» Դատաւորը լսելով սոյն

պատասխանը կասէ «Ուրեմն թագաւոր մէկն ես դուն»։ Փրկիչը կը պատասխանէ. «Դու ասացիր թէ թագաւոր եմ. բայց ես յայնմ իսկ ծնած եմ, և յատկապէս յաշխարհ եկած, որպէս զի վկայեմ ճշմարտութեան. ով որ ճշմարտութենէ է, կը լսէ իմ խօսքերին։»

Խելամուտ եղիր. մարդիկներէն ո՛չ ոք թագաւոր չը ծնիր, այլ ծնելէն ետքը թագաւոր կը լինի, քանի որ նոցա թագաւորութիւնը ո՛չ ի բնէ, այլ պատահական է. սակայն Յիսուս Փրկիչն մեր Ոչ՛ի Աստուծոյ և Աստուած էր, ի բնէ յաւիտենական թագաւոր լինելով, մարդկային ազգը փրկելու համար մարմին առնելով մարգացած ժամանակ՝ թագաւոր էր. և յատկապէս աշխարհ եկած էր ճշմարտութիւնը հաստատելու համար։ Պիղատոս թէև կը հարցնէ Յիսուսի թէ ի՞նչ է ճշմարտութիւնը, բայց զայն ուրվելու փափաք չունենալով՝ միայն նորա ասածներին նայելով՝ կը յայտարարէ թէ Նա յանցանք չունի, և կուզէ որ զայն խօսել տայ դէմ յանդիմման թշնամեաց. ուստի երբ զայն դուրս կը հանէ, քահանայապետներին ու դպիրներին կասէ. «Ա՛յս մարդուն վրայ մահու արժանի ո՛չ մի պատճառ չգտայ ես։»

Այն ժամանակ նոքա աղմուկ կը բարձրացնեն ասելով. «Գալիլեայէն մինչև այստեղ կուսուցանէ և ժողովրդեան մէջ խռովութիւն կը ձգէ»։ բայց Յիսուս բնաւ չը պատասխաներ։ Իրաւ էր՝ Պիղա-

տոս Յիսուսի յանցաւոր չը լինելուն համոզուած լինելով, պայն արձակելու փափաք ունենայաւ, սակայն հրէից համոյանալու նպատակաւ՝ փոխանակ ինքը նոցա խօսելու, կուզէ որ Յիսուս պատասխանէ. այդ պատճառաւ ստիպմամբ կասէ անոր թէ՝ «Ինչո՞ւ չես պատասխաներ, տե՛ս թէ որչա՞փ կը դատին քեզմէ»։ երբ Յիսուս դարձեալ չը պատասխաներ, այն ատեն կը զարմանայ, որ մինչև իսկ կանգիտանայ թէ ինչ պէտք էր անել և ո՛ր կողմն հակիլ։ Ա.յսուեղ կատարուեցաւ Յիսուսի նկատմամբ Ս. Գրոց այն պատգամը թէ «Եղայ ես իբր մի մարդ որ չի լսեր, և նորա բերանում խօսք չկայ»։ (Սաղմ. Լէ. 14)։

Եւ որովհետև հրէայք ասացին թէ Գալիլեացէն մինչև այսուեղ կուսուցանէ, Պիղատոս հարցնելով՝ երբ կը տեղեկանայ թէ Յիսուս Գալիլեացի է, նորա դատը իրմէ հեռացնելու փափաքանօք պայն կը դրկէ Գալիլեայի թագաւոր Հերովդէսին, որպէս զի նա տեսնէ Յիսուսի դատաստանը և վճիռը տայ. քանզի Հերովդէս այն օրերում Երուսաղէմ քաղաքի մէջ կը գտնուէր։ Ա.յս մասին Գալիլեայի թագաւորը շատ կուրախանայ, քանի որ նա երկար ժամանակէ ի վեր կը ցանկար Յիսուսը տեսնել. վասն զի նորա հրաշագործութիւնքը լսած լինելով, կը յուսար որ պատուհասի համար իւր ներկայութեան ևս հրաշք կը գործէ. այս պատճառաւ նա այլ և այլ հարցումներ կուղղէ

ատ Յիսուս, սակայն Սա երբէք չպատասխաներ անոր։

Քահանայապետներն ու դպիրները ևս, որոնք ի միասին եկած էին անդր, կսկսին Յիսուսի դէմ խիստ շատ դանգատներ անել, սակայն նոցա դանգատները որքան կը շատնային, այնքան Յիսուսի անմեղութիւնը առաւել յայտնի կը լինէր. ուստի թէև գիտցաւ Հերովդէս թէ նա երբէք յանցանք չունի, բայց իրեն պատասխան չը տալուն վրայ բարկացած՝ իւր մարդոց հետ կարհամարհէ պայն, և ծաղրանօք նորա վրայ սպիտակ հանդերձ ձգելով՝ նորէն Պիղատոսին կը դրկէ զՅիսուս, որպէս զի նորա դատաստանը դարձեալ ինքը դատաւորը տեսնէ։ Ա.յս առթիւ նոքա վերստին բարեկամացան միմեանց հետ հաշտուելով. քանզի (ինչպէս Լթ-րդ հարցում յիշուած է) Պիղատոս յառաջագոյն տաճարի մէջ մի քանի Գալիլեացիներ յանիրաւի սպանած լինելուն համար՝ նոքա թշնամի էին միմեանց։

Տե՛ս դու աստ Յուդայի, ագահ և նենգամիտ Յուդայի թշուառ վիճակը. քանզի երբ հրէայք Յիսուսը ահաւոյիք դատեցին, սաստիկ երկիւղ զգալով զղջաց, բայց առանց ապաշխարելու. որովհետև նորա սիրտը ուղիղ և անկեղծ չէր։ Յիրաւի Յիսուսը մատնելուն համար զղջաց, բայց ո՛չ թէ նորա սիրոյն համար, այլ վախնալուն և բոլոր մարդոց առջև խայտառակ ու անուանարկ

լինելուն համար. այնպէս որ այլ եւս մարդոց երեսը նայելու իսկ համարձակութիւն չունէր։

Յուդա՝ որքան որ յառաջագոյն երեսուն արծաթին առնուլ կը բաղձար, սակայն առնելէն յետոյ նոյնքան աւելի յետս դարձնելու ջանքեր անելով՝ իսկոյն գնաց քահանայապետներին ու ժողովրդեան ծերերին եւ խոստովանեցաւ ասելով. «Մեղայ, քանզի արիւն արդար մատնեցի». եւ երբ ստացած երեսուն դահեկանը ետ տալ կամեցաւ, նոքա կը պատասխանեն. «Մեզ վոյթ չէ. դու դիտես։» Այս պատասխանը լսելուն պէս՝ Յուդա իսկոյն նոյն դրամը կը տանի տաճարը կը նետէ, եւ միանգամայն իւր գործած չարութեան ծանրութիւնն ու անօրինակ հանգամանքը ի նկատի ունենալով, այն աստիճան կը յուսահատի, որ վիշտէն խելայեղ կը գնայ եւ ինքզինքը կը կախէ. այնպէս որ թշուառի որովայնը ուռելով՝ ամբողջ աղիքները դուրս կը թափին (Գործ. Ա. 18.), որով թէ այս աշխարհի վրայ կը խայտառակուի եւ թէ ի հանդերձեալսն դժոխոց անվախճան տանջանաց կը դատապարտուի։

Յիրաւի կարող էր Յուդա արտասուօք եւ խորին հառաչանօք ձեղայ դիմելով՝ Յիսուսի ոտքն ընկնել, կամ թէ նորա մօտ առաքելոց միջնորդութիւնը խնդրելով՝ թողութիւն գտնել, քանի որ գիտէր թէ նա ողորմած է. բայց որովհետեւ մեղայ ձէջ ընկնող մարդուն միտքը կը փակուի,

այս պատճառաւ ինքն իւր իսկական օգուտը ճանաչելու անկարող լինելով՝ ինքզինքը կորստեան մատնեց։ Այս պարագայում թող ուրեմն ոգահ եւ խարդախ մարդիկ երկնչին յոյժ. վասն զի որու ընթացքին որ կը հետեւին, անկասկած նորա նման պէտք է պատժուին սաստկապէս հանդերձեալ աշխարհում։

Քահանայապետները տաճարում գտնելով այն երեսուն արծաթը, զոր Յուդա ձգած էր, արժան չը դատեցին զայն ընդունիլ զոհագործութեան համար, քանի որ արեան դին էր. վասնզի այդ դրամով աֆթարակ էր–պէ կոչուած տեղը կը գնեն, որպէս զի պանդուխտ կամ օտարական մարդիկ այնտեղում թաղուին։ Այս պատճառաւ այնտեղը աֆթարակ աքէան կոչուեցաւ մինչեւ յայսօր. այսպէս կատարուեցաւ Ս. Գրոց այն պատգամը թէ «Անէն վաճառելոյն գինը—երեսուն արծաթին—եւ տուին զայն բրուտի ագարակին». (Երեմ. Լ.Բ. 7։—Զաք. ԺԱ. 12)։

Ինչպէս որ վերը յիշուեցաւ, Պիղատոս՝ թէեւ Յիսուսի դատաստանը կարելէն մի կերպ խոյս տալու համար ղրկեց զայն Հերովդէսին, բայց երբ որ նա վերստին առ Պիղատոս վերադարձուց, առկուղեր որ մի հնար գտնելով զայն անպարտ արձակէ. վասն զի առաւգապէս գիտեր թէ նա ոչ մի յանցանք չունենալով, հրէայք միայն առ նախանձու մատնեցին զայն իրեն. սակայն յայտնի էր որ

նոքա ևս հանդարտ չը պիտի կենային։

Այս պատճառաւ դանոնք համոզելու փափաքանօք՝ քահանայապետներն ու ժողովրդեան մեծերը կոչելով կասէ. «Դուք այս մարդը բերիք ինձ իբր խռովարար ժողովրդեան, ահա ես ձեր առջեւ զայն հարցաքննելով՝ ո՛չ մի յանցանք չգտայ նորա վրայ, որու մասին դուք այնքան կը չարախօսէք. Հերովդէս էլ յանցանք չը գտաւ. արդ՝ մահու արժանի մի բան գործած չէ Սա. ուստի խրատելով արձակեմ զայն։» Սակայն նոքա փոխանակ համոզուելու՝ կսկսին աղաղակել «Բարձ զդա». և թէպէտ երեք անգամ դատաւորը կը հարցնէ նոցա թէ «Ի՞նչ չար բան գործեց», բայց նոքա բարձրաձայն և սոսկալիօք կը պահանջէին որ անպատճառ խաչը հանէ զայն. այն ժամանակ Պիղատոս ուրիշ միջոց կը խորհի, որպէս զի մի կերպ զանոնք համոզելով Յիսուսը արձակէ։

Որովհետև սովորութիւն կար ամէն պօշխ մի բանտարկեալ արձակել ըստ խնդրանաց ժողովրդեան, այն ժամանակ Բարաբբա անուամբ մի աւազակ մարդ բանտարկուած էր, որ քաղաքում խռովութիւն պատահած ժամանակ մի մարդ սպաննած էր. ուստի Պիղատոս կասէ հրէից թէ «Ա՛յս երկուքէն ո՞րը կը կամիք որ արձակեմ. Յիսուսը՞, որ Քրիստոս կանուանուի, թէ Բարաբբան։»

Մինչ դատաւորը կը խօսէր զայս, նորա կինը մարդ ղրկելով աւ նա կասէ. «Գործ մի՛ ունենար

այդ արդարին հետ, որովհետև այսօր երազումս շատ անցքեր պատահեցին ինձ նորա համար։» Արդարև Աստուծոյ կողմանէ Յիսուսի կատարեալ անմեղութիւնը յայտնուեցաւ այդ կնոջ, որ կարծեցաւ տեղեկացնել իւր ամուսնոյն, որպէս զի չանայ մի կերպ ազատել զայն ոևէ միջոցով։

Սակայն քահանայապետաց դրդմամբ ժողովուրդը կաղաղակէր որ Պիղատոս զՅիսուս խաչը հանելով՝ Բարաբբան արձակէ։ Երբ նա տեսաւ որ անպատճառ Յիսուսի մահը կուզեն, նոցա բարկութիւնը հանդարտեցնելու համար հրամայեց վերնաւորներին ծեծել զայն և տանջանաց ենթարկել. այս հրամանին վրայ նոքա՝ որոնք արդէն խիստ անգութ մարդիկ էին, անտանելի չարչարանք տալով Յիսուսին, նորա ամբողջ մարմինը—գլխէն մինչև ոտքը—վիրաւորելով արեամբ ներկեցին. և ասով ևս չը բաւականանալով՝ նորա հանդերձը հանեցին և կարմիր պատմուճան հագցնելով՝ փշեղէն մի պսակ դրին նորա գլուխը. ապա իբրև գաւազան մի եղէգն տալով նորա ձեռքը՝ ծաղրանօք կասէին. «Ողջ եղիր, Թագաւոր հրէից». նաև նորա երեսին թքնելով՝ եղէգը ձեռքէն կառնէին ու նորա գլխոյն վրայ սաստիկ հարուածներ կը տեղային։

Մեր տէր Յիսուսը կամաւ այսպիսի չարչարանք կրելով՝ թէև ո՛չ մի բան չասաց, բայց այնպիսի ազիւղորմ մի կերպարան առաւ, որ զայն տեսնողը՝ որքան էլ քարասիրտ լինէր, ի դուէթ կը

շարժէր. և այս յուսով Պիղատոս զայն դուրս հանելով՝ կասէ հրէից. «Ահա ձեր մարդը ձեզ կը յանձնեմ:» Իսկ նոքա ի վաղուց անտի Յիսուսի թշնամի և միանգամայն չափազանց անգութ մարդիկ լինելով, բարձր ձայնիւ նորէն կսկսին աղաղակել թէ՝ «Խաչը հանէ, խաչը հանէ զայն:» Դատաւորը անձար մնալով կասէ նոցա. «Դուք առէք և խաչը հանեցէք զայն. ես նորա վրայ մահու արժանի ոչ մի յանցանք չը գտայ». նոքա կը պատասխանեն. «Մեր օրինաց համաձայն պէտք է որ մեռնի. ինչու որ իւր անձը Աստուածոյ որդի արաւ:»

Երբ Պիղատոս այդ խօսքը լսեց, առաւիկ վախնալով՝ նորէն պալատը մտաւ և հարցուց Յիսուսի թէ՝ «Դու ո՞րտեղից ես». և տեսնելով որ նա չը պատասխաններ իրեն, կասէ. «Ինչո՞ւ ինձ հետ չես խօսիր. չը՞ գիտեր որ իշխանութիւն ունիմ զքեզ խաչը հանելու կամ թէ արձակելու». Յիսուս կը պատասխանէ. «Եթէ քեզ ի վերուստ արուած չը լինէր, դու իմ վրայ ոչ մի իշխանութիւն չէիր ունենար. այս պատճառաւ ով որ զիս քեզ մատնեց, նորա մեղքը շատ մեծ է:»

Յիսուսի սոյն պատասխանին վրայ Պիղատոս կուզէր զայն արձակել. բայց հրէայք ահագին աղմուկ կը յարուցանեն ասելով. «Եթէ զայն արձակես, կայսեր հաւատարիմ չես. վասն զի ով որ ինքզինքը Թագաւոր կանուանէ, կայսեր հակառակ է». դատաւորը քարայատակ և երբայեցերէն կոպ-

պալեա կոչուած տեղում բեմի վրայ նստելով կասէ հրէից. «Ահա ձեր Թագաւորը ձեզ». իսկ նոքա նորէն կաղաղակեն. «Բարձ ի մէնջ, խաչը հանէ զայն», որուն դատաւորը կը պատասխանէ. «Ձեր Թագաւորը ես խաչը հանեմ». նոքա կը պատասխանեն. «Կայսրէն զատ մենք Թագաւոր չունինք:»

Պիղատոս կը նայի թէ փոխանակ օգտուելու՝ գործը հետզհետէ առաւել կը վատանայ. ժողովրդեան առջև ջուր առնելով ձեռները կը լուանայ ասելով. «Անպարտ եմ ես այս արդարի արեան համար. դուք գիտէք:» Ա՛յն ժամանակ մոլեգնած ժողովուրդը կը գոռայ. «Սորա արիւնը մեր և մեր որդւոց վիզը լինի». որով Պիղատոս Բարաբբան արձակելով՝ զՅիսուս կը յանձնէ նոցա կամայ, որպէս զի խաչը հանեն:

Նայէ դուն Պիղատոսի անիրաւութեանը. որովհետև հաստատապէս գիտնալով հանդերձ թէ Յիսուս կատարեալապէս անմեղ է, զոր ի ներկայութեան ժողովրդեան քանիցս յայտարարած էր, մի՛ գուցէ հրէայք իւր մասին Հռովմայեցւոց կայսեր գանգատ գրեն և ինք պաշտօնանկ լինի, վասն որոյ արդարութեան հակառակ ոչ միայն Յիսուսը չարչարել կուտայ, այլ և վճիռ կարձակէ զայն խաչը հանելու: Ահա այսպէս է աշխարհասէր մարդու վիճակը, որ խաբուսիկ և անցաւոր աշխարհի վաստաց համար իւր հոգւոյն յաւիտենական կորստեան պատճառ կը լինի:

Դատաւորի վճռոյն վրայ հրէայք ուրախացան յոյժ. նոքա, որոնք Յիսուսի թշնամիներն էին, երբ զայն խաչը հանելու արժանութիւնը ստացան, նորա վրայի կարմիր պատմուճանը հանելով (զոր ծաղրելու համար պինդ ու որայ ձեւով հագցուցած էին), նորին իւր հանդերձը կը հագցնեն, և խաչն էլ, զոր պատրաստած էին արդէն, նորա ուսին վրայ դնելով՝ Պիղատոսի պալատէն դուրս կելնեն ահագին բազմութեամբ. և մինչ Գողգոթա լեռը կը գնային, Կիւրենացի Սիմոն անուամբ մի անձ որ իւր ագարակէն կը վերադառնար, սարսափահար կը բռնեն, որպէս զի Յիսուսի խաչն առնելով՝ նորա ետեւէն մինչև Գողգոթա տանի[1]:

Հարցում ԻԳ.

Ինչո՞ւ համար խաչը Յիսուսի ուսէն առնելով Կիւրենացի Սիմոնին տուին, որ մինչեւ Գողգոթա տանի.

Պաս. Իրենց նպատակին հասնելու համար: Որովհետև նորա այս բանը արին ո՛չ թէ Յիսուսի

1. Առեն ցՊիղատոս. մեզ ո՛չ է արժան սպանանել զոք: Զի լցցէ բանն Յիսուսի՝ զոր ասաց, նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց էր: Եմուտ միւսանգամ յապարանն Պիղատոս, կոչեաց զՅիսուս՝ և ասէ ցնա. դո՞ւ ես թագաւորն Հրէից. Ցովհ. ԺԸ. 31. մինչև ԺԹ գլխոյ 17 համարն.—Մատթ. ԻԷ. 3.—Մարկ. ԺԵ. 2.—Ղուկ. ԻԳ. 3.

գթալով, այլ մի՛ դուցէ նա ճանապարհում մեռնելով՝ չը կարողանան գայն խաչը հանել, քանի որ նորա մարմնոյն վրայ ո՛չ մի առողջ տեղ չը մնալով՝ բոլորովին մահուան դուռը հասած կը թուէր արդէն: Եւ որովհետև այն բազմաթիւ ժողովուրդը, որ նորա ետեւէն կերթար, թէ արք և թէ կանայք, այդ խղճալի դրութեան մէջ գայն տեսնելով, թէպետև թշնամիները կուրախանային, բայց շատ կանայք արտմութեամբ արտասուելով՝ հառաչանաց ձայն կարձակէին, որով Ս. Գրոց պատգամը կատարուեցաւ թէ «Ա՛յն օր երուսաղէմ քաղաքում լայ ու կոծը սիրտ սաստկանայ[1]:»

Ա՛յն ժամանակ Յիսուս ետեւ նայելով կասէ նոցա (կանանց). «Իմ վրայ մի՛ լաք, պատերք Երուսաղէմի, այլ լայէք ձեր անձանց և ձեր որդւոց վրայ. ժամանակ պիտի գայ, յորում ամուլ կանանց երանի տալով՝ լեռներին պէտք է ասեն թէ ընկէք մեր վրայ և բլուրներին թէ՝ ծածկեցէք զմեզ. որովհետև եթէ դալար փայտին այսպէս կանեն, չորին ինչ պէտք է լինի:» Այս խօսքը կատարուեցաւ Հռովմայեցւոց ձեռամբ, երբ նորա տարուեցաւ Երուսաղէմ քաղաքը (տես ԽԸ-րդ հարցումը):

Որովհետև Յիսուսի նկատմամբ Ս. Գրոց բոլոր

1. Ցաւուր յայնմիկ սաստկասցէ կոծ յԵրուսաղէմ. Զաք. ԺԲ. 11.

գրուածները պէտք էր կատարուէին, վասնորոյ երբ Գողգոթա լերան սաստրոտը հասան, Յիսուս Սիմոնէ ուսէն խաչը առնելով՝ ինքը կը տանի Գողգոթա. վասն զի ինչպէս որ Իսահակ զոհի փայտը ինքը ուսին վրայ բառնալով՝ Գողգոթա լեռը ելաւ, նոյնպէս Յիսուս խաչն ուսին վրայ կելնէ Գողգոթա, քանի որ Իսահակ նորա օրինակն էր (այս մասին տե՛ս նաև երրորդ դարու Ժ-րդ հարցումը)։

Ա. յս կերպով Գողգոթա լեռը բարձրացան, որ գլուխ կոթելու տեղ կը նշանակէ, (ինչպէս որ առաջին դարու Ը-րդ հարցում յիշուեցաւ). այն տեղ Յիսուսի հանդերձը վրայէն կը հանեն. բայց որովհետև նորա ամբողջ մարմինը գլխէն մինչև ոտքը վիրաւորուած էր և հանդերձն էլ նոցա (վէրքերին) փակած էր, երբ որ զայն մերկացուցին, վէրքերը նորէն բացուելով՝ երկիրը տէր Յիսուս Փրկչի օրհնեալ արեամբ ներկուեցաւ։

Ա. յն ժամանակներում՝ սովորութիւն կար խաչը հանուած մարդոց թմրեցուցիչ դեղ տալ, որպէս զի կրած ցաւը չզգայ. այս սովորութեան համեմատ Յիսուսի ևս մատուցին գինի զմռսեալ (դեղերի հետ խառնուած), բայց նա բերանը տանելով՝ ձաշակելէն յետոյ խմել չուզեց, որպէս զի կրած ցաւն ու կսկիծը չը թեթևնայ, զոր մարդկային ազգի փրկութեան համար կամաւ և յօժարութեամբ կը կրէր։ Երբ չորս գինուորք Յիսուս

Փրկիչը խաչին վրայ տարածելով՝ նորա ձեռներն ու ոտները բևեռներով գամեցին, նորա մասին Ս. Գրոց մարգարէական այն խօսքը կատարուեցաւ թէ՝ «Ձեռներս ու ոտքերս ծակեցին». (Սաղմ. ԻԱ. 17)։

Նմանապէս երբ որ խաչը բարձրացնելով՝ բերի վրայ կանգնեցին, այն ժամանակ Յիսուսի՝ իւր մասին յառաջագոյն ասած խօսքը կատարուեցաւ թէ՝ ինչպէս որ Մովսէս պղինձէ օձը ձողի վրայ բարձրացուց անապատում, նոյնպէս մարդոյ Որդին պարտական է բարձրանալ (Յովհ. Գ. 14). (տե՛ս այս մասին չորրորդ դարու ԻԱ-րդ հարցումը)։

Ինչպէս որ ըստ օրինի երբ իշխանք մկիկ մահուան կը դատապարտեն, աշխարհի խրատ լինելու համար, նորա յանցանքը գրելով՝ դատապարտելոյն վրայ կը դնեն, նմանապէս Պիղատոս՝ աշխարհին յայտնելու համար թէ ինչ պատճառաւ զՅիսուս ի խաչ կը հանեն, մի տախտակի վրայ երրայեցերէն, լատիներէն և յունարէն լեզուներով կը գրէ թէ «Սա է Յիսուս Նազովրեցին, Հրէից Թագաւորը», և զայն խաչի վերևը գամեցին։

Սակայն հրէայք կարգալով տախտակի վրայ գրուածը չհաւորժեցին բնաւ, որպէս զի իրենց Թագաւորը խաչը հանած չը լինին. այս պատճառաւ իսկոյն Պիղատոսին գնալով կասեն. «Մի գրեր թէ Հրէից Թագաւորն է, որովհետև ինքն ասաց որ Հրէից Թագաւորն եմ։» Թեպետև այս մասին

շատ աղաչեցին որ տախտակը փոխէ, բայց նա մերժեց ասելով. «Ինչ որ գրեցի, գրեցի։» Երանելի կը լինէր Պիղատոսը, եթէ յառաջագոյն այսպիսի պատասխան տար այդ յամառ և կամապաշտ մարդոց։

Յիրաւի Պիղատոս հրէից հաճոյանալու խորհրդով Յիսուսի մահուան վճիռ տուաւ ամենայն անիրաւութեամբ, բայց այս անգամ այդ անարդ խորհուրդը ի բաց թողով՝ գրեց ինչ որ ճշմարիտ էր, ոչ թէ ինքն իրմէ, այլ ի վերուստ ներշնչուելով, որպէս զի յայտնի լինի յաւիտենական աշխարհի թէ Յիսուս մարդկային ազգը մեղայ հոգևոր գերութենէն փրկելու համար կամաւ ի խաչ կելնէր, քանի որ Յ[illegible] կը նշանակէ Փրկիչ։

Նայէ դուն հրէից յամառ ոխակալութեանը. քանզի զՅիսուս խաչելու նպատակին հասնելէ յետոյ, այնտեղ մի աւելի նախատինք ևս անելու համար երկու չարագործ աւազակներ բերելով՝ մինը Յիսուսի աջ կողմը, իսկ միւսը՝ նորա ձախ կողմը կը խաչին։ Թէպէտև նորա այս բանը արին իրենց կարծիքով իբր անարդանք, բայց Ս. Գրոց խօսքը կատարուեցաւ թէ «Նա անօրինաց կարգը դասուեցաւ» (Եսայ. ԾԳ. 12)։

Վերոյիշեալ չորս գինուորները, որոնք զՅիսուս խաչի վրայ գամեցին, նորա հանդերձները չորս մասերի բաժանելով՝ վիճակաւ իւրաքանչիւրը իւր բաժինը առացաւ, բայց նորա պատմուճանին

վրայ, որ առանց կարանի էր, առանձին վիճակ ձգեցին, չուզելով զայն պատառել։ Այ՛ս գինուորք այս բանը այսպէս կարգադրեցին, որպէս զի իրենց միջև կռիւ չը լինի, բայց այս պարագայում ևս Յիսուսի նկատմամբ Դաւիթ մարգարէի մի կանխասացութիւնը կատարուեցաւ թէ՝ «Հանդերձներս իրենց մէջ բաժանեցին, և պատմուճանիս վրայ վիճակ ձգեցին» (Սաղմ. ԻԱ. 12)։

Այստեղ հիացման արժանի է Տէր Յիսուսի անսահման համբերութիւնն ու գթութիւնը. որովհետև մինչև այն ժամանակ անտանելի չարչարանաց լուռ ու մունջ տանելէ զկնի՝ գինքը ի խաչ հանողների համար Հօր Աստուծոյ աղաչանք կանէ ասելով. «Հայր, ներէ և թողութիւն տուր սոցա, զի չգիտեն թէ ինչ կը գործեն։» Այս կերպով իւր անյաղթելի զօրութիւնը ցոյց տուաւ, քանի որ թշնամւոյն վրայ բարկանալ ու վրէժխնդիր լինել՝ տկարութեան նշանակ է։

Նորա թշնամի հրէայք, որոնք այնտեղէն կանցնէին, ծաղրելով և գլուխնին շարժելով կասէին. «Ափսո՜ս որ տաճարը քակելով երեք օրէն պէտք է շինէիր. եթէ արդարև Աստուծոյ որդի ես, խաչէն իջիր և ազատ գինքդ։» Նմանապէս քահանայապետները, դպիրներն ու ծերերը միաբերան կասեն. «Ուրիշները փրկեց, բայց գինքը փրկելու անկարող է. եթէ Իսրայէլի Թագաւորն է, թող այժմ իջնէ խաչէն, որ հաւատանք իրեն.

եթէ յԱստուած յուսայ, թո՛ղ ազատէ, եթէ կամի զայն. քանզի ասայ թէ Աստուծոյ որդի եմ։»

Ա՛յս եղանակաւ նոյն իսկ երկու աւազակները, որոնք Յիսուսի հետ խաչը հանուած էին, կը նախատէին զայն. մանաւանդ ձախակողմեան աւազակը կը հայհոյէ՝ ասելով. «Զի՞ որ դու ես Քրիստոս, ուրեմն վրկէ զքեզ և մեզ։» Սակայն աջակողմեան աւազակը՝ Յիսուսի հեզութիւնը և իւր թշնամեաց համար ազօթելը տեսնելով կը զղջայ, և իւր ընկերին սաստելով կասէ. «Դու Աստուծմէ չե՞ս վախնար, որ նոյն պատժոյն ենթակայ ես. և արդար է որ մենք՝ մեր գործոց համեմատ կը պատժուինք. բայց Սա ոչինչ չար գործեց։»

Խելամուտ եղիր ասա թէ յանցանքը ճանաչելով՝ ուղիղ սրտով զղջացողը ինչ մեծ ողորմութեան արժանի կը հանդիսանայ. վասն զի վերոյիշեալ աւազակը՝ թէև ի վաղուց անտի չարագործ, բայց երբ իւր չարագործութիւնը խոստովանելով զղջաց, իսկոյն ի վերուստ շնորհք ևս պարգևեցաւ իրեն, որով Յիսուսի Մեսիա և Աստո՛ծոյ որդի լինելը ճանաչելով ազաղակեց սրտագին. «Ո՛վ Տէր, յիշէ զիս, երբ որ քու թագաւորութեամբդ կուգաս»։ որուն Յիսուս կը պատասխանէ. «Ճշմարիտ կասեմ քեզ որ այսօր ինձ հետ արքայութեան մէջ պէտք է լինիս։»

Ա՛յսեղ Յիսուս իւր Աստուածութիւնը յայտնեց, որպէս զի խելամուտ լինելով զգաստանան. վասն զի ինչպէս որ վերջին դատաստանի օրուամ արդարները իւր աջ կողմը, իսկ մեղաւորները ձախ կողմը կանգնեցնելով՝ արդարները յարքայութիւն պիտի զրկէ և մեղաւորները դժոխք, ահա նշանը Գողգոթա լերան վրայ ցոյց տուաւ, որպէս զի արդարք վհատութեամբ ուրախանան, իսկ մեղաւորք երկնչելով զղջան և ապաշխարեն։

Ուրեմն խրատ առ, ո՛վ մարդ. քանզի ինչպէս որ յիշեալ աւազակը կատարեալ հաւատով զղջաց և Յիսուսի յուսալով թողութիւն գտաւ, նոյնպէս դու էլ, որքան էլ մեղաւոր լինիս, բնաւ մի յուսահատիր, այլ խոնարհութեամբ և ուղիղ սրտով զղջա՛ ու ապաշխարէ, Տէր Յիսուսի ողորմութեանը ապաւինէ, որպէս զի թողութեան արժանի լինիս նման աջակողմեան աւազակին։

Տե՛ս դու ասա սոբրը Աստուածածնայ վիճակը. նա՝ որ իւր մօրաքոյր Մարիամի և Մարիամ Մագդաղենացիի հետ խաչին մօտ կանգնած էր և որոյ հետ էր նաև Յովհաննէս, տեսնելով Յիսուսը այդ վիճակում խաչին վրայ, ադիքը գալարեցան և սիրտը արեամբ լեցուեցաւ, և ո՞վ կարող է բացատրել այն խոր վիշտն ու տագնապը, զոր կրեց Մարիամ Աստուածածինն ի տես իւր խաչեալ Որդւոյն։ Քանզի ինչ չարչարանք որ Յիսուս խաչին վրայ կը քաշէր, նոյնը Աստուածածնին իւր սրտումը կը կրէր, ինչպէս որ Սիմէօն ծերունին նախապէս յայտնած էր անոր (տես Զ-րդ հարցումը)։

Յիսուս խաչին մօտ իւր մայրը տեսնելով՝ Յովհաննէսին համար ասաց մօրը թէ «Ահա քու որդին», և Յովհաննէսին էլ ասաց. «Ահա քո մայրդ». այն ժամանակէն Յովհաննէս իւր մօտ առաւ սուրբ Աստուածածինը և իրրև որդի միշտ կը ծառայէր նմա խորին յարգանօք և պատուով (այս մի մեծ և անժխտելի ապացոյց է որ Յիսուս ըստ մարմնոյ հարազատ եղբայր չունէր, ինչպէս որ ոմանք շատ անտեղի կերպով հակառակը կը պնդեն):

Իրաւ է որ Յիսուս իւր կապակից մօրը լինելը յատկապէս շատ անգամ յայտնած էր, այս անգամ ևս յայտնելու համար բարձրաձայն ազաղակեց խաչին վրայ. «Էլի էլի լամասաբաքթանի» (Աստուած իմ, Աստուած իմ ընդէ՞ր թողեր զիս), զոր այնտեղ գտնուողներէն ոմանք լսելով կասեն թէ Եղիան օգնութեան կը կանչէ (երբայեցերէն լեզուն չը գիտնալով):

Ա՛յնուհետև Յիսուս գիտցաւ թէ ամէնայն ինչ կատարեալ է, ասաց. «Ծարաւի եմ». որպէս զի իւր համար գրուածը կատարուի թէ «Ծարաւի եղած ժամանակս քացախ խմեցին ինձ» (Սաղմ. ԿԸ. 23). այնտեղ ամանով քացախ պատրաստ գտնուելով՝ գինուորաց մին՝ քացախի հետ լեղի խառնուած սպունգը կը լեցնէ և մի եղեգան միջոցաւ կը խմցնէ Յիսուսի, իսկ ոմանք կասեն. «Թոյլ տուէք, տեսնենք թէ Եղիան կուգա՞յ զայն փրկելու»:

Ա՛յն ժամանակ Յիսուս՝ «Ամէնայն ինչ կատարեալ է» ասելով՝ բարձրաձայն կը կրկնէ. «Հայր, քու ձեռքդ կաւանդեմ հոգիս» և, գլուխը խոնարհեցնելով, կամաւ կաւանդէ հոգին, որով մարդկային ազգի մեղայ քաւութիւն եղաւ[1], այն մեղայ՝ որ Ադամայ անհնազանդութեան հետեւանքն էր (տես առաջին դարու ԽԹ-րդ հարցումը):

Ա՛րդարև, ինչպէս որ (տես չորրորդ դարու ԽԹ-րդ հարցումը) քահանայապետը տարին մի անգամ Իսրայէլի բանակէն դուրսը մի անարատ և լուծի ներքև չը մտած կարմիր կով զոհելով, արիւնը իւր մատով եօթն անգամ խորանին վրայ կը սրսկէր, որպէս զի ժողովրդեան մեղաց քաւութիւն լինի, նմանապէս մարդկային ազգի մեղաց թողութիւն լինելու համար՝ Յիսուս Երուսաղէմէն դուրս ի խաչ ելաւ. քանզի յիշեալ կովը՝ օրինակ էր անոր:

Ա՛հա այստեղ կատարուեցան լիովին բոլոր մարգարէից գրուածները, զորս գրած էին Յիսուսի խաչելութեան և մահուան համար. նոյնպէս կատարուեցաւ Դաբրիէլ հրեշտակի՝ Դանիէլ մարգարէին ասած խօսքը թէ՝ 490 տարի յետոյ պէտք

1. Դարձաւ Յիսուս և ասէ ցնոսա. գտերբ ե-
ղուսաղէմի՝ մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ
անձանց և ի վերայ որդւոց ձերոց. Ղուկ. ԻԳ. 27—46.
—Մատթ. ԻԷ. 33.—Մարկ. ԺԵ. 22.—Յովհ. ԺԹ. 17.

է Մէսիան մեռնի, և նորա մահուամբ մարդկային մեղաց պէտք է քաւութիւն լինի (տես հարցում առաջին)։

Այստեղ կը վերջանայ հինգերորդ դասը. վեցերորդ դասը՝ կը զանազանուի հինգերորդէն Քրիստոսի Ս. յարութեամբ և առաքելոց ձեռամբ Ս. աւետարանը քովանդակ աշխարհի քարոզուելով՝ քրիստոնէական ս. հաւատոց հաստատութեամբ. և այս դասը կը տևէ մինչև աշխարհի կատարածը։

Հարցո–՛ ԾԴ.

Ցիսուս քանի՞ ժամ մնաց խաչին վրայ.

Պաս. Վեց ժամ. որովհետև ժամը երեքին է խաչ ելաւ և իննին մեռաւ։ Սակայն երբ ժամը վեց եղաւ՝ արեգակը խաւարելով բոլոր աշխարհս մթութեան մէջ ընկղմեցաւ, իսկ ժամը իննին՝ երբ իւր հոգին աւանդեց, խաւարը փարատելով՝ նորէն լոյս եղաւ։ Այստեղ կատարուեցաւ Աւազանին լոյս եղաւ։ Այստեղ կատարուեցաւ Աւազանին երրորդ աւուր համար մարգարէական պատգամը թէ՝ «Մի օր պիտի լինի, որ յայտնի է Աստուծոյ և որ՝ ո՛չ ցերեկ է և ո՛չ գիշեր, ու երեկոյեան լոյս պէտք է լինի[1]։»

Ցիրաւի Ցիսուս իւր մասին Մէսիա և Աստուածոյ որդի եմ ասելուն համար հրէայք գայն խաչը հանեցին, բայց նորա Մէսիա ու Աստուածոյ որդի լինելը բոլորին յայտնի լինելու համար, Աստուած յատկապէս արեւու լոյսը խափանեց, որպէս զի մարդիկ խելամուտ լինելով՝ հաւատան անոր և աստուածային ողորմութեան արժանանան։ Արդ՝ Ցիսուսի մահուան ժամանակ խաւարը փարատելով նորէն լուսանալը՝ նշանակ է թէ նորա շնորհաց լուսով մարդկային հոգիները պէտք է պայծառապէս լուսաւորուին։

1. Եղեցի օր մի, և օրն այն յայտնի Տեառն. ո՛չ տիւ եցէ՝ և ո՛չ գիշեր. և ընդ երեկս եղեցի լոյս. Զաք. ԺԴ. 7.

Բայց յայտնեն, տաճարին վարագոյրը՝ որ սրբութիւն սրբութեանցի առջև կախուած էր, իսկոյն վերէն մինչև վար պատռելով երկուքի ձեղքուեցաւ, երկիրը շարժելով տատանեցաւ, վէմ քարերը պատռելով՝ գերեզմանները բացուեցան և շատ սուրբեր՝ Յիսուսի յարութենէն ղկնի կենդանացան և Երուսաղէմ գալով շատերին երեւցան, որով Յիսուսի յարութիւնը հաստատեցին իրենց հրաշալի ներկայութեամբ։

Բայց խելամուտ եղիր. որովհետև հին օրէնքը նոր օրինաց ստուերն էր, (ինչպէս որ յորդորդ դարու Ե-րդ հարցումի մէջ յիշուեցաւ), այս պատճառաւ Յիսուսի մահուամբ տաճարի վարագոյրը պատռեցաւ, որպէս զի ամենուն յայտնի լինի թէ հին օրէնքը վերջացաւ և նոր օրէնքը յայտնուեցաւ։ Նմանապէս, երբ Յիսուս ծաղկազարդի օրը մեծ փառքով Երուսաղէմ կուգար և ժողովուրդը ովսաննա կաղաղակէր, փարիսեցիք նախանձելով ասացին. «Սատե աշակերտացդ որ լռեն». Յիսուս նոցա պատասխանած էր. «Եթէ դորա լռեն, քարերը կաղաղակեն» (տես Ե-րդ հարցումը). ահա այստեղ այդ խօսքը կատարուեցաւ։ Արդարև Յիսուս խաչը ելած ժամանակ մարդիկ ովսաննա ասելով չը փառաւորեցին զայն, բայց անշունչ արարածները աստուածային հրամանաւ շարժելով՝ վկայեցին նորա Աստուծոյ որդիութեան և փառաւորեցին զայն աքանչելապէս։

Անշունչ արարածոց այսպիսի շարժողութիւնը մի բնական պատահմունք չը կարծուելու համար, մեռեալք ևս յառնելով՝ մարդոց աղաղաքեցին կենդանի բարբառով։ Այս մասին ո՛չ թէ միայն մեռեալք վկայեցին, այլ նաև ժամանակակից գիտնական անձինք այդ հրաշալի երևոյթները կամ նշանները տեսնելով՝ պատմական տարեգրութեանց մէջ արձանագրեցին։ Ինչպէս որ Աթենացի Դիոնէսիոս անուամբ դիտնական, փիլիսոփայ և աստղագէտ մի անձ, որ նոյն միջոցին գործոց պատճառաւ Աթենայէն Արեգ քաղաքը եկած էր (Դամասկոսի մօտ), Յիսուսի մահուան ժամանակ պատահած խաւարը տեսնելով, և պատճառը հետազօտելէ դկնի իմացաւ որ բնական մի պատահմունք չէ այն, ուստի զարմանքով խառն երկիւղիւ լեցուած՝ արձանագրեց պատմութեան մէջ այսպէս. «Կամ երկիրը կը կործանի կամ թէ բնութեան Արարիչը կը չարչարուի»։ Այս պատճառաւ յետ ժամանակաց, երբ Պօղոս առաքեալը Աթէնք գնալով Ս. ատեառնը կը քարոզէր, Դիոնէսիոս ինքը հաւատալէն զատ (Գործ. ԺԷ. 34), այլոց ևս կը քարոզէր թէ Յիսուս՝ Աստուծոյ որդի է, ինչպէս որ յայտնի է նորա պատմութեան գրոց մէջ։

Եւ որովհետև այն օրը ուրբաթ էր, խաչը հանուածներուն ոտքերը կոտրելու և գանոնք վար իջեցնելու համար հրեայք Պիղատոսէն կը խնդրեն որ նոցա մարմինները խաչի վրայ չը ձգան մինչև

շաբաթ. ուստի վինուորք գալով՝ աւազտկաց ազգերը կոտրեցին, որով նոքա մեռան, և զանոնք ի՛ջեցնելով վերուցին: Սակայն Յիսուս արդէն մեռած լինելով, թէև անոր չդպան, բայց զինուորին մէկը դեղարդով նորա կողը վիրաւորելով, իսկոյն արիւն և ջուր ելաւ: Ա՛յսպէս կատարուեցաւ այն պատգամը թէ՝ «Նորա ոսկրը չը պիտի փշրուի[1]:» Նոյնպէս կատարուեցաւ մարգարէական այն խօսքը թէ՝ «Պիտի հայիմ Անոր, զոր խոցեցին[2]:»

Յիսուսի կողէն արիւն և ջուր երևելը՝ նշան էր նորա կատարեալ Աստուած և կատարեալ մարդ լինելուն, քանի որ Նա՝ իւր Աստուածութեամբ անմահ լինելով՝ մարմնով մեռաւ. նաև արիւնը՝ սուրբ պատարագի, իսկ ջուրը մկրտութեան խորհուրդը յայտնելու համար էր[3]: Հարիւրապետը, որ վինուորաց հետ Յիսուսը կը պահպանէր, վերոյիշեալ հրաշքները տեսնելով՝ կը խոստովանի թէ նա արդարև «որդի Աստուծոյ էր և փառք կուտայ Աստուծոյ: Ժողովուրդէն ևս ոմանք չարասիրտ մարդիկ չը լինելով՝ միայն տեսարանը դիտելու եկած

1. Եւ զոսկր մի բեկանիցէք ի նմանէ. Ելից. ԺԲ. 46.
2. Հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն. Զաք. ԺԲ. 10.
3. Քարոզն ի սքանչելեաց՝ Աստուած մարմնով վասն իմ նաչեալ. մեռով բնութեամբս մեռանի՝ Աստուած անմահ խոստովանի. կրկնավտակ կողին աղբերք՝ եկեղեցի իւր հաստատի. Ջրովն մաքրի, զարիւնն ըմպէ՝ զորդի ընդ Հօր փառաւորէ. Շար. Ծ.

էին և իրենց կուրծքերը ծեծելով՝ տրտմութեամբ ետ կը դառնային:

Նմանապէս Յիսուսի բոլոր ծանօթներն ու շատ կանայք, որոնք Գալիլեայէն նորա հետէն եկած էին, հեռուէն նայելով՝ կուլային ու կը կոծէին: Ա՛յստեղ կատարուեցաւ Մովսէս մարգարէի ձեռամբ Ս. Գրոց մէջ գրուած այն պատգամը թէ՝ «Քու կեանքը աչացդ առջև կախուած լինի[1]:» Արդարև Յիսուս՝ որ յաւիտենական կեանք է և ամենուն կենդանութիւն տուող, մարդկային ազգը մեղքէ փրկելով՝ երկնաւոր կենաց արժանացնելու համար խաչին վրայ մեռած կախուեցաւ:

Տե՛ս դու Յովսէփ Արեմաթացիի առաքինութիւնը. սա՝ մի արդար և բարեգործ անձ էր, որ և Աստուծոյ արքայութեան ակն ունէր ու Յիսուսի աշակերտած լինելով՝ նորա թշնամեաց խորհուրդներին երբէք հաւան չէր գտնուած: Ա՛յս անձը թէև նախանձոտներէն երկնչելով՝ Յիսուսի աշակերտ լինելը չը յայտնեց, բայց նորա մահէն վերջ՝ այլ ևս ո՛չ ոքէ չը քաշուելով՝ ամենայն համարձակութեամբ Պիղատոսին կը դիմէ և Յիսուսի մարմինը կը խնդրէ պատուով թաղելու համար: Պիղատոս զարմացած՝ թէ Յիսուս այսքան շուտ մեռած է, երբ հարիւրապետը կոչելով կատուգէ նորա մա-

1. Եւ եղիցին կեանք քո կախեալ առաջի աչաց քոց. Բ. Օրին. ԻԸ. 66.

հը, մարմինը կը շնորհէ Յովսէփայ։

Ա.յն ժամանակ Նիկոդիմոս ևս, որ յառաջագոյն գիշերանց Յիսուսի մօտ եկած էր, (ինչպէս ԺԹ-րդ հարցումի յիշեցինք), հարիւր լիտրի չափ զմռսախառն հալուէ կը բերէ, (մէկ լիտրը 96 տիրէմ է) և Յիսուսի մարմինը խոչէն իջեցնելով՝ հրէից սովորութեան համեմատ (ինչպէս սովոր էին անել մեծ մարդկան) կը պատանեն հանդերձ խընկովը։ Սակայն, որովհետև ժամանակը ուշ էր և Յովսէփ այնտեղին մօտ մի պարտէզ ունէր, յորում քարէ փորուած մի մեծ այր կար, ահա այս քարայրում իրեն համար փորել տուած մի կտածոյ նոր գերեզմանի մէջ կը թաղեն զՅիսուս և վրան կափարիչ վէմ մի դնելով կը վակեն. այս վէմ քարը ցայսօր մեր Ս. Փրկիչ վանքում կը գտնուի։

Կը պատմուի թէ այդ մի և նոյն տեղում Երուսաղէմի եղկելիա թագաւորին Սօմնաս անուամբ վերակացուն՝ իրեն համար գերեզման փորել տուաւ. այս մասին Եսայի մարգարէն զայն յանդիմանելով՝ վճիռ արձակեց որ նա պէտք է տմայի անապատում մեռնի (Եսայ. ԻԲ. 15). արդարև վերոյիշեալ Սօմնաս՝ մարգարէի վճռոյն համաձայն բաբելոնի անապատում մեռաւ, որով ապա Յովսէփ Արամաթեացին գնեց այդ տեղը։ Դարձեալ, Յիսուսի գերեզմանին վրայ դրուած կափարիչ վէմին համար կը պատմուի թէ՝ (երրորդ դարու ԻԲ-րդ հարցումի յիշուած) այն քարն է, զոր Յակոբ նահապետ

Խառան գնալու ժամանակ հրաշալի տեսիլը տեսնելէ վկնի՝ զարթնելով օծեց իւղով իբրև նշանաքար [1]։

Ա.յդ միջոցին Մարիամ Մագդաղենացին և այլ առաքինի կանայք գերեզմանին մօտ լինելով՝ տեսան թէ Յիսուսի մարմինը ո՞ւր և ինչպէ՞ս թաղեցին։ Սոքա փափաքելով նորէն զմռսելով օծել նորա մարմինը, ոմանք ի նոցանէ իսկոյն կը գնան ու կը պատրաստեն անուշահոտ իւղեր և խունկ, բայց Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամը գերեզմանին առջև սակաւ ժամանակ մի ևս նստելով՝ ժամանակը կուշանայ, ուստի այն երեկոյ իրենց մտադրութիւնը ի գործ դնել չը կարողանալով՝ կը խորհին որ շաբաթը անցնելէ յետոյ կիւրակէ օրը գան և Յիսուսի մարմինը նորէն օծեն ըստ իւրեանց փափաքանաց [2]։

---

1. Որպէս գրէ զայսպանէ Ծօհան Ծործորեցի ի մեկնութեան Մատթէոսի. Ի.Է. 66.

2. Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ ի վերուստ մինչև ի վայր, երկիր շարժեցաւ, և վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. Մատթ. Ի.Է. 51—61.—Մարկ. Ժե. 38.—Ղուկ. Ի.Գ. 44.—Ծովհ. ԺԹ. 31.

Հաբյո–ՏԾԵ.

Յիսուսի թշնամիները վերոյիշեալ հրաշքները տեսնելով զղջացին արդեօք.

Պապ. Զը զղջացին. ընդհակառակն, սաստիկ հպարտ և յամառ լինելով՝ աւելի չարացան։ Ինչպէս յաջորդ օրը քահանայապետներն ու փարիսեցիները Պիղատոսին դիմելով՝ պինուոր խնդրեցին երեք օր Յիսուսի գերեզմանը պահպանելու համար, որպէս զի՝ ըսուցէ աշակերտները դիշերանց նորա մարմինը գողանալով ասեն թէ յարութիւն առաւ, քանի որ Յիսուս շատ անգամ ասած էր թէ խաչը ելնելով՝ երեք օր յետոյ յարութիւն պիտի առնէ։

Բայց յայտնի է, որպէս զի ոչ ոքի կողմանէ մի խարդախութիւն չը լինի, պինուորաց հետ խիստ մեծ զգուշութեամբ գերեզմանի դուռն էլ կը կնքեն[1]։ Եւ որովհետև Մարիամ Մագդաղենացին Յիսուսի մարմինը զմռսել կը փափաքէր, լսելով թէ գերեզմանը պահպանելու համար պինուոր յատկացած է, շաբաթ երեկոյ արևը մայր մանելէ յետոյ միւս Մարիամի հետ գերեզմանը տեսնելու

1. Եւ ի վաղիւ անդը՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիք առ Պիղատոս։ Եւ ասեն. Տէ՛ր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէը, մինչ կենդանին էր՝ թէ յետ երից աւուրց յառնեմ. Մատթ. ԻԷ. 62—66.

կուգայ, որպէս զի յաջորդ օրը զմռսելու եկած ժամանակ՝ ինչպէ՞ս ներս մանել պէտք է, այդ մասին հարկ եղածը կարգադրէ։

Յիրաւի պինուորաց ընթացքին նայելով՝ քանի որ բազմաթիւ էին և մեծ զգուշութեամբ կը պահպանէին, յայտնի էր թէ դժուար էր իրենց մեռադրութիւնը ի գործ դնել, այսու ամենայնիւ շաբաթը անցնելէ յետոյ առաւոտ երկիւղի Յակոբի մայր Մարիամի և Սողովմէի հետ գնալով՝ հարկ եղած նիւթերը կը պատրաստեն։ Սակայն, կէս գիշերէն զկնի Յիսուս յարութիւն առած լինելով՝ ներս մանելու դժուարութիւն մնացած չէր բնաւ. վասն զի նոյն միջոցին երկիրը շարժելով՝ հրեշտակը ձիւնի պէս սպիտակ հանդերձով փայլակի նման կերևի և գերեզմանի դրան քարը մէկդի գլորելով՝ անոր վրան կը նստի. իսկ պահապանք այսպիսի ահաւոր երևոյթը տեսած ժամանակ՝ այն աստիճան կը խռովին ու կը վախնան, որ մահուան կերպարան կառնան։

Երբ նոքա այսպէս բոլորովին շուարած՝ անյուշ դրութեան մատնուած էին, կիւրակէ օր խիստ կանուխ դեռ արևը չը ծագած՝ Մարիամ Մագդաղենացին միայնակ գերեզմանը գալով՝ երբ տեսաւ թէ կափարիչ վէմ քարը ի բաց առնուած է, և կարծելով թէ Յիսուսի մարմինը վերուցած են անկէ, մեծ արտութեամբ իսկոյն կը վերադառնայ Պետրոս և Յովհաննէս առաքելոց իմաց տալու

համար. քանզի չէր գիտեր թէ յարութիւն առած է։

Ա.յն ժամանակ Պետրոս և Յովհաննէս մեծապէս զարմացած՝ իսկոյն կը դիմեն գերեզմանավայրը. Յովհաննէս երիտասարդ լինելուն համար, թէև Պետրոսէն յառաջ կը հասնի, բայց ներս չը մտներ, այլ միայն ծռելով դէպի ներս նայած ժամանակ՝ կը տեսնէ պատանքը, որ այնտեղ կը գըտնուէր։ Ապա պետրոս գալով՝ երբ կը մտնէ գերեզմանը, կը տեսնէ պատանքն ու գլխու վարշամակը, որ պատանքին հետ չէր, այլ առանձին մի կողմում ծալուած կը մնար. այն ժամանակ Յովհաննէս ևս մտնելով ներս՝ կը հաւատայ թէ Յիսուսի մարմինը գողցուած է[1]։ Ոմանք կասեն թէ Յովհաննէս հաւատայ թէ յարութիւն առած է. որովհետև դեռ չէին գիտեր թէ յարութիւն պիտի առնէ. ուստի վերադառնալով կը գան միւս առաքելոց մօտ. Մարիամ Մագդաղենացին ևս նոցա հետ կը գնայ։

Երբ որ սոքա գերեզմանէն հեռացան, շատ չանցած միւս կանայք՝ որոնք ուրբաթ երեկոյ հարկաւոր եղած անուշահոտ իւղն ու խունկը պատրաստած էին Յիսուսի մարմինը օծելու համար, գերեզմանը կուգան, և դուռը բաց գտնելով, թէպէտ ներս կը մտնեն, բայց նորա մարմինը անդ չը

1. Որպէս գրէ Նեղոսէս Լամբրոնացին և Նեղբողական ճառն՝ որ ի համբարձումն Քրիստոսի.

գտնելով՝ մինչ զարմանախառն երկիւղիւ լեցուած կսպասէին, մարդկային կերպարանքով երկու հրեշտակ լուսապայծառ հանդերձով նոցա երևնալով կասեն. «Ինչո՞ւ համար կենդանին մեռելոց մէջ կը փնտռէք. այստեղ չէ նա. յարութիւն առաւ. յիշեցէք որ Գալիլեայում ձեզ ասաց թէ խաչը ելնելով՝ երրորդ օրը յարութիւն պէտք է առնէ։» Նոքա այս մասին նախապէս Յիսուսի ասածը մտաբերելով՝ իսկոյն կը գնան առաքելոց և նոցա հետ գտնուող բոլոր աշակերտաց կը պատմեն ինչ որ տեսան և լսեցին։

Վերոյիշեալ կանանց գերեզմանէն մեկնելէն անմիջապէս յետոյ, Մարիամ Մագդաղենացին, որ անտեղեակ էր նոցա գալստեան, դարձեալ գերեզմանավայրը կուգայ. և երբ դուրսը կեցած կուլար, և ծռելով դէպի գերեզման՝ ներս կը նայի, ահա երկու սպիտակ հանդերձով հրեշտակներ կը տեսնէ, որոց մէկը Յիսուսի մարմնոյն գտնուած տեղւոյն գլխի կողմը, իսկ միւսը՝ ոտից կողմը նըստած էր։ Հրեշտակները անոր կը հարցնեն թէ ինչո՞ւ կուլայ. Մարիամ կարծելով թէ նոքա մարդիկ են, կը պատասխանէ. «Իմ տէրս այստեղէն վերուցին և չեմ գիտեր թէ ո՞ւր դրին զայն։»

Մինչդեռ Մարիամ զայս կը պատասխանէր հրեշտակաց, ահա ինքն իսկ Յիսուս կերևի պարտիզում. հրեշտակները զայն տեսնելով՝ յարդանաց մի շարժում կանեն. երբ Մարիամ դառնալով դէպի

եաև կը նայի, թէև կը տեսնէ զՅիսուս, բայց կը կարծէ թէ պարտիզպանն է. Յիսուս կը հարցնէ ա-նոր թէ՝ «Ինչո՞ւ կուլաս և ո՞վ կը խնդրես». Մարիամ կը փութայ պատասխանել. «Տէր, եթէ դու վերուցիր զայն, ասա ինձ, որ ես առնեմ զայն։»

Յիրաւի Մարիամ սրտառուչ և սաստիկ սիրով ու արտասուօք Յիսուսը որոնելով գտաւ զայն, սակայն չը ճանաչելուն համար՝ Յիսուս հաձեցաւ նորա անունը տալով՝ ինքը յայտնել անոր, որպէս զի իրեն յարութիւն առած լինելը իմանալով մխիթարուի։ Ա.յն ժամանակ Մարիամ զայն ճանաչելուն պէս՝ վարդապետ ասելով՝ կամեցաւ նորա ոտից փարել, կարծելով թէ այլ եւս ուրիշ անգամ կարող չը լինիը զայն տեսնելու։

Սակայն Յիսուս՝ որ քառասուն օր երկրի վրայ պէտք է մնար իւր յարութիւնը հաստատելու համար, կարգիլէ զայն իրեն մերձենալու, այլ կը պատուիրէ իսկոյն գնալ և առաքելոց լմաց տալ, որպէս զի նոքա եւս մխիթարուին և քաջալերուին ամենան. այս պատճառաւ Եղբայր անունը կուտայ նոցա։ Մարիամ ըստ պատուիրանին Յիսուսի կը փութայ անմիջապէս գնալ և պատմել առաքեալներին և այլ աշակերտներին թէ ինքը տեսաւ Տէր Յիսուս Փրկիչը, միանգամայն հաղորդելով նոցա՝ նորա մխիթարական և քաջալերիչ խօսքերը։

Երբ Մարիամ Մագդաղենացին կը պատմէր

առաքելոց Յիսուսի յարութիւնը, նոյն միջոցին Յակոբի մայրն Մարիամ Կղէոպպայ և Սողովմէ՝ արևագալի ժամանակ, ինչպէս նաև ուրիշ կանայք գերեզման կուգան առանց տեղեկութիւն ունենալու իրարմէ, և որովհետև գիտէին թէ գերեզմանին դուռը վակուաճ է մի կափարիչ վէմ քարով, այս պատճառաւ ճանապարհին վրայ միմեանց կը հարցնեն թէ ո՞վ պէտք է քարը թաւալեցնէ մեզ համար. քանզի շատ մեծ էր այն և իրենք չէին գիտեր թէ հրեշտակը արդէն թաւալեցուցած է զայն։

Սոքա երբ որ գալով կը տեսնեն քարը մէկդի առնուաճ՝ ներս կը մտնեն և գերեզմանի աջ կողմը սպիտակ հանդերձով մի երիտասարդ տեսնելով, որ հրեշտակ էր, կը վախնան յոյժ, բայց հրեշտակը կասէ նոցա. «Մի վախնաք. գիտեմ որ Նազովրեցի խաչեալ Յիսուսը կը փնտռէք. Նա յարութիւն առաւ. այստեղ չէ, ահա՛ նորա տեղը, ուր դրին զայն. ուստի գնացէք և ասացէք նորա աշակերտաց ու Պետրոսին թէ ձեզմէ առաջ Գալիլեայ կը գնայ և այնտեղ կը տեսնէք զինքը, ինչպէս որ ձեզ ասած է արդէն։»

Իրաւ է որ հրեշտակի սոյն խօսքերը լսելով՝ վերոյիշեալ կանայք շատ ուրախացան, բայց նախապէս իրենց զգացած երկիւղին պատճառաւ խոյս տալու պէս այն աստիճան ճանապարհին իրենց տեսած երևոյթի մասին ոչ

մի խօսք կը փոխանակեն և ո՛չ իսկ այլոց մի բան կասեն։ Այսպէս երկիւղիւ պաշարուած դնալու ժամանակ՝ Յիսուս նոցա սիրտը հանդարտեցնելու համար յայտնուեցաւ նոցա ասելով՝ «Ես Եմ»։ իսկ նոքա Յիսուսի ոտքն ընկնելով՝ երկրպագութիւն կը մատուցանեն Անոր։

Եւ ինչպէս որ հրեշտակը ասած էր, նմանապէս Յիսուս կասէ նոցա. «Մի՛ վախնաք, գնացէ՛ք, ասացէք եղբարցս որ Գալիլեայ գնան զիս տեսնելու համար։» Թէպէտև այդ երջանիկ կանայք Յիսուսի յարութեան վրայ խնդութեամբ լեցուած՝ նորա պատուէրին համաձայն գնալով կը պատմեն առաքեալոց, բայց նոցա խօսքերը ղաղփաղփա-ին-ա թուելով՝ չեն հաւատար, ինչպէս նաև Մարիամ Մագդաղենացւոյն ևս չը հաւատացին։

Այն ժամանակ Պետրոս նորէն կը գնայ գերեզմանը, որպէս զի իրողութիւնը քննելով ստուգէ. երբ այնտեղ պատանիքէն զատ մի բան չը տեսնելով, զարմացած ինքնիրեն կը հարցնէր թէ արդեօք ի՞նչ եղաւ, ու այսպիսի խորհուրդներով միտքը զբաղած կը վերադառնար, Յիսուս անոր էլ երևցաւ Ճանապարհին վրայ (Ա. Կորն. ԺԵ. 5)[1]։

---

1. Որպէս զրէ Իգնատիոս վարդապետն՝ ի մեկնութեան Ղուկասու. ԻԹ 4.—Եւ Բարսեղ վարդապետն՝ ձոն անուանեալ, ի մեկնութեան Մարկոսի. ԺԶ. 4.

Այն օրը երկու անձինք, որոնք Յիսուսի աշակերտած էին, Եմմաուս գիւղը գնալու ժամանակ Ճանապարհին վրայ միմեանց հետ կը խօսէին պատահած այս ամէն անցքերի վրայ, և ահա Յիսուս Ճանապարհորդի կերպարանքով նոցա մօտենալով կը հարցնէ. «Ի՞նչ բանի վրայ կը խօսիք և վիճաբանելով հանդերձ տրտմած էք»։ զայս ասելով նոցա կընկերանայ. սակայն նոքա չը ճանաչելով զայն, աշակերտներէն մին՝ որուն անունը Կղեոպաս էր, կասէ Յիսուսի. «Դո՞ւ միայն կաս Երուսաղէմ, որ չգիտես թէ ինչ անցքեր անցան նորա մէջ»։ իսկ Նա չը գիտնալ ձևանալով կը հարցնէ թէ ի՞նչ պատահած է, որպէս զի նոքա իրենց բերանով խոստովանին։

Երկու աշակերտները կսկսին պատմել կարգաւ Յիսուսի մեծ և հրաշագործ ղօրութիւնը, թէ ինչպէս իրենք յուսացած էին որ Նա պէտք է փրկէր Իսրայէլի ժողովուրդը, թէ քահանայապետները երեք օր է որ զայն խաչելով մեռուցին, և թէ մանաւանդ կանայք ումանք իմացուցին մեզ որ Նա յարութիւն առած է։ Այն ժամանակ Յիսուս կը յայտնէ նոցա թէ ըստ Ս. Գրոց ինքը պարտաւոր էր չարչարուելով մեռնիլ և այնպէս մտնել իւր փառաց թագաւորութիւնը. զայս կը յայտնէ, որպէս զի նոքա իրենց հաւատքին մէջ չը գայթակղին։

Երբ որ այսպէս խօսելով դիւղին կը մօտենան,

Յիսուս գիւղը մտնել չը կամենալով՝ թէպէտև առարկեց թէ հեռաւոր մի տեղ պէտք է գնայ, բայց նոքա կասեն. «ժամանակը ուշ է, մեզ մօտ մնացիր»։ և նոցա ստիպմանց վրայ գիւղը մտնելով՝ նոցա հետ սեղան կը բազմի. ապա հացն առնելով կօրհնէ ու բեկանելով կուտայ նոցա, որով նոքա կը ճանաչեն զայն, սակայն Յիսուս իսկոյն կանհետևուեցաւ։ Ա.յս բանիս վրայ երկու աշակերտները այն աստիճան կուրախանան, որ կերակուրը չը կերած՝ իսկոյն ածապարանօք Երուսաղէմ կուգան առաքելոց աւետիս տալու համար։

Սակայն, որովհետև Յիսուսը Գալիլեայում տեսնելու պատուէր եղած էր, կը կարծուի թէ առաքեալք և ուրիշներ այն ժամանակ ժողովուած էին մի տան մէջ, որ կը գտնուէր Զիմենեաց լերան մօտ Գալիլեայ կոչուած տեղում [1]։ Ա.յս պատճառաւ վերոյիշեալ Կղէովպաս և նորա ընկերը Գալիլեայ գնալով՝ առաքելոց կը պատմեն Յիսուսի յարութիւնը և Սիմոնին երևնալը. քանզի նոյն օր լսած էին թէ անոր էլ երևցած է։

Մինչդեռ նոքա այսպիսի խօսակցութեամբ զբաղուած էին, ահա Յիսուս էլ նոցա մէջտեղ կը կենայ և ողջոյն տալով կասէ. «ես եմ, մի՛ վախնաք»։

1. Որպէս գրէ Իգնատիոս վարդապետն՝ ի մեկնութեան Ղուկասու. Ի՛Դ. 40. — Եւ Յովհան Ծործորեցին ի մեկնութեան Մատթէոսի. Ի՛Ը. 16.

բայց որովհետև դուռը փակուած էր, կարծելով թէ երևցողը «զէն է, սաստիկ կը վախնան։ Յիսուս կը քաջալերէ զանոնք ասելով. «Ինչո՞ւ համար կը խռովիք, և ձեր սրտերում խորհուրդներ կանցնին. տեսէք ձեռքերս ու ոտքերս, դիտացէք որ ես նոյնն եմ, «զէն՝ մարմին ու ոսկր չունի, ինչպէս կը տեսնէք որ ես ունիմ։»

Զայս ասելով՝ ձեռներն ու ոտները կը ցուցնէ նոցա, որպէս զի բևեռների վէրքերը տեսնելով հաւատան. այսուամենայնիւ նոքա չափազանց ուրախութեան պատճառաւ տակաւին չը հաւատալով հիացման մէջ էին. Յիսուս ձշմարտապէս յարութիւն առած լինելը նոցա ցոյց տալու համար կը հարցնէ թէ կերակուր ունի՞ն. երբ մի կտոր խորոված ձկան հետ մեղր կուտան, զայնս առնելով նոցա ներկայութեանը կսկսի ուտել և մնացորդը նոցա տալով կասէ. (ինչպէս որ յառաջագոյն ասած էր թէ իւր մասին Ս. Գրոց բոլոր գրուածները պէտք էր կատարուէին, այս անգամ ևս նորէն յիշեցնելով կը յայտնէ թէ բոլորը կատարուեցան). «Ամէն իշխանութիւն ինձ տրուեցաւ երկնքում և երկրի վրայ. ինչպէս որ Հայրս զիս առաքեց, ես էլ զձեզ կառաքեմ, որպէս զի գնաք և բոլոր ազգերին ապաշխարութիւն և թողութիւն քարոզէք։»

Ա.յս խօսքը ասելու ժամանակ փչեց նոցա վրայ ասելով. «Առէք Սուրբ Հոգին. եթէ մէկի

մեղքը Թողու՛ք, Թո՛ղուի անոր, և եթէ չԹողուք, չը Թողուի[1]»։ այս մասին տե՛ս նաև Լ.-րդ հարցումը։

Հարց՝ ԾԶ.

Ըրը Ցիսուսի յարութիւնը յայտնուեցաւ, նորա թշնամիները ի՞նչ վիճակ ստացան.

Պաս. Եատ Թշուառ վիճակ։ Վասն զի՝ (ինչպէս որ վերև յիշուեցաւ) նորա յարութիւն առած ժամանակ ահագին երկրաշարժի և փայլակի նման հրեշտակի երևնալուն պատճառաւ, Թէպէտ նորա գերեզմանը պահպանող բոլոր զինուորք մեռելի կացութեան մատնուեցան, բայց փոքր ինչ ժամանակ անցնելէն յետոյ ոմանք ի յուշ գալով իսկոյն երուսաղէմ գնացին և տեղի ունեցած երեւոյթը քահանայապետաց պատմելով՝ Ցիսուսի յարութիւն առնելը յայտնեցին համարձակ, որով իրողութիւնը ամենուն յայտնի եղաւ. նա՛ մանաւանդ իւղաբեր կանայք անվհեր կը խօսէին Թէ իրենք տեսան յարուցեալ Փրկիչը։

Աչատեղ նկատել արժան է Թէ քահանայա-

---

1. Եւ յերեկոյն շաբաթուն յորում լուսանայր միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն. Մատթ. ԻՀ. 1. մինչև 10 համար.—Մարկ. ԺԶ. 1.—Ղուկ. ԻԴ. 1.—Յովհ. Ի. 1.

պետները գերեզմանը պահպանելու համար զինուոր յատկացնելով՝ զայն կնքեցին, որպէս զի Ցիսուսի մարմինը աշակերտները գողանալով չասեն Թէ յարութիւն առաւ. սակայն նոյն իսկ իրը պահապան յատկացուած զինուորք՝ երբ որ նորա յարութիւն առնելուն յայտնապէս վկայեցին, խեղճ քահանայապետները չափազանց մեծ մտատանջութեան մատնուած՝ այլ ևս չէին գիտեր Թէ ի՞նչ պէտք էր անել։ Վասն զի, ո՛չ միայն պահապանք կը չ'աստատէին Թէ խիստ մեծ զգուշութեամբ պահպանած են իրենք Ցիսուսի գերեզմանը, այլ նաև քահանայապետների կնիքն էլ գերեզմանին վրայ կը մնար առանց աւրուելու և ինքն իր վիճակում բոլորովին անաղարտ։

Ա.յս պարագայում, նոքա զինուորները խօսելէ արդիլելու ուրիշ ճար ու հնար չը գտան, բայց միայն ծերերին հետ խորհրդակցելէ յետոյ՝ մեծաքանակ դրամ կուտան նոցա, որպէս զի ասեն Թէ մենք քնած ժամանակ աշակերտները գալով գողացան Ցիսուսի մարմինը։ Բայց յայտնէ, Պիղատոսէն ևս չը վախնալու համար, կը խոստանան զայն ևս հաճեցնել։

Իրաւ է որ քահանայապետները չափազանց յամառ, Պիղատոս կեղծաւոր, անգութ և իր անձնական շահուն համար գիտակցաբար ճշմարտութեան և իրաւանց դէմ գործելու պատրաստ, իսկ նորա զինուորները արծաթասէր լինելով, Ցի-

սուսի յարուԹիւնը Թաղցնել և ժողովրդեան մէջ հռչակել աշխատեցան Թէ աշակերտները գողցան Յիսուսի մարմինը, բայց որչափ նոքա աշխատեցան տարածել այդ անհեԹեԹ միտքը, նոյնքան աւելի Յիսուսի յարուԹիւնը յայտնի եղաւ ամենուն, քանի որ ո՛և է ողջամիտ մարդ գործը մանրամասնօրէն քննուԹեան ենԹարկած ժամանակ՝ նոցա ստուԹիւնը յիրևան կուգար բացորոշակի: Նա մանաւանդ Յիսուս քառասուն օր ժամանակ առ ժամանակ առաքելոց երևնալովը՝ նորա յարուԹիւնը և հակառակորդաց ստուԹիւնը ամէն կերպով հրաչակուեցաւ:

Ինչպէս որ նոր կիւրակէ օրը Յիսուս կրկին երևցաւ առաքելոց. քանզի զատիկի առաջին օրը երևնալու ժամանակ Թովմաս այնտեղ չէր. երբ վերադարձաւ, Թէպէտև առաքեալք շատ անգամ ասացին անոր Թէ տեսան զՅիսուս, բայց նա ո՛չ մի կերպ չը հաւատալով՝ կասէ. «Մինչև որ նորա ձեռաց և ոտից վրայ բևեռաց նշանները չը տեսնեմ, և մատներովս կողին վէրքերը չը շօշափեմ, չեմ հաւատար:» Թովմասի միտքը Յիսուսի յայտնի լինելով, զատկի ուԹերորդ օրը՝ երբ առաքեալք Թովմասին հետ հրեհաներէն վախնալով՝ իրենց սենեկին դուռը փակած՝ ներսում կը գտնուէին, Յիսուս նոցա մէջ կը կանգնի և ողջոյն տալէ ղկնի, դէպի Թովմաս նայելով՝ ձեռքերն ու կողը անոր կը ցուցնէ, որպէս զի մատները բևեռների տեղը

մխելով հաւատայ:

Յիրաւի Թովմաս յառաջադոյն որքան որ ԹերահաւատուԹիւն ցոյց տուաւ, սակայն Յիսուսը տեսնելէ յետոյ նոյնքան աւելի կատարեալ հաւատով Տէր և Աստուած խոստովանեցաւ զնա: Եւ որովհետև առաքելոց խօսքին չը հաւատալով՝ անպատճառ տեսնել ուզեց հաւատալու համար, ուստի Յիսուս կասէ անոր. «Դուն տեսար և հաւատացիր, բայց երանի նոցա, որոնք չը տեսած կը հաւատան:» Ա՛յս խօսքը՝ որքան որ Թովմասին համար իրը յանդիմանուԹիւն կը համարուի, բոլոր հաւատացելոց համար մեծ մխիԹարուԹիւն է, քանի որ Յիսուսը չը տեսած կը հաւատան Անոր:

Ա՛յնուհետև Պետրոս ուզեց Տիբերիոյ ծովը գնալ ձուկ որսալու համար. Թովմաս, ՆաԹանայէլ, Յակոբոս և Յովհաննէս, ինչպէս նաև աշակերտներէն երկու Հոգի ևս ի միասին կը գնան, բայց այն գիշեր ո՛չ մի բան չեն կրնար որսալ, երբ առաւօտ կը լինի, Յիսուս ծովի եզերքում կերևի նոցա, բայց չեն ճանաչեր զայն: Նա կամեցաւ նախ հրաշագործել և ապա զինքը յայտնել նոցա, վասնորոյ կը հարցնէ. «Մանկունք, ուտելու մի բան ունի՞ք»: նոքա կը պատասխանեն Թէ ո՛չ. այն ժամանակ կը հրամայէ նոցա ուռկանը նաւին աջ կողմը նետել. և երբ կը նետեն, ձկան այնչափ բազմուԹիւն կը լեցուի ուռկանին մէջ, որ չեն կարողանար զայն ցամաքը քաշել. քանզի մանր

ձուկերէն գատ 153 հատ մեծամեծ ձկներ կային. սակայն այսու հանդերձ ուռկանը չը պատռեցաւ։

Ա.ին ժամանակ Յովհաննէս Յիսուսը ճանաչելով, Պետրոսին ևս կիմացնէ, որուն վրայ վերջինս՝ իսկոյն զննջակաւ կը փաթաթուի և առամօթխածութեան գինքը ծովը կը նետէ, քանզի մերկ էր։ Իսկ միւս առաքեալք, որոնք հազիւ երկու հարիւր կանգունի չափ հեռի կը գտնուէին, իսկոյն նաւով կուգան և ուռկանը ցամաք քաշելէ յետոյ կը տեսնեն կրակեզը կայծականց և նորա վրայ մի ձուկ, ինչպէս նաև հաց։ Յիսուս այն հացէն և ձուկէն ինքը ուտելէ զատ՝ նոցա ևս կուտայ ասելով. «Առէք և կերէք»։ և ո՛չ ոք կիշխէր հարցնել անոր թէ դու ո՞վ ես, ինչու որ գիտէին թէ Յիսուսն է։ Ասով երեք անգամ եղաւ որ Յիսուս յարութիւն առնելէ զինի երևցաւ առաքելոց։

Երբ որ ըստ վերոյիշելոյն ձուկն ու հացը կերան, Յիսուս կը հարցնէ Պետրոսի. «Սիմո՛ն, ասոնցմէ աւելի կը սիրե՞ս զիս»։ երբ նա կը պատասխանէ «Տէր, դու գիտես որ կը սիրեմ զքեզ», Յիսուս կասէ անոր. «Արածէ իմ գառներս»։ Ապա երկրորդ անգամ կը հարցնէ թէ «Կը սիրե՞ս զիս»։ նա ըստ առաջնոյն կը պատասխանէ. «Դո՛ւ գիտես որ կը սիրեմ զքեզ»։ Յիսուս կասէ կրկին. «Արածէ ոչխարներս»։ Երբ Յիսուս երրորդ անգամ կը հարցնէ «Սիմո՛ն Յովհաննու կը սիրե՞ս զիս»։ Պետրոս

տրտմեցաւ երեք անգամ հարցնելուն համար և պատասխանեց. «Ո՛վ Տէր, դու ամեն բան գիտես, ու ամենքը կը ճանաչես, և թէ կը սիրեմ զքեզ»։ Յիսուս նորէն կասէ. «Արածէ գառներս»։

Թէպէտև Պետրոսի սիրտը ամէն կերպով յայտնի էր Յիսուսի, սակայն (ինչպէս Ծ.Կ. Հարցում յիշուեցաւ) նա՝ երեք անգամ Յիսուսը ուրացած լինելուն համար, նորա փոխարէն երիցս Հարցուց թէ կը սիրե՞ս զիս, որպէս զի ամենուն յայտնի լինի թէ Պետրոս սաստիկ սիրով և անկեղծ սրտով զղջացած և Թողութիւն գտած էր[1]։ Երբ Պետրոս կատարեալ սիրով ու հաւատով կը խոստովանի թէ կը սիրէ զՅիսուս, նա ևս կը յայտնէ անոր թէ իւր սիրոյն համար խաչը ելնելով վէպ պէտք է լինի, այս պատճառաւ կասէ անոր. «Ե՛կ իմ հետևէն»։

Պետրոս՝ որքան որ Յիսուսը երեք անգամ ուրանալուն համար կը տրտմէր, այնքան աւելի ուրախացաւ, երբ լսեց որ Նորա սիրոյն համար խաչի վրայ արիւն Թափելով պիտի մեռնի. ինչպէս որ Յիսուսի ասածին համաձայն, յետոյ Հռովմի

---

1. Այսօր զվէմն հաւատոյ՝ շարժեալ փորձողին խաբէութեան մարտ առ ի քէն Թողացուցեալ զմարգհայեին տկարութիւնս յանդիմանելով, և առ յոյս դարձի մեղաւորաց՝ որ դառնապէս արտասուելոյն՝ ընկալաւ ի քէն երիւք հարցմամբ սիրոյն՝ զերից ուրացութեանցն զբժշկութիւն. Շար. ԻԶ.

մէջ կամաւ յանձն առաւ խաչուիլ և Աստուծոյ սուրբ անունը փառաւորել: Իրաւ է որ մարդկային բնութիւնը տկար է, և այս պատճառաւ չարչարանքէ ու մահուընէ կը վախնայ, սակայն երբ դիտենք որ ի սէր Յիսուսի չարչարանքով մեռնողը՝ երկնային յաւիտենական կենաց կարժանանայ, շնորհօքն Աստուծոյ բնութիւնը կը յաղթուի:

Յիսուս՝ որ այս խօսքերը ասելէ յետոյ այնտեղէն կը գնար, Պետրոս էլ նորա ետևէն գնացած ժամանակ, դէպի յետ դառնալով կը նայի որ Յովհաննէս ևս կուգայ, և վախաքելով գիտնալ թէ նա ի՞նչ եղանակաւ պէտք է մեռնի, կը հարցնէ Յիսուսի թէ «Սա ի՞նչպէս պիտի լինի»· բայց նա յանդիմանական ձևով կասէ· «Կամիմ որ սա մնայ մինչև ես գամ, քեզ ի՞նչ փոյթ է, դու իմ ետևէս եկ:» Ա յս պատասխանին նայած՝ առաքեալք կարծեցին թէ Յովհաննէս չը պիտի մեռնի, սակայն Յիսուս չասաց թէ չը պիտի մեռնի, այլ կամիմ որ նա մնայ, մինչև ես գամ: Ա յս խօսքով յայտնի եղաւ թէ Յովհաննէս իւր բնական մահուամբ պէտք է մեռնէր: Արդարև Յովհաննէս Յիսուսի համար թէև շատ չարչարանք կրեց, բայց չմեռաւ, մինչև որ խորին ծերութեան հասնելէ վկնի՝ իւր բնական մահուամբ հանգիստ կերպով վախճանեցաւ:

Յիսուս դարձեալ երևեցաւ հաւատացելոց (ինչպէս կը գրէ՝ Ա· Կորն· ԺԵ· 6) Գալիլեայի գաւառում և հաստատեց իւր յարութիւնը· սո-

քա հինգ հարիւր հոգիէն աւելի էին թուով, որ այնտեղ ժողովուած էին, (ոմանք կասեն թէ այս ժողովը Թափօր լերան վրայ տեղի ունեցաւ): Ապա Տէառնէղբայր կոչուած Յակոբայ երևեցաւ (Ա· Կորն· ԺԵ, 7)· և Զատկի քառասներորդ օրը՝ երբ առաքեալք և այլ հաւատացեալք երուսաղէմ քաղաքում գումարուած էին, Յիսուս դարձեալ երևնալով նոցա կը հրամայէ որ քաղաքէն դուրս ելնեն[1]. և զանոնք Բեթանիա գիւղը տանելով նոցա հետ կերակուր կուտէ, որպէս զի բոլորի ներկայութեանը վերստին հաւաստէ իւր յարութիւն առած լինելը:

Ապա Յիսուս կը պատուիրէ նոցա գնալ բոլոր աշխարհ և աւետարանը քարոզել բոլոր հեթանոսաց· հաւատացողները մկրտել յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ուսուցանել նոցա այն ամեն պատուէրները, զորս ինքը աւանդած է իրենց, որպէս զի նոքա, որոնք կընդունին զայնս և ի գործ կը դնեն, երկնաւոր արքայութեան արժանի լինին· որոնք որ հաւատալով մկրտուին՝ փրկութեան, իսկ չը հաւատացողները դատապարտութեան կարժանանան· և հաւատացեալների նշանը յայտնելու համար՝ կը վճռէ որ նոքա իւր անուամբ զանազան հրաշքներ գործելու կարողու-

---

1· Որպէս գրէ Իգնատիոս վարդապետն՝ ի մեկնութեան Ղուկասու· ԻԴ· 50.

թիւն ունենան։ Պարձեալ, որովհետեւ Հոգին սուրբը պէտք է ղրկեր առ նոսա, կը պատուիրէ Երուսաղէմ քաղաքում նստիլ և սպասել, մինչեւ որ զօրութիւն ստանան ի բարձանց (յերկնուստ)։

Եւ որովհետեւ շատերը կը կարծէին թէ Մեսիան՝ Իսրայէլի աշխարհային թագաւորութիւնը պէտք է վերականգնէր, այս պատճառաւ կը հարցնեն Յիսուսի թէ «Ա՛յս ժամուս մէջ Իսրայէլի թագաւորութիւնը յայտնելո՞ւ ես»։ Նա կը պատասխանէ թէ՝ «Ա՛յդ ժամն ու ժամանակը դիտնալ ձեզ հարկաւոր չէ, ինչ որ երկնաւոր Հայրը իւր իշխանութեան վերապահած է։ այլ երբ Հոգին սուրբը ձեր վրայ կուգայ, զօրութիւն ստանալով՝ վկայ կը լինէք ինձ Երուսաղէմի, բոլոր Հրէաստանի, Սամարիոյ մէջ և մինչև ի ծագս աշխարհի» Գործ. Ա. 9։ Այսպէս խօսեցաւ Յիսուս և կարևոր հրահանգներ աւանդեց առաքելոց՝ ի մասին Աստուծոյ հոգևոր թագաւորութեան, որ է քրիստոնէական Ս. եկեղեցին։

Առաքեալներն ու բոլոր հաւատացեալները Յիսուսի վերոյիշեալ խօսքերին նայելով՝ իմացան թէ նոյն օր պէտք է յերկինս համբառնայ, և թէ այլ ևս երկրի վրայ զայն չը պիտի տեսանեն, ուստի առ նա իրենց սրտում զգացած սէրը արտաստօք յայտնելով՝ խորին խոնարհութեամբ երկրպագութիւն մատուցին անոր։ և Յիսուս ձեռքերն դէպի երկինք բարձրացնելով օրհնեց ամէնքը և

խոստացաւ մինչև ի կատարած աշխարհի նոցա հետ լինել։ որպէս զի մխիթարութիւն և քաջալերութիւն ստանան։ Նորա այս խօսքէն կիմացուի թէ նա միշտ ձշմարիտ հաւատացելոց հետ է։ Յետոյ այնտեղէն Զիթենեաց լերան գագաթը եկան, երբ արդէն կէս օր էր, ու այնտեղ Յիսուս հաւատացեալներէն պատուելով, բոլորի ներկայութեանը երկինքը համբարձաւ և Հօր աջ կողմը նստաւ[1]։

Հարցում Ե։

Յիսուս՝ իւր յարութենէն մինչեւ համբարձումը քանի՞ անգամ՝ եւ որո՞ց երեւեցաւ։

Պաւղոս Տառն անգամ, ինչպէս վերը յիշուեցաւ։ Առաջին՝ Մարիամ Մագդաղենացիին, Յակոբ առաջին օրը։ Երկրորդ՝ իւզաբեր կանանց, Ճանապարհին վրայ։ Երրորդ՝ Պետրոսին։ Չորրորդ՝ Եմմաուս գնացող երկու աշակերտաց։ Հինգերորդ՝ առաքելոց և նոցա հետ եղողներին, երբ Թովմաս այնտեղ չէր։ Վեցերորդ՝ Յակոբ ուրբաթ օրը, Թովմասին և միւս առաքելոց։ Եօթներորդ՝ Տիբերիոյ ծովուն եղերքը՝ երբ ձուկ կը բռնէին, Պետրոս, Յակոբոս, Յովհաննէս, Թովմաս և Նաթանայէլ

1. Իբրև նոքա գնացին, ահա ոմանք ի զօրականացն եկին ի քաղաքն՝ և պատմեցին քահանայապետին զամենայն՝ որ ինչ եղեն։ Մատթ. ԻԸ. 11—20 — Մարկ. ՃԶ. 16.—Ղուկ. ԻԴ. 48.—Յովհ. Ի. 24.

առաքելոց ու երկու աշակերտաց: Ուրեմն՝ հինգ հարիւրէն աւելի հաւատացելոց, որոնք Գալիլեայում ժողովուած էին: Իններորդ՝ Զիմենեայ լեռան վրայ բոլոր առաքելոց և այնտեղ գտնուող հաւատացելոց, ուստից յերկինս համբարձաւ: Թէպէտև Սուրբ Աստուածածնայ երևնալը գրուած չէ, սակայն վարդապետք եկեղեցւոյ՝ միաբան կը հաստատեն թէ ամենէ առաջ անոր երևցաւ:

Ինչպէս որ Յիսուս քառասուն օր մեծաւ մասամբ առաքելոց երևնալով՝ տեսակ տեսակ հրաշքներ գործեց և Աստուծոյ արքայութեան համար շատ հրահանգներ աւանդեց (Գործ. Ա. 3), որոնք գրուած չեն, և զորս առաքելոց յանձնարարեց, որպէս զի իրենց քարոզութեանց ժամանակ հարկ եղած եղանակաւ հաւատացելոց աւանդեն թէ բանիւ և թէ գրով. նմանապէս Յիսուս՝ խաչը երևնելէն առաջ որչափ հրաշքներ որ գործեց, բոլորը չը գրուեցան. այլ այնքան գրուեցաւ, որքան հարկ էր հաստատելու համար թէ Նա է Մեսիան և Աստուծոյ որդին, որպէս զի մարդիկ ի միտ առնելով՝ յաւիտենական կեանք ժառանգեն[1]:

1. Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ չէ գրեալ ի գիրս յայսմիկ: Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատասջիք, եթէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ. և զի հաւատասջիք, և զկեանս յաւիտենականս ընդունիցիք յանուն նորա. Յովհ. Ի. 30.—Բայց է և այլ ինչ բազում՝ զոր

Տես դու առաքելոց ուրախութիւնն ու ցնծութիւնը, իսկ Յիսուսի Համբարձման մտմտութիւնն ու վիշտը: Յիրաւի երբ Յիսուսը ի խաչ հանեցին, նորա Համբարձման և առաքեալք տրտմեցան. բայց երբ յարութիւն առնելով՝ երկինք համբարձաւ, հակառակը տեղի ունեցաւ: Ինչպէս որ Յիսուս աւագ ուրբաթ գիշեր վերնատան մէջ առաքելոց ասած էր թէ՝ «Աշխարհ պիտի ուրախանայ, դուք պիտի արտմիք և լաք. բայց ձեր արտմութիւնը ուրախութեան պէտք է փոխուի, զոր ոչ ոք պիտի կարողանայ ձեզմէ բառնալ[1]:»

Արդարև այս պարագայում առաքեալք որքան որ ուրախութիւն զգացին, նոյնքան աւելի տխրութեան ենթարկուեցան հրէայք. որովհետև Յիսուսի յարութեամբ և համբարձմամբ հաստատուեցաւ թէ Նա է Մեսիա և որդի Աստուածային փառօք իջնէ Զիմենեայ լեռան վրայ, թէ Նա պէտք է գայ դատել բոլոր մարդիկները իրենց գործոց համեմատ, և թէ առաքեալք ու

արար Յիսուս, որք եթէ գրեալ էին մի ըստ միոջէ, կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր առնել զգիրսն՝ որք թէ գրեալ էին. Յովհ. ԻԱ. 25.

1. Ամէն ամէն ասեմ ձեզ, զի լացջիք և ողբասջիք դուք՝ և աշխարհ խնդասցէ, դուք տրտմեսջիք՝ այլ տրտմութիւն ձեր ուրախութիւն եղիցի . . . և զուրախութիւն ձեր՝ ոչ ոք հանիցէ ի ձէնջ. Յովհ. ԺԶ. 20.

բոլոր հաւատացեալները, որոնք հաւատարմութեամբ անոր ծառայելով՝ նոքա պատուէրները կը կատարեն, արքայութեան մէջ անվախճան ուրախութիւն պիտի ունենան. իսկ պայն խաչը հանողները ու բոլոր անհաւատները դժոխքում յաւիտենական տանջանաց պէտք է դատապարտուին:

Արդ՝ ի սէր խաչելոյն Յիսուսի քեզ պատահած նեղութեանց համբերէ և ուրախ եղիր, քանի որ նորա սիրոյն համար երկրիս վրայ որքան աւելի վիշտ ու նեղութիւն կրես, յայտնի է թէ նոյնքան աւելի պիտի ուրախանաս ու բերկրիս ի հանդիպելուն. այս պատճառաւ առաքեալը ու բոլոր ճշմարիտ հաւատացեալները նորա սուրբ և օրհնեալ անուան համար իրենց բոլոր կենաց մէջ տեսակ տեսակ հալածանք, չարչարանք և նեղութիւն կամաւ կրեցին, վասնորոյ երկնքում նորա անվախճան թագաւորութիւնը ժառանգելու արժանի եղան:

Սուրբ աւետարանի մէջ գրուած պատմութիւնքը կարելի եղածին չափ համառօտ յառաջ բերինք ցոյս վայր. յետ այսու կը համառօտենք Գործք առաքելոցի մէջ գրուածները, զոր Ղուկաս աւետարանիչը գրեց:



ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Հարցում Ը.

Ինչո՞ւ համար Յիսուս Զեբեդեանց լերան վրայէն հանդարձաւ.

Պաս. Որպէս պի իւր մասին գրուածը կատարուի: Որովհետև Զաքարիա մարգարէի բերանով գրուած էր թէ՝ «Ա յն օրը նորա ոտքերը պէտք է Զեբեդեանց լերան վրայ կենան[1]». նա՛ մանաւանդ՝ ինչպէս որ (տես ԽԸ-րդ հարցումը) աւագ ուրբաթի գիշերը Զեբեդեանց լեռը դնալով՝ անտի իջաւ Գեթսեմանի պարտէզը, ուր սկսաւ չարչարանք կրել, նմանապէս Զեբեդեանց լեռնէն համբառնալով՝ այնտեղէն սկսաւ իւր Աստուածութեան վառքն ու թագաւորութիւնը յայտնելու. վասն պի համբառնալու ժամանակը միայնակ չէր, այլ բոլոր արդարոց հոգիները նորա հետ էին,

---

1. Եւ կացցեն ոտք նորա յաւուր յայնմիկ ի լերինն Զեբեդեանց՝ հանդէպ Երուսաղէմի յարևելից. Զաք. ԺԴ. 4.

զորս իւր մահուամբ սատանայի դերութենէն փրկելով՝ յաւիտենական կենաց արժանացուց. քանի որ Ադամայ (սկզբնական) մեղաց պատճառաւ արդարոց հոգիքը մինչև այն ժամանակ սատանի իշխանութեան ներքոյ էին[1]:

Նոյնպէս կատարուեցաւ Յիսուսի նկատմամբ գրուած Ս. Գրոց այն խօսքը թէ՝ «Խաչը բարձրացաւ և գերիները ազատեց[2]:» Բայց յայսմանէ, անհամար հրեշտակներ երկնքէն իջան և մեծ ուրախութեամբ ու խորին յարգանօք ընդ առաջ ելնելով՝ կօրհնէին և կը գովաբանէին զայն. որով կատարուեցաւ նաև այն պատգամը թէ «Մեր Աստուածը օրհնութեամբ համբարձաւ և մեր Տէրը փողոյ ձայնիւ[3]:» Դարձեալ, Ս. Գիրքը կը գրէ թէ երբ Յիսուս համայն արդարոց հետ մեծ փառօք յերկինս կը համբառնար, հրեշտակները նորա անսահման զօրութեան նայելով՝ ահիւ ու երկիւղածութեամբ միմեանց կը հարցնեն թէ՝ «Այս ո՞վ է

1. Որ լուծեր կենարար մահուամբ քո, Տէր, զերկունս մահու, իջանելով ի դժոխս վերածեր ընդ քեզ զհոգիս արդարոց մարգարէիցն ի լոյն անստուերս. Շար. ՂԷ.

2. Ել ի բարձունս՝ և գերեաց զգերութիւն, էառ ասաւար՝ բաշխեաց պարգևս՝ և ետ որդւոց մարդկան. Սաղմ. ԿԷ. 18.

3. Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր ՚ի ձայնիւ փողոյ. Սաղմ. ԽԶ. 5.

որ բուռն զօրութեամբ եդովմէն (երկրէն) կուգայ». ինչպէս նաև Յիսուսի տուած պատասխանը կը կարդանք Ս. Գրոց մէջ[1]:

Թէպէտև Յիսուս այսպիսի աստուածային փառօք համբարձաւ, սակայն առաքեալք և ուրիշները, որոնք Չիթենեաց լերան վրայ ներկայ էին, հրեշտակներն ու արդարոց հոգիները տեսնել չը կարողանալով, միայն նորա յերկինս համբառնալը կը տեսնէին, և մինչ կը շարունակէին նայիլ դէպի վեր, մի ամպ յերեսն գալով՝ այլ ևս չը կարողացան տեսնել զՅիսուս. սակայն նոքա երբ պշուցեալ դեռ կը նայէին, իսկոյն սպիտակ հանդերձով և մարդկային կերպարանքով երկու հրեշտակ երևնալով ասացին. «Ով Գալիլեացիներ, ինչ կանգնած կը նայիք դէպի երկինք. այս Յիսուսը, որ ձեզմէ վերացաւ յերկինս, նոյնպէս պիտի գայ, ինչպէս տեսաք նորա երկինք դնալը». զայս ասելով անետևոյթ եղան:

Յայնժամ ամէնքը ամենամեծ ուրախութեամբ Չիթենեաց լեռնէն կը վերադառնան յԵրուսաղէմ: Առաքեալք կը բնակէին վերնատան մէջ, իսկ սուրբ

1. Իսկ այս ո՞վ է՝ որ դիմեալ գայ յԵդովմայ. կարմրութիւն ձորձոց իւրոց ի բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ. ես խօսիմ զարդարութիւն՝ և իրաւունս փրկութեան: Վասն ՚ի՞նչ կարմիր են ձորձք քո, և հանդերձք քո իբրև հնձանահարի լեռոյ հնձանի կոխելոյ. Եսայ. ԿԳ. 1 մինչև 6 համար.

Աստուածածին, Յիսուսի աղգականները և այլ կանայք ու աշակերտք՝ թէև ուրիշ տեղեր բնակեցան, բայց միշտ վերնատունը և տաճարում ժողովելով՝ միաբան աղօթքի կը պարապէին՝ զԱստուած գովելով ու փառաբանելով գոհութեամբ և երախտագէտ հոգւով։

Եւ որովհետև տասներկու առաքեալներէն մէկը — մանաւանդ Յուդա իւր չարութեան պատճառաւ կորստեան մատնուած էր, Պետրոսի կարգադրութեամբ այն օրերուն ի միասին ժողովուած՝ կընտրեն Յովսէփը, որ Բարսաբա ևս կը կոչուէր (և որ՝ Յուստոս անուանեցաւ). սորա հետ Մատաթիա, որոնք Յիսուսի աշակերտ լինելով՝ միշտ առաքելոց հետ էին, և նոցա մասին վիճակ ձգելով՝ աղօթքի կը կանգնին, որպէս զի Աստուած այս երկուքէն որը որ յայտնէ, Յուդայի տեղ առաքեալ լինի, և վիճակը Մատաթիային անուան ելնելով՝ այնուհետև նա մեռասան առաքելոց կարգը դասուեցաւ[1]։

Յիսուսի համբարձումէն տասն օր յետոյ, այն է Հատկի յիսներորդ օրը առաքեալք և ուրիշներ վերնատան մէջ աղօթքով զբաղած՝ Հոգւոյն

1. Զբանն առաջինն՝ զոր արարն վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել։ Մինչև յորն պատուիրեալոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն սրբոյ, զորս ընտրեացն և վերացաւ. Գործ. Ա. 1. մինչև 26 համար.

սրբոյ գալստեան կսպասէին, և ահա ժամը երեքին յանկարծ երկնքէն սաստիկ հողմոյ ձայնիւ վերնատունը կը լեցուի, ու հրանման լուսեղէն մի ամպ՝ լեզուների ձև առած՝ իւրաքանչիւրին վրայ առանձին կիջնէ, որով ամէնքը Հոգւոյն սրբոյ շընորհօքը լուսաւորուած՝ իսկոյն կսկսին այլ և այլ լեզուներ խօսիլ, ինչպէս որ Հոգին սուրբ խօսիլ կուտար նոցա[1]։

Սակայն ոչ թէ միայն օտար ազգայ լեզուաւ կը խօսէին, այլ Ս. Գրոց մէջ յիշուած ազգերին. և ինչ որ Յիսուս իրենց խօսած էր, բոլորին լսածնիը հմտացան ձշմարտապէս և կատարեալ կերպով, որոյ իրենց միտքը հասու չէր յառաջագոյն։ Արդարև ինչպէս որ Յիսուս նոցա ասած և պատուիրած էր թէ մինչև որ ի բարձանց զօրութիւն զգենուն երուսաղէմ քաղաքում նստին և ապա սկսին քարոզել, ահա այդ խօսքը կատարուելով՝ առաքեալք անմիջապէս կը զօրանան և համարձակութիւն ձեռք կը բերեն, որ բոլորը մէկէն իսկոյն վերնատունէն դուրս ելնելով՝ կսկսին ժողովրդեան առերևիւթ քարոզել Յիսուսի Ս. յարութիւնը և թէ նա է Մեսիա և որդի Աստուծոյ։ Արդ՝ այն օրը Պենտե-

1. Եւ ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին ամենեքեան միաբան ի միասին։ Եւ եղև յանկարծակի հնչեաւն յերկնից՝ եկեալ ըստ սաստիկ հողմոյ, և ելից զամենայն զտունն, յորում նստէին. Գործ. Բ. 1. մինչև 47 համար.

ֆոպէ էր. զոր հրէայք ի յիշատակ Սինա լերան վրայ Մովսէսի ձեռամբ տրուած օրինաց՝ ամէն տարի Երուսաղէմի մէջ հանդիսաւոր կերպիւ կը տօնէին, և այս տօնի առթիւ ուրիշ քաղաքներէ ահագին բազմութիւն հաւաքուած էր անդ։

Նա՛ մանաւանդ (ինչպէս չորրորդ դարու Զ-րդ հարցում յիշուեցաւ) Բաբելոնի գերութեան ժամանակ և անկից յառաջ հրէայք ուրիշ ազգաց երկիրները գերի դնալով, երբ որ ազատուեցան, թէև շատերը իրենց բնիկ հայրենիքը վերադարձան, բայց շատերն էլ չը վերադարձան. սակայն Հրէաստան Հռովմայեցւոց իշխանութեան ենթարկուելէ ղինի՝ Երուսաղէմի բնակիչք սկսած էին հանգիստ ապրիլ, որով նոցա ցեղակիցներէն շատերը Երուսաղէմ գալով՝ բնակութիւն հաստատած էին, նոյնպէս վաճառականութեան համար այն ժամանակները ուրիշ ազգերէ շատ մարդիկ կը գտնուէին այդ քաղաքումն։

Արդ՝ երբ ժողովուրդը առաքելոց այլ և այլ լեզուներով խօսիլը լսեց՝ բազմութիւնը գունդագունդ այնտեղ հաւաքուելով՝ զարմանօք և ապշութեամբ միմեանց կը հարցնէին. «Ո՞չ ապաքէն սոքա Գալիլեացի են. ինչպէ՞ս ուրեմն մեր լեզուն կը խօսին. ի՞նչ կը նշանակէ այս»։ Արդարև առաքելոց այս կերպ վարմունքը՝ աստուածային մեծ զօրութիւնը կը յայտնէր նոցա վրայ անտարակոյս, քանի որ նոքա անուս և ձկնորս մարդիկ էին, և

ահա ամէն լեզու կանոնաւորապէս խօսելէ զատ՝ այնտեղ գտնուողները ինչ ազգի էլ որ պատկանէին, նոցա խօսածը կը հասկնային իրենց մայրենի լեզուովը։ Քանզի առաքեալք մի մարդու հետ խօսած ժամանակ՝ նորա լեզուաւ կը խօսէին, սակայն զանազան ազգերէ հաւաքուած բազմութեան քարոզած ժամանակ, ի հարկէ մի լեզուաւ կը խօսէին, բայց իւրաքանչիւրը իւր լեզուաւ կը հասկըներ նոցա քարոզութիւնը [1]։

Սակայն Յիսուսի թշնամիները առաքելոց վրայ ևս նախանձելով սկսան ծաղրել զանոնք ասելով թէ «Սոքա հարբած են». այն ժամանակ Պետրոս՝ միւս մեռածան առաքելոց հետ ի միասին՝ իւր ձայնը բարձրացնելով կասէ. «Ա՛մէնքդ գիտցած լինիք, ականջ դրէք իմ խօսքերին, դուք մի՛ կարծէք թէ մենք արբած ենք, քանի որ ժամը դեռ երեք է. այլ՝ այս այն է, զոր խօսեցաւ Աստուած Յովէլ մարգարէի բերանով». և կը յայտնէ թէ Հոգւոյն սրբոյ զօրութեամբն ու շնորհօքն է որ իրենք այլ և այլ լեզուներով խօսիլ կարող են. ապա կարգաւ յառաջ կը բերէ Ս. Գրոց պատգամները Յիսուսի նկատմամբ, կը հաստատէ նորա յարութիւնը և մանաւանդ Դաւիթ մարգարէի գրուած-

---

1. Զայսմանէ տես ի մեկնութեան Նաբեկի Ճառ կոչ պատրիարքի ի ճառն գալստեան Հոգւոյն սրբոյ. յերես 1022.

ներով թէ Նա է Աստուծոյ որդին, որպէս զի խե-
լամտելով ղղջան սրտի մտօք և դառնան իրենց
չար ճանապարհէն:

Ժողովուրդը լրօք լսելով Պետրոսի այդպիսի
խօսքերը, սրտի մտօք ղղջալով՝ սկսան Պետրոսի և
միւս առաքելոց ասել. «Ի՞նչ անենք, եղբայրներ».
և ի նոցանէ օգնութիւն գտնել փափաքեցան:
Գանգի իմացան թէ ինչ մեծ մեղք գործած են Յի-
սուսը մեռցնելով: Ա՛յն ժամանակ Պետրոս կասէ.
«Ապաշաւեցէք, Թող ձենէ իւրաքանչիւրը յանուն
Յիսուսի Քրիստոսի մկրտուի, որպէս զի Թողութիւն
գտնելով՝ Հոգւոյն սրբոյ շնորհաց արժանաւոր լի-
նի:» Չը կարծուի թէ առաքեալք յանուն Յի-
սուսի կը մկրտէին, այլ յանուն սուրբ Երրորդու-
թեան, ինչպէս որ Յիսուս հրամայած էր. այստեղ
Պետրոս ասել կուզէ թէ Յիսուսի պատուիրածին
համեմատ մկրտուեցէք:

Վերոյիշեալ քարոզը ուրիշ շատ խօսքերով և
վկայութիւններով հաստատել կետոյ՝ Պետրոս կը
յաւելու թէ «Հարկ է ապատիլ այս խոտորեալ
ազգէն», որով նորա քաջալերիչ ու մխիթարական
խօսքերէն յորդորուած՝ ոչ միայն ամէն յուսա-
հատութիւն ի բաց կը վանեն, այլ և նոյն օրում
երեք հազար հոգի յօժարակամ ընդունելով քրիս-
տոնէական կրօնի փրկարար վարդապետութիւնը՝ կը
մկրտուին, և շնորհօքն Աստուծոյ այն ատեմեան
հոգևորին հոգևոր սիրով, որ միշտ առաքելոց քա-

րոզութիւնքը լսելով, ղղջմամբ, ապաշխարութեամբ
և խոստովանութեամբ Սբ. Ընծան առնելով՝ տաճա-
րում աղօթքի կը պարապէին:

Նա մանաւանդ առաքելոց ձեռամբ շատ հը-
րաշքներ գործուելուն համար, համայն հաւատա-
ցելոց վրայ ահ և երկիւղ ընկած էր, քանի որ
նոցա այսպիսի գործերը մարդկային զօրութեան
արդիւնք չը լինելով՝ յայտնապէս Աստուծոյ հզօր
զօրութիւնը կը ստեղծէր: Բայց յայտնի է, բոլոր
հաւատացեալք միաբան ի միասին կապրէին, ի-
րաքանչիւրը՝ իւր սեփական ստացուածքը ընկերու-
թեան պատկան համարելով՝ կը վաճառէր և ըստ
պիտոյից ու հարկաւորութեան՝ կաբօտելոց կը բաշ-
խէր, որով ամէնքը միաբանութեամբ, միամիտ սրտով
և ուրախութեամբ ի միասին կուտէին, օրհնու-
թիւն և գոհութիւն մատուցանելով Աստուծոյ:
Երբ սոցա այնպիսի առաքինական ընթացքը յայտնի
եղաւ բոլոր ժողովրդեան, յաչս ամենեցուն մեծ
յարգանք կը վայելէին, և Աստուած հաւատացելոց
թիւը օր քան օրէ կը յաւելուր:

Հպցո՛ց ԾԹ.

Երբ առաքեալք սկսան քարոզել Յիսուսի
Թշնամիք նոցա հակառակեցան արդեօք.

Պաս. Հակառակեցան. Նա մանաւանդ Թշնա-
մութեամբ զանոնք պատժելու փափաք ևս ունե-

ցան։ Քանզի երբ մի անգամ Պետրոս և Յովհաննէս ժամը իննին ըստ սովորութեան տաճարը կերթային աղօթելու համար, նորա գեղեցկիկ կոչուած դրան մօտ ի մօրէ կաղ ծնած մի մուրացկան՝ որ քառասուն տարիներէ աւելի ժամանակ քալելու կարողութենէ զուրկ լինելով, ուրիշները ամէն օր զայն կը բերէին այնտեղ՝ մուրալու համար տաճարը մտնող և ելնողներէն, սա՝ Պետրոսն ու Յովհաննէսը տեսնելուն պէս, ողորմութիւն կը խնդրէ. իսկ Պետրոս կասէ անոր. «Արծաթ և ոսկի չունիմ քեզ տալու, բայց ինչ որ ունիմ քեզ կուտամ. Նազովրացի Յիսուսի անունամբ ել և գնա[1]։»

Այս խօսքն ասելով՝ Պետրոս նորա աջ ձեռքէն կը բռնէ վերցնելու համար, որով աստուածային աքանչելիօք վերոյիշեալ մուրացկանը իսկոյն կը բժշկուի և կսկսի քալել. ու նոցա հետ տաճարը մտնելով կը վազվզէր և կ'աստուած կօրհնէր։ Երբ ժողովուրդը զայն տեսնելով՝ հիացած ու զարմացած կերևէր, Պետրոս խօսքը ժողովրդեան կուղղէ ասելով. «Ինչո՞ւ համար այսպէս ապշած զարմացած էք. այս մարդը ո՛չ թէ մեր զօրութեամբ բժշկուեցաւ, այլ յանուն Յիսուսի, զոր դուք սպանեցիք»։

---

1. Առէ Պետրոս. զարծաթ և զոսկի ո՛չ ունիմ, բայց զոր ունիմս, զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ ա՛րի և գնա. Գործ. Գ. 6.

և որպէս զի չը յուսահատուին, կը յաւելու. «Գիտեմ որ անգիտութեամբ արիք, մարգարէից բերանով Աստուծոյ ասածներին համեմատ Յիսուս պէտք է որ չարչարուէր. և ահա այն կատարուեցաւ»։ զայս ասելով՝ կը խրատէ ժողովուրդը ղղջալ և ապաշխարել Թողութիւն գտնելու համար. նաև Ս. Գրքէն վկայութիւն բերելով՝ կը հաստատէ Յիսուսի յարութիւնը և նորա Մեսիա ու Ապրի-Ձոյ լինելը։

Ժողովուրդը այս խօսքերը լսելով՝ հինգ հազար հոգի ևս այն օր Յիսուսի կը հաւատան. բայց քահանայք, տաճարի մեծամեծներն ու Սադուկեցիք բարկացած՝ անմիջապէս կը բռնեն Պետրոսն ու Յովհաննէսը և կը բանտարկեն, քանզի ժամանակը երեկոյ էր։ Յաջորդ օրը (տես Թ-րդ հարցումը) ի ներկայութեան Աննայի, որ այն ժամանակ քահանայապետ էր, մեծ ատեան կազմելով՝ երկու առաքեալները յատեան կը կոչեն և կը հարցնեն. «Ո՞ր զօրութեամբ և որի՞ անունամբ այս բանը արիք»։ Պետրոս՝ Հոգւոյն սրբոյ շնորհօք լեցուած՝ կը պատասխանէ. «Յանուն Յիսուսի Քրիստոսի, զոր դուք խաչեցիք. Նա է ձեզմէ անարգուած անկեան քարը»։ (տես այս մասին ԽՋ-րդ հարցումը)։

Բացի այդ, Պետրոս համարձակ կը յայտնէ ատենին թէ Յիսուսի անունամբ բոլոր մարդիկ պէտք է փրկութիւն գտնեն, որպէս զի իրեն ասածը ըմբռնելով ուղղուին։ Հակառակորդք տեսնելով նո-

ցա համարձակութիւնը և մանաւանդ իմանալով թէ նոքա հմուտ և ուսեալ մարդիկ չեն, շատ կը զարմանան. քանզի նոցա Յիսուսի հետ լինելը գիտէին: Վերոյիշեալ բժշկուած կաղ մուրացիկն էլ կը տեսնէին, որ անդ ներկայ էր, այս պատճառաւ ոչ մի պատասխան նոցա տալ չկարողացան. վասնորոյ առաքեալները դուրս հանելէ յետոյ, սկսան միմեանց հետ խորհրդակցիլ ասելով. «Ի՞նչ անենք այս մարդոց, որոց ձեռամբ մեծ հրաշք գործուեցաւ. բոլոր Երուսաղէմի բնակչաց յայտնի եղած է և մենք չենք կարող ուրանալ:»

Արդարև նոքա առ հարկի այսպիսի խորհրդակցութիւն ունեցան, բայց երբէք ուղղուիլ չուզելով՝ որոշում կուտան առաքեալները կոչել և սպառնալիքաւ պատուիրել որ այլ եւս յանուն Յիսուսի չքարոզեցանեն, որպէս զի ժողովրդեան մէջ նորա անունը աւելի չը տարածուի: Երբ կը կանչեն ու կը պատուիրեն, Պետրոս և Յովհաննէս առանց երբէք վախնալու ի նոցանէ՝ կը պատասխանեն թէ՝ «Առաջի Աստուծոյ արժան է աւելի ձեզ լսել թէ Աստուծոյ. դուք ընտրեցէք. իսկ մենք չենք կարող չը պատմել ինչ որ տեսանք և լսեցինք[1]:»

1. Պետրոս և Յովհաննէս պատասխանի եւուն և ասեն ցնոսա եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ՝ ընտրեցէք. այլ մեք ոչ կարեմք, զոր տեսաքն և լուաք, չխօսիլ. Գործ. Գ. 19.

Յիրաւի այս խօսքը բոլոր ժողովականաց խիստ ծանր թուեցաւ, բայց զանոնք պատժելու պատճառ չունենալնուն համար, միայն սաստելով նոցա արձակեցին, որպէս զի ժողովրդեան մէջ խռովութիւն չբնկնի. քանզի վերոյիշեալ հրաշքը բոլոր տեսնողները զԱստուած կօրհնէին ու կը փառաւորէին: Յայնժամ Պետրոս և Յովհաննէս իրենց ընկերաց մօտ դառնալով՝ երբ գործը պատմեցին նոցա, ամենքը միաբերան և բարձրաձայն աղօթքի կը կանգնին, և, Աստուծոյ զօրութիւնը ու Դաւիթի մարգարէի բերանով Յիսուսի նկատմամբ Սուրբ Գրոց պատգամների կատարումը խոստովանելով՝ կը խնդրեն որ իրենց շնորհէ զօրութիւն ու համարձակութիւն, որպէս զի կարող լինին յանուն Յիսուսի համարձակութեամբ քարոզել և հրաշագործել:

Մինչ նոքա այսպիսի աղօթք կը մատուցանէին առ Աստուած, նոցա աղօթից ընդունելութեան ի նշան, իսկոյն իրենց գտնուած տեղը շարժիլ սկսաւ, և Աստուծոյ զօրութիւն ու համարձակութիւն ստանալով՝ նորա խօսքերը մեծ քաջասրտութեամբ կը խօսէին միշտ[1]: Բայց յայտնի է, (ինչպէս որ Թ-րդ հարցումի յիշուեցաւ) այն

1. Մինչ կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին՝ յորում էին ժողովեալ, և լցան ամենեքին Հոգւով սրբով, և խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ. Գործ. Դ. 31.

ժամանակ բոլոր հաւատացեալք միաբան և միասիրտ լինելով՝ միմեանց հետ հոգևոր և եղբայրական սիրով կը վարուէին, հետևաբար ո՛չ մին ի նոցանէ իւր ստացուածքը իրեն յատուկ չը համարելով՝ հասարակութեան յատկացուցած էր, որով նոցա մէջ կարօտ մարդիկ այլ ևս չը լինելէ զատ՝ յաչս բոլորեցուն մեծ պատիւ ու յարգանք կը վայելէին։

Եթէ մին դիւղ կամ ագարակ ունէր, վաճառելով՝ նորա դինը կը բերէր առ ոտս առաքելոց, որք կը բաշխէին որոց որ պիտոյ էր։ Ինչպէս որ Ղևիի ցեղէն Յովսէփ անունով մի անձ, որուն հայրը Կիպրոսում բնակած լինելուն համար՝ ինքը այնտեղ ծնած էր, իւր դիւղը վաճառելով, դինը բերաւ առաքելոց յանձնեց։ Սա թէև տասներկու առաքեալներէն չէր, սակայն խիստ առաքինի և նոցա նման աւետարանը քարոզելուն համար, նոցա հաւասար կը համարուէր և եբրայեցերէն Բառնաբաս կոչուեցաւ, որ կը նշանակէ որդի Մխիթարութեան։

Նմանապէս Անանիա անունով մի մարդ, որու կնոջ անունը Սափիրա էր, իւր դիւղը կը վաճառէ, բայց վոխանակ ամբողջ դինը բերելու՝ իւր ամուսնոյն գիտութեամբ միայն նորա մի մասը կը բերէ առաքելոց՝ իբրև թէ նոյն գնով վաճառած է դիւղը։ Աստուածային ներշնչմամբ Պետրոս դիտնալով թէ նա կը ստէ, «Անանիա, կասէ, դիւղը

քուկդ էր, և նորա վաճառումը քու իշխանութեան ներքև. ինչո՞ւ սրտումդ դրիր այս բանը. դու ո՛չ թէ մարդոց, այլ Աստուծոյ սուտ խօսեցար»։ երբ յիշեալը այս խօսքը լսեց, իսկոյն ինկաւ մեռաւ, զոր վերցնելով կը թաղեն[1]։

Նորա կինը, որ տեղեակ չէր այս եղելութեան, երեք ժամ ետքն եկաւ, որուն Պետրոս հարցուց թէ՝ «Ա՞յդ գնով վաճառեցիք դիւղը»։ Նա ևս ստելով ասաց. «Ա՛յո՛, այդ գնով»։ որուն Պետրոս կասէ. «Ինչո՞ւ համար Տիրոջ Հոգին փորձելու միաբանեցաք. թո՛ղ քո ամուսինը թաղողները քեզ էլ դուրս հանեն»։ առաքելոյն այս խօսքին վրայ նա ևս իսկոյն կանշնչանայ, զոր վերցնելով կը թաղեն ամուսնոյն մօտ։ Սոյն անցքը բոլոր հաւատացելոց և լսողաց վրայ մեծ երկիւղ կը ձգէ, բայց գիտնալով որ յանցանքը նոցա էր, արք և կանայք բազմութեամբ հաւատքի կուգան, և այսպէս հաւատացեալք չափազանց շահնալով՝ տաճարում Սողոմոնի սրահ կոչուած տեղին մէջ առաքեալք ժողովուելով կուսուցանէին նոցա, և ուրիշներ նոցա մօտենալ չէին համարձակեր, իսկ ժողովուրդը շատ կը յարգէր զանոնք։

---

1. Առէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր եղեց սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն սրբոյ, և խորել ի գնոց գեղջն . . . ո՛չ սաեցեր մարդկան, այլ Աստուծոյ։ Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ, և եհան զոգի։ Գործ. Ե. 3.

Բաց յայսմանէ, առաքելոց ձեռամբ շատ հրաշքներ գործուելուն համար, հիւանդները պատգարակի մէջ իրենց մահիճներով փողոցները կը հանէին, որպէս զի Պետրոս անցած ժամանակ գոնէ նորա ստուերը դպչի նոցա [1]. և արդարև որի որ դպաւ, նա բժշկութիւն գտաւ. նմանապէս շրջակայ քաղաքներէն ահագին բազմութեամբ երուսաղէմ կը դիմէր ժողովուրդը, և բոլոր ցաւագարներն ու այսահարները, զորս կը բերէին, շնորհիւ առաքելոց կառողջանային։

Յիրաւի այս մասին սիրտը մաքուր եղող բոլոր մարդիկ խիստ շատ կուրախանային, սակայն Յիսուսի թշնամիները առաքելոց վրայ ևս նախանձելով՝ այն աստիճան կը զայրանան, որ քահանայապետն անձամբ, ինչպէս նաև նորա հետ գտիրք և Սադուկեցիք գալով կը բռնեն առաքեալները և հրապարակաւ բանտը կը դնեն։

Տե՛ս դու աստ նախանձոտներուն խայտառակութիւնը. Յիսուսի աշակերտները կը բանտարկեն, որպէս զի նորա անուամբ չը քարոզեն. սակայն նոյն գիշեր Աստուծոյ հրեշտակը բանտի դուռը կը բանայ և զանոնք դուրս հանելով՝ կը հրամայէ

1. Եւ առաւել ևս յաւելանային հաւատացեալքն ի Տէր, բազմութիւն արանց և կանանց։ Մինչև ի հրապարակն դնել զհիւանդս . . . զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ումեք ի նոցանէ. Գործ. Ե. 14.

գնալ և տաճարում քարոզել [1]. իսկ բանտին դուռը նորէն կը փակէ. պահապանք, որք դուռը կը պահպանէին, անկարող կը լինին մի բան լսելու. առաքեալք ըստ հրամանին առաւօտ կանուխ տաճարը կը գնան և կսկսին ժողովրդեան քարոզել։

Քահանայապետն ու նորա հետ եղողները՝ գործէն անտեղեակ, ժողովական անձինքն ու բոլոր ժողովրդեան ծերերը ի խորհուրդ կը գումարեն և ծառաներ կը ղրկեն, որպէս զի առաքեալները բանտէն հանելով բերեն։ Երբ նորա գնալով բանտում չեն գտներ զանոնք, անմիջապէս ետ դառնալով կը պատմեն թէ «Բանտը մեծ ուշադրութեամբ փակուած գտանք և պահապանք ևս դրան առջև կանգնած էին, բայց բանտը բանալով՝ ներսը ոչ ոք գտանք։»

Յայնժամ բոլոր ժողովականք «Ի՞նչ պէտք է լինի այս» ասելով՝ խիստ ապշած դրութեան մէջ էին, երբ իսկոյն մի անձ գալով կը պատմէ նոցա թէ՝ «Ահա ձեր բանտարկած մարդիկը տաճարում ժողովրդեան կը քարոզեն։» Արդ՝ այս պարագայում՝ փոխանակ Աստուծոյ կարողութիւնը ըմբռնելով իրենց չարութեան վրայ զղջալու՝ նախանձով լեցուած՝ չեն ուզեր բնաւ ուղղուիլ, այլ տաճարին

1. Հրեշտակ Տեառն ի գիշերի եբաց զդուրս բանդին, և հանեալ զնոսա՝ ասէ. գնացէ՛ք, կացէք ի տաճարին, և խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս այսոցիկ. Գործ. Ե. 19.

մեծաւորը իւր ծառաներով կը գնայ և առաքեալները կը բերէ առանց բռնութեան. քանզի կը վախնային թէ մի՛ գուցէ ժողովուրդը քարկոծէ զիրենք: Երբ յատեան կը հանեն զանոնք, քահանայապետը յանդիմանական եղանակաւ կասէ. «Ձեզ պատուէր չէ՞ տուինք որ այդ անուամբ չուսուցանէք. ահա բոլոր Երուսաղէմը լեցուցիք ձեր վարդապետութեամբ. կուզէք որ այդ մարդուն արիւնը մեր վրա՞յ բերէք:»

Արժան է աստ նկատել թէ յիշեալ քահանայապետը Յիսուսի այն աստիճան թշնամի է որ նորա անունը տալ չուզեր, բայց միայն յայտնի լինելով՝ Պետրոս և այլ առաքեալք անվեհեր համարձակութեամբ և աներկիւղ կասեն թէ՝ «Մարդկան աւելի Աստուծոյ հնազանդիլ պարտ է:» մանաւանդ յայտնելով Յիսուսի յարութիւնը, զոր նորա ի խաչ հանելով մեռուցին, կը յաւելուն թէ նորա անուամբ միայն մարդիկ մեղաց թողութիւն պէտք է գանեն, և, «Ա.յս խօսքերին մենք վկայեմք և Հոգին սուրբ ևս կը վկայէ, զոր Աստուած պարգևեց իրեն հնազանդողներին:»

Առաքելոց այսպիսի խօսքերը լսելով՝ նորա այն աստիճան կը զայրանան, որ կը խորհին զանոնք ևս սպաննել: Յայնժամ ժողովականներէն Գամաղիէլ անուամբ մի փարիսեցի, որ օրէնուսոյց էր և պատուական յաչս բոլոր ժողովրդեան, կը հրամայէ առաքեալները փոքր ինչ ժամանակ դուրս հանել

և դառնալով ժողովականաց, կասէ. «Ա.յս մարդիկներէն հեռի կացէք. թողէք զանոնք. եթէ այս դործը մարդկներէն է, իրենք իրենց կը յերուին. իսկ եթէ Աստուծմէ է, կարող չէք զանոնք նուաճել կամ ջնջել. թերևս աստուածամարտ կը լինիք: Ինչպէս որ ասկէ յառաջ Թեւդասը ելաւ և ապա յաւուրս աշխարհագրին Գալիլեացի Յուդան, որոնք իրենք զիրենք մեծ մարդոս տեղ կը դնէին և շատ ժողովուրդ էլ նոցա յարեցաւ, բայց բոլորը չքացան:»

Յիրաւի Գամաղիէլի սոյն խօսքերուն ճշմարտութիւնը յայտնի էր. ուստի հաւանեցան նորա առաջարկին, բայց չը կրնալով իրենց զայրոյթը իջեցնել, առաքեալները կոչելով կը ծեծեն և կրկին պատուիրելով որ այլ ևս բնաւ Յիսուսի անուամբ չը քարոզեն, կարձակեն զանոնք: Անմիա նախանձոտները կը ծեծեն առաքեալները, որպէս զի վախնալով չը քարոզեն, սակայն նորա կուրախանան որ Յիսուսի անուան համար անարգուելու արժանի եղան, և, ամէն օր տաճարում ու տներում ժողովրդեան կը քարոզեն ու կաւետարանեն զՅիսուս Քրիստոս:

Հատուած Կ.

Երբ հաւատացեալները քազմացան, ինչ կերպով կը կառավարուէին.

Պապ. Խիստ լաւ կերպով։ Որովհետև (ինչպէս վերը յիշուեցաւ) ամէնքը իրրև մի սիրտ և մի մարմին ոչ միայն եղբայրական սիրով միմեանց կօգնէին, այլ և առաքելոց կարգադրութեամբ կատարուելոց օրական ապրուստ կամ թոշակ տալու համար սպասաւոր յատկացուած էր։ Թէև այս մասին ոմանք արդարութեան հակառակ կողմնակցութիւն ի գործ դրին, բայց երբ գործն իմացուեցաւ, իսկոյն զայդ կարգի կանոնի տակ մուծին։

Ւանկի այն օրերում երբայեցւոց մասին դժգոհութեան ձայն բարձրացաւ Հելլէնացւոց կողմանէ, որոց այրիները օրական ապրուստի խնդրոյն մէջ արհամարհանք կը կրէին։ վասնորոյ առաքեալք հաւատացեալները կոչելով կասեն. «Մեզ հաճոյ չէ թողուլ Աստուծոյ խօսքը թողուլ և սեղանին ծառայել։ ընտրեցէք եօթն անձինք, լի հոգւով սրբով և գիտութեամբ, զորս այս պիտոյից վրայ կարգելով՝ մենք աղօթից ու Աստուծոյ խօսքը քարոզելու պարապինք։»

Այս առաջարկը բոլորին հաճոյ թուեցաւ, և ընտրեցին Ստեփաննոսը, որ լի էր հոգւով սրբով և հաւատով, Փիլիպպոսը, Պրօքորոնը, Նիկանորան, Տիմոնան և Անտիոքացի Նիկոդայոսը։ Ա-

քեալք սոցա վրայ ձեռս դնելով կաղօթեն և սարկաւագ կը ձեռնադրեն։ Այս կարգադրութեամբ հաւատացելոց միջէն տրտունջը կը վերանայ, և Աստուծոյ խօսքը աճելով՝ հաւատացելոց թիւը Երուսաղէմի մէջ այնքան կը շատնայ որ բազում քահանայք ևս կը հաւատան Յիսուսի։

Նա մանաւանդ սուրբն Ստեփաննոս Հոգւոյն սրբոյ շնորհաց զօրութեամբ ժողովրդեան մէջ մեծամեծ հրաշքներ գործելուն համար[1], հաւատացեալք շատ ուրախ էին։ Այս մասին որքան որ Յիսուսի հաւատացողները կուրախանային, բայց անհաւատ հրէայք՝ մանաւանդ ուրիշ երկիրներէ գալով՝ Երուսաղէմի մէջ բնակութիւն հաստատողներէն ոմանք՝ այն աստիճան կը գժդժին, որ թըշնամական ոգւով նորա հետ յաճախ վիճել կսկսին, բայց երբ պատասխանելու անկարող կը լինին, սպատրաստ մարդիկը կը դրդեն նորա մասին զրպարտել ու վկայել թէ Ստեփաննոս Մովսէսի և Աստուծոյ դէմ հայհոյեց։

Այսպիսի չար ու անիրաւ դիտաւորութեամբ ժողովուրդը, քահանայքն ու դպիրները գրգռելով՝ իսկոյն նորա վրայ կը յարձակին և յափշտակելով յատեան կը բերեն, ուր սպատրաստ անձինք

---

1. Ստեփաննոս՝ այր լի շնորհօք և զօրութեամբ առնէր սքանչեացս՝ և նշանս մեծամեծս ի ժողովրդեանն. Գործ. Ձ. 8.

վկայութիւն կուտան թէ «Այս մարդը սուրբ տեղ-ւոյն և օրինաց դէմ հայհոյութիւն անելէ չի դադարիր։» Մենք լսեցինք իրմէ, որ կասէր թէ՝ «Նազովրեցի Յիսուսը այս տեղը քակելով՝ Մովսէսի մեզ տուած օրէնքը պիտի փոխէ։» Նոքա այս կերպ սուտ թեամբ վկայութիւն տալով զրպարտեցին, բայց Ստեփաննոս այն աստիճան անվախ և հանդարտ սրտով կանգնած էր, որ ժողովականաց ամէնքը նայելով անոր, կը տեսնեն նորա երեսը իբրև «Ջերեսս հրեշտակի[1]։»

Արդարև, նորա հոգին աստուածային շնորհօք զարդարուած լինելուն ի նշան, նորա դէմքը և հրեշտականման երեւցաւ նոյն իսկ իւր հակառակորդաց, որպէս զի լմանան և ուղղուին. բայց նոքա իրաւունք չը ձանաչող, յամառ և անդուլ մարդիկ լինելով՝ յանիրաւի վնա քարկոծմամբ սպաննեցին։ Վասն զի, երբ քահանայապետը՝ սուտ վկայից ասածները լսելէ յետոյ կը հարցնէ թէ «Այս ձշմարիտ է», Ստեփաննոս կը պատասխանէ՝ «Լսեցէք ինձ, հարք և եղբարք»։ և, հայր Աբրահամու ժամանակէն սկսեալ՝ Սուրբ Գրոց մէջ գրուածները պատմելով կը հաստատէ թէ Յիսուս է Մեսիան և Աստուծոյ որդին, և որպէս զի ղՂջան,

1. Եւ հայեցեալ ի նա ամենեցունն, որք նստէին յաթենին, տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակին. Գործ. Ձ. 15.

նոցա թերութիւնքն էլ կը յայտնէ։ Վասն զի, ինչպէս իրենց հայրերը, նոյնպէս և իրենք միշտ հոգւոյն սրբոյ հակառակ կեցած են։ Հայրերը՝ մարգարէները սպանեցին, որոնք Մեսիայի գալուստը կանխաւ գրեցին, իրենք՝ զայն մատնելով խաչին վրայ մեռուցին։

Նորա այսպիսի խօսքերը լսելով՝ ամէնքը սաստիկ կը զայրանան և առաջ կը կրճտացընեն, բայց Ստեփաննոս, որ հոգւով սրբով լեցուած էր, դէպի երկինք կը նայի և կը տեսնէ Աստուծոյ փառքը և զՅիսուս՝ Աստուծոյ աջ կողմը կեցած, ուստի կասէ նոցա։ «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած և մարդոյ որդին, որ Աստուծոյ աջ կողմը կը կենայ։» Յայնժամ յիշեալ նախանձոտները բարձրաձայն աղաղակ բառնալով՝ կը փակեն իրենց ականջը և ամէնքն ի միասին նորա վրայ յարձակելով՝ քաղաքէն դուրս կը հանեն և անդ կը քարկոծեն զայն։

Վերոյիշեալ ստախօս վկայք՝ որք Ստեփաննոսի ոսերիմ թշնամի էին, թեթեւաշարժ լինելու և ուրիշներէն աւելի քար ձգելու նպատակաւ, իրենց հանդերձը հանելով՝ մի երիտասարդի մօտ կը դնեն որ զայն պահպանէ, և այս երիտասարդը Սաւուղ կը կոչուէր, (այս է Սօղոմն, որ յետոյ առաքեալ դառնալով՝ Պօղոս անուանեցաւ. թէ ինչպէս սա Յիսուսի հաւատաց և առաքեալ եղաւ, ոչ ոք ինչ պատճառաւ Պօղոս անուանեցաւ, յետոյ պիտի յիշատակենք)։

Նայէ դու Յիսուսի հաւատարիմ աշակերտ Ստեփաննոսին. որովհետև ինչպէս որ Յիսուս զինքը խաչը հանողներին համար աղօթեց առ Հայր, որ ներէ նոցա յանցանաց, նոյնպէս սա՝ զինքը քարկոծողներին համար ներումն կը խնդրէ ասելով. «Ո՛վ Տէր, մեղք մի՛ համարիր նոցա զայս»։ Եւ ապա ծունկ չոքած՝ «Ո՛վ Տէր Յիսուս, ընդունէ իմ հոգիս», ասելով կը ննջէ[1]։ Արդարև՝ արդար մարդը որքան էլ տանջանաց մէջ լինի, նորա համար իբր քաղցր քուն հանգիստ կը համարուի։ Սօղոս կամակից էր Ստեփաննոսը սպաննողներին և նոցա հետ միաբան ըստ ամենայնի։

Այնուհետև՝ հաւատացեալները նահատակի մարմինը թաղելով՝ մեծ սուգ և կոծ արին նորա վրայ։

Հարցո՜ւմ կա.

Հրէայք Ստեփաննոսը քարկոծելէ յետոյ՝ միւս հաւատացեալց եւս չարիք հասուցի՞ն Երուսաղէմում.

Պաս. Հասուցին։ Վասն զի, նորա այն ասպիճան կատաղած էին, որ նորա արեամբ չը մխիթարուե-

1. Եւ քարկոծ առնէին զՍտեփաննոս՝ որ կոչեայր և ասէր. Տէր Յիսուս ընկալ զոգի իմ. եւ ծունր՝ և աղաղակեաց ի ձայն բարձր. Տէր, մի՛ համարիր դոցա զայս մեղս... Գործ. Է. 58.

ցան, և բոլոր հաւատացելոց վրայ մեծ հալածանք յարուցին. այնպէս որ վերոյիշեալ Սօղոսը անէ ի տուն մտնելով՝ այր կամ կին կը բռնէր և կը բանտարկէր, շատերն էլ կը մեռցնէր, (ինչպէս յայտնի է, Գործ. Ը. 1. և Իշ. 1), որով բացի առաքեալներէն՝ մնացեալք ցրուեցան Հրէաստանի և Սամարիոյ գիւղերը։ Բայց մի՛ կարծեր թէ աւետարանի քարոզութիւնը դադարեց. ընդհակառակն, այս պատճառաւ աւելի շուտով երուսաղէմէն դուրս եւս տարածուեցաւ։ Փանդի հաւատացեալները և եօթանասուն երկու աշակերտք՝ ուր որ գնացին, աներկիւղ և մեծ համարձակութեամբ զՅիսուս քարոզելով՝ շատերը հաւատքի կուգային։

Տես դու Աստուծոյ ողորմութիւնը. քանզի ապերախտ հրէայք որքան կը հալածէին, նոյնքան աւելի հաւատացեալք զօրութիւն և համարձակութիւն ստանալէ զատ՝ օր ըստ օրէ նոցա թիւն էլ կաճէր։ Ինչպէս որ եօթանասուն երկու աշակերտներէն Փիլիպպոս Սամարիա գնալով քարոզած և զանազան հրաշքներ կատարած ժամանակ, շատերը կը հաւատան և կը մկրտուին, որով քաղաքին մէջ մեծ ուրախութիւն կը լինի։ Այնտեղ Սիմոն անուամբ մի կախարդ՝ ինքզինքը մեծ մարդու տեղ գնելով, սատանայական հնարքներով կերպ կերպ գործեր կը կատարէր և շատ ժամանակէ ի վեր ամէնքը կը զարմացնէր։

Երբ Փիլիպպոսի քարոզութեամբ Սամարիոյ

բնակիչք մկրտուեցան, վերոյիշեալ Սիմոն ևս մկրտուելով՝ միշտ Փիլիպպոսի մօտ կը գնար, և թէև նորա գործած հրաշից վրայ կը զարմանար, բայց սիրտը ուղիղ չէր։ Առաքեալք, որք այն ժամանակ Երուսաղէմ կը գտնուէին, լսելով թէ Սամարիոյ մէջ ևս Աստուծոյ խօսքը ընդունած են, Պետրոսն ու Յովհաննէսը այնտեղ կը ղրկեն, որոնք գալով կաղօթեն, որպէս զի Ս. Հոգին ստանան։ Վասն զի մինչև այն ժամանակ Ս. Հոգին նոցա վրայ իջած չէր, այլ միայն մկրտուած էին, և երբ նոցա վրայ ձեռք դրին (այն է դրոշմած ժամանակ) իսկոյն Ս. Հոգին ընդունելով՝ ամենք կսկսին զԱստուած փառաբանել ու օտար լեզուներ խօսիլ և այլք՝ հրաշագործել։

Կախարդ Սիմոն կը տեսնէ որ առաքեալք որի վրայ որ ձեռք դրին, Հոգին սուրբ նորա վրայ իջաւ. ուստի առաքելոց ստակ կուտայ ասելով. «Ինձ էլ այս իշխանութիւնը տուէք, որպէս զի ում վրայ որ ձեռք դնեմ, Ս. Հոգին ստանայ»։ բայց Պետրոս կը պատասխանէ անոր. «Քու ստակդ քեզ հետ թող կորսուի. որովհետև Աստուծոյ պարգևը դրամով ստանալ ուզեցիր, այս բանում դու մասն ու բաժին չունիս. քանզի սիրտդ ուղիղ չէ Աստուծոյ առջև»։ և թէպէտ խրատեց զայն ասելով. «Այս չարութեանդ համար ղղջա՛ և աղաչէ զԱստուած որ թողութիւն գտնես», բայց նա անզիղջ մնաց. և իւր չարագործութեամբը

ստոնայլին կապուած՝ փոխանակ ինքը աղաչելու, կասէ առաքելոց. «Դուք աղաչեցէք զԱստուած որ այդ ձեր ասածներդը իմ վրայ կատարուին։» Այնուհետև Պետրոս և Յովհաննէս Սամարիայէն մեկնելով՝ նորա շրջակայ դիւղերում Աստուծոյ խօսքը քարոզելով՝ դարձան Երուսաղէմ։

Տակաւին Փիլիպպոս Սամարիա կը գտնուէր, Աստուծոյ հրեշտակը կասէ անոր. «Ե՛լ և գնա դէպի հարաւ, այն ճանապարհաւ, որ Երուսաղէմէն դէպի Գազա, այն է, անապատը կը տանի։» Երբ նա կը գնայ, կը տեսնէ որ Եթովպիոյ Կանդակա թագուհւոյն բոլոր գանձուց վերակացու Ներքինապետը, որ տաճարում Աստուծոյ երկրպագելու համար Երուսաղէմ եկած էր, այն միջոցին իւր կառքով կը վերադառնար իւր երկիրը. Փիլիպպոս՝ հրեշտակի հրամանաւ կառքին մօտեցած ժամանակ լսեց որ նա Եսայի մարգարէի գրքին այն տեղը կը կարդայ, յորում գրուած էր թէ Յիսուս պէսք է չարչարուի և խաչուի. ուստի Փիլիպպոս կը հարցնէ անոր թէ՝ կարդացածը կը հասկնա՞յ։

Ներքինին կը պատասխանէ. «Եթէ մէկը ինձ չուսուցանէ, ինչպէ՞ս կարող եմ հասկանալ»։ և աղաչեց զՓիլիպպոս երթալ և նստիլ իւր հետ. ապա կը հարցնէ անոր. «Արդեօք մարգարէն որի՞ համար կը խօսի դայս, իւր թէ մի ուրիշի համար»։ այն ժամանակ Փիլիպպոս կը բանայ իւր բերանը և կը

քարոզէ անոր զՅիսուս՝ որուն կը հաւատայ ներքինին և պրպ Աստուածոյ կը դաւանի զնա։ Երբ որ ձանապարհին վրայ մի աղբիւրի հասան, Փիլիպպոս՝ ներքինւոյն խնդրանօք մկրտեց զնա, և ահա իսկոյն Հոգին սուրբ նորա վրայ իջաւ, իսկ հրեշտակը յափշտակեց զՓիլիպպոս և տարաւ յԱզովտոս։ ներքինին այլ ևս չը տեսաւ զայն, և շարունակեց ձանապարհը բազում ուրախութեամբ[1]։

Փիլիպպոս Ազովտում և շրջակայ տեղերում ևս քարոզելով՝ կը հասնի Կեսարիա, որ Յոպպէէն քառասուն մղոն հեռի և Ծովեզերքում գտնուող մի մեծ քաղաք էր, և որ այժմ աւերակ է. (այս է Կեսարիա Պաղեստինացւոց)։ Յիրաւի ողորմութեամբն Աստուծոյ հաւատացեալները երուսաղէմի շրջակայ քաղաքներում, մինչև Դամասկոս օր ըստ օրէ կը բազմանան, բայց յամառ հրէայք հանդարտ չեն կենար, և միշտ հետամուտ էին զանոնք հալածելու ամենայն խստասրտութեամբ։

Ա. յս մասին Սօղոս ևս մեծ բարկութեամբ լեցուած՝ քահանայապետէն հրաման կառնու գնալ ի Դամասկոս, թուղթ ունենալով ի ձեռին որ թէ

1. Իջին երկոքեան ի ջուրն, Փիլիպպոս և ներքինին՝ և մկրտեաց զնա։ Եւ երբև ելին ի ջրոյ անտի, հոգին սուրբ եկն ի վերայ ներքինւոյն, և հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ո՛չ ետես զնա ներքինին. և գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ. Գործ. Ը. 38.

այնտեղ և թէ ի ձանապարհին հաւատացեալներէն զով որ գտնէ, կապելով բերէ յԵրուսաղէմ։ Երբ այսպէս հալածասէր դիտաւորութեամբ Դամասկոսի կը մօտենար, յանկարծ փայլակի նման մի սաստիկ լոյս յերկնուստ կը ծագի նորա շուրջը, և ինքը երկիւղէն իսկոյն գետին կընկնի ու մի ձայն կը լսէ որ կասէր ։ «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ զիս կը հալածես»։ և որովհետև չէր դիտեր թէ ի՞նչ պատահեցաւ և ո՞րն էր այն, կը հարցնէ. «Տէր, դու ո՞վ ես»։ Ձայնը կը պատասխանէ. «Ես եմ Յիսուս, զոր դուն կը հալածես. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել։»

Յայնժամ Սօղոս վերին աստիճանի ահիւ ու դողութեամբ համակուած՝ կը հասկնայ թէ ի՞նչ մեծ մեղք է հաւատացեալները հալածել, ուստի խոնարհութեամբ կը հարցնէ. «Տէր, ի՞նչ կուզես որ անեմ»։ որով վինքը Յիսուսի կամաց կը յանձնէ. Յիսուս կը պատասխանէ. «Ոտքի ել, քաղաքը մտիր, այնտեղ քեզ կասեն թէ ի՞նչ պարտիս անել։» Սօղոսի ընկերներն էլ այդ ձայնը լսելով՝ երկիւղիւ պաշարուեցան. վասն զի մի բան չը տեսնելով՝ չէին գիտեր թէ ո՞վ է նորա հետ խօսողը։ Սօղոս ոտքի

1. Եւ ընդ երթալն նորա՝ եղև մերձենալ նորա ի Դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեցաւ լոյս յերկնից։ Եւ անկեալ յերկիր՝ լսաւ զբարբառ որ ասէր ցնա, Սաւուղ, Սաւուղ, զի՞ հալածես զիս. Գործ. Թ. 3.

կանգնեց, բայց ո՛չ ոք կարող էր տեսնել. ուստի նորա ձեռքէն բռնած՝ Դամասկոս տարին զայն, և թէև աչքերը բաց էին, բայց չէին կարող ոչինչ տեսնել։

Տե՛ս դու յիշեալի վիճակը. որովհետև Յիսուսի հաւատացողները պատժելու փափաքով ու եռանդով վառուած ժամանակ, ինքը կը պատժուի և կը պարտաւորի ճանաչել թէ նա՛ է Մեսիա, այն է Տէրոջ Օձեալը և Ըղձի Ա.ապո-ձոյ, որուն հակառակ գործելուն վրայ այն ատիճան կը զղջայ, որ երբ Դամասկոս կը մտնէ, երեք օր ո՛չ կուտէ և ո՛չ կը խմէ. այլ սրտառուչ պաղատանօք և աղօթիւք կը հայցէ որ Յիսուս ողորմի իրեն։

Ա՛յն միջոցին Յիսուսի աշակերտներէն Անանիա անուամբ մի անձ կար Դամասկոսում, որուն երազի մէջ կը հրամայէ Յիսուս՝ գնալ Յուդայի տունը գեղէցկի կոչուած փողոցում, և որոնել անդ Տարսոնացի Սօղոսը։ Մի և նոյն ժամանակ Սօղոսն էլ երազում Անանիան կը տեսնէ՝ որ գալով իւր վրայ ձեռք կը դնէր, որպէս զի տեսնէ։ Սակայն, որովհետև Անանիա չէր գիտեր թէ ձանապարհին վրայ Յիսուս երևցած է Սօղոսին, այս պատճառաւ կասէ. «Տէր, այդ մարդու մասին շատերէն լսեցի թէ որքա՜ն չարիք հասուցած է հաւատացեալներին Երուսաղէմի մէջ, և նոյն նպատակաւ եկած է նաև այստեղ։»

Յիսուս կը կրկնէ իւր հրամանը, յայտնելով

թէ ինքը ձանապարհում երևցած է անոր, թէ նա ընտիր անօթ պէտք է լինի և իւր անուան համար շատ չարչարանք պիտի կրէ։ Անանիա գնալով կը դտնէ Սօղոսը և նորա վրայ ձեռք դնելով կասէ. «Սաւուղ եղբայր, վեր նայէ, Յիսուս, որ երևեցաւ քեզ ի ձանապարհին, զիս առ քեզ ղրկեց որ տեսնես ու Հոգւով սրբով լեցուիս»։ այս խօսքին վրայ Սօղոսի աչքերը կը բժշկուին անմիջապէս, որ և կը մկրտուի. ապա կերակուր ուտելով՝ զօրութիւն կստանայ, և հաւատացելոց մօտ կսկսի բնակիլ ու Յիսուսը քարոզել, հաստատելով թէ նա է Քրիստոս և Ա.ապո-ձոյ որդին։

Սօղոսի սոյն վարմունքը ամենուն զարմանք կը պատճառէ և կսկսին ասել. «Սա չէ՞ր որ Յիսուսի հաւատացեալները կը պատժէր Երուսաղէմում և այստեղ էլ եկած էր զանոնք կապելով՝ քահանայապետին տանելու համար»։ իսկ նա առաւել զօրացած՝ կը յաղթէր հրէից և կը տեղեկացնէր նոցա թէ Յիսուսն է Քրիստոսն։

Ա.յնուհետև կը գնայ Արաբիա, ուր մի ժամանակ կենալէ յետոյ կը դառնայ նորին Դամասկոս, (ինչպէս որ յայտնի է Գաղ. Ա. 17). և երբ այնտեղ մեծ համարձակութեամբ կը քարոզէ, այս անգամ կը խորհին զայն սպաննել Արետա Թագաւորին կողմանէ պահապան կարգեալ ոստիկանին միջոցաւ (Բ. Կորնթ. ԺԱ. 32), որոնք գիշեր և ցերեկ քաղաքի դռները պահպանելու համար

զինուորներ կը յատկացնեն, որպէս զի քաղաքէն դուրս ելած ժամանակ սպաննեն զայն։

Սակայն հաւատացեալք իմանալով նոցա նենգութիւնը, բերդի պարիսպէն վանդակաւ վար կ'իջեցնեն զՍօղոս, որ կը յաջողի փախչիլ։ Ա.Հա այս եղանակաւ հրէից ձեռքէն ազատելով՝ երուսաղէմ կուգայ, ուր թէև կը փափագի դնալ հաւատացելոց մօտ, բայց ամէնքը կը վախնան Սօղոսէն. որովհետև չէին հաւատար թէ նա Յիսուսի աշակերտած է։ Սակայն Բառնաբաս որ տեղեակ էր գործին, առաքելոց մօտ կը տանի զայն, և կը պատմէ նոցա թէ ինչպէս Յիսուս երևցաւ անոր ճանապարհում և Դամասկոսի մէջ ինչպէս համարձակութեամբ քարոզեց նա յանուն Յիսուսի, որով Սօղոս ինքզ առաքելոց մօտ և ամենայն համարձակութեամբ կը քարոզէր աւետարանը։

Հաբ. ՅՈ՛Ա ԿԲ.

Սօղոս Երուսաղէմի մէջ քարոզած ժամանակ հրէայք հակառակեցան.

Պաւ. Հակառակեցան։ Մանաւանդ Յունաստանէն եկած և Երուսաղէմ բնակութիւն հաստատած հրէայք չը կարողանալով պատասխան տալ Սօղոսի, կը նախանձին և զայն սպաննել կուզեն. այս պատճառաւ հաւատացեալք Կեսարիա կը տանին

և անտի իւր հայրենիքը Տարսոն կը ղրկեն, որպէս զի այնտեղ ևս քարոզէ։

Յիրաւի վերոյիշեալ նախանձոտ մարդիկը ամէն կերպով Թշնամի էին հաւատացելոց, սակայն ողորմութեամբն Աստուծոյ՝ Հրէաստանի, Սամարիոյ և Գալիլեայի մէջ եկեղեցին խաղաղութիւն և հանգիստ կը վայելէր այն միջոցին, որով հաւատացեալները կը բազմանային. Պետրոս կամենալով այցելութիւն տալ նոցա բնակած տեղերին, շրջելով կուգայ Լիւդիա քաղաքը, յորում Ենիա անուամբ մի մարդ ութ տարիէ ի վեր անդամալոյծ պառկած էր մահիճին մէջ. Պետրոս կասէ անոր. «Ենիա՛, Յիսուս Քրիստոս կը բժշկէ զքեզ, ա՛րի և դու ինքնին թօթափէ անկողինդ»։ այս խօսքը նորա բերանէն ելածին պէս՝ իսկոյն անդամալոյծը բժշկուեցաւ [1]։

Սոյն հրաշքը այն աստիճան հռչակուեցաւ, որ Լիւդիայի և շրջակայ գաւառի բնակիչները Յիսուսի հաւատացէն զատ՝ համբաւը մինչև Յոպպէ հասաւ։ Ա.յն միջոցին Յոպպէում մի հաւատացեալ

---

1. Եւ եղև ի շրջելն Պետրոսի առ ամենեքումբք, լինջանել նմա և առ սուրբսն, որք բնակեալ էին ի Լիւդիա։ Եւ եգիտ անդ զայր մի, որում անուն էր Ենիա, ութամեան դնիւր ի մահիճս անդամալոյծ։ Ասէ ցնա Պետրոս. Ենիա՝ բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս. ա՛րի, և քեզէն թօթափեա՛ զանկողինս քո. և վաղվաղակի յարեաւ. Գործ. Թ. 32.

կար Տաբիթա անուամբ, որ այնքան կը նշանակէ-
սա նիստ առաքինի էր և աղքատաց խնամակալ,
և այն օրերուն հիւանդանալով կը մեռնի՝ զոր
լուալէ զինի՝ վերի յարկուն կը դնեն նորա մար-
մինը: Եւ որովհետև Լիւդիա Յոպպէէն միայն երեք
ժամ հեռի էր, և լսած էին թէ Պետրոս այնտեղ
է, երկու անձինք կը ղրկեն առ նա՝ աղաչելու հա-
մար որ շուտով գայ. քանզի կը յուսային որ եթէ
Պետրոս կամենայ, կարող է զայն ողջնցնել:

Երբ Պետրոս նոցա խնդրանաց վրայ Յոպպէ
եկաւ, առաջնորդեցին նմա մեռելոյն դանուած
դահլիկները, ուր աղքատները, այրի կանայք և որբեր
արտասուելով՝ իրենց հանդերձը կը ցուցնէին, զոր
Տաբիթա տուած էր նոցա: Յայնժամ Պետրոս զա-
նոնք դուրս կը հանէ, և ծնրադիր աղօթելէ զինի
կասէ. «Տաբիթա, յանուն Յիսուսի Քրիստոսի
ա՛րի և կանգնէ՛». այս խօսքին վրայ իսկոյն մե-
ռեալը կը կենդանանայ[1], և Պետրոս կոչելով որ-
բերն ու որբևայրիները, նոցա առջև կենդանի կը
ներկայացնէ զայն:

Երբ որ սոյն հրաշքն էլ բոլորին յայտնի
եղաւ, շատերը հաւատացին Յիսուսի. իսկ Պետրոս

1. Եւ հանեալ արտաքս զամենեսեսին Պետրոսի՝ եդ ծունր, եկաց յաղօթս և դարձաւ ի մարմինն և ասէ. Տաբիթա, ա՛րի, կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի. և նա եբաց զաչս իւր, և տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն. Գործ. Թ. 40.

Յոպպէում Սիմոն անուամբ մի խաղախորդի տան
մէջ բնակելով՝ միշտ աւետարանը կը քարոզէր: Այն
ժամանակ վերոյիշեալ կեսարիա քաղաքում հե-
թանոս ազգէ Կուռնելիոս անուամբ մի հարիւրա-
պետ կար, որ բարեգործ և բոլոր ընտանեօք աս-
տուածավախ մարդ էր և ժողովրդեան շատ ողոր-
մութիւն տալով՝ ամէն ժամանակ աղօթքով կը
պարապէր մաքուր և անկեղծ սրտիւ:

Աստուած նորա աղօթքը լսելով՝ կամեցաւ
ողորմիլ անոր, ուստի մի օր երբ ժամը իննին կա-
ղօթէր նորէն, սպիտակ հանդերձով մի հրեշտակ
երևնալով նորա անունը տուաւ ժամանակ՝ Կուռ-
նելիոս վախցաւ, բայց համարձակեցաւ ասել. «Ի՞նչ
է տէր». հրեշտակը պատասխանեց. «Աղօթքդ և
քու ողորմութիւնքը Աստուծոյ առջև ընդունելի
եղան. Յոպպէ մարդ ղրկէ և Սիմոն անուամբ անձը
կոչէ, որ Պետրոս կանուանի, նա կուգայ և քեզ
հարկաւոր եղածը կը խօսի», ու նորա բնակու-
թեան տեղն էլ յայտնելով անհետ կը լինի:

Իրաւ է որ Կուռնելիոս Պետրոսի անունը
լսած չէր մինչև այն ժամանակ, սակայն հրեշտակի
խօսքին նայելով՝ հասկցաւ որ Պետրոս պէտք է
իրեն սորվեցնէ ինչ որ իւր հոգւոյն փրկութեան
համար հարկաւոր էր. այս պատճառաւ յաջորդ
օրը Յոպպէ երեք մարդ կը ղրկէ, որոց կը յայտնէ
գործին կարևորութիւնը: Երբ որ սոքա Յոպպէի
մօտեցան, ժամանակը կէս օր էր, և Պետրոս գըտ-

նուաճ տան տանեաց վրայ ելած՝ աղօթելէ զկնի կանօթենայ և կերակուր կուզէ. մինչ անոնք կերակուր կը պատրաստէին, նորա վրայ մի զարմացումն եկաւ. և ահա կը տեսնէ երկինքը բացուած, ու չորս ծայրերէն կապուած սաւանի նման մի մեծ կտաւ երկրի վրայ իջած, յորում կային ամէն տեսակ չորքոտանիք, սողուններ և թռչուններ[1]. Պետրոս զայն տեսնելով՝ մինչ զարմացած կեցած էր, ձայն մի եկաւ թէ՝ «Արի՛, Պետրոս, մորթէ՛ ու կե՛ր». սակայն նա կը պատասխանէ. «Ֆաւ լիցի, Տէր, քանզի խառնակ և անմաքուր բան երբէք կերած չեմ». ձայնը վերստին լսելի կը լինի թէ՝ «Ինչ որ Աստուած սրբեց, դու մի՛ պղծեր»։

Ա.յս բանը երեք անգամ կրկնուելէ յետոյ, կտաւը երկինք կը վերանայ, և մինչդեռ Պետրոս հիացած՝ կը խորհէր թէ ի՞նչ կը նշանակէ այդ տեսիլը, ահա Կուռնելիոսի ղրկած մարդիկը նորա գտնուած տան դուռը գալով՝ կինքը կը հարցնեն։ Նոյն միջոցին Աստուծոյ հոգմանէ ևս ներշնչուած կտանայ թէ՝ «Ահա քեզ կը խնդրեն, գնա՛ նոցա

1. Եւ Պետրոս ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն. քաղցեաւ և կամէը ճաշակել. և ի պատրաստելն նոցա՝ եղև ի վերայ նորա զարմացումն։ Եւ տեսանէը զերկինս բացեալ. և զչորեցունց ատնոց կապեալ անօթ մի նման լնլև զկտաւայ մեծի, իջեալ և նստեալ ի վերայ երկրի։ Ցորում էին ամենայն չորքոտանիք և սողունք երկրի և թռչունք երկնից. Գործ. ժ. 9.

հետ առանց խղճահարութեան. քանզի ես զրկեցի զանոնք». այս աղդարարութեան վրայ Պետրոս վար կիջնէ և եկող մարդոցմէ գործը իմանալէ զկնի՝ նոյն դիշեր զանոնք կը պահէ իբր մօտ և յաջորդ օրը նոցա հետ կեսարիա կը գնայ. մի քանի հաւատացեալք ևս, որք Յոպպէում էին, նոցա հետ ի միասին կը գնան։

Կուռնելիոս, որ իբր ազդականքն ու մտերիմ բարեկամները իւր տունը հրաւիրելով Պետրոսին կսպասէր, երբ որ զայն տեսաւ, յարգանօք ընդառաջ ելնելով՝ նորա ոտքն ընկաւ ու երկրպագութիւն մատոյց, բայց Պետրոս արդիլեց զնա ասելով. «Ոտքի՛ ե՛լ, ես էլ մարդ եմ». և ապա կը յաւելու. «Դուք ինքնին գիտէք որ հրէին անկարելի է օտար ցեղի մարդոց դպչիլ կամ մերձենալ, սակայն Աստուած ինձ յայտնեց թէ այսուհետև մարդոցմէ ո՛չ ոք անմաքուր կը կոչուի. այս պատճառաւ առանց կասկածի եկայ, երբ ձեզ հրաւիրեցիք ձեր տունը։»

Ա.յս խօսքով Պետրոս իմացուց թէ հրէից ու հեթանոսաց միջև այլ ևս չիք խորը. ո՛վ որ ուղիղ սրտով Յիսուս Քրիստոսի կը հաւատայ, նա է ընդունելի և հաճոյ Աստուծոյ. զայս ասելէ յետոյ կը հարցնէ Կուռնելիոսի թէ՝ «Ի՞նչ նպատակաւ զիս հրաւիրեցիք։» Իրաւ է որ Պետրոս գիտէր թէ ինչ պատճառաւ հրաւիրուած է, քանզի արդէն յայտնած էին Լրեն հրաւիրելու գնացող անձինքը,

բայց գործը լաւ սուզելու համար՝ այդ հարցումն արաւ։ Ուստի Կուռնելիոս՝ ինչպէս որ իմաց տուած էր, ինքն էլ նմանապէս կը պատմէ անոր՝ հրեշտակին իրեն երեւիլը և նորա ասած խօսքերը։

Յանժամ Պետրոս կը քարոզէ նոցա զՅիսուս, և կարգաւ կը յայտնէ թէ ի՛նչպէս հրէայք խաչի մահուամբ սպանեցին զայն, թէ երեք օրէն նա յարութիւն առաւ, և թէ՝ ինչպէս որ մարգարէները գրած էին, նորա անուան հաւատացողները թողութիւն պիտի գտանեն։ Այնտեղ ներկայ գըտնուող ունկնդիրը Պետրոսի խօսքերը կատարեալ հաւատով և անկեղծ սիրով լսելէ յետոյ՝ երբ ընդունեցին ճշմարտութիւնը, իսկոյն Հոգւոյն սրբոյ շնորհքը նոցա վերայ իջնելով՝ սկսան զանազան լեզուներ խօսիլ ու զԱստուած փառաբանել բարձր ձայնիւ[1]։

Պետրոսի հետ Յոպպէէն եկող հաւատացեալները, որոնք հրէից ազգէն էին, զայս տեսնելով՝ թէև կը զարմանան որ Հոգւոյն սրբոյ պարգեւը հեթանոսաց ալ անխտիր կը շնորհուի, բայց Պետրոս կը փութայ մկրտել նորահաւատները և նոցա խնդրանաց վրայ մի քանի օր կը մնայ այնտեղ։

Առաքեալք և հրէաստանի մէջ գտնուող հա-

1. Եւ մինչդեռ խօսէը Պետրոս զբանս զայս՝ հանգեաւ Հոգի սուրբ ի վերայ ամենեցուն՝ որք լսէին զբանն. Գործ. ժ. 44.

ւատացեալք լսելով թէ Պետրոսի քարոզութեամբ հեթանոսք ևս ընդունած են Աստուծոյ խօսքը, երբ որ նա (Պետրոս) վերադարձաւ Յերուսաղէմ, հրէից ազգէն դարձող հաւատացեալք կասկածանքով հետի կը մնային ի նմանէ ասելով թէ՝ «Դուն հեթանոսաց գնացիր և նոցա հետ կերակուր կերար»։ վանորոյ Պետրոս կը պատմէ նոցա թէ ինքը աստուածային հրամանաւ գնացած էր և թէ Հոգին սուրբ հեթանոսաց վրայ ևս իջաւ։ Այն ժամանակ նոքա կը լռեն և զԱստուած փառաւորելով՝ կասեն թէ՝ «Ուրեմն Աստուած հեթանոսաց ևս շնորհեց կենաց ապաշխարութիւն։»

Ստեփաննոսի քարկոծման ժամանակ հաւատացեալք Երուսաղէմէն խոյս տուած և շրջակայ քաղաքները ցրուած էին (ինչպէս որ ԿԱ-րդ հարցում յիշուեցաւ)։ սոքա Միջերկրական ծովու Փոյնիկէ եղերքում քարոզելով՝ Կիպրոս կղզին և մինչև Անտիոք քաղաքը գնացին՝ միայն հրէից քարոզելով. բայց ի նոցանէ ոմանք՝ որք Կիպրացի ու Կիւրենացի էին, Անտիոքում յունաց ևս քարոզեցին, և ողորմութեամբն Աստուծոյ շատերը հաւատալով Յիսուսի, այնտեղ հաւատացեալք կը շատանան։ Երուսաղէմի հաւատացեալները զայս լսելով՝ (ԺԹ-րդ հարցում յիշուած) Բառնաբասը կը ղրկեն նոցա յօգնութիւն, որ շատ զուարթամիտ և Հոգւով սրբով լի մի անձնաւորութիւն էր։

Երբ սա Անտիոք գալով տեսաւ Աստուծոյ

հնորհքը, շատ ուրախացաւ և բոլորը սկսաւ մըխիթարել ու յորդորել որ միշտ հաստատ մնան Աստուծոյ սիրոյն մէջ. և որովհետև հաւատացեալները օր ըստ օրէ կը բազմանային այնտեղ, այս պատճառաւ Տարսոն գնալով՝ Սօղոսն էլ Անտիոք կը բերէ, ու երկուքը միասին մի տարիի չափ այնտեղ մնալով՝ մեծ համարձակութեամբ միշտ կը քարոզեն աւետարանը հաւատացեալներին, զորս Ընկերութիւն կանուանեն. քանզի մինչև այն ժամանակ Յիսուսի հաւատացող ու մկրտուողները աշակերտ կամ եղբայր կը կոչուէին:

Ա. ինչ որերուամ հաւատացեալներէն ոմանք, որոնք մարգարէ էին, Երուսաղէմէն Անտիոք եկան. մին ի նոցանէ, որուն անունն էր Ագաբոս, աստուածային ազդեցութեամբ դուշակեց թէ մեծ սով պէտք է լինի բոլոր աշխարհում, ինչպէս որ եղաւ Հռովմայեցւոց Կղովդիոս կայսեր օրով. այս պատճառաւ Անտիոքի քրիստոնեայքը՝ իւրաքանչիւրը ըստ կարողութեան, ողորմութիւն տալով՝ Բառնաբասի և Սօղոսի ձեռամբ Երուսաղէմ ծերերին կը ղրկեն, որպէս զի կարօտելոց բաշխուի:

Ա. ին միջոցին, Հերովդէս Ագրիպաս, որ ԺԲ-րդ հարցման մէջ յիշուած Անթիպաս Հերովդէսի եղբայր Արիստաբուղոսի որդին էր, Հռովմայեցւոց Կղովդիոս կայսեր հրամանաւ Հրէաստանի թագաւոր կարգուելով՝ Երուսաղէմ եկաւ, ու հրէից հաճոյ լինելու համար քրիստոնէից շատ նեղու-

թիւն տալէ զատ՝ Յովհաննէսի եղբայրն Յակոբոսն էլ սպաննել կուտայ:

Ա. յս մասին յայտնի է որ հրէայք շատ ուրախացան. ուստի Հերովդէս նոցա սիրտը առաւել գրաւելու փափաքանօք, կամեցաւ Պետրոսն էլ մեռցունել. սակայն բաղարջակերաց տօնի օրերը վրայ հասնելով՝ միայն կը ձերբակալեն զայն և կրկին շղթաներով կապելէ յետոյ՝ կը բանտարկեն զայն, որպէս զի տօնի օրերէն զկնի սպաննեն: Զորս մասերի բաժանուած տասն և վեց զինուորների պահպանութեան կը յանձնուի, որոց երկուքը բանտի ներքին կողմը՝ Պետրոսի գտնուած տեղում կը կենային, իսկ մնացեալք բանտի դրան առջև մեծ զգուշութեամբ կը հսկէին: Ի հարկէ հրէայք ուրախ, իսկ քրիստոնեայք տխուր էին այս պատգայում, բայց առանց յոյս կորելու Աստուծոյ ողորմութենէն, ամէնքը միասին նորա փրկութեան համար կաղօթէին:

Տե՛ս դու Աստուծոյ ողորմութիւնը. քանզի Հերովդէս, որ կուզէր յաջորդ օրը Պետրոսը հանել հրէից ներկայութեանը և սպաննել, ահա նոյն դիշերը յանկարծ Տիրոջ հրեշտակը կը մանէ բանտը, յորում թէև պայծառ լոյս կը ծագի, բայց ներս ու դուրս գտնուող պահապանք իմանալու անկարող կը լինին: Որովհետև Տիրոջ կողմանէ նոցա վրայ ծանր քուն և թմրութիւն կընկնի. իսկ Պետրոս, որ երկու պահապանաց միջև կապեալ կը

քնանար, կը զարթնու հրեշտակի ձայնէն՝ որ կա-
սէ. «Արի՛ շուտով». և իսկոյն շղթայքը նորա
ձեռքէն վար կընկնին [1]. հրեշտակը նորէն կը հրամայէ
փուքիով հագնիլ հանդերձը և գնալ իւր ետևէն:
Պետրոս թէև կը հագուի և նորա ետևէն կը
գնայ, ինչպէս իրեն հրամայուած էր, բայց չէր
գիտեր թէ տեղի ունեցածը իրականութի՞ւն է թէ
երազ կը տեսնէ:

Սակայն, երբ բանտին դուռը ինքնին բացուե-
լով դուրս ելան, մի ուրիշ երկաթէ դուռ ևս կար
դրսում, յորմէ քաղաքը կը մտնէին և որ՝ նոյն-
պէս ինքնին բացուելով մի փողոց մտան, ուր
հրեշտակը իսկոյն անհետացաւ. ահա այն
ժամանակ Պետրոս միայնակ մնալով՝ ուշքը վրան
եկաւ և հասկացաւ թէ հրեշտակի ձեռամբ Աս-
տուած ազատեց զինքը Հերովդէսի ձեռքէն: Վաս-
նորոյ կը փութայ Մարկոս աւետարանչի մօտ՝ Մա-
րիամի տունը գնալ, որոյ դուռը ծեծելուն պէս՝
Հռոդէ անուամբ մի աղախին կուգայ իմանալու
թէ ո՞վ է. իսկ երբ կիմանայ թէ Պետրոսն է դու-
ռը, զգացած ուրախութենէն առանց դուռը բա-
նալու՝ կը վազէ ներս և կը պատմէ որ Պետրոսն է
դուռը ծեծողը:

1. Ահա հրեշտակ Տեառն եկն և եկաց ի վերայ՝ և լոյս ծագեաց ի տանն, և խթեաց զկողն Պետրոսի, յարոյց զնա՝ և ասէ. արի վաղվաղակի, և անկան շղթայքն ի ձեռաց նորա. Գործ. ԺԲ. 7.

Որովհետև շատերը հաւաքուած էին այնտեղ
և կաղօթէին, բայց աղախնոյ խօսքերին չը հաւա-
տալով կ'ասեն. «Խելագար ես դուն». երբ նա կը
պնդէ թէ ճշմարիտ է, նոքա կ'ասեն. «Թերևս նո-
րա հրեշտակն է». իսկ Պետրոս շարունակ դուռը
կը զարնէր, զոր բանալով կը տեսնեն թէ արդարև
Պետրոս ինքն է և կը զարմանան յոյժ: Նա էլ
ձեռքով նշան կանէ որ լռեն. և պատմէլէ յետոյ
թէ ինչպէս ազատուեցաւ, կը պատուիրէ նոցա
իմաց տալ Տէառնէղբայր կոչուած Յակոբայ և այլ
հաւատացելոց ու ինքը կը գնայ ուրիշ տեղ:

Յիրաւի Պետրոս գիտէր թէ ինքը ուր որ էլ
լինի, Աստուած կարող է զինքը պահպանել. բայց
մարդս պարտական է նաև մարդկօրէն հարկ եղածը
ի գործ դնել ապահովութեան համար. ուստի
Երուսաղէմէն մեկնելով, Պետրոս կը գնայ Հերով-
դէսի իշխանութեան սահմանէն դուրս գտնուած
մի տեղ, որպէս զի մի ժամանակ պահպանուի:

Հաւքսո՛ ԿԳ.

*Երբ Պետրոս ազատուեցաւ, Հերովդէս դարձեալ
նեղութիւն տուաւ հաւատացեալներին.*

Պաւլ. Զը տուաւ: Թէպէտև ի հաճոյս հրէից
կը փափաքէր քրիստոնեայքը նեղել, բայց ժամա-
նակ չը գտաւ: Ւանդի առաւօտեան՝ երբ պահա-
պանք Պետրոսը բանտում չը գտան, իրենց մէջ

մեծ խռովութիւն ընկաւ. Հերովդէս ևս պահապանները հարցաքննելէ յետոյ, նոցա վրայ կը կասկածի, կարծելով թէ նոքա փախուցած են զայն. ուստի բարկութեամբ կը հրամայէ սպաննել պանդուխք, և ինքն Հերովդէս կը գնայ Փիլիպեայ Կեսարիա քաղաքը, ուր իւր չարութեան համեմատ պատիժը կը գտնէ. քանզի նա Տիւրոս և Սիդոն քաղաքաց բնակիչներին դէմ զայրացած լինելով՝ կը փափաքեր զանոնք պատժել:

Ա. յս վերջինք բազմութեամբ նորա մօտ եկան և սենեկապետ Պղաստոսի միջոցաւ հաշտութիւն կը խնդրեն, որպէս զի իրենց քաղաքաց կերակուրը յարքունուստ մատակարարուի: Երբ մի օր Հերովդէս արքայական պճնազարդ զգեստով աթոռի մէջ նստած՝ ի ներկայութեան բոլորին իշխանաբար և գոռոզութեամբ նոցա հետ կը խօսէր, ժողովուրդը սկսաւ աղաղակել թէ՝ «Աստուծոյ բարբառ է այս և ո՛չ մարդոյ»: և ահա հրեշտակը կը զարնէ զայն իսկոյն, որով սաստիկ որդնոտելէ յետոյ՝ ողորմելի կերպով իւր վերջին շունչը կը փչէ. վասն զի հպարտ և ինքն իրեն հաւանած լինելուն համար չուզեց փառս տալ Աստուծոյ:

Յիրաւի Երուսաղէմի քրիստոնեայք մի առժամանակ Հերովդէսի ձեռքէն հալածանք և նեղութիւն կրեցին, բայց ողորմութեամբն Աստուծոյ օր ըստ օրէ հաւատացելոց թիւը կը շատնար. և որովհետև (ինչպէս կը լսուի հարցուփորձ)

Բառնաբաս և Սօղոս Անտիոքէն ապրուստ բերած էին Երուսաղէմ քրիստոնեայ կարօտելոց համար, երբ իրենց գործը կատարեցին վերջացաւ, նորէն Անտիոք վերադարձան, իրենց հետ ի միասին առնելով Յովհաննէսն էլ, որ Մարկոս կը կոչուէր:

Անտիոքում արդէն բազմաթիւ քրիստոնեայք կային. Բառնաբաս, Նիւգեր անուանեալն Շմաւոն, Կիւրենացի Ղուկիոս, չորրորդապետ Հերովդէսի դայեկորդին Մանայէն և Սօղոս, որոնք մարգարէ և վարդապետ էին. Հոգւոյն սրբոյ ներշնչմամբ Բառնաբասն ու Սօղոսը կորոշեն առաքելական քարոզութեան համար, և, աղօթիւք ու ծոմապահութեամբ, նոցա վրայ ձեռք կը դնեն ու կը ղրկեն ուրիշ տեղեր:

Սոքա կը գնան նախ Սելեւկիա և անտի ի Կիպրոս, ուր ամբողջ կղզին շրջելով՝ կը քարոզեն և կը հասնին մինչև ի Պափոս, ուր Բարեյեսու անուամբ մի կախարդ և սուտ մարգարէ կը գտնեն, որ ինքզինքը գիշերական (ելիմաս) մարդու տեղ կը դնէր և բդեշխի փոխանորդ Սերգիոս Պօղոսի մօտ կը մնար, որ մի խնամասուն մարդ էր: Սա՝ Բառնաբասի և Սօղոսի քարոզելը լսելով՝ կը կոչէ զանոնք իւր մօտ և կը խնդրէ որ ինքն էլ լսէ Աստուծոյ խօսքը. բայց այս մասին վերոյիշեալ կախարդը (մոգ) կընդդիմանայ. որովհետև գիտէր որ եթէ քաղաքի դատաւորը Յիսուսի հաւատայ, իւր սուտպատիր

խաբէութիւնքը յերևան պէտք է գային և ինքը պիտի խայտառակուէր։

Երբ յիշեալը այսպիսի չարամիտ ընթացքով ու խորհրդով կը շարժէր, Սօղոս դէպ ի նա հայելով ասաց. «Ո՛վ դու, այր լի նենգութեամբ և ամենայն խորամանկութեամբ, որդի սատանայի, թշնամի ամենայն արդարութեան, չի՞ պիտի դադարիս Տիրոջ ուղիղ ճանապարհը թիւրելէ. ահա նորա ձեռքը քո վրայ է, և դու կոյր պէտք է լինիս և արև չը պիտի տեսնես առ ժամանակ մի։» Մինչդեռ Սօղոս այս խօսքը կարտասաներ, իսկոյն ելիմաս մոգի աչաց վրայ վարագոյր ընկնելով կուրացաւ։ Ա՛յս բանիս համար Սերգիոս շատ զարմացաւ, և ո՛չ միայն կատարեալ սրտով հաւատաց Յիսուսի, այլև այն աստիճան սիրեց Սօղոսը, որ իւր մականունը նորա վրայ գնելուն համար՝ Ս. Գիրքը այնուհետև Պօղոս անուամբ կը յիշատակէ զՍօղոս։

Ապա նորա կը գնան Լաւոդիկէ և Պարամանէ շրջակայքը կայցելեն, ուր վերոյիշեալ Յովհաննէսը, որ նոցա հետ էր, դատուելով ի նոցանէ կը դառնայ Երուսաղէմ. իսկ Բառնաբաս և Պօղոս մի շաբաթ օր Հրեից ժողովարանում քարոզելով՝ շատերը կը հաւատան, բայց շատերն էլ առ նախանձու ո՛չ միայն ընդդէմ կը կենան, այլ նաև իրենց երկրէն դուրս կը հանեն զանոնք, և այս բանիս համար նորահաւատները առանց իրենց հաւատոյ մէջ դեղևելու՝ կը շարունակեն ուրախութեամբ ծառայել

Աշխարհութեան, որոյ լոյսը նոր ծագած էր իրենց հոգիներէն վրայ։

Պօղոս և Բառնաբաս այնտեղէն կուգան Իկոնիոն քաղաքը, ուր նոցա քարոզութեանց և հրաշագործութեանց վրայ բազմաթիւ Հրէայք և Յոյնք կը հաւատան Յիսուսի, սակայն յամառ Հրէայները նոցա դէմ գանգատ կը բառնան առ իշխանս տեղւոյն, և երբ զանոնք քարկոծել կուզեն, նորա կը փախչին դէպի Լիւստրա, և այդ կողմերը շրջելով կը քարոզեն աւետարանը։ Երբ Լիւստրայի մէջ կը քարոզեին, ի մօրէ կաղ ծնած մի մարդ, որ երբեք քալած չէր և փողոցում կը նստէր, լսելով Պօղոսի խօսքերը, կը ցանկայ հաւատալ. ուստի Պօղոս դէպ ի նա հայելով բարձրաձայն կասէ. «Ես կասեմ, յանուն Յիսուսի Քրիստոսի ոտքի կ՚ել[1]։»

Ա՛յս խօսքը Պօղոսի բերնէն ելածին պէս՝ խեղճ կաղը յոտին կանգնելով կսկսի քալել և վազվազել, զոր տեսնելով ժողովուրդը՝ բարձր ձայնիւ կասեն. «Աստուածներ մարդոց կերպարանօք առ մեզ իջան»։ որովհետև Հեթանոս լինելով, կը կար-

---

1. Եւ այր ոմն Լիւստրացի տկար յոտից նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբեք չէր գնացեալ։ Սա լուաւ զխօսսն Պօղոսի, որ հայեցեալ ի նա, և տեսեալ թէ ունի հաւատս փրկութեան, ասէ մեծաձայն. քե՛զ ասեմ, յանուն Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի յո՛տն կաց ի վերայ ոտից քոց ուղիղ. և վազվազէը՝ և գնայր. Գործ. ԺԴ. 7.

ձեն թէ կուռքերն են որ այդ հրաշքը գործեցին. ուստի իրենց կռոց անուամբ Բառնաբասը Դիոս կանուանեն, իսկ Պօղոսը՝ Հերմէս: Բացի այդ, Դիոսի քուրմը, որ քաղաքի դրան առջև կը գտնուէր, բազմութեամբ կուզէ նոցա զոհ մատուցանել և ծաղիկներէ հիւսած պսակ դնել նոցա գլխոյն վրայ:

Երբ Բառնաբաս և Պօղոս նոցա դիտաւորութիւնը կիմանան, իրենց հանդերձը պատռելով՝ բազմութեան միջէն դուրս կելլեն բարձրաձայն աղաղակելով. «Ո՛վ մարդիկ, այս ի՞նչ է որ կանէք, մենք էլ ձեզ նման տկար բնութեամբ մարդ ենք, ձեզ զԱստուած քարոզելու համար եկանք, որպէս զի այսպիսի սնոտի բաները թողլով՝ երկինքն ու երկիրը և նոցա միջի բոլոր արարածները ստեղծող Արարիչը ճանաչէք, որ ձեզ կը կերակրէ և ամենուն կը պարգևէ իւր առատ բարիքները:» Այս կերպ խօսքերով հազիւ կարդիլեն ժողովուրդը և կը համոզեն որ ամէն մարդ իւր գործին գնայ, և իրենք կը շարունակեն քարոզել նոցա՝ Աստուծոյ խօսքը:

Արդարև ողորմութեամբն Աստուծոյ Բառնաբասի և Պօղոսի քարոզութիւնքը առատ արդիւնք կուտան և այն գաւառներում քրիստոնեայք կը բազմանան յոյժ. այսու Հանդերձ այն միջոցին Անտիոք և Իկոնիոն քաղաքներէն մի քանի յամառ և չարանախանձ հրէայք գալով՝ կը պատրեն ժողովուրդը ասելով. «Այդ մարդերէն հեռի կեցէք.

նոցա ասածը սուտ է». և բազմութեամբ Պօղոսի վրայ կը յարձակին և զայն քարկոծելէ յետոյ՝ իբրև մեռեալ քաշքռտելով քաղաքէն դուրս կը հանեն և այնտեղ կը թողուն:

Ոմանք քրիստոնեայք ևս Պօղոսը մեռած կարծելով՝ գիշեր ժամանակ զայն թաղելու կուգան, բայց Պօղոս իսկոյն ոտքի ելնելով քաղաքը կը մտնէ և յաջորդ օրը Բառնաբասի հետ Դերբէ կը գնայ, ուր նոցա քարոզութեամբ շատերը կը հաւատան: Այն տեղէն կրկին կը դառնան Լիւստրա, Իկոնիոն և Անտիոք Պիսիդեայ, ուր քրիստոնեայ հասարակութիւնը կը վերիմարեն և կը յորդորեն նեղութենէ ու հալածանքէ չերկնչիլ և իրենց հաւատոյ մէջ հաստատուն մնալ. քանզի Աստուծոյ արքայութիւնը մտնելու համար հարկ է նեղութիւն քաշել: Նմանապէս Եկեղեցիների պիտոյից համեմատ երէցներ ձեռնադրելով՝ ծոմ կը պահեն և կաղօթեն առ Աստուած, որոյ ողորմութեան ու խնամոց յանձն առնելով զանոնք՝ կը մեկնին անտի:

Բառնաբաս և Պօղոս այն կողմերում՝ քարոզելով կուգան Աթալիա, և անտի նաւով կը վերադառնան Անտիոք, ուր քրիստոնեայ հասարակութիւնը ժողովելով՝ կը պատմեն բոլորին թէ Աստուած որչափ մեծամեծ սքանչելիք գործեց իրենց ձեռքով և թէ նորա ողորմութեան դուռը բացուած է հեթանոսաց առջև: Թէև ամենքը ուրախացան այս մասին, բայց Հրէաստանէն եկած մի քանի անձինք,

որոնք աղքատ հրեայ էին, սկսան ասել հեթանոսութենէ դարձողներին թէ՝ «եթէ ըստ օրինացն Մովսէսի չը թլփատուիք, չէք կարող փրկուիլ:»

Պօղոս և Բառնաբաս նոցա հետ շատ կը վիճաբանին յայտնելով թէ՝ քրիստոնեայք պարտական չեն թլփատուելու և հին օրէնքը պահելու. սակայն վերոյիշեալ անձինք ո՛չ մի կերպ չը համոզուեցան. այս պատճառաւ որոշեցին Բառնաբասն ու Պօղոսը, ինչպէս նաև ի նոցանէ մի քանին երուսաղէմ ղրկել առաքելոց և ծերերին խորհուրդ հարցնելու համար: Պօղոս և Բառնաբաս Անտիոքէն մեկնելով՝ Փոյնիկի ծովեզերքէն և Սամարիայէն անցած ժամանակ՝ կը պատմին թէ ուրիշ տեղեաց հեթանոսք ևս հաւատացին, որուն վրայ ամէնքը շատ կուրախանային:

Երբ նոքա երուսաղէմ հասան, առաքեալներէն ու բոլոր ծերերէն մեծ պատիւ գտնելով՝ կը պատմին Աստուծոյ արած ողորմութիւնը առ հեթանոսս, որուն վրայ բոլորը ուրախացան. սակայն փարիսեցիներէն դարձող քրիստոնէից մի քանին կասեն. «Նոքա ևս պարտին թլփատուիլ:» Այս մասին խորհելու համար առաքեալք և ծերք ժողով կանեն, ուր բաւական դեր ու դէմ խօսելէ ետքն՝ Պետրոս ոտքի կելնէ և տեսակ տեսակ փաստերով ամէնքը կը համոզէ թէ քրիստոնեայք պարտաւոր չեն հին օրէնքը պահպանելու, որով ամէնքը համոզուած՝ կը լռեն:

Ապա Տեառնեղբայր Յակոբ, որ առաջնորդ էր երուսաղէմի հաւատացելոց, Պետրոսի խօսքերը Ս. Գրոց վկայութեամբ հաստատելէ յետոյ կասէ. «Հեթանոսութենէ հաւատքի եկողները թող չը թլփատուին, բայց թուղթ գրենք իրենց որ հեթանոսական սովորութիւններէն հեռի կենան:» Յայնժամ բոլոր ժողովականք միաբան ըստ այնմ թուղթ գրելով՝ Պօղոսի և Բառնաբասի հետ կը ղրկեն, որոց կընկերանան նաև Յուդա, որ Բարսաբա կը կոչուէր, և Շիղա. քանզի սոքա ևս մարգարէ էին և բոլոր հաւատացեալներէն շատ յարգուած:

Երբ որ նոքա Անտիոք գնալով՝ ի ներկայութեան քրիստոնէից կարդացին առաքելական թուղթը, ամէնքը շատ ուրախացան: Յուդա և Շիղա մի միջոց այնտեղ կը մնան և կը մխիթարեն հաւատացեալները. ապա Յուդա երուսաղէմ կը դառնայ, իսկ Շիղա կը մնայ Անտիոքում: Պօղոս և Բառնաբաս ևս այնտեղ շրջելով կը քարոզէին անդադար:

Հպ. ԿԴ.

Պօղոս եւ Բառնաբաս շատ ժամանակ մնացին Անտիոքում.

Պաթ. Զը մնացին: Որովհետև տեղւոյն քրիստոնեայքը ըստ ամենայնի իրենց հաւատոյ մէջ ան-

թերի էին և հնազանդ. ուստի Պօղոս կը ցանկայ վերստին այցելել յառաջագոյն քարոզած տեղերին, և անդ գտնուած քրիստոնէից կացութիւնը իմանալ: Նա իւր այս միտքը կը հաղորդէ նաև Բառնաբասին, որ կը հաւանի ընկերանալ նմա: Սակայն Մարկոս անուանեալ Յովհաննէսը, որ ի նոցանէ զատուելով Երուսաղէմ գնացած էր (տես ԿԳ-րդ հարցումը), ղղջալով Անտիոք եկած էր այն միջոցին. Բառնաբաս կուզէ որ զայն ևս իրենց հետ առնեն, քանզի նա իւր քեռորդին էր. բայց Պօղոս կը մերժէ. վասնորոյ իրարմէ զատուելով՝ Բառնաբաս Մարկոսը հետն առած՝ Կիպրոս կը գնայ, իսկ Պօղոս վերոյիշեալ Շիղան առնելով՝ Ասորւոց և Կիլիկիոյ կողմերը կը գնայ:

Թէպէտև այս պատճառաւ նոքա իրարմէ բաժանուեցան, բայց ողորմութեամբ Աստուծոյ Բառնաբաս Կիպրոս կղզոյն մէջ և այդ կողմերուն աւետարանը քարոզելով՝ ամէնքը Հոգւոյն սրբոյ շնորհայ լուսով լուսաւորելէ զկնի՝ կը նահատակուի այնտեղ: Պօղոս ևս նախապէս շրջած տեղերին այցելելէ և քարոզութեամբ եկեղեցիները հաստատելէ յետոյ՝ կուգայ նորէն ի Լիւստրա, ուր Տիմոթէոս անուամբ մի քրիստոնեայ կար, որուն առաքինութիւնն ու բարեպաշտութիւնը յայտնի էր ամենուն. Պօղոս իւր հետ կառնու զայն և շրջակայից մէջ քարոզելով՝ կը քաջալերէ քրիստոնեաները, որոց թիւը օր ըստ օրէ կաճէր:

Ահա այսպիսի եռանդով ու գործունէութեամբ Պօղոս և իւր ընկերները Իկոն, Տիմոթէոս և Ղուկաս աւետարանիչ (քանզի սա ևս Պօղոսի հետ էր, ինչպէս յայտնի է Գործ. ԺԶ. 10), Աստուծոյ խօսքը քարոզելով՝ կուգան Փռիւգիա և Գաղատիոյ կողմերը, յորում ժամանակ մի քարոզելէ զկնի՝ երբ կուզէին Բիւթանիա ևս գնալ, Տիրոջ կողմանէ արգիլուեցան և Տրովադա գնացին: Անդ եղեալ Պօղոս մի երազ կը տեսնէ, յորում մի մարդ աղաչանօք կասէր իրեն. «Մակեդոնիա գալով օգնես մեզի:» Իմանալով թէ այդ երազը աստուածակոյս կողմանէ մի ազդարարութիւն է, Տրովադայէն մեկնելով Փիլիպպէ կը գնան, որ Մակեդոնիոյ առաջին քաղաքն է:

Այս քաղաքում մի քանի օր մնալէ յետոյ՝ շաբաթ օր քաղաքէն դուրս գետեղրի վրայ աղօթելով կը նստին: Անդեղ կանայք հաւաքուած լինելով երբ կսկսին Աստուծոյ խօսքը քարոզել նոցա, մի աստուածավախ կին Լիդիա անուամբ, որ Թիւատիրէ քաղաքէն էր և ծիրանավաճառ, Աստուծոյ յատուկ շնորհայ ազդեցութեամբ Պօղոսի խօսքերին ունկնդրելով կը հաւատայ, և բոլոր իւր դերդաստանովը մկրտուելէն զատ՝ սաստիկ սիրով և աղաչանօք կստիպէ զՊօղոս և նորա ընկերները գնալ իրենց տունը. և նոքա կը կատարեն նորա բաղձանքը:

Անդհետև Պօղոս իւր ընկերաց հետ դար-

ձեալ ազօթքի դնացած ժամանակ՝ կը պատահին մի ազախնի, որ ունէր այս հարցուկ (դէ), և որ իւրաքանչիւր մարդու հարցման համեմատ կը պատասխաններ մի մի կերպ սատապատիր խօսքով. այս պատճառաւ նորա տէրերը զայն քաղաքում շրջեցնելով հարցում անողներէն դրամ կստանային: Յիշեալ ազախինը Պօղոսն ու նորա ընկերները տեսնելով՝ կսկսի նոցա եւս էն ազաղակել. «Սոքա բարձրելոյն Աստուծոյ ծառաներն են, որք փրկութեան ճանապարհը կ՚պատմեն ձեզ:»

Շատ ժամանակ այսպէս անելուն համար, մի օր Պօղոս ձանձրացած՝ կը հրամայէ դեւին ասելով. «Կը պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել ի դմանէ:» Արդարև անմիջապէս ելաւ դեւն և ազախնոյն խելքը գլուխն եկաւ [1]. սակայն նորա տէրերը լիստ շատ բարկացան, քանի որ այս պատճառաւ դրամ ձեռք բերելու իրենց յոյսը փճացաւ. վասնորոյ բազմութեամբ յարձակելով Պօղոսն ու Շիղան բռնեցին և քաղաքի մեծաւորաց առջևը հանեցին:

Ասպա ամէնքը միաբանելով՝ ահագին ամբոխիւ կը տանին դանոնք զօրաց գլխաւորներին՝ ասելով. «Այս մարդիկը մեր քաղաքը կը խռովեն. իրենք

1. Զայրացեալ Պօղոս՝ դարձաւ և ասէ ցգային. պատուիրեմ քեզ յանուն Ցիսուսի Քրիստոսի ելանել ի դմանէ. և ել ի նմին ժամու. Գործ. ԺԶ. 18.

հրէայ են, մեզ այսպիսի օրէնք կը քարոզեն, զորս արժան չէ մեզ ընդունիլ. որովհետև մենք Հռովմայեցի ենք»: այս դանդաղին վրայ զօրագլուխք ժողովրդէն վախնալով՝ իրենց հանդերձը կը պատռեն, և առանց գործը քննելու՝ Պօղոսն ու Շիղան ծեծելով վիրաւորելէ զատ՝ կը բանտարկեն, և բանտապահին կը պատուիրեն խիստ զգուշութեամբ պահել զանոնք. ուստի նա էլ ներքին բանտում պահելով՝ նոցա ոտքերը կոճղով կը կապէ ամրապէս:

Ա՛յստեղ նայէ դու Աստուծոյ զօրութեանը. վասն զի մինչ Պօղոս և Շիղա կէս գիշերին ազօթքի կանգնած՝ գԱստուած կօրհնէին և բանտում գտնուած կալանաւորներն էլ նոցա ունկն կը դնէին, յանկարծ այնպիսի երկրաշարժ տեղի կունենայ՝ որ բանտի հիմերը կսկսին երերալ և բոլոր դռները բացուելէ զատ՝ բանտարկելոց կապանքն էլ կը քակուին [1]: Բանտապահը, որ այնտեղ կը քնանար, երկրաշարժի սաստկութենէն զարթնած՝ դռները բաց տեսած պէս, կարծելով թէ բանտարկեալք փախած են, երկիւղէն սուրը կը քաշէ ինքզինքը սպանելու նպատակաւ, բայց Պօղոս բարձր ձայնիւ

1. Եւ ի մէջ գիշերոյն Պօղոս և Շիղա կային յաղօթս՝ և օրհնէին զԱստուած. ունկն դնէին նոցա կալանաւորքն. Եւ եղև յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև շարժիլ հիմանց բանդին. և բացան անդէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանք լուծան. Գործ. ԺԶ. 25.

կասէ. «Անձիդ չար մի՛ գործեր. մենք բոլորս այս-տեղ ենք։»

Յայնժամ բանտապետը լոյս հետն առած ներս կը մտնէ, ահիւ և դողութեամբ Պօղոսի և Շիղայի ոտքը կընկնի և զանոնք դուրս հանելով կասէ. «Տէարք, ի՞նչ պարտիմ անել որ փրկուիմ»։ քանզի ստոյգ գիտցաւ որ այդ սքանչելիքը նոցա պատճառաւ կատարուեցաւ Տիրոջ կողմանէ։ Նոքա կը պատասխանեն. «Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի որ փրկուիս դու և քու բոլոր գերդաստանդ»։ և Աստուծոյ խօսքը կը քարոզեն անոր և նորա տան մէջ բոլոր գտնուողներին. բանտապետը կը հաւատայ, իսկոյն իւր տունը կը տանի զանոնք և նոցա վէրքերը լուալէ ետքն՝ կատարեալ հաւատով կը մկրտուի ինքն և իւր բոլոր ընտանիքը. ապա կերակուր կը դնեն նոցա առջև, կուտեն կուրախանան։

Առաւօտեան, զօրապետները մարդ կը ղրկեն բանտապետին որ Պօղոսն ու Շիղան արձակէ. քանի որ յայտնի էր թէ նոքա անմեղ են։ Երբ որ Պօղոս բանը կիմանայ, չուզեր դուրս ելնել ասելով. «Անմեղ և Հռովմայեցի մարդիկ յանիրաւի ծեծելով՝ հրապարակաւ բանտարկեցին. հիմայ ծածո՞ւկ արձակել կուզեն. ո՛չ այդպէս. թող իրենք գան և զմեզ դուրս հանեն։» Պօղոսի սոյն խօսքերը իշխանք լսելով՝ շատ կը վախնան և իրենք անձամբ գալով՝ կաղաչեն որ բանտէն ելնեն ու գնան, որ-

պէս զի այս պատճառաւ քաղաքում մի խռովութիւն չը պատահի։

Պօղոս և Շիղա ողորմութեամբն Աստուծոյ այսպիսի եղանակաւ ազատուելէ յետոյ՝ կը գնան վերոյիշեալ Լիդիայի տունը, յորում հաւատացեալ եղբայրները կը տեսնեն և կը մխիթարեն զանոնք. ապա Փիլիպպէ քաղաքէն կը մեկնին՝ ուրիշ տեղեր գնալու և Ս. աւետարանը քարոզելու համար։

Հարցո՛ւմ կն։

Պօղոս եւ իւր ընկերները Փիլիպէէն մեկնելով ուր գնացին։

Պաս. Դարձեալ Մակեդոնիոյ մէջ գտնուող Ամփիպօլիս և Ապողոնիա կոչուած տեղերը գնացին, և այդ կողմերում շրջելով ու քարոզելով հասան Թեսաղոնիկէ քաղաքը, յորում շատ հրէայք կը գտնուէին։ Պօղոս՝ ըստ իւր վարժի սովորութեան, երեք շաբաթ նոցա հետ խօսակցելով՝ կը հաստատէր թէ պարտ էր Քրիստոսի (Մեսիայի) չարչարիլ, մեռանիլ և ապա յարութիւն առնել. և Ս. Գրոց վկայութիւններով կապացուցանէր թէ Նա է Յիսուս Քրիստոսն, զոր իրենք կը քարոզէին, որով ի նոցանէ ոմանք հաւատալէն զատ՝ շատ հեթանոսներ և պատուաւոր կանայք հաւատացին Յիսուսի Քրիստոսի։

Սակայն այս անգամ ևս չարանենք հրէայք այն ատելձան նախանձով կը լեցուին, որ անօրէն և դռնհիկ մարդիկներ կուտելով՝ մեծ խռովութիւն կը յարուցանեն քաղաքին մէջ, և ահագին ամբոխիս կը յարձակին Յասոնի կոչուած մարդու տան վրայ, Պօղոսն ու նորա ընկերները կը պահանչեն. քանզի նորա տան մէջ իջևանած էին: Երբ այնտեղ չեն գտներ զանոնք, Յասոնը և հաւատացեալներէն մի քանին բռնելով կը տանին առ քաղաքապետս գանգատելով թէ՝ «Նոքա՝ որ զաշխարհ խռովեցին, այժմ այստեղ եկած և Յասոնի տունը իջած են. սոքա ամէնքը կայսեր հրամանին հակառակ կը գործեն և Յիսուս անուամբ մէկուն համար ըսփռաւոր է կասեն:»

Եւ որովհետև ըստ օրինի հարկ էր երկու կողմերն էլ դէմ առ դէմ խօսել տալ, վասնորոյ Յասոնի և այլ քրիստոնէից համար երաշխաւոր առնելով՝ կարձակեն զանոնք և Պօղոսն ու Շիղան կորոնեն: Այս պատճառաւ քրիստոնեայք անմիջապէս գիշեր ժամանակ կը ղրկեն զանոնք Բերիա քաղաքը, որ Մակեդոնիոյ մէջ Թեսաղոնիկէի մօտ էր: Պօղոս և Շիղա որքան որ Բերիա վախան, այնտեղ ևս հրէայք կային, որոնք սիրով և յօժարակամ կընդունին Աստուծոյ սոյն անվեհեր պաշտօնեայքը. նա՛ մանաւանդ սոքա Թեսաղոնիկէի հրէաներէն աւելի իմաստուն և ազնիւ մարդիկ էին, որոնք միշտ Ս. Գիրքը մեծ ուշադրութեամբ

կը քննէին՝ իմանալու համար թէ այս՝ այսպէս է. և յետ քննութեան շատերը հաւատացած՝ ընդունեցին քրիստոնէութիւնը: Նմանապէս բազմաթիւ յոյնք, արք և կանայք միանգամայն հաւատացին Յիսուսի:

Երբ որ Թեսաղոնիկէի հրէայք այս լուրն առին, շուտով Բերիա եկան, որպէս զի այնտեղ ևս ժողովուրդը յուզելով՝ Պօղոսի դէմ յարուցանեն. այս պատճառաւ հաւատացեալք պայն Աթէնք կը ղրկեն. իսկ Շիղա և Տիմոթէոս կը մնան Բերիայում: Սակայն ի միմեանց չը բաժանուելով՝ միաբան կերպով քարոզելու համար, Պօղոս զինքը տանող անձանց միջոցաւ լուր կը ղրկէ որ փութով Աթէնք գնան. և ինքը միշտ կը քարոզէր թէ՝ հրէից և թէ այլ հեթանոս ազգաց ամենայն համարձակութեամբ:

Աթենացիք իրենք զիրենք իմաստուն համարելով՝ միշտ նոր բան խօսելու և կամ լսելու հետաքրքրուտ էին. ուստի երբ Պօղոսի քարոզութիւնը լսեցին, սկսան ասել թէ «Այս մարդը ի՞նչ կուզէ ասել». և թէպէտ հակառակ խօսողներ եղան, բայց ոմանք կը տանին զՊօղոս դատաւորաց ատեանը, որ Արէոպագոս կանուանէր, որպէս զի անդ նորէն լսեն պայն: Պօղոս կասէ. «Ա՛րք աթենացիք, զձեզ ըստ ամենայնի իբր պաշտօնասէր մարդիկ կը տեսնեմ. քանզի շրջելով տեսայ ձեր պաշտամունքը, գտայ նոյնպէս մի բագին, որոյ վրայ գրուած էր,

անձանձրելին Աստուածոյ. ահա զոր դուք առանց ձանձրանալու կը պաշտէք, ես զայն կը քարոզեմ ձեզ։»

Ջայս ասելէ յետոյ՝ կը յայտնէ նոցա թէ՝ «ձշմարիտ Աստուած նա՛ է, որ երկինքն ու երկիրը ստեղծեց, ինչպէս նաև բոլոր արարածները, որք ամենքն էլ նորա զօրութեամբ կապրին. թէ կուռքերը, որք ձեռագործներ են, Աստուած չեն»։ վերջապէս կը խօսի նոցա Յիսուսի և նորա յարութեան վրայ։ Ա.յս քարոզը լսելով՝ թէև ոմանք կը ծաղրեն առաքեալը, բայց ՝ն՚ոդ հարցում յիշուած Դիոնէսիոս (որ Արիսպագոսում առնի գլխաւոր էր), նաև Դամարիս անունով մի կին և այլք հաւատացին Յիսուսի Քրիստոսի։

Ա.թենքէն Պօղոս կը գնայ Կորնթոս քաղաքը, ուր կը գտնուէր Պոնտացի Ակիւղաս անունով հրէայն իւր կնոջ Պրիսկիղիայի հետ, որոնք քրիստոնէութիւնը ընդունած էին Հռովմայ մէջ, և երբ Հռովմայեցւոց Կղոդիոս կայսեր հրամանաւ բոլոր հրէայք քաղաքէն արտաքսուեցան, Իտալիայէն Կորնթոս եկած էին։ Ակիւղաս արհեստով խորանարար էր, ինչպէս նաև Պօղոս որ, գնաց նորա մօտ բնակեցաւ, և նորա վրայ բեռ չը լինելու համար, ինքը Պօղոս ևս իւր ձեռքի աշխատանքովը կապրէր. միայն շաբաթ օրերը ժողովարանում կը քարոզէր անդադար և նորա քարոզութեամբ շատ հրէայք և հեթանոսք հաւատացին Քիստոսի։

Սյն միջոցին Տիմոթէոս (ինչպէս

վերը յիշուեցաւ, Պօղոս կսպասէր նոցա) Մակեդոնիայէն Կորնթոս եկան, որոց հետ միաբան կը քարոզէր հրէից և կը հաստատէր թէ Յիսուս է Քրիստոս. սակայն երբ յամառ հրէայք ընդդէմ կենալով հայհոյեցին, Պօղոս վրայի հանդերձը թօթափելով կասէ. «Արիւն ձեր ի գլուխս ձեր. քաւեալ եմ ես. այսուհետև հեթանոսաց կերթամ»։ և Տիտոս Յուստոս անուամբ մի մեծայարգ քրիստոնէի տան մէջ կսկսի բնակիլ, որ հրէից ժողովարանին մօտ էր. և Կրիսպոս ժողովրդապետը իւր բոլոր ընտանեօք, ինչպէս նաև Կորնթոսի բնակիչներէն շատերը կը հաւատան և կը մկրտուին։

Ըստ որում նախանձոտ հրէայք Պօղոսին թշնամի և շատ հակառակ էին, որպէս զի չը վախնայ, գիշերը Աստուած կասէ անոր երազին մէջ. «Մի՛ վախնար. միշտ խօսէ. ես քեզ հետ եմ. ո՛չ ոք կարող կը լինի գքեզ չարչարել. քանզի այս քաղաքում ես շատ ժողովուրդ ունիմ[1]»։ այս պատճառաւ Պօղոս մնկ ու կէս տարի անդ հնալով կը քարոզէր Աստուծոյ խօսքը. սակայն Աքայեցւոց բդեշխի փոխանորդ Գաղիոնի օրով չարագրգիռ հրէայք միաբանելով՝ Պօղոսը կը բռնեն և նորա

1. Եւ ասէ Տէր ի գիշերին տեսլեամբ ցՊօղոս՝ մի՛ երկնչիր, այլ խօսեա՛ց՝ և մի՛ լռեր։ Քանզի ես ընդ քեզ եմ, և ո՛չ ոք ընդդէմ գայցէ քո, ի չարչարել գքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում ի քաղաքիս յայսմիկ. Գործ. ԺԸ. 9.

աւետանը հանելով կասեն. «Այս մարդը խաբեբայ ոք է. օրէնքէն դուրս զԱստուած պաշտել կը սորվեցնէ:» Այս անգամ Թշուառականները իրենց նպատակին չը կարացին հասնիլ աստուածային մասնաւոր խնամոց շնորհիւ:

Բանդի մինչ Պօղոս կը պատրաստուէր պատասխանել չարախօս հրէից, Գաղիոն ինքը կասէ նոցա. «Ո՛վ հրէայք, եթէ մի անիրաւութիւն կամ խարդախութիւն դործուած լինէր, արժան էր ձեզ լսել. բայց եթէ ձեր օրինաց նկատմամբ մի խնդիր ունիք, գնացէք ձեր մէջ կարգադրեցէք. որովհետև այսպիսի խնդրոց համար դատաւոր լինիլ չեմ ուզեր»· զայս ասելով, աւետանէն դուրս հանել կուտայ զանոնք. և երբ Յոյները հրէից թելադրութեամբ Սոսթենէս ժողովրդապետը կը ծեծէին իբր թէ Պօղոսին կօգնէ, յիշեալ դատաւորը բնաւ միոյն չաներ այդ մասին, թէև նոյն իսկ աւետնին առջև տեղի կունենար այդ անկարգութիւնը: Ահա այս եղանակաւ ժողովրդական աղմուկը կը դադարի, և Պօղոս շատ ժամանակ ևս այնտեղ մնալով կը քարոզէր:

Այնուհետև Պօղոս կը վախքի ասորւոց երկիրը գնալ՝ այնտեղեայց քրիստոնեաները քաջալերելու համար. վերոյիշեալ Ակիւղան ու Պրիսկիլա ևս նմա կընկերանան. և երբ Եփեսոս կուգան, ինքը Թողլով ընկերները՝ կը փութայ հրէից ժողովարանը գնալ և քարոզել: Թէպէտև սոքա կաղաչէին զՊօղոս երկար ժամանակ մնալ իրենց մօտ, բայց նա չընդունիր, այլ միայն կը խոստանայ կրկին դալ առ նոսա կամաքն Աստուծոյ: Այնտեղէն կեսարիա կը գնայ, որ Յոպպէի մօտ է. և տեղւոյն հաւատացեալները տեսնելէ զկնի՝ Անտիոք կերթայ, ուր մի ժամանակ մնալով՝ կանցնի Գաղատիոյ և Փռիւգիոյ կողմերը, որպէս զի հաւատացեալները սրտապնդէ և հաստատէ ի հաւատս, ինչպէս որ յառաջագոյն նոցա քարոզած էր:

Այն միջոցին Աղէքսանդրացի Ապողոս անուանով իմաստուն անձը, որ քրիստոնեայ էր, Եփեսոս գալով՝ մեծ եռանդով և համարձակութեամբ զՅիսուս կը քարոզէր. սակայն մինչև այն ժամանակ աւետարանի խորհրդոց կատարեալ տեղեկութիւն չէր կրցած ունենալ. միայն Յովհաննու մկրտութիւնը գիտէր: Ակիւղաս և Պրիսկիլա իրենց քով կառնուն զայն և աւետարանը կը սորվեցնեն անոր կատարեալ կերպով:

Ապա երբ որ Ապողոս կը ցանկայ Աքայիա և Կորնթոս գնալ, զայն ընդունելու համար յանձնարարագիր կուտան իրեն առ հաւատացեալս. երբ Ապողոս կը հասնի ի Կորնթոս, մեծապէս օգտակար կը լինի տեղւոյն քրիստոնէից. որովհետև բազում քաջասրտութեամբ և հրապարակաւ կը յանդիմանէր հրէաները և Սուրբ Գրոց վկայութիւններով կը հաստատէր և կը համոզէր իսկ զնոսա թէ Յիսուս է Քրիստոս, Տէրոջ Օձեալը, որ յաշխարհ գալոց էր:

Հատուած ԿԶ.

Պօղոս առաքեալ Գաղատիայէն ո՞ւր գնաց.

Պաթ. Եփեսոս, ինչպէս որ խոստացած էր։ Ա֊ինտեղ երկու քրիստոնեայ կը գտնէ, որոնք Յովհաննու մկրտութեամբ մկրտուած լինելով, ո՛չ միայն Հոգին սուրբը ընդունած չէին, այլ և մինչև իսկ նորա անունը լսած չէին. վասն զի Յովհաննէս կը մկրտեր ժողովուրդը, որպէս զի իրենց մեղաց վրայ ղղջալով՝ Յիսուսի հաւատան (տես ժ և ժէ֊րդ հարցումները). այս պատճառաւ զանոնք կը մկրտէ յանուն սուրբ Երրորդութեան, և նոցա վրայ ձեռք դնելով՝ Հոգին սուրբը կիջնէ նոցա վրայ, որք կսկսին այլ և այլ լեզուներ խօսիլ ու մարգարէանալ։

Պօղոս երեք ամիս շաբաթ օրերը հրէից ժողովարանը գնալով՝ Աստուծոյ արքայութիւնը կը քարոզէ. թէպէտ շատերը կը համոզուին, բայց յամառ ու չարամիտ մի քանի անձինք նորա քարոզած վարդապետութիւնը մերժելով՝ ի ներկայութեան ամբոխին կը չարախօսեն և կը բամբասեն գնա. վասնորոյ Պօղոս կսփիռքի հաւատացեալները զատել ի նոցանէ, և կը գնայ Տիւրէն անուամբ մի մարդու դիւանում կը բնակի (որ դպրոցի նման մի տեղ էր) և երկու տարի քարոզելով ու հրաշագործութիւն անելով՝ շատ հրէայ և հեթանոս գարձի կը բերէ։ Վասն զի Աստուած Պօղոսի ձեռամբ այնքան հրաշքներ կը գործէ, որ մինչև անգամ նորա քրտինքին թաշկինակը կամ վարշամակը կը տանէին հիւանդաց համար, որոնք իսկոյն կը բժշկուէին[1]։

Ա֊յն ժամանակ Եփեսոսի Սկևա քահանայապետին եօթը որդիքը, որոնք երդմնեցուցիչ էին, Պօղոսի գործած հրաշքները տեսնելով, իրենք ևս այսահարներէն չէրերը հանելու փափաքանօք, չարժանց համարձակութեամբ անէ ի տուն կը շրջէին և այսահարներին կասէին. «Կերդուընցնեմ զձեզ յանուն Յիսուսի, զոր Պօղոս կը քարոզէ։» Մի օր երբ դարձեալ դիւահարի մի այսպէս երդում կուտային, դևը կը պատասխանէ. «ԶՅիսուս գիտեմ և զՊօղոս կը ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք։» Արդարև Յիսուսի և Պօղոսի անունէն դևը երկիւղ կը կրէր, բայց երդմնեցուցչաց անարժան լինելուն համար, դիւահարը իսկոյն վազելով՝ ի նոցանէ երկուքը կը բռնէ, և ոտքի տակ առնելով՝ այն աստիճան կը վիրաւորէ զանոնք, որ իրենց հանդերձը թողլով՝ հազիւ կը յաջողին խոյս տալ։

Ա֊յս գործը ամբողջ Եփեսոսի հրէից և հեթանոսաց յայտնի եղաւ, որով ամէնքը սկսան վախնալ, և Յիսուսի անունը կը մեծանար ու կը

---

1. Եւ զօրութիւնս ո՛չ սակաւս Աստուած առնէր ի ձեռն Պօղոսի, մինչ զի և ի հիւանդս տանել ի քրտանէն թաշկինակս և կամ վարշամակս, և մերժել ի նոսանէն ախտիցն, և այսոց չարաց ելանել. Գործ. ԺԹ. 11.

փառաւորուէր: Շատերը կը հաւատային Յիսուսի և իրենց անցեալ մեղքերը հրապարակաւ կը խոստովանէին. կախարդներէն ևս շատերը իրենց կախարդական գրքերը ի ներկայութեան հասարակաց կայրեն, որոց արժէքը մինչև յիսուն հազար դահեկանի կը հասնէր. քանզի հասկցան թէ այդպիսի կախարդութեան վերաբերեալ գրքերը բոլորովին սուտ և սատանայական հնարքներ են:

Ողորմութեամբն Աստուծոյ, երբ այս կերպով Եփեսոսի մէջ Աստուծոյ խօսքը զօրութիւն դառաւ, Պօղոս կը մտադրէ նորէն Մակեդոնիա գնալ և արդէն քարոզած տեղերուամ շրջելով՝ հաւատացեալները քաջալերելէ զինի՝ Երուսաղէմ և ապա Հռոմ գնալ: Այս դիտաւորութեամբ աշակերտներէն երկուքը (Տիմոթէոսն ու Երաստոսը) Մակեդոնիա կը ղրկէ և ինքը մի ժամանակ ևս Եփեսոս քաղաքում կը մնայ:

Այդ միջոցին, Դեմետրիս անուամբ մի ոսկերիչ, որ արծաթեղէն կուռքեր և կռոց վերաբերեալ իրեր կը շինէր և այդ բանէն մեծ շահ կը լինէր թէ իրեն և թէ իւր գործաւորաց համար, տեսնելով թէ Պօղոսի քարոզութեամբ շատերը քրիստոնէութիւնը ընդունելով՝ կուռքերէն երես դարձուցին, հասկցաւ որ այլ ևս ըստ առաջնոյն շահ չը պիտի ունենայ. ուստի իրեն արհեստակիցները առ ինքն կոչելով կասկ նոցա. «Մենք ինչպէս պէտք է ապրինք այսուհետև. որովհետև Պօղոս շատերը

համոզելէ զատ թէ կուռքերը Աստուած չեն, կուզէ նաև Արտեմիսի կառատունը քանդել». այս խօսքերով կը գրգռէ ամէնքը. քանզի Եփեսոսի հեթանոս բնակչաց բոլորը Արտեմիսի կուռքը կը պաշտէին:

Նոքա Դեմետրիոսի խօսից ազդեցութեան տակ՝ կսկսին կատաղութեամբ պոռալ. «Մեծ է Արտեմիսը». որով քաղաքին մէջ ահագին խռովութիւն կելնէ և Պօղոսը կը փնտռեն. և երբ չեն գտներ, նորա ընկերներէն Գայիոսը և Արիստարքոսը կը բռնեն (որոնք Պօղոսի ուղեկցած էին) և բազմութեամբ կը տանին քաղաքի հրապարակը (թատրոնի): Թէպէտ Պօղոս էլ կուզէ գնալ այնտեղ, բայց նորա աշակերտներն ու բարեկամները աղաչանօք ետ կը կեցնեն զայն իւր մտադրութիւնը ի գործ դնելէ. վասն զի ամբոխը այն աստիճան խռովեալ էր, որ իւրաքանչիւրը մի տեսակ աղաղակ բառնալէ զատ՝ շատերը չէին իսկ գիտեր թէ ինչ բանի համար ժողովուած են այնտեղ:

Այն միջոցում Աղէքսանդրոս անուամբ մի մարդ էլ կը բռնեն ու հրապարակը կը բերեն (իբր Պօղոսի համախոհ անձ). նա ձեռքերը շարժելով կուզէ պատասխանել ամբոխին. սոքա հասկնալով թէ նա հրէայ է և կռոց հակառակ, ամէնքը միաբերան կսկսին աղաղակել երկու ժամ շարունակ թէ «Մեծ է Արտեմիս:» Եւ որովհետև Դեմետրիոսի պատճառաւ քաղաքը խռովութեան մատնուած էր, ուստի դպրապետը, որ հեթանո-

սաց կրօնապետն էր, կը խրատէ ամբոխն ասելով. «Ո՞վ չէ գիտեր թէ Աբրահիմ և Դիսպիտէս կուռքերը մեծ են (Դիոպէտէս կոչուած կուռքն էլ պաշտողներ կային)։ Այս մասին ձեզ պարտ է հանդարտիլ և յանդգնութեամբ չը գործել, որովհետև պատասխանատուութեան կենթարկուինք, երբ մեր ընթացքը արդարացնելու անկարող գտնուինք, քանի որ ամբաստանած անձինքը ո՛չ կռատուն կողոպտած են և ո՛չ էլ մեր կուռքերին հայհոյած են. եթէ Դեմեարիս և ոսկերիչ արհեստաւորը դատ ունին, թող դատաւորին դիմեն և դատաստան խնդրեն». ահա այսպիսի խօսքերով դպրապետը հազիւ կարողացաւ համոզել ամբոխը և ցրուել զայն։

Որովհետև Պօղոս կը վախճաքէր Մակեդոնիա գնալ (ինչպէս վերը յիշուեցաւ), ուստի ամբոխը ցրուելէ յետոյ հաւատացեալները կոչելով կը մխիթարէ և կը յորդորէ որ իրենց հաւատքի վրայ հաստատուն կենան, ապա ինքը Մակեդոնիա գնալէ և այն կողմերում շրջելէ ետքն՝ կուգայ Ելլադա, ուր երեք ամիս կը մնայ և կը սպասպնդէ տեղւոյն քրիստոնեաները. ապա աշակերտներէն մի քանիսը Տրովադա կը դրկէ, ուր հինգ օր եաքը ինքն էլ կը գնայ և եօթն օր այնտեղ կը մնայ։ Սակայն պատարագ մատուցանելէ վերն՝ յաջորդ օրը պէտք է մեկնէր. վասնորոյ շաբաթ օրում հաւատացեալները մի տան մէջ կը գումարուին։

Անտեղ Պօղոս կը քարոզէ և ամէնքը կը մխիթարէ քաղաքական խօսքերով, որով քարոզը մինչև կէս գիշեր կերկարի. իրենց նստած տեղը մի վերնատուն էր, ուր շատ մի լապտերներ վառած էին։ Սակայն Եւտիքոս անուամբ մի երիտասարդ, որ երրորդ յարկում պատուհանի առաջ նստած քարոզին կունկնդրէր, մրափած ժամանակ պատուհանէն կընկնի և իսկոյն վերջին շունչը կտայ։ Այս պատահարին վրայ, երբ ամէնքը սրբատաբեկ եղած էին, Պօղոս անմիջապէս վար իջնելով՝ գիրկը կառնու երիտասարդի անշունչ դիակը և կասէ. «Մի խռովիք, քանզի սորա հոգին դեռ ի ամին է[1]։» Արդարև երիտասարդը իսկոյն կը կենդանանայ, որով ամէնքը կուրախանան և Պօղոս պատարագ մատուցանելով (հաղորդութեան հացը բեկանելով)՝ մինչև առաւօտ քարոզութիւնը կը շարունակէ։

Անտուհետև Տրովադայէն մեկնելով՝ ծովեզերեայ մի քանի ամուռանոց տներ հանդիպելէ ետքն՝ կուգան Միտիլինէ կղզին։ Անտեղէն Եփեսոս մարդ

---

1. Եւ նստէր ոմն երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝ ի վերայ պատուհանին, նիրհէր ի քուն Թանձրութեան. ի խօսելն Պօղոսի յաճախ, ընկղմեալ ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ գետնկոնէն ի վայր, և բարձաւ մեռեալ։ Եւ իջեալ Պօղոսի՝ անկաներ դնուաւ, առնոյր զնա ի գիրկս՝ և ասէր. մի խռովիք, քանզի հոգի սորա ի սմին է. Գործ. Ի. 9.

կը ղրկէ երէցներն ու ժողովրդեան ծերերը կոչելու, որպէս զի Աստուծոյ պատուէրները նորէն հաղորդէ նոցա. քանզի Պէնիքէկոսթէ տօնը մերձեցած լինելով՝ կաճապարէր որ օր յառաջ Երուսաղէմ գնայ՝ տօնին անդ գտնուելու համար։ Երբ որ նոքա Պօղոսի հրաւէրը ուրախութեամբ ընդունելով կուգան նորա մօտ, կսկսի պատմել նոցա Եփեսոսում իրեն պատահած անցքերը, թէ ինչ կերպով ինքը աւետարանը քարոզեց բոլորին, և թէ մանաւանդ իրեն և իւր ընկերներին հարկաւոր եղածը իւր ձեռաց աշխատանքով վաստակելէ զատ՝ հիւանդներին էս կարաց ձեռնտու լինել. այս ամէնը յառաջ բերելով յորդոր կարդաց նոցա որ իրենք էս ըստ այնմ գործեն, որպէս զի վարձուց արժանի լինին։

Նա՛ մանաւանդ կանխաւ կը տեղեկացնէ նոցա թէ ինքը երթալէն յետոյ չարագործ մարդիկ յերևան պէտք է գան և իրրև յափշտակող գայլեր քրիստոնեայ հօտին չը պիտի խնայեն և ստապատիր խօսքերով շատերը իրենց պիտի կապեն. ուստի պէտք է որ իրենք շատ զգոյշ և արթուն կեանան քրիստոնեայ հօտը կառավարելու մասին, զոր Յիսուս իւր արեամբը փրկեց։ Այս կերպ պատուէրներով և խրատական յորդորներով զանոնք աստուածային շնորհաց յանձնելէ յետոյ՝ ամէնքը ծնկաչոք աղօթքի կը կանգնին, որպէս զի ապա հրաժարի ողջոյնը տալով նաև մանէ։

Այս պարագայում, ով կարող է այնտեղ ներկայ եղող քրիստոնէից արտասուքը սրբել. վանն զի յայտնի էր որ այլ ևս նորա երեսը չը պիտի տեսնէին. ուստի ի խորոց սրտի տխրութեամբ համակուած՝ ամէնքը լալով նորա վիզը կը փաթթուին և սաստիկ սիրով զայն համբուրելէ յետոյ՝ դէպի նաւը ճանապարհ կը դնեն սրտայոյզ կսկծանօք և կողկողագին հառաչանօք։

Պօղոսն և իւր ընկերները Միտիլինէ կղզիէն մեկնելով՝ կուգան ի Կով. ապա Հռոդոս կղզին և այլ տեղեր հանդիպելէ զկնի՝ Տիւրոս կը հասնին, ուր նաւապետը պէտք էր հանել իւր բեռները։ Այնտեղ հաւատացեալներ կը գտնեն, որոց մօտ եօթն օր կը մնան և որք կասեն Պօղոսի որ Երուսաղէմ չերթայ. քանզի Աստուած յայտնեց նոցա թէ Երուսաղէմում շատ չարչարանք պիտի քաշէ. բայց Պօղոս չը համոզուելով Աքեա կուգայ, անտի ևս Կեսարիա, ուր Փիլիպպոսի տան մէջ կիջևանին, որ Կ-րդ հարցում յիշուած եօթը սարկաւագներէն մին էր, և նա չորս աղջիկ ունէր, որոնք կոյս և մարգարէ էին։

Մի առ ժամանակ այնտեղ կենալէ զկնի՝ Հրէաստանէն (Կ-րդ հարցում յիշուած) Ագաբոս մարգարէն նոցա մօտ կուգայ, և Պօղոսի գօտին առնելով՝ իւր ոտքերն ու ձեռքերը կը կապէ, ու աստուածային ներշնչմամբ կասէ. «Հրէայք այս գօտւոյն տէրը պէտք է կապեն Յերուսաղէմ և

հեթանոսաց ձեռքը մատնեն։» Պօղոսի աշակերտները և այլք զայս լսելով՝ շատ աղաչանք կանեն որ Երուսաղէմ չը գնայ, բայց նա վճռաբար կասէ. «Ինչո՞ւ համար լալով սիրտս կը ճմլէք. ես Յիսուսի անուան համար ո՛չ միայն կապուելու, այլ և մեռնելու պատրաստ եմ»։ վանողոյ նորա «Տիրոջ կամքը լինի» ասելով կը լռեն այլ և այնպէս, տեսնելով նորա հաստատակամութիւնը։

Ապա երբ որ Երուսաղէմ կուգան, քրիստոնեայք մեծ ցնծութեամբ կընդունին զանոնք, և յաջորդ օրը Տեառնեղբայր Յակոբայ մօտ գնալով, բոլոր քահանայք և ծերք այնտեղ կը գումարուին, ուր Պօղոս կարգաւ կը պատմէ թէ Աստուած որչափ ինչ ողորմութիւն ու շնորհք ցոյց տուաւ հեթանոսաց, որուն վրայ նորա կօրհնէին ու կը փառաբանէին զԱստուած մեծ հրճուանօք։ Սակայն հրէութենէ դարձած երուսաղէմի քրիստոնեայք հին օրինաց պահպանութեան մասին նախանձախընդիր լինելով՝ Պօղոսին հակառակ էին. վասն զի (ԿԳ-րդ հարցում յիշուածին պէս) նա կը քարոզէր թէ արժան չէ հին օրէնքը պահպանել։ Այս պատճառաւ Տեառնեղբայրը կը կարգադրէ որ օրինաց համեմատ Պօղոս տաճարը գնալով՝ եօթն օր զոհ մատուցանէ։

Այն միջոցին չորս անձինք ուխտաւոր լինելով Պօղոսի հետ տաճարը կը գան և զոհ կը մատուցանեն. բայց դեռ եօթն օրը չը լրացած՝

ասիացի հրէայք զայն տաճարը կը տեսնեն, և բազմութեամբ նորա վրայ յարձակելով՝ ոչ միայն տաճարէն դուրս կը հանեն, այլ և կսկսին աղաղակել ասելով. «Արք իսրայէլացիք, օգնութեան հասէք. այս է այն մարդը, որ ամենուրեք օրինաց հակառակ կը քարոզէ, այն աստիճան որ տաճարը հեթանոս մտցնելով զայն պղծեց»։ քանզի նախապէս նորա հետ տեսած էին եփեսացի Տրոփիմոսը, և կը կարծեն թէ զայն տաճարը տարած է։

Յայնժամ բովանդակ քաղաքը յուզուած՝ դռները կը փակուին, և Պօղոսը սպաննելու վրայ էին, երբ Լիւսիաս հազարապետը զինուորաց հետ հասնելով՝ կազատէ զնա. սակայն ամէն կողմէն աղմուկ ու աղաղակ լսուելուն համար՝ լաւ չը կարողանալով հասկանալ թէ Պօղոսը ոմ է և ինչ պատճառաւ բազմութիւնը կուտուած է, կրկին շղթայիւք զայն կապել կուտայ, և բանակը կը դրկէ, որպէս զի քննութեամբ գործը ստոյգ կերպով հասկանայ։

Հարցո՛ւմ կէ.

Հազարապետը Պօղոսը բանակը դրկելէ յետոյ, թշնամիները հանդարտեցա՞ն.

Պաս. Զը հանդարտեցան։ Քանզի ահագին ամբոխիւ նորա եւեէն գնալով կաղաղակէին «Բարձ զնա»։ և այն աստիճան աղմուկ կը յարուցանէին,

որ զինուորք հաղիւ կարացին զայն բանակը մուծանել։ Յայնժամ Պօղոս հազարապետին հետ խօսիլ ուզելով կը հարցնէ. «Հրաման կուտա՞ք որ ձեզ մի քանի բան ասեմ»։ Նա կը պատասխանէ. «Դո՞ւ ես այն եգիպտացին, որ ասկէ յառաջ չորս հազար անարժան մարդիկ ապստամբեցնելով անապատ տարիր։»

Պօղոս յայտնելով հազարապետին թէ ինքը հրէից ազգէն է և Տարսոնացի, կը խնդրէ որ թոյլ տայ իրեն՝ ժողովրդեան խօսելու։ Երբ հրաման կստանայ խօսելու, Պօղոս ձեռները շարժելով կսկսի եբրայեցի լեզուաւ խօսիլ ասելով. «Ո՛վ եղբայրներ և հայրեր, լսեցէք ինձ»։ ԵՒ կը յայտնէ թէ ինքը ազգաւ հրէայ և Տարսոն քաղաքէն է, թէ երուսաղէմի մէջ Գամաղիէլի մօտ կրթուած է և Քրիստոսի հաւատացողները մահու չափ ատելէ և հալածելէ զատ՝ այս նպատակաւ Դամասկոս գնալու ժամանակ ճանապարհին վրայ Յիսուս կերևի իրեն. կը յիշէ նորա ասած խօսքերը (ինչպէս որ ԿԱ-րդ հարցում յիշուած էր), թէ նորա հրամանաւ մկրտուելէ զինի Երուսաղէմ դալով տաճարում աղօթած ժամանակ և մտքով յափշտակուած միջոցին՝ Յիսուս դաբձեալ կերևնայ իրեն ասելով. «Շուտով ել Երուսաղէմէն, քանզի քու վկայութիւնը չեն ընդունիր. գքեզ պիտի ղրկեմ հեռաւոր տեղերում դանուող հեթանոսներին»։ այսպէս կարգաւ կը պատմէ Պօղոս մի առ մի անցեալ անցքերը։

Ամբոխը, որ մինչև այն ժամանակ լռութեամբ կունկնդրէր, վերջին խօսքերը լսելով՝ այն աստիճան կը զայրանայ, որ ամէնքը միաբերան կսկսին գոռալ թէ «Վերցուր զնա, ապրելու արժանի չէ»։ բացի այդ, իրենց հագուստներն էլ կը հանեն կը նետեն և գետնի վրայինները օդը կը ցանեն։ Մոլեգնեալ ամբոխին սոյն կատաղի շարժմանց նայելով՝ հազարապետը շատ կը հետաքրքրուի հասկանալու թէ արդեօք ի՞նչ է Պօղոսի յանցանքը որ նորա դէմ այսքան բորբոքուած կաղաղակեն. ուստի երբ զայն խօսիլ տալու համար կը պատրաստուի կապել և ծեծել զնա, Պօղոս կասէ թէ՝ «Միթէ արժանի է ձեզ մի անմեղ հռովմայեցի ծեծել»։ հազարապետը նորա հռովմայեցի լինելը իմանալուն պէս՝ թէև վախնալով չի ծեծեր զՊօղոս, բայց յաջորդ օրը քահանայապետներն ու հրէից ծերերը կոչելով առաքեալն էլ իր առեանը կը հանէ, որպէս զի դէմ առ դէմ քննութիւն բանայ և ճշմարտութիւնը իմանայ։

Յայնժամ Պօղոս յառնին գտնուող բազմութեան նայելով, տակաւին թշնամիները չը խօսած՝ կասէ. «Ա՛րք եղբարք, ես մինչև ցայսօր ուղիղ մտօք ընթացած եմ առաջի Աստուծոյ»։ այս խօսքին վրայ՝ Անանիա քահանայապետը նորա համարձակախօսութեան չը հանդուրժելով՝ կը հրամայէ իր սպասաւորաց որ Պօղոսի բերնին զարնեն։ Սակայն, որովհետև օրինաց առջև մի մարդու

յանցանքը չը հաստատուած՝ անոր զարնելը ապօրէն էր, ուստի առաքեալը կասէ քահանայապետին. «Աստուած էլ զքեզ պիտի զարնէ, բռեալ որմ, դու նստած ես օրինաց համաձայն զիս դատելու և օրինաց հակառակ կը հրամայես զիս հարկանել:»

Ա՛յս պարագայում, Անանիա իւր ապօրինի վարմունքի պատճառաւ յանդիմանութեան արժանի էր. վասնորոյ չը համարձակեցաւ պատասխանել, բայց շուրջը գտնուողները դատախազ կանգնիլ կուզեն և առաքեալը յանցաւոր ցոյց տալու համար կասեն. «Քահանայապետը կը հայհոյես:» Պօղոս կը պատասխանէ նոցա. «Քահանայապետ լինելը չէի գիտեր, եղբարք. որովհետև գրուած է թէ ժողովրդեան իշխանին չը հայհոյես» (Ելից. ԻԲ. 28). այս մասին Ս. Գրոց պատգամը կը յիշէ, որպէս զի չասեն թէ Գրոց անհըմուտ է:

Բայց յայսմանէ, նկատելով թէ իւր հակառակորդներէն ոմանք Փարիսեցի էին և ոմանք Սադուկեցի, որոնք թէև միմեանց ներհակ, բայց իւր դէմ ամէնքը միաբանած էին, այս պատճառաւ կամենալով նոցա միջև բաժանում ձգել, բարձրաձայն կասէ. «Արք եղբարք ես Փարիսեցի եմ և որդի փարիսեցւոյ. ահա մեռելոց յարութեան վրայ յոյս ունենալուս համար է որ այստեղ կը դատուիմ:» Ա՛յն ժամանակ Փարիսեցիք և Սադուկեցիք իրարմէ զատուեցան, որով և բազմութիւնը երկուքի բաժանուելէ զատ՝ Փարիսեցիք Պօղոսի այդ խօսքէն այնքան ախորժեցան, որ ոմանք ի նոցանէ ոտքի ելնելով սկսան Սադուկեցւոց ընդդէմ կենալ և ասել. «Մենք այս մարդուն վրայ ո՛չ մի չարութիւն չենք գտներ, այլ՝ նորա բերնով Հոգին կամ հրեշտակը խօսեցաւ:»

Սակայն, այս պարագայում Սադուկեցիք աւելի կատաղեցան. վասնորոյ հազարապետը վախնալով թէ մի՛ գուցէ Պօղոս նոցա կողմանէ պատառ պատառ լինի, կը հրամայէ զինուորաց որ անմիջապէս զայն առնուն և բանակը տանին: Յաջորդ գիշեր Յիսուս անոր երևնալով կասէ. «Քաջալերուէ, Պօղէ, ինչպէս որ Երուսաղէմի մէջ ինձ համար վկայեցիր, նմանապէս պէտք է որ ի Հռոմ ևս վկայես[1]:» Յիրաւի ողորմութեամբն Աստուծոյ այն օրը Պօղոս ազատուեցաւ, բայց առաւօտեան, Սադուկեցիներէն աւելի քան քառասուն անձինք կը միաբանին և երդմամբ նզովքի տակ կը դնեն զիրենք (կուխտեն) չուտել և չը խմել մինչև որ Պօղոսը չսպանեն:

Սոքա իրենց ուխտն ու մտադրութիւնը քահանայապետաց ևս կիմացնեն, որպէս զի նոքա հա-

1. Եւ ի վաղուեան գիշերին եկաց առ նմա Տէր, և ասէ. քաջալերեաց, Պօղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, այնպէս պարտ է քեզ և ի Հռոմ վկայել. Գործ. ԻԳ. 11.

զարապետէն խնդրեն Պօղոսը երկրորդ անգամ դիւանը իջեցնելու, որպէս թէ գործը աւելի լաւ քննելու համար, և իրենք պէտք է որ մեռցնեն զայն, զեռ նա դիւանը չը հասած: Թէպէտև այսպիսի խորամանկ հնարքով՝ նոքա կը յուսային անկասկած թէ կը հանին իրենց նպատակին, բայց Աստուած Պօղոսի կեանքը զեռ ևս պահպանել որոշած լինելով, նոքա խայտառակաբար նպովքի տակ մնացին յաւիտեան:

Վասն զի, Պօղոսի քեռորդին նոցա խարդախ նենդութիւնը իմացած լինելով, Պօղոսին կը հաղորդէ և նորա խորհրդով նաև Հազարապետին, այս վերջինը կը մտածէ թէ մի՛ դուցէ նենգութեամբ Պօղոսը սպաննեն և իրեն համար ասուպ թէ կաշառք առացաւ, վասնորոյ կեսարիա բնակող Փելիքս անունով դատաւորին դրելով, այն դիշեր զինուորների հետ զայն կը դրկէ առ Փելիքս, որպէս զի սոյն դատաստանը ինքը տեսնէ, քանի որ Հռովմայեցւոց կայսեր կողմանէ դատաւոր կարգուած էր այն կողմանց համար: Երբ Փելիքս գործն իմացաւ, Պօղոսին ասաց. «Երբ որ հակառակորդներդ գան, կը լսեմ քեզ». այս խոստումը նմա տալէն յետոյ՝ հրամայեց որ Հերովդէսի ապարանքում պահեն զայն:

Երբ որ Հազարապետը հրէից իմացուց թէ Պօղոսը կեսարիա դրկած է, հինգ օրէն յետոյ վերոյիշեալ Անանիա քահանայապետն մի քանի ծերոց և Տերտիւղոս անուամբ ճարտարախօս անձին հետ այնտեղ կը գնայ, որպէս զի Պօղոսի դէմ դատ մատուցանէ նաև Փելիքս դատաւորին: Երկու կողմանք ևս կը ներկայանան առեանին, յորում Տերտիւղոս այլ և այլ պրպարտութիւններ Պօղոսի դէմ յառաջ բերելէ զինի՝ Հրէից Հազարապետին դէմ ևս կը դանգատի ասելով. «Մինչդեռ մեր ազգը խռովելուն համար այս մարդը (Պօղոսը) տաճարում բռնելով՝ մեր օրինաց համաձայն պէտք էր դատէինք, Հազարապետը եկաւ և բռնութեամբ առաւ մեր ձեռքէն:» Բոլոր ներկայ հրէայք ևս նորա ասածը կը հաստատեն ասելով. «Արդարև այդ այդպէս է», ուստի Փելիքս՝ առաքելոյն նշան կանէ որ խօսի:

Յայնժամ Պօղոս խօսիլ սկսելով կը յայտնէ թէ նոցա ասածը բոլորովին հեռի է ճշմարտութենէ. թէ ինքը բնաւ երբէք օրինաց հակառակ ընթացքում գտնուած չէ. թէ տաճարը երկրպագելու գնացած օրէն ի վեր տակաւին տասներկու օր անցած չէ և թէ վերջապէս մարգարէից գրքերում բոլոր գրուածներին ու հանդերձեալ կենաց և մեռելոց յարութեան կը հաւատայ և կը յուսայ. ահա այս պատճառաւ Սադուկեցիները թըշնամութիւն կը սնուցանեն իւր դէմ: Երբ Փելիքս կը լսէ առաքելոյն կարդաւ յառաջ բերած պատճառաբանութիւնը, կը հասկնայ թէ նոցա վէճը կրօնական խնդրոց միայն կը վերաբերի. և ինքն էլ

նոցա վրայ բաւական տեղեկութիւն ունենալով կը յայտնէ թէ՝ «երբ Լիւսիաս հազարապետը այստեղ գայ՝ ձեր մասին կը տեղեկանամ»։ Եւ այսպէս ասելով կարձակէ ժողովը։ բայց Հարիւրապետին կը հրամայէ զՊօղոս բանտում արձակ պահել և մօաը գնալ ցանկացողները չարգիլել։

Նա մանաւանդ մի քանի օր յետոյ իւր հրէայ կնոջ Դրուսիլլայի հետ կուգայ և Պօղոսը կանչելով առ ինքն, քրիստոնէական հաւատոյ վրայ տեղեկութիւններ կը խնդրէ։ ուստի առաքեալը առիթէն օգտուելու համար կը խօսի արդարութեան, ժուժկալութեան և հանդերձեալ դատաստանին վրայ։ Թէպէտ Փելիքս նորա խօսքերի ազդեցութեան ներքոյ կսկսի վախնալ, բայց որովհետև ուղղուելու նպատակաւ չէր որ այդ հարցով կը հետաքրքրուէր, այլ շահասիրական նկատումով, վասնորոյ կասէ առաքեալին. «Դու գնա այժմ, երբ ժամանակ լինի, քեզ կը կանչեմ»։ արդարև ժամանակ առ ժամանակ կը կանչէ և նորա հետ կը խօսակցի։

Տես դու յիշեալ դատաւորի չարութիւնը. որովհետև ստուգապէս համոզուեցաւ որ Պօղոս երբեք յանցանք չունի, բայց կեղծաւոր և ագահ լինելուն համար հրէաներէն կաշառ առնելուն պատճառաւ երկու տարի չարձակեց պայն բանտէն՝ նոցա հաճոյանալու դիտմամբ, մինչև որ պաշտօնանկ լինելով՝ նորա տեղ Փեստոս Պորկիոս դատաւոր կարգուեցաւ։

Հատոր Ե.

Փեստոս Պօղոսի դատը արդարութեամբ տեսնելով արձակեց զնա.

Պաւղ. Զարձակեց։ Յիրաւի նախ կամեցաւ արդարութիւն ի գործ դնել, բայց ապա կեղծաւորութեամբ հրէից կողմնակցութիւն անելով՝ արդար դատաստան տեսնել չը համարձակեցաւ. վասն զի պաշտօնի անցնելէն երեք օր յետոյ Կեսարիայէն գնաց Երուսաղէմ, ուր քահանայապետք և հրէից գլխաւորք կաղաչեն զինքը Պօղոսը այնտեղ բերել և իրենց դատաստանը կտրել. որպէս զի ճանապարհին վրայ մարդ սպասեցնելով՝ զայն սպաննեն։ Սակայն Փեստոս՝ որովհետև շատ ժամանակ կենալու չէր անդ, կը պատասխանէ նոցա թէ՝ «Ով որ կարող է, թող ինձ հետ Կեսարիա իջնէ և այնտեղ գանգատ մատուցանէ»։ Եւ ութ կամ տասն օր յետոյ կը վերադառնայ Կեսարիա։

Պօղոսի թշնամիները էլ կուգան. յաջորդ օրը երբ ատեան կը կազմուի, նորա դէմ խիստ և շատ ծանր յանցանքներ յառաջ բերել կը չանան զրպարտութեամբ, բայց չեն կարող հաստատել. քանզի Պօղոս կը պատասխանէր թէ ո՛չ հրէից օրինաց, ո՛չ տաճարի և ո՛չ կայսեր դէմ ո՛չ մի յանցանս գործած չէ։ Հակառակորդը այս անգամ ևս կը խայտառակուին, և նկատելով թէ ուրիշ եղանակաւ չը պիտի կարողանան յաղթել, աղա-

չանօք և կաշառքով կտիպեն զՓեստոս որ այս դատը անպատճառ Երուսաղէմի մէջ տեսնէ, որպէս զի ճանապարհում Պօղոսը սպաննելու իրենց չար դիտաւորութիւնը ի գործ դնեն։

Ցիրաւի Փեստոս քաջ համոզուած էր որ առաքեալը բնաւ երբէք յանցանք չունի, այսու հանդերձ հրէից հաճոյ լինելու բաղձանքով կը հարցնէ անոր թէ՝ «Կուզե՞ս Երուսաղէմ գնալ, որ ձեր դատը այնտեղ տեսնեմ»։ Պօղոս կը պատասխանէ. «Կայսեր առեւանը եմ (ասել կուզէ թէ ձեր առեւանը՝ կայսեր առեւանն է)։ եթէ յանցանք ունիմ, մահուընէ չեմ վախնար. ապա թէ ոչ, ո՛չ ոք կարող է զիս հրէից ձեռքը մատնել. կայսեր կը բողոքեմ։» Այս խօսքերը լսելով, դատաւորը իւր խորհրդականաց հետ խորհրդակցելէ ետքը կը յայտնէ Պօղոսի. «Որովհետև կայսեր բողոքեցիր, գնա ուրեմն առ կայսրն։» Այս կերպով նա իւր Թշնամեաց որոգայթէն ազատուելով, կը պատրաստուի Հռոմ գնալու։

Այդ օրերում Հրէաստանի Թագաւոր կըրաւսերն Ագրիպպաս (որ ԿԲ-րդ հարցում յիշուած Հերովդէս Թագաւորի որդին էր), իւր Բերենիկէ քրոջ հետ Փեստոսը շնորհաւորելու կուգայ. այս վերջինը Պօղոսի նկատմամբ յայտնելով ըստ վերոյիշեալին, կուզէ որ նորա ներկայութեան ևս առաքեալը խօսել տայ. քանզի, թէև զայն Հռոմայ կայսեր ղրկելու էր (ինչպէս Պօղոս ինքը պահան-

ջեց), սակայն դիտնալով որ նա անմեղ է, չէր գիտեր թէ ի՞նչ գրէ կայսեր։ Ագրիպպաս ևս Պօղոսը տեսնել և զայն խօսել տալ փափաքելով՝ յաջորդ օրը մեծաւ փառօք հազարապետների և քաղաքի երեւելեաց հետ տեառնը կուգայ։

Երբ առաքեալը կը ներկայանայ և հրաման կընդունի խօսելու, բաղում համարձակութեամբ կսկսի խօսիլ և կարգաւ պատմել թէ՝ «Ինքը նախ քրիստոնեաները կը հալածէր Երուսաղէմում՝ թէ այս նպատակաւ Դամասկոս գնալու ժամանակ Յիսուս իրեն երեւնալով՝ կը հաւատայ թէ նա է Քրիստոսն (Մեսիա) և յարութիւն առած է, նորա հրամանաւ սկսած է քարոզել աւետարանը. քանզի, ինչպէս որ մարգարէք գրած էին որ նա պիտի չարչարուի, մեռնի և յարութիւն առնէ, և բոլոր հրէայք այս հաւատքն ու յոյսը ունին, ես էլ նոյնը իրենց քարոզելու ժամանակս, սաստիկ կերպով զիս բռնեցին և այս պատճառաւ կաժեցան սպաննել»։ Փեստոս նորա խօսքը ընդհատելով կասէ. «Կը մոլիս, Պօղէ, շատ գիտութիւնդ քեզ խելագարութեան կը տանի։»

Պօղոս կը պատասխանէ. «Չեմ խելագարիր, քաջդ Փեստոս, այլ համաձայն բանականութեան և ճշմարտութեան՝ խօսք կը խօսիմ. քանզի իմ պատմածս գաղտնի մի անկիւն տեղում պատահած չէ»։ ապա խօսքը Ագրիպպասին ուղղելով կասէ. «Կը հաւատա՞ս մարգարէից, գիտեմ որ կը

հաւատաս։» Ա.յս լսօսքին վրայ երբ Ագրիպպաս կառէ. «Փիչ մնաց որ զիս էլ քրիստոնեայ դարձնես», առաքեալը աներկիւղ կը պատասխանէ. «Ո՛չ միայն զքեզ, այլ զիս լսողներուն բոլորն էլ քրիստոնեայ անելու բաղձանքն ունիմ»։ Ագրիպպաս նկատելով թէ ինքը անկարող է հակառակ պատասխան տալ Պօղոսի, ոտքի կելնէ և ժողովը կը ցրուի։

Բաց յայտնէ, միմեանց հետ խօսելով՝ «Ա.յս մարդը մահու կամ կապանաց արժանի ոչինչ գործած է» ասելէ զատ՝ Ագրիպպաս Փեստոսին կը յայտնէ. «Եթէ այս մարդը կայսեր բողոքած չըլլէր, կարելի էր արձակել զայն»։ վասն զի հաստատ իմացան որ բնաւ երբէք յանցանք չունի։ Ահա այսպէս է անիրաւ և կեղծաւոր դատաւորաց ընթացքը. ինչպէս ահա Փեստոս առ ի պատիւ հրէից՝ իրաւունքը ոտնակոխ արաւ։ Սակայն այս բանով Ա.ս Թաքուն խորհուրդ կար, քանզի (կԶ և կէ-րդ հարցմանց միջ յիշուած կերպով) Պօղոս անպատճառ Հռոմ գնալու և այնտեղ էլ քարոզելով՝ շատերը քրիստոնէական հաւատոյ պայծառ լուսով լուսաւորելու էր։

Հարց՝ ՀԹ.

Փեստոս ո՞ւմ յանձնեց Պօղոսը Հռոմ տանելու համար.

Պաս. Յուլիոս անուամբ մի հարիւրապետի։ Սակայն Պօղոսէն զատ ուրիշ բանտարկեալներ Ա.ս Հռոմայ կայսեր ներկայութեան դատուելու պէտք էր գնային, ուստի բոլորը կապանաց ներքոյ Յուլիոսին կը յանձնէ Իտալիա տանելու համար։ Պօղոսի աշակերտներէն Ղուկաս և Թեսաղոնիկեցի Արիստարքոս Ա.ս նորա հետ ի միասին կը գնան։

Կեսարիայէն ելնելով՝ երբ Սիդոն հասան, Յուլիոս մարդասիրաբար հրաման կուտայ Պօղոսի որ իւր բարեկամաց մօտ գնալով՝ հարկաւոր եղածը առնու։ Ա.յնտեղէն Ա.ս մեկնելէն զկնի հակառակ հողմ սկսաւ փչել, որով Սմիւռա կոչուած տեղը եկան, ուր հարիւրապետը նաւէն գոհ չըլլնելուն համար ուրիշ մի նաւ կը փոխադրուին. բայց եղանակը ձմեռնային լինելուն պատճառաւ ձանապարհին վրայ կը մոլորին և Կիրիտի Ջրերուն՝ Փեղէյնի կոչուած նաւահանգիստը հասած ժամանակ՝ թէև Պօղոս կառաջարկէ հարիւրապետին այնտեղ ձմեռել, բայց չընդունուիր նորա առաջարկը և ճանապարհ կելնեն. իսկ փոթորիկը հետզհետէ կը սաստկանայ, այնպէս որ երկար ժամանակ առև և աստղ անկարելի էր տեսնել. ալեկոծութեան պատճառաւ նաւուն բեռները ծովը կը թափեն և

առագաստները իջեցնելով՝ ըստ ամենայնի յու-
սահատ կացութեան կը մատնուէին։ Սակայն, ինչպէս
վերը յիշուեցաւ, կամօքն Աստուծոյ առաքեալը
անպատճառ Հռոմ գնալու էր, ուստի այն գիշեր
հրեշտակը կասէ անոր. «Մի՛ վախնար, Պաւղոս
քեզ պարգեւեց Նաւի մէջ բոլոր գտնուողները»,
որոնք երկու հարիւր եօթանասուն հոգի էին։

Յայնժամ Պօղոս ամէնքը քաջալերելով կասէ.
«Մի վախնաք, նաւէն զատ ձեզմէ ո՛չ ոք պիտի
վնասուի»։ Եւ կը պատմէ նոցա հրեշտակին իրեն
ասած խօսքերը։ Սակայն սանն և չորս գիշեր բաց
ծովուն վրայ նաւը կը ծփար, և նաւավարք կար-
ծելով թէ եղերքին մօտեցած են, գունդը (գոր-
ծիքը) կը ձգեն և քսան գրկաչափ ջուր կը գտնեն,
և երբ քիչ ժամանակ յետոյ նորէն կը ձգեն և
սանն ու հինգ գրկաչափ կը գտնեն, վախնալով թէ
մի ժայռի կը զարնուին, նաւի եռեքն չորս խա-
րիսխ կը նետեն ծովը և կսպասեն որ առաւօտ
լինի։

Ա.յս միջոցին նաւաստիք ազատութեան յոյսը
կորսուած՝ խոյս տալու դիտաւորութեամբ նաւակը
ծովը կիջեցնեն՝ որպէս թէ նաւի գլխու կողմէն
խարիսխ ձգելու համար. Պօղոս նոցա խուսափելու
մտադրութիւնը հասկնալով՝ հարիւրապետին և
զինուորաց կասէ. «Եթէ սոքա նաւին մէջ չմնան,
դուք չէք կարող ազատուիլ։» Ցիրաւի Պօղոս դի-
տէր թէ ըստ բանի հրեշտակին նաւուն գտնուող-

ները պիտի ազատուին, բայց մարդկօրէն հարկ
եղածն էլ ի գործ դնել պարտք լինելով՝ նաւաս-
պիներուն փախուստը չուզեր։

Եւ որովհետև սանն և չորս օրէ ի վեր անօ-
թի էին, Պօղոս ամենուն կաղաչէ ասելով. «Կերա-
թի էին, Պօղոս ամենուն կաղաչէ ասելով. «Կերա-
կուր կերէք, քանզի ձեր մէկ մազը չը պիտի
վնասուի»։ Եւ ինքն կը Աստուծոյ գոհութիւն մա-
տուցանելէ յետոյ կսկսի ուտել, և միւսները նորա
օրինակին կը հետևին. որով կը զօրանան։ Ա.ռաւօ-
տեան խարիսխները կարելով՝ առանց
պեկի և առագաստի՝ հողմի զօրութեամբ դէպի
եղերքը քշուեցան, որով նաւին գլխի կողմը աւազի
մէջ խրեցաւ և քամիի սաստկութեան պատճառաւ
հետևի կողմը քայքայուիլ սկսաւ. զայս տեսնելով
զինուորները կամեցան կապեալները սպաննել, որ-
պէս պի ո՛չ ոք ի նոցանէ չը փախչի. սակայն հա-
րիւրապետը Պօղոսը ազատելու փափաքանօք ար-
գիլեց զինուորները և հրամայեց որ կարողները
լողալով, իսկ այլք՝ տախտակի և կամ ուրիշ կա-
հերի միջոցաւ կղզի մը հասնին։ Ա.րդարև այս
եղանակաւ բոլորը ազատուելով կղզի մը ելան,
որուն անունն էր Մելիտինէ։

Ա.յն միջոցին սաստիկ ցուրտ և անձրև լինե-
լուն համար տեղացիք ի յարգանս նոցա՝ կրակ կը
վառեն. Պօղոս ևս կրակին վրայ խրճիթ դրած ժամա-
նակ՝ մի իժ նորա ձեռքը խայթելով՝ այնպէս կախուած
կը մնայ, որ տեղւոյն բնակիչները տեսնելով իրա-

րու կասեն. «Ա՛յս մարդը մարդասպան մէկն է ուրեմն, որ թէև ծովէն ազատուեցաւ, բայց արդարութիւնը թոյլ չը տուաւ որ ապրի»։ վասն զի իժը նորա թևէն կախուած տեսնելով՝ կսպասէին որ նա ուռելով իսկոյն մեռնի։ բայց երբ Պօղոս իժը կրակին մէջ նետեց և շատ ժամանակ անցնելով իրեն ոչ մի վնաս չեղաւ, այն ժամանակ իրենց խօսքը փոխելով կասեն. «Աստուած մի է այս»։ որովհետև կռապաշտ լինելով՝ կարծեցին թէ կուռքերէն մին է այդ հրաշքը գործողը։

Սոյն հրաշքից լուրը տարածուելով՝ Պոպղիոս անուն անձը, որ տեղւոյն գլխաւորն էր, Պօղոսին երաշխաւոր եղաւ և իր տունը տանելով՝ երեք օր մեծ պատիւ ցոյց կուտայ։ Բացի այդ, նորա հայրը թանչքի հիւանդութեամբ պառկած լինելուն համար, Պօղոս աղօթելով՝ հիւանդին վրայ ձեռք դրածին պէս՝ իսկոյն կառողջանայ և ուրիշ շատ հիւանդներ ևս կուգան և առողջութիւն կը գտնեն շնորհիւ առաքելոյն։ այս պատճառաւ տան տէրը բազում հիւրասիրութիւն ցոյց տալէ զատ՝ բոլոր հարկաւոր եղածն էլ նոցա կուտան ճանապարհին համար։

Երեք ամիս յետոյ Մելիտինէ կղզիէն նաւ կը նստին և ճանապարհին վրայ մի քանի տեղեր հանդիպելէ ոչնչ՝ Հռոմ կը հասնին, ուր տեղւոյն հաւատացեալք մեծ պատուով ընդ առաջ կելնեն Պօղոսին, որ զանոնք տեսնելով գոհութիւն և փառք

կուտայ Աստուծոյ։ և որովհետև նորա հետ ուրիշ բանտարկեալներ ևս կային, կառավարութեան հրամանաւ նոքա ուրիշ տեղ կը բանտարկուին։ իսկ Պօղոսին պատուէր կը տրուի որ իր պահպանութեան համար յատկացեալ մարդուն հետ բնակի մի տան մէջ իրրև արձակ բանտում մինչև կայսեր ներկայանալը։ բայց նորա մօտ երթևեկողները չէին արգիլեր։ Ահա այս կերպով Պօղոս երկու տարի ինայ բանտում, և քովը եկող գնացող հրէից և հեթանոսաց քարոզելով՝ շատերը դարձուց ի հաւատս Քրիստոսի։ Նա մանաւանդ կայսեր ներկայանալով ազատութիւն գտնելէն յետոյ խիստ մեծ համարձակութեամբ կը քարոզէր Աստուծոյ խօսքը։

Ա՛յստեղ կը վերջանայ Գործ առաքելոց գիրքը։ Նոքա, որք կը փափաքին տեղեկանալ թէ Պօղոսի, թէ ուրիշ առաքելոց և եօթանասունն երկու աշակերտաց մասին եղած գրուածներին, պարտին դիմել եկեղեցական պատմութեան։ Վասն զի նոքա Յիսուսի պատուիրանին համեմատ (տե՛ս Ա՛Զ-րդ հարցումը) բոլոր աշխարհ շրջելով քարոզեցին և հրաշքներ գործեցին, միանգամայն առաքինութեան օրինակ տալով բոլորին՝ մարդոց հոգիները հոգւոյն սրբոյ շնորհօքը այնպէս լուսաւորեցին, որ հաւատացողները աշխարհի զուարճութիւնը, ինչքն ու մեծութիւնը արհամարհելով՝ ի սէր Յիսուսի զանազան տանջանք յօժարակամ կրելէն զատ՝ շատերն էլ իրենց արեան հեղմամբ նահա-

տակ եղան, որպէս զի երկնից անվախճան հոգևոր թագաւորութեան մէջ ուրախ և երջանիկ լինին։

Արդարև Յիսուսի այն խօսքը կատարուեցաւ (տես ԻԹ-րդ հարցումը), որով աւետարանի քարոզութիւնը նմանցուցած էր ճանաչելի հապկիէն, խմորոյ և հրոյ. որովհետև քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնը արևու լոյսին պէս յայտնի եղաւ, և այն՝ ոչ թէ մարդկային զօրութեամբ և բազկի ուժով, այլ մի միայն Աստուծոյ շնորհաց և նորա գերագոյն կարողութեան զօրութեամբը հաստատուեցաւ։ Այս պատճառաւ Ս. Գիրքը կը գրէ թէ՝ նա որ կը հաւատայ թէ Յիսուս է Մեսիա (Քրիստոս) և որդի Աստուծոյ, նա կը յաղթէ աշխարհի շնորհիւն Աստուծոյ [1]։

Հարցում Չ.

Երբ որ քրիստոնէական սուրբ հաւատքը աշխարհի յայտնուեցաւ, նախանձոտ եւ յամառ հրէայք ինչ վիճակ ունեցան.

Պաս. Խիստ ողորմելի վիճակ։ Վասն զի Յիսուսի Համբարձումին քառասուն և հինգ տարուայ

1. Զի ամենայն, որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ աշխարհի. և այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր։ Եւ ո՞վ է, որ յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ՝ եթէ Յիսուս է որդի Աստուծոյ. Ցովհ. Ա. Կաթուղ. Ե. 4.

չափ ժամանակ՝ դեռ հին օրինաց համեմատ տաճարում կը ծառայէին և քահանայապետ ունէին։ Սակայն երբ ապստամբեցան, Հռովմայեցւոց ներքև կայսեր հրամանաւ Վեսպասիանոս զօրապետը բազում զօրօք նոցա վրայ գալով՝ բազմաթիւ հրէայ կոտորեց և Գալիլեայէն շատ տեղ գրաւեց։ Այն միջոցին ներքև մեռնելով՝ Վիտելիոս անուամբ մէկը Հռովմայ մէջ կայսր եղաւ. բայց զօրքը զայն չընդունելով՝ Վեսպասիանոսը կայսր հռչակեց բանակում։

Յայնժամ Վեսպասիանոս Աղէքսանդրիա գնաց, և երբ այնտեղէն դէպի Հռովմ կը մեկնէր, իւր Տիտոս որդին ահագին բազմութեամբ զօրաց Երուսաղէմի վրայ կը դրկէ։ Երբ այս վերջինը Երուսաղէմը կը պաշարէ, ով կարող է նկարագրել հրէից թշուառութիւնը. վասն զի քաղաքացի մօնի պատճառաւ այն օրերում ժողովուրդը չափազանց բազմութեամբ Երուսաղէմ հաւաքուելէ զատ՝ քաղաքին և տաճարի ամրութեան վրայ յոյս դնելով՝ շրջակայ քաղաքաց բոլոր բնակիչներն էլ Երուսաղէմ ապաստանած էին, այս պատճառաւ կերակուր չը գտնելով շատերը անօթութենէ կը մեռնէին։

Տիտոս օր ըստ օրէ պաշարումը սաստկացնելով վերջապէս Երուսաղէմը կը գրաւէ, յորում ոչ մի տեղ շէն չէր մնացած և տաճարն իսկ բոլորովին աւերակ դարձած էր. նա՛ մանաւանդ հրէայներէն այնչափ մարդիկ կը կոտորուին, որ անօթութենէ, սրէ կոտորուածներին և գերեվոյ թիւը երկու մի-

լիսնէն աւելի կը լինի։ Ահա այս կերպով քահանայապետութիւնն ու զոհագործութիւնը դադարեցին, որով Մ. Գրոց պատգամը կատարուեցաւ, զոր Գաբրիէլ հրեշտակը Դանիէլ մարգարէին յայտնած էր[1]։ Նմանապէս Երուսաղէմի և տաճարի աւերման մասին Յիսուսի ասած խօսքերը կատարուեցան (տե՛ս Խ և ԾԲ-րդ հարցումները։)

Յիրաւի հրէայք իրենց չար գործոց համեմատ պատժուեցան. սակայն այս աշխարհի վրայ պատահած աղէտք և պատիժք միշտ գթութենէ յետոյ կուգան. այս պատճառաւ դեռ այդ սոսկալի պատերազմը տեղի չունեցած՝ հօթը տեսակ յայտնի հրաշքներ տեսնուեցան Երուսաղէմի մէջ, որպէս զի բնակիչները հասկնալով դարձի գան, ուղղուին։

Առաջին, նիզակաձև մի աստղ կերևի և մի տարի Երուսաղէմի վրայ կը կենայ։

Երկրորդ, բազարջակերպ ոտնին, գիշերը ժամը իննին՝ սեղանին և տաճարին վրայ փայլակի նման լոյս ճագելով՝ կէս ժամ ցորեկի պէս լոյս կը լինի։

Երրորդ, մի մարդ ոտնի աւթիւ զոհելու համար էգ հորթ մի բերած էր տաճարը, ուր նա մի գառն կը ծնի։

---

1. Դադարեցուցէ զսեղանս և զպատարագս ... և ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կայցէ մինչև ցվախճան ժամանակի. Դան. Թ. 26.

Չորրորդ տաճարի արևելեան կողքի դուռն, որ պղինձէ շինուած և խիստ շատ ծանր էր, այնպէս որ քսան մարդիկ հազիւ կը բանային ու կը փակէին, գիշեր ժամանակ ժամը վեցին ինքնիրեն կը բացուի։

Հինգերորդ, ոտնէն մի քանի օր ետքը գեռ աւելը մայրը չը մտած՝ երկնից վրայ սպառազէն զօրքեր կերևին, որոնք քաղաքը շրջապատելով՝ միւռանց վրայ կը յարձակին պատերազմաւ։

Վեցերորդ, Պենտէկոստէի ոտնին գիշերը քահանայք ըստ սովորութեան տաճարում աղօթած ժամանակ՝ այնտեղ երկրաշարժ պատահելէ ետք՝ բազմից ձայներ կը լսուին թէ «Ա յստեղէն գնանք, այստեղէն գնանք։»

Եօթներորդ, տարին դասակարգէ Յեսու անունով մի մարդ, որուն հօր անունը Անանիա էր, տաղաւարահարոյ ոտնի ժամանակ յանկարծ կսկսի տաճարին մէջ աղաղակել. «Ձա՛յն արևելքէն, ձայն արևմուտքէն, ձայն ի չորից ծա՛զոց երկրի, ձայն Երուսաղէմի և տաճարի վրայ, ձայն այս փեսայից և հարսանց վրայ, ձայն ժողովրդեան վրայ, վա՛յ, վա՛յ Երուսաղէմի։»

Թէպէտև շատ անգամ յիշեալ անձը սաստիկ ծեծելով պատժեցին, բայց անկարող եղան արգիլելու, այսպէս եօթը տարի գիշեր և ցերեկ փողոցներում հաղաղակէր։ Պատերազմի ժամանակ և պարսպին վրայ շրջելով աղաղակելու միջոցին

Հռովմայեցիք զայն կը զարնեն, և «վայ ինձ» ասելով անմիջապէս կը մեռնի[1]:

Բայ յայսմանէ, Հրէաստանի և Երուսաղէմի հաւատացեալոց բոլորը աստուածային ազդեցութեամբ Յորդանանի անդիի կողմը ուրիշ երկիր կը գաղթեն[2], սակայն Հպարտ և յամառ հրէայք ո՛չ վերոյիշեալ հրաշալի երևոյթներէն և ո՛չ քրիստոնէից գաղթումին բնաւ երբէք չխրատուելէ զատ՝ օր ըստ օրէ չարութեան մէջ աւելի յառաջ կը դնային. վանորոյ շատ ողորմելի և թշուառ վիճակի ենթարկուած՝ թափառական եղան առ հասարակ:

Քաջ խելամուտ եղիր, ընթերցող. առաջին ժամանակներուն նոքա յաճախ կը մեղանչէին, և Աստուած կը պատժէր զիրենք. բայց երբ զղջալով սրտի մաօք կը դառնային առ Աստուած, ապաստութիւն կը գտանէին իրենց թշնամեաց ձեռքէն: Ինչպէս որ Յովսէփը ծախելնուն համար Եգիպտոսում շատ տառապանք և նեղութիւն կրեցին փարաւօնի ձեռքէն, բայց երբ դարձան և աղօթեցին առ Աստուած, մեծ փառօք ազատուեցան Մովսէսի ձեռամբ:

Անապատին մէջ Աստուծոյ հրամանին հակառակ գործելով, երեսուն և ութ տարի այդ անը-

1. Տե՛ս և պատմութեան Յովսէպոսի՝ յեօթներորդ գլխուն. գլուխ ԻԲ.

2. Որպէս գրէ Ճան Բարսեղ ի մեկնութեան Մարկոսի, ԺԳ. 18. առեալ յեկեղեցական պատմութենէ:

բերրի և անջուր վայրերում շրջելու դատապարտուեցան, այնպէս որ յանցաւորաց բոլորը մեռնելէ յետոյ՝ նոցա որդիքը Աւետեաց երկիրը ժառանգեցին: Դատաւորաց ժամանակ շատ անգամ օրինաց դէմ կը մեղանչէին և Աստուած կը պատժէր զանոնք Քանանացւոց և այլ ազգաց ձեռամբ. սակայն իրենց ղղջման և աղաչանաց վրայ, Աստուած կազատէր զիրենք:

Երբ որ նոքա կռապաշտութեան դիմելով մարգարէները կսպանէին, Աստուած զիրենք Բաբելոնի գերութեան դատապարտեց, և եօթանասուն տարիէն ազատուելով՝ տաճարն ու Երուսաղէմը վերստին շինեցին: Այնուհետև դարձեալ օրինաց ընդդէմ տեսակ տեսակ անարժան ընթացք ունենալնուն համար Անտիոքի Թագաւոր Անտիոքոս Եպիփանէն ձեռամբ շատ տառապանք կրեցին, բայց Աստուած Մակաբայեցւոց ձեռքով դարձեալ ազատեց զիրենք:

Արդ՝ ի՞նչ զարմանք որ Տիտոսի ձեռամբ նոցա պատժուելէն մինչև ցայսօր, որ հազար եօթն հարիւր վաթսուն և երկու տարիի չափ անցած է, նոցա յանցանաց ներումն չը շնորհուեցաւ, այլ և մարդարէ չերևեցաւ, նա՛ մանաւանդ տաճարը օտար ազգաց ձեռքն անցնելով՝ չը կարացին այլ և զոհ մատուցանել: Մի՛ զարմանար, որովհետև Ս. Գրոց պատմութեան նայելով, յայտնի է որ նոցա այսպիսի պատժոյ ենթարկուիլը՝ Քրիստոսի չը հաւատալով՝ զայն մեռցունելնուն պատճառաւ է:

Յիրաւի Աստուծոյ հրամանաւ մարդկային աղգի փրկութեան համար Քրիստոս ի խաչ ելած պէտք է ըլլար, ինչպէս որ մարգարէները գրած էին. սակայն հրեայք ո՛չ թէ Աստուծոյ կամքը կատարելու համար զայն մեռուցին, այլ իրենց ոխակալութեան և թշնամութեան պատճառաւ, վասնորոյ պարտական դանուեցան:

Ա. յո՛, Աստուած շատ բարիք և ողորմութիւն արաւ նոցա. մանաւանդ հին կտակարանի մէջ Քրիստոսի գալստեան նշանների յայտնութիւնը՝ մեծ ողորմութիւն էր նոցա համար, սակայն (ինչպէս Ա և Ա-րդ Հարցերուամ յիշուեցաւ) նախանձու չար ղգայմամբ լեցուած՝ Ս. Գրոց ուշադրութիւն չընծայեցին. քանզի, եթէ ուղիղ սրտով Ս. Գրոց մտադրութիւն անէին, կարող էին և մանաւանդ պարտական էին Քրիստոսի գալուստն իմանալ և հաւատալ:

Ահա այս ողորմութիւնը չը ճանաչելով՝ ապերախտ դանուեցան, որով Աստուծոյ և իրենց նախահարց Թշնամի եղան. վասն զի իրենց նախահարց բոլորին սիրտը, նահապետաց, մարգարէից և բոլոր արդարոց սիրտը, որոնք Քրիստոսի կը յուսային, շատ կսարեցաւ իրենց սրդիներէն. և երբ ի կատարած աշխարհիս ենովքի և եղիայի քարոզութեամբ հրեայք Քրիստոսի հաւատան, այն ժամանակ նախահարց սիրտը պիտի ուղղուի հանդէպ իրենց որդւոց, և ահա այն ժամանակ Մա-

ղաքիա մարգարէի գրած պատգամը պիտի կատարուի[1]:

Ա. յնուհետև, երբ որ Յիսուս Քրիստոս Տէրն մեր աստուածային փառօք և անհամար հրեշտակներով Յովսափաթայ ձորը դատաստանի կուգայ[2] (այն՝ որ Երուսաղէմի և Ձիթենեաց լերան միջևն է), արդարները արքայութեան անճառելի փառաց կարժանացնէ և մեղաւորները դժոխոց կը մատնէ, ահա այն ժամանակ բոլոր մարգարէից գրքերի[3] և նոր կտակարանի մէջ գրուածները ամբողջովին կատարուած պիտի լինին:

Արդ ուրեմն, ով ընթերցող, եթէ արքայութեան մէջ ուրախ և յաւիտեան երջանիկ լինել կուզես, Աստուծոյ օրինաց հակառակ ընթացքում մի՛ դանուիր. քանի որ պատեհութիւն ունիս, փութով զղջա և ապաշխարէ. քանզի չես գիտեր թէ երբ պիտի մեռնիս. ուստի միշտ մտիդ միտք

---

1. Եւ ահա ես առաքեմ առ ձեզ զԵղիա Թեզբացին, մինչև եկեալ լցէ օր Տեառն՝ մեծ և երևելի: Որ պատրաստեսցէ զսիրտ Հօր առ Որդի. և զսիրտ առն առ ընկեր իւր. Մաղաք. Գ. 5.—Սիրաք. ԽԳ. 16. և ԽԸ. 10.—Մատթ. ԺԻ. 11.—Ցայտ. ԺԱ. 5.

2. Ժողովեցեն, և եկցեն ամենայն ազգք ի ձորն Յովսափաթու, զի անդ նստայց դատել զամենայն ազգս շուրջանակի. Յոլել. Գ. 12.

3. Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն. Մատթ. ԻԴ. 35.

բեր և զքեզ դատաստանի տեղում և ժամում գիտցիր. որովհետև մեռնելէն զինի՝ արդարոց յաւիտենական կեանք և մեղաւորաց յաւիտենական տանջանք կայ:

Ա. յս պատճառաւ մարդս պարտական է ամէն րոպէ խորին ժողովրդութեամբ խոկալ և յիշել մահը, դատաստանի օրը, դժոխոց տանջանքն ու արքայութեան փառքն ու երանութիւնը: Նա մանաւանդ երբէք մոռնայ մի՛ հաներ և մի՛ մոռնար Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ քու փրկութեան համար քաշած չարչարանքը, կատարեալ հաւատարմութեամբ նորա հրամանին հնազանդէ, որպէս զի երկնքում նորա անվախճան փառաց արժանի լինիս. վասն զի նա ուր որ է, իւր հաւատարիմ ծառայից ևս խոստացաւ անդ լինել[1]:

Սոյն գիրքը այստեղ կաւարտի, եւ յուսալի է որ ջերմեռանդն սիրով զայն ընթերցողք ըստ կարելոյն Ս. Գրքի իմաստից կը հմտանան, եւ հոգեւոր մխիթարութիւն ձեռք բերելով՝ բարեհոյն Աստուծոյ օրհնեալ եւ սուրբ անունը կը փառաւորեն:



ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
*C.C.P.A Шуо ичная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ*

[1] Եթէ ոք պիտ պաշտեացէ, զինի իմ եկեսցէ, և ուր եմն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի Յովհ. ԺԲ. 26.

1928 ... ԿԱՀ

ՅԱՆԿ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

Դ Ա Ր Ե.

	Հարցում	Երես
Ա.	Սուրբ աւետարանի սկիզբը ուսանի կսկսի.	1
Բ.	Զաքարիա լինչ կը խնդրէր, որ հրեշտակը կը յայտնէ թէ խնդիրքը ընդունուած է.	3
Գ.	Ե՞րբ բացուեցաւ Զաքարիայի պապանձեալ լեզուն.	8
Դ.	Ինչո՞ւ համար Յիսուս Բեթղեհէմ քաղաքում ծնաւ	11
Ե.	Ինչո՞ւ Յիսուս հովիւներին այրում ծնաւ. .	19
Զ.	Յիսուս որքա՞ն ժամանակ մնաց յիշեալ այրին մէջ.	21
Է.	Հերովդէս ընդէ՞ր կամեցաւ սպանել զՅիսուս.	25
Ը.	Երուսաղէմի ընակիչք Փրկչի ծնունդը լսելով ուրախացան.	28
Թ.	Որքա՞ն ժամանակ Յիսուս Եգիպտոսում մնաց.	29
Ժ.	Յիսուս ե՞րբ սկսաւ քարոզելու և հրաշք գործելու	31
ԺԱ.	Յիսուս լինչո՞ւ համար մկրտուեցաւ. .	36

ԺՒ. Ցիսուս ինչո՞ւ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելով սատանային փորձուեցաւ. 37
ԺԳ. Գալիլեա անուամբ քանի՞ գաւառ կը յիշուի սուրբ աւետարանուն. . . 41
ԺԴ. Ցիշեալ Անդրէասն ու նորա ընկերը Ցիսուսի հետ ի՞նչ խօսեցան. . . . 45
ԺԵ. Ինչո՞ւ Ցիսուս ինքզինքը Որդի մարդոյ կը կոչէ. 47
ԺԶ. Ցիսուսի զործած հրաշից առաջինը ո՞րն է. 47
ԺԷ. Ցիսուսի հրաշքները տեսնողաց ամէնքը հաւատացի՞ն իրեն. 51
ԺԸ. Ցիսուս աշակերտները ունենալով՝ ժողովուրդը մկրտելուն համար փարիսեցիք բարկացա՞ն. 54
ԺԹ. Ո՞վ քանտարկեց Յովհաննէսը և ի՞նչ պատճառաւ. 60
Ի. Ժողովուրդը Ցիսուսի հրաշքները տեսնելով՝ ճանաչե՞ց նորա ո՛վ լինելը. . . . 65
ԻԱ. Վերոյիշեալ ինը առաքինութիւնք ո՞րո՞նք են. 69
ԻԲ. Այդ առաքինութիւնները գործող բոլոր մարդոց երանի կը տուո՞ւ. . . . 81
ԻԳ. Հին օրինաց լուսմը ինչպէ՞ս լմնալ պէտք է. 85
ԻԴ. Բոլոր մարդիկ գիրար սիրելու պատուէրը ինչպէ՞ս հասկնալու է. . . . 94
ԻԵ. Ցիսուս ինչո՞ւ պատուիրեց ժողովրդեան որ իւր մասին չը խօսին. . . . 108

ԻԶ. Ինչո՞ւ համար Ցիսուսի մայրն ու ազգականքը գայն տեսնել կուզէին. . . 116
ԻԸ. Գերդեսցիք ինչո՞ւ աղաչեցին զՑիսուս որ իրենց սահմանէն գնայ. . . . 122
ԻԹ. Ընդէ՞ր Ցիսուս մաքսաւորաց և մեղաւորաց հետ միասին բազմեցաւ. . . 125
Լ. Ցիսուս ինչո՞ւ պատուիրեց կոյրերին որ իրենց բժշկութիւնը ո՛չ ոքի չասեն. . . 131
ԼԱ. Ընդէ՞ր Յովհաննէս այդ հարցումն արաւ քանի որ յառաջագոյն քանիցս վկայած էր թէ Ցիսուսն է Մեսիան. . . . 140
ԼԱ. Ցիսուս ինչո՞ւ առակաւ կը խօսէր քարոզելու ժամանակ. 152
ԼԲ. Ցիսուս վերոյիշեալ լեռնէն ո՞ւր իջաւ. . 158
ԼԳ. Ցիսուս ընդէ՞ր հրամայեց առաքելոց որ աւելցած կտորները ժողովելով պահեն. . 165
ԼԴ. Ընդէ՞ր Ցիսուս փանանացի կնոջ դուստրը իսկոյն չը բժշկեց. 172
ԼԵ. Ցիսուս ո՞ւր յայտնեց իւր փառքը. . 184
ԼԶ. Առաքեալք ինչո՞ւ հարցուցին թէ երկնից մէջ ո՞վ է մեծ. 195
ԼԷ. Ցիսուս ինչո՞ւ հրաման չառաւ վերոյիշեալ մարդուն իւր տունը գնալ և ընտանիքին հրաժեշտ տալու. 208
ԼԸ. Վերոյիշեալ 72 աշակերտները սատանայն էլ կհլնէի՞ն. 221
ԼԹ. Պիղատոս ինչո՞ւ համար սպանել տուաւ այդ Գալիլեացիքը. 234
Խ. Փարիսեցիք բարկացա՞ն Ցիսուսի դէմ, երբ

նա չաբաթ օրում ջրգողեալը բժշկեց. . 246
ԽԱ. Հրէայք զՅիսուս քարկոծելու իրենց անկարողութիւնը տեսնելով՝ նորա զօրութիւնը իմացան և իրենց չար ընթացքը փոխեցին. 257
ԽԲ. Յիսուս ինչո՞ւ գնաց Յովհաննէսի մկրտութիւն կատարած տեղը. . . . 267
ԽԳ. Մեծատունը ինչո՞ւ չէը ուզեր որ իւր եղբարքն էլ դժոխոց դատապարտուին. . 279
ԽԴ. Երբ Յիսուս չորեքօրեայ մեռեալը յարոյց, վարկեանեցիք զայն լսելով ուղղուեցան. . 286
ԽԵ. Յիսուս շատ ժամանակ մնաց Երիքովում. 298
ԽԶ. Երբ Յիսուս առևտրականքը տաճարէն արտաքսեց ժողովուրդը դէմ լսուեցան. . 308
ԽԷ. Դալիրը և վարկեանեցիք ոյն առակը լսելով՝ յուղղուիլն եկան. 319
ԽԸ. Ո՞յք էին վերոյիշեալ հեթանոսները, որոնք Յիսուսը տեսնել կուզէին . . . 329
ԽԹ. Ինչո՞ւ Յիսուս ասաց առաքելոց թէ Հայը Աստուծմէ զատ ո՛չ ոք դիտէ կատարուելիք բաներուն ժամանակը. . . . 340
Ծ. Ինչո՞ւ համար Յիսուս առաքելոց ոտքը լուաց. 349
ԾԱ. Հրէայք քանի՞ քահանայապետ ունէին ըստ օրինաց. 359
ԾԲ. Ինչո՞ւ Պիղատոս Հրէից ասաց որ իրենք զատեն զՅիսուս իրենց օրինաց համաձայն. 369
ԾԳ. Ինչո՞ւ համար խաչը Յիսուսի ուսէն առնելով՝ Սիւրենացի Սիմոնին տուին, որ մինչև Golgotha տանի. . . . 380
ԾԴ. Յիսուս քանի՞ ժամ մնաց խաչին վրայ. . 391
ԾԵ. Յիսուսի թշնամիքը վերոյիշեալ հրաշքները տեսնելով՝ պղծացին սրդեօք. . . 398
ԾԶ. Երբ Յիսուսի յարութիւնը յայտնուեցաւ, նորա թշնամիքը ինչ վիճակ ստացան. . 408
ԾԷ. Յիսուս իւր յարութենէն մինչև համբարձումը քանի՞ անգամ և որո՞ց երեցաւ. . 417
ԾԸ. Ինչո՞ւ Յիսուս Չիթենեաց լերան վրայէն համբարձաւ. 421
ԾԹ. Երբ առաքեալք սկսան քարոզել, Յիսուսի թշնամիք հակառակեցան նոցա. . . 429
Կ. Երբ հաւատացեալք բազմացան, ինչ կերպով կը կառավարուէին. . . . 440
ԿԱ. Հրէայք Ստեփաննոսը քարկոծելէ վինի՝ միւս հաւատացեալոց ևս չարիք հասուցին. 444
ԿԲ. Սօղոս Երուսաղէմի մէջ քարոզած ժամանակ հրէայք հակառակեցան. . . 452
ԿԳ. Երբ Պետրոս ազատուեցաւ, Հերովդէս դարձեալ նեղութիւն սուաւ հաւատացելոց. 463
ԿԴ. Պօղոս և Բառնաբաս շատ ժամանակ մնացին Անտիոքում. 471
ԿԵ. Պօղոս և իւր ընկերները Փիլիպպէէն մեկնելով ո՞ւր գնացին. 477
ԿԶ. Պօղոս առաքեալ Գաղատիայէն ո՞ւր գնաց. 484
ԿԷ. Հաղարապետը զՊօղոս բանակը ղրկելէ յետոյ թշնամիները հանդարտեցան. . . 493

ԿԸ. Փեստոս, որ դատաւոր եղաւ, Պօղոսի դատը արդարութեամբ տեսնելով արձակ ձեց զնա. 501

ԿԹ. Փեստոս ուժմ յանձնեց զՊօղոս որ Հռոմմ տանի. 505

Հ. Երբ քրիստոնէական սուրբ հաւատքը ընդ ամենայն աշխարհ յայտնի եղաւ, նախանձոտ և յամառ հրէայք ի՞նչ վիճակ ունեցան. 510

ՀՀ Ազգային գրադարան
NL0159184

4099

22
7-79